# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**2017 թվական**

**Հատոր IX**

**ՄԱՍ I**

**ԵՐԵՎԱՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ – 2018**

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411
Հ 247

Կազմեցին՝

**Անի Դանիելյանը**
ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության վարչության պետ

**Էմիլյա Աբրահամյանը**
ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական

**Էմմա Ավագյանը**
ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական

**Ժենյա Ստեփանյանը**
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի ավագ օգնական

Հ 247 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու/Կազմ՝ Ա. Դանիելյան, Է.Աբրահամյան, Է. Ավագյան, Ժ. Ստեփանյան. – Եր.: Էդիթ Պրինտ, 2018. Հ. IX. Մ. I - 596 էջ:

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411

ISBN 978-9939-75-257-0

**Գիրքը վաճառքի ենթակա չէ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Partnership for Good Governance

Գործընկերություն հանուն լավ կառավարման







Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով 2017թ. որոշումների ժողովածուի տպագրությունն իրականացվել է **«Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ»** ծրագրի կողմից, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում: Սույն ժողովածուի մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ..... 6
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում ..... 10
Աղբյուրների ցանկ թիվ 1.
ՀՀ Սահմանադրության դրույթներ ..... 20
Աղբյուրների ցանկ թիվ 2.
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ ..... 21
Աղբյուրների ցանկ թիվ 3.
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ ..... 23
1. Ք.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԳԴ-5/0007/01/15 ..... 24
2. Հ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0084/01/15 ..... 40
3. Ա.Խլղաթյանի և Ա.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0085/01/14 ..... 53
4. Գ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0021/01/16 ..... 74
5. Գ.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0075/01/16 ..... 83
6. Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0533/06/16 ..... 97
7. Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-1/0007/01/15 ..... 110
8. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ-1/0005/11/16 ..... 121
9. Վ.Մկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0016/01/16 ..... 135
10. Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում ԵԿԴ/0104/11/16 ..... 146
11. Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0067/11/16 ..... 159
12. Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/16 ..... 168
13. Վ.Երիցյանի և Ա.Քաճանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0039/01/12 ..... 182
14. Ֆ.Ավագիմյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ-2/0016/01/14 ..... 193
15. Ս.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0193/01/10 ..... 205
16. Ա.Զալյանի վերաբերյալ որոշում, ՎՔ-02/16 ..... 228
17. Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-2/0056/01/15 ..... 239
18. Ս.Պապիկյանի և Ա.Սարգսյանի
վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0116/01/15 ..... 250
19. Ա.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0155/01/15 ..... 270

20. Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0006/01/15 ..... 281
21. Ա.Օսիպյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0046/13/16 ..... 296
22. Ա.Մելքոնյանի և Վ.Վարդանյանի
վերաբերյալ որոշում, ԱՎԴ1/0018/01/15 ..... 310
23. Ա.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0001/15/16 ..... 325
24. Է.Ծոնվերանցի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0049/01/12 ..... 334
25. Գ.Գեղամյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0132/01/15 ..... 341
26. Ն.Զաքարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ4/0031/01/16 ..... 352
27. Ջ.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0060/11/15 ..... 362
28. Դ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0004/06/16 ..... 370
29. Հ.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0093/01/09 ..... 378
30. Ա.Պինչուկի վերաբերյալ որոշում, ՏԴ1/0043/01/16 ..... 386
31. Վ.Քերբերյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0002/11/16 ..... 397
32. Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԾԴ/0182/06/16 ..... 408
33. Է.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0017/06/16 ..... 421
34. Ա.Խոջումյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0101/01/14 ..... 444
35. Ա.Համբարձումյանի և Ն.Առաքելյանի
վերաբերյալ որոշում, ԾԴ/0008/13/16 ..... 464
36. Ա. Շուշանյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/15 ..... 474
37. Լ.Վանյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0059/01/15 ..... 491
38. Հ.Մուրադյանի վերաբերյալ որոշում,
1-81/2005 Ջ-139/06 ՎՔԲ-195/06 Ջ-510/06 ..... 505
39. Ս.Խաչատուրովի վերաբերյալ որոշում, 21/32-313-17 ..... 526
40. Վ.Տեր-Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՀՔԲԴ1/0057/01/08 ..... 539
41. Հ.Մանուչարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0108/01/10 ..... 552
42. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԾԴ1/0025/01/16 ..... 564
43. Մ.Քաղիրյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0004/11/16 ..... 573
44. Դ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0088/01/09 ..... 584

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ**
**ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ,**
**2017 ԹՎԱԿԱՆ**

## ՆԱԽԱԲԱՆ

Քրեական պալատի որոշումների նախադեպային բնույթով պայմանավորված՝ դրանք զգալի դերակատարություն ունեն քրեական արդարադատության ոլորտում իրավունքի գերակայությունն ապահովելու, վստահելի, կանխատեսելի և թափանցիկ արդարադատություն ձևավորելու, մարդու իրավունքները և ազատությունները երաշխավորելու գործում: Կարևորելով այդ որոշումներն իրավաբանական հանրությանը, ինչպես նաև հասարակության լայն շրջանակներին հասու դարձնելու նշանակությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թվականից նախաձեռնել է իր որոշումների ամենամյա ժողովածուների հրատարակման գործընթաց:

Ձևավորված ավանդույթի շարունակությունն է սույն ժողովածուն, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների 9-րդ հատորյակն է: Ժողովածուն ընդգրկում է 2017 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից դռնբաց դատական նիստում քննված բողոքներով կայացված բոլոր նախադեպային որոշումները, որոնք թվով 81-ն են[1]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև 2017 թվականը քրեական պալատի հիմնարար որոշումների քանակը չի գերազանցել 60-ը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ 2017 թվականին գրանցվել է որոշումների աննախադեպ քանակ (այդ պատճառով 9-րդ հատորը բաղկացած է երկու մասից):

Հիշյալ որոշումները վերաբերում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքին:

Մասնավորապես, *Արթուր Օսիպյանի* վերաբերյալ 2017 թվականի հունիսի 22-ին կայացված թիվ ԵԿԴ/0046/13/16 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ծանր հիվանդության հիմքով անձին պատժի կրումից ազատելը դատարանի հայեցողությունն է, որն իրացնելիս դատարանը պետք է գնահատի օրենքով սահմանված հիմքերի առկայությունը, որպիսիք են ոչ միայն կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, այլև հիվանդության բնույթը, դատապարտյալի առողջական վիճակը, ազատազրկման վայրում տրամադրվող բժշկական օգնության համարժեքությունը, առողջական վիճակի դինամիկան, անձի վարքագիծը (այն է՝ բժիշկների հետ համագործակցելուց նրա շարունակաբար հրաժարվելը) և այլ հանգամանքներ: ՀՀ վճռաբեկ դատարանը

[1] Մեկ բողոք քննարկվել է դռնփակ դատական նիստում, հետևաբար դրանով կայացված որոշումը տեղ չի գտել սույն ժողովածուում:

փաստել է, որ եթե անձի առողջական վիճակով պայմանավորված՝ պատիժը կրելուն զուգընթաց անհնարին է վերջինիս ապահովել համապատասխան պատշաճ բժշկական օգնությամբ, ապա հաշվի առնելով անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքը՝ անձին պատիժը կրելուց չազատելը չի կարող արդարացվել նրա կատարած արարքի բարձր հանրային վտանգավորությամբ և/ կամ նրա դրսևորած վարքագծով:

*Անդրանիկ Խոջումյանի* վերաբերյալ 2017 թվականի հունիսի 22-ին կայացված թիվ ՏԴ/0101/01/14 որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության և ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու սպառնալիքի հանցակազմերի հիմնական հատկանիշների մեկնաբանմանը և դրանց հարաբերակցության հիմնախնդրին՝ ընդգծելով, որ բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով թվարկված գործողությունները կատարելու սպառնալիքը մեկ այլ հանցագործության բաղկացուցիչ մասն է, ապա արարքը որակվում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով կամ հանցագործությունների համակցության կանոններով, այլ միայն այն նորմով, որը պարունակում է հանցագործության հատկանիշների առավել ամբողջական նկարագրություն: *Ազատ Խղոյանի* վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ին կայացված թիվ ՏԴ/0085/01/14 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել խուլիգանությունը ծանրացնող հանգամանքներով, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով (զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարելը) որակելու խնդրին՝ նշելով, որ քննարկվող ծանրացնող հանգամանքը հանցավորին կարող է մեղսագրվել, եթե նշված առարկաների օգտագործումը զուգորդվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելով: *Սամվել Հովսեփյանի* վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ին կայացված թիվ ԼԴ/0193/01/10 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ հափշտակությունների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքում պատճառված նյութական վնասը հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող կարևոր գործոն է, հետևաբար որքան մեծ է հանցագործությամբ պատճառված վնասի չափը, այնքան բարձր է արարքի հանրային վտանգավորության աստիճանը, ուստի վնասը վերականգնված չլինելու պարագայում ինքնին նվազում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը:

*Էդգար Եղիազարյանի* վերաբերյալ 2017 թվականի հունիսի 22-ին կայացված թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է կալանավորման պայմաններից մեկի՝ հիմնավոր կասկածի մեկնաբանմանը և դրա առկայությունը ստուգելիս միջնդատական վարույթի նկատմամբ դատական վերա-

հսկողության սահմաններին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Հիշյալի հաշվառմամբ դատարանը քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը պետք է հաստատի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության, այլ ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի հիման վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել, կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն): Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծեց, որ հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումն ակնհայտորեն չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմն առերևույթ վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախադեպային դիրքորոշումներ է արտահայտել նաև այնպիսի իրավական հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են պաշտոնական կեղծիքի (ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված) և փաստաթղթեր կեղծելու (ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդված) հանցակազմերի մեկնաբանումը (22.06.2017 թվականին կայացված թիվ ԱՐԴ/0116/01/15 և ԵԾԴ/0155/01/15 որոշումներ), ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների մրցակցությունը (22.06.2017 թվականին կայացված թիվ ԼԴ4/0031/01/16 որոշում), սուտ մատնության դեպքի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության գնահատումը (15.11.2017 թվականին կայացված թիվ ԼԴ2/0055/01/15 որոշում), խոշտանգման փաստի առթիվ արդյունավետ քննություն իրականացնելու չափանիշները (30.08.2017 թվականին կայացված թիվ ԵԱՔԴ/0190/11/16 որոշում), հետախուզվող մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանքը գրավով փոխարինելը (20.12.2017 թվականին կայացված թիվ ԵԿԴ/0265/06/11 որոշում), գործի հարուցման փուլի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության սահմանները (30.08.2017 թվականին կայացված թիվ ԼԴ/0018/11/16 որոշում), բացարկման ենթակա անձի կողմից քրեական գործ հարուցելու իրավական հետևանքները (15.11.2017 թվականին կայացված թիվ ՏԴ2/0005/01/16 որոշում) և այլն:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանում սահմանված է որոշումների առարկայական դասակարգման գործիք, որում առանձին ներկայացվում է, թե կոնկրետ որոշումը որ իրավադրույթի մեկնաբանության է վերաբերում: Ավելին՝ դրանում, ինչպես և նախորդ հատորներում, սահմանված են յուրաքանչյուր որոշման առարկայական մյուս բնութագրիչները, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում նույնությամբ առկա են հատորյակում ներառված դատական ակտերը, ինչն առավել դյուրին է դարձնում ժողովածուում զետեղված դատական ակտերին ծանոթանալը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածուի սույն հատորի հրատարակումը հնարավոր է դարձել Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շնորհիվ:

**Ս.Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի

քրեական պալատի նախագահ,

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

*Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ*


**Ն[2]-I Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը, պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածներ)**

Ն-I-1 Գ.Գեղամյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0132/01/15 (25, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII) ..... 341

Ն-I-2 Ա.Պինչուկի վերաբերյալ որոշում, ՏԴ1/0043/01/16 (30, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-6, Դ-XXXVI-1) ..... 386

Ն-I-3 Լ.Վանյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0059/01/15 (37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-VIII-2) ..... 491

Ն-I-4 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԾԴ1/0025/01/16 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-2) ..... 564

**Ն-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների համակցությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդված)**

Ն-II-1 Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0006/01/15 (20) ..... 281

**Ն-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղսունակությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդված)**

Ն-III-1 Ա.Շուշանյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/15 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Դ-XLII-1, Դ-XLIII-1, Դ-XLIV-1) ..... 474

**Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցափորձը (ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված)**

Ն-IV-1 Ա.Շուշանյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/15 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Դ-XLII-1, Դ-XLIII-1, Դ-XLIV-1) ..... 474

**Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցակցության հասկացությունը և հանցակիցների տեսակները (ՀՀ քրեական օրենսգրքի 37-38-րդ հոդվածներ)**

Ն-V-1 Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0007/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1, Դ-VIII-1, Դ-XXVI-1) ..... 110

**Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցակիցների պատասխանատվությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մաս)**

Ն-VI-1 Ս.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0193/01/10 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-2, Ն-XVII-1, Ն-XVIII-1) ..... 205


[2] Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:

**Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդված)**
Ն-VII-1 Լ.Վանյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-3/0059/01/15 (37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-3, Ն-VIII-2) ..... 491

**Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված)**
Ն-VIII-1 Գ.Գեղամյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0132/01/15 (25, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1) ..... 341
Ն-VIII-2 Լ.Վանյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-3/0059/01/15 (37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-3, Ն-VII-1) ..... 491

**Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդված)**
Ն-IX-1 Ն.Զաքարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ-4/0031/01/16 (26, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIX-1) ..... 352

**Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)**
Ն-X-1 Գ.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0075/01/16 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XX-1) ..... 83
Ն-X-2 Ս.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԼԴ-0193/01/10 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-XVII-1, Ն-XVIII-1) ..... 205

**Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված)**
Ն-XI-1 Ֆ.Ավագիմյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ-2/0016/01/14 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-1, Դ-X-1) ..... 193

**Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժից ազատելը ծանր հիվանդության հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդված)**
Ն-XII-1 Ա.Օսիպյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0046/13/16 (21, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLI-1) ..... 296
Ն-XII-2 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՇԴ-1/0025/01/16 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-4) ..... 564

**Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված)**
Ն-XIII-1 Անդրանիկ Լաղիկի Խոջումյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0101/01/14 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-2) ..... 444

**Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ավազակությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված)**
Ն-XIV-1 Հ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0084/01/15 (2) ..... 40

**Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գողությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)**
Ն-XV-1 Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0007/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Դ-VIII-1, Դ-XXVI-1) ..... 110

**Ն-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)**
Ն-XVI-1 Ֆ.Ավագիմյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0016/01/14 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-1, Դ-X-1) ..... 193

**Ն-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ յուրացնելը կամ վատնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդված)**
Ն-XVII-1 Ս.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0193/01/10 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-X-2, Ն-XVIII-1) ..... 205

**Ն-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդված)**
Ն-XVIII-1 Ս.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0193/01/10 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1,Ն-X-2, Ն-XVII-1)..... 205

**Ն-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված)**
Ն-XIX-1 Ա.Խլղաթյանի և Ա.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0085/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-1) ..... 53

**Ն-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)**
Ն-XX-1 Գ.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0075/01/16 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1)..... 83

**Ն-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուլիգանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված)**
Ն-XXI-1 Ա.Խլղաթյանի և Ա.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0085/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-1) ..... 53
Ն-XXI-2 Ա.Խոջումյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0101/01/14 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-1)..... 444

**Ն-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնեական կեղծիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված)**
Ն-XXII-1 Ս.Պապիկյանի և Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0116/01/15 (18, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIII-1)..... 250

**Ն-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը (ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդված)**
Ն-XXIII-1 Ս.Պապիկյանի և Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0116/01/15 (18, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXII-1) ..... 250
Ն-XXIII-2 Ա.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0155/01/15 (19) ..... 270

**Ն-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դասալքությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդված)**
Ն-XXIV-1 Ա.Մելքոնյանի և Վ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ-1/0018/01/15 (22) ..... 310

***Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ***

**Դ[3]-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված)**
Դ-I-1 Է.Ծոնվերանցի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0049/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-1, Դ-XXXIV-1) ..... 334
Դ-I-2 Հ.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0093/01/09 (29) ..... 378
Դ-I-3 Ա.Համբարձումյանի և Ն.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԾԴ/0008/13/16 (35) ..... 464

**Դ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված)**
Դ-II-1 Մ.Քաղիրյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0004/11/16 (43, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-1, Դ-XII-1, Դ-XXI-3, Դ-XXV-5) ..... 573

**Դ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված)**
Դ-III-1 Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ-1/0005/11/16 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXI-1, Դ-XXV-1, Դ-XXVII-3) ..... 121

**Դ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)**
Դ-IV-1 Է.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0017/06/16 (33) ..... 421

**Դ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության լեզուն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդված)**
Դ-V-1 Ս.Խաչատուրովի վերաբերյալ որոշում, 21/32-313-17 (39, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIII-1, Դ-XLV-1, Դ-XLVI-1) ..... 526

[3] Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Դ» տառով:

**Դ–VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)**
Դ-VI-1 Մ.Քաղիրյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0004/11/16 (43, նույն որոշումը տե՛ս նաև Դ–II-1, Դ-XII-1, Դ-XXI-3, Դ–XXV-5) .....573

**Դ–VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)**
Դ-VII-1 Ք.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԳԴ5/0007/01/15 (1, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XIV-1, Դ–XXVII-1) .....24

**Դ–VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդված)**
Դ-VIII-1 Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0007/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-XV-1, Դ–XXVI-1) .....110

**Դ–IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված)**
Դ-IX-1 Վ.Երիցյանի և Ա.Քանանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0039/01/12 (13, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XXXVIII-1, Դ–XXXIX-1) .....182
Դ-IX-2 Ջ.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0060/11/15 (27) .....362

**Դ–X Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)**
Դ-X-1 Ֆ.Ավագիմյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0016/01/14 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-1, Ն-XVI-1) .....193

**Դ–XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի կազմը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդված)**
Դ-XI-1 Է.Ծոնվերանցի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0049/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ–I-1, Դ–XXXIV-1) .....334

**Դ–XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդված)**
Դ-XII-1 Մ.Քաղիրյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0004/11/16 (43, նույն որոշումը տե՛ս նաև Դ–II-1, Դ–VI-1, Դ–XXI-3, Դ–XXV-5) .....573

**Դ–XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների պարզաբանումը, դրանց իրականացման հնարավորության ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդված)**
Դ-XIII-1 Ս.Խաչատուրովի վերաբերյալ որոշում, 21/32-313-17 (39, նույն որոշումը տե՛ս նաև Դ–V-1, Դ–XLV-1, Դ-XLVI-1) .....526

**Դ-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված)**
Դ-XIV-1 Ք.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԳԴ-5/0007/01/15 (1, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-1, Դ-XXVII-1) ..... 24

**Դ-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)**
Դ-XV-1 Ա.Պուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0533/06/16 (6, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-1) ..... 97
Դ-XV-2 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/16 (12, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-2) ..... 168

**Դ-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդված)**
Դ-XVI-1 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԾԴ/0182/06/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVII-1, Դ-XXI-2, Դ-XXII-1, Դ-XXIII-1, Դ-XXIV-1) ..... 408

**Դ-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանավորումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդված)**
Դ-XVII-1 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԾԴ/0182/06/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1, Դ-XXI-2, Դ-XXII-1, Դ-XXIII-1, Դ-XXIV-1) ..... 408

**Դ-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)**
Դ-XVIII-1 Ա.Պուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0533/06/16 (6, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XV-1) ..... 97
Դ-XVIII-2 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/16 (12, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XV-2) ..... 168

**Դ-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետների հաշվումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդված)**
Դ-XIX-1 Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0067/11/16 (11, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXV-3) ..... 159

**Դ-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված)**
Դ-XX-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում ԵԿԴ/0104/11/16 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXV-2, Դ-XXVII-5) ..... 146

**Դ-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական վերահսկողության ոլորտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդված)**
Դ-XXI-1 Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ-1/0005/11/16 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1, Դ-XXV-1, Դ-XXVII-3) ..... 121
Դ-XXI-2 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԾԴ/0182/06/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1, Դ-XVII-1, Դ-XXII-1, Դ-XXIII-1, Դ-XXIV-1) ..... 408

Դ-XXI-3 Մ.Քաղիրյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0004/11/16 (43, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1, Դ-VI-1, Դ-XII-1, Դ-XXV-5).....573

**Դ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդված)**
Դ-XXII-1 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԾԴ/0182/06/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1, Դ-XVII-1, Դ-XXI-2, Դ-XXIII-1, Դ-XXIV-1).....408

**Դ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդված)**
Դ-XXIII-1 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԾԴ/0182/06/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1, Դ-XVII-1, Դ-XXI-2, Դ-XXII-1, Դ-XXIV-1) .....408

**Դ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված)**
Դ-XXIV-1 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԾԴ/0182/06/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1, Դ-XVII-1, Դ-XXI-2, Դ-XXII-1, Դ-XXIII-1) .....408

**Դ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)**
Դ-XXV-1 Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ-1/0005/11/16 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1, Դ-XXI-1, Դ-XXVII-3) .....121
Դ-XXV-2 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում ԵԿԴ/0104/11/16 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XX-1, Դ-XXVII-5) .....146
Դ-XXV-3 Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0067/11/16 (11, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-1) .....159
Դ-XXV-4 Վ.Բերբերյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0002/11/16 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-7).....397
Դ-XXV-5 Մ.Քաղիրյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0004/11/16 (43, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1, Դ-VI-1, Դ-XII-1, Դ-XXI-3) .....573

**Դ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդված)**
Դ-XXVI-1 Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-1/0007/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-XV-1, Դ-VIII-1) .....110
**Դ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)**
Դ-XXVII-1 Ք.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԳԴ-5/0007/01/15 (1, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-1, Դ-XIV-1).....24
Դ-XXVII-2 Գ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0021/01/16 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIII-1, Դ-XXXV-1) .....74

Դ-XXVII-3 Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ-1/0005/11/16 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1, Դ-XXI-1, Դ-XXV-1) ..... 121
Դ-XXVII-4 Վ.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0016/01/16 (9, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVIII-1) ..... 135
Դ-XXVII-5 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում ԵԿԴ/0104/11/16 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XX-1, Դ-XXV-2) ..... 146
Դ-XXVII-6 Ա.Պինչուկի վերաբերյալ որոշում, ՏԴ-1/0043/01/16 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-2, Դ-XXXVI-1) ..... 386
Դ-XXVII-7 Վ.Քերբերյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0002/11/16 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXV-4) ..... 397

**Դ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգի կիրառման հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդված)**
Դ-XXVIII-1 Վ.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0016/01/16 (9, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-4) ..... 135

**Դ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի $375^3$-րդ հոդված)**
Դ-XXIX-1 Ն.Ջաքարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ-4/0031/01/16 (26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1) ..... 352

**Դ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդված)**
Դ-XXX-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-2/0056/01/15 (17, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXVII-1) ..... 239

**Դ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)**
Դ-XXXI-1 Դ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0004/06/16 (28) ..... 370

**Դ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ բողոքարկման հետևանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդված)**
Դ-XXXII-1 Ա.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-2/0001/15/16 (23) ..... 325

**Դ-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)**
Դ-XXXIII-1 Գ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0021/01/16 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-2, Դ-XXXV-1) ..... 74

**Դ-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննության կարգով գործը քննող դատարանի կազմը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդված)**
Դ-XXXIV-1 Է.Ծոնվերանցի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0049/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-1, Դ-XI-1) ..... 334

**Դ–XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտ կայացնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդված)**
Դ-XXXV-1 Գ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0021/01/16 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XXVII-2, Դ–XXXIII-1).....74

**Դ–XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ նշանակված պատժի անհամապատասխանությունը հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդված)**
Դ-XXXVI-1 Ա.Պինչուկի վերաբերյալ որոշում, ՏԴ1/0043/01/16 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Դ–XXVII-6).....386

**Դ–XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ արդարացման դատավճռի բեկանումը կամ փոփոխումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդված)**
Դ-XXXVII-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0056/01/15 (17, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XXX-1).....239

**Դ–XXXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդված)**
Դ-XXXVIII-1 Վ.Երիցյանի և Ա.Քանանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0039/01/12 (13, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IX-1, Դ-XXXIX-1) .....182
Դ-XXXVIII-2 Դ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0088/01/09 (44, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XXXIX-2) .....584

**Դ–XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդված)**
Դ-XXXIX-1 Վ.Երիցյանի և Ա.Քանանյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0039/01/12 (13, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IX-1, Դ-XXXVIII-1).....182
Դ-XXXIX-2 Դ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0088/01/09 (44, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XXXVIII-2).....584

**Դ–XL Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդված)**
Դ-XL-1 Ա.Զալյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-02/16 (16).....228
Դ-XL-2 Հ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, 1-81/2005 Զ-139/06 ՎԲԲ-195/06 Զ-510/06 (38).....505
Դ-XL-3 Վ.Տեր-Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՀՔԴ1/0057/01/08 (40) .....539

**Դ–XLI Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը կրելուց ազատելը հիվանդության պատճառով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդված)**
Դ-XLI-1 Ա.Օսիպյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0046/13/16 (21, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-1).....296

**Դ–XLII Մեկնաբանվող իրավադրույթ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդված)**
Դ–XLII-1 Ա.Ծուշանյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/15 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-1, Դ–XLIII-1, Դ–XLIV-1)..... 474
Դ–XLII-2 Ս.Մանուչարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0108/01/10 (41) ..... 552

**Դ–XLIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ այն անձանց իրավունքները, որոնց նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդված)**
Դ–XLIII-1 Ա.Ծուշանյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/15 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-1, Դ–XLII-1, Դ–XLIV-1)..... 474

**Դ–XLIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ որոշում կայացնելիս դատարանի կողմից քննարկվող հարցերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդված)**
Դ–XLIV-1 Ա.Ծուշանյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/15 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-1, Դ–XLII-1, Դ–XLIII-1)..... 474

**Դ–XLV Մեկնաբանվող իրավադրույթ՝ արգելանքի վերցրած անձանց իրավունքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.4-րդ հոդված)**
Դ–XLV-1 Ս.Խաչատուրովի վերաբերյալ որոշում, 21/32-313-17 (39, նույն որոշումը տե՛ս նաև Դ–V-1, Դ–XIII-1, Դ–XLVI-1)..... 526

**Դ–XLVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմինները և այդ որոշման բողոքարկման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդված)**
Դ–XLVI-1 Ս.Խաչատուրովի վերաբերյալ որոշում, 21/32-313-17 (39, նույն որոշումը տե՛ս նաև Դ–V-1, Դ–XIII-1, Դ–XLV-1)..... 526

**Աղբյուրների ցանկ թիվ 1**
**ՀՀ Սահմանադրության դրույթներ**

| | |
|---|---|
| ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (39) |
| ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (39) |
| ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (21) |
| ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (27) |
| ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (6) |
| ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (23), (28), (7), (39) |
| ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (28) |
| ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (7) |
| ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (42) |
| ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով) | (39) |
| ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդված (2005 թվականի փոփոխություններով) | (8) |

**Աղբյուրների ցանկ թիվ 2**
**Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ**


1. Buscarini v. San Marino, 2000 թվականի մայիսի 4-ի վճիռ (29), (35)
2. Cuscani v. the United Kingdom,
   2002 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռ (39)
3. Fox, Campbell and Hartley v. The United Kingdom,
   1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռ (33)
4. Ghimp and Others v. the Republic of Moldova,
   2012 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռ (38)
5. Gusinskiy v. Russia, 2004 թվականի մայիսի 19-ի վճիռ (33)
6. Jelić v. Croatia, 2014 թվականի հունիսի 12-ի վճիռ (38)
7. Jorgic v. Germany, 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռ (29), (35)
8. K. F. v. Germany, 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռ (33)
9. Kamasinski v. Austria, 1989 դեկտեմբերի 19-ի վճիռ (39)
10. Khachatryan and others v. Armenia,
    2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռ (33)
11. Luedicke, Bekacem and Koc v. Germany,
    1978 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ (39)
12. M. and Others v. Croatia, 2017 թվականի մայիսի 2-ի վճիռ (38)
13. Manucharyan v. Armenia, 2016 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ (41)
14. McKay v. The United Kingdom,
    2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ (33)
15. Muradyan v. Armenia, 2016 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ (38)
16. Murray v. The United Kingdom,
    1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (33)
17. Nachova and Others v. Bulgaria, 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռ (38)
18. Pelissier and Sassi v. France [GC],
    1999 թվականի մարտի 25-ի վճիռ (36)
19. Posokhov v. Russia, 2003 թվականի մարտի 4-ի վճիռ (29), (35)
20. Richert v. Poland, 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռ (29), (35)
21. Scozzari and Giunta v. Italy, 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռ (38)
22. Selcuk and Asker v. Turkey, 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռ (38)
23. Ter-Sargsyan v. Armenia, 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ (40)
24. Urtāns v. Latvia, 2014 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (33)
25. Vaudelle v. France, 2001 թվականի հունվարի 30-ի վճիռ (36)
26. Wloch v. Poland, 2000 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռ (33)
27. Yegorychev v. Russia, 2016 թվականի մայիսի 17-ի վճիռ (29), (35)
28. Van der Mussele v. Belgium,1983 թվականի նոյեմբերի 23-ի վճիռ (6)

29. Aleksanyan v. Russia, 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ (21)
30. Buscarini v. San Marino, 2000 թվականի մայիսի 4-ի որոշում (24)
31. Davtyan v. Armenia, 2015 թվականի մայիսի 31-ի վճիռ (21)
32. Gafgen v. Germany, 2010 թվականի հունիսի 1-ի վճիռ (16)
33. Golder v. The United Kingdom,
1975 թվականի փետրվարի 21-ի վճիռ (28)
34. Gelfmann v. France, 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (21)
35. Grishin v. Russia, 2007 թվականի նոյեմբերի 15-ի վճիռ (21)
36. Ireland v. the United Kingdom,
1978 թվականի հունվարի 18-ի վճիռ (21)
37. Jeronovičs v. Latvia , 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ (16)
38. Jorgic v. Germany, 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռ (24)
39. Krastanov v. Bulgaria, 2004 թվականի սեպտեմբերի 30-ի վճիռ (16)
40. Labita v. Italy, 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռ (21)
41. Mouisel v. France, 2002 թվականի նոյեմբերի 14-ի վճիռ (21)
42. Martirosyan v. Armenia, 2013 թվականի փետրվարի 5-ի վճիռ (18)
43. Mirilashivili v. Russia, 2007 թվականի հուլիսի 10-ի որոշում (21)
44. Peers v. Greece, 2001 թվականի ապրիլի 19-ի վճիռ (21)
45. Posokhov v. Russia, 2003 թվականի մարտի 4-ի վճիռ (24)
46. Richert v. Poland, 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռ (24)
47. Sarban v. Moldova, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռ (21)
48. Soering v. the United Kingdom, 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռ (21)
49. Tyrer v. the United Kingdom, 1978 թվականի ապրիլի 25-ի վճիռ (21)
50. Winterwerp v. The Netherlands,
1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռ (28)
51. Yegorychev v. Russia, 2016 թվականի մայիսի 17-ի վճիռ (24)
52. Zalyan and Others v. Armenia, 2016 թվականի մարտի 17-ի վճիռ (16)
53. Avetisyan v. Armenia, 2016 թվականի նոյեմբերի 10-ի վճիռ (44)

**Աղբյուրների ցանկ թիվ 3**
**ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ**


1. ՍԴՈ-851, 2010 թվականի հունվարի 14 (15)
2. ՍԴՈ-719, 2007 թվականի նոյեմբերի 28 (23)
3. ՍԴՈ-936, 2011 թվականի փետրվարի 8 (23)
4. ՍԴՈ-1257, 2016 թվականի մարտի 10 (23)
5. ՍԴՈ-1319, 2016 թվականի նոյեմբերի 1 (27)
6. ՍԴՈ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7 (8)

1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԳԴ-5/0007/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

մասնակցությամբ՝ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
պաշտպան Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Քրիստինե Հարությունի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Ք.Հարությունյանի պաշտպան Տ.Աբրահամյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>**

1. 2014 թվականի օգոստոսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 324-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 40104914 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ Քրիստինե Հարությունի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2015 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով Ք.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2015 թվականի մարտի 2-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 21-ի դատավճռով ճանաչվել և հոչակվել է Ք.Հարությունյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքում՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ: Վճռվել է նաև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործն ուղարկել դատախազին՝ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը լուծելու համար:

3. Մեղադրող Ա.Կարապետյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 21-ի դատավճիռը, Ք.Հարությունյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ք.Հարությունյանի պաշտպան Տ.Աբրահամյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

5. Ամբաստանյալ Ք.Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(...) [Ն]ա ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, եղբոր՝ անչափահաս Նարեկ Հարությունյանի (ծնված 08-06-2007թ.) հետ, 2014թ. օգոստոսի 01-ին՝ ժամը 10-11-ի սահմաններում, Քնարիկ Մերուժանի Քոչարյանին պատկանող Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի 5-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 23 տան մուտքի դռան առջևի շորի տակից վերցնելով մուտքի դռան բանալին, բացել է մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել նախասրահ և զգեստների կախիչի վրա կախված Ք.Քոչարյանի սպորտային վերնազգեստի գրպանից վերցրել է*

*նախասրահից դեպի միջանցք տանող դռան բանալին և բացելով միջանցքի դուռը՝ մուտք է գործել հյուրասենյակ և սպասքապահարանի օվալածև առանց փականի կողնակի 2-րդ հարթակում դրված ծաղկամանի միջից գաղտնի հափշտակել է 12.000 ՀՀ դրամ արժողությամբ Ք.Քոչարյանին պատկանող արծաթյա զարդերի մեկ հավաքածու՝ 1 զույգ ականջօղ, 1 մատանի, իսկ զգեստապահարանի աջ առաջին դարակից՝ սև կաշվետիպ պայուսակ, որի մեջ զարդատուփով դրված են եղել՝ 270.000 ՀՀ դրամի արժողությամբ մեկ 16 գրամանոց ոսկյա շղթա, 68.000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ՝ տղամարդու ամուսնական մատանի, 4 գրամանոց 50.000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ կանացի ոսկյա մատանի՝ 2 գրամ 7 դեցի քաշով՝ Ք.Քոչարյանին պատճառելով զգալի չափ համարվող ընդհանուր 400.000 ՀՀ դրամ գույքային վնաս»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 82):

6. Վ.Սիքայելյանի՝ 2014 թվականի օգոստոսի 23-ի հարցաքննության արձանագրության համաձայն՝ «*(...) Քրիստինեին ասացի, որ խոսի եղբոր հետ, որպեսզի տեղն ասի, (...) ու Նարեկը ցույց տվեց [տոպրակի տեղը]*» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 106):

Վ.Սիքայելյանի և Ք.Հարությունյանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 29-ի առերես հարցաքննության արձանագրության համաձայն՝ «*(...) [Ե]ղբայրս վախեցած էր, չէր ուզում ոչ մի բան խոսել, լաց էր լինում, ես Նարեկին ասացի, որ նա խոսի (...), Նարեկը տեղն ասաց*» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 27):

7. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2016 թվականի հունվարի 21-ի դատավճռում փաստել է. *«(...) Դատարանը հաստատված է համարում այն փաստական հանգամանքը, որ Քնարիկ Մերուժանի Քոչարյանին պատկանող Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի 5-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 23 տնից գաղտնի հափշտակվել է Ք.Քոչարյանին պատկանող արծաթյա զարդերի մեկ հավաքածու՝ 1 զույգ ականջօղ, 1 մատանի, սև կաշվետիպ պայուսակ, որի մեջ զարդատուփով դրված են եղել մեկ ոսկյա շղթա, մեկ՝ տղամարդու ամուսնական մատանի, մեկ կանացի ոսկյա մատանի և փաստաթղթեր, որի արդյունքում Ք.Քոչարյանին պատճառվել է գույքային վնաս:*

*(...) Ինչ վերաբերում է սույն քրեական գործով ապացուցման առարկա հանդիսացած՝ անչափահաս ամբաստանյալ Քրիստինե Հարությունի Հարությունյանին առաջադրված մեղադրանքի[ն, ապա այն] (...) Դատարանը, ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշներով հաստատված չի համարում.*

*Այսպես՝*

*ա/ (...) [Ա]մբաստանյալի և նրա օրինական ներկայացուցչի ցուցմունքներով վերջիններս հերքում են Ք.Հարությունյանի կողմից 2014թ. օգոստոսի 01-ին՝ ժամը 10-11-ի սահմաններում, Քնարիկ Մերուժանի Քոչարյանին պատկանող Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի 5-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 23 տուն մուտք գործելու և նկարագրված արարքը կատարելու հանգամանքը: Բացի այդ, վերը նշված ցուցմունքների և (...) անչափա-*

*հաս վկա Ն.Հարությունյանի, վկա Վ.Միքայելյանի կողմից տրված ցուցմունքների և (...) «Պայուսակ ներկայացնելու, գնելու և վերցնելու մասին» արձանագրությունից բխում է, որ Ք.Քոչարյանի տնից համապատասխան պայուսակը, որի մեջ եղել են վերջինիս՝ վերը նշված ոսկյա զարդերը և փաստաթղթերը, վերցրել է ոչ թե Ք.Հարությունյանը, այլ մեկ այլ անձ: Մասնավորապես, հատկանշական է այն հանգամանքը, որ վկա Վ.Միքայելյանը, որը հանդիսացել է ոստիկանության համապատասխան աշխատակից, հայտնել է, որ Նարեկ Հարությունյանը իրեն հայտնել է, որ ինքն է վերցրել համապատասխան պայուսակը և դրել հետագայում մատնանշված ծառի տակ, և Նարեկն է Վ.Միքայելյանին ցույց տվել պայուսակի գտնվելու վայրը: Այն ենթադրությունը, որ Նարեկին սովորեցրել են, կամ Ք.Հարությունյանն է հուշել պայուսակի գտնվելու տեղը, դատաքննությամբ հետազոտված որևէ ապացույցով չի հիմնավորվում, ավելին՝ Վ.Միքայելյանն իր ցուցմունքով և առերես հարցաքննությամբ նշել է, որ չի լսել համապատասխան պայուսակը ցույց տալու ժամանակ Ք.Հարությունյանի և Ն.Հարությունյանի խոսակցությունը, բացի այդ, **Ք.Հարությունյանը նշել է, որ փորձել է համոզել եղբորը, որ նա ցույց տա պայուսակի տեղը:***

*բ/ (...) տուժող Ք.Քոչարյանի և վերջինիս ամուսին վկա Վ.Գևորգյանի ցուցմունքներն ըստ էության վերաբերում են 2014թ. օգոստոսի 1-ին և դրան հաջորդող օրերին իրենց կատարած գործողություններին, իրենց տնից հափշտակված իրերին և դրանց արժեքներին: Նրանց կողմից տրված ցուցմունքները հիմնված են ենթադրությունների վրա և այլ անձանց կողմից իրենց հայտնած տեղեկությունների վրա, մասնավորապես, նրանց տան մոտ գտնվող տնակում ամբաստանյալի և նրա ընտանիքի բնակվելու, իրենց տուն ելումուտ ունենալու, տան դռան փականն իրենց կողմից նշված ձևով փակված չլինելու և այլ վկաների կողմից հայտնած տեղեկությունների, ամբաստանյալի եղբոր կողմից անասնագոմից առանց իրենց թույլտվությամբ հավի ճու վերցնելու փաստերի և ենթադրությունների վրա: Տվյալ պարագայում հատկանշական է, որ տուժողը և նրա ամուսինն իրենց տնից ոսկյա և արծաթյա զարդերի և համապատասխան պայուսակի և փաստաթղթերի բացակայության մասին իմացել են ամբաստանյալին վերագրվող արարքը կատարելու օրվանից՝ 2014թ. օգոստոսի 1-ից օրեր անց, իսկ դրանց գտնվելու վայրում վերջին անգամ տեսել են և դրանք օգտագործել են 2014թ. օգոստոսի 1-ից բավականին առաջ, և այդ ընթացքում իրենց տանը գտնվել են այլ մարդիկ, «խնջույք» է եղել և այլն: Բացի այդ, հատկանշական է այն հանգամանքը, որ տուժողի ցուցմունքում նշված այն հանգամանքը, որ ամբաստանյալը ենթադրյալ հանցագործության օրը բազմիցս զանգել է իրեն և փորձել է իմանալ, թե երբ է նա տուն գալիս, ապա հարկ է նշել, որ այդ հանգամանքը չի համապատասխանում սույն դատավճռի 34-րդ կետում նշված փաստական տվյալներին:*

*գ/ (...) վկա Վարդան Գևորգյանի ցուցմունքից բխում է, որ նա 2014թ. օգոստոսի 1-ին տեսել է մի աղջկա, որը տուժողի տան մոտի տնակի մոտից արագ քայլերով մոտեցել է տուժողի տանը և դռան բռնակը սեղմելու միջո-*

*ցով (առանց բանալիի օգնության) բացել է և ներս մտել և տեսել է, որ իրենից 300-400 մետր հեռավորության վրա՝ իր աջակից, նույն ճանապարհով անցնում են Կարինեն և իր աղջիկը: Բացի այդ, նա հայտնել է, որ ամբաստանյալին չի ճանաչել և նրան ճանաչել է մազերի ձևից և հայտնել է, թե ինչ շորեր է հագին եղել: Ինչպես նաև այն, որ այդ աղջկա ձեռքին ոչինչ չի տեսել և չի տեսել, որ բանալիով դուռը բացի: (...) [Վ]կա Նաիրուհի Գևորգյանի և վկա Կարինե Շահբազյանի ցուցմունքներից բխում է, որ տեսել են Ք.Հարությունյանին և նրա փոքր եղբորը տուժողի տնից դուրս գալուց, որի ընթացքում Ք.Հարությունյանը բանալիով փակել է տուժողի տան դուռը և պատուհանից ներս նայել և այնուհետև փոքր եղբայրը վերադարձել և կոացել է տան դռան մոտ: Ի դեպ, վերջիններս նույնպես ամբաստանյալի և նրա եղբոր ձեռքին ոչինչ չեն տեսել: Ինչպես երևում է վերոգրյալից՝ այս ցուցմունքներում առկա է հակասություն այն մասով, որ նշված տան մոտով ավելի վաղ անցնող անձինք ամբաստանյալին տեսել են տնից դուրս գալուց և նշված գործողությունները կատարելուց, իսկ ավելի ուշ անցնող անձը՝ տուն մտնելուց, այն պարագայում, որ ըստ էության վերը նշված բոլոր անձինք նույն ժամանակահատվածում գտնվել են համապատասխան ճանապարհի տարբեր մասերում և, ըստ էության, կարող էին տեսնել նույն բանը: Այնուամենայնիվ, Դատարանը հարկ է համարում նշել, որ վերը նշված երեք վկաներն ամբաստանյալի կամ նրա եղբոր ձեռքին կամ նրանց մոտ ոչինչ չեն տեսել: Հատկանշական է նաև այն, որ դատաքննությամբ որպես իրեղեն ապացույց հանդիսացող պայուսակի և դրանում առկա այլ իրերի ծավալն այնպիսին է, որ այն ամբաստանյալի կողմից հափշտակված լինելու պարագայում անհնար է թաքցնել հագուստի միջոցով, այն էլ ամառային հագուստի միջոցով (որոնց նկարագիրը տրվել է վկաների և ամբաստանյալի ցուցմունքով), որ նկատելի չլիներ: Եվ եթե նույնիսկ Դատարանն արժանահավատ համարի վերջիններիս տված ցուցմունքները, ապա ամբաստանյալի և նրա եղբոր կողմից տուժողի տուն մտնելու հանգամանքն ինքնին բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշներով հաստատված համարելու, որ տուժողի տնից գողություն կատարել է Ք.Հարությունյանը, այն էլ առաջադրված մեղադրանքում շարադրված նկարագրությամբ և այն հանգամանքի լույսի ներքո, որ վերջիններս տուժողի տուն տարբեր ժամանակահատվածներում ազատ մտել և դուրս են եկել: Հատկանշական է նաև այն, որ սույն դատավճռի 49-րդ կետի ա/ ենթակետում նշված անձանց ցուցմունքով և հատկապես Վ.Միքայելյանի ցուցմունքից բխում է, որ իրեն համապատասխան պայուսակի տեղը ցույց է տվել ամբաստանյալի եղբայրը և հայտնել, որ ինքն է դա վերցրել և դրել այնտեղ: (Ի դեպ, վերը նշված վկաները հանդիսանում են տուժողի ազգականները և հարևանը): Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ սույն դատավճռի 20-րդ կետում նշված փաստական տվյալից բխում է, որ վկա Վարդան Գևորգյանի կողմից ամբաստանյալի շորերի նկարագրությունն, իր կողմից տրված ցուցմունքում և առերես հարցաքննության ժամանակ հայտնած տվյալներում տարբեր են եղել (և այլն):*

*դ/ Սույն դատավճռի 11-րդ, 12-րդ, 16-րդ, 17-րդ 18-րդ կետերում նշված վկաների ցուցմունքներից բխում է, որ նրանք հանդիսանում են տուժողի հարևանները կամ ազգականները, և կոնկրետ սույն գործով ապացուցման առարկայի վերաբերյալ տվյալները նրանք իմացել են տուժողից և նրա ամուսնուց: 12-րդ կետում նշված վկայի ցուցմունքով նկարագրվում են նաև համապատասխան պայուսակը գտնելու ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները:*

*ե/ Սույն դատավճռի 19-24-րդ կետերում նշված առերես հարցաքննությունների արձանագրություններից բխում է, որ հարցաքննվողները, ըստ էության, պնդել են իրենց ցուցմունքները:*

*զ/ Սույն դատավճռի 25-40-րդ կետերում նշված փաստական տվյալներն իրենից չեն վկայում սույն քրեական գործով ապացուցման առարկան հանդիսացող հանգամանքների առկայության կամ բացակայության փաստը: Մասնավորապես, նրանցում առկա տեղեկությունները չեն փաստում Ք.Հարությունյանի կողմից իրեն վերագրվող արարքը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշներով կատարելու հանգամանքը և բավարար չեն դա գնահատելու համար, այդ թվում նաև՝ 27-րդ կետում նշված, կիսատ կատարված, քննչական փորձարարության արձանագրությունը, որի համաձայն՝ Ն.Հարությունյանի ձեռքը (առանց այլ միջոցների) չի հասել համապատասխան դարակին, այն էլ այն պարագայում, որ քննչական փորձարարության ժամանակ տան իրերի դասավորվածությունը փոխված է եղել, որի մասին այդ ժամանակ քննիչը չի իմացել: Բացի այդ, Ն.Հարությունյանի ձեռքը համապատասխան պահարանին հասած չլինելու հանգամանքն ինքնին բավարար չէ փաստելու, որ վերը նկարագրված գողությունը կատարել է Ք.Հարությունյանը:*

*է/ Հատկանշական է նաև այն, որ ամբաստանյալին վերագրվող արարքի կատարման ժամանակը և կատարման եղանակը նույնպես չեն հիմնավորվում ապացույցների բավարար համակցությամբ, և, ընդհանրապես, կատարման ժամանակը տուժողների և նրա ամուսնու ենթադրությունն է, իսկ կատարման եղանակը (հանցակազմի օբյեկտիվ կողմի մի մասը), որը նկարագրված է մեղադրանքում (ամբաստանյալի կողմից տուն մտնելու ձևը, ներսի դուռը բացելու եղանակը, համապատասխան առարկաներ վերցնելու նկարագրությունը), որևէ ապացույցով չի հիմնավորվում: Բավարար ապացույցների համակցությամբ չի հիմնավորվում նաև պատճառված վնասի չափը, մեղադրանքի կողմը այն հիմնավորում է միայն տուժողի ցուցմունքի հիման վրա, որը տարբեր ժամանակներում տրված ցուցմունքներով տարբեր է եղել:*

*(...) Այսպիսով, (...) ստուգելով և վերլուծելով դատաքննությամբ հետազոտված և սույն դատավճռի 2-40-րդ կետերում նշված բոլոր ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ բավարար չեն, որպեսզի հաղթահարվի անմեղության կանխավարկածը՝ անհչաո դիտորդի մոտ ձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև հաստատվեն գործով ապացուցման*

*առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն տա կայացնելու հիմնավորված և պատճառաբանված մեղադրական դատավճիռ: Եղած ապացույցները թույլ չեն տալիս պարզել ապացուցման առարկա հանդիսացող հանգամանքները անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ, և այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում, և բացակայում է փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը:*

*(…)*

*(...) Այսինքն՝ տվյալ պարագայում ամբաստանյալ Ք.Հարությունյանին դատապարտելու համար ապացույցների բավարար համակցությամբ չի հաղթահարվում նրա անմեղության կանխավարկածը, և նրան առաջադրված մեղադրանքում նշված արարքը նրա կողմից կատարելու կասկածը չի փարատվում, (...) և չի ապացուցվում նրա մեղավորությունը: Հետևաբար Ք.Հարությունյանին առաջադրված մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չեն փարատվել Դատարանը մեկնաբանում է հօգուտ ամբաստանյալ Ք.Հարությունյանի»* (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 120-167):

8. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 25-ի որոշման համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ (…) [համապատասխան] ցուցմունքներով հերքվում է Ք.Հարությունյանի կողմից 2014թ. օգոստոսի 01-ին՝ ժամը 10-11-ի սահմաններում, Քնարիկ Մերուժանի Քոչարյանին պատկանող Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի 5-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 23 տուն մուտք գործելու և նկարագրված արարքը կատարելու հանգամանքը՝ անտեսելով այն հանգամանքը, որ ամբաստանյալը, նրա օրինական ներկայացուցիչը և վերջինիս ընկեր, ոստիկանության աշխատակից Վ.Միքայելյանը՝ Ք.Հարությունյանին հնարավոր պատասխանատվությունից ու պատժից խուսափելուն օժանդակելու նպատակով, ցուցմունքներով հերքել են վերջինիս կողմից հանցավոր արարք կատարելու հանգամանքը:*

*Այս պայմաններում դատարանն արժանահավատ է համարել Վ.Միքայելյանի ցուցմունքները և հատուկ նշել է, որ նա հանդիսանում է համապատասխան ոստիկանության աշխատակից, չնայած որ, նույն դատավճռում հաստատված է համարել, որ Վ.Միքայելյանը սույն քրեական գործի շրջանակներում չի հանդիսացել դատավարական լիազորություններ իրականացնող հետաքննության մարմնի աշխատակից, բացի այդ, վերջինս համապատասխան վարույթն իրականացնող մարմնից՝ քննիչից, որևէ հանձնարարություն չի ստացել քրեական գործի շրջանակներում որևէ գործողություն կատարելու համար և, ի վերջո, քրեական գործի շրջանակներում չի ունեցել որևէ դատավարական լիազորություն, և նրա հայտնած այն տեղեկությունը, որ Ն.Հարությունյանն է իրեն ցույց տվել պայուսակի գտնվելու վայրը, և Ք.Հարությունյանը փորձել է վերջինիս համոզել, որ նա պայուսակի տեղը ցույց տա, այն դեպքում, երբ Վ.Միքայելյանը լճի ափին չի լսել, թե ինչ են խոսում Նարեկ և Քրիստինե Հարությունյանները, ապա ինչպե՞ս կարող էր վստահորեն ասել, որ*

Քրիստինեն փորձում էր համոզել Նարեկին, որ նա պայուսակի տեղը ցույց տա, Վերաքննիչ դատարանի կողմից չի կարող դիտվել որպես օբյեկտիվ արժանահավատ տեղեկատվություն: Ակնհայտ է, որ Ք.Հարությունյանն է ցույց տվել պայուսակի տեղը Վ.Միքայելյանին, և վերջինս, պաշտպանելով և օգնելով իր ընկերուհուն՝ Ա.Երեմյանին, ցուցմունք է տվել դատարանում, թե Ն.Հարությունյանն է ցույց տվել պայուսակի գտնվելու տեղը:

Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցների, մասնավորապես՝ վկաներ Կարինե Շահբազյանի, Նաիրուհի Գևորգյանի և Վարդան Գևորգյանի ցուցմունքների ուսումնասիրությունից հաստատվում է այն հանգամանքը, որ նրանք 2014 թվականի օգոստոսի 1-ին տեսել են Քրիստինեն և Նարեկ Հարությունյաններին միասին տուժողի բնակարան մուտք ու ելք կատարելուց, կոնկրետ Քրիստինեն Հարությունյանին՝ բնակարանի մուտքի դուռը տնից դուրս գալուց հետո փակելուց: Նրանց ցուցմունքների արժանահավատությունը հաստատվել է նաև կատարված քննչական փորձարարությամբ: Կասկած չի հարուցում նաև, որ նրանք տեսել են Ք. և Ն. Հարությունյաններին տուժողի բնակարան մուտք ու ելք կատարելուց հենց օգոստոսի 1-ին, քանի որ Կ.Շահբազյանի ու Ն.Գևորգյանի համար այդ օրը հիշարժան է եղել՝ Կարինե Շահբազյանի որդին գումար է նրանց ուղարկել, բացի այդ, դեպքից 2 օր անց են նրանք տեղեկացել, որ Ք.Քոչարյանի բնակարանից անհետացել են փաստաթղթերն ու ոսկյա և արծաթյա զարդերը, և այդ կարճ ժամանակահատվածում չէին կարող շփոթել:

Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Կ.Շահբազյանն ու Ն.Գևորգյանը Վ.Գևորգյանից գտնվել են 300-ից 400 մետր առաջ, վերջինս այդ ճանապարհ է մտել ու սկսել է քայլել նրանցից մոտ 7 րոպե անց, և այդ ընթացքում Ք. և Ն. Հարությունյանները կարող էին նույնիսկ մի քանի անգամ մուտք գործել տուժողի բնակարան: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ եթե հիշյալ վկաները ճանապարհով պատահական անցնելուց չեն տեսել Ք. և Ն. Հարությունյանների ձեռքին պայուսակ, ուրեմն նախ այդ պայուսակը չի կարող վերցված լինի նրանց կողմից և հետո, որ այդ պայուսակը դրանից հետո կամ դրանից առաջ հնարավոր չէ վերցված լինի վերջիններիս կողմից:

Առաջին ատյանի դատարանն անտեսել է նաև անչափահաս Ն.Հարությունյանի մասնակցությամբ կատարված քննչական փորձարարության արձանագրությամբ հաստատված այն փաստը, որ Ն.Հարությունյանը չի կարողացել բացել Ք.Քոչարյանի տան նախասրահից դեպի միջանցք տանող դուռը, և ձեռքը չի հասել հյուրասենյակի զգեստապահարանի վերջին դարակաշարին, այսինքն՝ նա չէր կարող ինքնուրույն բացել ու մուտք գործել տուժողի բնակարան:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում վերաքննիչ բողոքի փաստարկներն այն մասին, որ, ըստ դատահետաքննական փորձաքննության եզրակացության՝ պարզվել է, որ Վալտեր Գևորգյանի տան մուտքի դռան և նախասրահի միջանցք տանող դռան ներփորովի փականների մի-

*ջուկները գտնվում են սարքին վիճակում (մինչև ապամոնտաժումը) և բացվել են իրենց բանալիներով: Այլ առարկաներով դրանք բացելու հետքեր չեն հայտնաբերվել: Բացառվում է այն վարկածը, որ այլ առարկաներով (հարմարեցված բանալի, ագրավուկ և այլն) բացված լինի այդ բնակարանի մուտքի դուռը, և այլ անձ Ք.Քոչարյանի բնակարանից գողություն կատարած լինի: Բացառվում է նաև այն պատճառով, քանի որ միայն օգոստոսի 1-ին են տուժողները բացակայել բնակարանից, միայն օգոստոսի 1-ին է Ք.Քոչարյանը տեսել, որ բնակարանի մուտքի դռան դիմացի շորի տակ դրված մուտքի դռան բանալին տեղաշարժված է, և ամենակարևորը, որ տուժողի բնակարանից գողացված պայուսակը և փաստաթղթերը ներկայացվել են Ա.Երեմյանի կողմից, այսինքն՝ այլ անձի մասնակցությունը կատարված այս հանցագործության մեջ բացառվում է:*

*(…)*

*Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ իրավական ստուգման և գնահատման ենթարկելով քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցության մեջ, հանգում է հետևության, որ գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ տուժողի և վկաներ Վալտեր Գևորգյանի, Վարդան Գարուշի Գևորգյանի, Նաիրուհի Մագելի Գևորգյանի, Կարինե Ռաֆիկի Շահբազյանի, Գևորգ Վարդանյանի, Ֆրեդ Վարդանյանի, Կարինե Ղազիկյանի, Անգին Նիկողոսյանի, Ջեմա Ղարիբյանի ցուցմունքները բավարար են ամբաստանյալ Ք.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախաքննական մարմնի կողմից առաջադրված մեղադրանքը հիմնավորված համարելու համար (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 137-139):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ, 66-րդ, 67-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 17-19-րդ, 107-րդ, 360-րդ և 365-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը, վերլուծության ենթարկելով քրեական գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցները, արդյունքում նշել է, որ Վերաքննիչ դատարանը, հիմնվելով ենթադրությունների վրա, կայացրել է մեղադրական դատավճիռ: Ըստ բողոք բերած անձի՝ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը չի ապացուցվել դատական քննության ընթացքում: Դատարանը չի ղեկավարվել անմեղության կանխավարկածի սկզբունքով, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին չի մեկնաբանել:

10. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 21-ի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված և պատճառաբանվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Ք.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու մասին դատական ակտը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:*

*4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

*2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

*(…)*

*3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝*

*դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.*

*այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.*

*դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:*

*4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»*:

13. Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը, հիմնվելով իր կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա, *Ա.Մադոյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. *«Ապացույցների բավարարություն» բնորոշմանը, այն որոշելու չափանիշներին, չափանիշներից յուրաքանչյուրի էությանն ու նշանակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր կողմից նախկինում ընդունված որոշումներում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը: Ինչ վերաբերում է ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներին, ապա Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրանք են՝ 1) անմեղության կանխավարկածը, 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը, 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը (տե՛ս Սիրակ Սաքանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 15-րդ կետը):*

*Անդրադառնալով ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներից անմեղության կանխավարկածին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է. «[Ք]րեական դատավարությունում կանխավարկածն օրենքով կամ նախապես պայմանավորված իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է (…): Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:*

*(…) [Ա]նմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:*

*(…)*

*(…) «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով՝ պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը **բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը**: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդ-*

*պիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի անհշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ **ցանկացած ողջամիտ կասկած** (տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 30-րդ և 33-րդ կետերը):*

*Իսկ անդրադառնալով ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներից մյուսին՝ դատավարական որոշումների հիմնավորվածությանը և պատճառաբանվածությանը՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Ընդ որում, հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է (տե՛ս Ֆ.Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-19-րդ կետերը, Գ.Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը)* (տե՛ս Արթուր Մադոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0303/01/15 որոշման 21-21.1.-րդ կետերը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ք.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրանք է առաջադրվել *ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու համար* (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, եզրահանգել է, որ ապացույցների բավարար համակցությամբ չի հաղթահարվում Ք.Հարությունյանի անմեղության կանխավարկածը, և նրան առաջադրված մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չեն փարատվել, պետք է մեկնաբանել հօգուտ վերջինիս: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, արդյունքում բեկանել և փոփոխել է այն, Ք.Հարությունյանին մեղավոր ճանաչել վերջինիս մեղսագրված հանցավոր արարքի կատարման մեջ: Վերաքննիչ դատա-

րանն իր դատական ակտը, ի թիվս այլոց, հիմնավորել է նրանով, որ գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ տուժողի և վկաներ Վալտեր Գևորգյանի, Վարդան Գևորգյանի, Նաիրուհի Գևորգյանի, Կարինե Շահբազյանի, Գևորգ Վարդանյանի, Ֆրեդ Վարդանյանի, Կարինե Ղազիկյանի, Անգին Նիկողոսյանի, Ջեմա Ղարիբյանի ցուցմունքները, բավարար են ամբաստանյալ Ք.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքը հիմնավորված համարելու համար (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

15. Նախորդ և սույն որոշման 5-8-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ *գործով ձեռք բերված ապացույցները բավարար են ամբաստանյալ Ք.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով նախաքննական մարմնի կողմից առաջադրված մեղադրանքը հիմնավորված համարելու համար* (տե՛ս սույն որոշման 8-րդ և 14-րդ կետերը):

15.1. Այսպես, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ նախ նշենք, որ վերջինս կայացված դատական ակտի շրջանակներում փաստել է. «*(...) [Վ.Միքայելյանի] հայտնած այն տեղեկությունը, որ Ն.Հարությունյանն է իրեն ցույց տվել պայուսակի գտնվելու վայրը, **և Ք.Հարությունյանը փորձել է վերջինիս համոզել, որ նա պայուսակի տեղը ցույց տա**, այն դեպքում, երբ Վ.Միքայելյանը լճի ափին չի լսել, թե ինչ են խոսում Նարեկ և Քրիստինե Հարությունյանները, ապա ինչպե՞ս կարող էր վստահորեն ասել, որ Քրիստինեն փորձում էր համոզել Նարեկին, որ նա պայուսակի տեղը ցույց տա, Վերաքննիչ դատարանի կողմից չի կարող դիտվել որպես օբյեկտիվ արժանահավատ տեղեկատվություն: Ակնհայտ է, որ Ք.Հարությունյանն է ցույց տվել պայուսակի տեղը Վ.Միքայելյանին, և վերջինս, պաշտպանելով և օգնելով իր ընկերուհուն՝ Ա.Երեմյանին, ցուցմունք է տվել դատարանում, թե Ն.Հարությունյանն է ցույց տվել պայուսակի գտնվելու տեղը»* (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Նշյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հանդես է եկել գործի նյութերից չբխող դատողություններով: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը փաստել է. «*Այն ենթադրությունը, որ Նարեկին սովորեցրել են, կամ Ք.Հարությունյանն է հուշել պայուսակի գտնվելու տեղը, դատաքննությամբ հետազոտված որևէ ապացույցով չի հիմնավորվում, ավելին՝ Վ.Միքայելյանը իր ցուցմունքով և առերես հարցաքննությամբ նշել է, որ չի լսել համապատասխան պայուսակը ցույց տալու ժամանակ Ք.Հարությունյանի և Ն.Հարությունյանի խոսակցությունը, բացի այդ, **Ք.Հարությունյանը նշել է, որ փորձել է համոզել եղբորը, որ նա ցույց տա պայուսակի տեղը**»* (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը): Մինչդեռ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի կողմից մատնանշված այն հանգամանքը, *որ **Ք.Հարությունյանը նշել է**, որ փորձել է համոզել եղբորը, որ նա*

*ցույց տա պայուսակի տեղը*, ոչ իրավաչափորեն վերագրել է Վ.Միքայելյանին որպես վերջինիս կողմից հայտնած տվյալ: Հետևաբար վերոգրյալի պայմաններում իրավաչափ չի կարող համարվել Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Վ.Միքայելյանի հաղորդած տեղեկությունը չի կարող դիտվել որպես օբյեկտիվ արժանահավատ տեղեկատվություն: Սույն դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի դատողությունն առ այն, որ *սույն գործով հետազոտված որևէ ապացույցով չի հիմնավորվում այն ենթադրությունը, որ Նարեկին տվորեցրել են, կամ Ք.Հարությունյանն է հուշել պայուսակի գտնվելու տեղը:*

15.2. Վերաքննիչ դատարանը նշել է նաև. *«Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցների, մասնավորապես՝ վկաներ Կարինե Շահբազյանի, Նաիրուհի Գևորգյանի և Վարդան Գևորգյանի ցուցմունքների ուսումնասիրությունից հաստատվում է այն հանգամանքը, որ նրանք 2014 թվականի օգոստոսի 1-ին տեսել են Քրիստինե և Նարեկ Հարությունյաններին միասին տուժողի բնակարան մուտք ու ելք կատարելուց, կոնկրետ Քրիստինե Հարությունյանին՝ բնակարանի մուտքի դուռը տնից դուրս գալուց հետո փակելուց: Նրանց ցուցմունքների արժանահավատությունը հաստատվել է նաև կատարված քննչական փորձարարությամբ: Կասկած չի հարուցում նաև, որ նրանք տեսել են Ք. և Ն. Հարությունյաններին տուժողի բնակարան մուտք ու ելք կատարելուց հենց օգոստոսի 1-ին, քանի որ Կ.Շահբազյանի ու Ն.Գևորգյանի համար այդ օրը հիշարժան է եղել՝ Կարինե Շահբազյանի որդին գումար է նրանց ուղարկել, բացի այդ, դեպքից 2 օր անց են նրանք տեղեկացել, որ Ք.Քոչարյանի բնակարանից անհետացել են փաստաթղթերն և ոսկյա ու արծաթյա զարդերը, և այդ կարճ ժամանակահատվածում չէին կարող շփոթել»* (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանի սույն փաստարկի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկաներ Վ.Գևորգյանը, Ն.Գևորգյանը, Կ.Շահբազյանը թեև իրենց հակասական ցուցմունքներով (այդ առումով տե՛ս սույն որոշման 7-րդ կետը) նշում են Ք.Հարությունյանի կողմից տուժողի բնակարան մուտք գործելու մասին, սակայն միաժամանակ տուժողի, մի շարք վկաների ցուցմունքներով հիմնավորվում է նաև այն, որ ամբաստանյալ Ք.Հարությունյանը և նրա եղբայրն ազատ մուտք ու ելք են ունեցել տուժողի բնակարան, բացի այդ, վկաները նշել են, որ որևէ իր կամ առարկա չեն նկատել նրանց ձեռքում: Ընդ որում, դրա հետ կապված՝ հարկ է ընդգծել նաև Առաջին ատյանի դատարանի հետևյալ դատողությունը. *[Ո]րպես իրեղեն ապացույց հանդիսացող պայուսակի և դրանում առկա այլ իրերի ծավալն այնպիսին է, որ այն ամբաստանյալի կողմից հափշտակված լինելու պարագայում անհնար է թաքցնել հագուստի միջոցով, այն էլ ամառային հագուստի միջոցով (որոնց նկարագիրը տրվել է վկաների և ամբաստանյալի ցուցմունքով), որ նկատելի չլիներ»* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ «*Կ.Շահբազյանն ու Ն.Գևորգյանը Վ.Գևորգյանից գտնվել են 300-ից*

*400 մետր առաջ, վերջինս այդ ճանապարհ է մտել ու սկսել քայլել նրանցից մոտ 7 րոպե անց, և այդ ընթացքում Ք. և Ն. Հարությունյանները կարող էին նույնիսկ մի քանի անգամ մուտք գործել տուժողի բնակարան: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ եթե հիշյալ վկաները ճանապարհով պատահական անցնելուց չեն տեսել Ք. և Ն. Հարությունյանների ձեռքին պայուսակ, ուրեմն նախ այդ պայուսակը չի կարող վերցված լինի նրանց կողմից և հետո, որ այդ պայուսակը դրանից հետո կամ դրանից առաջ հնարավոր չէ վերցված լինի վերջիններիս կողմից»* (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոհիշյալը ենթադրություն է և կրում է հավանական բնույթ. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ որոշակի փաստական հանգամանքը չի կարող հաստատված համարվել դա վկայող ապացույցի բացակայության պայմաններում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկաներ Վ.Գևորգյանի, Ն.Գևորգյանի, Կ.Շահբազյանի ցուցմունքներով հնարավոր չէ ողջամիտ կասկածից վեր հաստատված համարել, որ ամբաստանյալ Ք.Հարությունյանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղսագրված հանցավոր արարքը:

15.3. Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված հետևյալ դիրքորոշումը. *«Առաջին ատյանի դատարանն անտեսել է (...) անչափահաս Ն.Հարությունյանի մասնակցությամբ կատարված քննչական փորձարարության արձանագրությամբ հաստատված այն փաստը, որ Ն.Հարությունյանը չի կարողացել բացել Ք.Քոչարյանի տան նախասրահից դեպի միջանցք տանող դուռը, և ձեռքը չի հասել հյուրասենյակի զգեստապահարանի վերջին դարակաշարին, այսինքն՝ նա չէր կարող ինքնուրույն բացել ու մուտք գործել տուժողի բնակարան»* (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վճռաբեկ դատարանի այս դատողությունը պայմանավորված է նրանով, որ սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը վերլուծության է ենթարկել նշյալ ապացույցը, ավելին՝ դրա արդյունքում եկել է հիմնավոր եզրահանգման առ այն, որ *Ն.Հարությունյանի ձեռքը համապատասխան պահարանին հասած չլինելու հանգամանքն ինքնին բավարար չէ փաստելու, որ գողությունը կատարել է Ք.Հարությունյանը* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15.4. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ *բացառվում է այլ անձի կողմից համապատասխան հանցավոր արարքը կատարելու հանգամանքը* (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն փաստարկով չի կարող «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարվել քննարկվող հանցագործությունն ամբաստանյալ Ք.Հարությունյանի կողմից կատարված լինելը:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ք.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքում ար-

դարացնելու մասին դատական ակտը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 127-րդ, 358-րդ հոդվածների խախտումներ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է վերջինիս կողմից կայացված դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտելով գործում առկա ապացույցները, չփարատված կասկածները մեկնաբանելով հօգուտ ամբաստանյալի, եկել է հիմնավոր եզրահանգման ամբաստանյալի անմեղության հարցում: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 21-ի արդարացման դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Քրիստինե Հարությունի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 25-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 21-ի արդարացման դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**2.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱՔԴ/0084/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ | |
| պաշտպան | Մ.ՖԱՐՄԱՆՅԱՆԻ |
| մեղադրող | Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆԻ |

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հայկ Վաչեի Գալստյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 16-ի որոշման դեմ պաշտպան Մ.Ֆարմանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2015 թվականի մայիսի 4-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 09108615 քրեական գործը:

2015 թվականի մայիսի 13-ին Հայկ Գալստյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի մայիսի 27-ին թիվ 09108615 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), և շնորհվել թիվ ԵԱՔԴ/0084/01/15 համարը:

2015 թվականի հունիսի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 09110415 քրեական գործը:

2015 թվականի հունիսի 10-ին Հ.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով:

2015 թվականի հունիսի 16-ին թիվ 09110415 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան և շնորհվել թիվ ԵԱՔԴ/0106/01/15 համարը:

2015 թվականի հունիսի 26-ի որոշմամբ թիվ ԵԱՔԴ/0084/01/15 և թիվ ԵԱՔԴ/0106/01/15 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում՝ գործի քննությունը շարունակելով թիվ ԵԱՔԴ/0084/01/15 համարով:

2015 թվականի հունիսի 1-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 09110115 քրեական գործը:

2015 թվականի հունիսի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 14135615 քրեական գործը, որը նույն թվականի հունիսի 30-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ընդունվել է վարույթ, միացվել թիվ 09110115 քրեական գործին՝ գործի քննությունը շարունակելով 09110115 համարով:

2015 թվականի հունիսի 29-ին Հ.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի հուլիսի 7-ին թիվ 09110115 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան, և շնորհվել թիվ ԵԱՔԴ/0127/01/15 համարը:

2015 թվականի հուլիսի 27-ին որոշմամբ թիվ ԵԱՔԴ/0084/01/15 և թիվ ԵԱՔԴ/0127/01/15 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում՝ գործի քննությունը շարունակելով թիվ ԵԱՔԴ/0084/01/15 համարով:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ

հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել և հռչակվել է Հ.Գալստյանի անմեղությունը՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Հ.Գալստյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 324-րդ հոդվածի 1-ին մասով, 177-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման համապատասխանաբար 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս, 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս, 9 (ինը) ամիս և 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետներով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, վերջինիս նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել ամբաստանյալ Հ.Գալստյանը և մեղադրող Ա.Առաքելյանը, որոնց քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մայիսի 16-ին վերաքննիչ բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 16-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Գալստյանի պաշտպան Մ.Ֆարմանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ ամբաստանյալ Հ.Գալստյանի պաշտպան Մ.Ֆարմանյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Հայկ Վաչեի Գալստյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 324-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 1-ին մասով հետևյալ արարքների համար. *«[Հայկ Գալստյանը] 21.04.2015թ.-ին, ժամը 20:30-ի սահմաններում Երևան քաղաքի Նաիրի Զարյան փողոցից նստել է Վալերիկ Հովհաննեսի Պոչիկյանի կողմից վարվող «Օպել Աստրա» մակնիշի 34 ՕՐ 212 հաշվառման համարանիշի տաքսի ավտոմեքենան և պատվիրել վարել Արմավիրի մարզի Խաթունաղ գյուղ, ճանապարհին մտերմանալով վերջինիս հետ, ձեռք բերելով նրա վստահությունը, Խաթունաղ գյուղի «Գայ» սուպերմարկետի մոտ իբր ծանոթից գումար ստանալու պատրվակով Վ.Պոչիկյանից վերցրել է ավտոմեքենան, նրան թողել Խաթունաղ գյուղում և հեռացել: Արգավանդ գյուղում, օգտագործելով իրեն վստահված գույքի նկատմամբ ունեցած լիա-*

*զորությունները, ապօրինի, անհատույց շահադիտական նպատակներով մեքենայի սրահից հափշտակել է 7.000 ՀՀ դրամ գումար, ավտոմեքենայի էլեկտրոնային հաշվիչը՝ լուսային համակարգի հետ միասին, պահեստային բանալին, նավիգացիոն համակարգի աջ կողային ալեհավաքը, որից հետո Երևան քաղաքի Զ.Քանաքեռցու 126/1 շենքի բակում փոխել է մեքենայի 4 անվադողերը իրենց անվահեծերով, հաջորդ օրը՝ 22.04.2015թ.-ին ժամը 03-ի սահմաններում՝ ավտոմեքենան թողել է Երևան քաղաքի Սարկավագի փողոցի «Ծիրան» սուպերմարկետի մոտ և հեռացել՝ Վ.Պոչիկյանին պատճառելով զգալի չափերի՝ 481.500 ՀՀ դրամի գույքային վնաս:*

*Բացի այդ, նա ապօրինի կերպով կրվող սառը զենք հանդիսացող որսորդական դանակի գործադրմամբ Վաղինակ Մուրադյանի կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով հարձակում է գործել վերջինիս նկատմամբ և հափշտակել 80.000 ՀՀ դրամ արժեքով ոսկյա մատանին:*

*Այսպես՝ 2015 թվականի հունիսի 7-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում Հայկ Գալստյանը, նստելով Վաղարշակ Մուրադյանի կողմից վարվող տաքսի ավտոմեքենան, պատվիրել է այն վարել տարբեր վայրեր, որից հետո՝ ժամը 18:30-ի սահմաններում հասնելով Երևան քաղաքի Զ.Սարկավագի 126/1 շենքի մոտ Վ.Մուրադյանի մատին եղած ոսկյա մատանուն տիրանալու նպատակով Հ.Գալստյանը վերջինիս ասել է, որ այն հավանել է ու իր համար նույն մատանուց պատվիրելու համար այն հարազատներին ցույց տալու և ուղեվարձը վճարելու պատրվակով առաջարկել է միասին բարձրանալ իր բնակարան: Վերելակով նշված շենքի 6-րդ հարկ բարձրանալիս Վ.Մուրադյանը Հ.Գալստյանի խնդրանքով մատից հանել և նրան է փոխանցել իր 80.000 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա մատանին, ապա շենքի 6-րդ հարկի հարթակ դուրս գալուն պես Վ.Մուրադյանը պահանջել է վերադարձնել մատանին, սակայն Հ.Գալստյանը փաստացի խաբեությամբ տիրացած լինելով ուրիշի գույքին, մերժել է՝ ասելով, թե ինչ մատանու մասին է խոսքը: Երբ Վ.Մուրադյանը շարունակել է պահանջել վերադարձնել իր գույքը, Հ.Գալստյանը հափշտակված ոսկյա մատանին իր մոտ պահելու նպատակով իր կողմից կրվող ուսապարկի միջից հանել է սև գույնի պատյանով սառը զենք հանդիսացող որսորդական դանակը և այն պահելով Վ.Մուրադյանի ուղղությամբ, հարձակում է գործել՝ կտրուկ շարժվել է դեպի վերջինս՝ ասելով, որ փախչի այդտեղից: Վ.Մուրադյանը իր կյանքի համար իրական վտանգ զգալով, անմիջապես դիմել է փախուստի, իսկ Հ.Գալստյանը իր կողմից ապօրինի կրվող սառը զենք հանդիսացող որսորդական դանակի գործադրմամբ Վ.Մուրադյանի կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով հափշտակել է վերջինիս 80.000 ՀՀ դրամ արժողությամբ մատանին:*

*Բացի այդ, նա 18.05.2015թ-ին ժամը 02:00-ին Երևան քաղաքի Զ.Սարկավագի 126/1 շենքի 16 հասցեում գտնվող բնակարանում՝ օգտվելով հարմար առիթից, Հասմիկ Ջոնիկի Բաբախանյանի պայուսակը ճաշասենյակից ննջասենյակ տեղափոխելու ընթացքում գաղտնի հափշտակել է վերջինիս*

*ՀՀ քաղաքացու անձնագիրը, որի մեջ եղել է զգալի չափ կազմող 47.000 ՀՀ դրամ գումար:*

*Բացի այդ, ընկերոջը զանգահարելու պատրվակով Հ.Գալստյանը Հ.Բաբախանյանի վստահությունը չարաշահելու եղանակով զգալի չափերի խարդախություն կատարելու դիտավորությամբ վերջինիցս վերցրել է 30.000 ՀՀ դրամ արժողության «NOKIA» մոդելի բջջային հեռախոսը և հափշտակել այն»* (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 76-78):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված է համարվել հետևյալը. *« (…) [Դ]ատարանը գտնում է, որ պետք է ճանաչել և հռչակել ամբաստանյալ Հայկ Գալստյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցանքի կատարման մեջ՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:*

*Վերլուծելով և գնահատելով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված դրվագներով դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցներն իրենց համակցության մեջ՝ դատարանը ձեռք բերված ապացույցները բավարար է գտնում և գործի փաստական հանգամանքներով հաստատված է համարում [ամբաստանյալ Հ.Գալստյանին առաջադրված մեղադրանքը]:*

*Նման եզրահանգման համար դատարանը հիմք է ընդունում հատկապես տուժողներ Վալերիկ Պոչիկյանի, Հասմիկ Բաբախանյանի ցուցմունքները, դատաքննության ժամանակ հետազոտված մյուս ապացույցները, քանի որ դրանք օբյեկտիվ ու ճշմարտացի են, համապատասխանում են դատարանի կողմից հաստատված գործի փաստական հանգամանքներին և հաստատվում են գործի մյուս ապացույցների հետ համակցության մեջ: (…) Վ.Պոչիկյանից և Հ.Բաբախանյանից հափշտակություն կատարելու դրվագներով ամբաստանյալ Հայկ Գալստյանի մեղքը հիմնավորող վերը շարադրված ապացույցները ձեռք են բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ:*

*(…) [Վ]երլուծելով և գնահատելով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով մեղսագրված դրվագով դատական քննության ժամանակ հետազոտված ամբաստանյալի, տուժող Վաղարշակ Մուրադյանի ցուցմունքները, սույն դրվագով ձեռք բերված մյուս ապացույցներն իրենց համակցության մեջ՝ դատարանը ձեռք բերված ապացույցները բավարար է գտնում և գործի փաստական հանգամանքներով հաստատված է համարում, որ (…) Երևան քաղաքի Զ.Սարկավագի 126/1 շենքի մոտ Վ.Մուրադյանի մատին եղած ոսկյա մատանուն տիրանալու նպատակով Հ.Գալստյանը վերջինիս ասել է, որ այն հավանել է ու իր համար նույն մատանուց պատվիրելու համար այն հարազատներին ցույց տալու և ուղեվարձը վճարելու պատրվակով առաջարկել է միասին բարձրանալ իր բնակարան: Վերևակող նշված շենքի 6-րդ հարկ բարձրանալիս Վ.Մուրադյանը Հ.Գալստյանի խնդրանքով մատից հանել և նրան է փոխանցել իր 80.000 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա*

*մատանին, ապա շենքի 6-րդ հարկի հարթակ դուրս գալուն պես Վ.Մուրադյանը պահանջել է վերադարձնել մատանին, սակայն Հ.Գալստյանը, փաստացի տիրացած լինելով այդ գույքին, մերժել է՝ ասելով, թե ինչ մատանու մասին է խոսքը: Երբ Վ.Մուրադյանը շարունակել է պահանջել վերադարձնել իր գույքը, Հ.Գալստյանը հափշտակված ոսկյա մատանին իր մոտ պահելու նպատակով իր կողմից կրվող ուսապարկի միջից հանել է որսորդական դանակի սև գույնի պատյանը և այն պահելով Վ.Մուրադյանի ուղղությամբ, հարձակում է գործել՝ կտրուկ շարժվել է դեպի վերջինս՝ ասելով, որ փախչի այդտեղից: Վ.Մուրադյանը կատարվածը ընկալելով որպես դանակով հարձակում՝ իր կյանքի համար իրական վտանգ զգալով, անմիջապես դիմել է փախուստի, իսկ Հ.Գալստյանը հափշտակել է վերջինիս 80.000 ՀՀ դրամ արժողությամբ մատանին: Տվյալ դեպքում տուժողն իր ոսկյա մատանին Հայկ Գալստյանին տալուց հետո վերջինիս հետ բազմաբնակարան շենքի աստիճանահարթակում միայնակ գտնվելով՝ նրա կողմից դեպի իրեն դանակի պատյանը պարզելու (դանակի առկայությունը կամ բացակայությունը չի երևացել) և սպառնալիք հնչեցնելու պայմաններում ճշմարտացիորեն այդ սպառնալիքն ընկալել է որպես իր կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն սպառնալիք ու դիմել է փախուստի:*

*Դատարանը գտնում է, որ նման դեպքում տուժողի ընկալումը անչափ կարևոր է: Եթե իրականում սպառնալիքը կյանքի կամ առողջության համար վտանգավոր չի եղել, բայց տուժողին այդպիսին է թվացել, և նա հավատացած է եղել, որ գույքը չհանձնելու դեպքում իր կյանքին և առողջությանը վտանգ է սպառնում, առկա է ավազակության հանցակազմը: Այսինքն՝ Հայկ Գալստյանի այդ արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցակազմը:*

*(…)*

*[Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ] գործով ապացուցված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը, քանի որ գործով ձեռք բերված ապացույցներով, չփարատված կասկածները ամբաստանյալի օգտին մեկնաբանելով՝ դատարանը չի կարող ապացուցված համարել, որ դեպքին նախորդող և դեպքի պահին Հայկ Գալստյանի մոտ առկա է եղել սառը զենք հանդիսացող որսորդական դանակ, որի գործադրմամբ էլ ամբաստանյալը կատարել է ավազակությունը: Այդ հանգամանքը չեն հաստատել տուժող Վ.Մուրադյանը և ամբաստանյալ Հ.Գալստյանը իրենց ցուցմունքներով, իսկ սառը զենքի առկայությունը բավարար չէ մեղադրանքի այդ մասն ապացուցված համարելու համար»* (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 75-86):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ *«(…) [Առաջին ատյանի դատարանն] ամբաստանյալ Հայկ Վաչեի Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով*

*մեղսագրված արարքների քրեաիրավական որակման հարցում հանգել է վերջնական ճիշտ եզրակացության, հետևաբար վիճարկվող դատական ակտը բեկանելու, փոփոխելու, ինչպես նաև գործը նոր դատաքննության ուղարկելու հիմքեր չկան:*

*(...) [Վ]երաքննիչ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Հայկ Վաչեի Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում անմեղ ճանաչելու և այդ մասով արդարացնելու հարցում հանգել է վերջնական ճիշտ եզրակացության, հետևաբար վիճարկվող դատական ակտն այդ մասով ևս բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան*» (տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթ 114-131):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 107-րդ, 207-րդ, 365-րդ և 397-րդ հոդվածները, ինչպես նաև կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, որը չպետք է կիրառեին:

Վճռաբեկ բողոքի հեղինակն ի հիմնավորումն իր փաստարկների նշել է, որ տուժողի առողջությանը և կյանքին փաստացի վնաս չի պատճառվել, իսկ եթե բռնությունը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը վտանգավոր չէ, ապա այդ դեպքում առկա է կողոպուտի հանցակազմը: Հ.Գալստյանի կողմից հնչեցված «փախիր այստեղից» սպառնալիքը չկատարելու դեպքում տուժողի նկատմամբ որևէ այլ սպառնալիք չի հնչեցվել, վերջինս իր կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիք չի լսել: Հետևաբար տուժողի ընկալումն սպառնալիքի վերաբերյալ թվացյալ է եղել, վերջինս չափազանցրել է սպառնացող վտանգի բնույթը:

Անդրադառնալով որպես զենք գործադրված առարկային՝ բողոքաբերը նշել է, որ վերջինս եղել է սև կտորից կարված կամ պատրաստված պատյանը, որի ցանկացած հատվածից բռնելու դեպքում այն կծալվի, և հարձակման ենթարկվողը կտեսնի, որ դրա մեջ դանակ չկա: Ըստ բողոքաբերի՝ դա որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրում չի կարող համարվել, ուստի Հ.Գալստյանի արարքում առկա է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, այլ 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հանցակազմը:

8.1 Բողոք բերած անձը, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին և 324-րդ հոդվածի 1-ին մասերով առաջադրված մեղադրանքներին, նշել է, որ ստորադաս դատարաններն այդ մեղադրանքների հիմքում դրել են տուժող Հ.Քաբախանյանի ցուցմունքը, մինչդեռ, ըստ բողոքաբերի, այն արժանահավատ չէ, և գործի տվյալներով չի հաստատվում, որ տուժողը դեպքի պահին ունեցել է 47.000 ՀՀ դրամ:

Բողոքաբերը նշել է նաև, որ գործով չի հաստատվել նշված տուժողի անձնագիրը Հ.Գալստյանի կողմից հափշտակելու հանգամանքը:

9. Ելնելով վերոշարադրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 1-ին մասով գործի վարույթը կարճել և Հայկ Գալստյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով որակված արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կատարված ավազակության մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Հ.Գալստյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ավազակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում[ն է], որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով (...):*

*2. Ավազակությունը, որը կատարվել է՝*

*(...)*

*4) զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ՝ (...)»:*

Սեջքերված նորմերի մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ժ.Ղուկասյանի և այլոց* գործով որոշմամբ՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«[Ա]վազակության հասարակ և որակյալ տեսակների դեպքում օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող բռնությունը կամ դրա սպառնալիքը կարող են լինել բացառապես կյանքի կամ առողջության համար վտանգավոր, [հ]ետևաբար յուրաքանչյուր դեպքում անձի արարքը որպես ավազակություն (...) որակելիս պետք է գործի բավարար փաստական տվյալներով հիմնավորել, թե ինչում է արտահայտվել բռնության կամ դրա սպառնալիքի բռնանդակությունը, և արդյո՞ք դրանք կյանքի կամ առողջության համար վտանգավոր են եղել, թե՞ ոչ:*

*[Բ]ռնության տարբեր դրսևորումների՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր լինելը որոշվում է՝ ելնելով՝*

*ա) կյանքի կամ առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանից,*

*բ) հանցագործության բնույթից, կատարման եղանակից, կատարման մեխանիզմի առանձնահատկություններից և այլն:*

*(...) Հանցագործության, տվյալ դեպքում՝ ավազակության բնույթից, կատարման եղանակից, կատարման մեխանիզմի առանձնահատկություններից և այլնից ելնելով՝ բռնությունը գնահատվում է որպես կյանքի կամ առողջության համար վտանգավոր նաև այն դեպքում, երբ դրա կիրառման պահին իրական վտանգ է ստեղծվել տուժողի կյանքի կամ առողջության համար: Այսպես, գույքը հափշտակելու նպատակով հանցավորը, առանց վնաս պատճառելու, կիրառում է զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ կամ բռնությունը կիրառում է տուժողի կյանքի համար վտանգավոր այլ եղանակներով (օրինակ՝ խեղդում է տուժողին, տարբեր ձևերով փակում է նրա շնչառությունը և այլն): Նման դեպքերում բռնության բնույթը որոշվում է գործի բոլոր հանգամանքները (բռնության գործադրման եղանակ, գործիքներ, հանցակիցների քանակ, դեպքի կատարման ժամանակ, տեղ և այլն) հաշվի առնելով (...)»* (տե՛ս *Ժ.Ղուկասյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշման 16-17-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով արարքը զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կատարված ավազակություն որակելու խնդրին, *Ժ.Ղուկասյանի և այլոց* գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Ա]յն դեպքում, երբ զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկան փաստացի չի գործադրվել, սակայն կոնկրետ իրավիճակում դրանք տուժողի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ են ստեղծել (օրինակ՝ հարձակման ժամանակ հանցավորը զենքը կամ որպես զենք օգտագործվող այլ առարկան հպում է տուժողի որովայնին, կոկորդին կամ կենսական կարևոր նշանակություն ունեցող այլ օրգաններին), արարքը պետք է որակել որպես ավազակություն: [Ն]կարագրված դեպքում տուժողի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ է ստեղծվում, քանի որ ցանկացած պահի, այդ թվում՝ տուժողի կողմից դիմադրություն ցույց տալու կամ փախուստի փորձի դեպքում հանցավորի դիտավորյալ կամ անզգույշ գործողություններով տուժողի կյանքին կամ առողջությանը կարող է վնաս պատճառվել: [Զ]ենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը տուժողի գույքը հափշտակելու նպատակով հարձակման ընթացքում դրանց փաստացի օգտագործումն է, օգտագործման փորձը կամ դրանցով սպառնալիք տալը: [Իսկ այն դեպքում], երբ հանցավորը զենքը կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաները փաստացի չի օգտագործել, չի փորձել օգտագործել կամ դրանցով սպառնալիք տալ, սակայն հանցավորի մոտ դրանց առկայությունը կոնկրետ դեպքում տուժողի կյանքի*

*կամ առողջության համար ստեղծել է իրական վտանգ, արարքը ենթակա է որակման որպես հասարակ ավազակություն* (տե՛ս *Ժ.Ղուկասյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշման 18-րդ և 21-րդ կետերը):

13. Վերահաստատելով և զարգացնելով *Ժ.Ղուկասյանի և այլոց* գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կատարված ավազակություն որակելու համար, այլ պայմաններից զատ, անհրաժեշտ է հաստատված համարել հանցավորի մոտ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների առկայությունը: Այսպես՝ անձի արարքը զենքի գործադրմամբ ավազակություն որակելիս վարույթ իրականացնող մարմինը պետք է օրենքով սահմանված կարգով ապացուցված համարի, որ հանցավորի կողմից օգտագործվել է սարք կամ առարկա, որն իր կառուցվածքով նախատեսված է կենդանի կամ այլ նշանակետ խոցելու կամ ազդանշան արձակելու համար («Զենքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի ա) կետ): Ինչ վերաբերում է որպես զենք օգտագործվող առարկայով կատարված ավազակությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես զենք օգտագործվող կարող են լինել այն առարկաները, որոնց օգտագործմամբ կարող է պատճառվել անձի մահ կամ առողջությանը վնաս (օրինակ՝ կացին, խոհանոցային դանակ, մուրճ և այլն):

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հանցավորը գիտակցում է, որ գույք հափշտակելու նպատակով սպառնում է ոչ պիտանի զենքով կամ զենքին նմանվող առարկայով (զենքի նմանակում՝ խաղալիք դաշույն, ատրճանակի մակետ և այլն), հնարավորություն չունենալով դրանցով տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր վնաս հասցնել, ապա հանցավորի գործողությունները չեն կարող որակվել զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ ավազակություն: Ասվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ հանցավորը գործադրում է այնպիսի առարկա (օրինակ՝ մետաղից պատրաստված ատրճանակի մակետ), որով ինքնին հնարավոր է տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր վնաս հասցնել:

Ակնհայտորեն ոչ պիտանի զենքի կամ զենքին նմանվող առարկայի օգտագործմամբ հարձակում գործելիս հանցավորը տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիք է տալիս՝ նպատակ ունենալով վախեցնել տուժողին, կոտրել նրա կամքն ու հնարավոր դիմադրությունը և տիրանալ գույքին: Հետևաբար քննարկվող դեպքերում անձի գործողությունները (այլ որակչյալ հատկանիշների բացակայության դեպքում) կարող են որակվել որպես հասարակ ավազակություն: Իսկ այն դեպքում, երբ տուժողի համար նույնպես ակնհայտ է, որ հանցավորի կողմից օգտագործվում է ոչ պիտանի զենք կամ զենքին նմանվող առարկա, որը չի կարող նրա կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծել, արարքը պետք է որակվի որպես կողոպուտ *(ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ*

*հոդվածով նախատեսված հանցակազմը (ավազակություն) ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով նախատեսված հանցակազմից (կողոպուտ) տարանջատելու և նշված հանցակազմերի մեկնաբանման վերաբերյալ մանրամասն տե՛ս Ժ.Ղուկասյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշումը):*

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինի կերպով կրվող սառը զենք հանդիսացող որսորդական դանակի գործադրմամբ Վ.Մուրադյանի կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով հարձակում է գործել վերջինիս նկատմամբ և հափշտակել 80.000 ՀՀ դրամ արժեքով ոսկյա մատանի (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ Հ.Գալստյանը տուժողից վերցրած ոսկյա մատանին իր մոտ պահելու նպատակով իր կողմից կրվող ուսապարկի միջից հանել է **որսորդական դանակի սև գույնի պատյանը** և այն պահելով Վ.Մուրադյանի ուղղությամբ՝ հարձակում է գործել՝ ասելով, որ փախչի այդտեղից (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Արդյունքում Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Հ.Գալստյանին ճանաչել է անմեղ՝ *ապացուցված չհամարելով դեպքին նախորդող և դեպքի պահին ամբաստանյալի մոտ սառը զենք հանդիսացող որսորդական դանակի առկայությունը*: Միևնույն ժամանակ ստորադաս դատարանը հաստատված է համարել Հայկ Գալստյանի այդ արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայությունը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ եզրակացության, դատական ակտը թողել է անփոփոխ (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 12-13-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Հայկ Գալստյանին մեղավոր են ճանաչել զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ ավազակության համար այն պայմաններում, երբ ապացուցված չեն համարել նրա մոտ դանակի առկայության փաստը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Գալստյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

15.1. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 8.1-րդ կետում շարադրված փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատշաճ

իրավական ընթացակարգի շրջանակներում, գործով բոլոր ապացույցների (տուժողներ Վալերիկ Պոչիկյանի, Հասմիկ Բաբախանյանի ցուցմունքների, զննության՝ 2015 թվականի մայիսի 26-ի արձանագրության և դատաբժշկական փորձաքննության փորձագետի թիվ 1282 եզրակացության) բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում ստորադաս դատարանները հանգել են հիմնավոր հետևության ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունները կատարելու մեջ Հայկ Գալստյանի մեղավորության վերաբերյալ:

16. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հաստատված չհամարելով դեպքի պահին ամբաստանյալ Հայկ Գալստյանի մոտ դանակի առկայության փաստը և, միևնույն ժամանակ, վերջինիս մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ ավազակության համար, կիրառել են այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Արդյունքում ստորադաս դատարանները թույլ են տվել գործի ելքի վրա ազդող դատական սխալ, ինչը հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերն այդ մասով բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար: Նոր քննության ընթացքում անհրաժեշտ է սույն որոշման իրավական դիրքորոշումների լույսի ներքո բազմակողմանի վերլուծության և գնահատման ենթարկել գործի հանգամանքները և արդյունքում օրենքով սահմանված կարգով հանգել համապատասխան հետևության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հայկ Վաչեի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 324-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 16-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի

175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանել և գործն այդ մասով ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Հայկ Վաչեի Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**3.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՏԴ/0085/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ազատ Էդվարդի Խլղաթյանի և Աշոտ Ռուդիկի Աթաբեկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2013 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 38110313 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ Ազատ Էդվարդի Խլղաթյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Աշոտ Ռուդիկի Աթաբեկյանը նույնպես ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2014 թվականի դեկտեմբերի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Խլղաթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ ամբաստանյալ Ա.Աթաբեկյանը՝ 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Ամբաստանյալ Ա.Խլղաթյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված կանոններով նշանակված պատժին հաշվակցվել է ամբաստանյալ Ա.Խլղաթյանի կալանքի տակ գտնվելու 5 (հինգ) ամիս 25 (քսանհինգ) օր ժամկետը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 9 (ինը) ամիս 5 (հինգ) օր ժամկետով:

Ամբաստանյալ Ա.Աթաբեկյանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված կանոններով նշանակված պատժին հաշվակցվել է ամբաստանյալ Ա.Աթաբեկյանի կալանքի տակ գտնվելու 1 (ամիս) ամիս 6 (վեց) օր ժամկետը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 10 (տասը) ամիս 24 (քսանչորս) օր ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Խլղաթյանի պաշտպան Ռ.Հակոբյանի, ամբաստանյալ Ա.Աթաբեկյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հունիսի 21-ի որոշմամբ բողոքները բավարարել է մասնակի, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի դատավճիռը և ամբաստանյալ Ա.Խլղաթյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքով՝ ազատելով նրան քրեական պատասխանատվությունից: Վերաքննիչ դատարանը Ա.Խլղաթյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ հաշվակցելով անազատության մեջ գտնվելու 5 (հինգ) ամիս 25 (քսանհինգ) օրը: ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (վաղեմության ժամկետներն անցած լինելու) հիմքով ամբաստանյալ Ա.Խլղաթյանն ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատժից: Ամբաստանյալ

Ա.Խլղաթյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ գրավը, թողնվել է անփոփոխ:

Վերաքննիչ դատարանը Ա.Աթաբեկյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով: ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (դիմողի բողոքի բացակայություն) հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է՝ վերացնելով Ա.Աթաբեկյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց գրավը:

3.1. Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման կապակցությամբ դատավոր Մ.Պապոյանը ներկայացրել է հատուկ կարծիք, որով իր անհամաձայնությունն է հայտնել ամբաստանյալ Ա.Խլղաթյանի արարքի որակման կապակցությամբ՝ նշելով, որ ամբաստանյալի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշները, իսկ դատավոր Կ.Ղազարյանն իր հատուկ կարծիքում ընդգծել է, որ ամբաստանյալ Ա.Խլղաթյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշները:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Ամբաստանյալ Ա.Խլղաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(…) 2013թ. դեկտեմբերի 20-ին՝ ժամը 21-ի սահմաններում, Իջևան քաղաքի բնակիչ Վալերիկ Հովսեփի Աղինյանին պատկանող «Դրուժբա» կոչվող ռեստորանում, քիչ առաջ նույն օբյեկտում տեղի ունեցած վիճաբանությունից հետո, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ՝ սեռական բնույթի հայհոյանքներ տալով ինչպես ռեստորանի աշխատակիցների, այնպես էլ իջևանցիների հասցեին, զենքի գործադրմամբ՝ ձեռքին եղած ինքնաձիգից կրակոցներ է արձակել ռեստորանի բարի և առաստաղի ուղղությամբ, դրանով հանրավտանգ եղանակով դիտավորությամբ վնասել Վ.Աղինյանին պատկանող գույքը՝ պատճառելով գույքային վնաս: (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 169):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(…) [Ա]մբաստանյալ Ազատ Էդվարդի Խլղաթյանին մեղսագրված արարքները*

*հաստատված են, ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 4-րդ, 235 հոդվածի 1-ին մասով ճիշտ են որակված, որոնց համար նա ենթակա է պատժի:*

*(…)*

*[Դ]ատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ազատ Էդվարդի Խլղաթյանի նկատմամբ պետք է նշանակել ազատազրկման ձևով պատիժ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի կիրառմամբ, որպիսին անհրաժեշտ ու բավարար է նրա ուղղման, այլ հանցագործության կանխման և սոցիալական արդարության վերականգնման համար (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 66-69):

7. Առաջին ատյանի դատարանը դատավճռի հիմքում, ի թիվ այլոց, դրել է նաև դատաքննության ընթացքում ամբաստանյալ Ա.Խլղաթյանի, տուժողներ Վ.Աղինյանի, Լ.Խոջոյանի, Ա.Դարբինյանի տված հետևյալ ցուցմունքները.

- ամբաստանյալ Ա.Խլղաթյան՝ «(...) *[Իր կողմից] կրակելու պահին բացի իրենց տղաներից և ռեստորանի աշխատակիցներից, նաև սրահում եղել են այդ 4-5 տղաները, որոնք իր ենթաղրությամբ եկել էին հաշիվ մաքրելու* (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 66),

- տուժող Վ.Աղինյան՝ «(...) *Ինքը դուրս է եկել իր հանգստյան սենյակից ու գնացել դահլիճ, որտեղ տեսել է Աշոտին ու Ազատին, մյուսներին չի ճանաչում: Դահլիճում մի 5-6 հոգի կային, որոնց մեջ նաև երկու ամբաստանյալներն էին: Տեսել է, որ Աշոտն ու Ազատն իրենց մոտ եղած այդ մի քանի տղաներից մեկին ուզում էին դուրս հանել ու շարժվել-գնալ, ու այդ պահին մի 4-5 տղաներ մտան:* (...) *Ազատը կրակել է օդում, դահլիճի մեջ, առաստաղին, Աշոտն էլ իրեն ու կնոջը տարել է իր հանգստյան սենյակ* (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 66-67):

- տուժող Լ.Խոջոյան՝ «(...) *Մնացել էին 3-4 հոգի, մյուսները գնացել էին: Այդ 3-4 հոգու մեջ էին Աշոտն ու Ազատը, մեկը կար, որին ուզում էին դուրս հանել, բայց այդ մեկը թե խմած էր, թե ինչ էր՝ կպել էր պատից, չէր ուզում դուրս գալ: Այդ պահին մի քանի հոգի իջևանցի տղաներ եկան, եկել էին, որ պատվեր տային, ինքն էլ ասել է, որ իրավիճակն այնպիսին է, որ պատվեր չեն ընդունում, և որ գնան: Այդ բոլով տղան, որը երևի Ազատն էր, դեմքը լավ չի հիշում, այս վերջին 4-5 հոգի իջևանցիներին ընկալեց իբրև իր հակառակորդների, գնաց բերեց զենքը ու կրակեց* (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 66-67),

- տուժող Ա.Դարբինյան՝ «(...) *Հետո Ազատն ասաց՝ տվեք մեքենայի բանալիները ու դուրս եկավ: Դահլիճում մի 5-6 հոգի կային, հաճախորդներ էին եկել: Հետո Ազատը զենքը ձեռքին եկավ ասաց՝ «դուք՝ իջևանցիներդ, կտեսնեք», ու կրակեց* (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 67):

7.1. Դեպքի վայրի զննության արձանագրության համաձայն՝ դեպքի վայրի զննությունը կատարվել է 2013 թվականի դեկտեմբերի 21-ին՝ ժամը 02:40-ից մինչև 04:00-ը, դեպքի վայր է «Դրուժբա» ռեստորանը, որտեղից

դեպքի վայրի զննության արդյունքում առգրավվել է 4 հատ պարկուճ, 2 հատ գնդակ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 8-10):

7.2. Ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Այվազյանի կազմած թիվ 725 հեռախոսագրի համաձայն՝ *«2013 դեկտեմբերի 21-ին՝ ժ. 20:15-ին, մի քաղաքացի, ներկայանալով, որ ինքը 1980թ. ծնված Ազատ Խղոյանն է (...), հայտնել[է] է, որ իրենց տան մոտ գտնվող կանաչ գույնի՝ ջրի համար նախատեսված դատարկ ցիստեռնի տակ զենք կա դրված՝ իր փամփուշտով (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 6)

7.3. 2013 թվականի դեպտեմբերի 21-ին Վանաձոր քաղաքի Խնձորուտ 6-րդ փողոցի 2-րդ տան հարավային հատվածում գտնվող կանաչ՝ ջրի համար նախատեսված դատարկ ցիստեռնի տակ՝ կտորի մեջ փաթաթված, հայտնաբերվել է «ԱԿՀ-Ս» տեսակի, 1978 թվականի արտադրության, 690180 գործարանային համարով ինքնաձիգ՝ իր պահունակով, որի մեջ առկա են 5 հատ 5.45 մմ տրամաչափի փամփուշտներ (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 6, 7-13):

8. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. *«(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Ազատ Խղոյանի կողմից ինքնաձիգից արձակած կրակոցներն ուղղված չեն եղել որևէ մեկին մարմնական վնասվածք հասցնելու, ինչպես նաև այդ գործողություններն իրական վտանգ չեն ստեղծել անձանց կյանքի կամ առողջության համար:*

*Վերաքննիչ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ Ազատ Խղոյանի կողմից կատարած կրակոցները հիմնականում եղել են ռեստորանի առաստաղի, պատի և բարի ուղղություններով, իսկ քրեական գործով ձեռք չեն բերվել որևէ տվյալներ, որ այդ ուղղություններով կատարված կրակոցները նպատակ են ունեցել մարմնական վնասվածք հասցնելու կամ դրա փորձ իրականացնելու, կամ կրակոցներն իրական վտանգ են առաջացրել անձանց կյանքի կամ առողջության համար:*

*Միաժամանակ Վերաքննիչ դատարանի համար ընդունելի է, որ կրակոցներն առաջացրել են վախի և տագնապի մթնոլորտ, սակայն այդ հանգամանքն ինքնին չի կարող վկայել, որ կրակոցների արդյունքում ռեստորանի սրահում գտնված անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ է առաջացել: Ավելին՝ տուժողները հիմնականում նշում են, որ կրակոցները եղել են առաստաղի ուղղությամբ, և դրանով վնասվել է իրենց գույքը:*

*(...)*

*Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ազատ Խղոյանը, ինքնաձիգով կրակոցներ արձակելով, կատարել է խուլիգանություն, և որի արդյունքում՝ «Դրուժբա» ռեստորանի գույքի վնասմամբ 75000 ՀՀ դրամ գույքային վնաս է պատճառվել: Հետևաբար Վերաքննիչ դատարանը, ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումը հիմք ընդունելով, գտնում է, որ Ազատ Խղոյանի արարքը համապատասխա-*

*նում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասին, այլ ոչ թե նույն հոդվածի 4-րդ մասին: Այսինքն՝ ամբաստանյալը կատարել է խուլիգանություն՝ զուգորդված ուրիշի գույքի զգալի չափերով վնասումով: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 72-74):

8.1. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա ամբաստանյալ Ա.Խլղաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվությունից ազատել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է՝ արձանագրելով հետևյալը. *[ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 և 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՆԴ/0011/01/14] որոշումներից պարզ է դառնում, որ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառման արգելքը պայմանավորել է ոչ թե միայն ապօրինի պահվող զենքի գործադրմամբ զուտ հանրորեն վտանգավոր արարք կատարելու հետ, այլ ապօրինի պահվող զենքի գործադրմամբ հանցանք կատարելու և այդ մասին վարույթն իրականացնող մարմնին հաստատապես հայտնի լինելու հանգամանքներով: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված արգելքը չի կարող տարածվել բոլոր այն դեպքերի վրա, երբ ապօրինի պահվող զենքով հանցանք է կատարվում, սակայն այդ մասին, մասնավորապես՝ կատարված փաստի կամ հանցանք կատարող անձի մասին, վարույթն իրականացնող մարմինը հաստատապես տեղեկացված չի լինում: Տվյալ դեպքերում կամովին հանձնումն առկա է: Հետևաբար ապօրինի պահվող զենքով միայն հանցանքի կատարումն ինքնին բավարար չէ, կամովին հանձնելու դեպքում, քրեական պատասխանատվությունից ազատելու երաշխիքի սահմանափակումը:*

*(...)*

*Վերը նշված մեկնաբանությունների արդյունքում Վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ կամովին հրաժարման (զենքի կամովին ներկայացման) առկայության կամ բացակայության համար նախատեսված են հետևյալ նախապայմանները: Նախ՝ ապօրինի զենքի գործադրման մասին իրավապահ մարմինների հաստատապես տեղեկացված լինելը, հաջորդ նախապայմանը՝ հանցանք կատարող անձի մոտ իրեն բացահայտելու և զենքը հայտնաբերելու իրական սպառնալիքի գիտակցելը:*

*(...)*

*Սույն գործի նյութերից պարզ է դառնում, որ դեպքը տեղի է ունեցել 2013 թվականի դեկտեմբերի 20-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում: Տուժող Լեյլի Խոջայանը հանցագործության մասին հաղորդում ներկայացրել է 2013 թվականի դեկտեմբերի 21-ին (հաղորդման ներկայացման ժամը նշված չէ), մասնավորապես նշել է, որ Աշոտ Աթաբեկյանը ոմն Սլավիկի և ևս մի քանի անձանց հետ օբյեկտում ճաշկերույթ են արել, որի ընթացքում վերջինները ծեծի են ենթարկել Ալիկ Բաղմանյանին, իսկ ոմն Էդոյի տղան ինքնաձիգից կրակոցներ է արձակել: Նույն օրը կազմվել է նաև օպերատիվ հաղորդագրության քարտ, որտեղ նշվել է, որ Ա.Խլղաթյանը «Դրուժբա» ռեստորանում*

*ինքնաձիգից կրակոցներ է արձակել: Քրեական գործը նույնպես հարուցվել է դեկտեմբերի 21-ին, ինչպես նաև դեպքի վայրի զննությունը ևս այդ օրն է իրականացվել:*

*Վերը թվարկված տվյալներից կարելի է հասկանալ, որ վարույթն իրականացնող մարմնի մոտ «Դրուժբա» ռեստորանում կատարված կրակոցների մասին որոշակի տեղեկություններ, մասնավորապես այն, որ Ազատ Խղոաբյանի կողմից է իրականացվել, ձեռք են բերվել հաջորդ օրը՝ 2013 թվականի դեկտեմբերի 21-ին: Իսկ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Տավուշի մարզի քննչական բաժնի պետը 2013 թվականի դեկտեմբերի 23-ին նոր միայն ցուցում է տվել քննչական և դատավարական հիմնական գործողություններ կատարելու վերաբերյալ, մասնավորապես՝ ակտիվացնել փնտրողական գործողությունները խուլիգանության մասնակիցների և գործադրված հրազենը հայտնաբերելու ուղղությամբ, ինչպես նաև որոշումներ կայացնել բերման ենթարկելու Աշոտ Աթաբեկյանին, Վիգեն Աթաբեկյանին, Ազատ Խղոաբյանին և Սեյրան Մինասյանին:*

*ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի պետի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 21-ին կազմված հեռախոսագրի համաձայն՝ ժամը 20:15-ին մի քաղաքացի, ներկայանալով որպես Ազատ Խղոաբյան, հայտնել է, որ իրենց տան մոտ գտնվող կանաչ գույնի ջրի համար նախատեսված դատարկ ցիստեռնի տակ զենք կա դրված՝ իր փամփուշտով: Արդյունքում Վանաձոր քաղաքի Խնձորուտ 6-րդ փողոցի 2-րդ տան հարավային հատվածում գտնվող կանաչ՝ ջրի համար նախատեսված դատարկ ցիստեռնի տակ՝ կտորի մեջ փաթաթված, հայտնաբերվել է «АКС-У» տեսակի ինքնաձիգ՝ իր պահունակով, որի մեջ առկա են եղել 5 հատ 5,45 մմ տրամաչափի փամփուշտներ: Ձեռնարկվում են միջոցառումներ Ազատ Խղոաբյանին հայտնաբերելու և հանգամանքները պարզելու ուղղությամբ:*

*Այստեղից պարզ է դառնում, որ Ազատ Խղոաբյանի կողմից հեռախոսազանգի միջոցով ինքնաձիգի գտնվելու վայրի մասին հայտնելու ժամանակ վերջինը չէր կարող հաստատապես տեղյակ լինել, որ իրեն բացահայտելու, զենքը հայտնաբերելու իրական սպառնալիքն առկա է, քանի որ դեպքից անցել էր ընդամենը մեկ օր, և հենց այդ օրն էլ նոր միայն վարույթն իրականացնող մարմինը որոշակի գործողություններ է ձեռնարկել և որոշակի տեղեկություններ ստացել կատարված դեպքի վերաբերյալ: Ընդ որում՝ այդ ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմնի ձեռնարկած գործողությունների մասին Ազատ Խղոաբյանը կարող էր ընդհանրապես տեղյակ չլինել, քանի որ այդ գործողություններն ուղղակիորեն իր դեմ ուղղված չեն եղել: Այսինքն՝ դեռևս ամբաստանյալների բնակարան այցելություններ չեն եղել, ինքնաձիգի հայտնաբերման ուղղությամբ որոնողական աշխատանքներ չեն կատարվել, ինչպես նաև ամբաստանյալի և դեպքին մասնակցած մյուս անձանց բերման ենթարկելու միջոցներ ձեռնարկված չեն եղել: Հետևաբար նման տվյալների առկայությունը՝ 2013 թվականի դեկտեմբերի 21-ի դրությամբ ձեռնարկված դատավարական գործողությունները և*

*դրա արդյունքում ստացված տեղեկատվությունների ամբողջությունը, խոսում է այն մասին, որ նշված օրվա դրությամբ այդ ամենն Ազատ Խլղաթյանի մոտ չէր կարող առաջացնել իրեն բացահայտելու իրական սպառնալիքի և զենքն ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորության բացակայության մասին գիտակցելու իրական նախապայմաններ: Այսինքն՝ եթե նույնիսկ ձեռնարկված գործողությունների արդյունքները բավարար են եղել վարույթն իրականացնող մարմնի մոտ հաստատապես տեղեկանալու, որ ինքնաձիգից կրակոցներ արձակվել է Ազատ Խլղաթյանի կողմից, ապա դա չի կարող վկայել, որ Ազատ Խլղաթյանը հաստատապես գիտակցել է, և հրազենի հանձնումն իրականացվել է բացահայտվելու իրական սպառնալիքի ներքո:*

*(...)*

*Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ազատ Խլղաթյանն ինքնաձիգը ներկայացրել է կամովին և վերջինի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 74-78):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ Ա.Խլղաթյանին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասից նույն հոդվածի 2-րդ մասով վերաորակելու, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, օրինական և հիմնավոր չէ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները և թույլ է տվել դատական սխալ՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, որն ազդել է գործի ելքի վրա:

10. Համակարգային վերլուծության ենթարկելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի, 45-րդ հոդվածի 10-րդ կետի կարգավորումները՝ բողոքաբերն ընդգծել է, որ կատարված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որակելու համար անհրաժեշտ է ապացուցել անձի գործողություններում նույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված արարքների առկայությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համադրությունից պարզ է դառնում, որ անձին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք կարող է առաջադրվել, եթե պատշաճ իրավական ընթացակարգի պահանջներին համապատասխան ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, որ անձը զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարել է խուլիգանություն, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով, անձի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով: Հետևաբար

արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որակելու համար զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների օգտագործումը պետք է հանդիսանա վերը թվարկված գործողությունները կատարելու պարտադիր պայման, անհրաժեշտ միջոց:

Արդյունքում բողոքի հեղինակը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը, ճիշտ վերլուծելով և գնահատելով դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցները, իրավացիորեն արձանագրել է, որ Ա.Խլղաթյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքը, քանի որ վերջինս խուլիգանություն կատարելու ընթացքում հրազենի գործադրմամբ վնասել է ռեստորանի գույքը: Սինչդեռ Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածին տվել է յուրովի և ոչ իրավաչափ մեկնաբանություն՝ նշելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի առկայության համար պարտադիր պայման է, զենք կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրումը կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծի:

11. Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Խլղաթյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցրել է նույն հոդվածի 5-րդ մասի խախտմամբ:

Մասնավորապես, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ին կայացված թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը փաստել է, որ սույն քրեական գործով ապացուցված է, որ Ա.Խլղաթյանը «Դրուժբա» ռեստորանում զենքի գործադրմամբ խուլիգանությունը կատարել է բազմաթիվ անձանց՝ քրեական գործով տուժողների և վկաների ներկայությամբ: Այսինքն՝ Ա.Խլղաթյանը հաստատապես գիտակցել է, որ բազմաթիվ անձինք տեղյակ են, որ իր մոտ ապօրինի հրազեն է պահվում, և առկա է իրեն բացահայտելու իրական սպառնալիք, ուստի ամբաստանյալի կողմից ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանում զանգահարելը, ներկայանալը, ինքնաձիգի գտնվելու վայրի մասին տեղեկություններ հայտնելը չեն կարող գնահատվել նրա կողմից գործողությունների ազատ և գիտակցված կամարտահայտման արդյունք: Նման պայմաններում Ա.Խլղաթյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված խրախուսական նորմը կիրառելի չէ:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 21-ի որոշումը՝ ամբաստանյալ Ա.Խլղաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով վերաորակելու, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասերով բեկանել և քրեական գործն այդ մասով ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարված խուլիգանության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի և ապօրինի պահվող զենքը կամովին հանձնելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*I. Զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարված խուլիգանությունը.*

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք ամբաստանյալ Ա.Խլղաթյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշների բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով*

*(...)*

*2. Նույն արարքը, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով*

*(...)*

*3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝*

*1) կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,*

*2) զուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով,*

*(...)*

*4) զուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով,*

*5) զուգորդվել է բացառիկ ցինիզմով՝*

*(...)*

*4. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ*

(...)»:

Խուլիգանության հանցակազմի առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Շահեն Հախվերդյանի* գործով որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Խ]ուլիգանությունը հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն է, որի հիմնական, անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են հասարակական կարգի բովանդակությունը, իսկ պարտադիր լրացուցիչ օբյեկտն անձի անձեռնմխելիության, պատվի և արժանապատվության, առողջության, քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:*

*Խուլիգանության հիմնական հանցակազմն ունի մեկ, իսկ որակյալ հանցակազմը՝ երկու օբյեկտ: Մասնավորապես, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, ենթակա է որակման որպես հասարակ խուլիգանություն, մինչդեռ նույն արարքը, որը զուգորդվում է անձի առողջությանը, գույքային իրավունքներին և այլին վնաս պատճառելով, ենթակա է որակման խուլիգանության որակյալ հանցակազմով:*

*(...)*

*Խուլիգանության հիմնական հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հասարակական նշանակության վայրերում, ինչպես նաև հասարակական նշանակություն չունեցող այլ վայրերում, որտեղ առկա է հանրություն, սահմանված կարգի կոպիտ խախտման մեջ, որն արտահայտվում է այդ վայրերում գտնվող հասարակության անդամների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Խուլիգանության որակյալ հանցակազմի պարագայում վերոնշյալ արարքները զուգորդում են բռնությամբ, գույքը վնասելով կամ ոչնչացնելով և այլն:*

*Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը խուլիգանության հանցակազմով որակելու համար անհրաժեշտ է նախևառաջ հիմնավորել խուլիգանության հիմնական հանցակազմի առկայությունը (...)»* (տե՛ս Շահեն Նշանի Հախվերդյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԴ/0014/01/11 որոշման 15-16-րդ կետերը):

Հաշվի առնելով *Շ.Հախվերդյանի* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խուլիգանությունը ծանրացնող հանգամանքներով որակելու համար անհրաժեշտ է հավաստել, որ կատարված արարքի արդյունքում, բացի հանցագործության հիմնական անմիջական օբյեկտից՝ հասարակական կարգի պաշտպանության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից, խախտվել են նաև օրենքով պաշտպանվող այնպիսի հարաբերություններ,

ինչպիսիք են անձի կյանքը, առողջությունը, քաղաքացիների ու կազմակերպությունների գույքային շահերը և այլն: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են խուլիգանության հիմնական հանցակազմը որակյալ դարձնող այնպիսի օբյեկտիվ հատկանիշներ, ինչպիսիք են բուն հանցակազմը բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքով, ինչպես նաև գույքը ոչնչացնելով կամ վնասելով զուգորդված կատարելը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում նախատեսված են քննարկվող հանցակազմի առավել ծանրացնող հանգամանքները (մասնավորապես՝ երկրորդ մասով նկարագրված արարքը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի, իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով, անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով կամ բացառիկ ցինիզմով զուգորդված կատարելը):

Ինչ վերաբերում է խուլիգանության ամենավտանգավոր տեսակին, ապա այն նախատեսված է հոդվածի 4-րդ մասով, այն է՝ հանցանքը զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարելը: Համապատասխան առարկաների գործադրումը բարձրացնում է առավել ծանր հետևանքների առաջացման հավանականությունը՝ պայմանավորված անձանց կյանքին կամ առողջությանը լուրջ վնաս պատճառելու հավանական վտանգով, ուստի պատահական չէ, որ հանցագործության նման եղանակն օրենսդրորեն գնահատվել է որպես բարձր հանրային վտանգավորություն ունեցող և նախատեսվել որպես խուլիգանության հանցակազմն առավել որակյալ դարձնող հանգամանք:

16. Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խուլիգանության ծանրացնող հանգամանքին անդրադարձել է *Արթուր Սերոբյանի* վերաբերյալ որոշմամբ՝ ընդգծելով, որ քննարկվող հանցակազմի առկայությունը հավաստելու համար պարտադիր է՝ հանցավորը զենք կամ որպես զենք օգտագործվող առարկայով մարմնական վնասվածք հասցնի կամ փորձի հասցնել, կամ էլ նրա գործողություններով անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծվի *(տե՛ս Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշման 4.3-րդ կետը):*

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի և մեջբերված նախադեպային որոշումների արտահայտված իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե վերջինիս արարքում առկա են նույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նկարագրված հանցակազմի հատկանիշները, հետևաբար զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության ծանրացնող հանգամանքը հանցա-

վորին կարող է մեղսագրվել, եթե նշված առարկաների օգտագործումը զուգորդվել է՝

ա) բռնություն գործադրելով կամ

բ) բռնություն գործադրելու սպառնալիքով կամ

գ) անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելով:

Ընդ որում, զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների *գործադրում* ասելով պետք է հասկանալ կա՛մ նշված առարկաների փաստացի գործադրումը (օրինակ՝ կրակոց արձակելը, հարվածներ հասցնելը և այլն), կա՛մ գործադրման փորձը (դիտավորյալ գործողություններ, որոնք, սակայն, հանցավորի կամքից անկախ հանգամանքներում չեն հաջողվում), կա՛մ դրա սպառնալիքը (զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկաները ցուցադրելու կամ այլ եղանակով):

17. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ անձի նկատմամբ բռնություն, բռնության սպառնալիք գործադրելու կամ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելու հատկանիշների մեկնաբանմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված առարկաների օգտագործմամբ բռնություն գործադրելը ենթադրում է տուժողի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու, դիտավորությամբ կատարված ցանկացած ֆիզիկական ներգործություն, որը կարող է լինել ինչպես վերջինիս կյանքի կամ առողջության համար վտանգավոր (տուժողին կյանքից զրկելը, առողջությանը ցանկացած վնաս պատճառելը և այլն), այնպես էլ ոչ վտանգավոր (առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող վնաս պատճառելը, հարվածներ հասցնելը, այլ բռնի գործողություններ կատարելը) *(բռնության հասկացության վերաբերյալ մանրամասն տե՛ս Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետը):*

Զենքի կամ այլ առարկաների գործադրմամբ բռնության սպառնալիքն անձի նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որն արտահայտվում է հանցավորի կողմից ֆիզիկական բռնություն գործադրելու վերաբերյալ իր մտադրությունը բանավոր խոսքի կամ տարաբնույթ գործողությունների միջոցով տուժողին հայտնելով՝ զուգորդված զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկաները ցուցադրելով, տարբեր մարմնաշարժումներով, ժեստերով և այլն: Ընդ որում, սպառնալիքը պետք է լինի իրական, այսինքն՝ տուժողը բավարար հիմքեր ունենա վախենալու դրա իրականացումից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սպառնալիքի իրական լինելը պետք է որոշվի հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների համակողմանի գնահատման արդյունքում՝ հաշվի առնելով ինչպես տուժողի սուբյեկտիվ ընկալումը, այնպես էլ օբյեկտիվ իրադրությունը *(զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրման եղանակների, կյանքի*

*կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ դրա սպառնալիքի վերաբերյալ մանրամասն տե՛ս Ժիրայր Ղուկասյանի և մյուսների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշման 17-19-րդ, 21-րդ կետերը):*

Ինչ վերաբերում է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելուն, ապա հարկ է նկատել, որ այն թեև ուղղված չէ որևէ կոնկրետ անձի նկատմամբ բռնություն կամ բռնության սպառնալիք գործադրելուն, այնուամենայնիվ իրականացվում է այնպիսի եղանակով, որը վտանգում է շրջապատում գտնվող անձանց կյանքն ու առողջությունը: Մասնավորապես, որպես այդպիսին կարող են գնահատվել հանրային վայրերում անկանոն կրակոցներ արձակելը, գույքը հանրավտանգ, այսինքն՝ այնպիսի եղանակով ոչնչացնելը կամ վնասելը, որն իրական վտանգ է ներկայացնում մարդու կյանքի կամ առողջության համար, ինչպես նաև անձանց կյանքն ու առողջությունը վտանգի տակ դնող զենքի կամ այլ առարկաների գործադրման այլ դեպքերը:

Ընդ որում, պարտադիր չէ, որ նշված գործողությունների արդյունքում որևէ մեկին փաստացի վնաս պատճառվի, ինչպես նաև պարտադիր չէ ապացուցել, որ հանցավորը որևէ անձի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելու նպատակ հետապնդի, այլ բավարար է, որ հանցավորը գիտակցի իր կողմից զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրման արդյունքում անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելու հանգամանքը և ցանկանա հանցանքը հենց նման եղանակով կատարելը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ զենքի կամ այլ առարկաների գործադրման արդյունքում անձանց կյանքի կամ առողջության համար ստեղծված վտանգը պետք է լինի իրական, այլ ոչ թե կարծեցյալ, ինչը հնարավոր է որոշել գործի բոլոր հանգամանքների համակողմանի վերլուծության արդյունքում՝ հաշվի առնելով, մասնավորապես, հանցագործության տեղը, ժամանակը, անձանց ներկայությունը, գործադրված զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի տեսակը, ինչպես նաև հարցի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

18. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Խլղաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, Վ.Աղինյանին պատկանող «Դրուժբա» ռեստորանում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, սեռական բնույթի հայհոյանքներ է տվել ինչպես ռեստորանի աշխատակիցների, այնպես էլ իջևանցիների հասցեին, *զենքի գործադրմամբ՝ ձեռքին եղած ինքնաձիգից կրակոցներ է արձակել ռեստորանի բարի և առաստաղի ուղղությամբ և դրանով հանրավտանգ եղանակով դիտավորությամբ* վնասել Վ.Աղինյանին պատկանող գույքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռով արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Խլղաթյանի արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ, 235-րդ հոդվածի 1-ին մասով որակված են ճիշտ, որոնց համար նա ենթակա է ազատազրկման ձևով պատժի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է, որ Ա.Խլղաթյանի կողմից ինքնաձիգից արձակած կրակոցներն ուղղված չեն եղել որևէ մեկին մարմնական վնասվածք հասցնելուն, ինչպես նաև իրական վտանգ չեն ստեղծել անձանց կյանքի կամ առողջության համար, քանի որ դրանք հիմնականում արձակված են եղել ռեստորանի առաստաղի, պատի և բարի ուղղություններով: Վերաքննիչ դատարանի համոզմամբ թեև կրակոցներն առաջացրել են վախի և տագնապի մթնոլորտ, սակայն այդ հանգամանքն ինքնին չի կարող վկայել, որ կրակոցների արդյունքում ռեստորանի սրահում գտնված անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ է ստեղծվել: Արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Ա.Խլղաթյանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշները, և վերջինիս կատարած արարքը վերաորակել է նույն հոդվածի երկրորդ մասով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Ամբաստանյալ Ա.Խլղաթյանի, տուժողներ Վ.Աղինյանի, Լ.Խոջոյանի, Ա.Դարբինյանի՝ դատարանում տված ցուցմունքների համաձայն՝ կրակոցներ արձակելու պահին ռեստորանի սրահում, աշխատակիցներից բացի, եղել են նաև այլ անձինք (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Դեպքի վայրի զննության արդյունքում «Դրուժբա» ռեստորանից առգրավվել է 4 պարկուճ, 2 գնդակ (տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը):

2013 թվականի դեկտեմբերի 21-ին Վանաձոր քաղաքի Խնձորուտ 6-րդ փողոցի 2-րդ տան հարավային հատվածում գտնվող կանաչ՝ ջրի համար նախատեսված դատարկ ցիստեռնի տակ՝ կտորի մեջ փաթաթված, հայտնաբերվել է «АКС-У» տեսակի ինքնաձիգը՝ իր պահունակով, որի մեջ եղել են 5 հատ 5.45 մմ տրամաչափի փամփուշտներ (տե՛ս սույն որոշման 7.3-րդ կետը):

18.1. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ

- Ա.Խլղաթյանը «Դրուժբա» ռեստորանում զենքի՝ «АКС-У» տեսակի ինքնաձիգի գործադրմամբ կատարել է խուլիգանություն,

- խուլիգանություն կատարելու ընթացքում Ա.Խլղաթյանն ինքնաձիգից անկանոն կրակոցներ է արձակել ռեստորանի առաստաղի և բարի ուղղություններով,

- կրակոցներ արձակելու պահին այնտեղ գտնվել են ռեստորանի աշխատակիցները, ինչպես նաև այցելուներ:

19. Սույն որոշման 18-18.1-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Խլղաթյանի կատա-

րած արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասից վերաորակելով նույն հոդվածի 2-րդ մասով, պատշաճ վերլուծության և գնահատականի չի արժանացրել գործում առկա փաստական տվյալները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ գործով ձեռք չի բերվել որևէ տվյալ, որ ռեստորանի առաստաղի, պատի և բարի ուղղություններով կատարված կրակոցներն իրական վտանգ են առաջացրել անձանց կյանքի կամ առողջության համար, չի բխում սույն գործի փաստական հանգամանքներից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը նշված հետևությանը հանգելիս պատշաճ գնահատման չի ենթարկել հանցանքի կատարման վայրը, հանցանքի կատարման պահին այլ անձանց ներկայությունը, հանցավորի կողմից գործադրված զենքի տեսակը, ինչպես նաև գույքը հանրավտանգ եղանակով վնասելու հանգամանքը:

Այսպես՝ ամբաստանյալ Ա.Խլղաթյանը հանրային վայրում՝ «Դրուժբա» ռեստորանում, որտեղ աշխատակիցներից բացի եղել են նաև այցելուներ, զենքի՝ «АКС-У» տեսակի ինքնաձիգի գործադրմամբ անկանոն կրակոցներ է արձակել ռեստորանի առաստաղի և բարի ուղղություններով: Այլ կերպ ասած՝ Ա.Խլղաթյանը ռեստորանի գույքը վնասել է հանրավտանգ, այսինքն՝ այնպիսի եղանակով, որն իրական վտանգ է ստեղծել այնտեղ գտնվող անձանց կյանքի և առողջության համար, որպիսի հանգամանքը նաև նրան մեղսագրված է եղել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցանքի կատարման հանրավտանգ եղանակը, այն է՝ ինքնաձիգով մի քանի անկանոն կրակոցներով մարդաշատ վայրում գույքը վնասելը, արդեն իսկ վկայում է անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ ստեղծելու մասին, ինչը բավարար է հանցավորի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի՝ զենքի գործադրմամբ խուլիգանության հատկանիշների առկայությունը հավաստելու համար:

20. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Խլղաթյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշների բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

*II. Ապօրինի պահվող զենքը կամովին հանձնելը.*

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորվա՞ծ է արդյոք ամբաստանյալ Ա.Խլղաթյանի կողմից ապօրինի պահվող զենքը կամովին հանձնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

22. ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի կիրառման առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Հուսիկ Բաղդասարյանի* գործով որոշման շրջանակներում՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ *«(...) Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չի կարող համարվել կամովին: Այն դեպքերում, երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող: Այս պայմաններում դա կարող է դիտվել միայն որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք»* (տե՛ս Հուսիկ Սուրիկի Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշման 20-րդ կետը):

Վերահաստատելով և զարգացնելով *Հ.Բաղդասարյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը *Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է. *«(...) ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված խրախուսական նորմը նպատակ ունի ապօրինի պահվող զենքի և նորմում թվարկված մյուս առարկաների կամավոր հանձնումը խրախուսելու եղանակով դադարեցնելու ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարումը և այդպիսով կանխելու հետագայում դրանց հնարավոր գործադրմամբ անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված կամ այլ հանցագործությունները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված արարքների հանրային վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանով նախատեսված առարկաները հանցավոր նպատակով օգտագործելու իրական հնարավորություն է ստեղծվում, ինչը վտանգ է առաջացնում մարդկանց կյանքի և առողջության համար: Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը հոդվածում նշված առարկաների անօրինական շրջանառությունից մարդու և հասարակության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հետևաբար՝ հոդվածում նշված առարկաների հանձնման դեպքում ապահովվում է տվյալ հանցագործության օբյեկտի պահպանությունը, իսկ հանձնման կամավորության դեպքում՝ վերանում հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը:*

*(...)*

*Քննարկվող հոդվածում նշված առարկաների հանձնումը կարող է համարվել կամովին, եթե անձը, գիտակցելով դրանք ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորությունը, այդուհանդերձ, հանձնում է քննարկվող առարկաները կամ հայտնում դրանց գտնվելու վայրի մասին: Քննարկվող առարկաներն ապօրինի պահելու իրական հնարավորություն անձը կարող է ունենալ, եթե, օրինակ, վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէ զենքի գոյության մասին, կամ բացակայում են դրա բացահայտման օբյեկտիվ հնարավորության մասին վկայող հանգամանքները, և անձը ողջամտորեն գիտակցում է դա: Հետևաբար ապօրինի պահվող զենքի գործադրմամբ հանդրոռեն վտանգավոր այս կամ այն արարքը կատարելուց հետո զենքը հանձնած անձը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, քանի որ զենքի գործադրման փաստը վարույթն իրականացնող մարմիններին հաստատապես հայտնի լինելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը չի բխի քննարկման առարկա խրախուսական նորմը նախատեսելու քրեական քաղաքականության նպատակներից: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ապօրինի զենքով հանդրոռեն վտանգավոր այս կամ այն արարքը կատարելուց հետո անձի կողմից զենքը հանձնելը կարող է գնահատվել որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել պատիժ նշանակելիս (...)»* (տե՛ս Հրանտ Յուրիկի Հարությունյանի և Բեգլար Գարեգինի Հովհաննիսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՆԴ/0011/01/14 որոշման 34-րդ կետը):

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Խլղաթյանը 2013 թվականի դեկտեմբերի 20-ին՝ ժամը 21-ի սահմաններում, «Դրուժբա» կոչվող ռեստորանում տեղի ունեցած վիճաբանությունից հետո զենքի՝ «ԱԿՀ-Ս» տեսակի ինքնաձիգի գործադրմամբ կրակոցներ է արձակել ռեստորանի բարի և առաստաղի ուղղությամբ և հանրավտանգ եղանակով դիտավորությամբ վնասել Վ.Աղինյանին պատկանող գույքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի պետի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 21-ին կազմված հեռախոսագրի համաձայն՝ ժամը 20:15-ին մի քաղաքացի, ներկայանալով որպես Ազատ Խլղաթյան, հայտնել է, որ իրենց տան մոտ գտնվող կանաչ գույնի՝ ջրի համար նախատեսված դատարկ ցիստեռնի տակ զենք կա դրված՝ իր փամփուշտով: Ոստիկանության աշխատակիցների կողմից դեպքի վայրի զննության արդյունքում հայտնաբերվել է «ԱԿՀ-Ս» տեսակի ինքնաձիգ՝ իր պահունակով (տե՛ս սույն որոշման 7.2-7.3-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Խլղաթյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել և նրան քրեական պատասխանատվությունից ազատել է՝ նշելով, որ

Ա.Խլղաթյանը հեռախոսազանգի միջոցով ինքնաձիգի գտնվելու վայրը հայտնելիս չէր կարող հաստատապես տեղյակ լինել, որ իրեն բացահայտելու, զենքը հայտնաբերելու իրական սպառնալիք էր առկա, քանի որ դեպքից անցել էր ընդամենը մեկ օր, և հենց այդ օրն էլ միայն վարույթն իրականացնող մարմինը որոշակի գործողություններ էր ձեռնարկել և տեղեկություններ ստացել կատարված դեպքի վերաբերյալ: Վերաքննիչ դատարանն ընդգծել է նաև, որ ամբաստանյալը վարույթն իրականացնող մարմնի ձեռնարկած գործողությունների մասին կարող էր ընդհանրապես տեղյակ չլինել, քանի որ դրանք ուղղակիորեն իր դեմ ուղղված չեն եղել: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Ա.Խլղաթյանն ինքնաձիգը ներկայացրել է կամովին, հետևաբար վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը կիրառելի է (տե՛ս սույն որոշման 8.1.-րդ կետը):

24. Սույն որոշման 22-րդ կետում վկայակոչված՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն որոշման 23-րդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա ամբաստանյալ Ա.Խլղաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվությունից ազատելիս պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել այն հանգամանքը, որ նախքան ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժին զանգելը, այդ զենքի գործադրմամբ ամբաստանյալը հանրային վայրում՝ ռեստորանում, արդեն իսկ հանցավոր արարք էր կատարել: Զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու փաստի առթիվ 2013 թվականի դեկտեմբերի 21-ին հարուցվել էր քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (տե՛ս սույն որոշման 1-ին կետը), որի շրջանակներում նույն օրը կատարված դեպքի վայրի զննության արդյունքում հայտնաբերվել և առգրավվել էին թվով 4 պարկուճ և 2 գնդակ (տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը): Այսինքն՝ վարույթ իրականացնող մարմնին հաստատապես հայտնի էր եղել զենքի գոյության փաստը, իսկ քրեական գործով ձեռնարկվել էին դեպքի հանգամանքների բացահայտմանն ուղղված քննչական և այլ դատավարական գործողություններ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Ա.Խլղաթյանը հեռախոսազանգի միջոցով ինքնաձիգի գտնվելու վայրը հայտնելիս չէր կարող հաստատապես տեղյակ լինել, որ իրեն բացահայտելու և զենքը հայտնաբերելու իրական սպառնալիք էր առկա, քանի որ դեպքից անցել էր ընդամենը մեկ օր, բացի այդ, վարույթն իրականացնող մարմնի ձեռնարկած գործողությունների մասին կարող էր ընդհանրապես տեղյակ չլինել, քանի որ դրանք ուղղակիորեն իր դեմ ուղղված չէին եղել, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ եզրահանգումը չի բխում գործի փաստական հանգամանքներից: Այսպես՝ կատարված հե-

ռախոսազանգի նախորդ օրը՝ 2013 թվականի դեկտեմբերի 20-ին, ամբաստանյալ Ա.Խլղաթյանը բազմաթիվ անձանց ներկայությամբ հանրային վայրում՝ ռեստորանում, զենքի գործադրմամբ կատարել էր խուլիգանություն, հետևաբար նա գիտակցել է, որ մի շարք անձինք տեղյակ են իր մոտ պահվող հրազենի մասին: Վերոնշյալ հանգամանքը ողջամտորեն հիմք էր ամբաստանյալի մոտ՝ իրեն բացահայտելու իրական սպառնալիքի և զենքն ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորության բացակայության մասին գիտակցում ձևավորելու համար: Նման պայմաններում ամբաստանյալի կողմից ինքնաճիգի գտնվելու վայրի մասին տեղեկություններ հայտնելը չէր կարող գնահատվել որպես նրա կողմից զենքը հանձնելու ազատ և գիտակցված կամարտահայտության արդյունք:

25. Այսպիսով, սույն որոշման 22-24-րդ կետերում կատարված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն ապօրինի պահվող զենքի գործադրմամբ հանրորեն վտանգավոր արարքը կատարելուց հետո զենքի գտնվելու մասին հայտնած Ա.Խլղաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվությունից ազատելիս հաշվի չի առել, որ նրա կողմից զենքի գործադրման փաստը վարույթն իրականացնող մարմիններին հաստատապես հայտնի է եղել, բացի այդ, ամբաստանյալը ողջամտորեն գիտակցել է իր կողմից ապօրինի զենք պահելու փաստի բացահայտումը և զենքի՝ ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորության բացակայությունը, ուստի նման պայմաններում վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը չի կարող բխել քննարկման առարկա խրախուսական նորմը նախատեսելու քրեական քաղաքականության նպատակներից:

Հետևաբար՝ ամբաստանյալ Ա.Խլղաթյանի կողմից ապօրինի պահվող զենքը կամովին հանձնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն օրինական և հիմնավորված չէ:

26. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Խլղաթյանի կատարած արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասից վերաորակելով նույն հոդվածի 2-րդ մասով և վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելով և նրան քրեական պատասխանատվությունից ազատելով զենքը կամովին հանձնելու հիմքով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ և 235-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 21-ի որոշումը բեկանելու և քրեական գործն այդ մասով նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ազատ Խլղաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը պետք է թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով, որ այդ խափանման միջոցի կիրառման հիմքերն ու պայմանները չեն վերացել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ազատ Էդվարդի Խլղաթյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով վերաորակելու, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 21-ի որոշումը բեկանել և նրա մասով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Ազատ Էդվարդի Խլղաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԴ/0021/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 10-ի որոշման դեմ ամբաստանյալ Գևորգ Աշոտի Սիմոնյանի պաշտպան Մերի Ալավերդյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում 2015 թվականի նոյեմբերի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով հարուցվել է թիվ 13838515 քրեական գործը: Նույն օրը Գևորգ Սիմոնյանը և Ջանիկ Սիմոնյանը ձերբակալվել են:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 9-ի որոշումներով Գևորգ և Ջանիկ Սիմոնյանները ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանցից յուրաքանչյուրին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 10-ի որոշումներով Գ.Սիմոնյանի և Ջ.Սիմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Գ.Սիմոնյանին առաջադրված մեղադրանքը 2015 թվականի դեկտեմբերի 16-ին փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Ջ.Սիմոնյանին առաջադրված մեղադրանքը 2015 թվականի դեկտեմբերի 17-ին փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2016 թվականի փետրվարի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի դատավճռով Գ.Սիմոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Նույն դատավճռով Ջ.Սիմոնյանը ճանաչվել է անմեղ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքում և արդարացվել է՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու և նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառված լինելու հիմքով:

Հիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Գ.Սիմոնյանի պաշտպան Մ.Ալավերդյանը և մեղադրող Մ.Նալբանդյանը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ Գ.Սիմոնյանի պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, դատավճիռը նշանակված պատժի մասով փոփոխվել է, Գ.Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ չորս տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

4. Գ.Սիմոնյանի պաշտպան Մ.Ալավերդյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է հետևյալը. *«Դատաքննությամբ պարզվեց, որ ամբաստանյալ Գևորգ Սիմոնյանը, որոշելով գողություն կատարել ք.Երևանի Զաքյան փողոցի 3-րդ շենքի 30 բնակարանից, սակայն իր այդ նպատակի մասին չտեղեկացնելով իր հոր՝ Ռոբերտ Սիմոնյանին, 2015թ. նոյեմբերի 07-ին՝ ժամը 16-ի սահմաններում, վերջինիս առաջարկել է գնալ վերը նշված փողոց՝ ասելով, որ ցանկանում է այցելել ծանոթին և ինչ-որ բան վերցնել նրանից:*

*Ամբաստանյալ Ջ.Սիմոնյանը համաձայնել է, և նրանք գնացել են ք.Երևանի Զաքյան փողոցի 3-րդ շենքի մոտ, որտեղ ամբաստանյալ Գ.Սիմոնյանն ամբաստանյալ Ջ.Սիմոնյանին առաջարկել է սպասել՝ մինչև ինքը բարձանա ծանոթի բնակարան և վերադառնա:*

*Այնուհետև, ամբաստանյալ Գ.Սիմոնյանը բարձրացել է նշված շենքի երկրորդ հարկ, իր մոտ ունեցած հարմարեցված բանալիներով բացել է տուժողի՝ ք.Երևանի Զաքյան փողոցի 3-րդ շենքի հ. 30 բնակարանի մուտքի դռան փականները, որից հետո ամբաստանյալ Ջ.Սիմոնյանին առաջարկել է բարձրանալ վերև և մոտ 20 րոպե իրեն սպասել նշված բնակարանի հյուրասենյակում՝ նրան չասելով, որ այդ բնակարանն իր ծանոթինը չէ:*

*Բնակարան մտնելուց հետո ամբաստանյալ Գ.Սիմոնյանը մտել է ննջասենյակ, իսկ վերջինիս նպատակներից անտեղյակ ամբաստանյալ Ջ.Սիմոնյանն անցել է հյուրասենյակ և սպասել ամբաստանյալ Գ.Սիմոնյանին՝ մտածելով, որ վերջինիս հանդիպումը ծանոթ կնոջ հետ է:*

*Այդ ընթացքում ամբաստանյալ Գ.Սիմոնյանը տուժողի բնակարանի ննջասենյակից հափշտակել է 846.997.56 ՀՀ դրամին համարժեք 1.773 ԱՄՆ դոլար և 748 ՀՀ դրամին համարժեք 100 ՌԴ ռուբլի ու 2.134.748 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով բանկարժեք և կիսաբանկարժեք քարերով ոսկյա զարդեր, որոնք տեղավորել է վերարկուի և տաբատի գրպաններում ու, ժամը 16:30-ի սահմաններում դուրս գալով ննջասենյակից, ամբաստանյալ Ջ.Սիմոնյանին առաջարկել է գնալ, սակայն, երբ նրանք գտնվել են բնակարանի միջանցքում, բնակարան են մտել օպերատիվ տեղեկություններ ստացած ոստիկանները և նրանց բերման են ենթարկել ոստիկանության բաժին, որտեղ ամբաստանյալ Գ.Սիմոնյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են ամբողջ գողոնն ու հարմարեցված բանալիները:*

*(...)*

*Ամբաստանյալ Գ.Սիմոնյանի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ պատժի չափը որոշելիս, դատարանը հաշվի է առնում ինչպես նրա կատարած հանցագործության բնույթը, հանրության համար վտանգավորության աստիճանը և հետևանքները, նրա հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, այնպես էլ դատաքննության ընթացքում ուսումնասիրված՝ նրա*

*անձը բնութագրող տվյալներն ու պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:*

*Որպես ամբաստանյալ Գ.Սիմոնյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա խոստովանել է կատարած հանցագործությունը, վատառողջ է՝ երրորդ խմբի հաշմանդամ, և նրա խնամքին է մինչև 14 տարեկան երեխան:*

*Ամբաստանյալ Գ.Սիմոնյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ դատական քննությամբ չեն ձևավորվել:*

*Դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Գ.Սիմոնյանի հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, նրա անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերոգրյալ հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցագործության կատարման հանգամանքներն ու եղանակը, նրա մեղքի ձևը, ելնելով գործի փաստական տվյալների և հանգամանքների վերլուծության հիման վրա դատարանի մոտ ձևավորված նրա բարոյահոգեբանական ու քրեաիրավական բնութագրից և ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ ու 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, հանգում է հետևության, որ պետք է դատապարտվի ազատազրկման, որը պետք է կրի: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 112-120):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում Գ.Սիմոնյանի պաշտպան Մ.Ալավերդյանը նշել է. *«(...) [Դ]ատավճռով հաշվի չեն առնվել և չեն գնահատվել (...) պատասխանատվությունը և պատիժը մեղմացմող հանգամանքները, հանցագործություն կատարելու հանգամանքները, (...) պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության հարցը: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 1-5):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(...) [Բ]ողոքաբերը Վերաքննիչ դատարանին խնդրել է (...) դատավճիռը՝ ամբաստանյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ նշանակված պատժի չափի մասով բեկանել և փոփոխել, ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նշանակել հոդվածով սահմանված նվազագույն պատժաչափ և նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառել՝ նշանակելով փորձաշրջան օրենքով սահմանված որոշակի ժամկետով:*

*(...)*

*Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանն ամբաստանյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ պատիժ նշանակելիս թեև արձանագրել է, սակայն բավարար չափով հաշվի չի առել ամբաստանյալի անձը*

*բնութագրող, վերջինիս պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, և ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում՝ անտեսելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ ու 61-րդ հոդվածների պահանջները, ամբաստանյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ սույն գործի շրջանակներում նշանակել է ակնհայտ խիստ պատիժ, ուստի դատական ակտն ամբաստանյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ նշանակված պատժի մասով՝ մեղմացման առումով պետք է փոփոխել և վերջինիս նկատմամբ հոդվածի սանկցիայի շրջանակներում նշանակել նվազագույն պատիժ, ինչը Վերաքննիչ դատարանի համոզմամբ կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակները:*

*Նման եզրահանգման հանգելիս, Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի համապատասխան դրույթները, այնպես էլ այն, որ ամբաստանյալը հանդիսանում է 3-րդ կարգի հաշմանդամ՝ վերջինիս ծախ ձեռքը թերած է և ըստ էության անգործունակ: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 65-72):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

8. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի որոշումն անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված, կայացվել է նյութական իրավունքի էական խախտումով:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանն առհասարակ անդրադարձ չի կատարել պատիժը կրելու նպատակահարմարության հարցին՝ թույլ տալով դատական սխալ, որն ամբաստանյալի համար առաջացրել է ծանր հետևանք, քանի որ Գ.Սիմոնյանն անարդարացիորեն պետք է պատիժ կրի ազատազրկման ձևով:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը և Գևորգ Սիմոնյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ նշանակելով փորձաշրջան:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը գնահատման ենթարկե՞լ է արդյոք պաշտպանի վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկը, և նույն դատարանի որոշումը բավարարու՞մ է դատական ակտերի պատճառաբանվածության վերաբերյալ պահանջին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբան-*

*ված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

Նույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով (…)»:*

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ֆ.Գալստյանի, Գ.Խնուսյանի, Է.Մարգարյանի* գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես *Ֆ.Գալստյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:*

*(…) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման (…)»* (տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Զարգացնելով Ֆ.Գալստյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ *Գ.Խնուսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ (…) քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է (…)»* (տե՛ս Գևորգ Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

*Է.Մարգարյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս:*

*(…) [Վ]երաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում միայն վճռաբեկ դատարանը հնարավորություն կունենա ստուգելու կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը»* (տե՛ս Էրիկ Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՍԴ3/0045/01/13 որոշման 13-րդ կետը):

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:*

Վերոնշյալ նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Մկրտիչ Պողոսյանի և մյուսների գործով* որոշման շրջանակներում՝ արձանագրելով՝ *«(…) [Վ]երաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ոչ միայն նախանշում են վերաքննիչ վերանայման սահմանները, այլ նաև կանխորոշում են այն հարցերի շրջանակը, որոնք պետք է քննարկման առարկա դարձվեն վերաքննիչ վարույթի շրջանակներում, և որոնց կապակցությամբ վերաքննիչ դատարանի եզրահանգումները պետք է արտացոլվեն վարույթը եզրափակող դատական ակտում:*

*(…)*

*Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ պետք է անդրադառնա բողոքի հիմքերին: Վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ վերաքննիչ բողոք բերելու հիմքը դատական սխալն է, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև նոր երևան եկած կամ նոր հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 308.1-րդ հոդված): Այլ խոսքով՝ վերաքննիչ բողոքի հիմքն ինքնին օժտված է գործի ելքի վրա ազդեցություն ունենալու հատկանիշով:*

*Ինչ վերաբերում է բողոքի հիմնավորումներին անդրադառնալու հարցին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի այն հիմնավորումներին, որոնք ողջամտորեն կարող են ազդեցություն ունենալ գործի համար նշանակություն ունեցող հարցերի լուծման համար և պատշաճ պատճառաբանել դրանց վերաբերյալ իր եզրահանգումները:*

*Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում միայն վերաքննիչ դատարանի որոշումը կհամապատասխանի դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջին և դրա կապակցությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին (…)»* (տե՛ս Մկրտիչ Արայիկի Պողոսյանի, Հովհաննես Վոլոդյայի Մարտիրոսյանի և Սեյրան Մանվելի Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԾԴ/0034/01/15 որոշման 15-րդ կետը):

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը որպես Գ.Սիմոնյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել նրա կողմից կատար-

ված հանցագործությունը խոստովանելը, վատառողջ՝ երրորդ խմբի հաշմանդամ լինելը, խնամքին մինչև 14 տարեկան երեխա ունենալը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը և եկել հետևության, որ վերջինս պետք է դատապարտվի ազատազրկման ու ազատազրկման ձևով պատիժը պետք է կրի (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Պաշտպան Մ.Ալավերդյանը վերաքննիչ բողոքում փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը դատավճռով հաշվի չի առել և գնահատման չի ենթարկել պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության հարցը և խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով Գ.Սիմոնյանի նկատմամբ նշանակել տվյալ արարքի համար օրենքով սահմանված նվազագույն պատժաչափ և նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը, իր որոշման «Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը» բաժնում մանրամասն շարադրել է պաշտպան Մ.Ալավերդյանի վերաքննիչ բողոքը, սակայն դատական ակտի պատճառաբանական մասում անդրադարձել է բողոքաբերի բարձրացրած հարցերից միայն մեկին՝ Առաջին ատյանի դատարանի կողմից խիստ պատիժ նշանակելու վերաբերյալ բողոքի փաստարկին, մինչդեռ պատիժը պայմանականորեն չկիրառելու վրաբերյալ բողոքաբերի փաստարկը քննարկման առարկա չի դարձվել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

12. Սույն որոշման 9-10-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով պարտավոր էր քննարկման առարկա դարձնել բողոքաբերի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ փաստարկը և արդյունքում պատճառաբանված որոշում կայացնել այն մասին, թե ինչ հանգամանքների հիման վրա է եկել այս կամ այն հետևության: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի կողմից խիստ պատիժ նշանակելու վերաբերյալ բողոքի փաստարկին, քննարկման չի ենթարկել պատժի կրման նպատակահարմարության հարցը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկը գնահատման չենթարկելու պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը չի բավարարում դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ պահանջին:

13. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 385-րդ և 393-րդ հոդվածների խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գևորգ Աշոտի Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գևորգ Աշոտի Սիմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**5.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱՔԴ/0075/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դատախազ Հ.ԽԱԼԱԹՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2015 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 60112315 քրեական գործը:

2016 թվականի ապրիլի 15-ին Գագիկ Լիպարիտի Ղուկասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2016 թվականի ապրիլի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 13-ի դատավճռով ամբաստանյալ Գ.Ղուկասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձևով պատիժ՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ վարորդական իրավունքից զրկվելով՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կանոնների համաձայն՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի օգոստոսի 11-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 13-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Նախաքննական մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ Գ.Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ *«[Նա] 2015 թվականի հոկտեմբերի 13-ին, ժամը 20:45-ի սահմաններում, «Տոյոտա» մակնիշի 23 00 774 պ/հ ավտոմեքենան վարել է Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցով, երրորդ գոտու միջնամասով, մոտ 30 կմ/ժամ արագությամբ, մոտակա լույսերով: Հասնելով Դավիթ Անհաղթ և Կ.Ուլնեցի փողոցների խաչմերուկին՝ թույլ է տվել ճԵԿ-ի 36-րդ և 90-րդ կետերի ու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ Դ.Անհաղթ փողոցով՝ Ռուբինյանց փողոցի կողմից դեպի Կոմիտաս պողոտա տանող ուղղությամբ խաչմերուկ մուտք գործելուց հետո չհամոզվելով, որ շրջադարձի կատարումն անվտանգ կլինի և խոչընդոտ չի ստեղծի երթևեկության մյուս մասնակիցների համար ու չհետևելով ողջ ճանապարհատրանսպորտային իրադրության զարգացմանը, նախապես չմիացնելով ձախ շրջադարձի համար նախատեսված ցուցիչները, ճանապարհը չի զիջել հանդիպակաց ուղղութ-*

*յան երթևեկելի ուղեմասով ուղիղ ուղղությամբ մոտեցող և տվյալ ճանապարհների հատման խաչմերուկն անցնելու հերթականության առումով առավելություն ունեցող՝ ավտովարորդ Դավիթ Տիգրանի Բեջանյանի վարած «ՎԱԶ-21214» մակնիշի 05 SU 045 պ/հ ավտոմեքենային, կատարել է ձախ շրջադարձ և ավտոմեքենան դուրս բերելով հանդիպակաց ուղղության երթևեկելի ուղեմաս, ավտոմեքենայի առջևի մասով ընդհարվել է «ՎԱԶ-21214» մակնիշի 05 SU 045 պ/հ ավտոմեքենայի ձախ կողային հատվածին, որի հետևանքով վերջինս դարձել է անկառավարելի, ընդհարվել հետիոտների համար նախատեսված լուսացույցի սյանը, կոտրել այն, որն ընկել է մայթեզրին կանգնած վիճակում գտնվող հետիոտներ Հերմինե Լյովայի Անախասյանի և Մերի Գագիկի Թամարյանի վրա, որի հետևանքով Մ.Թամարյանին անզգուշությամբ պատճառվել է մահ, ինքն իրեն զրկելով վթարվրաերթը կանխելու տեխնիկական հնարավորությունից»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 198-199):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. *«(…) Ուսումնասիրելով ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանը կատարել է միջին ծանրության հանցանք, որի համար նախատեսված ազատազրկման ճնով պատժի առավելագույն ժամկետը հինգ տարի է, քիվ 13 տեղամասի լիազոր Սիրեկանյանի և հարևանների կողմից տրված բնութագրի համաձայն Գ.Ղուկասյանը բնութագրվում է դրական հատկանիշներով, հարևանասեր է, հարգալից բոլորի նկատմամբ, հարևանների հետ պահպանում է բարիդրացիական հարաբերություններ, բարեհամբյուր անձնավորություն է, հանդիսանում է մակարդակով և օրինաչափ անձնավորություն:*

*Մեծահասակի ամբուլատոր բժշկական քիվ 488 քարտի քաղվածքի համաձայն Գ.Ղուկասյանի մոտ ախտորոշվել է 2-րդ աստիճանի շաքարային դիաբետ: Զարկերակային հիպերտոնիա:*

*Ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, դիտվում է հանցագործությամբ պատճառված նյութական վնասը կամովին հատուցելը:*

*Նույն հոդվածի 2-րդ մասով դատարանը որպես այդպիսին դիտում է նաև նրա անկեղծորեն զղջալը, հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը՝ խնամքին է գտնվում 2-րդ կարգի հաշմանդամ կինը և թոշակառու մայրը:*

*Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, չկան:*

*(…)*

*Քննարկելով այն հարցը, թե արդյոք ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանը պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, դատարանը հաշվի է առնում վերջինիս կողմից կատարած հանցանքի բնույթը և վտանգավորության աստիճանը, օրենքով պաշտպանվող շահը, սակայն միևնույն ժամանակ դատարանը հաշվի է առնում նաև Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, դրական բնութագիրը, առողջական վիճակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալ Գ.Ղուկասյանը, որպես հանցագործությամբ անմիջականորեն պատճառված վնասի հատուցում, տուժողի իրավահաջորդ Հերմինե Անախասյանին է փոխհատուցել 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումար, որի կապակցությամբ վերջինս հայտարարել է, որ ամբաստանյալ Գ.Ղուկասյանից բողոք, պահանջ, քաղ. հայց չունի, որպիսի պայմաններում դատարանը գտնում է, որ պատժի նպատակներից մեկը՝ սոցիալական արդարության սկզբունքն իրացված է:*

*Բացի այդ, դատարանը հաշվի է առնում նաև ամբաստանյալ Գ.Ղուկասյանի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, մասնավորապես այն հանգամանքը, որ վերջինս ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունը կատարել է առանց Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ գլխով նախատեսված՝ ճանապարհային երթևեկության կանոնների առավել կոպիտ խախտումների՝ այն է, լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը և այլն, որոնք վտանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը:*

*Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ դատարանը գտնում է, որ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի անձի և նրա կողմից կատարած հանցագործության հանրորեն վտանգավորության աստիճանը նվազել է և հանգում է հետևության, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ նշանակվող ազատազրկման ձևով պատիժը կրելու, և հնարավոր է համարում ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կանոններով պատիժը պայմանականորեն չկիրառել (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 48-56):

7. Վերաքննիչ դատարանը 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ փաստել է. *«(…) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանն ամբաստանյալ Գագիկ Ղուկասյանի նկատմամբ պատիժ նշանակելիս (…) ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հարցում հանգելով ճիշտ եզրահանգման, սույն քրեական գործի շրջանակներում կայացրել*

*է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ, ուստի այն բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան:*

*Նման եզրահանգման հանգելիս, Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև հանցագործությունը կատարելուց հետո ամբաստանյալ Գագիկ Ղուկասյանի դրսևորած վարքագիծը, մասնավորապես այն, որ գործի քննության ողջ ընթացքում վերջինս գտնվելով ազատության մեջ՝ զերծ է մնացել այլ հակաօրինական արարքներ կատարելուց, չի խոչընդոտել գործի քննությունը, կամովին հատուցել է տուժողին պատճառված նյութական վնասը (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 43-56):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստել է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների խախտումներ: Բացի այդ, ըստ բողոքի հեղինակի՝ նշանակված պատժի չկիրառման վերաբերյալ ստորադաս դատարանների մեկնաբանությունները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին:

8.1. Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ սույն քրեական գործով Վերաքննիչ դատարանը Գ.Ղուկասյանի կողմից պատժի կրման անհրաժեշտության հարցը քննարկելիս պատշաճ գնահատականի չի արժանացրել կատարված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ ամբաստանյալի հոգեբանական վերաբերմունքը: Ըստ բողոքի հեղինակի՝ Գ.Ղուկասյանը նախատեսել է իր գործողությունների հետևանքով հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը՝ հանդիպակաց ուղղությամբ ընթացող ավտոմեքենայի հետ բախումը, սակայն առանց բավարար հիմքերի, անհիմն ինքնավստահությամբ հույս է ունեցել մանևրելու միջոցով խուսափելու դրանից: Այլ կերպ՝ բողոք բերած անձի կարծիքով Գ.Ղուկասյանի արարքի սուբյեկտիվ կողմը բնութագրվել է հանցավոր ինքնավստահությամբ, որը մեղքի անզգույշ տեսակի առավել վտանգավոր ենթատեսակն է:

8.2. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, նշելով, որ Գ.Ղուկասյանը ճանապարհային երթևեկության կանոնների կոպիտ խախտում թույլ չի տվել, սույն գործի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված՝ Ա.Սահակյանի գործի փաստական հանգամանքների պարզունակ համադրման արդյունքում հանգել է հետևության, որ սույն գործով այդպիսի խախտումներ առկա չեն, հետևաբար պատիժը պայմանականորեն չկիրառելն օրինաչափ է: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել նշված գործով արտահայտված իրավական դիրքորոշումը և չի նկատել, որ դրանում թվարկվածներն ընդամենը ճանա-

պարհային երթևեկության կանոնների կոպիտ խախտումների մասնավորեցված օրինակներ են, որոնցով Վճռաբեկ դատարանը շեշտել է այդ խախտումներն ըստ իրենց բնույթի տարբերակելու և դրանց բնույթը պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնելու անհրաժեշտությունը: Բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանը, սխալ և սահմանափակ մեկնաբանելով Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումը, խախտման բնույթն ու վտանգավորության աստիճանը բացահայտելու համար հաշվի չի առել դրա կատարման կոնկրետ հանգամանքները, դրա նկատմամբ անձի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

8.3. Բողոքի հեղինակը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը որպես ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք նշել է նաև, որ Գ.Ղուկասյանը, գործի քննության ընթացքում գտնվելով ազատության մեջ, զերծ է մնացել այլ հակաօրինական արարքներ կատարելուց: Նշված իրավական վերլուծությունը, ըստ բողոքաբերի, օրինաչափ չէ, քանի որ անձի կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված իրավախախտում կատարելուց հետո գործի քննության ընթացքում այլ հակաօրինական գործողություններ չկատարելը ողջամտորեն չի կարող դիտվել որպես ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք:

9. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 13-ի դատավճիռը անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշումը պատժի մասով բեկանել և քրեական գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելու, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատշաճ կերպով պատճառաբանվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Գ.Ղուկասյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հե-*

*տևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

*2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները* (...)»:

Մեջբերված քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում՝ մշտապես վերահաստատելով դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի գոյություն ունեցող այնպիսի օբյեկտիվ տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլնի, հիմնված լինեն հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաքյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքն ու հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը և այլն (ԵԱԴԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԷԴ/0132/01/13, ԵԱՆԴ/0060/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13, ՏԴ/0031/01/14, ՍԴ3/0174/01/14, ԵԱԴԴ/0011/01/14, ԵԱՔԴ/0091/01/14, ԵԿԴ/0039/01/15, ԱՐԴ/0031/01/15 և այլն):

13. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը սահմանում է.

«*1. Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս (...)*

*2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*
(…)»:

Հաշվի առնելով վկայակոչված հանցակազմի բնույթն ու առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում իրավական դիրքորոշումներ է ձևավորել նշված հանցանքը կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս հաշվի առնվող հանգամանքների վերաբերյալ:

Հիմք ընդունելով իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով վերոնշյալ հարցերը լուծելիս դատարանները, ի թիվս այլոց, պետք է հատկապես հաշվի առնեն՝

ա. *հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները* (մանրամասն տե՛ս *Արամ Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշման 20-րդ կետը),

բ. *ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը:* Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը բացահայտելու համար դատարանները, յուրաքանչյուր դեպքում ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, պետք է գնահատման ենթարկեն, թե ճանապարհային երթևեկության կանոնների տվյալ խախտումը ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական դարձնում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը (տե՛ս, mutatis mutandis, *Էդմոն Ասատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 18-րդ կետը): Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ, ի թիվս այլոց, լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը վտանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը (տե՛ս *Արամ Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշման 20-րդ կետը): Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խախտված սույն կանոնների («կոպիտ խախ-

տում» եզրույթի չգործածումը պայմանավորված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում 2012 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-2-Ն օրենքով կատարված փոփոխությամբ, մասնավորապես՝ նշյալ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել օրենսգրքի $124^5$-րդ հոդվածը) մատնանշումը չի բացառում, որ ճանապարհային երթևեկության այլ, վերը չմատնանշված կանոնների խախտումները չեն կարող վտանգ ստեղծել ճանապարհային երթևեկության մասնակիցների համար, առավել հավանական դարձնել վերջիններիս կյանքին և առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն հարցը յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ինքնուրույն գնահատման ենթարկել՝ ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքների բազմակողմանի վերլուծությունից,

գ. *ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:* Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում փաստել է, որ դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե տրանսպորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիտակցաբար է թույլ տվել (տե՛ս *Էդմոն Ասատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 18-րդ կետը):

Զարգացնելով սույն իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե ճանապարհային երթևեկության կանոնները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-11-րդ հոդվածների իմաստով դիտավորությամբ, թե անզգուշությամբ են խախտվել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային երթևեկության կանոնները դիտավորությամբ խախտելը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության հանրային վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին,

դ. *հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:* Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը *Էդմոն Ասատրյանի* գործով որոշման շրջանակներում փաստել է. «(…)*[Հ]անրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորված անզգույշ մեղքի (…) տարատեսակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ հանցավոր անփութության դեպքում անձը չի նախատեսում իր արարքի արդյունքում ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, հետևաբար չի գիտակցում նաև իր կողմից տվյալ իրադրությունում թույլ տրված խախտման վտանգավորությունը: Մինչդեռ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը գիտակցում է, որ իր կողմից թույլ տրված խախտման արդյունքում կարող են վտանգավոր հետևանքներ*

*առաջանալ, այսինքն՝ նա գիտակցում է իր արարքի վտանգավորությունը և, չնայած դրան, թույլ է տալիս նշված խախտումը, ինչը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին»* (տե՛ս *Էդմոն Ասատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 17-րդ կետը),

ե. *հանցագործությամբ պատճառված վնասը* (մանրամասն տե՛ս *Արամայիս Հովհաննեսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշման 15-րդ կետը),

զ. *հանցանքի կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը:* Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարաններն ուշադրության պետք է արժանացնեն այն, թե հանցագործության կատարումից անմիջապես հետո ամբաստանյալն արդյոք անհրաժեշտ օգնություն է ցուցաբերել տուժողին, կամ արդյոք քրեական գործի քննության ընթացքում ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմին, դեպքի վերաբերյալ տվել ճշմարտացի, ինքնախոստովանական ցուցմունքներ, արդյոք որոշակի քայլեր է ձեռնարկել տուժողի կամ նրա հարազատների հետ հաշտվելու ուղղությամբ կամ ինքնակամ հատուցել է հանցագործության արդյունքում տուժողի բուժման կամ հուղարկավորության ծախսերը (տե՛ս, mutatis mutandis, *Արամ Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշման 22-րդ կետը):

14. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակի ու չափի, ինչպես նաև նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ վերլուծության հիման վրա կառուցելն ունի առանձնապես կարևոր նշանակություն: Ուստի այդ հանգամանքները հաշվի չառնելը, դրանք անտեսելը կարող է հանգեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը (տե՛ս, mutatis mutandis, *Արտակ Գասպարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ՇԴ3/0014/01/15 որոշման 13-րդ կետը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2015 թվականի հոկտեմբերի 13-ին՝ ժամը 20:45-ի սահմաններում, «Տոյոտա» մակնիշի 23 00 774 պ/հ ավտոմեքենան վարել է Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցով, երրորդ գոտու միջնամասով, մոտ 30 կմ/ժամ արագությամբ, մոտակա լույսերով: Հասնելով Դ.Անհաղթ և Կ.Ույնեցի փողոցների խաչմերուկին՝ թույլ է տվել ՀՀ կառավարության՝ 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշ-

ման 1-ին կետով հաստատված ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 36-րդ և 90-րդ կետերի ու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ Դ.Անհաղթ փողոցով՝ Ռուբինյանց փողոցի կողմից դեպի Կոմիտաս պողոտա տանող ուղղությամբ խաչմերուկ մուտք գործելուց հետո, չհամոզվելով, որ շրջադարձի կատարումն անվտանգ կլինի և խոչընդոտ չի ստեղծի երթևեկության մյուս մասնակիցների համար ու չհետևելով ողջ ճանապարհատրանսպորտային իրադրության զարգացմանը, նախապես չմիացնելով ձախ շրջադարձի համար նախատեսված ցուցիչները, ճանապարհը չի զիջել հանդիպակաց ուղղության երթևեկելի ուղեմասով ուղիղ ուղղությամբ մոտեցող և տվյալ ճանապարհների հատման խաչմերուկն անցնելու հերթականության առումով առավելություն ունեցող՝ ավտովարորդ Դ.Բեջանյանի վարած «ՎԱԶ-21214» մակնիշի 05 SU 045 պ/հ ավտոմեքենային, կատարել է ձախ շրջադարձ և ավտոմեքենան դուրս բերելով հանդիպակաց ուղղության երթևեկելի ուղեմաս՝ ավտոմեքենայի առջևի մասով ընդհարվել է «ՎԱԶ-21214» մակնիշի 05 SU 045 պ/հ ավտոմեքենայի ձախ կողային հատվածին, որի հետևանքով վերջինս դարձել է անկառավարելի, ընդհարվել հետիոտների համար նախատեսված լուսացույցի սյանը, կոտրել այն, որն ընկել է մայթեզրին կանգնած վիճակում գտնվող հետիոտներ Հ.Անախասյանի և Մ.Թամարյանի վրա, որի հետևանքով Մ.Թամարյանին անզգուշությամբ պատճառվել է մահ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով, ի թիվս այլոց, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, հիմնվելով պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության, ծանրացնող հանգամանքների բացակայության վրա, եզրահանգել է, որ ամբաստանյալ Գ.Ղուկասյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով՝ հնարավոր է հասնել պատժի նպատակներին, իսկ սոցիալական արդարության սկզբունքն արդեն իսկ իրացված է (մանրամասն տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, իր հերթին փաստելով, որ ամբաստանյալ Գ.Ղուկասյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցում Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ եզրակացության, արդյունքում վերջինիս կողմից կայացված դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ: Նման եզրահանգման գալիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև հանցագործությունը կատարելուց հետո ամբաստանյալ Գ.Ղուկասյանի դրսևորած վարքագիծը, մասնավորապես այն, որ գործի քննության ողջ ընթացքում վերջինս, գտնվելով ազատության մեջ, զերծ է մնացել այլ հակաօրինական արարքներ կատարելուց, չի խոչընդոտել գործի քննությունը, կամովին հատուցել է տուժողին պատճառված նյութական վնասը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Սույն որոշման նախորդ, ինչպես նաև 5-7-րդ կետերում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Ղուկասյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել ամբաստանյալի անձի և նրա կողմից կատարված հանցավոր արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող գործոնները:

Մասնավորապես, ստորադաս դատարանները՝

ա) պատշաճ գնահատման չեն ենթարկել ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը: Այսպես՝ ստորադաս դատարանները բավարարվել են՝ փաստելով միայն այն մասին, որ ամբաստանյալը թույլ չի տվել *Ա.Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի կողմից մատնանշված ճանապարհային երթևեկության կանոնների խախտում (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը)՝ առանց վերլուծություն կատարելու այն հարցի շուրջ, թե Գ.Ղուկասյանի կողմից թույլ տրված համապատասխան կանոնների խախտումներն ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էին հավանական դարձնում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը (մանրամասն տե՛ս սույն որոշման 13-րդ կետի «բ.» ենթակետը),

բ) վերլուծության և գնահատման չեն ենթարկել թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ ամբաստանյալ Գ.Ղուկասյանի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, այն է՝ ճանապարհային երթևեկության կանոններն ամբաստանյալի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով դիտավորությամբ, թե անզգուշությամբ են խախտվել (մանրամասն տե՛ս սույն որոշման 13-րդ կետի «գ.» ենթակետը),

գ) վերլուծության և գնահատման չեն ենթարկել ամբաստանյալ Գ.Ղուկասյանի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ, այն է՝ դրանց նկատմամբ ամբաստանյալը դրսևորել է հանցավոր ինքնավստահություն, թե հանցավոր անփութություն (մանրամասն տե՛ս սույն որոշման 13-րդ կետի «դ.» ենթակետը):

17. Սույն որոշման 14-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր:

18. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, իր որոշման շրջանակներում արձանագրել է նաև, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում հաշվի

է առնում, ի թիվս այլոց, այն, որ գործի քննության ողջ ընթացքում Գ.Ղուկասյանը, գտնվելով ազատության մեջ, զերծ է մնացել այլ հակաօրինական արարքներ կատարելուց (տե՛ս սույն որոշման 7-րդ և 15-րդ կետերը):

Այդ առումով Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ անձի կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված իրավախախտում կատարելուց հետո գործի քննության ընթացքում այլ հակաօրինական գործողություններ չկատարելը ողջամտորեն չի կարող դիտվել որպես ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք (տե՛ս սույն որոշման 8.3.-րդ կետը): Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավահպատակ վարքագիծ դրսևորելը բնորոշ է հասարակության լայն շրջանակներին և յուրաքանչյուր քաղաքացու հասարակական պարտքն է:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Գ.Ղուկասյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատշաճ կերպով պատճառաբանված չեն:

20. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով, քրեադատավարական օրենքի էական խախտում է, ուստիև հիմք՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝

2016 թվականի հունիսի 13-ի դատավճիռը անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Ղուկասյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**6.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱՔԴ/0533/06/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ | |
| դատավորներ | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ | |
| դատախազ | Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| պաշտպան | Կ.ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ |

2017 թվականի ապրիլի 12-ին քաղաք Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի օգոստոսի 24-ի որոշման դեմ մեղադրյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի պաշտպաններ Կ.Մեժլումյանի և Ի.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Ռ.Մկրտչյանի՝ 2016 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է թիվ 69107116 քրեական գործը:

2016 թվականի հուլիսի 30-ին Անդրիաս Ղուկասյանը ձերբակալվել է:

2016 թվականի հուլիսի 31-ին Ա.Ղուկասյանի պաշտպաններ Լ.Սահակյանը և Ե.Վարոսյանը բողոք են ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ Ա.Ղուկասյանի ձերբակալման իրավաչափության վերաբերյալ, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ մերժվել է:

2. 2016 թվականի օգոստոսի 1-ին Ա.Ղուկասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրը նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ նախաքննության մարմնի վերոհիշյալ միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորումը: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

3. 2016 թվականի օգոստոսի 3-ին Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 1-ի՝ Ա.Ղուկասյանի ձերբակալումն իրավաչափ ճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև Ա.Ղուկասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասին որոշումների դեմ Ա.Ղուկասյանի պաշտպանները ներկայացրել են վերաքննիչ բողոքներ:

Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ պաշտպանների վերաքննիչ բողոքները թողնվել են առանց բավարարման:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Ա.Ղուկասյանի պաշտպաններ Կ.Մեժլումյանը և Ի.Պետրոսյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Ա.Ղուկասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) նա մի խումբ անձանց հետ 2016թ. հուլիսի 29-ին Երևան քաղաքում կազմակերպել է զանգվածային անկարգություններ, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.*

*2016թ. հուլիսի 17-ին կազմակերված խմբի անդամները պետությանը որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու նպատակով զինված հարձակում են գործել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի վրա՝ զավթելով և պահելով այն: Նույն պահից սկսած հիշյալ և հարակից տարածքներում իրավապահ մարմինները օրենքով սահմանված կարգով կազմակերպել և իրականացրել են հանցագործության բացահայտմանը, կանխմանը, ինչպես նաև պետության շահերի և քաղաքացիների անվտանգության ապահովմանն ուղղված հատուկ միջոցառումներ: Նկարագրված միջոցառումների շրջանակներում ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներ ժամանակավորապես սահմանափակել են տրանսպորտային միջոցների և քաղաքացիների երթևեկությունը Երևան քաղաքի Մովսես Խորենացու և հարակից փողոցների որոշ հատվածներում: Անդրիաս Ղուկասյանը, Արմեն Մարտիրոսյանը և Դավիթ Սանասարյանը ստեղծված իրավիճակն ավելի սրելու և Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով 2016թ. հուլիսի 29-ին՝ ժամը 19.30-ից, Ազատության հրապարակում մեկնարկած զանգվածային միջոցառման ընթացքում, հաստատապես տեղյակ լինելով ՊՊԾ գնդին հարակից տարածքներում երթևեկության և հետիոտների ազատ տեղաշարժը սահմանափակված լինելու և իրականացվող հատուկ միջոցառումների մասին, կոչերով, հորդորներով դրդել են հավաքվածներին գնալ դեպի Խորենացի փողոց և անմիջականորեն ստանձնել են երթի ղեկավարումը: Հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով Անդրիաս Ղուկասյանը, Արմեն Մարտիրոսյանը և Դավիթ Սանասարյանը զանգվածային միջոցառման մասնակիցների հետ հասնելով Նար-Դոսի փողոց՝ հանկարծակի երթի ուղղությունը շեղել են դեպի Սարի Թաղ բաղամաս՝ կոչ անելով հավաքվածներին գնալ ՊՊԾ գնդի ուղղությամբ: Զանգվածային միջոցառման մասնակիցները Անդրիաս Ղուկասյանի, Արմեն Մարտիրոսյանի և Դավիթ Սանասարյանի ղեկավարմամբ, բռնություն գործադրելով՝ քաշքշելով և հրելով, ճեղքել են Սարի Թաղ բաղամաս տանող ճանապարհը արգելափակած՝ ոստիկանության ծառայողներից կազմված շղթան, շարժվել են առաջ և տեղակայվել Սարի Թաղ բաղամասի՝ ՊՊԾ գնդից առավել պարզ տեսանելի բարձունքում: Նույն պահին ՊՊԾ գնդի տարածքից արձակվել են կրակոցներ, ինչն իրական վտանգ է ստեղծել հավաքվածների կյանքի և առողջության համար: Ստեղծված անմիջական վտանգը, ինչպես նաև ՊՊԾ գնդի տարածք տարբեր անձանց մուտքը կանխելու նպատակով հավաքվածներին ընդառաջ են գնացել ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ, որոնք արգելափակել են մարդկանց առաջխաղացումը: Անդրիաս Ղուկասյանին, Արմեն Մարտիրոսյանին և Դավիթ Սանասարյանին ոստիկանության ղեկավար կազմն առաջարկել է հրապարակային միջոցառումը շարունակել կամ Ազատության հրապարակում կամ Խորենացի փողոցում՝ նրանց բազմիցս պարզաբանելով այդ տարածքում քաղաքացիների անվտանգության ապահովմանն ուղղված հատուկ միջոցառումներ իրակա-*

*նացնելու կապակցությամբ ազատ տեղաշարժն արգելված լինելու անհրաժեշտությունը: Չնայած դրան, Անդրիաս Ղուկասյանը, Արմեն Մարտիրոսյանը և Դավիթ Սանասարյանը, չենթարկվելով տարածքն ազատելու և առաջ շարժվելն արգելված լինելու ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին, զանգվածային անկարգություններ իրականացնելու իրենց հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով աստիճանաբար բորբոքել են հավաքված բազմության կրքերը, հանձնարարել են հավաքվածների առաջին շարքերում գտնվող կանանց ու երեխաներին փոխարինել տղամարդկանցով, բռնություն գործադրելու համար կուտակել քարեր, որից հետո հրահրել են բռնություն գործադրել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողների նկատմամբ: Արդյունքում, Անդրիաս Ղուկասյանի, Արմեն Մարտիրոսյանի և Դավիթ Սանասարյանի կազմակերպմամբ ու ղեկավարմամբ սկսվել են զանգվածային անկարգություններ, որի ընթացքում դրա անմիջական մասնակիցները, չենթարկվելով նշված վայրում ծառայություն իրականացնող իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին, վտանգելով հասարակական անվտանգությունը՝ բռնություն են գործադրել ՀՀ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ՝ ոտքերով, ձեռքերով, տարատեսակ առարկաներով հարվածներ են հասցրել, քարեր և այլ առարկաներ են նետել նրանց ուղղությամբ, ինչի հետևանքով ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցները ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, վնասվել ու ոչնչացվել է վերջիններիս գույքը»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-5):

6. Առաջին ատյանի դատարանի՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին որոշման համաձայն. *«(...) [Դ.]Եսպի կոնկրետ հանգամանքները, մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը բարձրացնում են հավանականությունը, որ [Ա.Ղուկասյանն] ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել միջնադատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարության մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Մեղադրյալի հավանական վարքագծի վերաբերյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ քրեական գործի քննությունը դեռևս նախնական փուլում է, չեն պարզվել դեպքի բոլոր հանգամանքները, չեն հարցաքննվել դեպքի հետ առնչություն ունեցող անձինք, և մեղադրյալն ազատության մեջ մնալով կարող է անօրինական ազդեցություն գործադրել դատավարության մասնակիցների վրա:*

*Անդրադառնալով Անդրիաս Մարատի Ղուկասյանի պաշտպանի (...) միջնորդությանը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ, [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ (...) մեղադրյալի կողմից գրավի մուծումը չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ վերջինիս իրավաչափ վարքագիծը կանխորոշելու հարցում»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 84-88):

7. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ *«(…) Նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ [Առաջին ատյանի դատարանը], ստուգելով գործի փաստական հանգամանքները, քննիչի կողմից ներկայացրած միջնորդության հիմնավորվածությունը, իրավացիորեն գտել է, որ նախաքննական մարմնի միջնորդությունը ենթակա է բավարարման՝ ի նկատի ունենալով, որ մեղադրյալ Ա.Ղուկասյանն առնչություն ունի իրեն վերագրվող արարքին, ինչպես նաև դեպքի կոնկրետ հանգամանքները, մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը բարձրացնում են հավանականությունը, որ նա, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Մեղադրյալի հավանական վարքագծի վերաբերյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ քրեական գործի քննությունը նախնական փուլում է, չեն պարզվել դեպքի բոլոր հանգամանքները, չեն հարցաքննվել դեպքի հետ առնչություն ունեցող բոլոր անձինք, և մեղադրյալն ազատության մեջ մնալով, կարող է անօրինական ազդեցություն գործադրել դատավարության մասնակիցների վրա:*

*(…)*

*[Առաջին ատյանի դատարանը], քննության առնելով պաշտպանի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու մասին, մերժել է այն, քանի որ մեղադրյալի կողմից գրավի մուծումը սույն գործով չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ վերջինիս իրավաչափ վարքագիծը կանխորոշելու հարցում: **Դրա մասին է վկայում նաև վերաքննիչ դատաքննության ընթացքում իր պայքարը շարունակելու մասին մեղադրյալի հայտնած դիրքորոշումը**»* (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 45-62):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճռաբեկ բողոք բերած անձանց համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իրենց պնդման՝ բողոքաբերները վկայակոչել են Վճռաբեկ դատարանի՝ *Ա.Ավետիսյանի, Ա.Հովսեփյանի,* ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի, Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի* որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները և եզրահանգել, որ ո՛չ Առաջին ատյանի և ո՛չ էլ Վերաքննիչ դատարանը Անդրիաս Ղուկասյանին կալանքի վերցնելու, ինչպես նաև գրավի կիրառման միջնորդությունը մերժելու մասին որոշումներում չեն վկայակոչել, չեն նշել գործի նյութերում առկա որևէ փաստ, որևէ փաստական տվյալ, որոնց հիման վրա ողջամտորեն ենթադրել են, որ ազա-

տության մեջ մնալու, այդ թվում գրավի կիրառմամբ ազատության մեջ մնալու դեպքում Անդրիաս Ղուկասյանը անօրինական ազդեցություն կգործի գործով անցնող անձանց վրա և կխոչընդոտի գործի քննությանը:

9. Բացի այդ, բողոքաբերները հիմնազուրկ են համարել Վերաքննիչ դատարանի հետևությունները առ այն, որ մեղադրյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ գրավի կիրառումը չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ վերջինիս իրավախափ վարքագիծը կանխորոշելու համար՝ հիմք ընդունելով ***«վերաքննիչ դատաքննության ընթացքում իր պայքարը շարունակելու մասին մեղադրյալ Ա.Ղուկասյանի հայտնած դիրքորոշումը»:***

Բողոքի հեղինակները նշել են նաև, որ մեղադրյալ Ա.Ղուկասյանն ունի մշտական բնակության վայր, ամուսնացած է, նրա խնամքին են գտնվում անչափահաս երեխան, վատառողջ մայրը և հայրը, ունի երկու բարձրագույն կրթություն, հասարակական-քաղաքական գործիչ է, դրական է բնութագրվում, որպիսի հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից որևէ գնահատման չեն արժանացել:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 24-ի որոշումը, մեղադրյալ Ա.Ղուկասյանին կալանքից ազատել կամ նրա նկատմամբ թույլատրելի ճանաչել այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ մեղադրյալին կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու դեպքերի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավո՞ր են արդյոք մեղադրյալ Ա.Ղուկասյանին կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը (…) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

*1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.*

*2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող*

*մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.*

*3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.*

*4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.*

*5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝*

*1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.*

*2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.*

*3) տարիքը և առողջական վիճակը.*

*4) սեռը.*

*5) զբաղմունքի տեսակը.*

*6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը.*

*7) գույքային դրությունը.*

*8) բնակության մշտական վայրի առկայությունը.*

*9) այլ էական հանգամանքներ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Գրավը (…) կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: (…)*

*2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:*

*(…)»:*

14. Կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Ավետիսյանի* գործով որոշմամբ՝ իրավական դիրքորոշում հայտնելով առ այն, որ *«[Ա]նձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա (…):*

*(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը,*

*մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառիչ:*

*Ուստի (...) գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը»* (տե՛ս Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 34-րդ և 36-րդ կետերը):

Զարգացնելով գրավի թույլատրելիության վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը *Դ.Վարդանյանի* գործով որոշմամբ արձանագրել է, որ *«[Մ]եղադրյալին կալանքից գրավով ազատելու հարցը քննարկելիս դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե մեղադրյալի նկատմամբ ինչ հիմքով է կալանավորումը կիրառվել որպես խափանման միջոց, և արդյոք տվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործուն երաշխիք հանդիսանալ տվյալ հիմքի չեզոքացման համար:*

*(...)*

*[Գ]րավը քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով»* (տե՛ս Դավիթ Կարենի Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱՔԴ/0056/06/14 որոշման 16-րդ կետը):

15. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Ավետիսյանի և Դ.Վարդանյանի* վերաբերյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքները թվարկված են ոչ սպառիչ, և որպես այդպիսիք կարող են հաշվի առնվել նաև այլ հանգամանքներ: Այլ խոսքով՝ քննարկվող նորմով նախատեսված է կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքների բաց թվարկում, իսկ մեկնաբանման *ejusdem generis* հանրաճանաչ կանոնի համաձայն՝ բաց թվարկման չորոշակիացված տարրի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ելնել որոշակիացված տարրերի բովանդակությունից. անորոշ տարրը պետք է կրի այն ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են որոշակիացված տարրերին: Վերոգրյալի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքների բնույթի և բովանդակության հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանքից գրավով

ազատելն անթույլատրելի ճանաչելիս դատարանը կարող է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, որոնք.

ա) վերաբերում են քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելուն և բարձրացնում ոչ իրավաչափ վարքագծի հավանականությունը,

բ) չեն հանգեցնում անձի այլ հիմնական իրավունքների խախտման (վերջինիս հրամայականը բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներից, այն է. *«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:*

*Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:*

*Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»*):

16. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ղուկասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրա կազմակերպմամբ ու ղեկավարմամբ սկսվել են զանգվածային անկարգություններ, որի ընթացքում դրա անմիջական մասնակիցները, չենթարկվելով նշված վայրում ծառայություն իրականացնող իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին, վտանգելով հասարակական անվտանգությունը՝ բռնություն են գործադրել ՀՀ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ՝ ոտքերով, ձեռքերով, տարատեսակ առարկաներով հարվածներ են հասցրել, քարեր և այլ առարկաներ են նետել նրանց ուղղությամբ, ինչի հետևանքով ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցները ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, ինչպես նաև վնասվել, ու ոչնչացվել է վերջիններիս գույքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին իր որոշմամբ փաստել է, որ դեպքի կոնկրետ հանգամանքները, մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը բարձրացնում են հավանականությունը, որ մեղադրյալ Ա.Ղուկասյանն ազատության մեջ մնալով կարող է **խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:** Անդրադառնալով գրավ կիրառելու վերաբերյալ Ա.Ղուկասյանի պաշտպանի միջնորդությանը, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ մեղադրյալի կողմից գրավի մուծումը **չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ վերջինիս իրավաչափ վարքագիծը կանխորոշելու հարցում** (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ մեղադրյալ Ա.Դուկասյանն առնչություն ունի իրեն վերագրվող արարքին, ինչպես նաև դեպքի կոնկրետ հանգամանքները, վերջինիս վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը բարձրացնում են հավանականությունը, որ նա, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Միևնույն ժամանակ, անդրադառնալով մեղադրյալի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու մասին պաշտպանի փաստարկներին, Վերաքննիչ դատարանը, ի թիվս Առաջին ատյանի դատարանի հիմնավորումների, այն է՝ «մեղադրյալի կողմից գրավի մուծումը սույն գործով չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ վերջինիս իրավաչափ վարքագիծը կանխորոշելու հարցում», նշել է, որ ***«դրա մասին է վկայում նաև վերաքննիչ դատաքննության ընթացքում իր պայքարը շարունակելու մասին մեղադրյալի հայտնած դիրքորոշումը»*** (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Ա.Դուկասյանի նկատմամբ գրավի կիրառման հնարավորությունը քննարկելիս հիմք է ընդունել նաև վերաքննիչ դատաքննության ընթացքում՝ *իր պայքարը շարունակելու մասին* մեղադրյալի հայտնած դիրքորոշումը:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքը, ըստ էության, կապված է մեղադրյալի քաղաքական հայացքների հետ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող հանգամանքը չի վերաբերում քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ Ա.Դուկասյանի գտնվելն ապահովելուն և որևէ կերպ չի բարձրացնում նրա կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Ավելին՝ անձի քաղաքական հայացքներով պայմանավորված՝ նրա նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցի կիրառումն անթույլատրելի ճանաչելու պահանջում խախտվում է նաև քաղաքական հայացքներով պայմանավորված խտրականությունից զերծ մնալու անձի իրավունքը (ՀՀ Սահմանադրության 29-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածներ): Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված հանգամանքը չի կարող հաշվի առնվել մեղադրյալ Ա.Դուկասյանի նկատմամբ գրավ կիրառելու մասին միջնորդությունը մերժելու համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը *«իր պայքարը շարունակելու մասին մեղադրյալի հայտնած դիրքորոշումը»* որպես Ա.Դուկասյանին կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանք դիտարկելու արդյունքում թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 29-րդ, «Մարդու իրավունքների և հիմ-

ճարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ խտրականությունից զերծ մնալու իրավունքի խախտումն ինքնին չի հանգեցնում բուն իրավունքի (սույն դեպքում ազատության իրավունքի) խախտման: Համանման դիրքորոշում է արտահայտված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքում *(տե՛ս, mutatis mutandis, Van der Mussele v. Belgium գործով Եվրոպական դատարանի 1983 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 8919/80, կետ 43):*

17.1. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը, քննարկելով մեղադրյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու իրավաչափության հարցը, արձանագրում է, որ ստորադաս դատարանները հիմք են ընդունել դեպքի կոնկրետ հանգամանքները, մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը և եզրահանգել, որ դրանք բարձրացնում են հավանականությունը, որ Ա.Ղուկասյանն, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Ստորադաս դատարանները նաև նշել են, որ մեղադրյալի հավանական վարքագծի վերաբերյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ քրեական գործի քննությունը դեռևս նախնական փուլում է, չեն պարզվել դեպքի բոլոր հանգամանքները, չեն հարցաքննվել դեպքի հետ առնչություն ունեցող անձինք, և մեղադրյալն ազատության մեջ մնալով կարող է անօրինական ազդեցություն գործադրել դատավարության մասնակիցների վրա:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Ա.Ղուկասյանին վերագրված ենթադրյալ հանցագործության

- հանրային վտանգավորության բնույթը, մասնավորապես այն, որ մեղադրյալին մեղսագրվել է զանգվածային անկարգություններ կազմակերպելու հանցանք, որն ուղղված է հասարակական անվտանգության դեմ,

- ծանրության աստիճանը՝ դասվում է ծանր հանցագործությունների շարքին, որի համար նախատեսված է չորսից տասը տարի ժամկետով ազատազրկում,

- ենթադրաբար խմբի կազմում կատարելը,

- կատարման եղանակը, մասնավորապես այն, որ ըստ մեղադրանքի՝ աստիճանաբար բորբոքել են հավաքված բազմության կրքերը, հանճնարարել են հավաքվածների առաջին շարքերում գտնվող կանանց ու երեխաներին փոխարինել տղամարդկանցով, բռնություն գործադրելու համար կուտակել քարեր, որից հետո հրահրել են բռնություն գործադրել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողների նկատմամբ,

- հանցավոր նպատակը՝ ենթադրաբար կատարվել է կազմակերված խմբի կողմից պետությանը որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու նպատակով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի վրա՝ զինված հարձակում գործելու, այն զավթելու և պահելու հետևանքով ստեղծված իրավիճակը սրելու նպատակով,

- հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, մասնավորապես ըստ մեղադրանքի՝ սկսվել են զանգվածային անկարգություններ, որի ընթացքում դրա անմիջական մասնակիցները, չենթարկվելով նշված վայրում ծառայություն իրականացնող իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին, վտանգելով հասարակական անվտանգությունը՝ բռնություն են գործադրել ՀՀ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ՝ ոտքերով, ձեռքերով, տարատեսակ առարկաներով հարվածներ են հասցրել, քարեր և այլ առարկաներ են նետել նրանց ուղղությամբ,

- հետևանքները, մասնավորապես ըստ մեղադրանքի՝ ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցները ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, վնասվել ու ոչնչացվել է վերջիններիս գույքը *(խափանման միջոց ընտրելիս արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատման մասին մանրամասն տե՛ս Վահագն Հակոբի Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ-1/0062/06/12 որոշման 13-րդ կետը),*

գտնում է, որ Ա.Ղուկասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր են:

Ինչ վերաբերում է մեղադրյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ գրավի կիրառման թույլատրելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ա.Ղուկասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց են ընտրել քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հավանականության առկայության հիմքով: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով Ա.Ղուկասյանին վերագրվող արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը բնութագրող և վերը հիշատակված հանգամանքները, այդ թվում այն, որ նրան մեղսագրված արարքի բովանդակությունը, ըստ էության, կազմում է մեծաքանակ անձանց ոչ իրավաչափ գործողությունների կազմակերպում և ղեկավարում, գտնում է, որ գրավի թույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների այն պատճառաբանությունը, որ *«գրավի մուծումը չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ վերջինիս իրավաչափ վարքագիծը կանխորոշելու հարցում»,* իրավաչափ է:

18. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ա.Ղուկասյանին կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր է:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ստորադաս դատարանների կողմից մեղադրյալ Ա.Ղուկասյանի կալանավորման անհրաժեշտությունը գործում առկա փաստերով չհիմնավորելու վերաբերյալ բողոքաբերների փաստարկները (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը) հիմնազուրկ են և չեն բխում գործի նյութերից: Ինչ վերաբերում է բողոքաբերների կողմից վկայակոչված՝ Ա.Ղուկասյանի անձը բնութագրող հանգամանքներին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում առկա փաստական հանգամանքների համատեքստում դրանք չեն կարող վճռորոշ նշանակություն ունենալ մեղադրյալի նկատմամբ կալանք ընտրելու անհրաժեշտության, ինչպես նաև այն գրավով փախարինելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները ոչ իրավաչափ գնահատելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումը չի ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, հետևաբար մեղադրյալ Ա.Ղուկասյանի պաշտպանների վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ ստորադաս դատարանների որոշումները թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի ձերբակալման իրավաչափության, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում ընտրելու և այն գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 1-ի որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքներն առանց բավարարման թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 24-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԴ-1/0007/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վարուժան Ռոբերտի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Հարությունյանի պաշտպան Կ.Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2014 թվականի փետրվարի 17-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 20107914 քրեական գործը:

2014 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ Վարուժան Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ Վ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ թիվ 20107914 քրեական գործն ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին և 2014 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ միացվել թիվ 16132114 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 30-ի որոշմամբ թիվ 16132114 քրեական գործից անջատվել և առանձին վարույթ է առանձնացվել Վ.Հարությունյանի, Մ.Հարությունյանի և Լ.Գևորգյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու վերաբերյալ մասը, շնորհվել թիվ 59100315 համարը և ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզի քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ Վ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նույն հոդվածով նոր մեղադրանք է առաջադրվել:

2015 թվականի փետրվարի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 22-ի դատավճռով Վ.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վ.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Մ.Հարությունյանը և Լ.Գևորգյանը:

3. Ամբաստանյալ Վ.Հարությունյանի պաշտպան Կ.Կիրակոսյանի և ամբաստանյալներ Լ.Գևորգյանի ու Մ.Հարությունյանի պաշտպան Ա.Սահակյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2016 թվականի հունիսի 15-ի որոշմամբ բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Հարությունյանի պաշտպան Կ.Կիրակոսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման և մեղադրական եզրակացության համաձայն՝ Վարուժան Ռոբերտի Հարությունյանը մեղադրվում է այն բանի համար, որ *«(…) նա, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Լևոն Գևորգյանի և Մարատ Հարությունյանի հետ, անձնական դերաբաշխմամբ, 2014թ. փետրվարի 17-ին՝ ժամը 18:30-ից մինչև ժամը 21:00-ն ընկած ժամանակահատվածում, վերջիններիս հետ միասին գնացել է Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 2-րդ շենքի բակ, որտեղ Լևոն Գևորգյանի հետ միասին **սպասել են շենքի շրջակայքում, հսկել տարածքը, ապահովելով հանցակից Մարատ Հարությունյանի կողմից անարգել ավարտին հասցնել իրենց հանցավոր մտադրությունը**: Այդ ժամանակ **Մարատ Հարությունյանը,** պատուհանը բացելու եղանակով, **ապօրինի մուտք է գործել** նույն շենքի 8-րդ հասցեում գտնվող Իսահակ Մեղրյանին պատկանող բնակարան, այնտեղից գաղտնի հափշտակել խոշոր չափի՝ 1.531.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության ոսկյա զարդեր և 60.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության մետաղյա զարդեր, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել ավարտին հասցնել իր հանցավոր մտադրությունը, քանի որ Մարատ Հարությունյանի կողմից բնակարանից դուրս գալուն պես բռնվել է ոստիկանության Կոտայքի բաժնի աշխատակիցների կողմից»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 95):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն. *«(…) Դատարանն առաջադրված մեղադրանքի սահմաններում հաստատված է համարում, որ՝*

*Վարուժան Ռոբերտի Հարությունյանը ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Մարատ Հարությունյանի հետ, անձնական դերաբաշխմամբ, 2014թ. փետրվարի 17-ին՝ ժամը 18:30-ից մինչև ժամը 21-ն ընկած ժամանակահատվածում, Մարատ Հարությունյանի հետ գնացել է Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 2-րդ շենքի բակ, **երկուսով ապօրինի մուտք են գործել** Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 2-րդ շենքի 8-րդ հասցեում գտնվող Իսահակ Մեղրյանին պատկանող բնակարան և այնտեղից գաղտնի հափշտակել խոշոր չափի՝ 1.531.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության ոսկյա զարդեր և 60.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության մետաղյա զարդեր, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում չեն կարողացել ավարտին հասցնել հանցավոր մտադրությունը, քանի որ **Մարատ Հարությունյանի կողմից բնակարանից դուրս գալուն պես** բռնվել են ոստիկանության Կոտայքի բաժնի աշխատակիցների կողմից»* (տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթ 121-136):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն. «(...) *Դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ճեղքերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, կատարված հանրորեն վտանգավոր արարքում ամբաստանյալ Վարուժան Հարությունյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության* (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթ 205-206):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճռաբեկ բողոք բերած անձը գտել է, որ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հանգեցրել են դատական սխալի: Մասնավորապես, ստորադաս դատարանները կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետը, որը չպետք է կիրառեին, ինչպես նաև խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-18-րդ, 23-րդ, 25-րդ, 126-127-րդ և 258-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Վ.Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ վերջինս և մյուս ամբաստանյալը միասին սպասել են շենքի շրջակայքում, հսկել տարածքը՝ ապահովելով հանցակից Մ.Հարությունյանի կողմից հանցավոր մտադրությունն անարգել ավարտին հասցնելը: Սինչդեռ ստորադաս դատարանն ապացուցված է համարել, որ Վ.Հարությունյանը և Մ.Հարությունյանը երկուսով ապօրինի մուտք են գործել տուժողի բնակարան: Այսինքն՝ ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանը, դուրս գալով իր լիազորությունների շրջանակից, իր պաշտպանյալին մեղավոր է ճանաչել այնպիսի արարքի համար՝ բնակարան ապօրինի մուտք գործելու, ինչը մեղադրական եզրակացության մեջ ներառված չի եղել:

8.1. Բողոքաբերը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ Գրիգոր Ղլիջյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ-5/0005/01/14 որոշումը, գտել է, որ թե՛ նախաքննական մարմինը, թե՛ ստորադաս դատարաններն անտեսել են այդ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, կայացրել են դրանց հակասող դատական ակտեր՝ Վ.Հարությունյանի արարքին տալով սխալ քրեաիրավական գնահատական:

Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը գրեթե միևնույն ապացույցներով գործով մյուս ամբաստանյալ Լ.Գևորգյանին արդարացրել է, իսկ Վ.Հարությունյանին՝ դատապարտել:

9. Ելնելով վերոշարադրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և Վարուժան Հարությունյանի մասով կայացնել նոր դատական ակտ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված արարք կատարելու մեջ նրան ճանաչել անպարտ և արդարացնել՝ մերժելով նաև նրա նկատմամբ հարուցված քաղաքացիական հայցը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*I. ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված՝ բնակարան ապօրինի մուտ գործելով գողության համակատարումը.*

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք նախաքննության մարմնի կողմից Վ.Հարությունյանի արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով որակելն այն պայմաններում, երբ առաջադրված մեղադրանքում բնակարան ապօրինի մուտք գործելու փաստը նրան չի վերագրվել:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը սահմանում է. «*Հանցակցությունն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն. «*1. Կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը:*

*2. Կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ:*

*(...)*

*5. Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները*»:

Սեջբերված նորմերը վերլուծելով *Ալիկ Մաթևոսյանի* և *Ռաֆիկ Հարությունյանի* գործով որոշման մեջ՝ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *« (...) Համակատարում նշանակում է, որ*

*երկու կամ ավելի անձինք անմիջականորեն կատարում են հանցագործության օբյեկտիվ կողմը:*

*Համակատարում չէ հանցագործությանը այնպիսի մասնակցությունը, երբ անձանցից մեկը տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հանդիսացող ոչ մի գործողություն չի կատարել, այլ միայն օժանդակել է հանցագործությանը:*

*(...)*

*Օժանդակողը կատարողից տարբերվում է այն բանով, որ նա հանցագործության օբյեկտիվ կողմն անմիջականորեն չի կատարում, այլ կամ հանցագործությունը նախապատրաստելու պրոցեսում, կամ դրա ավարտման փուլում կատարողին օգնություն է ցույց տալիս հանցագործության ավարտման ռեալ (իրական) հնարավորություններ ստեղծելու միջոցով:*

*Օժանդակողը հանցագործության անմիջական կատարմանը չի մասնակցում, այլ տրամադրելով հանցագործության կատարման համար անհրաժեշտ միջոցներ կամ գործիքներ, վերացնելով խոչընդոտները և այլն, օգնում է կատարողին իրականացնել հանցակիցների դիտավորությունը: (...)»* (տե՛ս Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 29-30-րդ կետերը):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Գողությունը՝ ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակությունը՝*

*պատժվում է [համապատասխան պատժով]:*

*(...)*

*3. Գողությունը, որը կատարվել է՝*

*(...)*

*1.1) բնակարան ապօրինի մուտք գործելով,*

*(...)*

*պատժվում է [համապատասխան պատժով]»:*

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բնակարան ապօրինի մուտք գործելով գողության համակատարմանն ու դրա եղանակին, *Գրիգոր Ղևոնյանի* գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«[Մ]ուտք գործելու հիմնական ձևերից է համարվում հանցավորի ֆիզիկական ներթափանցումը կամ ներս մտնելը բնակարան: (...)*

*[Ա]յն դեպքում, երբ բնակարան ապօրինի մուտք գործելով գողությունը կատարվում է մեկից ավելի անձանց կողմից, արարքը կարող է որակվել որպես համակատարում, երբ անձը լրիվ կամ մասամբ կատարում է հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողություններ:*

*Հակառակ պարագայում անձի գործողությունները համապատասխան հանգամանքների առկայության դեպքում կարող են որակվել հանցակցության այլ ձևերով: Մասնավորապես, եթե հանցակիցը հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողություն չի կատարել, սակայն հանցագործութ-*

*յան կատարմանն աջակցել է, օրինակ, խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով (օրինակ՝ հսկում է դրսում, որպեսզի կատարողն առանց խոչընդոտի կատարի հափշտակությունը, (...) և այլն), ապա նրա արարքը պետք է որակվի որպես բնակարան ապօրինի մուտք գործելով գողության օժանդակություն»* (տե՛ս Գրիգոր Ղլիջյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ5/0005/01/14 որոշման 12-13-րդ կետերը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Վ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Լևոն Գևորգյանի և Մարատ Հարությունյանի հետ, անձնական դերաբաշխմամբ, վերջիններիս հետ միասին գնացել է Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 2-րդ շենքի բակ, որտեղ Լևոն Գևորգյանի հետ **միասին սպասել են շենքի շրջակայքում, հսկել տարածքը՝ ապահովելով հանցակից Մարատ Հարությունյանի կողմից իրենց հանցավոր մտադրությունը անարգել ավարտին հասցնելուն:** Այդ ժամանակ Մարատ Հարությունյանը պատուհանը բացելու եղանակով ապօրինի մուտք է գործել նույն շենքի 8-րդ հասցեում գտնվող Իսահակ Մեղրյանին պատկանող բնակարան, այնտեղից կատարել գաղտնի հափշտակություն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել ավարտին հասցնել իր հանցավոր մտադրությունը, քանի որ բնակարանից դուրս գալուն պես բռնվել է ոստիկանության Կոտայքի բաժնի աշխատակիցների կողմից (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրական եզրակացությամբ Վ.Հարությունյանը մեղադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 1.1-րդ կետով նախատեսված հանցավոր արարքի կատարման մեջ, մինչդեռ, ինչպես երևում է մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների նկարագրությունից, վերջինիս չի մեղսագրվել բնակարան ապօրինի մուտք գործելու գործողությունը, մասնավորապես՝ ֆիզիկական ներթափանցումը կամ բնակարան ներս մտնելը: Նախաքննական մարմինը հաստատված է համարել, որ արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների իրականացման ընթացքում Վ.Հարությունյանն սպասել է բակի շրջակայքում՝ ապահովելով բնակարան մուտք գործած հանցակցի կողմից իրենց հանցավոր մտադրությունն անարգել ավարտին հասցնելը, մինչդեռ Վ.Հարությունյանի արարքը ոչ իրավաչափորեն որակել է որպես բնակարան ապօրինի մուտք գործելով գողության փորձի համակատարում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի կողմից Վ.Հարությունյանի արարքները ՀՀ քրեա-

կան օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով որակելն այն պայմաններում, երբ առաջադրված մեղադրանքում բնակարան ապօրինի մուտք գործելու փաստը նրան չի վերագրվել, հիմնավորված չէ:

*II.Դատական քննության սահմանները.*

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանները, հաստատված համարելով, որ Վ.Հարությունյանն ապօրինի մուտք է գործել տուժողին պատկանող բնակարան, արդյո՞ք թույլ են տվել դատական քննության սահմանների խախտում:

16. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝*

*1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք. (...)*

*3) իր պաշտպանությունը նախապատրաստելու (...) համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք. (...) »:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. *«Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.*

*ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,*

*բ) բավարար ժամանակ և հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն. *«Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:*

*2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին (...) ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:*

17. Վճռաբեկ դատարանը կրկնում է դատական քննության սահմանների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումներն այն մասին, որ.

- գործի դատական քննությունը սահմանափակված է այն անձանց շրջանակով, որոնց նկատմամբ կայացվել է դատական քննություն նշանա-

կելու մասին որոշում և այդ անձանց նկատմամբ առաջադրված մեղադրանքի ծավալով: Սա պայմանավորված է մի կողմից՝ մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն իրական և արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող մարմին, չի կարող ինքնուրույն ձևակերպել նոր մեղադրանք՝ փոխարինելով քրեական հետապնդման մարմիններին: Ընդ որում, դատական քննության սահմաններն ընդգծելու և մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է, որ «մեղադրանք» եզրույթը հասկացվի որպես արարքի քրեաիրավական որակման և դրա հիմքում ընկած փաստական հանգամանքների ամբողջություն *(տե՛ս Արկադի Պապյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 23-րդ կետը):*

- Մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն *(տե՛ս Արկադի Պապյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-րդ կետը):*

- Թեև մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և կայացված որոշումները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, այդուհանդերձ, մինչդատական վարույթի արդյունքները կանխորոշում են դատական քննության սահմանները: Դատական քննության փուլում դատարանի խնդիրն է ստուգել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը, և եթե ապացույցների հետազոտման արդյունքում մեղսագրվող արարքը կհաստատվի, դատարանը պարտավոր է կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական եզրակացությամբ *(տե՛ս Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 21-րդ, 23-րդ կետերը):*

18. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ որպես մեղադրյալ ներգրավելու որոշմամբ և մեղադրական եզրակացությամբ Վ.Հարությունյանին չի մեղսագրվել անձամբ բնակարան մուտք գործելու և այնտեղից հափշտակություն կատարելու փաստը: Մինչդեռ առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված է համարվել, որ Վարուժան Հարությունյանը Մարատ Հարությունյանի հետ գնացել է Աբովյան քաղաքի 3-րդ միկ-

րոշրջանի 2-րդ շենքի բակ, և **երկուսով ապօրինի մուտք են գործել** Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 2-րդ շենքի 8-րդ հասցեում գտնվող Ի.Մեղրյանին պատկանող բնակարան և այնտեղից գաղտնի հափշտակել խոշոր չափի ոսկյա և մետաղյա զարդեր (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը)։ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, արձանագրել է, որ կատարված հանրորեն վտանգավոր արարքում ամբաստանյալ Վ.Հարությունյանի մեղավորության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը)։

19. Սույն որոշման 15-17-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի, դրանց վերլուծությունների լույսի ներքո գնահատելով 18-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Վ.Հարությունյանի կողմից անճամբ բնակարան ապօրինի մուտք գործելու փաստը մեղսագրել են այն պայմաններում, երբ քննարկվող փաստը որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ և մեղադրական եզրակացությամբ նրան մեղսագրված չի եղել։ Բնակարան ապօրինի մուտք գործելու հանգամանքն ամբաստանյալին մեղսագրված հանցակազմի էությունը կազմող հատկանիշ է, հետևաբար անկախ իրենց ներքին համոզմունքից և գործում առկա ապացույցներից՝ ստորադաս դատարաններն իրավասու չէին հաստատված ճանաչել այն։ Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը, քննարկվող փաստը հաստատելով, ըստ էության, իրացրել է մեղադրական գործառույթներ, Վ.Հարությունյանին մեղսագրել է հանցանքի օբյեկտիվ կողմի այնպիսի հատկանիշ, որպիսին նախաքննության մարմնի կողմից վերջինիս մեղսագրված չի եղել՝ ամբաստանյալին զրկելով իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից։ Վերաքննիչ դատարանն էլ նման պայմաններում Առաջին ատյանի դատարանի հետևությունները համարել է հիմնավոր և դատական ակտը թողել է անփոփոխ։

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով, որ Վ.Հարությունյանն ապօրինի մուտք է գործել տուժողին պատկանող բնակարան, թույլ են տվել դատական քննության սահմանների խախտում։

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի և 38-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները։ Արդյունքում խախտվել է նաև ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված պաշտպանության իրավունքը։

Թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումներն իրենց բնույթով էական են և ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ,

398-րդ հոդվածների իմաստով հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ստորադաս դատարանների կողմից դատական քննության սահմանների խախտում թույլ տալու պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում պաշտպանի կողմից վճռաբեկ բողոքում բարձրացված՝ ապացույցների գնահատման և դրանց բավարարության վերաբերյալ փաստարկներին (տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը) և գտնում է, որ դրանք պետք է քննարկման առարկա դարձվեն գործի նոր քննության ընթացքում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վարուժան Ռոբերտի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Վարուժան Ռոբերտի Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**8.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱՐԴ-1/0005/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2015 թվականի դեկտեմբերի 1-ին Մարտուն Հակոբյանը դիմում է ներկայացրել Արմավիրի մարզի դատախազություն այն մասին, որ 2009 թվականի կեսերին անձնական կարիքների համար Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի բնակիչ Շիրին Հասանի Ջանգոյանից ամսական 5 տոկոս տոկոսադրույքով վերցրել է 20.000 ԱՄՆ դոլար և մինչև 2015 թվականի հունվար ամիսը նրան վճարել մոտ 60.000 ԱՄՆ դոլար:

2015 թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Վաղարշապատի քննչական բաժնում նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 57131615 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2016 թվականի փետրվարի 29-ին ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Ումուրշատյանը (այսուհետ՝ նաև Քննիչ) որոշում է կայացրել թիվ 57131615 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոհիշյալ որոշման դեմ դիմող Մ.Հակոբյանը և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանը բողոք են ներկայացրել Արմավիրի մարզի դատախազին՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Քննիչի որոշումը:

2016 թվականի մարտի 29-ին Արմավիրի մարզի դատախազ Ա.Սիմոնյանի որոշմամբ դիմող Մ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. 2016 թվականի ապրիլի 12-ին դիմող Մ.Հակոբյանը և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանը բողոք են ներկայացրել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով որոշում կայացնել դիմող Մ.Հակոբյանի իրավունքների ու ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին և վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Քննիչի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի և դրա դեմ բերված բողոքը մերժելու մասին Արմավիրի մարզի դատախազի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումները:

Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ դիմող Մ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի բողոքը բավարարել է՝ վերացնելով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Քննիչի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի և դրա դեմ բերված բողոքը մերժելու մասին Արմավիրի մարզի դատախազի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումները:

3. Դատախազ Ա.Սիմոնյանի և շահագրգիռ անձ Շ.Ջանգոյանի ներկայացուցիչ Մ.Խչեյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում իրականացնելու մասին որոշման համաձայն՝ *«(…) Որպես վկա հարցաքննվել է Շ.Ջանգոյանը, ով իր ցուցմունքներով հերքել է Մ.Հակոբյանին և, առհասարակ, որևէ մեկին տոկոսով գումար տալու հանգամանքը (…):*

*Հակոբյանի և Ջանգոյանի միջև կատարվել է առերեսում, որի ընթացքում յուրաքանչյուրը պնդել է իր ցուցմունքներում նշված հանգամանքները (…):*

*Շ.Ջանգոյանի բնակարանում և կից օժանդակ շինություններում կատարվել է խուզարկություն, սակայն նախաքննության համար ապացուցողական նշանակություն ունեցող փաստաթղթեր, այլ իրեր, առարկաներ չեն հայտնաբերվել:*

*Շ.Ջանգոյանի կողմից տոկոսով գումար տալու և տոկոսներ ստանալու վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով գրավոր հանձնարարություններ են տրվել ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժին, և ստացված պատասխանների համաձայն՝ նշված հանգամանքները հաստատող տեղեկություններ ձեռք չեն բերվել:*

*(…)*

*[Ինչ վերաբերում է Մ.Հակոբյանի և Շ.Ջանգոյանի խոսակցության գաղտնի ձայնագրառմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ] ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում, իսկ տվյալ դեպքում ձայնագրությունը կատարվել է շահագրգիռ կողմ հանդիսացող Մ.Հակոբյանի կողմից, հետևապես այն չի կարող դրվել ապացույցների հիմքում:*

*Այսպիսով՝ Շ.Ջանգոյանի կողմից վաշխառություն կատարելու մասին հայտնել են միայն փաստացի շահագրգիռ կողմ հանդիսացող անձինք, կատարված քննչական և դատավարական գործողությունների արդյունքում ձեռք չեն բերվել վերջինիս կողմից վաշխառություն կատարելու հանգամանքները հաստատող այլ տվյալներ, այսինքն՝ փոխկապակցված, բավարար ապացույցների համակցություն, իսկ առկա ապացույցները հիմք չեն տալիս անձի մեղավորության մասին հավաստի եզրահանգում անելու, սպառվել են այդ ուղղությամբ նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները (…):*

*Հետևաբար (…) քրեական գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվել Շ.Ջանգոյանի կողմից վաշխառություն, այսինքն՝ ՀՀ քրեա-*

*կան օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու հանգամանքը, և առկա են քրեական հետապնդում իրականացնելու և գործով վարույթը կարճելու փաստական և իրավական հիմքեր, իսկ գումարային հարցով Ջանգոյանի և Հակոբյանի միջև առկա է քաղաքացիաիրավական բնույթի հարաբերություն, որը ենթակա է լուծման դատական կարգով (...)»* (տե՛ս նյութեր, թերթեր 16-18):

6. Առաջին ատյանի դատարանը, բավարարելով դիմողի և նրա ներկայացուցչի բողոքը, նշել է. «*(...) Բողոքարկվող որոշմամբ քննիչը հաշվի չի առել մի շարք հանգամանքներ, որոնք ենթակա են հանգամանալից քննության, և որոնց արդյունքում հնարավոր է, որ կհիմնավորվեր Շ.Ջանգոյանի մեղքը:*

*(...)*

*Նախաքննության մարմնի կողմից նյութերի նախապատրաստումը և ընթացքն իրականացվել են մի շարք խախտումներով, որոնք հիմք են **վիճահարույց որոշումները վերացնելու համար**:*

*Բողոքաբեր Մ.Հակոբյանի կողմից ներկայացված բողոքի քննությամբ ակնհայտ է անձի՝ Մ.Հակոբյանի իրավունքների և ազատությունների խախտումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ անհրաժեշտ է կատարել բազմակողմանի, օբյեկտիվ քննություն, քննչական, դատավարական այլ գործողություններ և նոր միայն հանգել հետևությունների: Այդպիսիք՝ գործի շրջանակներում լրիվությամբ չեն կատարվել, գործի հանգամանքներն ամբողջությամբ չեն վերացվել, անհրաժեշտ գործողությունները լրիվությամբ չէ որ կատարվել են: Նման պայմաններում, նախաքննության մարմինն ունի պարտականություն՝ վերացնելու Մ.Հակոբյանի իրավունքների և ազատությունների խախտումը, կատարել պատշաճ քննություն՝ հիմնավորելու և կամ բացառելու անձի /անձանց/ գործողություններում ՀՀ Քրեական օրենսգրքի այս կամ այն հոդվածով նախատեսված հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը»* (տե՛ս նյութեր, թերթեր 85-86):

6.1. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի եզրափակիչ մասի համաձայն՝ «*(...) Բողոքաբեր Մարտուն Վոլոդյայի Հակոբյանի և վերջինիս ներկայացուցիչ Թամարա Մալխասյանի բողոք[ը] (...) ճանաչել հիմնավորված և բավարարել:*

***Վերացնել** ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Ումուրշատյանի 29.02.2016թ. «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» և Արմավիրի մարզի դատախազի 29.03.2016թ. «Բողոքը մերժելու մասին» **որոշումները**՝ որպես անհիմն»* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 86):

7. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է. *«(...) Անդրադառնալով դատախազ Ս.Մարտիրոսյանի և Շ.Ջանգոյանի վերաքննիչ բողոքներում նշած պատճառաբանություններին՝ կապված այն հանգամանքի հետ, որ վերացնելով*

*քրեական գործով վարույթը կարճելու նախաքննական մարմնի որոշումը՝ Դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական նորմերի խախտումներ, որոնք ըստ էության ազդել են գործի ելքի վրա, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են, և արձանագրում, որ Դատարանը հիմնավոր կերպով գտել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները՝ փաստացի նախաքննություն չի կատարվել, քրեական գործի առկայության պայմաններում և իր որոշման մեջ մանրամասն շարադրել է այն փաստական հանգամանքները, որոնց շուրջ քննություն չի կատարվել, և որոնք էական նշանակություն ունեն գործի ելքի վրա:*

*(…)*

*Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վերոշարադրյալ պատճառաբանությունները, հանգում է այն հետևության, որ առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, բողոքը քննության առնելիս առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և հիմք կհանդիսանային ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը բեկանելու համար(…)»* (տե՛ս նյութեր, թերթեր 150-151):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը պատճառաբանված չէ, քանի որ ստորադաս դատարանը չի նշել, թե ինչ հիմքերով է դատախազի՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի անհիմն լինելու մասին վերաքննիչ բողոքում արված եզրահանգումները համարել սխալ: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն իր որոշումը փորձել է պատճառաբանել բացառապես ընդհանուր բնույթի ձևակերպումներով: Մասնավորապես նշել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները, և փաստացի նախաքննություն չի կատարվել:

9. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը եկել է ակնհայտ անհիմն եզրահանգման այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը կատարել է իրավաչափ գործողություն, երբ վերացրել է քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը:

Մեջբերելով Վճռաբեկ դատարանի՝ *Լաուրա Զարյանի* վերաբերյալ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը փաստել է, որ ստորադաս դատարանները, քննելով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը, իրավասու էին կայացնելու դատական ակտ՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության սահմանման մասին, այլ ոչ թե վերացնելու հիշյալ որոշումը: Հետևաբար, ըստ բողոք բերած անձի՝ վիճարկվող դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի մեջբերված որոշմանը:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 15-ի որոշումները՝ մերժելով Ծ.Ջանգոյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչ Ա.Ումուրշատյանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի և Արմավիրի մարզի դատախազի՝ բողոքը մերժելու մասին 2016 թվականի մարտի 29-ի որոշումների դեմ դիմող Մ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի բողոքը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք դիմող Մ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի բողոքը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները:

*I. Դատական ակտերի հիմնավորվածությունը.*

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «*Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները*»:

Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալու անձի իրավունքների և ազատությունների անօրեն ու չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնելու խախտված իրավունքներն ու ազատությունները: Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործո-

ղությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին *(տե՛ս Ն.Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը, Վ.Քաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11 որոշման 22-րդ կետը):*

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

*«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

*(…)*

*4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

Դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավաձորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: **Քրեական դատավարության ցանկացած փուլում** դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: Ընդ որում, դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել **վերացական, ընդհանուր բնույթի** դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին *(տե՛ս, mutatis mutandis, Ֆ.Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվա-*

*կանի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը, Գ.Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը, Արսեն Մակարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը, Արամայիս Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշման 17.1-րդ կետը):*

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտի պատճառաբանման պահանջը պետք է դիտարկել հիմնավորվածության համատեքստում՝ որպես դրա բաղկացուցիչ և կենսական մաս: Այս առումով դատական ակտի պատճառաբանության նշանակությունը նրանում է, որ այն այդ ակտերի հիմնավորվածության երաշխիքը և արտաքին արտահայտման ձևն է: Այլ կերպ՝ դատական ակտերի պատճառաբանման պահանջը քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմնավորվածության հատկության բաղադրատարր է, հետևապես չպատճառաբանված կամ ոչ պատշաճ պատճառաբանված դատական ակտն ինքնին չի կարող համարվել հիմնավորված:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Մ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի կողմից Առաջին ատյանի դատարան են բողոքարկվել Քննիչի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի և դրա դեմ բերված բողոքը մերժելու մասին Արմավիրի մարզի դատախազի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումները: Առաջին ատյանի դատարանը, քննարկելով բողոքը, արդյունքում այն բավարարել է, իսկ վիճարկվող որոշումները՝ վերացրել: Վերջինս իր դատական ակտը հիմնավորել է նրանով, որ Քննիչը հաշվի չի առել մի շարք հանգամանքներ, որոնք ենթակա են հանգամանալից քննության, և որոնց արդյունքում հնարավոր է, որ կհիմնավորվեր Ծ.Ջանգոյանի մեղքը: Բացի այդ, նշվել է, որ նախաքննության մարմինը չի կատարել բազմակողմանի, օբյեկտիվ քննություն, լրիվությամբ չեն կատարվել քննչական, դատավարական գործողությունները, և գործի հակասություններն ամբողջությամբ չեն վերացվել (տե՛ս սույն որոշման 2-րդ, 6-րդ, 6.1.-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, իր հերթին փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը հիմնավոր կերպով գտել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները, և փաստացի նախաքննություն չի կատարվել: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ մանրամասն շարադրել է այն փաստական հանգամանքները, որոնց շուրջ քննություն չի կատարվել, և որոնք էական նշանակություն ունեն գործի ելքի վրա (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առա-

ջին ատյանի դատարանի որոշման պատճառաբանությունների հիմքում ընկած այն դատողությունները, որ *քննիչը հաշվի չի առել մի շարք հանգամանքներ, որոնք ենթակա են հանգամանալից քննության, և որոնց արդյունքում հնարավոր է, որ կհիմնավորվեր Շ.Ջանգոյանի մեղքը, և այն, որ նախաքննության մարմինը չի կատարել բազմակողմանի, օբյեկտիվ քննություն, լրիվությամբ չեն կատարվել քննչական, դատավարական գործողությունները, և գործի հակասություններն ամբողջությամբ չեն վերացվել* (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), իրենց բնույթով ընդհանրական, վերացական են, դրանք չեն կարող համարվել հստակ, որոշակի և համոզիչ պատճառաբանություն:

Նույնը վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, ըստ որի՝ *Առաջին ատյանի դատարանը հիմնավոր կերպով գտել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները՝ փաստացի նախաքննություն չի կատարվել* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն հիմնավորմանը, որ *Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ **մանրամասն** շարադրել է այն փաստական հանգամանքները, որոնց շուրջ քննություն չի կատարվել, և որոնք էական նշանակություն ունեն գործի ելքի վրա* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա այն անհիմն է և չի բխում սույն գործի նյութերից. Առաջին ատյանի դատարանն իր կողմից կայացված դատական ակտի շրջանակներում վերարտադրել է բողոք բերած անձի փաստարկները, իսկ արդյունքում՝ հանդես եկել միայն ընդհանուր բնույթի դատողություններով (տե՛ս նյութեր, թերթեր 84-87):

16. Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերի ոչ պատշաճ պատճառաբանված լինելը հանգեցրել է այդ որոշումների՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ հիմնավորվածության հատկության չեզոքացմանը:

Հետևաբար դիմող Մ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի բողոքը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները հիմնավորված չեն:

*II. Դատական վերահսկողության սահմանները.*

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասո՞ւմ են արդյոք *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08, *Լաուրա Ջարյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 և *Փնջիկ Թերոյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՔԴ/0024/11/15 որոշումներին:

18. ՀՀ Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի խմբագրությամբ) 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

19. Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ դատական օրենսգրքի վերոհիշյալ նորմերը՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:*

*Դրա հետ մեկտեղ, վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն»* (տե՛ս *Փնջիկ Թերոյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՔԴ/0024/11/15 որոշման 12-րդ կետը, *Վազգեն Խնոևի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0179/11/14 որոշման 16-րդ

կետը, mutatis mutandis, *Անահիտ Սիմոնյանի* գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0055/11/13 որոշման 14-15-րդ կետերը):

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:*

*2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել (…) քրեական գործը (…) կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:*

*(…)*

*5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ պարտականությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (…)*»:

Հիմնվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշման, Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված՝ *Ներսես Միսակյանի* գործով թիվ ԱՐԴ-1/0003/11/08, *Լաուրա Զարյանի* գործով թիվ ԵԿԴ/0081/11/09 դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա՝ Վճռաբեկ դատարանը վերը մեջբերված նորմերի առնչությամբ *Փնջիկ Թերոյանի* գործով որոշման շրջանակներում վերահաստատել է իր նախադեպային իրավունքում ձևավորած հետևյալ իրավական դիրքորոշումը. «*[Ք]րեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական հետապնդում չհրականացնելու) մասին որոշման դատական ստուգման շրջանակներում անձի խախտված իրավունքների վերականգնման ձևի առումով կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կարգավորումը*» (տե՛ս *Փնջիկ Թերոյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՔԴ/0024/11/15 որոշման 15-րդ կետը):

21. Սույն գործի փաստերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը, ճանաչելով դիմող Մ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի բողոքը հիմնավորված, որոշում է կայացրել քրեական գործի վարույթը

կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին Քննիչի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի և դրա դեմ բերված բողոքը մերժելու մասին Արմավիրի մարզի դատախազի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումները **վերացնելու մասին** (տե՛ս սույն որոշման 6.1.-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատախազ Ա.Սիմոնյանի և շահագրգիռ անձ Շ.Ջանգոյանի ներկայացուցիչ Մ.Խչեյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, գտել է, որ բողոքարկվող դատական ակտն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված է, և այն բեկանելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 19-20-րդ կետերում շարադրված վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասում են *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08, *Լաուրա Զարյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 և *Փնջիկ Թերոյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՔԴ/0024/11/15 որոշումներին:

Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Ն.Միսակյանի, Լ.Զարյանի, Փ.Թերոյանի* գործերով կայացված դատական ակտերի հիմնավորման բովանդակությունը կազմող իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով առավել ընդհանրական են, և դրանց կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված և սույն գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ բոլոր դեպքերում էլ դատարանները դատական ստուգման են ենթարկել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: *Լ.Զարյանի, Փ.Թերոյանի* գործերով և սույն գործով դատարանները որոշում են կայացրել վարույթն իրականացնող մարմնի որոշումը վերացնելու մասին: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Ն.Միսակյանի, Լ.Զարյանի, Փ.Թերոյանի գործերով* որոշումների հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս ստորադաս դատարանների համար պարտադիր են եղել:

Սինչդեռ ստորադաս դատարանները, անտեսելով Վճռաբեկ դատարանի կողմից մատնանշված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունն ստուգելու շրջանակներում որոշում են կայացրել վիճարկվող որոշումները վերացնելու, այլ ոչ թե անձի իրավունքների ու ազատութ-

յունների խախտումները վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու մասին:

23. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի) պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել են Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշումների հիմնավորումները, որոնք վերջիններիս համար պարտադիր են եղել: Ստորադաս դատարանները ոչ միայն չեն կիրառել կիրառման ենթակա՝ Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումները, այլև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չեն հիմնավորել, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

24. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել դատական ակտի բեկանման հիմք հանդիսացող դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, մասնավորապես՝ խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը, ինչպես նաև նույն օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, արդյունքում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջները:

24.1. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարուցված թիվ 57131615 քրեական գործի շրջանակներում նախաքննության մարմինը որպես վկա հարցաքննել է Ծ.Ջանգոյանին, ով իր ցուցմունքներով հերքել է Մ.Հակոբյանին և առհասարակ որևէ մեկին տոկոսով գումար տալու հանգամանքը, Մ.Հակոբյանի և Ծ.Ջանգոյանի միջև կատարվել է առերեսում, որի ընթացքում յուրաքանչյուրը պնդել է իր ցուցմունքներում նշված հանգամանքները, Ծ.Ջանգոյանի բնակարանում և կից օժանդակ շինություններում կատարվել է խուզարկություն, որի արդյունքում նախաքննության համար ապացուցողական նշանակություն ունեցող փաստաթղթեր, այլ իրեր, առարկաներ չեն հայտնաբերվել, Ծ.Ջանգոյանի կողմից տոկոսով գումար տալու և տոկոսներ ստանալու վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով նախաքննության մարմինը գրավոր հանձնարարություններ է տվել ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնին, և ստացված պատասխանների համաձայն՝ նշված հանգամանքները հաստատող տեղեկություններ ձեռք չեն բերվել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Մ.Հակոբյանի և Ծ.Ջանգոյանի խոսակցության գաղտնի ձայնագրառումը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը) գնահատելով Վճռաբեկ դատարանի՝ *Մելինե Մարգարյանի* գործով թիվ ԵԿԴ/0081/01/11 որոշման, իսկ վերոշարադրյալը՝ *Քնարիկ Պետրոսյանի* գործով թիվ ԵԿԴ/0102/01/11 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախաքննության մարմինը կատարել է անհրաժեշտ բոլոր քննչական և դատավարա-

կան գործողությունները, որից հետո միայն որոշում է կայացրել Շ.Ջանգոյանի կողմից վաշխառություն կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և նրա նկատմամբ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

25. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տված խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք են Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Միաժամանակ հաշվի առնելով սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ելնելով արդարադատության արդյունավետության շահից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Մ.Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Մարտուն Հակոբյանի բողոքի վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 15-ի որոշումները բեկանել և փոփոխել: ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Ումուրշատյանի՝ «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 2016 թվականի փետրվարի 29-ի և Արմավիրի մարզի դատախազի՝ «Բողոքը մերժելու մասին» 2016 թվականի մարտի 29-ի որոշումների դեմ դիմող Մարտուն Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Թ.Մալխասյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**9.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵՇԴ/0016/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ տուժողի ներկայացուցիչ | Է.ՀԱԿՈԲՅԱՆԻ |

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Վանիկ Ջավենի Սկրտչյանի պաշտպան Թամարա Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Ռաֆաելյանի՝ 2015 թվականի մարտի 31-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 11118715 քրեական գործը: 2015 թվականի սեպտեմբերի 29-ին Վանիկ Սկրտչյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ Վ.Սկրտչյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Վ.Սկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Սկրտչյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Սկրտչյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի փետրվարի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում 2016 թվականի օգոստոսի 26-ի դատավճռով Վ.Սկրտչյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Դատարանը վճռել է նաև տուժող, քաղաքացիական հայցվոր «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել գործով տուժող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Երեմյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել տուժողի բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 26-ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին:

4. Ամբաստանյալ Վ.Սկրտչյանի պաշտպան Թամարա Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել տուժող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Երեմյանը՝ խնդրելով Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել անփոփոխ, իսկ ամբաստանյալի պաշտպանի վճռաբեկ բողոքը՝ մերժել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Վ.Սկրտչյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրվում է այն բանի համար, որ *«(...) նա հանդիսանալով «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերության գանձապահ՝ իրականացնելով ընկերության դրամարկղի դրամական միջոցների պահպանումը, շարունակաբար, մաս-մաս 2014 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2015 թվականի մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերության կողմից իրեն վստահված՝ ընկերության Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցի 44 հասցեում տեղակայված կենտրոնական դրամարկղ մուտքագրված գումարներից 27.114.982 ՀՀ դրամը հիշյալ ընկերության գույքային ֆոնդից դուրս բերելով՝ օգտագործել է իր անձնական կարիքների համար՝ այդ կերպ կատարելով իրեն վստահված ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի յուրացում»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 126-134):

6. Տուժող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերությունը քաղաքացիական հայց է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ պահանջելով ամբաստանյալ Վ.Սկրտչյանից հօգուտ ընկերության բռնագանձել 27.114.982 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերությանը պատճառված վնասի հատուցում (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 42-43):

7. Ամբաստանյալ Վ.Սկրտչյանը գրավոր միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան, ուր մասնավորապես նշելով, որ առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, և ինքը համաձայն է մեղադրանքի հետ, խնդրել է կիրառել դատական քննության արագացված կարգ (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 104):

7.1. Վ.Սկրտչյանը Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 18-ի դատական նիստի ժամանակ պնդել է իր միջնորդությունը: Մեղադրող Բ.Գալստյանը և տուժողի ներկայացուցիչ Ս.Գուլքանյանը հայտարարել են, որ վերոնշյալ միջնորդության դեմ չեն առարկում, և արդյունքում Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին (տե՛ս Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, քրեական գործ, հատոր 5, թերթ 157):

7.2. Ամբաստանյալ Վ.Սկրտչյանը Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 26-ի դատական նիստի ժամանակ՝ դատական վիճաբանությունների փուլում, հայտարարել է, որ ինքը դեմ է «ընդհանուր» քաղհայցի չափին, քանի որ իր հարազատներն ասել են, որ իր քեռին 5 միլիոն դրամի չափով վերականգնել է վնասը, ուստի չի հասկանում, թե ինչով է պայմանավորված ներկայացված 27 միլիոն դրամի հայցը: Միաժամանակ Վ.Սկրտչյանը հայտարարել է, որ պատրաստակամ է հատուցելու դեռևս չվերականգնված վնասը: Նախագահողի հարցին պատասխանել է, որ **ըն-**

**դուռում է, որ վնաս պատճառել է այն չափով, որ չափով որ քաղաքացիական հայց է ներկայացված** (տե՛ս Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, քրեական գործ, հատոր 5, թերթ 157):

7.3. Տուժողի ներկայացուցիչ Ս.Գուլքանյանը Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 26-ի դատական նիստի ժամանակ դատարանին հայտնել է, որ ամբաստանյալի հայտարարության կապակցությամբ իր խնդրանքով դատարանի կողմից հայտարարված ընդմիջման ժամանակ ճշտել է, որ հանցագործության հետևանքով ընկերությանը պատճառված 27.114.982 ՀՀ դրամ գումարից 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարը վերականգնվել է ամբաստանյալ Վ.Մկրտչյանի հարազատների կողմից, ուստի քաղհայցը նվազեցնում է 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով: Ամբաստանյալը նախագահողի հարցին պատասխանել է, որ չի ցանկանում արտահայտվել տուժողի ներկայացուցչի հնչեցրած այդ դիրքորոշման կապակցությամբ (տե՛ս Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, քրեական գործ, հատոր 5, թերթ 157):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռով արձանագրել է հետևյալը. *«(...) [Դ]ատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վանիկ Զավենի Մկրտչյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:*

*(...)*

*Քննարկելով քաղաքացիական հայցի հարցը՝ դատարանը գտնում է, որ քաղաքացիական հայցվոր «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերության հայցը պետք է թողնել առանց քննության՝ հետևյալ պատճառաբանությամբ.*

*(...)*

*Հաշվի առնելով, որ համաձայն «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերության տնօրեն Հ. Երեմյանի 01.06.2016թ. թիվ 210 գրության՝ ընկերության վարչաապտարատի ամբողջ աշխատակիցների կողմից ընկերության տնօրեն Հ.Երեմյանի և գլխավոր հաշվապահ Թ.Մինասարյանի անունից ընկերության հաշվարկային հաշվին է փոխանցվել ամբաստանյալ Վ.Մկրտչյանի կողմից կատարված հանցագործության հետևանքով ընկերությանը պատճառված 27.114.982 ՀՀ դրամ գումարից 22.510.000 ՀՀ դրամ՝ գումարը, իսկ համաձայն տուժողի ներկայացուցչի հայտարարության ամբաստանյալի հարազատների կողմից վերականգնվել է ևս 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար, ինչպես նաև այն, որ քաղաքացիական հայցի քննության և լուծման հետ առընչվող այլ հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարումը կարող է հանգեցնել տևական ժամկետով դատական նիստերի հե-*

*տածգմանը և դատական քննության ձգձգմանը, նկատի ունենալով, որ քաղաքացիական հայցվոր «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերությունը կարող է հայցադիմում ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով՝ նաև դատական քննության ավարտից հետո, ողջամիտ ժամկետում քրեական գործի քննությունն ապահովելու նպատակով՝ դատարանը գտնում է, որ քաղաքացիական հայցվոր «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերության քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության»* (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 159-161):

9. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է՝ *«(...) [Ա]կնհայտ է, որ արագացված կարգով դատական քննության ժամանակ ամբաստանյալ Վ.Մկրտչյանը հայտարարել է, որ «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերության հարուցած քաղաքացիական հայցը չի ընդունում, իսկ պատճառված վնասը իր հարազատների կողմից փոխհատուցվել է 5 մլն դրամի չափով: Այդ պայմաններում առաջին ատյանի դատարանը չի պարզել, թե կոնկրետ որ չափով է ամբաստանյալը ընդունում քաղաքացիական հայցը, և արդյո՞ք պատճառված վնասի չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ համաձայն չէ: Մինչդեռ այդ հանգամանքը պարզելով միայն առաջին ատյանի դատարանը կարող էր հետևություն անել արագացված դատական քննությունը շարունակելու կամ ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու անհրաժեշտության մասին:*

*Տվյալ պարագայում, առաջին ատյանի դատարանը իրավասու էր շարունակել արագացված դատական քննությունը և դատական ակտով լուծել նաև հարուցված քաղաքացիական հայցի հարցը միայն այն բանից հետո, երբ կպարզեր, որ ամբաստանյալ Վ.Մկրտչյանն ընդունում է պատճառված վնասի չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրությունը, այսինքն՝ իրեն լիովին մեղավոր է ճանաչում առաջադրված մեղադրանքում, ինչպես նաև ընդունում է քաղաքացիական հայցն ամբողջությամբ: Մինչդեռ, առաջին ատյանի դատարանը, առանց պարզելու, թե հարուցված հայցի պայմաններում արդյո՞ք ամբաստանյալը շարունակում է ընդունել իրեն առաջադրված մեղադրանքն ամբողջ ծավալով, այդ թվում պատճառված վնասի չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության մասով, քաղաքացիական հայցը չընդունելու մասին ամբաստանյալի կողմից արված հայտարարության պայմաններում, խախտելով քրեադատավարական օրենքի պահանջը, շարունակել է գործի քննությունը արագացված կարգով:*

*(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ առաջին ատյանի դատարանի կողմից խախտվել են դատաքննության արագացված կարգի պայմանները:*

*Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանն իրավասու չէր դատական քննության արագացված կարգ կիրառել այն դեպքում, երբ ամբաստանյալ Վ.Մկրտչյանը չի*

*ընդունել մեղադրանքի ծավալի մեջ ներառված գույքային վնասի հետ համընկնող քաղաքացիական հայցը (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 211-219):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի որոշումը օրինական և հիմնավորված չէ:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ տուժողի վերաքննիչ բողոքում պահանջ է ներկայացվել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 26-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու, ամբաստանյալ Վ.Սկրտչյանի նկատմամբ ավելի խիստ պատիժ սահմանելու և քաղաքացիական հայցն ամբողջությամբ բավարարելու վերաբերյալ: Ընդ որում, քրեական գործը նույն դատարան այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին պահանջ չի ներկայացվել, ուստի, վճռաբեկ բողոքի հեղինակը կարծում է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի պահանջի սահմաններից, որպիսի հանգամանքը հիմք է որոշումը բեկանելու համար:

11. Բողոքաբերը նշել է նաև, որ ամբաստանյալն ըստ էության ընդունել է մեղադրանքում նշված՝ հասցված վնասի չափը, այսինքն՝ մեղադրանքը ողջ ծավալով, ինչն էլ հաշվի առնելով՝ Առաջին ատյանի դատարանը գործի քննությունն իրականացրել է դատական քննության արագացված կարգով: Ինչ վերաբերում է քաղաքացիական հայցը չընդունելուն, ապա բազմիցս նշվել է, որ Վ.Սկրտչյանի հարազատների կողմից գումարի բավական մասը վերականգնվել է: Նշված հանգամանքը մասնակիորեն ընդունվել է նաև տուժող կազմակերպության ներկայացուցիչների կողմից:

Արդյունքում, բողոքի հեղինակը նշել է, որ դատարանը, սխալ վերլուծելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, ճիշտ իրավական գնահատական չտալով գործով հաստատված փաստերին, թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

12. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 26-ի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ է տրվել դատական քննության արագացված կարգի պայմանների խախտում:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի $375^1$-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի*

*առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:*

*Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, բեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում»:*

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ *«Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝*

*1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և*

*2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և*

*3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի այդպիսին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի $375^1$-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Եթե տվյալ գործով հարուցված է նաև քաղաքացիական հայց, և ամբաստանյալը (մեղադրյալը) կամ քաղաքացիական պատասխանողը ընդունում է այն, ապա դատարանը դատավճռով բավարարում է նաև քաղաքացիական հայցը, եթե այն չի հակասում օրենքին: Այդ դեպքում դատարանը պետք է լրացուցիչ պարզի, թե արդյոք հայցի ընդունումը կամավոր է, և արդյոք այն վերաբերում է այլ անձանց իրավունքներին: Դատարանը, գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը:*

*Իսկ այն դեպքում, երբ ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը քաղաքացիական հայցը չի ընդունում, ապա դատարանը քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը»:*

Արագացված դատական քննություն կիրառելու հիմքերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի* գործով որոշման շրջանակներում, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքն ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի ամբողջ ծավալի հետ համաձայնվելն է: Այլ կերպ՝ դատական քննության արագացված կարգ կիրառվում է այն դեպքում, երբ մեղադրյալը կամ ամբաստանյալը համաձայն է կատարված արարքի փաստական հանգամանքների, մեղքի ձևի, շարժառիթների, արարքի իրավական գնահատականի, ինչ-

պես նաև պատճառված վնասի բնույթի ու չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ *(տե՛ս Շողակաթ Ամիրխանյանի և Գառնիկ Ֆարմանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշման 22-րդ կետը):*

14.1. Զարգացնելով մեջբերված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն *Արթուր Հակոբյանի և Արսեն Խոջայանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ա]յն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնցով ներկայացված քաղաքացիական հայցի առարկայի ծավալի մեջ ներառված գույքային վնասը համընկնում է մեղադրանքի ծավալի մեջ ներառված գույքային վնասի հետ, ներկայացված քաղաքացիական հայցն ամբաստանյալի կողմից լրիվ կամ մասնակի չընդունելը նշանակում է, որ նա լրիվ կամ մասնակի համաձայն չէ իրեն առաջադրված մեղադրանքի հետ: Հետևաբար, նման դեպքերում դատարանը ամբաստանյալի կողմից հայցի հետ չհամաձայնվելը պետք է գնահատի որպես առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի լրիվ կամ մասնակի անհամաձայնություն և դրա հիման վրա մերժի դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը: Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ արագացված կարգով դատական քննության ժամանակ դատարանը պարզում է, որ ամբաստանյալը համաձայն չէ պատճառված վնասի բնույթի և չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ՝ դատարանը պետք է որոշում կայացնի արագացված դատական քննություն չկիրառելու և ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին (…)»* (տե՛ս Արթուր Հակոբյանի և Արսեն Խոջայանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0219/01/11 որոշման 17-րդ կետը):

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է. *«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

*(…)*

*4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

Սեջբերված նորմը Վճռաբեկ դատարանն ի թիվս այլ որոշումների (ԵԿԴ/0058/11/09, ԵԷԴ/0030/01/12 և այլն) վերլուծության է ենթարկել *Արսեն Մակարյանի* գործով որոշմամբ և իրավական դիրքորոշում արտահայտել այն մասին, որ յուրաքանչյուր դեպքում դատարանները պարտավոր են կայացնել ոչ միայն օրինական և հիմնավոր, այլև բավարար չափով և պատշաճ կերպով պատճառաբանված դատական ակտեր: Այլ կերպ՝ դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և **գործի փաստական հանգամանքներից բխող բացառապես հստակ, որոշակի և համոզիչ** հետևությունների հիման վրա: Հակառակ պարագայում քրեական դատավարության խնդիրները չեն

իրագործվի, իսկ տրամաբանությունը՝ կխարխլվի *(տե՛ս Արսեն Մակարյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը)*:

*Արթուր Մադոյանի* գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս դատարանների պատճառաբանությունները պետք է կառուցվեն **գործի փաստական հանգամանքներից բխող հստակ և որոշակի հետևությունների հիման վրա, ունենան ներքին միասնություն և տրամաբանական կապ** *(տե՛ս Արթուր Մադոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունվարի 1-ի թիվ ԵԿԴ/0303/01/15 որոշման 16-րդ կետը)*:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Վ.Սկրտչյանը գրավոր միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով կիրառել դատական քննության արագացված կարգ, որի դեմ մեղադրողը և տուժողի ներկայացուցիչը չեն առարկել: Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին (տե՛ս սույն որոշման 7-7.1-րդ կետերը):

Տուժող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերությունը քաղաքացիական հայց է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ պահանջելով ամբաստանյալ Վ.Սկրտչյանից հօգուտ ընկերության բռնագանձել 27.114.982 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում: Ամբաստանյալը դատական նիստի ժամանակ հայտարարել է, որ ինքը դեմ է «ընդհանուր» քաղհայցի չափին, քանի որ 5 միլիոն դրամի չափով վնասը վերականգնվել է: Միաժամանակ Վ.Սկրտչյանը հայտարարել է, որ պատրաստակամ է հատուցելու դեռևս չվերականգնված վնասը, իսկ նախագահողի հարցին պատասխանել է, որ **ընդունում է՝ վնաս պատճառել է այն չափով, որ չափով որ քաղաքացիական հայց է ներկայացված** (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7.2-րդ կետերը):

Տուժողի ներկայացուցիչը դատական նիստի ժամանակ նշել է, որ հանցագործության հետևանքով ընկերությանը պատճառված 27.114.982 ՀՀ դրամ գումարից 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարը վերականգնվել է ամբաստանյալ Վ.Սկրտչյանի մերձավորների կողմից, ուստի այդ չափով ինքը նվազեցնում է քաղհայցը: Ի պատասխան նախագահողի հարցին՝ ամբաստանյալը նշել է, **որ տուժողի ներկայացուցչի հնչեցրած այդ դիրքորոշման կապակցությամբ չի ցանկանում արտահայտվել** (տե՛ս սույն որոշման 7.3-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն արագացված դատական քննության արդյունքում Վ.Սկրտչյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ քաղաքացիական հայցը թողել է առանց քննության՝ այն պատճառաբանությամբ, որ քաղաքացիական հայցի քննության և լուծման հետ առնչվող հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարումը կարող է հանգեցնել տևական ժամկետով դատական քննության ձգձգմանը, ուստի այն

ենթակա է լուծման քաղաքացիական դատավարության կարգով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է, որ Առաջին ատյանի դատարանը չի պարզել, թե կոնկրետ որ չափով է ամբաստանյալն ընդունում քաղաքացիական հայցը և համաձա՞յն է արդյոք պատճառված վնասի չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրությանը: Մինչդեռ այդ հանգամանքը պարզելով միայն կարելի էր գալ հետևության արագացված դատական քննությունը շարունակելու կամ ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Արդյունքում Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է դատական քննության արագացված կարգի պայմանները, բեկանել է դատական ակտը և ուղարկել նոր քննության (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

17. Սույն որոշման 16-րդ կետում մեջբերված փաստական տվյալները համադրելով սույն որոշման 14-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, չպարզելով, թե ամբաստանյալն արդյոք իրեն լիովին մեղավոր է ճանաչում առաջադրված մեղադրանքում և ընդունում է քաղաքացիական հայցն ամբողջությամբ, խախտելով քրեադատավարական օրենքի պահանջը, շարունակել է գործի քննությունը արագացված կարգով, չի բխում գործի փաստական հանգամանքներից: Մասնավորապես, գործի փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ դատական նիստը նախագահողի հարցին ամբաստանյալը պատասխանել է, որ **ընդունում է, որ վնաս է պատճառել այն չափով, որքանով որ քաղաքացիական հայց է ներկայացված:** Վերոնշյալից ակնհայտ է, որ ամբաստանյալը համաձայնել է մեղադրանքի ծավալի մեջ ներառված գույքային վնասի հետ, որը համընկել է քաղաքացիական հայցի առարկայի ծավալի մեջ ներառված գույքային վնասին: Ինչ վերաբերում է հետագայում որոշակի մաս հատուցված լինելու հետ կապված հարցերին, ապա դրանք չեն կարող մեկնաբանվել որպես առաջադրված մեղադրանքի հետ լրիվ կամ մասնակի անհամաձայնություն:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը, վերոնշյալ հիմնավորմամբ բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, կայացրել է ոչ պատշաճ կերպով պատճառաբանված դատական ակտ:

18. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ է տրվել դատական քննության արագացված կարգի պայմանների խախտում, հիմնավոր չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու

վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները՝ կայացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող դատական ակտ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի տուժողի վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները և արդյունքում կայացնի համապատասխան որոշում:

19. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի պահանջի սահմաններից (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում՝ փաստելով, որ Վերաքննիչ դատարանը տվյալ դեպքում կաշկանդված չէր տուժողի վերաքննիչ բողոքի պահանջով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վանիկ Ջավենի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Վանիկ Ջավենի Մկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**10.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԴ/0104/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատախազ | Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆԻ |
| դիմողի ներկայացուցիչ | Ա.ԾԱՀԲԱԶՅԱՆԻ |

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Սիմոնյանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշմամբ Անժելա Մնացականի Հարությունյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է, և Խաչատուր Գալստյանի, Վեներա Չախալյանի, Արմինե Շահինյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով և 345-րդ հոդվածով, իսկ Սերգեյ Գալստյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ, 178-րդ, 345-րդ հոդվածներով քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

1.1. 2016 թվականի մարտի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Է.Կարապետյանի որոշմամբ Անժելա Հարությունյանի և Սերգեյ Գալստյանի հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 13134016 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

1.2. 2016 թվականի մարտի 30-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Սիմոնյանի որոշմամբ Անժելա Հարությունյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին չվերացված որոշման առկայության հիմքով:

1.3. 2016 թվականի մայիսի 2-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Է.Կարապետյանի կողմից որոշում է կայացվել Արմինե Շահինյանի, Սերգեյ Գալստյանի, Խաչատուր Գալստյանի և Վեներա Չախալյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով քրեական հետապնդում չհրականացնելու մասին՝ նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու վերաբերյալ հետաքննության մարմնի չվերացված որոշման առկայության հիմքով:

2. Երևան քաղաքի դատախազի՝ 2016 թվականի մայիսի 20-ի որոշմամբ 2016 թվականի մարտի 22-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին և 2016 թվականի մայիսի 2-ի՝ քրեական հետապնդում չհրականացնելու մասին որոշումների դեմ Անժելա Հարությունյանի և նրա ներկայացուցիչներ Ա.Շահբազյանի ու Գ.Շահվերդյանի կողմից ներկայացված բողոքը մերժվել է:

3. Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ա.Հարությունյանի ներկայացուցիչներ Ա.Շահբազյանը և Գ.Շահվերդյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), որը 2016 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ մերժվել է:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ դիմող Ա.Հարությունյանի ներկայացուցիչ Ի.Ավագյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, դիմող Ա.Հարությունյանի ներկայացուցիչներ Ա.Շահբազյանի և Գ.Շահվերդյանի բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի որոշումը բեկանվել է, և որոշվել է գործը վերադարձնել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությանը՝ պարտավորեցնելու վարույթն իրականացնող մարմնին վերացնել որոշման մեջ մատնանշված՝ Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունվարի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել դիմող Ա.Հարությունյանի ներկայացուցիչներ Ա.Շահբազյանն ու Ի.Ավագյանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել և Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

6. Առաջին ատյանի դատարանը դիմող Ա.Հարությունյանի ներկայացուցիչներ Ա.Շահբազյանի և Գ.Շահվերդյանի կողմից ներկայացված բողոքը մերժել է՝ արձանագրելով հետևյալը. *«(...) Դատարանը, ստուգելով վիճարկվող որոշումները և դրանցով դիմող կողմի իրավունքների ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստարկները, արձանագրում է, որ հետաքննության մարմնի կայացրած որոշումը վերացնելու, ինչպես նաև քրեական հետապնդում չհրականացնելու մասին նախաքննական մարմնի որոշմամբ դիմող կողմի ենթադրաբար խախտված իրավունքները վերականգնելուն պարտավորեցնելու հիմքերը բացակայում են. (...): Դատարանը նաև փաստում է, որ քաղ. Անժելա Հարությունյանի ենթադրաբար խախտված գույքային իրավունքները ենթակա են վերականգնման քաղաքացիադատավարական ընթացակարգով: Հակառակ պարագայում, այն է՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցներ գործադրելիս կխաթարվեն քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն կստեղծեն քաղաքացիաիրավական հարաբերություններում (...)»* (տե՛ս գործի նյութեր, հատոր 1, թերթեր 55-63):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը՝ *«(...) Ա.Հարությունյանը և նրա ներկայացուցիչները իրենց բողոքներով հայտնել են, որ Գալստյանների նկատմամբ քրեական հետապնդում չհրականացնելու անհիմն պատճառով խախտվել են Ա.Հարությունյանի օրինական գույքային իրավունքներն ու օրինական շահերը՝ հենվելով միայն հետաքննիչի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման վրա, չի կատարվել խորը և բազմակողմանի քննություն, չեն բացահայտվել Գալստյանների կողմից խարդախություն կատարելու, իր գումարները հափշտակելու մասին հանգամանքները, ուստի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.07.2016թ. որոշումը ենթակա է բեկանման, իսկ գործը պետք է վերադարձնել դատախազությանը՝ Ա.Հարությունյանի խախտված իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ առաջ քաշված հարցերի շուրջ գործով վաշխառության մասով համատեղ նախաքննությունը վերսկսելու և շարունակելու համար*

*և ըստ քննությամբ ձեռք բերված տվյալների վերջնական լուծելու գործի օրինական ընթացքը:*

*Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության կողմից ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Սիմոնյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2016թ. մարտի 22-ի որոշումը և ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Է.Կարապետյանի՝ քրեական հետապնդում չհրականացնելու մասին 2016թ. մայիսի 2-ի որոշումը վերացնելուց հետո դեռևս նախաքննության փուլում գտնվող քրեական գործի շրջանակներում և դրա հետ համատեղ պետք է քննության առարկա դարձնել դիմող Ա.Հարությունյանի և նրա ներկայացուցիչների բողոքներում մանրամասն շարադրված բոլոր փաստական հանգամանքները, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությամբ բացահայտել դիմող Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումների առկայությունը կամ դրանց բացակայությունը և ըստ նախաքննությամբ ձեռք բերված տվյալների՝ լուծել գործի օրինական ընթացքը (...)»* (տե՛ս գործի նյութեր, հատոր 2, թերթեր 57-67):

8. Արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշել է. *«(...) Բեկանել Ա.Հարությունյանի ներկայացուցիչներ Ա.Շահբազյանի և Գ.Շահվերդյանի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 19.07.2016թ. որոշումը, որով մերժվել էր ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Սիմոնյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2016թ. մարտի 22-ի որոշումը վերացնելու, ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Կարապետյանի՝ քրեական հետապնդում չհրականացնելու մասին 2016թ. մայիսի 2-ի որոշմամբ, ինչպես նաև այդ որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի դատախազի 2016թ. մայիսի 20-ի որոշմամբ իրենց վստահորդ Անժելա Հարությունյանի իրավունքների խախտումները վերացնելուն վարույթն իրականացնող մարմիններին պարտավորեցնելու վերաբերյալ պահանջը, և գործը վերադարձնել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությանը՝ պարտավորեցնելու վարույթն իրականացնող մարմնին վերացնելու սույն որոշման մեջ մատնանշված Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումները (...)* (տե՛ս գործի նյութեր, հատոր 2, թերթեր 57-67):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումը պատճառաբանված չէ, դրանում բացակայում են հստակ, որոշակի և համոզիչ հետևությունները: Մասնավորապես, Վե-

րաքննիչ դատարանը չի հստակեցրել, թե վարույթն իրականացնող մարմնի կողմից Ա.Հարությունյանի որ իրավունքն է խախտվել:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված այն դատողությունից, որ Ա.Հարությունյանի ներկայացուցիչների բողոքում նշված հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ անհրաժեշտ է բացահայտել Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումների առկայությունը կամ բացակայությունը, տպավորություն է ստեղծվում, որ դատարանը դատական ակտը կայացնելու ժամանակ իր տրամադրության տակ որևէ փաստական տվյալ չի ունեցել Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումների առկայության վերաբերյալ, սակայն միևնույն ժամանակ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է բացահայտել գոյություն չունեցող խախտումները և վերացնել դրանք:

10. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտով ընդհանրապես չի անդրադարձել քրեական հետապնդումը բացառող հանգամանքի՝ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի չվերացված թվով երկու որոշումների առկայությանը: Այսպես՝ քննարկվող դեպքում առկա են քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի չվերացված երկու որոշում, որոնցից մեկը՝ 2016 թվականի մարտի 30-ի որոշումը, չի բողոքարկվել ո՛չ վերադաս դատախազին, ո՛չ դատական կարգով: Սինչդեռ Վերաքննիչ դատարանը, իր տրամադրության տակ ունենալով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Սիմոնյանի՝ 2016 թվականի մարտի 30-ի չվերացված և չբողոքարկված որոշումը, դատական ակտով այդ կապակցությամբ որևէ դիրքորոշում չի արտահայտել:

11. Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշումը կայացնելիս ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ, 290-րդ հոդվածներով և արձանագրել Ա.Հարությունյանի խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունը, սակայն քրեական գործ հարուցելը մերժելու մասին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Սիմոնյանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով և Վճռաբեկ դատարանի կողմից բազմաթիվ որոշումներով սահմանված կարգով չի վերացրել:

Արդյունքում բողոք բերած անձը գտել է, որ ստորադաս դատարանի դատական ակտը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմպերատիվ պահանջներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

11.1. Վերոնշյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի որոշմանը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*I. Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանվածությունը.*

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով՝ Վերաքննիչ դատարանը կայացրե՞լ է արդյոք պատշաճ կերպով պատճառաբանված դատական ակտ:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

*(...)*

*4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

Դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում: Հետևաբար քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: Ընդ որում, դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն ան-

միջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին *(տե՛ս, mutatis mutandis, Ֆ.Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը, Գ.Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը, Արսեն Մակարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը, Արամայիս Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշման 17.1-րդ կետը):*

14. Անդրադառնալով միջդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտի պատճառաբանվածության և հիմնավորվածության հարցին՝ Վճռաբեկ դատարանը *Մ.Հովհաննիսյանի և Լ.Հովհաննիսյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. *«(...) [Դ]ատարանը միջդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատական ակտում պետք է հստակ պատճառաբանի՝*

*ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել և ինչում է այն դրսևորվել,*

*բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել:*

*Հակառակ դեպքում դատարանի կայացրած որոշումը կդառնա կամայական և ինքնանպատակ: Մասնավորապես, եթե դատական ակտում բացակայեն պատճառաբանություններ այն մասին, թե անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել, և ինչի հետևանքով վարույթն իրականացնող մարմնի համար անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու պարտականությունը ողջամտորեն կդառնա անիրագործելի: Ավելին, վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի իրավունքների կամ ազատությունների խախտում թույլ տրված լինելու փաստ կամայականորեն հաստատելու արդյունքում կխախտվի հանրային և մասնավոր շահերի ճիշտ հավասարակշռումը, ինչը կհակասի քրեական դատավարության տրամաբանությանը* (տե՛ս Մանվել Հովհաննիսյանի և Լիդա Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՐԱԴ/0001/11/14 որոշման 18-րդ կետը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևան քաղաքի դատախազի՝ 2016 թվականի մայիսի 20-ի որոշմամբ դիմող Ա.Հարությունյանի և նրա ներկայացուցիչներ Ա.Շահբազյանի ու Գ.Շահվերդյանի՝ 2016 թվականի մարտի 22-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին և 2016 թվականի մայիսի 2-ի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ ներկայացված բողոքները մերժվել են (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Վերոնշյալ որոշման դեմ բերված բողոքը Առաջին ատյանի դատարանը մերժել է՝ արձանագրելով, որ հետաքննության մարմնի կայացրած որո-

շումը վերացնելու, ինչպես նաև քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննության մարմնի որոշմամբ դիմող կողմի ենթադրաբար խախտված իրավունքները վերականգնելուն պարտավորեցնելու հիմքերը բացակայում են, իսկ Ա.Հարությունյանի՝ ենթադրաբար խախտված գույքային իրավունքները ենթակա են վերականգնման քաղաքացիական դատավարության կարգով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, նշել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության կողմից քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2016 թվականի մարտի 22-ի որոշումը և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2016 թվականի մայիսի 2-ի որոշումը վերացնելուց հետո նախաքննության փուլում գտնվող քրեական գործի հետ համատեղ պետք է քննության առարկա դարձվեն դիմող Ա.Հարությունյանի և նրա ներկայացուցիչների բողոքներում մանրամասն շարադրված բոլոր փաստական հանգամանքները, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությամբ բացահայտվի Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումների առկայությունը կամ բացակայությունը (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով և Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելուն վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով, որևէ կերպ չի պատճառաբանել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2016 թվականի մարտի 22-ի և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2016 թվականի մայիսի 2-ի որոշումներով Ա.Հարությունյանի որ իրավունքները կամ ազատություններն են խախտվել, և ինչում են դրանք դրսևորվել: Վերոնշյալ հանգամանքը ողջամտորեն անհիրագործելի է դարձնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ դատարանի կողմից սահմանված վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանությունների հիմքում ընկած այն դատողությունները, որ *Առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է բեկանման, իսկ գործը պետք է վերադարձնել դատախազությանը՝ Ա.Հարությունյանի խախտված իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ առաջ քաշված հարցերի շուրջ գործով վաշխառության մասով համատեղ նախաքննությունը վերսկսելու և շարունակելու համար և ըստ քննության ձեռք բերված տվյալների վերջնական լուծելու գործի օրինական ընթացքը, նախաքննության փուլում գտնվող քրեական գործի հետ համատեղ պետք է քննության առարկա դարձվի դիմող Ա.Հարությունյանի և նրա ներ-*

*կայացուցիչների բողոքներում մանրամասն շարադրված բոլոր փաստական հանգամանքները, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությամբ բացահայտվի Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումների առկայությունը կամ բացակայությունը* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), իրենց բնույթով ընդհանրական, վերացական են և չեն կարող համարվել հստակ, որոշակի և համոզիչ պատճառաբանություններ:

16.1. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով՝ Վերաքննիչ դատարանը չի կայացրել պատշաճ կերպով պատճառաբանված դատական ակտ:

*II. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը.*

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելու նպատակով գործը դատախազությանը վերադարձնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:*

*(...)*

*5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:*

*(...)*

*5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:*

Վճռաբեկ դատարանը մեջբերված նորմերի հարաբերակցությանն անդրադարձել է *Հ.Հարությունյանի* գործով որոշմամբ և իրավական դիրքորոշում արտահայտել այն մասին, որ *«(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանորմեր, որոնք հստակ կարգավորում են միջդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներն ամրագրում են առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք միջդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով:*

*(...)*

*Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը (...)»* (տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման 20-21-րդ կետերը):

*Գ.Ղևոնդյանի* գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում իրականացվող դատական վերահսկողության վերոգրյալ առանձնահատկություններով է պայմանավորված քրեադատավարական օրենսդրության մեջ առկա այն տարբերակված մոտեցումը, որը վերաբերում է գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման և միջդատական վարույթի ընթացքում կայացվող այլ որոշումների կամ իրականացվող գործողությունների (անգործության) բողոքարկման արդյունքում կայացվող դատական ակտերին: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը, որը սահմանում է միջդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության ընդհանուր կարգը, ամրագրում է, որ եթե բողոքը ճանաչվում է հիմնավորված, ապա դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (տե՛ս Լաուրա Գարեգինի Զարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ կետը):*

*Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ նորմ, որը հստակ կարգավորում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումնե-*

*րի հետևանքները: Մասնավորապես, հիշատակված իրավանորմը սահմանում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Ընդ որում, բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը: Այսինքն՝ քննարկվող իրավանորմը սահմանում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ինքնավար ընթացակարգ (...)»* (տե՛ս Գագիկ Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 16-18-րդ կետերը):

17.1. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քրեական գործի հարուցման և նախաքննության փուլերում իրականացվող հետագա դատական վերահսկողության սահմանները, դրանց արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները տարբեր են: Մասնավորապես, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում դատարանը պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված կարգով քննության առնի բողոքը և կայացնի համապատասխան դատական ակտ՝ վիճարկվող որոշումը վերացնելու մասին, որը պարտադիր է դարձնում քրեական գործի հարուցումը, կամ այն հաստատելու մասին:

18. Անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Ա.Հարությունյանի ներկայացուցիչներ Ա.Շահբազյանի և Գ.Շահվերդյանի բողոքի հիման վրա Առաջին ատյանի դատարանը դատական ստուգման է ենթարկել ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Սիմոնյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2016 թվականի մարտի 22-ի և ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Է.Կարապետյանի՝ քրեական հետապնդում չհրականացնելու մասին 2016 թվականի մայիսի 2-ի որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը և ներկայացված բողոքը մերժել է (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և գործը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությանը վերադարձնելու մասին՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնել որոշման մեջ մատնանշված Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումները (տե՛ս սույն որոշման 4-րդ, 7-8-րդ կետերը):

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 17-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով ինչպես քրեական հետապնդում չհրականացնելու, այնպես էլ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներով դիմող Ա.Հարությունյանի ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու

անհրաժեշտությունը, ոչ թե վերացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշումը, այլ սահմանել Ա.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականություն:

Այլ կերպ ասած՝ Վերաքննիչ դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում կիրառել է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հատուկ կառուցակարգը, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կառուցակարգը: Ուստի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը չի պահպանվել:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելու նպատակով գործը դատախազությանը վերադարձնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները՝ կայացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող դատական ակտ: Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկի բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում ներկայացված փաստարկը, քանի որ սույն որոշմամբ արձանագրված խախտումների պայմաններում Վճռաբեկ դատարանը զրկված է դրա կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Ա.Հարությունյանի ներկայացուցիչ Ի.Ավագյանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**11.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱՔԴ/0067/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դիմողի ներկայացուցիչ Դ.ԳՅՈՒՐՋՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 20-ի որոշման դեմ դիմող Վարտգեզ Լիվանի Գասպարիի ներկայացուցիչ Դավիթ Գյուրջյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Լ.Մելքոնյանի՝ 2016 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ Վարտգեզ Լիվանի Գասպարին թիվ 15804115 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով:

Նախաքննության մարմնի վերոհիշյալ որոշումը Վ.Գասպարիի պաշտպան Դ.Գյուրջյանը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազություն:

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ Գ.Գևորգյանը 2016 թվականի մարտի 14-ի թիվ 12/12/1684 -16 գրությամբ հայտնել է պաշտպան Դ.Գյուրջյանին, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող թիվ 15804115 քրեական գործով Վ.Գասպարիին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Վերոհիշյալ գրությունը Դ.Գյուրջյանը ստացել է 2016 թվականի մարտի 17-ին:

2016 թվականի մայիսի 13-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել թիվ 15804115 քրեական գործով Վ.Գասպարիի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2. 2016 թվականի ապրիլի 21-ին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) է մուտքագրվել Վ.Գասպարիի պաշտպան Դ.Գյուրջյանի բողոքը՝ նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 1-ի՝ Վ.Գասպարիին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման, այդ որոշման դեմ բերված բողոքի կապակցությամբ դատախազության կողմից գրությամբ պատասխանելու դեմ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 27-ի որոշմամբ պաշտպան Դ.Գյուրջյանի բողոքը մերժվել է՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշման դեմ Դ.Գյուրջյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ մերժվել է:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմող Վարտգեզ Գասպարիի ներկայացուցիչ Դավիթ Գյուրջյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունվարի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Վ.Գասպարիի պաշտպան Դ.Գյուրջյանի կողմից փոստային ծառայության միջոցով Առաջին ատյանի դատարան ուղարկված և դատարանի գրասենյակում 2016 թվականի ապրիլի 21-ին մուտքագրված բողոքի **փոստային ծրարի** դիմային երեսի վրա փոստային ծառայության որևէ կնիք (փոստային դրոշմ) առկա չէ: Նույն ծրարի դարձերեսին առկա է փոստային երկու դրոշմ, որոնցից մեկը պարունակում է նշում այն մասին, որ այն դրվել է 2016 թվականի ապրիլի 19-ին, իսկ մյուսը՝ 2016 թվականի ապրիլի 20-ին:

Հիշյալ ծրարի դիմային երեսի վրա առկա է RR206284093AM համարով գծիկավոր կողը (տե՛ս նյութեր, թերթ 5):

6. Գործում առկա փոստային անդորրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ RR206284093AM համարով գծիկավոր կողը կրող փոստային ծրարը «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանն է հանձնվել 2016 թվականի ապրիլի 18-ին (տե՛ս Նյութեր, թերթ 107):

7. Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է. *«(...) Դատական վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Դավիթ Գյուրջյանը դատախազի գրությունը ստացել է 17.03.2016 թվականին, հետևաբար այն բողոքարկելու ժամկետը վերջանում է 17.04.2016 թվականին, քանի որ ապրիլի 17-ը եղել է ոչ աշխատանքային օր (կիրակի), ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 18.04.2016 թվականը, այնինչ բողոքը փոստին է հանձնվել բողոքարկման ժամկետը լրանալուց հետո՝ 19.04.2016 թվականին:*

*(...)*

*(...) [Դ]ատարանն արձանագրում է, որ իրավասու չէ իրականացնել թիվ 15804115 քրեական գործով մեղադրյալ Վ.Գասպարիի պաշտպան Դ.Գյուրջյանի կողմից ներկայացված բողոքի ըստ էության քննություն և այն ենթակա է մերժման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով որոշումները բողոքարկելու համար նախատեսված ժամկետը չպահպանելու հիմքով»* (տե՛ս նյութեր, թերթեր 48-50):

8. Վերաքննիչ բողոքում դիմողի ներկայացուցիչ Դ.Գյուրջյանը մասնավորապես նշել է հետևյալը. *«Ըստ Դատարանի, բողոքը հանձնվել է փոստային ծառայությանը 19.04.2016թ., սակայն այս հանգամանքը չի համապատասխանում իրականությանը, ինչը հավաստվում է սույն բողոքին կից ներկայացվող (...) փոստային անդորրագրի պատճենով, որի վրա արտատպված է համապատասխան ծրարի (...) փոստային բաժանմունք հանձնելու օրը՝ 18.04.2016թ.:*

*(...) Դատարանը սխալ է հաշվարկել բողոքի ներկայացման ժամկետը՝ աղավաղելով փաստական հանգամանքները, արդյունքում խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասն ու 290-րդ հոդվածի 3-րդ մասը»* (տե՛ս նյութեր, թերթեր 57-60):

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն. *«(...) Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպան Դավիթ Գյուրջյանը դատախազի գրությունն ստացել է 17.03.2016թ., հետևաբար այն բողոքարկելու ժամկետը վերջանում է 17.04.2016 թվականին, քանի որ ապրիլի 17-ը եղել է ոչ աշխատանքային օր (կիրակի), ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 18.04.2016 թվականը, այնինչ բողոքը փոստին է հանձնվել բողոքարկման ժամկետը լրանալուց հետո՝ 19.04.2016 թվականին:*

*(...)*

*(...) Վերաքննիչ դատարանը եկավ հետևության, որ [Առաջին ատյանի] դատարանի (...) որոշումն օրինական և հիմնավորված է, ուստի այն բեկանելու և վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքեր չկան»* (տե՛ս նյութեր, թերթեր 87-92):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 27-ի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որը հանգեցրել է գործով սխալ ելքի:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածը և 173-րդ հոդվածի 4-րդ մասը: Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարան է ներկայացրել փոստային անդորրագրի պատճենը՝ որպես ապացույց այն բանի, որ Առաջին ատյանի դատարանին հասցեագրված բողոքը պարունակող ծրարը փոստային ծառայությանն է հանձնվել 2016 թվականի ապրիլի 18-ին: Չնայած դրան, Վերաքննիչ դատարանը մերժել է ներկայացված վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման առ այն, որ ծրարը փոստային ծառայությանն է հանձնվել 2016 թվականի ապրիլի 19-ին: Դրանով իսկ Վերաքննիչ դատարանը հանգել է գործով ձեռք բերված ապացույցի վրա չհիմնված սխալ հետևության:

11. Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է նաև, որ Վ.Գասպարիին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումն ակնհայտ ապօրինի է և չհիմնավորված: Մասնավորապես, նախաքննության մարմինը որպես Վ.Գասպարիի կողմից հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու հատկանիշներ պարունակող է գնահատել այնպիսի գործողություններ, որոնք Վ.Գասպարին կատարել է բացառապես իր՝ որպես դիտորդի լիազորությունների իրականացման շրջանակում: Բողոքաբերն ընդգծել է, որ Վ.Գասպարիին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման հիմնազուրկ և ապօրինի լինելու մասին է խոսում նաև այն, որ քրեական գործի վարույթն ի վերջո կարճվել է:

12. Վճռաբեկ բողոք բերած անձը նշել է նաև, որ ՀՀ գլխավոր դատախազությունը, նախաքննության մարմնի որոշման դեմ բերված բողոքին գրությամբ պատասխանելով, կայացված որոշումը չտրամաղրելով և ըստ էության ստուգման չենթարկելով նախաքննության մարմնի որոշման օրինականությունը՝ խախտել է Վ.Գասպարիի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Այդպիսով, դատախազությունը դրսևորել է ապօրինի անգործություն և փաստացի հրաժարվել իր վրա ՀՀ քրեական դատավա-

րության օրենսգրքի 53-րդ հոդվածով և 103-րդ հոդվածի 10-րդ մասով դրված պարտականության կատարումից:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.09.2016թ. որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ նախաքննության մարմնի կայացրած որոշմամբ և այդ որոշման դեմ բերված բողոքի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության կողմից որոշում չկայացնելու և գրությամբ պատասխանելու (անգործության) արդյունքում թույլ տված Վ.Գասպարիի իրավունքների և ազատությունների խախտումը ճանաչելու և դատախազության անգործության մասով այդ խախտումը վերացնելու՝ դատախազության պարտականության մասին:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

14. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյո՞ք պաշտպան Դ.Գյուրջյանի բողոքը ժամկետանց գնահատելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն.

*«1. [Ք]ննիչի, դատախազի, (…)՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:*

*(…)*

*3.Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:*

*(…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն.

*«(…)*

*2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:*

*3. (…) Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան թիվ, ժամկետը վերջանում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: (…)*

*4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, (...): Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով (...):*

*(...)»:*

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. *«Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսելով անձի դատական պաշտպանության իրավունքը, միևնույն ժամանակ սահմանել է դրա իրականացման ժամանակային սահմանափակում: Ընդ որում, որպես նշված իրավունքի ապահովման երաշխիք՝ օրենսդիրը սահմանել է նաև հիշյալ սահմանափակման կիրառման հստակ կանոններ: Այսպես, դատական պաշտպանության դիմելու ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, իսկ բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով:

Միևնույն ժամանակ, գործնականում կարող են առաջանալ իրավիճակներ, երբ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը հնարավոր չէ որոշել փոստային դրոշմով (օրինակ՝ դրա բացակայության, անընթեռնելի լինելու և այլ դեպքերում): Նման պայմաններում վարույթն իրականացնող մարմինը, անձի իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից ելնելով, պարտավոր է այն պարզելուն ուղղված միջոցներ ձեռնարկել: Մասնավորապես, քննարկվող դեպքերում փաստաթուղթը փոստին հանձնելու օրը կարող է պարզվել փոստային անդորրագրի, «Հայփոստ» ՓԲԸ-ի կայքէջի, համապատասխան հարցում կատարելու և այլ միջոցներով:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վարտգեզ Գասպարիին որպես մեղադրյալ ներգրավելու մասին նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 1-ի որոշումը Վ.Գասպարիի պաշտպան Դ.Գյուրջյանը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազություն, որին ի պատասխան 2016 թվականի մարտի 14-ի գրությամբ նրան հայտնել են, որ Վ.Գասպարիին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Հիշյալ գրությունը Դ.Գյուրջյանը ստացել է 2016 թվականի մարտի 17-ին (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Փոստին հանձնելու միջոցով Դ.Գյուրջյանը բողոք է ուղարկել Առաջին ատյանի դատարան, որի գրասենյակում բողոքը մուտքագրվել է 2016 թվականի ապրիլի 21-ին (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): Բողոքի փոստային ծրարի դիմային երեսի վրա փոստային ծառայության որևէ դրոշմ առկա չէ: Նույն ծրարի դարձերեսի վրա առկա է փոստային ծառայության երկու

դրոշմ, որոնցից մեկը պարունակում է նշում այն մասին, որ այն դրվել է 2016 թվականի ապրիլի 19-ին, իսկ մյուսը՝ 2016 թվականի ապրիլի 20-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ Դ.Գյուրջյանը դատախազի գրությունը ստացել է 2016 թվականի մարտի 17-ին, հետևաբար այն բողոքարկելու ժամկետը վերջանում է նույն տարվա ապրիլի 17-ին, սակայն քանի որ ապրիլի 17-ը եղել է ոչ աշխատանքային օր, ժամկետի վերջին օրը դրան հաջորդող առաջին աշխատանքային օրն է՝ ապրիլի 18-ը, այնինչ բողոքը փոստին է հանձնվել ապրիլի 19-ին: Արդյունքում՝ Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել պաշտպան Դ.Գյուրջյանի բողոքը մերժելու մասին՝ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Հիշյալ որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում Դ.Գյուրջյանը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի այն պնդումը, թե բողոքը հանձնվել է փոստային ծառայությանը 2016 թվականի ապրիլի 19-ին՝ իրականությանը չի համապատասխանում: Դ.Գյուրջյանը փաստարկել է, որ **իր բողոքին կից ներկայացվող փոստային անդորրագրի պատճենով ապացուցվում է, որ բողոքը փոստային բաժանմունք է հանձնվել 2016 թվականի ապրիլի 18-ին** (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Սինհնույն ժամանակ Դ.Գյուրջյանը բողոքին կից ներկայացրել է փոստային անդորրագիր, որի համաձայն RR206284093AM համարով գծիկավոր կողը կրող փոստային ծրարը «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության է հանձնվել 2016 թվականի ապրիլի 18-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, որևէ անդրադարձ չկատարելով բողոքաբերի փաստարկներին, արձանագրել է, որ Դ.Գյուրջյանի բողոքը փոստին է հանձնվել բողոքարկման ժամկետը լրանալուց հետո՝ 2016 թվականի ապրիլի 19-ին: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, կրկնելով Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորումները, գտել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական և հիմնավորված է, այն բեկանելու և վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը):

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ փոստային ծրարի դիմային երեսին առհասարակ առկա չէ փոստային դրոշմ, այնինչ, փոստային բաժանմունք մուտքագրվող ծրարի հենց այդ հատվածում է դրվում առաքման ենթակա ծրարը փոստին հանձնվելու օրվա նշումով փոստային դրոշմը: Բողոքը փոստին հանձնելու ժամանակը արձանագրող փոստային դրոշմի բացակայության պայմաններում, այդ բողոքը փոստին հանձնելու ժամանակը պարզելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու փոխարեն Առաջին ատյանի դատարանը ծրարը փոստին հանձնելու ամսաթիվ է համարել ծրարի դարձերեսին առկա՝ ծրարը փոստային ծառայության բաշխիչ կենտրոն մուտքագրվելու դրոշմի ամսաթիվը՝ 2016 թվականի ապրիլի 19-ը: Արդյունքում՝ Առաջին ատյանի դատա-

րանը Դ.Գյուրջյանի բողոքը համարել է ժամկետանց (1 օր ուշ փոստին հանձնված) և քննարկման առարկա չի դարձրել բողոքում բերված հիմքերն ու հիմնավորումները:

Ի տարբերություն Առաջին ատյանի դատարանի՝ Վերաքննիչ դատարանն իր տիրապետության տակ ունեցել է Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքի պարունակությամբ ծրարը 2016 թվականի ապրիլի 18-ին փոստային ծառայությանը հանձնված լինելու մասին ապացույց, այն է՝ համապատասխան փոստային անդորրագիրը, սակայն անտեսելով դա՝ ոչ իրավաչափ հետևություն է արել բողոքը ժամկետանց լինելու մասին՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Ավելին՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ ժամկետները հաշվելիս նկատի չի առնվում այն օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը, որի հետևանքով եկել են սխալ եզրահանգման առ այն, որ բողոքարկման ժամկետի վերջին օրը ապրիլի 17-ն է, սակայն այն ոչ աշխատանքային օր լինելու պատճառով բողոք բերելու վերջին օր պետք է դիտարկել ապրիլի 18-ը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրացել է 2016 թվականի ապրիլի 18-ին, այլ ոչ թե 17-ին:

18. Սույն որոշման 16-17-րդ կետերում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտպան Դ.Գյուրջյանի բողոքը ժամկետանց գնահատելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

Արդյունքում՝ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի խախտում:

Նկատի ունենալով, որ Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից Դ.Գյուրջյանի բողոքն ըստ էության քննարկման առարկա չի դարձվել՝ Վճռաբեկ դատարանն իրավասու չէ անդրադառնալ բողոքարերների մնացած փաստարկներին (տե՛ս սույն որոշման 11-12-րդ կետերը):

Սույն գործով ստորադաս դատարանների կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները բեկանելու և գործը Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Վարտգեզ Լիվանի Գասպարիի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 27-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**12.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱՆԴ/0030/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ պաշտպան | Ե.ՍԱՐԳՍՅԱՆԻ |
| դատախազ | Մ.ԱՐԱՄՅԱՆԻ |

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Արմեն Լևոնի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2015 թվականի հոկտեմբերի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 17148415 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա որոշմամբ Արմեն Աբրահամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2. Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2015 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

Նույն դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Աբրահամյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 ամսով, իսկ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը ճանաչվել է թույլատրելի:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի հունվարի 19-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի վերոգրյալ որոշումը մասնակիորեն բեկանվել է, և անթույլատրելի է ճանաչվել մեղադրյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 15-ի, նույն թվականի մայիսի 13-ի և մայիսի 27-ի որոշումներով մեղադրյալ Ա.Աբրահամյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է համապատասխանաբար 2 ամիս, 15 օր և 2 ամիս ժամկետով:

3. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 29-ի որոշմամբ Ա.Աբրահամյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 117-րդ հոդվածով:

2016 թվականի հուլիսի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

4. Առաջին ատյանի դատարանի՝ դատական քննություն նշանակելու մասին 2016 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ Արմեն Աբրահամյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ:

Նույն դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ մասնակիորեն բավարարվել է ամբաստանյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացնելու և նրա նկատմամբ այլ խափանման միջոց ընտրելու վերաբերյալ պաշտպան Ե.Սարգսյանի միջնորդությունը: Հիշյալ որոշմամբ ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ, սակայն թույլատրելի է ճանաչվել կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը, և գրավի չափ է սահմանվել 2.000.000 ՀՀ դրամը:

5. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2016 թվականի նոյեմբերի 21-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

6. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

7. Ա.Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա հորեղբոր՝ Գագիկ Ասատրյանի կազմակերպմամբ, նախնական համաձայնության գալով ինքնությունները չպարզված երեք անձանց հետ, բռնության գործադրմամբ բացահայտ առևանգել են Արթուր Արևշատի Հարությունյանին, տեղափոխել Երևանի Դրոյի 2 հասցեում գտնվող «Էրգիր» կոչվող սրճարան, որտեղ Նորայր Քոսակյանի, Գագիկ Ասատրյանի, վերջինիս եղբորորդի Էրիկ Ասատրյանի, վերջինիս ընկեր Լևոն Թամամյանի, Գագիկ Ասատրյանի ընկեր ոմն Արմենի, Հայկազ Միսակյանի, Սարգիս Կարապետյանի և ինքնությունները չպարզված մի խումբ այլ անձանց հետ ծեծի են ենթարկել Արթուր Հարությունյանին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, որպիսի գործողությունները դրսևորվել են հետևյալում.*

*Այսպես՝ 2015 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 22:26-ին, 22:32-ին և 22:33-ին, Գագիկ Ասատրյանը հեռախոսազրույց է ունեցել Արթուր Հարությունյանի հետ, որի ընթացքում վերջինից պահանջել է վերադարձնել իր միջնորդությամբ տարաժամկետ վճարման պայմանով գնված անվադողերի գումարը, սակայն նրանց խոսակցությունը վերածվել է վիճաբանության, որի ընթացքում միմյանց հասցեին հնչեցրել են հայհոյանքներ: Նշված խոսակցությունից հետո Գագիկ Ասատրյանի կազմակերպմամբ վերջինիս եղբորորդին՝ Արմեն Աբրահամյանը, անձնական փոխհարաբերությունները պարզաբանելու նպատակով, նախնական համաձայնության գալով ինքնությունները չպարզված երեք անձանց հետ, 2015 թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 04:46-ին, Երևանի Բագրևանդ փողոցի 32 հասցեի դիմաց՝ ճանապարհի բանուկ հատվածում, գործով չպարզված «BMW-X5» մակնիշի ավտոմեքենայով խափանել է նույն փողոցով շրջադարձ կատարող Արթուր Հարությունյանի կողմից վարվող «MERCEDES BENZ» մակնիշի 34QA677 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի ընթացքը, այնուհետև հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով, Ա.Աբրահամյանը և հանցակիցները, իջնելով մեքենայից, բռնություն են գործադրել Արթուր Հարությունյանի նկատմամբ և նախապես որոշված՝ Երևանի Զեյթուն վարչական շրջանի Դրոյի 2 հասցեում գործող նախկինում «Կիրզա», ներկայիս «Էրգիր» կոչվող սրճարան տեղափոխելու համար, ծեծելով նրան մտցրել են իր իսկ կողմից վարվող «MERCEDES BENZ» մակնիշի 34QA677 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի բեռնախցիկը և բացահայտ առևանգելով՝ տեղափոխել հիշյալ սրճարան, նրա կամքին հակառակ պահել այնտեղ, որից հետո՝ ժամը 04:46-ից մինչև 06:12-ն ընկած ժամանակա-*

*հատվածում, նույն սրճարանում Նորայր Քոսակյանի, Գագիկ Ասատրյանի, վերջինիս եղբորորդի Էրիկ Ասատրյանի, վերջինիս ընկեր Լևոն Թամամյանի, Գագիկ Ասատրյանի ընկեր ոմն Արմենի, Հայկազ Միսակյանի, Սարգիս Կարապետյանի և ինքնությունները չպարզված մի խումբ այլ անձանց հետ, Արթուր Հարությունյանի առողջությանը վնաս պատճառելու նախնական դիտավորությամբ, գիտակցելով մեկը մյուսի գործողությունները և մեկը մյուսի գործողությունները լրացնելով, ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել Ա.Հարությունյանի դեմքին և մարմնի տարբեր մասերին՝ դիտավորությամբ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ գանգուղեղային վնասվածքի, ճախից ճակատային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի, ճախ ակնակապճի փափուկ հյուսվածքների արյունազեղման, ճախ հետականջային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի ձևով՝ առողջության կարճատև քայքայման հատկանիշով, որից հետո՝ ժամը 06:12-ին, ստիպելով ներողություն խնդրել Գագիկ Ասատրյանից, ազատ են արձակել»* (տե՛ս նյութեր, թերթեր 1-10):

7.1. Տուժող Ա.Հարությունյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքների համաձայն՝ *«(...) իրեն ամրակցված (...) տաքսի ավտոմեքենայով պատվեր կատարելու նպատակով [ինքը] գտնվել է Երևան քաղաքի Նոր Նորքի 2-րդ զանգվածի Բագրևանդ փողոցի (...) մոտ և փորձել նույն վայրում տեղադրված արագաչափի մոտից շրջադարձ կատարել, նույն պահին իր ավտոմեքենայի ընթացքը կտրուկ խափանել են «BMW-X5» մակնիշի (...) ավտոմեքենայով, որտեղից իջել են չորս անձինք, որոնց թվում նաև Գագիկ Ասատրյանի եղբորորդին՝ Արմեն Աբրահամյանը, ովքեր, առանց խոսելու, մոտեցել են իրեն, ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել իր մարմնի տարբեր մասերին, այնուհետև իր կամքին, հակառակ, բռնություն գործադրելով մտցրել են իր իսկ կողմից վարած՝ «MERCEDES-BENZ» մակնիշի տաքսի ավտոմեքենայի բեռնախցիկը, որտեղ ուշագնաց է եղել: Այնուհետև տարել են (...) «Էրգիր» կոչվող սրճարան, հանել բեռնախցիկից և կրկին բռնության գործադրմամբ տարել են նշված սրճարանի 1-ին հարկում գտնվող սենյակներից մեկը, որտեղ գտնվել են մոտ 20 անձինք, որոնցից ճանաչել է «Գագ ջանին», նրա մյուս եղբորորդուն՝ Էրիկ Ասատրյանին, վերջինիս ընկերոջը՝ Լևոն Թամամյանին, «Գագ ջանի» ընկեր ոմն Արմենին, «Զեյթունցի Նվերին», «Շտանգ» մականունով երիտասարդին: Իրեն անծանոթ և նշված տվյալներով անձինք, այդ թվում նաև՝ Արմեն Աբրահամյանը, նույն սենյակում շարունակել են ծեծի ենթարկել իրեն՝ պահանջելով հայհոյելու համար ներողություն խնդրել «Գագ ջանից»: Հասկանալով, որ այլ տարբերակ չունի և հակառակ պարագայում իրեն չեն թողնի դուրս գալ այնտեղից, ներողություն է խնդրել «Գագ ջանից», և նոր միայն իրեն թույլ են տվել դուրս գալ սրճարանից: Դրանից հետո Արմեն Աբրահամյանը և իրեն առևանգած մյուս երիտասարդները «BMW-X5» մակնիշի ավտոմեքենայով իրեն տարել են Երևան քաղաքի Ավան թաղամասի «Ծաղկի» փողոց և հեռացել: (...) [Ն]ախաքննության ընթացքում իր կողմից տրված ցուցմունքներում առկա*

*հակասությունները պայմանավորված են եղել նրանով, որ ոստիկանություն դիմելուց և կատարվածի մասին հայտնելուց հետո Գագիկ Ասատրյանը ներազդել է իր վրա և ստիպել հրաժարվել իր կողմից դեպքի իրական հանգամանքների վերաբերյալ տրված հիշյալ, մասնավորապես՝ առևանգման հետ կապված ցուցմունքներից (...)»* (տե՛ս նյութեր, թերթեր 1-10):

7.2. Դատաբժշկական փորձագետի թիվ 1956/հ եզրակացության համաձայն՝ *«Արթուր Հարությունյանի մարմնական վնասվածքները՝ գանգուղեղային վնասվածքի, ճախից ճակատային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի, ճախ ակնակապիճի փափուկ հյուսվածքների արյունազեղման, ճախ հետականջային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի, ստորին ծնոտի շրջանում աջից փափուկ հյուսվածքների ճնով, պատճառվել են բութ առարկաների ներգործությամբ, հնարավոր է՝ նշված ժամանակին և հանգամանքներում, որոնք միմյանցից չեն տարանջատվում և առողջությանը պատճառել են թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով»* (տե՛ս նյութեր, թերթեր 1-10):

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի որոշման համաձայն՝ *«[Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ դատական քննության փուլում (...) չեն բացառվում ամբաստանյալի ոչ պատշաճ վարքագծի դրսևորումները, որպիսի հանգամանքի հաշվառմամբ է, որ դատարանը դատական քննություն նշանակելու որոշմամբ կալանավորումը թողել է անփոփոխ՝ գտնելով, որ հիմքերը չեն փոփոխվել և չեն վերացել, և ներկայում էլ գտնում է, որ դրանք շարունակում են առկա լինել նաև այս փուլում: Այս առումով դատարանը համակարծիք է մեղադրողի այն պնդումներին, որ «(...) առկա իրավիճակում, քեև պաշտպանական կողմը նշեց, որ կալանքի ժամկետը երկարացնելիս դատարանի կողմից նշվել է, որ բացառապես նախաքննությանը խոչընդոտելու վտանգ է եղել, սակայն ներկայումս նս վկաները և տուժողը պետք է հարցաքննվեն դատաքննության ընթացքում, հետևաբար շարունակվում է դեռևս առկա լինել կալանավորման կիրառման թե՛ հիմքերը, թե՛ առիթները»:*

*[Առաջին ատյանի] դատարանի հետևության համար հիմք են ամբաստանյալին մեղսագրվող հանցանքի ծանրությունը, պատժի խստությունը, հանցանքի կատարման եղանակը և հանցավորի մտադրության իրականացման աստիճանը, որպիսի հանգամանքները բավարար են ենթադրելու, որ ամբաստանյալը, մնալով ազատության մեջ, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ, այդ թվում՝ թաքնվել վարույթն իրականացնող մարմնից:*

*Սակայն [Առաջին ատյանի] դատարանը, նկատի ունենալով, որ հանցանքի ծանրությունը և պատժի խստությունը չեն կարող ինքնին բավարար լինել անձին երկար ժամանակով կալանքի տակ պահելն արդարացնելու համար, իսկ վարույթն իրականացնող մարմնից անձի թաքնվելը և հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը կանխելը քրեական գործի քննության տվյալ փուլում հնարավոր է ապահովել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսված՝ այլընտրանքային խափան-*

*ման միջոց գրավի կիրառմամբ, ուստի դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու հիմքեր չկան, սակայն առկա են կալանավորումը գրավի կիրառմամբ թույլատրելի ճանաչելու բավարար հիմքեր: Այսինքն՝ կալանքի կիրառման հիմքում դրվող հանգամանքների պայմաններում գրավի կիրառումը կարող է լինել գործուն միջոց անձի հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը կանխելու համար:*

*(...) [Առաջին ատյանի] դատարանը փաստում է, որ մեղադրողի մտահոգությունները վկաների և տուժողի վրա հնարավոր անօրինական ազդեցություն գործադրելու տեսանկյունից կարող են բավարար լինել կալանքի կիրառման հիմքերի առկայությունը գնահատելու տեսանկյունից, որպիսին հիմք է ընդունում նաև դատարանը, սակայն [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ այն չի կարող ինքնին բավարար լինել նաև գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու համար, հատկապես, որ քրեական գործի նախաքննության ընթացքում թե՛ տուժողը, թե՛ վկաները հարցաքննվել են մի քանի անգամ, կատարվել են նաև առերեսումներ՝ հնարավոր հակասությունները պարզաբանելու համար և այլն, հետևաբար դատարանը գտնում է, որ մեղադրողի փաստարկները, լինելով բավարար կալանքը վերացնելու մասով պաշտպանի միջնորդությունը մերժելու համար, չեն կարող բավարար լինել գրավի կիրառումը ևս մերժելու համար:*

*[Առաջին ատյանի] դատարանի՝ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մեղադրողը չներկայացրեց այնպիսի տեղեկություններ, փաստական տվյալներ, որոնք կարող են վկայել այն մասին, որ այլընտրանքային երաշխիքն ի զորու չէ դատական քննության տվյալ փուլում կանխելու ամբաստանյալի հավանական ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում, իսկ դատարանին նման հանգամանքներ հայտնի չեն: Հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախաքննության փուլում ամբաստանյալի նկատմամբ կիրառված եղել է գրավ, և նա գտնվել է ազատության մեջ, և ըստ էության չի ներկայացվել որևէ հիմնավորում առ այն, որ այդ ընթացքում նա դրսևորել [է] ոչ պատշաճ վարքագիծ (...)»* (տե՛ս նյութեր, թերթեր 25-31):

9. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշման համաձայն՝ *«(...) [Դ-]նատախազի վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները, թեև անհրաժեշտ, սակայն ներկայումս ինքնին բավարար չեն ամբաստանյալ Արմեն Աբրահամյանի (գործի քննության ներկա փուլում) նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու համար:*

*Վերաքննիչ դատարանը նման հետևության է հանգում՝ հաշվի առնելով ինչպես ամբաստանյալ Արմեն Աբրահամյանին վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, այնպես էլ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից սույն գործով վիճարկվող դատական ակտում շարադրված հանգամանքները:*

*Հարկ է արձանագրել նաև, որ սույն գործով վիճարկվող դատական ակտի կայացումից հետո ամբաստանյալ Արմեն Աբրահամյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ ըստ էության չի ներկայացվել:*

*Քննարկվող դեպքում, [Վ]երաքննիչ դատարանի գնահատմամբ ևս, էականորեն նվազ է այլընտրանքային խափանման միջոցի կիրառման պայմաններում ամբաստանյալի կողմից գործի քննության ու քրեական դատավարության խնդիրների իրագործմանը խոչընդոտելու հնարավոր հավանականությունը:*

*Հարկ է նշել նաև, որ գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով, [Վ]երաքննիչ դատարանի դիտարկմամբ՝ տվյալ դեպքում արդեն իսկ կիրառված այլընտրանքային երաշխիքը (սույն գործով սահմանված գրավի չափի 2.000.000 ՀՀ դրամ պայմաններում) ի զորու է կանխել[ու] ամբաստանյալի ոչ իրավաչափ վարքագիծը (...)»* (տե՛ս նյութեր, թերթեր 85-100):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում,, ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերով խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը վկայակոչել է Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԷԴ/0138/06/13, թիվ ԱՎԴ/0022/06/08, թիվ ԵԱՔԴ/0056/06/14, թիվ ԿԴ1/0062/06/12 և թիվ ԵԾԴ/0029/01/08 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները և եզրահանգել, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները քննարկման առարկա չեն դարձրել խափանման միջոցի կիրառման համար սկզբունքային նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են ամբաստանյալին վերագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցանքի կատարման հանգամանքները, մասնավորապես, Ա.Աբրահամյանից բացի այլ անձանց ներգրավված լինելու հանգամանքը, ինչպես նաև անձը բնութագրող հանգամանքների իրական ազդեցությունն ամբաստանյալի վարքագծի վրա:

Բացի այդ, բողոքի հեղինակը գտել է, որ ամբաստանյալ Ա.Աբրահամյանի՝ ազատության մեջ գտնվելու ընթացքում քննությանը խոչընդոտելու մտավախությունը քննության սույն փուլում համարելով սպառված՝ դատարաններն անտեսել են այն իրողությունը, որ այդպիսի կասկածը կարող է պայմանավորված լինել ոչ միայն հենց Ա.Աբրահամյանի, այլև նրա հանցակիցների վերաբերյալ վարույթով, որը դեռևս նախաքննության փուլում է: Ուստի բողոքաբերը փաստել է, որ Ա.Աբրահամյանի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում քննությանը խոչընդոտելու և գործին մասնակցող անձանց նկատմամբ ներգործելու վերաբերյալ առկա է ողջամիտ մտավախութ-

յուն, որը պայմանավորում է նրան կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է մասնակիորեն բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշումները՝ Ա.Աբրահամյանի նկատմամբ կիրառված կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը ճանաչելով անթույլատրելի:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

12. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Ա.Աբրահամյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը (…) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

*1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.*

*2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.*

*3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.*

*4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.*

*5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելիս հաշվի են առնվում (…) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:*

Կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Ավետիսյանի* գործով որոշմամբ՝ իրավական դիրքորոշում հայտնելով առ այն, որ

*«(…) անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա (…):*

*(…) Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի արգելվում չնշված առանձին դեպքերում անձին երաշխիքով ազատ արձակելը ճանաչել անթույլատրելի. մասնավորապես, երբ առկա է անձի կողմից քաքվելու կամ գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու վտանգ, կամ երբ դա անհրաժեշտ է հանցագործությունը կանխելու կամ հասարակական կարգի պահպանությունն իրականացնելու համար:*

*(…) Եվրոպական կոնվենցիային չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, որ դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը առանձին դեպքերում ճանաչել[ու] անթույլատրելի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառիչ:*

*Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև՝ մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը»* (տե՛ս Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 34-36-րդ կետերը):

Կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս անձին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը պատշաճ գնահատման ենթարկելու անհրաժեշտության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս.Մարգարյանի* գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) գրավի թույլատրելիության հարցի լուծման ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ մեղադրյալին վերագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը գնահատելիս դատարանը պետք է գործով ներկայացված տվյալների հիման վրա պարզի մեղադրյալին վերագրվող հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, իսկ հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը*

*նրա մասնակցության աստիճանը: Այլ խոսքով՝ (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների կատարման հավանականությունը գնահատելիս և, հետևաբար, դրա հիման վրա մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է պատշաճ գնահատման ենթարկի մեղսագրվող արարքի կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը բնութագրող այլ հանգամանքները:*

*[Վ]երոնշյալ հանգամանքներն էական նշանակություն ունեն մեղադրյալի անձի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար: Ուստի, առանց դրանք գործի նյութերից բխող մյուս տվյալների հետ համադրված վերլուծության և գնահատման ենթարկելու հնարավոր չէ հիմնավորված ենթադրություն անել մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ, հետևաբար հնարավոր չէ նաև օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնել անձի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ (...)»* (տե՛ս Սամվել Գագիկի Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշման 14-րդ կետը):

14. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Աբրահամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 117-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հորեղբոր՝ Գ.Ասատրյանի կազմակերպմամբ, նախնական համաձայնության գալով ինքնությունները չպարզված երեք անձանց հետ, բռնության գործադրմամբ՝ ծեծելով Ա.Հարությունյանին մտցրել է վերջինիս կողմից վարվող ավտոմեքենայի բեռնախցիկը և բացահայտ առևանգել նրան, ապա տեղափոխել Երևանի Դրոյի 2 հասցեում գտնվող «Էրգիր» կոչվող սրճարան, որտեղ Ն.Քոսակյանի, Գ.Ասատրյանի, վերջինիս եղբորորդի Է.Ասատրյանի, վերջինիս ընկեր Լ.Թամամյանի, Գ.Ասատրյանի ընկեր ոմն Արմենի, Հ.Միսակյանի, Ս.Կարապետյանի և ինքնությունները չպարզված մի խումբ այլ անձանց հետ ծեծի են ենթարկել Ա.Հարությունյանին՝ ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելով տուժողի դեմքին և մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով ամբաստանյալին մեղսագրվող հանցանքի ծանրությունը, պատժի խստությունը, հանցանքի կատարման եղանակը և հանցավորի մտադրության իրականացման աստիճանը, գտել է, որ ամբաստանյալը, մնալով ազատության մեջ, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ, այդ թվում՝ թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ վարույթն իրականացնող մարմնից անձի թաքնվելը և հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը կանխելը քրեական գործի քննության տվյալ փուլում հնարավոր է ապահովել նաև այլընտրանքային խափանման միջոց գրավի կի-

րառմամբ: Արդյունքում գտել է, որ ամբաստանյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու հիմքեր չկան, սակայն առկա են գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու բավարար հիմքեր: Մասնավորապես՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ կալանքի կիրառման հիմքում դրվող հանգամանքների պայմաններում գրավի կիրառումը կարող է լինել գործուն միջոց՝ անձի հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը կանխելու համար: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը, համաձայնելով ամբաստանյալի կողմից վկաների և տուժողի վրա հնարավոր անօրինական ազդեցություն գործադրելու վերաբերյալ մեղադրողի մտահոգություններին, գտել է, որ դրանք կարող են բավարար լինել կալանքի կիրառման հիմքերի առկայությունը գնահատելու տեսանկյունից, սակայն չեն կարող բավարար լինել նաև գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու համար: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ գրավի կիրառումը կարող է լինել գործուն միջոց անձի հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը կանխելու համար (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորումները, ինչպես նաև վկայակոչելով ամբաստանյալ Ա.Աբրահամյանին վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, գտել է, որ էականորեն նվազ է այլընտրանքային խափանման միջոցի կիրառման պայմաններում ամբաստանյալի կողմից գործի քննության ու քրեական դատավարության խնդիրների իրագործմանը խոչընդոտելու հնարավոր հավանականությունը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը ևս եզրահանգել է, որ կիրառված այլընտրանքային երաշխիքն ի զորու է կանխելու ամբաստանյալ Ա.Աբրահամյանի ոչ իրավաչափ վարքագիծը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

15. Սույն որոշման 13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս ստորադաս դատարանները, ձևականորեն վկայակոչելով Ա.Աբրահամյանին վերագրվող արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, չեն պահպանել *Ս.Մարգարյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջները: Մասնավորապես՝ պատշաճ գնահատման չի ենթարկվել՝

ա) ենթադրաբար խախտված հասարակական հարաբերությունների բնույթն ու կարևորությունը, այն, որ ամբաստանյալը ոտնձգել է անձի ազատության իրավունքի և առողջության դեմ,

բ) մեղսագրվող արարքների կատարման եղանակը, մասնավորապես այն, որ ենթադրաբար Ա.Աբրահամյանը.

- գործով չպարզված երեք անձանց հետ փողոցում ծեծելով Ա.Հարությունյանին՝ մտցրել է վերջինիս ավտոմեքենայի բեռնախցիկը և, բացահայտ առևանգելով, տեղափոխել նրան այլ վայր (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը),

- նախնական համաձայնության գալով Ն.Քոսակյանի, Գ.Ասատրյանի, Է.Ասատրյանի, Լ.Թամամյանի, ոմն Արմենի, Հ.Միսակյանի, Ս.Կարապետյանի և ինքնությունները չպարզված մի խումբ այլ անձանց հետ, ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա.Հարությունյանի դեմքին և մարմնի տարբեր մասերին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

գ) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, այն, որ դիտավորությամբ Ա.Հարությունյանի առողջությանը պատճառվել է թեթև վնաս՝ գանգուղեղային վնասվածքի, ձախից ճակատային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի, ձախ ակնակապիճի փափուկ հյուսվածքների արյունազեղման, ձախ հետականջային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի, ստորին ծնոտի շրջանում աջից փափուկ հյուսվածքների սալջարդի ձևով՝ առողջության կարճատև քայքայման հատկանիշով (տե՛ս սույն որոշման 7-րդ և 7.2-րդ կետերը):

Վերը նշված հանգամանքները պատշաճ գնահատման չենթարկելու հետևանքով ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանները զրկված են եղել Ա.Աբրահամյանի անձի մասին ճիշտ պատկերացում կազմելու, ինչպես նաև նրա հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն անելու հնարավորությունից:

16. Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները հաստատված են համարել դատական քննության փուլում ամբաստանյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, այդ թվում՝ վկաների և տուժողի վրա հնարավոր անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով գործի քննությանը խոչընդոտելու և վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը: Այս պայմաններում Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, անտեսելով նաև *Դ.Վարդանյանի* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները, մասնավորապես այն, որ գրավը կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով և մեղադրյալի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք չի կարող հանդիսանալ *(տե՛ս Դավիթ Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱՔԴ/0056/06/14 որոշման 19-րդ կետը)*, Ա.Աբրահամյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել են թույլատրելի:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի հիմնավորումներին առ այն, որ «*հանցանքի ծանրությունը և պատժի խստությունը չեն կարող ինքնին բավարար լինել անձին երկար ժամանակով կալանքի տակ պահելն արդարացնելու համար*», «*նախաքննության փուլում ամբաստանյալի նկատմամբ կիրառված եղել է գրավ, և նա գտնվել է ազատության մեջ, և ըստ էության չի ներկայացվել որևէ հիմնավորում առ այն, որ այդ ընթացքում նա դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ*», ինչպես նաև Վերաքննիչ դատարա-

նի այն հիմնավորմանը, որ *«վիճարկվող դատական ակտի կայացումից հետո, ամբաստանյալ Արմեն Աբրահամյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ ըստ էության չի ներկայացվել»,* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Ա.Աբրահամյանին վերագրվող արարքի հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը պատշաճ գնահատման չենթարկելու պայմաններում ստորադաս դատարանների կողմից վկայակոչված հանգամանքները չեն կարող բավարար գնահատվել գրավի թույլատրելիության մասին հիմնավոր եզրահանգում անելու համար:

17. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Աբրահամյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 143-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք են այդ դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, պետք է թողնել անփոփոխ, իսկ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դեպոզիտ հաշվին որպես գրավի գումար մուծված 2.000.000 ՀՀ դրամը՝ վերադարձնել գրավատուին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Լևոնի Աբրահամյանի նկատմամբ ընտրված կալանավորում խափանման միջոցն անփոփոխ թողնելու և գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը մասնակիորեն բեկանել:

2. Ամբաստանյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացնելու և նրա նկատմամբ այլ խափանման միջոց ընտրելու վերաբերյալ պաշտպան Ե.Սարգսյանի միջնորդությունը մերժել, Ա.Աբրահամյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի և նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ:

3. Որոշման կատարումը հանձնարարել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությանը:

4. Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դեպոզիտ հաշվին որպես գրավի գումար մուծված 2.000.000 ՀՀ դրամը վերադարձնել գրավատուին:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**13.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱՎԴ/0039/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի և օգոստոսի 28-ի որոշումները վերանայելու մասին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2015 թվականի հունիսի 10-ի դատավճռով Վարդան Բաղշիի Երիցյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) տարի 6 (ամիս) ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 25-ի դատավճռով նշանակված պատիժը, և նրա նկատմամբ պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի 3 (երեք) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Նշանակված պատժի ժամկետին հաշ-

վակցվել է պատժի կրած մասը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս 15 (տասնհինգ) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2013 թվականի փետրվարի 14-ից:

Արթուր Վարդգեսի Քանանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2012 թվականի ապրիլի 20-ից:

Վճռվել է նաև տուժող Արմեն Սարգսյանի քաղաքացիական հայցը բավարարել մասնակիորեն՝ որպես հանցագործությամբ պատճառված նյութական վնասի փոխհատուցում ամբաստանյալ Վ.Երիցյանից հօգուտ Արմեն Սարգսյանի բռնագանձել 47.589.395 ՀՀ դրամին համարժեք 103.408 ԱՄՆ դոլար, ամբաստանյալներ Վ.Երիցյանից և Ա.Քանանյանից համապարտության կարգով՝ 76.735.429 ՀՀ դրամին համարժեք 166.740 ԱՄՆ դոլար: Մնացած մասով տուժող Ա.Սարգսյանի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

2. Մեղադրող Վ.Պողոսյանի, տուժողի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի, ամբաստանյալ Ա.Քանանյանի պաշտպան Մ.Դավթյանի և ամբաստանյալ Վ.Երիցյանի պաշտպան Հ.Ճարոյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հունիսի 10-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանի, տուժողի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի, ամբաստանյալ Ա.Քանանյանի պաշտպան Մ.Դավթյանի վճռաբեկ բողոքների, իսկ նույն թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ՝ ամբաստանյալ Վ.Երիցյանի պաշտպան Հ.Ճարոյանի վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժվել է:

4. Թիվ 62233615 քրեական գործի շրջանակներում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության դատախազ Պ.Մարտիրոսյանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով հարուցվել է վարույթ:

2016 թվականի նոյեմբերի 23-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել են վերոնշյալ վարույթի շրջանակներում ձեռք բերված նյութերը, և կազմվել է նոր երևան եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության արդյունքների վերաբերյալ եզրակացություն:

5. Հաշվի առնելով նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթի քննության արդյունքները՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը նոր երևան եկած հանգամանքի հիմքով բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

6. Արթուր Քանանյանի, Կարեն Խաչատրյանի և Արսեն Սարգսյանի կողմից խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով Արմեն Սարգսյանից առանձնապես խոշոր չափերի գումարներ հափշտակելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված թիվ 69106311 քրեական գործից Ա.Քանանյանի և Վ.Երիցյանի մասերն անջատվել են և առանձնացվել առանձին վարույթներում (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 156-157, հատոր 12-րդ, թերթ 5-8):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռով Արթուր Քանանյանը և Վարդան Երիցյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հետևյալ արարքների համար. *«(…) Արթուր Քանանյանը 2005թ. օգոստոս ամսին ստանձնելով Արմեն Սարգսյանի և նրա գործընկերների կողմից ՀԷԿ կառուցելու համար անհրաժեշտ մոտ 4.500 գծամետր խոշոր տրամաչափի խողովակներ ձեռք բերելու գործընթացում նրանց օժանդակելու առաքելությունը, խողովակների անհրաժեշտ քանակությունից շուրջ 2.500 գծամետրի ձեռքբերման դիմաց Արմեն Սարգսյանից մաս-մաս ստացված ընդհանուր 270.000 ԱՄՆ դոլարից 103.408 ԱՄՆ դոլարը «Յեռֆոս» ՓԲ ընկերության տնօրեն Վարդան Երիցյանին փոխանցելով, ձեռք է բերել 930.27 գծամետր 1.200 մմ տրամաչափի խողովակներ:*

*(…) Վարդան Երիցյանը, Արմեն Սարգսյանից ոմն Մուշեղի հետ ձեռք բերված նախնական համաձայնությամբ, խարդախությամբ հափշտակել են 1.200 մմ տրամաչափի, ընդհանուր 930.27 գծամետր խողովակների արժեքը կազմող 47.589.395 ՀՀ դրամին համարժեք 103.408 ԱՄՆ դոլարը, և ոմն Մուշեղի ու Ա.Քանանյանի հետ նախնական համաձայնության գալով հափշտակել են 1500 գծամետր խողովակների արժեքը կազմող 76.735.429 ՀՀ դրամին համարժեք 166.740 ԱՄՆ դոլարը՝ ընդհանուր 124.324.824 ՀՀ դրամին համարժեք 270.148 ԱՄՆ դոլարը, որն արտահայտվել է հետևյալում.*

*«Յեռֆոս» ՓԲ ընկերության տնօրեն Վարդան Երիցյանը ոմն Մուշեղի հետ նախնական համաձայնությամբ, խարդախությամբ ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2005թ. օգոստոս ամսին, Արմեն Սարգսյանին և նրա գործընկերներին խաբեությամբ ներկայացնելով, որ շահել է Կապուտան-Ջրաբեր համայնքների տարածքով անցնող գազատարի ապամոնտաժման իրավունքը, որն իրականում գտնվել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հաշվեկշռում, և որի ապամոնտաժման իրավունքը 2005թ. որևէ կազմակերպության չի տրվել, պայմանավորվածություն է ձեռք բերել վերջիններիս հետ՝ նրան ՀԷԿ կառուցելու համար անհրաժեշտ 2500 գծամետր խողովակներ վաճառելու վերաբերյալ,*

*ապա նշված գազատարից ապօրինի ապամոնտաժել են ընդհանուր 930.27 գծամետր 1.200 մմ տրամաչափի խողովակներ և որպես խողովակների նկատմամբ սեփականության իրավունքի հավաստիք կազմել է «Յեոֆոս» ՓԲԸ-ի անունից կեղծ հաշիվ ապրանքագիր, որը խողովակների հետ միասին հանձնելով Արմեն Սարգսյանի վստահորդ Արթուր Քանանյանին՝ դրա դիմաց ստացել է 47.589.395 ՀՀ դրամին համարժեք 103.408 ԱՄՆ դոլար:*

*Այնուհետև Վարդան Երիցյանը Արթուր Քանանյանը և ոմն Մուշեղը, մոտ 1.500 գծամետր խողովակների ճեռքբերման համար նախատեսված գումարները խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ, տեղեկանալով Արարատի մարզի Մասիս քաղաքում գործող «Միկ Մասիս» ՓԲ ընկերության բազայում ուրիշի կողմից պահեստավորված խոշոր տրամաչափի խողովակների առկայության մասին, որոնք իրականում պատկանել են Դավիթ Բեգլարյանին, չարաշահելով Արմեն Սարգսյանի վստահությունը, 2005թ. սեպտեմբեր ամսին նրա կողմից ուղարկված՝ վերջինիս գործընկեր Արմեն Գևորգյանին խաբեությամբ մատնացույց են արել հիշյալ բազայում առկա՝ իրականում իրենց կողմից չգնված և այլ անձին պատկանող 1.200-1.400 մմ տրամաչափ ունեցող ընդհանուր մոտ 1.500 գծամետր խողովակները և այդ կերպ Արմեն Սարգսյանի մոտ պատրանք ստեղծելով, թե դրանք արդեն գնված են և պատկանում են իրենց՝ Երևան քաղաքի Կիլիկիա թաղամասում Արթուր Քանանյանը Անդրանիկ Մելոյանից ստացել է Արմեն Սարգսյանին պատկանող առանձնապես խոշոր չափերի՝ 76.735.429 ՀՀ դրամին համարժեք 166.740 ԱՄՆ դոլար գումարը, դրա մի մասը Վոլոդիա Քոչինյանին պատկանող աշխատասենյակում Արթուր Քանանյանը տվել է Վարդան Երիցյանին և ոմն Մուշեղին, իսկ մի մասը պահել իրեն և այդ ճևով խարդախությամբ հափշտակել են նշված գումարը՝ Արմեն Սարգսյանին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:*

*Խարդախությունը կատարելուց հետո իրենց հանցավոր գործունեությունը թաքցնելու և «Միկ Մասիս» ընկերության տարածքից իրականում խողովակներ չգնելու փաստը խեղաթյուրելու համար կազմել և Արմեն Սարգսյանին են ներկայացրել կեղծ փաստաթղթեր՝ իբր 111.632.400 ՀՀ դրամով «Յեոֆոս» ՓԲԸ-ից գնել են 930.27 գծամետր խողովակ՝ 1 գծամետրը 120.000 ՀՀ դրամով (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 19-րդ, թերթ 81-83):

8. ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 69106311 քրեական գործով շարունակվող նախաքննության ընթացքում 2015 թվականի հուլիսի 9-ին նախաքննության մարմնի որոշմամբ հարուցվել և առանձին վարույթով առանձնացվել է թիվ 62218515 քրեական գործը՝ «Տրանսգազշին» ՍՊԸ-ի մոտ 2005 թվականին տեղափոխված առանձնապես խոշոր չափերի խողովակներն անհայտ անձի (անձանց) կողմից 2010-2011թթ. ընթացքում գաղտնի հափշտակելու դեպքի առթիվ:

Վերոնշյալ քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է ոմն Մուշեղի ինքնությունը (Մուշեղ Շիրազի Գրիգորյան), ով ցուցմունք է տվել, որ Վ.Երիցյանը որևէ կապ չունի «Միկ Մասիս» ՓԲԸ-ի բազայում տե-

ղաղրված խողովակների վաճառքի գործընթացի հետ, այլ որպես միջնորդ ինքն է կազմակերպել դրանց վաճառքը, իսկ թե հետագայում այդ խողովակներն ինչ են արել, Արթուրը երբ է դրանք տարել կամ տարել է, թե ոչ, ինքը տեղեկություն չի ունեցել (տե՛ս նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 173):

9. Թիվ 62218515 քրեական գործի նյութերով 2015 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 62233615 քրեական գործը (տե՛ս նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 158-159):

Հիշյալ քրեական գործի նախաքննության ընթացքում Դավիթ Բեգլարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Մասիսի խողովակները վաճառել է, սակայն հետո Ա.Քանանյանն իրեն հայտնել է, որ գնորդը չի ցանկանում դրանք գնել, և Դ.Բեգլարյանն իր աշխատող Հրաչյա Հովսեփյանի միջոցով խողովակների համար տրված գումարը հետ է վերադարձրել Արթուր Քանանյանին և Արսեն Սարգսյանին (տե՛ս նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 16):

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև Դ.Բեգլարյանի կինը՝ Հերմինե Նաղդալյանը, և հայտնել է, որ խողովակների գումարները Հ.Հովսեփյանի միջոցով վերադարձվել է Արթուրին կամ Արսենին (տե՛ս նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 24):

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև Հրաչյա Հովսեփյանը և նշել, որ գումարները վերադարձնելու ժամանակ Վարդան Երիցյան տվյալներով անձ չի ճանաչել, իսկ Դ.Բեգլարյանի տված գումարները փոխանցել է Ա.Քանանյանին և Ա.Սարգսյանին (տե՛ս նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 19-21):

Հիշյալ քրեական գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել նաև Ա.Քանանյանն այն մասին, որ իրականում Վ.Երիցյանը Մասիսի խողովակների գործարքի հետ որևէ կապ չի ունեցել և բազա չի գնացել: Փոխարենը, այդ գործարքին առնչություն է ունեցել Արսեն Սարգսյանը: Ա.Քանանյանն իր ցուցմունքում մանրամասն նկարագրել է դրվագի հանգամանքները (տե՛ս նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթի նյութեր, հատոր 2-րդ, թերթ 4-5):

10. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ Արսեն Սարգսյանը թիվ 62233615 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա *«Արթուր Քանանյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբով 2005 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2008 թվականի հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում մեկ միասնական դիտավորությամբ խարդախությամբ Ա.Սարգսյանից հափշտակել են 1.200-1.400 մմ. տրամաչափի, ընդհա-*

*ևուր 1500 գծամետր խողովակների արժեքը կազմող առանձնապես խոշոր չափերով 37.813.100 ՀՀ դրամին համարժեք 100.300 ԱՄՆ դոլար գումար»* (տե՛ս նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթի նյութեր, հատոր 2-րդ, թերթ 78-80):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

11. Բողոքաբերը նշել է, որ թիվ 69106311 քրեական գործով շարունակվող նախաքննության ընթացքում գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված թիվ 62218515 քրեական գործի, ինչպես նաև այդ քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված թիվ 62233615 քրեական գործի նախաքննության ընթացքում ի հայտ են եկել այնպիսի փաստեր, որոնք հիմք են Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի և 28-ի որոշումները նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու համար:

Ի հիմնավորումն իր փաստարկների բողոքաբերը նշել է, որ թիվ 62218515 քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է ոմն Մուշեղի ինքնությունը (Մուշեղ Շիրազի Գրիգորյան), ով ցուցմունք է տվել առ այն, որ Վ.Երիցյանը որևէ կապ չունի «Սիկ Մասիս» ՓԲԸ-ի բազայում տեղադրված խողովակների վաճառքի գործընթացի հետ: Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված թիվ 62233615 քրեական գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա որոշում է կայացվել Արսեն Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա Ա.Քանանյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբով 2005 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2008 թվականի հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում մեկ միասնական դիտավորությամբ խարդախությամբ Արմեն Սարգսյանից հափշտակել է 1.200-1.400 մմ տրամաչափի, ընդհանուր 1500 գծամետր խողովակների արժեքը կազմող առանձնապես խոշոր չափերով 37.813.100 ՀՀ դրամին համարժեք 100.300 ԱՄՆ դոլար գումար:

Վերոգրյալի պայմաններում նոր երևան եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության արդյունքում ստացված նյութերը, ըստ բողոք բերած անձի, վկայում են այնպիսի էական հանգամանքների մասին, որոնք Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրական դատավճիռ կայացնելիս հայտնի չեն եղել, ինչպես նաև վերջիններս վկայում են թիվ 62233615 քրեական գործով մեղադրյալ Արսեն Սարգսյանի կողմից Մասիսում գտնվող խողովակների դրվագով այլ հանգամանքներում, ժամանակահատվածում և պայմաններում ծանր հանցագործություն կատարելու, իսկ դատապարտյալ Վ.Երիցյանի կողմից տվյալ հանցագործության դրվագի հետ առնչություն չունենալու մասին:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը խնդրել է վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի և օգոստոսի 28-ի որոշումները, ինչպես նաև բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 10-ի դատավճիռն ու Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը: Բողոքաբերը նաև միջնորդել է Ա.Քանանյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. նոր երևան եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի շրջանակներում ստացված նյութերը արդյո՞ք նոր երևան եկած հանգամանք են Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի և օգոստոսի 28-ի որոշումները վերանայելու համար:

14. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավազորության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

*2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...)»:*

Անդրադառնալով իրավական որոշակիության և կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքներին՝ Վճռաբեկ դատարանը *Ժ.Սեֆիլյանի* գործով որոշմամբ փաստել է, որ *«(...) այնպիսի բացառիկ դեպքերում, երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա, անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակը գերակայում է իրավական որոշակիության (res judicata) սկզբունքի և կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) հիմնարար պահանջի (Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետ) նկատմամբ:*

*ՀՀ օրենսդիրը, ելնելով Եվրոպական կոնվենցիայի վերոհիշյալ դրույթներից, դրանցում նշված չափանիշներին և պայմաններին համապատասխան, նախատեսել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու դատավարական ընթացակարգ»* (նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման առանձնահատկությունների վերաբերյալ տե՛ս

*Ժիրայր Սիմոնի Մեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎՔ-07/13 որոշումը):

14.1 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր երևան եկած (...) հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

*2. Նոր երևան եկած (...) հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝*

*(...)*

*4) ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:*

*(...)»:*

15. Գործի փաստերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով, ի թիվս այլնի, հաստատված է համարվել, որ Վ.Երիցյանը, Ա.Քանանյանը և ոմն Մուշեղը, մոտ 1.500 գծամետր խողովակների ձեռքբերման համար նախատեսված գումարները խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ, տեղեկանալով Արարատի մարզի Մասիս քաղաքում գործող «Միկ Մասիս» ՓԲ ընկերության բազայում ուրիշի կողմից պահեստավորված խոշոր տրամաչափի խողովակների առկայության մասին, չարաշահելով Արմեն Սարգսյանի վստահությունը, 2005թ. սեպտեմբեր ամսին նրա կողմից ուղարկված՝ վերջինիս գործընկեր Արմեն Գևորգյանին խաբեությամբ մատնացույց են արել հիշյալ բազայում առկա՝ իրականում իրենց կողմից չգնված և այլ անձին պատկանող 1.200-1.400 մմ տրամաչափ ունեցող ընդհանուր մոտ 1.500 գծամետր խողովակները: Այդ կերպ Ա.Սարգսյանի մոտ պատրանք ստեղծելով, թե դրանք արդեն գնված են և պատկանում են իրենց՝ Երևան քաղաքի Կիլիկիա թաղամասում Արթուր Քանանյանը Անդրանիկ Մելոյանից ստացել է Արմեն Սարգսյանին պատկանող առանձնապես խոշոր չափերի՝ 76.735.429 ՀՀ դրամին համարժեք 166.740 ԱՄՆ դոլար գումարը, դրա մի մասը Վոլոդիա Քոչինյանին պատկանող աշխատասենյակում Արթուր Քանանյանը տվել է Վարդան Երիցյանին և ոմն Մուշեղին, իսկ մի մասը պահել իրեն և այդ ձևով խարդախությամբ հափշտակել են նշված գու-

մարը՝ Արմեն Սարգսյանին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս: Խարդախությունը կատարելուց հետո իրենց հանցավոր գործունեությունը թաքցնելու և «Միկ Մասիս» ընկերության տարածքից իրականում խողովակներ չգնելու փաստը խեղաթյուրելու համար կազմել և Արմեն Սարգսյանին են ներկայացրել կեղծ փաստաթղթեր՝ իբր 111.632.400 ՀՀ դրամով «Յեոֆոս» ՓԲԸ-ից գնել են 930.27 գծամետր խողովակ՝ 1 գծամետրը 120.000 ՀՀ դրամով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Միևնույն ժամանակ ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 69106311 քրեական գործի շարունակվող նախաքննության շրջանակներում հարուցված թիվ 62218515 քրեական գործով կատարված քննությամբ բացահայտվել է ոմն Մուշեղի ինքնությունը, ով ցուցմունք է տվել այն մասին, որ Վ.Երիցյանը որևէ կապ չի ունեցել «Միկ Մասիս» ՓԲԸ-ի բազայում տեղադրված խողովակների վաճառքի հետ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Բացի այդ, թիվ 62218515 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված թիվ 62233615 քրեական գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ Արսեն Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ այն բանի համար, որ նա «*Արթուր Քանանյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբով 2005 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2008 թվականի հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում մեկ միասնական դիտավորությամբ խարդախությամբ Ա.Սարգսյանից հափշտակել են 1.200-1.400 մմ. տրամաչափի, ընդհանուր 1500 գծամետր խողովակների արժեքը կազմող առանձնապես խոշոր չափերով 37.813.100 ՀՀ դրամին համարժեք 100.300 ԱՄՆ դոլար գումար*» (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության արդյունքներով փաստվել է, որ Վ.Երիցյանն առնչություն չի ունեցել 2005 թվականի սեպտեմբեր ամսին Մասիս քաղաքում գործող «Միկ Մասիս» ՓԲ ընկերության բազայում պահեստավորված և ուրիշին պատկանող խոշոր տրամաչափի խողովակները վաճառելու պատրվակով Արմեն Սարգսյանից խարդախությամբ առանձնապես խոշոր չափերի՝ 76.735.429 ՀՀ դրամին համարժեք 166.740 ԱՄՆ դոլար գումար հափշտակելու դրվագի հետ, իսկ Արթուր Քանանյանն էլ այդ դրվագով հանցագործությունը կատարել է թիվ 62233615 քրեական գործով մեղադրյալ Արսեն Սարգսյանի հետ այլ հանգամանքներում, ժամանակահատվածում և պայմաններում (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

16. Սույն որոշման 14-14.1-րդ կետերում շարադրված իրավական դրույթների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի շրջանակներում կատարված քննության արդյունքներով ստացված նյութերը

վկայում են այնպիսի էական հանգամանքների մասին, որոնք Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրական դատավճիռ կայացնելիս, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելիս հայտնի չեն եղել: Հիշյալ հանգամանքները մինչև այդ պարզված հանգամանքների հետ առերևույթ վկայում են Արթուր Քանանյանի կողմից թիվ 62233615 քրեական գործով մեղադրյալ Արսեն Սարգսյանի հետ Մասիսի դրվագով այլ հանգամանքներում, ժամանակահատվածում և պայմաններում ենթադրյալ հանցագործություն կատարելու, իսկ Վ.Երիցյանի կողմից հանցագործության տվյալ դրվագի հետ առնչություն չունենալու մասին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի $426^3$-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ նոր երևան եկած հանգամանքներ, ինչն էլ հիմք է ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի օգոստոսի 25-ի և օգոստոսի 28-ի որոշումները վերանայելու, իսկ վերանայման արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 10-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Ա.Քանանյանի և Վ.Երիցյանի խափանման միջոցների հարցին, գտնում է, որ

- Ա.Քանանյանի պարագայում առկա են նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պայմաններն ու հիմքերը, հաշվի առնելով, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի շրջանակներում ստացված նյութերը վկայում են Ա.Քանանյանի կողմից 2005-2008թթ. ընթացքում կատարված ենթադրյալ ծանր հանցագործության մասին, և մնալով ազատության մեջ նա կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել դատարանում գործի քննությանը:

- Վ.Երիցյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը չի կարող ընտրվել հետևյալ պատճառաբանությամբ.

Անձի ազատության սահմանափակման դեպքում, ի թիվս կալանավորման այլ պայմանների, էական նշանակություն ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը: Եթե առերևույթ առկա է քրեական վարույթը բացառող որևէ հանգամանք, ապա անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը չի կարող օրինական և հիմնավորված համարվել (տե՛ս mutatis mutandis Արամ Սարգսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշումը):

Վերոհիշյալի հիման վրա և հաշվի առնելով, որ Վ.Երիցյանին մեղսագրված հանցանքը կատարվել է 2005 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսնե-

րին և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բեկանելու դեպքում ի հայտ է գալիս վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված վաղեմության ժամկետները կիրառելու խնդիրը, բացի այդ նշված հարցի վերաբերյալ նրա դիրքորոշումը դեռևս ճշտված չէ, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Երիցյանի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է կիրառել չհեռանալու մասին ստորագրությունը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, $361^{1}$-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.3-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արթուր Վարդգեսի Քանանյանի և Վարդան Բախշիի Երիցյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 25-ի և 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշումները վերանայել:

2. Արթուր Վարդգեսի Քանանյանի և Վարդան Բախշիի Երիցյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 10-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Արթուր Վարդգեսի Քանանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը:

4. Վարդան Բախշիի Երիցյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը և նրան անհապաղ ազատ արձակել:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**14.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱՎԴ-2/0016/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ֆարիդա Վաղարշակի Ավագիմյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 26-ի որոշման դեմ ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի պաշտպան Վ.Վարդանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2013 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի մարզի քննչական բաժնի Մասիսի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 44120413 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ Ֆ.Ավագիմյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի մայիսի 31-ի որոշմամբ Ֆ.Ավագիմյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մե-

դաղրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2014 թվականի հունիսի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 6-ի դատավճռով Ֆ.Ավագիմյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել տուգանքի՝ 600.000 ՀՀ դրամի չափով: Նույն դատավճռով տուժողների ներկայացուցչի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

3. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հուլիսի 26-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 6-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը և ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի պաշտպան Վ.Վարդանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումներով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ պաշտպան Վ.Վարդանյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Ֆարիդա Ավագիմյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(...) խարդախությամբ Վիտալի Ամանեսովի գույքի նկատմամբ ձեռք է բերել իրավունք, այն է՝ Ֆարիդա Ավագիմյանը համագյուղացի Արաքսյա Նազարի Ամանեսովայի որդուն՝ Վիտալի Ամանեսովին պատկանող, Արարատի մարզի Հայանիստ գյուղի 23-րդ փողոցի 20-րդ հասցեում գտնվող 800 մ$^2$ տնամերձ հողամասը լիազորագրով վաճառելու և դրա փոխարեն նույն գյուղի 25-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող, իբր իրեն պատկանող, սակայն Գարիկ Գրիգորյանի անվամբ գրանցված 900 մ$^2$ տնամերձ հողամասը նրա անվամբ գրանցելու և այդ հողամասի տարածքում իր օժանդակությամբ պետական միջոցների օգնության հաշվին տուն կառուցելու պատրվակով չարաշահելով Արաքսյա Ամանեսովայի վստահությունը, խաբեությամբ Վիտալի Ամանեսովից և նրա կնոջից՝ Ռամելա Ամանեսովայից, 18.07.2011 թվականին ստացել է լիազորագիր Հայանիստ գյուղի 23-րդ փողոցի 20-րդ հասցեում գտնվող 800մ$^2$ տնամերձ հողամասը վաճառելու վե-*

*րաբերյալ, այդ կերպ խոշոր չափերի՝ 1.963.000 ՀՀ դրամ արժեքով Հայանիստ գյուղի 23-րդ փողոցի 20-րդ հասցեում գտնվող 800մ$^2$ տնամերձ հողամասի նկատմամբ խարդախությամբ ձեռք է բերել այն տնօրինելու իրավունք, այնուհետև այն նոտարական կարգով անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով 7000 ԱՄՆ դոլարով 2011 թվականի սեպտեմբերի 19-ին վաճառել է Վլադիմիր Պյոտրի Սանդիկովին՝ այդ կերպ Վ.Ավանեսովին պատճառելով 1.963.000 ՀՀ դրամի նյութական վնաս (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 257-273):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում հաստատված է համարել. *«(...) 2011 թվականի հուլիս ամսին Հայանիստ գյուղի բնակիչ Ֆարիդա Վաղարշակի Ավագիմյանը, տեղեկանալով, որ Վ.Սանդիկովը ցանկանում է գնել Վիտալի Ավանեսովին պատկանող հողամասը, իսկ վերջինս չի ցանկանում վաճառել, Վ.Ավանեսովին և նրա կնոջը՝ Ռ.Ավանեսովային, համատեղ սեփականության իրավունքով պատկանող նշված հողամասը հափշտակելու ի սկզբանե ծագած դիտավորությամբ, իր նախաձեռնությամբ, իր անձի և իր կողմից ներկայացված տվյալների կապակցությամբ Վ.Ավանեսովի և Ռ.Ավանեսովայի մոտ վստահություն ստեղծելով, ինչպես նաև շահագրգռելու նպատակով, Վ.Ավանեսովի մորը՝ համագյուղացի Արաքսյա Նազարի Ավանեսովային, ցույց է տվել նույն գյուղի 25-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող, համագյուղացի Գարիկ Գրիգորյանին պատկանող 900 մ$^2$ տնամերձ հողամասը և հայտարարել, որ այդ հողամասը պատկանում է իրեն: Այդ հողամասն իրեն պատկանելու վերաբերյալ ոչ ճշմարիտ տեղեկություն տալուց բացի՝ Ֆ.Ավագիմյանը հայտնել է, որ նշված հողամասի վրա իր միջոցներով տուն կկառուցի և այդ պայմաններով առաջարկել է իրեն և Վ.Ավանեսովին պատկանող հողամասերը փոխանակել: Խարդախությամբ գույք հափշտակելու իր հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Արաքսյա Ավանեսովայի միջոցով Վ.Ավանեսովի և Ռ.Ավանեսովայի վստահությունը ձեռք բերելու համար, համագյուղացի Գ.Գրիգորյանին պատկանող հողամասը որպես իրենը ներկայացնելուց հետո խաբեության եղանակով Ֆ.Ավագիմյանն անձամբ զրուցել է Վ.Ավանեսովի հետ և իր նախաձեռնությամբ ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տվյալներ Վ.Ավանեսովին և Ռ.Ավանեսովայինն սեփականության իրավունքով պատկանող հողամասի դիմաց առաջարկվող հողամասի պատկանելության և դրա վրա տուն կառուցելու վերաբերյալ՝ հողամասերը փոխանակելու նպատակով առաջարկելով իրեն տրամադրել նրանց պատկանող հողամասի տնօրինման հետ կապված համապատասխան լիազորագրեր: Փոխանակման առարկա համարվող հողամասի պատկանելության և դրա վրա տուն կառուցելու վերաբերյալ Վ.Ավանեսովի և վերջինիս միջոցով Ռ.Ավանեսովայի մոտ սխալ պատկերացում ստեղծելով և նրանց համար շահավետ գործարք կնքելու առաջարկությամբ՝ Ֆ. Ավագիմյանը խաբեությամբ ներազդել է Վ.Ավանեսովի և Ռ.Ավանեսովայի կամքի և գիտակցության վրա, որի արդյունքում վերջիններս, մոլորության մեջ ընկնելով և իրենց համար շահեկան պայմանները հաշվի առնելով, կամովին*

*ՌԴ-ից Ֆ.Ավագիմյանին են ուղարկել իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասի տնօրինման հետ կապված ՌԴ Պետրոզավոդսկ քաղաքի նոտարի կողմից 2011 թվականի հուլիսի 18-ին և 2011 թվականի սեպտեմբերի 1-ին հաստատված լիազորագրերը, որոնք օգտագործելով՝ Ֆ.Ավագիմյանը, խաբեության և Վ.Ավանեսովի ու Ռ.Ավանեսովայի վստահությունը չարաշահելու եղանակով վերջիններիս համատեղ սեփականությամբ պատկանող, խոշոր չափերով՝ 1.835.000 ՀՀ դրամ արժողությամբ հողամասը հափշտակելով, 2011 թվականի սեպտեմբերի 19-ին օրենքով սահմանված կարգով, առուվաճառքի պայմանագրով 7000 ԱՄՆ դոլարով վաճառել է Վլադիմիր Սանդիկովիին՝ չկատարելով իր խոստումը Վ.Ավանեսովի նկատմամբ՝ վերջինիս անունով չգրանցելով նախապես խոստացած հողամասը:*

*(...) [Ա]մբաստանյալ Ֆ.Ավագիմյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հանցանք կատարելու մեջ ապացուցված է, և նրա պատճառաբանություններն էլ հերքված են դատաքննությամբ հետազոտված հետևյալ ապացույցներով.*

*Տուժող Վ.Ավանեսովի՝ դատաքննության ընթացքում [տրված] ցուցմունք[ներով], (...) [վ]կա Մարիետա Ավանեսովայի ցուցմունքներով, (...) [վ]կա Արաքսյա Ավանեսովայի ցուցմունքներով, (...) [վ]կա Վլադիմիր Սանդիկովի ցուցմունքներով, (...) [վ]կա Էդուարդ Ֆիրումյանի ցուցմունքներով, (...) [վ]կա Արարատի մարզի Հայանիստ համայնքի ղեկավար Բալաբեկ Պետրոսի Սարկիսյանի ցուցմունքներով, (...) [վ]կա Իրինա Գրիգորի Հարությունյանի ցուցմունքներով, Ռամելա Վալերիի Ավանեսովայի կողմից 2011 թվականի հուլիսի 18-ին տրված համաձայնությամբ, համաձայն որի՝ Ռ.Ավանեսովան տվել է իր համաձայնությունը Հայանիստ գյուղում (...) գտնվող տնամերձ հողամասի վաճառքի պայմանագրի կնքմանը՝ ցանկացած գնով և ցանկացած պայմաններով, (...) Վիտալի Արկադիի Ավանեսովի կողմից 2011 թվականի հուլիսի 18-ին տրված լիազորագրով, որի համաձայն՝ Վ.Ավանեսովը լիազորել է Ֆարիդա Ավագիմյանին ցանկացած գնով, ցանկացած պայմաններով, ցանկացած անձի վաճառել ՀՀ Արարատի մարզի, Հայանիստ գյուղում գտնվող տնամերձ հողամասը (...), 2011 թվականի սեպտեմբերի 19-ին «Մասիս» նոտարական տարածքում կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով, որի համաձայն՝ Վիտալի Ավանեսովի և Ռամելա Ավանեսովայի լիազորագրերի հիման վրա Ֆարիդա Ավագիմյանը վաճառել է Վ.Ավանեսովին և Ռ.Ավանեսովային սեփականության իրավունքով պատկանող, Արարատի մարզի Հայանիստ գյուղի 23-րդ փողոցի թիվ 20 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 800 $մ^2$ բնակելի կառուցապատման հողամասը, (...) քննչական փորձարարություն կատարելու մասին 07.03.2014 թվականի արձանագրությամբ, համաձայն որի՝ Արաքսյա Ավանեսովան մատնացույց է արել Արարատի մարզի Հայանիստ գյուղի 25-րդ փողոցի, թիվ 1 հասցեում գտնվող տնամերձ հողամասը և հայտարարել, որ 2011 թվականին, ամիսը և օրը չի հիշում, Ֆ.Ավագիմյանն իրեն ցույց է տվել այդ հողա-*

*մասը և ասել, որ այդ հողամասը պատկանում է իրեն, սակայն գրանցված է իր ծանոթ Գարիկ Գրիգորյանի անվամբ, և հենց այդ հողամասը պետք է գրանցի իր անվամբ՝ Վիտալի Ավանեսովի տնամերձ հողամասի դիմաց, (...)*

*Մարիետա Ավանեսովայի (...) և Ֆարիդա Ավագիմյանի [բջջային հեռախոսահամարներից] 2013 թվականի դեկտեմբերի 2-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում կատարված ելքային և մուտքային հեռախոսազանգերի վերծանումները զննելու մասին արձանագրությամբ, համաձայն որի՝ Մարիետա Ավանեսովային պատկանող (...) բջջային հեռախոսահամարից 2013 թվականի դեկտեմբերի 2-ին հեռախոսազանգ է կատարվել ՌԴ-ում բնակվող Գարիկ Գրիգորյանին, որից հետո Գ.Գրիգորյանի հետ հեռախոսազանգ է ունեցել Ֆարիդա Ավագիմյանը, (...) «Հայաստանի Հանրապետության փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի՝ 27.10.2015 թվականին ստացված Հմ՝ 15-0284Դ եզրակացության համաձայն՝ Արարատի մարզի Հայանիստ գյուղի 23-րդ փողոցի թիվ 20 հասցեում գտնվող 800 մ$^2$ հողամասի հավանական շուկայական արժեքը 19.09.2011 թվականի դրությամբ կարող էր կազմել 1.835.000 ՀՀ դրամ (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 127-141):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Գնահատելով քրեական գործով ձեռք բերված ու Առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում հետազոտված (...) ապացույցների համակցությունը՝ Վերաքննիչ դատարանը ոչ արժանահավատ է համարում ամբաստանյալ Ֆարիդա Վաղարշակի Ավագիմյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի կատարումը բացառելու վերաբերյալ պաշտպանի՝ ինչպես վերաքննիչ բողոքում, այնպես էլ պաշտպանության կողմի՝ Վերաքննիչ դատարանում ներկայացված պատճառաբանությունները, նկատի ունենալով, որ այդպիսիք չեն բխում սույն գործի օբյեկտիվ տվյալներից, գործող օրենսդրության պահանջներից, ինչպես նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մի շարք նախադեպային որոշումներով ձևավորած իրավական դիրքորոշումների տրամաբանությունից: Ներկայացված պատճառաբանությունները զուտ սուբյեկտիվ, գնահատողական դատողություններ են, որոնք հիմնազուրկ են ու չփաստարկված և հետապնդում են ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի կողմից քրեական պատասխանատվությունից ու պատժից խուսափելու նպատակ:*

*Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պաշտպանության կողմի ներկայացրած հիմնավորումներն ու պատճառաբանություններն արդեն իսկ հանգամանորեն ստուգվել են ու մերժվել Առաջին ատյանի դատարանի կողմից և արտացոլվել վիճարկվող դատական ակտում, հետևաբար ներկայացված պատճառաբանություններն Առաջին ատյանի դատարանի վիճարկվող դատական ակտը բեկանելու, պաշտպան Վ.Վարդանյանի վերաքննիչ բողոքը բավարարելու ու ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի վերաբերյալ գործի վարույթն արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով*

*կարճելու անհրաժեշտ ու բավարար հիմք հանդիսանալ չեն կարող»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 84-125):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, ինչն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, ըստ բողոքաբերի, խախտվել են ՀՀ Սահմանադրության 63-րդ, 72-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 107-րդ, 127-րդ, 358-րդ, 395-րդ, 397-րդ, 398-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոք բերած անձը վկայակոչել է *Վ.Մաթևոսյանի* և *Ռ.Բալասանյանի* գործերով Վճռաբեկ դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, դրանց հետ համադրել սույն գործի փաստական հանգամանքները և գտել, որ դատարանների հետևություններն անհիմն են, չփաստարկված և չեն բխում գործով ձեռք բերված ապացույցներից: Ըստ բողոքաբերի՝ թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարանները կայացրել են չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր՝ Ֆ.Ավագիմյանի մեղավորության վերաբերյալ գալով սխալ եզրահանգման:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով կարճել գործի վարույթը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը կատարելու մեջ ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ֆ.Ավագիմյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ

կետով մեղսագրված արարքում հաստատված է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են տուժող Վ.Ավանեսովի, վկաներ Մ.Ավանեսովայի, Ա.Ավանեսովայի, Վ.Սանդիկովի, Է.Ֆիրումյանի, Բ.Սարկիսյանի, Ի.Հարությունյանի ցուցմունքներով, Ռ.Ավանեսովայի կողմից 2011 թվականի հուլիսի 18-ին տրված համաձայնությամբ, 2011 թվականի հուլիսի 18-ի՝ Վ.Ավանեսովի կողմից Ֆ.Ավագիմյանին տրված լիազորագրով, 2011 թվականի սեպտեմբերի 19-ի՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով, 2014 թվականի մարտի 7-ի՝ քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրությամբ, Մ.Ավանեսովայի և Ֆ.Ավագիմյանի բջջային հեռախոսահամարների հեռախոսազանգերի վերծանումները զննելու մասին արձանագրությամբ և «Հայաստանի Հանրապետության փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի՝ 27.10.2015 թվականին ստացված ՀՄ՝ 15-0284Դ եզրակացությամբ:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը կատարելու մեջ ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

*(...)*

*6) անցել են վաղեմության ժամկետները.*

*(...)»:*

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Սարգսյանի* գործով որոշման մեջ և արձանագրել, որ *«(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դա-*

*տավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»* (տե՛ս *Արամ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կրկնում է իր նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանափակումները չունեն բացարձակ բնույթ, և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում (mutatis mutandis տե՛ս *Մխիթար Էդոյանի և այլոց* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 14-րդ կետը):

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին:

Այսպես՝

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «*Խարդախությունը [խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը], որը կատարվել է՝ (...) խոշոր չափերով, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը (…)»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

*(…)*

*2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.*

*(…)*

*2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (…)»:*

Վերոնշյալ քրեաիրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, իսկ հոդվածի սանկցիայով

նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում 5 տարին, ուստի քննարկվող հանցավոր արարքը դասվում է միջին ծանրության հանցագործությունների թվին: Հետևաբար այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է հինգ տարի:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված նորմի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմը նյութական է. այդ հանցագործությունը համարվում է ավարտված, երբ առաջանում են հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված հանրորեն վտանգավոր հետևանքները: Մասնավորապես, խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը, համարվում է ավարտված, երբ հանցավորը գույքը վերցնելուց, իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելուց հետո իրական հնարավորություն ունի իր հայեցողությամբ այն տնօրինելու կամ օգտագործելու (տե՛ս *Լուսինե Նավասարդյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵՄԴ/0064/01/13 որոշման 10-րդ կետը):

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Սինևույն ժամանակ քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության միջոցով հասնելու իր անմեղության ապացուցման:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փու-

լում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը *mutatis mutandis* տե՛ս *Անահիտ Սաղաթելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ/0022/01/10 որոշումը, *Միրաժ Ղամբարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը, *Հրանտ Մազմանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ֆ.Ավագիմյանը խաբեությամբ ներազդել է Վ.Ավանեսովի և Ռ.Ավանեսովայի կամքի և գիտակցության վրա, որի արդյունքում վերջիններս, մոլորության մեջ ընկնելով, կամովին ՌԴ-ից Ֆ.Ավագիմյանին են ուղարկել իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասի տնօրինման հետ կապված ՌԴ Պետրոզավոդսկ քաղաքի նոտարի կողմից 2011 թվականի հուլիսի 18-ին և 2011 թվականի սեպտեմբերի 1-ին հաստատված լիազորագրերը, որոնք օգտագործելով՝ Ֆ.Ավագիմյանը խաբեության և Վ.Ավանեսովի ու Ռ.Ավանեսովայի վստահությունը չարաշահելու եղանակով վերջիններիս համատեղ սեփականությամբ պատկանող, խոշոր չափերով՝ 1.835.000 ՀՀ դրամ արժողությամբ հողամասը հափշտակելով, 2011 թվականի սեպտեմբերի 19-ին առուվաճառքի պայմանագրով 7000 ԱՄՆ դոլարով վաճառել է Վլադիմիր Սանդիկովին՝ չկատարելով իր խոստումը Վ.Ավանեսովի նկատմամբ՝ վերջինիս անունով չգրանցելով նախապես խոստացած հողամասը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված հանցագործությունը կատարելու մեջ Ֆ.Ավագիմյանի մեղքը հաստատող մեղադրական դատավճիռ է կայացրել 2016 թվականի ապրիլի 6-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան (տե՛ս սույն որոշման 2-3-րդ կետերը), իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում 2016 թվականի հուլիսի 26-ին կայացրել է որոշում (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը): Վերջինիս դեմ Ֆ.Ավագիմյանի պաշտպանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը): Այսինքն՝ Ֆ.Ավագիմյանի վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

16. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքն ավարտվել է 2011 թվականի

սեպտեմբերի 19-ին, իսկ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը 2016 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ օրինական ուժի մեջ մտած չի եղել, հետևաբար Ֆ.Ավագիմյանին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալ Ֆ.Ավագիմյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Հիշյալ հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ անձն արդեն իրացրել է օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իր իրավունքը: Այլ խոսքով՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ անձն արդեն հնարավորություն ունեցել է ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, հետևաբար պարտավոր չէ անձից լրացուցիչ ճշտել, թե նա չի՞ առարկում արդյոք, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով (տե՛ս *Միրաժ Ղամբարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 25-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ֆարիդա Վաղարշակի Ավագիմյանի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 6-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 26-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Ֆարիդա Ավագիմյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնել և նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ քրեական պատասխա-

նատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 6-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 26-ի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**15.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԴ/0193/01/10

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

մասնակցությամբ՝ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
պաշտպան Ա.ՈՍԿԱՆՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սամվել Անդրանիկի Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009 թվականի մարտի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 53102509 քրեական գործը:

2009 թվականի ապրիլի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 19200409 քրեական գործը:

2009 թվականի մայիսի 15-ին թիվ 53102509 քրեական գործը միացվել է թիվ 19200409 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 19200409 համարով:

2009 թվականի հունիսի 30-ին Սամվել Անդրանիկի Հովսեփյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ Ս.Հովսեփյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ Ս.Հովսեփյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

1.1. 2009 թվականի հուլիսի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 19120909 քրեական գործը: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 19200409 քրեական գործը միացվել է թիվ 19120909 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է թիվ 19120909 համարով:

2009 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 19128009 քրեական գործը, որը նույն օրվա մեկ այլ որոշմամբ միացվել է թիվ 19120909 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է թիվ 19120909 համարով:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Ս.Հովսեփյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի մայիսի 24-ի որոշմամբ Ս.Հովսեփյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժվել է, և 2010 թվականի հունիսի 1-ին վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2010 թվականի հունիսի 9-ի որոշմամբ Ս.Հովսեփյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

2010 թվականի հուլիսի 13-ին քրեական գործը (թիվ ԼԴ/0193/01/10) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. 2011 թվականի մայիսի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 61203011 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հունիսի 16-ի որոշմամբ Ս.Հովսեփյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի հոկտեմբերի 19-ին Ս.Հովսեփյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

2.1. 2011 թվականի հոկտեմբերի 28-ին թիվ 61203011 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (թիվ ԼԴ/0236/01/11):

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ թիվ ԼԴ/0193/01/10 քրեական գործը միացվել է թիվ ԼԴ/0236/01/11 քրեական գործին, և միացված քրեական գործերին շնորհվել է թիվ ԼԴ/0193/01/10 համարը:

3. 2012 թվականի մարտի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 55102212 քրեական գործը:

2012 թվականի մայիսի 17-ին Ս.Հովսեփյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ, և 2012 թվականի հունիսի 29-ին քրեական գործը (թիվ ԼԴ/0134/01/12) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 12-ին որոշմամբ թիվ ԼԴ/0134/01/12 քրեական գործը միացվել է թիվ ԼԴ/0193/01/10 քրեական գործին, և միացված քրեական գործերին շնորհվել է թիվ ԼԴ/0193/01/10 համարը:

2015 թվականի մայիսի 4-ին դատական քննության ընթացքում մեղադրողը որոշում է կայացրել Ս.Հովսեփյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 3-ի դատավճռով Ս.Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով Ս.Հովսեփյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ ազատվել է պատժից:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Ս.Հովսեփյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ)

տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 1 (մեկ) ամիս 2 (երկու) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ս.Հովսեփյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Մեղադրողի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակի, որոշվել է Ս.Հովսեփյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել ընդհանուր 52.909.057 ՀՀ դրամ գումար, որից որպես չկատարած հարկային պարտավորությունների գումար՝ 27.281.100 ՀՀ դրամ, որպես յուրացրած գումար՝ 25.627.957 ՀՀ դրամ: Մնացած մասով քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության

5. Մեղադրող Ա.Ասատրյանի և ամբաստանյալ Ս.Հովսեփյանի պաշտպան Ա.Ոսկանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 3-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը և ամբաստանյալ Ս.Հովսեփյանի պաշտպան Ա.Ոսկանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ ամբաստանյալ Ս.Հովսեփյանի պաշտպան Ա.Ոսկանյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

7. Ս.Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար որ. *« (...) [Նա] աշխատելով ՀՀ կառավարության մշակույթի նախարարությանը պատկանող, Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում գրանցված «Գուգարք» պետական փակ բաժնետիրական ու իրեն պատկանող «Ջոջ» ՍՊ ընկերություններում որպես տնօրեն, հանդիսանալով պաշտոնատար անձ, պաշտոնեական դիրքն օգտագործելով շարունակաբար յուրացման եղանակով հափշտակել է պետական միջոցներից առաջին ընկերությանը վստահված առանձնապես խոշոր չափերի հասնող գումարները և չարամտորեն խուսափել առանձնապես խոշոր չափերի հարկային պարտավորություններ կատարելուց:*

Այսպես՝ 2006թ. մայիսի 29-ին «Համայնքային զարգացման խրախուսում» ծրագրի գրասենյակից Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արսեն Մելիքյանի կողմից ներկայացված ծրագրի հիման վրա Ս.Հովսեփյանին հատկացվել է 4.500.000 դրամ՝ համայնքի տարածքում հանգստի պուրակ և մանկական խաղահրապարակ կառուցելու համար: Ա.Մելիքյանը 2006թ. մայիսի 30-ին հիշատակված շինարարական աշխատանքները կատարելու նպատակով Ստեփանավան քաղաքի Սպարապետի 37 հասցեում գործող «Ջոջ» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրեն Սամվել Հովսեփյանի հետ կնքել է պայմանագիր և նշված գումարն առձեռն տվել նրան: Սամվել Հովսեփյանն իրեն վստահված գումարն առանց ընկերության հաշվապահությունում մուտքագրելու, նախապես նպատակ ունենալով սեփականաշնորհել Լոռի Բերդ համայնքի վարչական տարածքից դուրս՝ Լեջան համայնքում գտնվող Ուռուտ գետի հարակից տարածքը, 2006թ. ամռան ընթացքում հիշյալ տարածքում կատարելով 5.859.200 դրամ ընդհանուր արժողությամբ շինարարական աշխատանքներ, 2007թ. ապրիլին հիշյալ տարածքը սեփականաշնորհել է, իսկ Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արսեն Մելիքյանին տվել ստացական 4.500.000 դրամ գումար պարտք լինելու վերաբերյալ և այդպիսով յուրացրել 4.500.000 դրամ գումարը:

Բացի այդ, նա, 2006-2008թթ. աշխատելով ՀՀ մշակույթի նախարարության «Գուգարք» ՊՓԲ ընկերության տնօրենի պաշտոնում և հանդիսանալով պաշտոնատար անձ, Քորայրավանք վանական համալիրում վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար «Հուշարձանների վերականգնում ծրագրով» ՀՀ մշակույթի նախարարության հետ 2006թ. ապրիլի 27-ին կնքել է թիվ ՀՀ ՄԵՀՆ-ԱՇՁԲ-18, 2007թ. հունիսի 29-ին թիվ ՀՀ ԵՀՆ-ԱՇՁԲ-11, 2008թ. հուլիսի 10-ին թիվ ՀՀ ՄԵՀՆ-ԱՇՁԲ-43 պայմանագրեր՝ ընդհանուրը 107.762.000 դրամի, որի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 124.739.500 դրամ, կատարողական ակտերում ընդունված աշխատանքների ծավալը կազմել է 76.207.400 դրամ, իսկ Հնեվանք վանական համալիրում վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար «Հուշարձանների վերականգնում ծրագրով» 2006թ. հունիսի 8-ին կնքել է թիվ ՀՀ ՄԵՀՆ-ԱՇՁԲ-25, 2007թ. հունիսի 29-ին թիվ ՀՀ ՄԵՀՆ-ԱՇՁԲ–13, 2008թ. հուլիսի 10-ի թիվ ՀՀ ՄԵՀՆ-ԱՇՁԲ-42 պայմանագրեր՝ 106.276.800 դրամի, որոնց դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 115.669.500 դրամ, իսկ կատարողական ակտերում ընդունված աշխատանքների ծավալը կազմել է 79.700.300 դրամ:

Այսպիսով, հիշյալ երկու վանական համալիրների վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար «Գուգարք» ՊՓԲ ընկերությանը փաստացի փոխանցվել է ընդհանուր 240.409.000 դրամ, կատարողական ակտերում ընդունված աշխատանքների ծավալը կազմել է 155.907.700 դրամ, փաստացի կատարված և կատարողականներում արտացոլված, սակայն պատվիրատուի կողմից չընդունված աշխատանքների ծավալը կազմել է 15.139.900 դրամ, իսկ փաստացի կատարված և կատարողականներում չարտացոլված աշխատանքների ծավալը դրամական արտահայտությամբ

կազմել է 44.109.200 դրամ, այսինքն կատարված աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է /155.907.700+15.139.900+44.109.200/ 215.156.800 դրամ, չկատարված աշխատանքների ծավալը կազմել է 25.252.200 դրամ:

Սամվել Հովսեփյանն ունենալով ավելի ֆինանսավորված և իրեն վստահված գումարներ, 2006-2008թթ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, խախտելով «Դրամարկղային գործառույթների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, «Գուգարք» ՊՓԲ ընկերության դրամարկղից ելքի դրամարկային օրդերներով առհաշիվ իր անվամբ վերցրել է ընդհանուր 38.331.800 դրամ գումար, որի մի մասը ծախսել է կատարողականներում չարտացոլված աշխատանքների կատարման համար, իսկ առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 25.252.200 դրամ գումարը յուրացման միջոցով հափշտակել է:

Այդ թվում՝ 2006-2008թթ. հիշյալ վանական համալիրների վերականգնողական աշխատանքներն իրականացնելու համար Սամվել Հովսեփյանը շահագործելով իր տնօրինած «Ջոջ» ՍՊ ընկերության տրանսպորտային միջոցներն ու քարամշակման արտադրամասը, առանց որևէ հիմքի, առանց հաշվապահական ձևակերպման «Ջոջ» ՍՊ ընկերությանն է տրամադրել 11.914.800 դրամ գումար, այդ թվում՝ 2008թ. հունիսի 5-ին թիվ 95 հ/ֆ-ով «Գուգարք» ՊՓԲ ընկերությունից «Ջոջ» ՍՊ ընկերությանն է մատակարարել 385.000 դրամ արժողությամբ 1425լ դիզ վառելիք, որից վանական համալիրների վերականգնողական աշխատանքներն իրականացնելու համար ծախսել է 7.095.900 դրամ գումար, իսկ մնացած 4.884.200 դրամը յուրացման միջոցով հափշտակել է:

2008թ. մայիսի 26-ին Ստեփանավան քաղաքում գրանցված «Տրիտոն» ՍՊ ընկերությունից փոխարինաբար 30 օր անց վերադարձնելու պայմանով «Ջոջ» ՍՊ ընկերության համար վերցրել է 2.500.000 դրամ, որից հետո հունիսի 5-ին պարտքը մարելու նպատակով, առանց որևէ հիմնավոր փաստաթղթի, փոխառությամբ «Գուգարք» ՊՓԲ ընկերության հաշվեկշռից «Տրիտոն» ՍՊ ընկերության հաշվեկշռին է փոխանցել 2.500.000 դրամ գումար և այդպիսով յուրացման միջոցով հափշտակել հիշյալ գումարը:

2008թ. սեպտեմբեր ամսին Ա/Ձ «Ն.Հակոբջանյան»-ին պատկանող Երևան քաղաքի Աշտարակի խճուղի 13/1 հասցեում խանութից «Ջոջ» ՍՊ ընկերության համար ձեռք է բերել 820.400 դրամ գումարի շինանյութ, որից հետո պարտքը մարելու նպատակով «Գուգարք» ՓԲ ընկերության հաշվեկշռից, առանց որևէ հիմնավոր փաստաթղթի, շինանյութ և անկյունակ ձեռք բերելու նպատակով 820.400 դրամ գումար փոխանցել Ա/Ձ «Ն.Հակոբջանյան»-ի հաշվեկշռին և այդպիսով յուրացման եղանակով հափշտակել հիշյալ գումարը:

2008թ. սեպտեմբերի 24-ին Ստեփանավան քաղաքում գրանցված՝ Սուսաննա Հովսեփյանին պատկանող «Ստեպ Գրինտուր» ՍՊ ընկերության հաշվեկշռին «Գուգարք» ՊՓԲ ընկերության կողմից, առանց հիմնավոր փաստաթղթի, փոխանցել է 2.100.000 դրամ գումար որպես շինանյութի ար-

ժեքի կանխավճար, այնուհետև առձեռն վերցնելով հիշյալ ընկերության դրամարկղից, չի մուտքագրել «Գուգարք» ՊՓԲ ընկերության հաշվեկշռին և յուրացման միջոցով հափշտակել է այդ գումարը:

Բացի այդ, նա, 2008թ. մարտի 1-ից դեկտեմբերի 30-ը Թումանյան քաղաքի բնակիչ Ալվարդ Խլոպուզյանին ճնշականորեն ճնշակերպելով «Գուգարք» ՊՓԲ ընկերությունում որպես գանձապահ, նրա անվամբ որպես աշխատավարձ դուրս է գրել 375.757 դրամ գումար և յուրացման միջոցով հափշտակել այդ գումարը:

Բացի այդ, Սամվել Հովսեփյանը 2008թ. դեկտեմբեր ամսին ընկերության աշխատակիցներ Աշխարհիկ Նիազյանի 2007–2008թթ. չվճարված 900.000 դրամ աշխատավարձի դիմաց նրան է տվել իրեն պատկանող «Ջոջ» ՍՊ ընկերության դատարկ բլանկ, իր ստորագրությամբ և կնիքված վիճակում, հայտնելով բլանկում Աշխարհիկ Նիազյանի կողմից պարտքի գումարի չափը նշելու իր համաձայնությունը, իսկ Լյոնիկ Կիրակոսյանի, Զավեն Շախվերդյանի, Շալիկո Ազարյանի, Վաչագան Մելքոնյանի, Երվանդ Շեկոյանի, Սամիկոն Գաբրիելյանի, և Սեյրան Սակրչյանի 2008թ. չվճարված՝ համապատասխանաբար 325.000 դրամ, 540.000 դրամ, 120.000 դրամ, 190.000 դրամ, 160.000 դրամ, 235.000 դրամ և 235.000 աշխատավարձի դիմաց նրանց է տվել ստացականներ հիշյալ գումարը պարտք լինելու վերաբերյալ: Որից հետո Աշխարհիկ Նիազյանը, Լյոնիկ Կիրակոսյանը, Զավեն Շահվերդյանը, Շալիկո Ազարյանը, Վաչագան Մելքոնյանը և Երվանդ Շեկոյանը Սամվել Հովսեփյանի պահանջով ստորագրել են ընկերության աշխատավարձի վճարման տեղեկագրում և այդպիսով վերջինս յուրացրել է իրեն վստահված, վերը նշված աշխատակիցներին վճարվելիք, խոշոր չափերի հասնող՝ 2.705.000 դրամ գումարը:

Սամվել Հովսեփյանն աշխատելով տնօրեն և հանդիսանալով պաշտոնատար անձ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2006թ. մայիսից 2009թ. հունվարն ընկած ժամանակաշրջանում յուրացման եղանակով հափշտակել է ի պաշտոնե իրեն վստահված «Գուգարք» ՊՓԲ ընկերության առանձնապես խոշոր չափերով՝ 11.923.141 դրամ ընդհանուր արժողությամբ շրջանառու միջոցները, արագամաշ առարկաները, շինանյութերը և վառելիքը:

Բացի այդ, նա, 2006–2008թթ. աշխատելով «Գուգարք» ՊՓԲ ընկերությունում՝ տնօրենի պաշտոնում, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, անմիջական պատասխանատվություն կրելով իրականացված գործունեությունից առաջացած հարկային պարտավորությունների համար, հարկային պարտավորություններից խուսափելու դիտավորությամբ, սկսած 2006թ. խախտելով «Շահութահարկի», «Եկամտահարկի» և «ԱԱՀ»-ի մասին ՀՀ օրենքների պահանջները, ճիշտ չի կազմակերպել հաշվապահական հաշվառումը, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իր գործունեության վերաբերյալ հաշվապահական հաշվառում չի տարել, ՊԵԿ Թումանյանի ՏՀՏ չի ներկայացրել հարկման համար հիմք հանդիսացող շահութահարկի,

*եկամտահարկի, ԱԱՀ-ի հաշվարկներն ու հաշվետվությունները, ներկայացրել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներ և այդ եղանակով չարամտորեն խուսափել առանձնապես խոշոր չափերով՝ 20.318.500 դրամ հարկային պարտավորությունները կատարելուց:*

*Բացի այդ, նա, 1995թ. մինչև 2007թ. օգոստոսի 23-ը հանդիսանալով «Ջոջ» ՍՊ ընկերության տնօրեն, անմիջական պատասխանատվություն կրելով իրականացված գործունեությունից առաջացած հարկային պարտավորությունների համար, հարկային պարտավորություններից խուսափելու դիտավորությամբ, խախտելով «Շահութահարկի» մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ժե կետի պահանջները 2006թ. Լոռի Բերդ համայնքի ղեկավար Ա.Մելիքյանից ստացած 4.500.000 դրամը որպես եկամուտ չի դիտել, խախտել է «Շահութահարկի», «Եկամտահարկի» և «ԱԱՀ»-ի մասին օրենքների պահանջները, ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իր գործունեության վերաբերյալ հաշվապահական հաշվառում չի տարել, ՊԵԿ Տաշիրի ՏՀՏ չի ներկայացրել հարկման համար հիմք հանդիսացող շահութահարկի, եկամտահարկի, ԱԱՀ-ի հաշվարկներն ու հաշվետվությունները, ներկայացրել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներ և այդ եղանակով չարամտորեն խուսափել խոշոր չափերով՝ 6.962.600 դրամ հարկային պարտավորություններ կատարելուց:*

*Բացի այդ, նա, հանդիսանալով «Ջոջ» ՍՊ ընկերության տնօրենը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի համաձայն լինելով պատասխանատու ընկերության հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու համար, հարկերը և պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելու դիտավորությամբ 2007-2008թթ. ՀՀ ԿԱ ՊԵԿ Տաշիրի հարկային տեսչությանը ներկայացված, իր իսկ կողմից ստորագրված և կնիքված հաշվետվություններում հաշիվ-ապրանքագրերով, ակտերով իրացման շրջանառության ծավալները չներառելու, ֆիզիկական անձանց վճարված եկամուտները ցույց չտալու, ավելացված արժեքի հարկի դեբեդներն ավելի հաշվանցելու, բնապահպանական վճար ցույց չտալու միջոցով հիշյալ ժամանակահատվածում չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 26.319.857 դրամի չափով հարկերը պետբյուջե վճարելուց:*

*Այսպիսով՝ Սամվել Հովսեփյանը յուրացման միջոցով շարունակաբար հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 44.756.098 դրամ գումար և չարամտորեն խուսափել առանձնապես խոշոր չափերի՝ 53.600.957 դրամ հարկային պարտավորությունները կատարելուց»* (տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 238-240):

8. Առաջին ատյանի դատարանի դատական ակտով արձանագրվել է հետևյալը. *«(…) Սամվել Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել նաև այն բանի համար, որ նա, 2007-2008թթ. հանդիսանալով «Ջոջ» ՍՊԸ տնօրեն, հարկերը և պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելու դիտավորությամբ 2007-2008թթ. ՀՀ ԿԱ ՊԵԿ Տաշիրի հարկային տեսչությանը ներ-*

*կայացված, իր իսկ կողմից ստորագրված և կնիքված հաշվետվություններում հաշիվ-ապրանքագրերով, ակտերով իրացման շրջանառության ծավալները չներառելու, ֆիզիկական անճանց վճարված եկամուտները ցույց չտալու, ավելացված արժեքի հարկի դեբեդներն ավելի հաշվանցելու, բնապահպանական վճար ցույց չտալու միջոցով հիշյալ ժամանակահատվածում չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 26.319.857 դրամի չափով հարկերը պետբյուջե վճարելուց: Մինչդեռ դատաքննությամբ հաստատվեց, որ վերը նշված ժամանակահատվածում այդ ընկերության տնօրեն հանդիսացել է ոչ թե Սամվել Հովսեփյանը, այլ Անդրանիկ Հովսեփյանը:*

*(...)*

*Քանի որ 2007-2008թթ. Սամվել Հովսեփյանը «Ջոջ» ՍՊ ընկերության տնօրեն կամ հաշվապահ չի հանդիսացել, հետևաբար նա որևէ նորմատիվ իրավական ակտով պարտավորություն չուներ ապահովելու այդ ընկերության հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարումների գանձման հիմք հանդիսացող փաստաթղթերի հավաստիությունը: Նման պարտավորություն այդ ժամանակահատվածում ուներ տնօրեն Անդրանիկ Հովսեփյանը:*

*Այս դրվագով [Սամվել] Հովսեփյանին առաջադրված մեղադրանքը հիմնավոր չէ: Եթե հանցակազմի տարրերից մեկը բացակայում է, դա վկայում է հանցակազմի բացակայության մասին: Հետևաբար Սամվել Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի ծավալից պետք է հանել 26.319.857 դրամը՝ որպես չկատարած հարկային պարտավորությունների գումար:*

*Արդյունքում պետք է հաստատված համարել, որ Սամվել Հովսեփյանը չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդամենը 27.281.100 դրամ հարկային պարտավորությունները կատարելուց:*

*(...)*

*Անդրադառնալով Սամվել Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքին, մասնավորապես Լոռի Բերդ համայնքին հատկացված 4.500.000 դրամը յուրացնելու մեղադրանքին, դատարանը դատաքննությամբ հաստատված է համարում, որ 2006թ. մայիսի 29-ին «Համայնքային զարգացման խրախուսում» ծրագրի շրջանակներում Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի նախկին ղեկավար Արսեն Մելիքյանի կողմից ներկայացված ծրագրի հիման վրա «Գերմանական տեխնիկական համագործակցություն» կազմակերպության կողմից վերջինիս կանխիկ հատկացվել է 4.500.000 դրամ՝ համայնքի տարածքում հանգստի պուրակ և մանկական խաղահրապարակ կառուցելու համար: Արսեն Մելիքյանն այդ գումարը, առանց մուտքագրելու գյուղապետարանի հաշվին, առձեռն տվել է «Ջոջ» ընկերության տնօրեն Սամվել Հովսեփյանին՝ համայնքի տարածքում հանգստի պուրակ և մանկական խաղահրապարակ կառուցելու համար, նրա հետ պայմանագիր կնքելով: Սամվել Հովսեփյանն իրեն վստահված գումարն առանց ընկերության հաշվապահություն մուտ-*

*քագրելու, Ուռուտ գետի հարակից տարածքում, որը մատնանշվել է վերը նշված կազմակերպության և համայնքի ղեկավարի կողմից, 2006թ. ամռանը կատարել է, ըստ փորձաքննության տվյալների, 5.859.200 դրամ ընդհանուր արժողությամբ շինարարական աշխատանքներ: Հետագայում պարզվել է, որ գյուղապետ Ա.Մելիքյանի անտեղյակության պատճառով այդ աշխատանքները փաստացի կատարվել են ոչ թե Լոռի Բերդի տարածքում, այլ հարևան համայնքի՝ Լեջանի, ինչի պատճառով փաստաթղթավորման խոչընդոտներ են առաջացել: Հետագայում Սամվել Հովսեփյանը մասնակցել է Լեջանի գյուղապետարանի կողմից հայտարարված աճուրդին և աճուրդով գնել 0.5 հա հողամաս, այն հողամասը, որի վրա կառուցվել էր հանգստյան գոտին: Սակայն վերը նշվածը չի կարող հիմք հանդիսանալ եզրահանգելու, որ Սամվել Հովսեփյանն ի սկզբանե դիտավորություն է ունեցել յուրացնելու այդ 4.500.000 դրամը, սեփականաշնորհել է այդ հանգստյան գոտին: Նա որպես շինարարական կազմակերպության ղեկավար իրեն տրամադրված գումարից որևէ յուրացում չի կատարել, որը հիմնավորվել է փորձաքննությամբ: Դատաքննության ընթացքում Լոռի Բերդ համայնքի ներկայիս ղեկավարը հայտնեց, որ համայնքը նյութական վնաս չի կրել, որպես պարտք 4.500.000 դրամ հաշվետվություններում առկա չէ, և քաղաքացիական հայց չներկայացրեց: Բացի այդ, Սամվել Հովսեփյանը տեղեկանալով, որ հանգստյան գոտին կառուցվել է ոչ Լոռի Բերդի տարածքում, պարտավորագիր է գրել իրեն հողհատկացում կատարելու պարագայում համարժեք հանգստյան գոտի կառուցել նաև Լոռի Բերդի տարածքում: Մեղադրական եզրակացության մեջ նշված է, թե Սամվել Հովսեփյանը 4.500.000 դրամի պարտքի վերաբերյալ ստացական է տվել Արսեն Մելիքյանին, մինչդեռ քրեական գործում նման փաստաթուղթ չկա: Առկա է վերը նշված պարտավորագիրը: Ուստի Սամվել Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքի ծավալից պետք է հանել 4.500.000 դրամը:*

*Դատարանը հաստատված չի համարում նաև, որ Սամվել Հովսեփյանը յուրացրել է «Գուգարք» ընկերության նախկին աշխատակիցներ Աշխարհիկ Նիազյանի և մյուսների 2007–2008թթ. աշխատավարձը՝ 2.705.000 դրամի չափով: Դատաքննությամբ հաստատվեց, որ վերջիններս 2008թ. նոյեմբեր ամսին Սամվել Հովսեփյանի խնդրանքով նրան են տվել իրենց աշխատավարձները: Սամվել Հովսեփյանը գրավոր պարտավորվել է դրանք վերադարձնել կարճ ժամկետում: Դեկտեմբեր ամսին՝ մինչ քրեական գործ հարուցելը, նրանցից յուրաքանչյուրին տվել է 100.000 դրամ: Պարտքի վերաբերյալ նրանց տվել է ստացականներ: Այսինքն՝ Աշխարհիկ Նիազյանի և մյուս աշխատակիցների չստացած աշխատավարձի մնացորդի վերաբերյալ վեճը կրում է քաղաքացիաիրավական բնույթ, և այն պետք է լուծվի քաղաքացիաիրավական դատավարության կարգով: Ուստի Սամվել Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքի ծավալից պետք է հանել 2.705.000 դրամը:*

*Այսպիսով Սամվել Հովսեփյանն աշխատելով «Գուգարք» ՊՓԲ ընկերության տնօրեն, 2006-2008թթ. ընթացքում պետական բյուջեի միջոցներից յուրացրել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդամենը 25.627.957 դրամ:*

*Բացի այդ, նա յուրացրել է ընկերության 11.923.141 դրամ արժեքով գույքը, հրաժարվելով ընդունում-հանձնում անելուց:*

*(…)*

*[Առաջինքում դ]ատարանը ապացուցված է համարում, որ Սամվել Հովսեփյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով և 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքներ, որոնց համար պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության և պատժի»* (տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 264-267):

8.1. Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով ամբաստանյալ Ս.Հովսեփյանի նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, արձանագրել է. «*(…) Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նրա կատարած արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, նրա պատասխանատվությունը, մեղմացնող հանգամանքները:*

*Սամվել Հովսեփյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է այն, որ նախկինում դատված չէ, բնութագրվել է դրական, վատառողջ է, տառապում է մի շարք հիվանդություններով: Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ Սամվել Հովսեփյանը տառապում է ծախ հայմորյան խոռոչի անցումաբջջային ադենոկարցինոմա՝ մասնակի անցումով քթի ծախ խոռոչ և քիթըմպան, երկրորդային սինուսիտներով, առանց պարանոցի ռեգիոնար լիմֆոհանգույցների ախտահարման, T3N0M0, 3-րդ փուլ, հետվիրահատական վիճակ, շաքարային դիաբետ 2-րդ տիպի, միջին ծանրության, դիաբետիկ պրոֆերատիվ անգիոռետինոպատիա, սրտի իշեմիկ հիվանդություն, կարդիոսկլերոզ, հիպերտոնիկ հիվանդություն 2-րդ աստիճան: Ներկա առողջական վիճակով Սամվել Հովսեփյանը կարիք ունի հետվիրահատական ռադիոթերապիայի, որը հնարավոր է կազմակերպել ուռուցքաբանական մասնագիտացված կլինիկայում:*

*(…)*

*Սամվել Հովսեփյանը 2010թ. հուլիսի 23-ից հանդիսանում է 2-րդ խմբի հաշմանդամ:*

*(…)*

*Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք չկա:*

*(…)*

*Դատարանը, հաշվի առնելով Սամվել Հովսեփյանի կատարած հանցավոր արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը, նրա անձը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանգում է հետևության, որ վերջինիս նկատ-*

*մամբ պետք է պատիժ նշանակել ազատազրկման ձևով: Սակայն հաշվի առնելով, որ նա վատառողջ է, տառապում է մի շարք հիվանդություններով, գրեթե 11 ամիս գտնվել է նախնական կալանքի տակ, դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պետք է պայմանականորեն չկիրառել»* (տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 266-267):

8.2. Ս.Հովսեփյանի առողջական վիճակի վերաբերյալ գործի նյութերում առկա է միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 10-ի եզրակացությունը, ինչպես նաև Վերաքննիչ դատարան ներկայացված 2016 թվականի փետրվարի 2-ի N 4034/10 խորհրդատվական թերթիկը:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Առաջին ատյանի դատարանը, ex officio կատարելով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի կարգով, գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, հանգել է իրավաչափ հետևության այն մասին, որ Սամվել Հովսեփյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված է, ու վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության՝ արդյունքում ճիշտ կիրառելով նաև քրեական օրենքը: (...):*

*(...) Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, Առաջին ատյանի դատարանը վերջնական իրավաչափ հետևության է հանգել այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու պայմաններում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցում ըստ էության հանգելով ճիշտ եզրակացության:*

*Վերաքննիչ դատարանը նման հետևության է հանգում հաշվի առնելով ինչպես ամբաստանյալ Սամվել Հովսեփյանին վերագրվող հանցագործությունների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, որոնք արձանագրվել են վիճարկվող դատական ակտում ու հաշվի առնվել ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 16-րդ, թերթ 98-105):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբերի պնդմամբ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-127-րդ, 360-րդ հոդվածների

պահանջները, սխալ են գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ճիշտ չեն կիրառել նյութական և դատավարական իրավունքի նորմերը, ինչի արդյունքում Ս.Հովսեփյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքին տրվել է սխալ գնահատական, և կայացվել չհիմնավորված ու օրենքի պահանջներին չհամապատասխանող անարդարացի որոշում:

Այսպես՝ բողոք բերած անձի կարծիքով քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված և դատական քննությամբ հետազոտված ապացույցներով, այդ թվում՝ Ս.Հովսեփյանի ցուցմունքներով, հիմնավորվել է, որ հիմնադրման օրվանից «Ջոջ» ՍՊ ընկերության գործունեությունը փաստացի ղեկավարել է ինքը, իսկ նրա որդին՝ Անդրանիկ Հովսեփյանը, ընդհանրապես առնչություն չի ունեցել հիշյալ ընկերության հետ, հետևաբար ստորադաս դատարանի եզրահանգումը՝ Ս.Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի ծավալից 26.319.857 ՀՀ դրամը հանելու մասով, անհիմն է:

Բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող են հանդիսանալ և որպես կատարող դիտվել նաև տնօրենի կամ հաշվապահի լիազորությունները փաստացի իրականացրած անձինք, քանի որ նրանք, թեև օրենքով սահմանված կարգով գրանցված չեն եղել ընկերությունում, և իրավաբանորեն նրանց համապատասխան լիազորություններ ամրակցված չեն եղել, այնուամենայնիվ փաստացի իրականացրել են իրավական նշանակություն ունեցող գործառույթներ:

11. Բողոքաբերը, անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցին, նշել է, որ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում, չմեկնաբանելով պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները, պարզապես թվարկել է ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և գտել, որ դրանք ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմք կարող են հանդիսանալ: Բացի այդ, ամբաստանյալի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները հիմնավորող ապացույցները հաշվի են առնվել ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ պատիժը պայմանականորեն չկիրառելիս, այսինքն՝ դատական ակտում տարանջատված չեն պատիժ նշանակելու և այն պայմանականորեն չկիրառելու պատճառաբանությունները, ինչն իրավաչափ չէ:

Բողոք բերած անձն ընդգծել է, որ ստորադաս դատարանը չի անդրադարձել հանցագործությամբ պատճառված վնասն ամբողջությամբ չհատուցված լինելու պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության հարցին, ինչը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին:

11.1. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ դատարանը Ս.Հովսեփյանի առողջական վիճակի մասին հետևության հանգելիս հիմնվել է միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի եզրակացության վրա, մինչդեռ չի պատճառաբանվել, թե այդ հանգամանքն ինչպես է վկայում դատապարտյալի՝ առանց պատիժը կրելու ուղղվելու, համապատասխանաբար նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

12. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 21-ի որոշումը, ամբաստանյալ Ս.Հովսեփյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը ճանաչել անթույլատրելի և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտների շրջանակի, ինչպես նաև գույքային բնույթի հանցագործությունների դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*I. ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտը.*

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Ս.Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի ծավալից 26.319.857 ՀՀ դրամը՝ որպես չկատարած հարկային պարտավորությունների գումար, հանելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-44-Ն օրենքի ընդունումը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածը (10.06.09 ՀՕ-149-Ն խմբագրությամբ) շարադրված էր հետևյալ կերպ՝ *«Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը:*

*1. Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով, որը կատարվել է խոշոր չափերով (...):*

*2. Նույն արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով (...):*

*3. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից տասնհինգհազարապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկը գերազանցող գումարը»:*

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-44-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն՝ *«Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը*

*1. Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը խոշոր չափերով չվճարելու նպատակով՝*

*1) օրենքով սահմանված հաշվետվությունում, հաշվարկում, հայտարարագրում կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթում ակնհայտ կեղծ տվյալ մտցնելը կամ*

*2) օրենքով սահմանված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը՝ (...):*

*2. Նույն արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով (...),*

*3. Սույն հոդվածի իմաստով խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկից տասնհինգհազարապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկը գերազանցող գումարը»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի՝ թե՛ նախկին, թե՛ գործող խմբագրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև հոդվածի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներն էական փոփոխությունների են ենթարկվել, այնուամենայնիվ հանցագործությունը սուբյեկտային կազմի առումով փոփոխության չի ենթարկվել: Մասնավորապես, քննարկվող հանցակազմը դասվում է տնտեսական գործունեության դեմ ուղղված այն հանցագործությունների թվին, որոնք կարող են կատարվել միայն հատուկ սուբյեկտի կողմից:

15.1. ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով հանցագործության հատուկ սուբյեկտի հասկացությանը և դրա որոշման հիմքում ընկած չափանիշներին, արձանագրել է. «*(...) ՀՀ քրեական օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ հատուկ սուբյեկտի որոշումն արտահայտում է կոնկրետ տեսակի հանցագործությունների առանձնահատկությունները, դրանց հանրորեն վտանգավորության աստիճանը: Այս կամ այն ան-*

*ձին որպես **տվյալ հանցագործության հատուկ սուբյեկտ ճանաչելը պայմանավորվում է նրանով, որ իրենց պաշտոնական կամ այլ դրության հիմքով նրանք կարող են կատարել հանցագործություններ, որոնք այլ անձինք կատարել չեն կարող:** Այսինքն՝ տվյալ հանցագործության բնույթը և այն կատարելու հնարավորությունն են այն չափանիշները, որոնք օբյեկտիվորեն, անկախ օրենսդրի կամքից, կանխորոշում են հատուկ սուբյեկտի շրջանակը: Այս չափանիշները ենթադրում են, որ տվյալ հանցակազմի հատուկ սուբյեկտի շրջանակն անխուսափելիորեն պետք է համընկնի բոլոր այն անձանց շրջանակի հետ, ովքեր իրենց պաշտոնական կամ այլ դրության ուժով ունակ են կատարել տվյալ արարքը: Մասնավորապես, առանձնացվում են հատուկ սուբյեկտի որոշման հետևյալ հատկանիշները. իրավական կարգավիճակը, ժողովրդագրական հատկանիշը, մասնագիտական պարտականությունները, կատարած աշխատանքի բնույթը, արդարադատության բնագավառում պետության և քաղաքացիների միջև հարաբերությունները և այլն (...)»* (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի հունվարի 14-ի թիվ ՍԴՈ-851 որոշման 5-րդ կետը):

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության հատուկ սուբյեկտը, ընդհանուր սուբյեկտի պարտադիր հատկանիշներից բացի (քրեական պատասխանատվության տարիքի հասած, մեղսունակ, ֆիզիկական անձ), օժտված է այնպիսի լրացուցիչ հատկանիշներով, որոնց ուժով միայն այդ անձը կարող է լինել տվյալ հանցագործության կատարող: Այդպիսի հատկանիշները բազմազան են և կարող են բնութագրել հանցավորի անձը, նրա պաշտոնեական կամ ծառայողական դիրքը, գործունեության ոլորտը և այլն (օրինակ՝ սեռը, տարիքը, քաղաքացիությունը, պաշտոնեական կամ մասնագիտական պարտականությունների կատարումը, զինծառայության հետ կապված հարաբերությունները և այլն): Ընդ որում, հատուկ մասի հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ հանցակազմերում հատուկ սուբյեկտի կամ նրա հատկանիշների մասին կա՛մ ուղղակիորեն նշում է կատարվում հոդվածի դիսպոզիցիայում, կա՛մ դրանք բացահայտվում են մեկնաբանությունների միջոցով:

16. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտի հիմնախնդրին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես այդպիսին կարող են հանդես գալ այն անձինք, ովքեր համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով պարտավոր են ապահովել հարկերի, տուրքերի կամ պարտադիր այլ վճարումների գանձման հիմք հանդիսացող փաստաթղթերի հավաստիությունը, այդ թվում՝ անձինք, ովքեր պարտավոր են հաստատել այդ փաստաթղթերը (օրինակ՝ անհատ ձեռնարկատերը, կազմակերպության ղեկավարը, գլխավոր (ավագ) կամ հաշվետվություն կազմող հաշվապահը), ինչպես նաև այն ֆիզիկական անձինք, ովքեր պարտավոր են հարկ վճարել: Բացի վերոնշյալ անձանցից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող են համարվել նաև այն

անձինք, ովքեր ժամանակավորապես են իրականացնում ղեկավարի և գլխավոր (ավագ) հաշվապահի պարտականությունները:

Այլ կերպ ասած՝ հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ չվճարելու համար քրեական պատասխանատվության ենթակա սուբյեկտ են միայն այն անձինք, ովքեր իրավական ակտի ուժով կրում են հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելու, ինչպես նաև նշված փաստաթղթերի հավաստիությունն ապահովելու պարտականություն:

16.1. ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«(...) Սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող (...)»:*

Վկայակոչված նորմի վերլուծությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործի փաստական տվյալներով հաստատվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի իմաստով հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը փաստացի այլ անձանց միջոցով իրականացրել է նշված հոդվածի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները կամ հատուկ սուբյեկտի հետ միասին մասնակցել է հանցագործությանը, ապա հաշվի առնելով նրա կողմից իրականացված գործողությունների բնույթը՝ օրենքով նախատեսված համապատասխան հատկանիշների առկայության դեպքում քրեական հետապնդման մարմինը կարող է քննարկել անձին որպես հանցագործության կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ս.Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել նաև այն բանի համար, որ նա, 2007-2008 թվականներին հանդիսանալով «Ջոջ» ՍՊԸ-ի տնօրեն, հարկերը և պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելու դիտավորությամբ չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 26.319.857 ՀՀ դրամի չափով հարկերը պետական բյուջե վճարելուց (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը դատական ակտով հաստատված է համարել, որ 2007-2008 թվականներին «Ջոջ» ՍՊԸ-ի տնօրեն է հանդիսացել ոչ թե Սամվել Հովսեփյանը, այլ Անդրանիկ Հովսեփյանը: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը Ս.Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի ծավալից 26.319.857 ՀՀ դրամը՝ որպես չկատարած հարկային պարտավորությունների գումար, հանել է՝ պատճառաբանելով, որ վերջինս որևէ նորմատիվ իրավական ակտով պարտավորություն չի ունեցել ապահովելու այդ ընկերության հարկերի, տուրքե-

րի կամ այլ պարտադիր վճարումների գանձման հիմք հանդիսացող փաստաթղթերի հավաստիությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով օրենքով և ներքին համոզմամբ, ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության և բավարարության տեսանկյունից, հանգել է իրավաչափ հետևության (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-16.1-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ 2007-2008 թվականների ընթացքում կատարված, ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված արարքները Ս.Հովսեփյանին չեն կարող մեղսագրվել, քանի որ այդ ժամանակահատվածում ոչ թե ինքն է հանդիսացել «Ջոջ» ընկերության տնօրեն, այլ Անդրանիկ Հովսեփյանը, հետևաբար ամբաստանյալը որևէ նորմատիվ իրավական ակտով պարտավորություն չի ունեցել ապահովելու ընկերության հարկերի, տուրքերի կամ պարտադիր այլ վճարումների գանձման հիմք հանդիսացող փաստաթղթերի հավաստիությունը, հիմնավոր են: Այլ կերպ՝ Ս.Հովսեփյանը, 2007-2008 թվականներին փաստացի չհանդիսանալով ընկերության տնօրեն, չի կարող համարվել քննարկվող հանցագործության սուբյեկտ, քանի որ վերջինս որևէ իրավական ակտով համապատասխան հաշվետվություն, հաշվարկ, հայտարարագիր կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթուղթ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելու, ինչպես նաև նշված փաստաթղթերի հավաստիությունն ապահովելու պարտականություն չի կրել:

18.1. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ս.Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի ծավալից 26.319.857 ՀՀ դրամը՝ որպես չկատարած հարկային պարտավորությունների գումար, հանելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր են:

*II. ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը.*

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Ս.Հովսեփյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

*2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:*

Սեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-139/07, ՎԲ-195/07, ՎԲ-01/08, ԵԿԴ/0034/01/08, ԱՎԴ2/0059/01/08, ԵԱՔԴ/0078/01/09, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Վերոնշյալ որոշումներում Վճռաբեկ դատարանը մշտապես հաստատել է իրավական դիրքորոշումն առ այն, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովելու ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակներն իրագործելու հնարավորությունը, անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պարտավոր է, ի թիվս այլոց, հաշվի առնել հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաքյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵԾԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԾԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (տե՛ս թիվ ԵԿԴ/0039/01/15, ԱՐԴ/0031/01/15, ԵԱԴԴ/0038/01/15, ԵԿԴ/0130/01/15, ՍԴ/0094/01/15, ՍԴ3/0201/01/15 գործերով որոշումները):

21. ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում յուրացնելու կամ վատնելու համար, որի համաձայն՝ *«1. Յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով (...):*

*3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝*

*1) առանձնապես խոշոր չափերով,*

*(...)»:*

Նշված հոդվածով նախատեսված հանցավոր արարքն ընդգրկված է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, ուստի պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի համա-

տեքստում, սույն որոշման նախորդ կետում մեջբերված այլ գործոնների հետ մեկտեղ, հատկապես կարևոր է հանցագործությամբ պատճառված վնասի (դրա չափի), այն վերականգնված լինելու կամ չլինելու հանգամանքների գնահատումը: Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու խնդրին, իր որոշումներում մշտապես ընդգծել է, որ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազման տեսանկյունից հանցագործությամբ պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքն էական նշանակություն ունի *(տե՛ս, mutatis mutandis, Ա.Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅՔՐԴ/0109/01/08, Գ.Պետրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0126/01/10 որոշումները):*

*Ա.Հովհաննեսյանի* վերաբերյալ կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է՝ *«(...) [Ո]րքան ծանր է վրա հասած հետևանքը, մեծ՝ վնասի չափը, այնքան բարձր է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը: Վերջինս հակադարձ համեմատական է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հնարավորությանը: Այլ խոսքով՝ որքան բարձր է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, այնքան ցածր է դրա համար նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը (...)»* (տե՛ս Ա.Հովհաննեսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշման 15-րդ կետը):

21.1. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հափշտակությունների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքում պատճառված նյութական վնասը հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող կարևոր գործոն է, ինչը դատարանի կողմից պատիժ նշանակելու գործընթացում պետք է պատշաճ գնահատականի արժանանա: Մասնավորապես, որքան մեծ է հանցագործությամբ պատճառված վնասի չափը, այնքան բարձր է արարքի հանրային վտանգավորության աստիճանը, հետևաբար վնասը վերականգնված չլինելու պարագայում ինքնին նվազում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը: Ուստի քննարկվող հանցագործություններով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը որոշելիս դատարանը պետք է, ի թիվս այլ հանգամանքների, գնահատման ենթարկի հանցագործությամբ պատճառված վնասը, դրա չափը, ինչպես նաև՝ որքանով է այն մոտ կոնկրետ հանցակազմի հասարակ կամ որակյալ տեսակի առավելագույն կամ նվազագույն չափին, վնասը վերականգնված լինելու կամ չլինելու կամ մասնակի վերականգնված լինելու հանգամանքը և այլն: Միևնույն ժամանակ, հանցագործությամբ պատճառված վնասը վերականգնված չլինելու պարագայում հանցավորի անձը բնութագրող տվյալնե-

րը (տարիք, առողջական վիճակ և այլն), ինչպես նաև առկա մեղմացնող հանգամանքները սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափ սահմանելու հիմք են:

Վերոնշյալ դիրքորոշումը նաև պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությամբ: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գույքային բնույթի հանցագործություններում սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է ապահովել պատճառված վնասի համարժեք հատուցմամբ և նախքան հանցագործությունը եղած իրադրության հնարավորինս վերականգնմամբ, իսկ քանի դեռ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը չի հատուցվել, խոսք չի կարող լինել սոցիալական արդարությունը վերականգնված լինելու մասին: Ուստի հանցանք կատարած անձի նկատմամբ պետք է ընտրվի այնպիսի ներգործության միջոց, որը կապահովի սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև հանցավորի ուղղումը և նոր հանցագործությունների կանխումը:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ս.Հովսեփյանն Առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատժից Ս.Հովսեփյանը «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ ազատվել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ երկու տարի ժամկետով: Մեղադրողի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակի, որոշվել է Ս.Հովսեփյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել ընդհանուր՝ *52.909.057 ՀՀ դրամ գումար,* որից որպես չկատարած հարկային պարտավորությունների գումար՝ *27.281.100 ՀՀ դրամ,* որպես յուրացրած գումար՝ *25.627.957 ՀՀ դրամ:* Մնացած մասով քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության (տե՛ս սույն որոշման 4-րդ և 8-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ս.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս և այն պայմանականորեն չկիրառելիս հաշվի է առել այնպիսի մեղմացնող հանգամանքներ, ինչպիսիք են նախկինում դատված չլինելը, դրական բնութագրվելը, ինչպես նաև մի շարք հիվանդություններով տառապելը (տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառության վերաբերյալ հանգել է իրավաչափ հետևության (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

23. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 20-21.1-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ս.Հովսեփյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում պատշաճ վերլուծության չեն ենթարկել՝

- *հանցագործությամբ պատճառված վնասի չափը,* մասնավորապես այն, որ Ս.Հովսեփյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարքի կատարման արդյունքում պետությանը պատճառվել է 25.627.957 ՀՀ դրամի չափով վնաս, որը մի քանի անգամ գերազանցում է հափշտակությունների համար նախատեսված առանձնապես խոշոր չափի նվազագույն շեմը (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը),

- *հանցագործությամբ պատճառված վնասը վերականգնված չլինելու հանգամանքը.* գործի նյութերում բացակայում է ամբաստանյալի կողմից հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին վկայող որևէ փաստական տվյալ:

24. Սույն որոշման 22-23-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական տվյալների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործությամբ պատճառված վնասի չափը և այն վերականգնված չլինելու հանգամանքը վկայում են հանցագործության հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին, ինչը ստորադաս դատարանների կողմից հաշվի չի առնվել և որևէ գնահատականի չի արժանացել: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գույքային բնույթի հանցագործություններում արարքի վտանգավորության վրա ազդող հիմնական և կարևոր գործոնը հենց պատճառված վնասն է և այն վերականգնված լինելու կամ չլինելու հանգամանքը, ինչը յուրաքանչյուր դեպքում պատիժ նշանակելիս և այն պայմանականորեն չկիրառելիս պետք է համարժեք գնահատականի արժանանա:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ս.Հովսեփյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

25. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենս-

գրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հիմք են դատական ակտը բեկանելու և նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սամվել Անդրանիկի Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 3-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 21-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Սամվել Անդրանիկի Հովսեփյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**16.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՎԲ-02/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի ապրիլի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի հունիսի 1-ի որոշման դեմ դիմող Արայիկ Ջալյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված՝ Ա.Ջալյանի, Մ.Սերոբյանի և Ռ.Սարգսյանի պաշտպան Զ.Փոստանջյանի հաղորդմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազի ավագ օգնական Ս.Մանուկյանը 2005 թվականի դեկտեմբերի 26-ի գրությամբ հայտնել է, որ թիվ 90800104 քրեական գործի դատաքննության ընթացքում Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել նախաքննության ընթացքում մեղադրյալների նկատմամբ քննիչների կողմից բռնություն կիրառելու վերաբերյալ եղած հայտարարությունների ստուգման ուղղությամբ և 2005 թվականի մայիսի 18-ի դատավճռով փաստել է, որ դրանք անհիմն են ու մեղադրյալների կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակ են հետապնդում:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2006 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ՝ քրեական գործ հարուցելուց դատախազի հրաժարվելու փաստի վերաբերյալ Ռ.Սարգսյանի, Մ.Սերոբյանի, Ա.Զալյանի պաշտպան Զ.Փոստանջյանի բողոքը համարել է անհիմն և մերժել է:

3. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2006 թվականի մարտի 14-ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2006 թվականի փետրվարի 1-ի որոշումը թողել է անփոփոխ, իսկ պաշտպան Զ.Փոստանջյանի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

4. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի հունիսի 1-ի որոշմամբ պաշտպան Զ.Փոստանջյանի՝ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

5. Ա.Զալյանի, Ռ.Սարգսյանի և Մ.Սերոբյանի գանգատների հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան կամ Դատարան) 2016 թվականի մարտի 17-ին *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատներ թիվ 36894/04 և 3521/07) վճիռ է կայացրել, որով ճանաչել է դիմումատուների՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) երաշխավորված իրավունքների խախտման փաստը:

Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2016 թվականի մարտի 17-ի՝ *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ դիմող Ա.Զալյանը դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

6. Դիմող Ա.Զալյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2017 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի հունիսի 1-ի որոշման վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

7. ՀՀ գլխավոր դատախազի ավագ օգնական Ս.Մանուկյանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 26-ի գրությամբ արձանագրվել է. *«(...) [Թ]իվ 90800104 քրեական գործի դատաքննության ընթացքում Մյունիքի մարզի առաջին ատյանի դատարանն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել նախաքննության ընթացքում մեղադրյալների նկատմամբ քննիչների կողմից բռնություն կիրառելու վերաբերյալ եղած հայտարարությունների ստուգման ուղ-*

*ղությամբ, իսկ ձեռք բերված ապացույցները քննարկվել և գնահատվել են գործով 18.05.05թ. կայացված դատավճռում: Դատարանը գտել է, որ մեղադրյալների այդ հայտարարությունները անհիմն են և քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակ են հետապնդում (…)»* (տե՛ս նյութեր, թերթ 5):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(…) ՀՀ գլխավոր դատախազության 26.12.2005թ. պատասխանը կայացված է օրենքին համապատասխան, և անձանց իրավունքները կամ ազատությունները խախտված չեն այդ գործողությամբ, նշված պատասխանը բխում է ՀՀ քր. դատ. օր.-ի 17-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներից, (…) Ռազմիկ Սարգսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործի դատաքննության ընթացքում Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել նախաքննության ընթացքում մեղադրյալների նկատմամբ քննիչների կողմից կեղծ հայտարարությունների ստուգման ուղղությամբ, իսկ ձեռք բերված ապացույցները քննարկվել և գնահատվել են գործով կայացված դատավճռում, և այժմ էլ գործը գտնվում է ՀՀ քրեական և զինվորական գործերով Վերաքննիչ դատարանում, որը համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 385-րդ հոդվածի՝ կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով կարող է գործը քննել լրիվ ծավալով (…)»* (տե՛ս նյութեր, թերթեր 29-30):

9. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, փաստել է. *«(…)Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամբաստանյալ Ռազմիկ Սարգսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործի վերաքննությունը դեռևս ավարտված չէ, դատարանը գտնում է, որ ներկա փուլում պաշտպանի բողոքը բավարարելու հիմքեր չկան (…)»* (տե՛ս նյութեր, թերթեր 46-47):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

10. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ բողոքաբերն ընդգծել է, որ նշված դատական ակտով հիմնավորվել է իր, Մ.Սերոբյանի և Ռ.Սարգսյանի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտման փաստը:

Այսպես՝ բողոք բերած անձը նշել է, որ քննարկվող գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատուների նկատմամբ թույլ են տրվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտումներ, մասնավորապես՝ պետական մարմիններն արդյունավետ քննություն չեն իրականացրել դիմումատուներին խոշտանգումների ենթարկելու առնչությամբ:

Բողոքի հեղինակը փաստել է նաև, որ առկա է իրեն, Մ.Սերոբյանին և Ռ.Սարգսյանին բռնության ենթարկած պաշտոնատար անձանց գործողութ-

յուններին իրավական գնահատական տալու նյութաիրավական և դատավարական անհրաժեշտություն:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է հարուցել դատական ակտի վերանայման վարույթ, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանել և փոփոխել՝ Առաջին ատյանի դատարանին ուղղված՝ 2006 թվականի հունվարի 8-ի բողոքը բավարարել:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտման արձանագրման փաստն արդյոք ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի հունիսի 1-ի որոշումը Ա.Զալյանի մասով վերանայելու հիմք է:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝*

*(...)*

*2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի առնչությամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր կողմից նախկինում արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումը. «*[Այդ] նորմի բովանդակությունից հետևում է, որ վճռաբեկ բողոքարկման միջոցով դատական պաշտպանությունը գործադրելի է այն դեպքում, երբ խախտվել կամ կարող են խախտվել անձի (ներկայացվողի) իրավունքները կամ օրինական շահերը: Հետևաբար անձը վճռաբեկության կարգով կարող է բողոքարկել դատական ակտը միայն իրեն (ներկայացվողին) վերաբերելի մասով և պայմանով, որ այդ ակտով խախտվել են կամ կարող են խախտվել նրա (ներկայացվողի) իրավունքները կամ օրինական շահերը*» (տե՛ս *«Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԿԴ/0867/07/14 որոշման 15-րդ կետը):

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

*2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ*

*վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

«1. *Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

*(...)*

*2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.*

*(...):*

*2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից*:

(...)»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը *(տե՛ս, mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, Ժիրայր Սեֆիլյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, Բագրատ և Նարինե Նալբանդյանների գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշումները):*

15. Այսպես՝ *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Ա.Զալյանի (Առաջին դիմումատու), Ռ.Սարգսյանի (Երկրորդ դիմումատու) և Մ.Սերոբյանի (Երրորդ դիմումատու) նկատմամբ տեղի է ունեցել **Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում** (ընդ որում, նույն գործով Եվրոպական դատարանը փաստել է նաև, որ Ա.Զալյանի նկատմամբ տեղի են ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի խախտումներ):

15.1. Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում վերահաստատել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման դեպքում արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտավորության մասին իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստելով. *«(…) [Ե]թե անհատը հիմնավոր բողոք է ներկայացնում, կամ, (…) անում է արժանահավատ*

*հայտարարություն այն մասին, որ նրա նկատմամբ ոստիկանության կամ պետական այլ նման ծառայողների կողմից ցուցաբերվել է այնպիսի վերաբերմունք, որը խախտում է 3-րդ հոդվածը, այդ դրույթով անուղղակիորեն պահանջվում է կատարել արդյունավետ պաշտոնական քննություն: Ինչպես 2-րդ հոդվածով սահմանված քննությունը, այնպես էլ տվյալ քննությունը պետք է հանգեցնի պատասխանատու անձանց բացահայտմանը և պատժին (…):*

*(…) Քննություն իրականացնելու պարտավորությունը «ոչ թե արդյունքի պարտականություն է, այլ՝ միջոցների». պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ ավարտվի այն եզրակացությամբ, որը համապատասխանում է դիմումատուի նշած դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը, և հայտարարությունների արժանահավատությունը հաստատվելու դեպքում, այն նաև պետք է հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանը, ու հիմնավոր լինելու դեպքում՝ նրանց պատժելուն: Այսպիսով, վատ վերաբերմունքի մասին ծանրակշիռ հայտարարությունների քննությունը պետք է լիակատար լինի: Դա նշանակում է, որ իշխանությունները միշտ պետք է ճգտեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն հապճեպ կամ անհիմն եզրակացությունների վրա՝ քննությունն ավարտելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ միջադեպի հետ կապված ապացույցներն ապահովելու համար, ինչը ներառում է, inter alia, առերեսումը, դատաբժշկական ապացույցները և այլն: Քննության ցանկացած թերություն, որը կարող է խաթարել վնասվածքների պատճառի կամ դրանց համար պատասխանատու անձանց ինքնության հաստատումը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վտանգ առաջացնել (…):*

*(…) Ի վերջո, (…) որպեսզի պետական ծառայողների դրսևորած ենթադրյալ վատ վերաբերմունքի վերաբերյալ իրականացվող քննությունը լինի արդյունավետ, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ հիստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև՝ գործնական իմաստով անկախություն (…)»* (տե՛ս *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 267-269-րդ կետերը):

15.2. Վերոգրյալ դրույթները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն ընդգծել է. *«(…) [Ի]շխանությունները, ամենաուշը 2004 թվականի մայիսի 25-ին, տեղեկացվել են երեք դիմումատուների նկատմամբ ենթադրաբար ցուցաբերված վատ վերաբերմունքի մասին, երբ առաջին դիմումատուն բողոք է ներկայացրել, inter alia, գլխավոր դատախազին և զինվորական դատախազին (…): Այդ բողոքը բավականաչափ մանրամասն էր, պարունակում էր ճշգրիտ ամսաթվեր, վայրեր, ենթադրյալ կատարողների անունները և ցուցաբերված վատ վերաբերմունքի որոշ մեթոդներ, և, Դատարանի կարծիքով, կարող է համարվել արժանահավատ հայտարարություն: Անկախ այն հանգամանքից, որ*

*այս բողոքը հիմնավորող բժշկական ապացույց չկա, Դատարանը հետևողական է իր (…) եզրահանգմանն առ այն, որ արժանահավատ բժշկական եզրակացությունները բացակայում են գլխավորապես իշխանությունների կողմից սահմանված ներպետական ընթացակարգերը չպահպանելու պատճառով (…): Ճիշտ է, որ առաջին դիմումատուի բողոքը ներկայացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքից հետո մեկ ամիս ուշացմամբ: Այնուամենայնիվ, Դատարանը չի համարում այդ ուշացումն այնքան երկար, որ բողոքը ipso facto (փաստի ուժով) զրկվի իր իրական էությունից և բավարարվելու հեռանկարից: Բացի այդ՝ Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ այդ ժամանակահատվածում դիմումատուներն օրենքի խախտմամբ պահվել են իշխանության այն մարմնի համակարգում գործող վայրում, որի աշխատակիցները վատ վերաբերմունք ցուցաբերած ենթադրյալ անձինք էին, և զրկված են եղել արտաքին աշխարհի հետ որևէ կապից, որը, հավանաբար, դիմումատուների մոտ առաջացրել է անօգնականության և վախի զգացողություններ և ծառայել որպես կանխարգելիչ միջոց: Հետևաբար, զարմանալի չէ, որ առաջին դիմումատուն իր բողոքը ներկայացրել է անմիջապես այն բանից հետո, երբ նրան թույլ են տվել հանդիպել իր ընտրած պաշտպանին (…): Ի վերջո, Դատարանը նշում է, որ առաջին դիմումատուի բողոքին հաջորդել է մեկ այլ բողոք, որը ներկայացվել է պաշտպան Զ.Փ.-ի կողմից 2004 թվականի հունիսի 8-ին, ով նույնպես պնդում էր, որ երեք դիմումատուների նկատմամբ ցուցաբերվել է վատ վերաբերմունք (…): Վատ վերաբերմունքի մասին երկրորդ և երրորդ դիմումատուները հետագա հայտարարություններ են արել, համապատասխանաբար, 2004 թվականի հունիսի 10-ին և 16-ին (…): Հետևաբար, Դատարանը եզրահանգում է, որ դիմումատուները ներկայացրել են վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ հիմնավոր բողոք, և իշխանությունները պարտավոր էին այդ հայտարարությունների առնչությամբ իրականացնել արդյունավետ քննություն* (տե՛ս *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 270-րդ կետը):

15.3. Անդրադառնալով դիմումատուների նկատմամբ իրականացված քննության արդյունավետությանը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. *«(…) [Հ]աշվի առնելով այն փաստը, որ բողոքը ներկայացնելու ժամանակահատվածից ի վեր բավական ժամանակ էր անցել, դատախազության մարմինները պետք է արագ արձագանքեին 2004 թվականի մայիսի 25-ի բողոքին և անմիջապես քայլեր ձեռնարկեին արված հայտարարությունները ստուգելու ուղղությամբ: Ձգձգումները կարող էին պոտենցիալ կերպով հանգեցնել ապացույցների կորստին և անդառնալի վնաս պատճառել քննության արդյունավետությանը: Սա համապատասխանում է իրականությանը՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ դիմումատուներն այդ ժամանակ որևէ արժանահավատ բժշկական զննություն չեն անցել: Ավելին, դատախազության մարմինները տեղեկացված են եղել այն փաստի մասին, որ դիմումատուները պահվել են ոազմական ոստիկանության քննչական մեկուսարանում բավականին երկար ժամանակ, և պետք է անհանգստացած լինեին*

*այդ փաստով: Նրանք դիմումատուներին, ենթադրյալ կատարողներին և վկաներին հարցաքննելու, բժշկական զննություն նշանակելու և այլ ապացույցներ հավաքելու օրինական լիազորություններ ունեին և պետք է անհապաղ ձեռնարկեին այդպիսի քննչական գործողություններ: Ավելին, ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես, Քր. դատ. օր.-ի 180-րդ հոդվածով, պահանջվում է, որ այդպիսի քննությունն իրականացվի հանցագործության վերաբերյալ բողոքն ստանալուց հետո առնվազն տասն օրվա ընթացքում (…):*

*(…) [Փ]ոխարենը, դատախազության մարմինները չեն իրականացրել որևէ քննություն, առավել ևս անհապաղ քննություն: Գրեթե ոչ ոք, բացառությամբ երկրորդ դիմումատուի, չի հարցաքննվել՝ ոչ առաջին և երկրորդ դիմումատուները, ոչ էլ վկաները և ենթադրյալ կատարողները, և ջանքեր չեն գործադրվել ապացույցներ հավաքելու համար՝ ներառյալ բժշկական զննություն նշանակելը և հանցագործության վայրը զննելը: Ինչ վերաբերում է երկրորդ դիմումատուի հարցաքննություններին, ապա Դատարանը նշում է, որ 2004 թվականի մայիսի 18-ի հարցաքննությունն անցկացվել է ենթադրյալ կատարողներ հանդիսացող երկու քննիչների կողմից, և, ամեն դեպքում, ենթադրյալ վատ վերաբերմունքի մասին մանրամասնորեն շարադրված հարցեր չեն տրվել (…), մինչդեռ 2004 թվականի հունիսի 29-ից 30-ի հարցաքննությունն անցկացվել է 2004 թվականի մայիսի 25-ի բողոքից ավելի քան մեկ ամիս անց, և դրան ընթացք չի տրվել (…): Հետևաբար, նույնիսկ այս գործողությունները չեն կարող համարվել վատ վերաբերմունքի մասին հայտարարությունները քննելու լուրջ փորձ: Ավելին, զինվորական դատախազը ոչ միայն չի նշանակել բժշկական զննություն, այլև այդ գործընթացը դարձրել է պայմանական՝ դիմումատուներից պահանջելով ներկայացնել լրացուցիչ, որոշակի տեսակի պահանջ, չնայած որ, 2004 թվականի մայիսի 25-ի բողոքը պարունակում էր բավարար պատճառներ՝ նման զննություններ նշանակելու համար: Քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու վերաբերյալ ոչ մի որոշում չի կայացվել, և վատ վերաբերմունքի մասին հայտարարությունները մերժվել են զինվորական դատախազի կողմից վերջինիս գրությամբ՝ գրեթե առանց պատճառաբանման (…): Մասնավորապես, դրանք մերժելու միակ պատճառն այն էր, որ դիմումատուները վատ վերաբերմունքի մասին հայտարարություններ չեն արել 2004 թվականի ապրիլի 27-ի դատական նիստի ժամանակ, որի ընթացքում որոշվել է նրանց նկատմամբ նախնական կալանք նշանակելու հարցը (…):*

*(…) [Ը]նտ երևույթին, վատ վերաբերմունքի մասին դիմումատուների հայտարարությունների առնչությամբ որոշակի քննություն իրականացվել է Սյունիքի մարզի դատարանի ու Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի կողմից՝ դիմումատուների [գործով] դատաքննության ընթացքում, բայց այն Վճռաբեկ դատարանի կողմից անուղղակիորեն համարվել է ոչ պատշաճ, և դատարանը որոշել է բեկանել դիմումատուների մեղադրական դատավճիռը՝ ներառյալ այն հիմքով, որ անհրաժեշտ էր իրա-*

*կանացնել վատ վերաբերմունքի մասին դիմումատուների հայտարարությունների լրացուցիչ քննություն (...)* (տե՛ս *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 271-273-րդ կետերը):

15.4. Եվրոպական դատարանը նշել է նաև, որ Վճռաբեկ դատարանը 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ հատուկ ցուցումներ է արձանագրել, սակայն քննություն իրականացնող մարմինները չեն ցուցաբերել բավական շահագրգռվածություն՝ այս հարցը պատշաճորեն լուծելու առումով, և ապացուցվել է համակարգի անարդյունավետությունը: Հետևաբար իշխանության մարմինները վատ վերաբերմունքի մասին դիմումատուների հայտարարությունների առնչությամբ չեն իրականացրել արդյունավետ քննություն՝ ինչպես պահանջում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը (տե՛ս *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 276-րդ կետը):

15.5. Վերոգրյալի արդյունքում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում (տե՛ս *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 277-րդ կետը):

16. Հիմք ընդունելով վերոշարադրյալը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի լույսի ներքո հաշվի առնելով նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտման արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի հունիսի 1-ի որոշումը՝ Ա.Զալյանի մասով վերանայելու հիմք է:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյո՞ք վիճարկվող դատական ակտերը Ա.Զալյանի մասով բեկանելը և գործն այդ մասով նոր քննության ուղարկելն է:

18. Վճռաբեկ դատարանը կրկնում է իր կողմից նախկինում արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(...) Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման դեպքում պետությունները Կոնվենցիայի 1-ին հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունների շրջանակներում պարտավորվում են իրականացնել արդյունավետ քննություն: Որպեսզի քննությունը համարվի «արդյունավետ», պետք է ունակ լինի հանգեցնելու վիճելի փաստերի հաստատմանը և, հնարավորության դեպքում՝ անթույլատրելի վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատու անձանց բացահայտմանն ու պատժին (տե՛ս, mutatis mutandis, Jeronovičs v. Latvia գործով Եվրոպական դատարանի [ՄՊ]՝ 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը,*

*գանգատ թիվ 44898/10, կետ 103): Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ 3-րդ հոդվածի խախտումը չի կարող շտկվել սոսկ խախտման գոհին փոխհատուցում տրամադրելու միջոցով: Եթե իշխանությունները վատ վերաբերմունքի համար պետական գործակալներին չպատժեն, այլ բավարարվեն միայն տուժածին փոխհատուցում տրամադրելով, ապա վերջիններս հնարավորություն կստանան անպատիժ մնալու և ոտնահարելու իրենց հսկողության տակ գտնվող անձանց իրավունքները: Նման պարագայում խոշտանգման, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի իրավական արգելքը, անկախ իր հիմնարար կարևորությունից, գործնականում արդյունավետ չի գործի (տե՛ս, mutatis mutandis, Jeronovičs v. Latvia գործով Եվրոպական դատարանի [ՄՊ]՝ 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44898/10, Gafgen v. Germany գործով Եվրոպական դատարանի՝ 2010 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 22978/05, Krastanov v. Bulgaria գործով Եվրոպական դատարանի՝ 2004 թվականի սեպտեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 50222/99)* (տե՛ս *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15 որոշման 16.1-րդ կետը):

19. Հաշվի առնելով *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճռի շրջանակներում Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 15.1.-15.4.-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, գնահատելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտման բնույթը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի լույսի ներքո հիմք ընդունելով նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ *Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը՝ Ա.Զալյանի մասով բեկանելը և գործն այդ մասով նոր քննության ուղարկելն է:

20. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի հունիսի 1-ի որոշման՝ Ա.Զալյանի մասով վերաբացման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2006 թվականի փետրվարի 1-ի ու Վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի մարտի 14-ի որոշումները՝ Ա.Զալյանի մասով պետք է բեկանել և գործն այդ մասով ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, $361^{1}$-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստա-

նի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի հունիսի 1-ի որոշումը՝ Արայիկ Զալյանի մասով վերաձայել:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2006 թվականի փետրվարի 1-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի մարտի 14-ի որոշումները՝ Արայիկ Զալյանի մասով բեկանել ու գործն այդ մասով ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**17.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԴ-2/0056/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ պաշտպան | Մ.ՄԿՐՏՉՅԱՆԻ |
| ամբաստանյալ | Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գևորգ Մայիսի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 7-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Գրիգորյանի և նրա պաշտպան Ս.Սաֆարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2014 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Աբովյանի քննչական բաժնի քննիչ Գ.Մեսրոպյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 20145014 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի նոյեմբերի 3-ի որոշումներով Արգամ և Կարինե Մկրտչյանները ճանաչվել են տուժող, իսկ նույն թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ Սիրանուշ Նաղարյանը՝ տուժող Արգամ Մկրտչյանի իրավահաջորդ:

2015 թվականի օգոստոսի 31-ի որոշումներով Գևորգ Գրիգորյանը և Սիրեկան Մկրտչյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2015 թվականի օգոստոսի 31-ի և սեպտեմբերի 1-ի որոշումներով համապատասխանաբար Ս.Մկրտչյանի և Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Ս.Մկրտչյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով Կ.Մկրտչյանի առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս պատճառելու դրվագով Ս.Մկրտչյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

2015 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ Գևորգ Գրիգորյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով Սիրեկան Մկրտչյանի առողջությանն անզգուշությամբ թեթև վնաս պատճառելու դրվագով Գ.Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2015 թվականի հոկտեմբերի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 4-ի դատավճռով Գ.Գրիգորյանը ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, վերացվել է:

Ս.Մկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ զրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ս.Մկրտչյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Ս.Մկրտչյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ:

Տուժող Կ.Մկրտչյանի և տուժողի իրավահաջորդ Ս.Նաղարյանի քաղաքացիական հայցերը մերժվել են:

3. Հիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Ս.Մկրտչյանի պաշտպան Մ.Մկրտչյանը՝ պահանջելով ամբողջությամբ բեկանել դատական ակտը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հուլի-

սի 7-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 4-ի դատավճիռը՝ Գ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելու մասով, բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել ամբաստանյալ Գ.Գրիգորյանը և նրա պաշտպան Ս.Սաֆարյանը (այսուհետ՝ նաև բողոքաբերներ):

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ բողոքաբերների վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

2017 թվականի հունվարի 17-ին վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել ամբաստանյալ Ս.Սկրտչյանը և նրա պաշտպան Մ.Սկրտչյանը՝ խնդրելով ամբաստանյալ Գ.Գրիգորյանի և պաշտպան Ս.Սաֆարյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը մերժել և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 7-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Սիրեկան Սկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«[Ն]ա, 2014 թվականի հոկտեմբերի 7-ին ժամը 20:30-ի սահմաններում իր վարած «ԳԱԶ 31029» մակնիշի 15 SS 255 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով 60-70 կմ ժամ արագությամբ, ընթանալով Երևան-Սևան ավտոճանապարհի 20 կմ հատվածում, չհասած «Պիկնիկ» ռեստորանային համալիր, թույլ է տվել ճԵԿ-ի 67-րդ պահանջին հակասող գործողություններ՝ այն է իր երթևեկության համար խոչընդոտ հայտնաբերելու պահից սկսած, ժամանակին չձեռնարկելով անհրաժեշտ համապատասխան միջոցներ՝ իր ավտոմոբիլը կանգնեցնելու ուղղությամբ, իր ավտոմեքենայի առջևի հատվածով անզգուշությամբ բախվել է ճանապարհի՝ դեպի Սևան տանող ուղեմասի աջ եզրային գոտում՝ երթևեկելի մասի աջ եզրի հոծ գծանշումից դեպի ձախ 95 սմ հեռավորության վրա կանգնած, 165 մետր հեռավորության վրա տեսանելի և հայտնաբերման ենթակա «ԳԱԶ 53» 19 SԼ 947 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետնամասին, ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից, որի հետևանքով անզգուշությամբ առաջացրել է «ԳԱԶ 31029» մակնիշի 15 SS 255 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջևի ճստատեղի ուղևոր Արգամ Սկրտչյանի մահը»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 82):

Գևորգ Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«[Ն]ա, 2014 թվականի հոկտեմբերի 7-ին ժամը 20:30-ի սահմաններում իր վարած «ԳԱԶ 53» 19 SԼ 947 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Երևան-Սևան ավ-*

*տոճանապարհով ընթանալիս, ցանկացել է հոգալ բնական կարիքները, ինչի համար, Երևան-Սևան ավտոճանապարհի 20 կմ հատվածում, չհասած «Պիկնիկ» ռեստորանային համալիր՝ ճանապարհի երթևեկելի ուղեմասին հարակից աջ կողնակի առկայության պարագայում, իր նշված ավտոմոբիլի ծախակողմյան շրջանը մասնակիորեն երթևեկելի ուղեմաս դուրս բերած վիճակում կանգառել է, տեխնիկական տեսակետից թույլ է տվել ճԵԿ-ի 78-րդ կետի պահանջին և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջին հակասող գործողություններ, իր այդ գործողություններով ստեղծել է վթարային իրադրություն, դրանով իսկ պայմանավորել տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը, այն է՝ արդյունքում նույն ճանապարհով ընթացող Սիրեկան Մկրտչյանն իր վարած «ԳԱԶ 31029» մակնիշի 15 SS 255 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջևի հատվածով բախվել է «ԳԱԶ 53» 19 SL 947 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետնամասին, որի հետևանքով անզգուշությամբ առաջացել է «ԳԱԶ 31029» մակնիշի 15 SS 255 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջևի ճստատեղի ուղևոր Արգամ Մկրտչյանի մահը, իսկ հետևի աջ կողմում նստած ուղևորուհի Կարինե Մկրտչյանի առողջությանը պատճառել է ծանր վնաս, որպես կյանքին վտանգ սպառնացող»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 83):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտով հաստատված է համարվել, որ. *«(…) Սիրեկան Արգոյի Մկրտչյանի գործողությունները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներին, իսկ Գևորգ Մայիսի Գրիգորյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները բացակայում են, որպիսի պայմաններում նրա նկատմամբ պետք է կայացնել արդարացման դատավճիռ (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 98):

7. Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Սիրեկան Մկրտչյանի պաշտպան Մ.Մկրտչյանի բողոքի քննության արդյունքում արձանագրել է հետևյալը. *«(…) Վերաքննիչ դատարանը, քննության առնելով վերաքննիչ բողոքը (…) հանգում է հետևության, որ վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, իսկ Դատարանի վիճարկվող դատական ակտը՝ բեկանել ամբաստանյալ Գևորգ Գրիգորյանի մասով և գործն ուղարկել նույն դատարան, այլ կազմով նոր քննության (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 84):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերների պնդմամբ Վերաքննիչ դատարանը, դուրս գալով իր լիազորությունների սահմաններից, թույլ է տվել ՀՀ քրեական դատավա-

րության օրենսգրքի 400-րդ հոդվածի սխալ կիրառում, ինչի արդյունքում կայացված դատական ակտը Գ.Գրիգորյանի համար առաջացրել է ծանր հետևանքներ:

Բողոք բերած անձինք, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածը, ընդգծել են, որ վերջինս հստակորեն ամրագրում է այն անձանց շրջանակը, ում բողոքի հիման վրա արդարացման դատական ակտը կարող է բեկանվել: Սույն գործով արդարացման դատավճիռը բողոքարկել է մյուս ամբաստանյալի պաշտպանը, ով չուներ նման իրավունք: Սինչդեռ Վերաքննիչ դատարանը, շրջանցելով վերոնշյալ հոդվածի պահանջը, իր հայեցողությամբ բեկանել է ստորադաս դատարանի դատական ակտը:

9. Բողոքի հեղինակները, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պնդմանը, թե փորձագետի ցուցմունքը չի կարող ծանրակշիռ և օբյեկտիվ գնահատված ապացույց համարվել և փոխարինել փորձագետի եզրակացությանը, նշել են, որ փորձագետի կողմից իրեն առաջադրված հարցերի կապակցությամբ արված հետևությունը փորձագիտական եզրակացության ուսումնասիրության և կիրառման արդյունքն է եղել: Ավտովթարի մեխանիզմը և վարորդների գործողությունները գնահատելիս նոր փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ քննչական փորձարարության տվյալները կիրառելի են տրված եզրակացության տարբերակների նկատմամբ: Արդյունքում՝ բողոքաբերները եզրահանգել են, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն կարող դատական ակտը բեկանելու և նոր քննության ուղարկելու հիմք հանդիսանալ:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 7-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 4-ի դատավճռին:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարացման դատական ակտը բողոքարկելու սուբյեկտների շրջանակի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Վճռաբեկ դատարանի առջև սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք Ս.Սկրտչյանի բողոքի հիման վրա Գ.Գրիգորյանի արդարացման մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Ս.Սկրտչյանին մեղավոր ճանաչելու մասով այն օրինական ուժի մեջ թողնելու պայմաններում:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վե-*

*րաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը, իսկ սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 2-րդ և 2.1-րդ կետերով նախատեսված ակտերի դեմ՝ նաև արդարացվածը, դատապարտյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները: Քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները դատական ակտն իրավունք ունեն բողոքարկելու քաղաքացիական հայցի մասով: Քաղաքացիական հայցի մասով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև տվյալ գործով կողմեր չհանդիսացող անձինք, եթե դատական ակտն առնչվում է նրանց շահերին: Կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև դիմողն իրավունք ունեն վերաքննության կարգով բողոքարկելու սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը»:*

Վերաքննիչ բողոքարկման սուբյեկտների շրջանակը սահմանող մեջբերված նորմի մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Նարեկ Հարությունյանի գործով* որոշման մեջ՝ դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ. *«(...) վերաքննության կարգով բողոքարկման ենթակա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով սահմանված՝ Առաջին ատյանի դատարանի որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներին օրենսդիրն ըստ բողոքարկման իրավունքի ծավալի տարանջատել է խմբերի: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին նախադասության բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների ընդհանուր շրջանակը, ովքեր օժտված են բողոքարկման անսահմանափակ իրավունքով: Այդ սուբյեկտների շարքում ընդգրկված են ամբաստանյալը, նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը: Քննարկվող հոդվածի հաջորդող շարադրանքում օրենսդիրը նախատեսել է քրեական դատավարության այն մասնակիցներին, ովքեր օժտված են սահմանափակ բողոքարկման իրավունքով՝ իրավասու են բողոքարկել որոշումները որոշակի մասով կամ որոշումների որոշակի շրջանակ: (...)»* (տե՛ս Վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 30-ի՝ Նարեկ Հարությունյանի վերաբերյալ թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշման 14.1-րդ կետը):

Միևնույն ժամանակ *Մարատ և Կարեն Սարգսյանների գործով* որոշման մեջ անդրադառնալով դատավարության մասնակից չհանդիսացող անձի՝ քրեադատավարական իրավահարաբերություններին մասնակցելու իրավունքին՝ Վճռաբեկ դատարանը գտել է. *«[Ե]թե անձը դատավարության մասնակից չէ, սակայն վարույթն իրականացնող մարմնի ընդունած ակտով խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, ապա անձն իրա-*

*վունք ունի դիմել թե՛ դատարան և թե՛ վերադասության կարգով բողոքարկել դատական ակտը՝ իր իրավունքների պաշտպանության կամ խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել նրանց դիմումները և բողոքները:*

*[Դ]ատական պաշտպանության հիմնարար իրավունքը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր դատավարության մասնակից չեն, սակայն վարույթն իրականացնող մարմինների ընդունած որոշումն առնչվում է նրանց օրինական շահերին, ենթադրաբար խախտում է նրանց իրավունքներն ու ազատությունները:*

*[Դ]ատավարության մասնակից չհանդիսացող անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այսինքն՝ անձն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում պետք է դատարան դիմելու և իր խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա»* (տե՛ս Մարատ և Կարեն Սարգսյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշման 22-23-րդ կետերը):

*Մարատ և Կարեն Սարգսյանների* գործով վերը մեջբերված դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նաև *Հևոն և Ռուբիկ Թարվերդյանների* գործով որոշման շրջանակներում: Մասնավորապես, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ճևավորված այն հիմնարար մոտեցումը, ըստ որի՝ արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրիչ հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չպետք է այն աստիճան լինի, որ խաթարվի իրավունքի բուն էությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«[Ա]ռաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում առկա ճևակերպման պայմաններում չի ապահովվում դատավարության մասնակից չհանդիսացող անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը, ում իրավունքներին և օրինական շահերին առնչվում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, հետևաբար դատավարության մասնակից չհանդիսացող անձին հնարավորություն չի ընձեռվում վերադաս դատական ատյաններում վիճարկել իր շահերին առնչվող դատական ակտի օրինականությունը:*

*Ուստի, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքի իրացման արդյունավետ երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը, գտնում է, որ հարկ է վե-*

*րաքննիչ բողոք բերելու իրավունք նախատեսել նաև քրեական դատավարության մասնակից չհանդիսացող այն անձի համար, ում իրավունքներին և օրինական շահերին առնչվում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը (...)»* (տե՛ս Լևոն և Ռուբիկ Թարվերդյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԱՎԴ2/0007/01/12 որոշման 15-րդ կետը):

14. Վերահաստատելով մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածով նախատեսված են վերաքննիչ բողոքարկման սուբյեկտները, ինչպես նաև որոշակի սուբյեկտերի բողոքարկման իրավունքի սահմանափակումները (ընդհանուր կորմ): Որպես առաջին ատյանի դատարանի դատական ակտերը բողոքարկելու անսահմանափակ իրավունքով օժտված սուբյեկտներ օրենսդիրը նախատեսել է ամբաստանյալին, նրա պաշտպանին և օրինական ներկայացուցչին, մեղադրողին կամ վերադաս դատախազին, տուժողին, նրա ներկայացուցչին, օրինական ներկայացուցչին և իրավահաջորդին: Իրավունքի զարգացման գործառույթի շրջանակներում Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային պրակտիկայի արդյունքում վերաքննիչ բողոքարկման սուբյեկտների հիշյալ շրջանակում ընդգրվել են նաև բոլոր այն անձինք, ում իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին առնչվում է կոնկրետ դատական ակտը:

Զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարությունում մասնավոր շահեր հետապնդող անձանց համար վերաքննիչ բողոքարկումը իրավունքների պաշտպանության միջոց է: Հետևաբար ինչպես օրենքով նախատեսված բողոքարկման սուբյեկտների, այնպես էլ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց վերաքննիչ բողոքարկման իրավունքի ընդհանուր պայման է բողոքարկվող դատական ակտի՝ իրենց իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին առնչվելը:

15. Անդրադառնալով արդարացման դատավճռի բողոքարկման սուբյեկտների շրջանակի կապակցությամբ օրենսդրական կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի համաձայն.

*«1. Արդարացման դատավճիռը վերաքննիչ դատարանը կարող է բեկանել՝ կայացնելով մեղադրական դատավճիռ՝ ամբաստանյալի արդարացումն անհիմն լինելու մասին դատախազի, տուժողի կամ նրա ներկայացուցչի բողոքով:*

*2. Արդարացման դատավճիռն արդարացվածի բողոքով կարող է փոփոխվել արդարացման հիմքերի մասով»:*

Մեջբերված նորմի մեկնաբանումից հետևում է, որ դրանով նախատեսված են արդարացման դատավճռի արդարացման մասով բողոքարկման

սուբյեկտների առանձին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածով նախատեսվածից տարբերվող շրջանակ (հատուկ նորմ):

Այլ խոսքով, արդարացման դատավճռի առանձնահատկություններով պայմանավորված օրենսդիրը նախատեսել է արդարացման դեպքում դրա բողոքարկման սուբյեկտների սահմանափակ շրջանակ: Մասնավորապես, քննարկվող դատական ակտն անձի արդարացումն անհիմն լինելու մասով կարող է բողոքարկվել դատախազի, տուժողի կամ նրա ներկայացուցչի, իսկ արդարացման հիմքերի մասով՝ արդարացվածի կողմից: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ հիշատակված սուբյեկտների իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին դատավճռի առնչվելն անձի արդարացման մասով պայմանավորված է նրանց դատավարական կարգավիճակով, ինչն արդեն իսկ հաշվի է առնված օրենսդրի կողմից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդված):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը *(տե՛ս, mutatis mutandis, Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման 21-րդ կետը)*: Մասնավորապես, անձի արդարացման մասով դատավճռի բողոքարկման սուբյեկտների շրջանակը որոշելիս դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի կարգավորումներով:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ հնարավոր են այնպիսի բացառիկ իրավիճակներ, երբ անձի արդարացումն անմիջականորեն առնչվի քննարկվող նորմով չնախատեսված անձի (օրինակ՝ նույն գործով այլ ամբաստանյալի) շահերին: Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, երբ ամբաստանյալներից մեկի մեղքը բացառում է մյուսի մեղավորությունը (շահերի բախում), ամբաստանյալներից մեկը փաստացի տուժել է մյուս ամբաստանյալի կատարած արարքից (կարգավիճակի երկակիություն): Նման դեպքերում վերաքննիչ դատարանը բողոքը վարույթ ընդունելիս պետք է պարզի՝ արդյո՞ք տվյալ ամբաստանյալի արդարացումն առերևույթ առնչվում է բողոքաբերի իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին. եթե ոչ, ապա նշված բողոքը չի կարող ընդունվել վարույթ՝ ոչ պատշաճ սուբյեկտի կողմից բերված լինելու հիմքով: Քարձրացված հարցադրմանը դրական պատասխան տալու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է օրենքով սահմանված կարգով քննարկել բողոքը:

16. Սույն գործի փաստերից երևում է, որ Սիրեկան Սկրտչյանին և Գևորգ Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք թույլ են տվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներ, որի հետևանքով նրանց վարած ավտոմեքենաները բախվել են միմյանց՝ անզգուշությամբ առաջացնե-

լով Ս.Մկրտչյանի վարած «ԳԱԶ 31029» մակնիշի 15 SS 255 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջևի ճստատեղի ուղևոր Արգամ Մկրտչյանի մահը: Գ.Գրիգորյանին մեղսագրվել է նաև նույն ավտոմեքենայի հետևի աջ կողմում նստած ուղևորուհի Կարինե Մկրտչյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու հետևանքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Նախաքննության մարմնի որոշումներով Արգամ և Կարինե Մկրտչյանները ճանաչվել են տուժող, իսկ Սիրանուշ Նաղարյանը՝ տուժող Արգամ Մկրտչյանի իրավահաջորդ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռով Ս.Մկրտչյանը մեղավոր է ճանաչվել իրեն առաջադրված մեղադրանքում, իսկ Գ.Գրիգորյանն արդարացվել է (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Հիշյալ դատավճիռն ամբողջությամբ բողոքարկել է Ս.Մկրտչյանի պաշտպան Մ.Մկրտչյանը: Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը Գ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելու մասով, բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

17. Նախորդ կետում շարադրված փաստերը գնահատելով 15-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Գ.Գրիգորյանի արդարացումը տեսականորեն կարող էր առնչվել մյուս ամբաստանյալ Ս.Մկրտչյանի իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին, եթե գործի փաստական հանգամանքների վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի տված գնահատականները Ս.Մկրտչյանի մասով ազդեին գործի ելքի վրա: Սակայն Ս.Մկրտչյանին մեղավոր ճանաչելու մասով դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելով՝ Վերաքննիչ դատարանը, ըստ էության, հաստատված է համարել, որ Ս.Մկրտչյանի և Գ.Գրիգորյանի միջև առկա չէ շահերի բախում: Միևնույն ժամանակ Ս.Մկրտչյանին մեղավոր ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասով Վերաքննիչ դատարանի որոշումը Ս.Մկրտչյանի կամ նրա պաշտպանի կողմից բողոքարկված չէ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը զրկված է Գ.Գրիգորյանի արդարացումը Ս.Մկրտչյանի իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին փաստացի առնչվելու հարցն ըստ էության քննարկման առարկա դարձնելու իրավասությունից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր Ս.Մկրտչյանի բողոքի հիման վրա Գ.Գրիգորյանի արդարացման մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Ս.Մկրտչյանին մեղավոր ճանաչելու մասով այն օրինական ուժի մեջ թողնելու պայմաններում:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի և 400-րդ հոդվածի խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի

հիման վրա հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն իրավասու չէ անդրադառնալ բողոքաբերի կողմից բարձրացված մնացած փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գևորգ Մայիսի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 7-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 4-ի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**18.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱՐԴ/0116/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատախազ | Ա.ԾԱՀԲԱԶՅԱՆԻ |
| ամբաստանյալներ | Ս.ՊԱՊԻԿՅԱՆԻ |
| | Ա.ՍԱՐԳՍՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սամվել Սիրեկանի Պապիկյանի և Արարատ Թորգոմի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2015 թվականի հունիսի 3-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 62214315 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների 1-ին մասերի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ Սամվել Սիրեկանի Պապիկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մե-

ղաղրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով: Նույն մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի

3-ի որոշմամբ Արարատ Թորգոմի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի

38-314-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով և 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով:

2015 թվականի հոկտեմբերի 20-ին Ս.Պապիկյանի և Ա.Սարգսյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 13-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Սամվել Պապիկյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով առաջադրված մեղադրանքում, և նա արդարացվել է: Նույն դատավճռով ճանաչվել և հռչակվել է նաև Արարատ Սարգսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով առաջադրված մեղադրանքում, և նա արդարացվել է:

Վճռվել է նաև ամբաստանյալներ Ս.Պապիկյանի և Ա.Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, վերացնել:

3. Մեղադրող Ա.Շահբազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հունիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 13-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դավթյանը բերել է վճռաբեկ բողոք, ինչը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Ս.Պապիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«2005 թվականից աշխատելով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունքում, որպես առաջատար մասնագետ, ի պաշտոնե հանդիսանալով իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, դատարանի դատավճռով փորձաշրջա-*

*նի մեջ գտնվող դատապարտյալ Արարատ Սարգսյանի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս 2014թ. հոկտեմբերի 23-ին, նոյեմբերի 28-ին և 2015թ. հունվարի 26-ին անձնական այլ դրդումներով կատարել է պաշտոնեական կեղծիք:*

*Այսպես.*

*ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. օգոստոսի 28-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ազատազրկման 4 տարի ժամկետով դատապարտված և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ երկու տարի ժամկետով նույն դատավճռով սահմանված փորձաշրջանում գտնվող ՀՀ Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղի բնակիչ Արարատ Սարգսյանին 2013թ. նոյեմբերի 5-ին այլընտրանքային պատիժների կատարման Արմավիրի բաժանմունքի առաջատար մասնագետ Սամվել Պապիկյանը վերցրել է հաշվառման, նրա անվամբ կազմել անձնական գործ և նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, ՀՀ կառավարության 26.10.2006թ. 1561-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության» կարգի 50-րդ հոդվածով սահմանված պահանջի համաձայն, վերջինիս պարտավորեցրել է նախ՝ ամիսը երեք, իսկ հետագայում ամիսը երկու անգամ ներկայանալ բաժանմունք և ստորագրել անձնական գործին կցված պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող բաժանմունքի պետի կողմից հաստատված ժամանակացույցում:*

*2014թ. հոկտեմբերի 23-ին Սամվել Պապիկյանը պրոֆիլակտիկ այցելություն է կատարել Ա.Սարգսյանի բնակության վայր, որտեղ վերջինս, գանգատվելով առողջական վիճակից, խնդրել է թույլատրել բաժանմունք ներկայանալու արդեն իսկ նշանակված հերթական օրը՝ 2014թ. հոկտեմբերի 30-ին, չներկայանալ և ժամանակացույցում հետին օրով ստորագրել: Ա.Սարգսյանի խնդրանքին ընդառաջելով՝ Սամվել Պապիկյանն անձնական այլ դրդումներով վերջինիս նկատմամբ կարեկցանքից դրդված կատարել է պաշտոնեական կեղծիք՝ Ա.Սարգսյանին թույլ է տվել այցելությունների փաստն ու հերթականությունը հաստատող պաշտոնական փաստաթղթում ակնհայտ կեղծ տեղեկություն գրառել, հետին օրով ստորագրել ժամանակացույցում՝ որպես հերթական ներկայանալու օր նշված՝ 2014թ. հոկտեմբերի 30-ի ամսաթվի դիմաց, որից հետո կեղծ տեղեկություն պարունակող այցելությունների ժամանակացույցը կցել է դատապարտյալի անձնական գործին, դրանով իսկ կազմել և հանձնել է կեղծ փաստաթուղթ: (...)*

*Այնուհետև, բաժանմունք ներկայանալու նախապես նշանակված հերթական օրը՝ 2014թ. նոյեմբերի 5-ին, դատապարտյալ Ա.Սարգսյանն այլընտրանքային պատիժների կատարման Արմավիրի բաժանմունք չի ներկայացել, այլ ներկայացել է նոյեմբերի 28-ին: Սամվել Պապիկյանից վերցնելով իր անձնական գործը, օգտագործելու նպատակով՝ պաշտոնական փաստաթուղթ կեղծելու դիտավորությամբ՝ բաժանմունք չներկայանալու համար հնարավոր*

*բարդություններից խուսափելու նպատակով Ա.Սարգսյանն իր անձնական գործին կցված ժամանակացույցում ստորագրել է ոչ միայն 2014թ. նոյեմբերի 28-ի ամսաթվի, այլ Ս.Պապիկյանից աննկատ նաև բաժանմունք չներկայանալու օրվա՝ 2014թ. նոյեմբերի 5-ի ամսաթվի դիմաց, փաստորեն՝ պաշտոնական փաստաթղթում կատարելով կեղծիք: Նույն պահին կեղծիքը հայտնաբերելով՝ Ս.Պապիկյանը համապատասխան միջոցներ ձեռնարկելու փոխարեն տեղի է տվել դատապարտյալ Ա.Սարգսյանի խնդրանքներին և վերջինիս դրդմամբ՝ նրան խղճալու և կարեկցելու անձնական այլ դրդումներով, կեղծիքը չի արձանագրել և կեղծ գրառումով պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող ժամանակացույցը հանձնել՝ կցել է դատապարտյալի անձնական գործին: (...)*

*Բացի այդ, բաժանմունք ներկայանալու նախապես նշանակված հերթական օրը՝ 2015թ. հունվարի 12-ին, դատապարտյալ Ա.Սարգսյանն այլընտրանքային պատիժների կատարման Արմավիրի բաժանմունք կրկին չի ներկայացել, այլ ներկայացել է հունվարի 26-ին: Սամվել Պապիկյանից վերցնելով իր անձնական գործը, օգտագործելու նպատակով պաշտոնական փաստաթուղթ կեղծելու դիտավորությամբ բաժանմունք չներկայանալու համար, հնարավոր բարդություններից խուսափելու նպատակով Ա.Սարգսյանն իր անձնական գործին կցված ժամանակացույցում ստորագրել է ոչ միայն 2015թ. հունվարի 26-ի ամսաթվի, այլ Ս.Պապիկյանից աննկատ նաև բաժանմունք չներկայանալու օրվա՝ 2015թ. հունվարի 12-ի ամսաթվի դիմաց, փաստորեն՝ պաշտոնական փաստաթղթում կատարելով կեղծիք: Նույն պահին կեղծիքը հայտնաբերելով՝ Ս.Պապիկյանը համապատասխան միջոցներ ձեռնարկելու փոխարեն տեղի է տվել դատապարտյալ Ա.Սարգսյանի խնդրանքներին և վերջինիս դրդմամբ՝ նրան խղճալու և կարեկցելու անձնական այլ դրդումներով, կեղծիքը չի արձանագրել և կեղծ գրառումով պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող ժամանակացույցը հանձնել՝ կցել է դատապարտյալի անձնական գործին: (...)*

*Այսպիսով, ՀՀ ՄՆ ՔԿ վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունքի առաջատար մասնագետ Սամվել Պապիկյանին մեղսագրվում են. 1-ին դրվագով՝ պաշտոնատար անձի կողմից անձնական դրդումներով կեղծ փաստաթուղթ կազմելու և հանձնելու, 2-րդ և 3-րդ դրվագներով՝ նույն դրդումներով կեղծ փաստաթղթերը հանձնելու հանրորեն վտանգավոր արարքները, որոնք նախատեսվում են ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 132-134):

5.1. Ա.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, *«դատարանի դատավճռի համաձայն, գտնվելով փորձաշրջանի մեջ, իր վարքագծի նկատմամբ վերահսկողությունն իրականացնող ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրան-*

քային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունքի պաշտոնատար անձին 2014թ. հոկտեմբերի 23-ին դրդել է պաշտոնական կեղծիք կատարելուն, իսկ 2014թ. նոյեմբերի 28-ին և 2015թ. հունվարի 26-ին պաշտոնական փաստաթուղթ է կեղծել և պաշտոնատար անձին դրդել կեղծ փաստաթուղթ հանձնելուն:

Այսպես.

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2013թ. օգոստոսի 28-ի դատավճռով Արարատ Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքում և դատապարտվել ազատազրկման 4 տարի ժամկետով: Նույն դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ճնով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և նույն դատավճռով սահմանվել է փորձաշրջան երկու տարի ժամկետով՝ նրա վարքի նկատմամբ հետագա վերահսկողությունը դնելով ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի բնակության վայրի բաժանմունքի վրա: 2013թ. նոյեմբերի 5-ին Արարատ Սարգսյանը հաշվառվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունքում և ՀՀ Կառավարության 26.10.2006թ. 1561-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության» կարգի 50-րդ հոդվածով սահմանված պահանջի համաձայն, պարտավորեցվել է նախ՝ ամիսը երեք, իսկ հետագայում ամիսը երկու անգամ բաժանմունք ներկայանալու և անձնական գործին կցված՝ պաշտոնական փաստաթուղթ ժամանակացույցում ստորագրելու մասին:

2014թ. հոկտեմբերի 23-ին՝ դատապարտյալ Արարատ Սարգսյանի վարքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ այլընտրանքային պատիժների կատարման Արմավիրի բաժանմունքի առաջատար մասնագետ Սամվել Պապիկյանի կողմից պրոֆիլակտիկ նպատակով դատապարտյալի բնակության վայր կատարած այցելության ժամանակ, Արարատ Սարգսյանը, գանգատվելով առողջական խնդիրներից, խնդրել է նրան թույլատրել նշանակված հերթական օրը՝ 2014թ. հոկտեմբերի 30-ին, բաժանմունք չներկայանալ և ժամանակացույցում ստորագրել հետին օրվանով: Արարատ Սարգսյանի դրդմամբ և նրան ընդառաջելով՝ Ս.Պապիկյանը համաձայնել է կատարել պաշտոնեական կեղծիք՝ անձնական այլ դրդումներով կազմել և հանձնել կեղծ փաստաթուղթ, և նրան թույլ է տվել այցելությունների փաստն ու հերթականությունը հավաստող պաշտոնական փաստաթղթում ակնհայտ կեղծ տեղեկություն գրառել, ստորագրել ժամանակացույցում՝ որպես հերթական ներկայանալու օր նշված՝ 2014թ. հոկտեմբերի 30-ի ամսաթվի դիմաց: (...)

Այնուհետև, 2014թ. հոկտեմբերի վերջերին Արարատ Սարգսյանը, մեկնելով Ռուսաստանի Դաշնություն, այլընտրանքային պատիժների կատար-

*ման Արմավիրի բաժանմունք ներկայանալու նախապես նշանակված հերթական օրը՝ 2014թ. նոյեմբերի 5-ին, բաժանմունք չի ներկայացել, այլ ներկայացել է նոյեմբերի 28-ին և առաջատար մասնագետ Սամվել Պապիկյանից ստանալով իր անձնական գործը, պաշտոնական փաստաթուղթ կեղծելու դիտավորությամբ և այն օգտագործելու իր անձնական գործին կցելու և չներկայանալու համար հնարավոր բարդություններից խուսափելու նպատակով, ժամանակացույցում ստորագրել է ոչ միայն 2014թ. նոյեմբերի 28-ի ամսաթվի, այլ Սամվել Պապիկյանից աննկատ նաև բաժանմունք չներկայանալու օրվա՝ 2014թ. նոյեմբերի 5-ի ամսաթվի դիմաց, փաստորեն՝ օգտագործելու նպատակով պաշտոնական փաստաթղթում կատարելով կեղծիք: Իսկ կեղծիքը Ս.Պապիկյանի կողմից հայտնաբերելուց հետո Արարատ Սարգսյանը խնդրել, համոզել է նրան այն չարձանագրել և համապատասխան միջոցներ չձեռնարկել, ի վերջո, դրդել վերջինիս պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող կեղծ գրառումով ժամանակացույցը հանձնել՝ կցել իր անձնական գործին: (...)*

*Բացի այդ, 2015թ. հունվարի սկզբներին գտնվելով Ռուսաստանի Դաշնությունում և նախապես նշանակված օրը՝ 2015թ. հունվարի 12-ին բաժանմունք չներկայանալով՝ Արարատ Սարգսյանն ԱՊԿ Արմավիրի բաժանմունք է այցելել միայն 2015թ. հունվարի 26-ին և անձնական գործում հունվարի 26-ի ամսաթվի դիմաց ստորագրելով՝ պաշտոնական փաստաթուղթ կեղծելու դիտավորությամբ և այն օգտագործելու՝ իր անձնական գործին կցելու և չներկայանալու համար հնարավոր բարդություններից խուսափելու նպատակով Սամվել Պապիկյանից աննկատ ստորագրել է նաև բաժանմունք չներկայանալու օրվա՝ 2015թ. հունվարի 12-ի ամսաթվի դիմաց, փաստորեն՝ օգտագործելու նպատակով պաշտոնական փաստաթղթում կատարելով կեղծիք: Իսկ կեղծիքը Ս.Պապիկյանի կողմից հայտնաբերելուց հետո Արարատ Սարգսյանը խնդրել, համոզել է նրան դարձյալ չարձանագրել այն, ի վնաս իրեն միջոցներ չձեռնարկել և Ս.Պապիկյանի մոտ խղճահարություն առաջացնելով՝ վերջինիս դրդել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող կեղծ գրառումով ժամանակացույցը հանձնել՝ կցել իր անձնական գործին: (...)*

*Այսպիսով, դատարանի դատավճռով սահմանված փորձաշրջանում գտնվող դատապարտյալ Արարատ Սարգսյանին մեղսագրվում են. 1-ին դրվագով՝ պաշտոնատար անձին կեղծ փաստաթուղթ կազմելուն և հանձնելուն դրդելու, 2-րդ և 3-րդ դրվագներով՝ օգտագործելու նպատակով պաշտոնական փաստաթուղթ կեղծելու և պաշտոնատար անձին կեղծ փաստաթղթերը հանձնելուն դրդելու հանրորեն վտանգավոր արարքները, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին և 38-314-րդ հոդվածի 1-ին մասերով, 325-րդ հոդվածի 1-ին և 38-314-րդ հոդվածի 1-ին մասերով»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 122-124):

6. Առաջին ատյանի դատարանը, ճանաչելով և հռչակելով ամբաստանյալների անմեղությունը վերջիններիս առաջադրված մեղադրանքներում, ի թիվս այլնի, փաստել է.*«(...) [Ի]ր բնույթով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում տարվող և դատապարտյալների անձնական գործին կցվող այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող «ժամանակացույցը» իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ չի կարող հաստատել և Ա.Սարգսյանի որևէ իրավունքի ծագում չի կարող առաջացնել:*

*Անդրադառնալով մեղադրող Ա.Շահբազյանի այն պնդմանը, որ նշված «ժամանակացույցը» ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ սահմանված և պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող դատապարտյալների անձնական գործի անբաժան մասն է, ուստի՝ նույնպես համարվում է պաշտոնական փաստաթուղթ, դատարանն այն անհիմն է համարում:*

*(...)*

*Դատարանն արձանագրում է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց» ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ չի հաստատվել, հետևաբար այն չի կարող համարվել պաշտոնական փաստաթուղթ, քանի որ հատկանշական է, որ «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26-ը հոկտեմբերի 2006թ. թիվ 1561-Ն որոշման 5-րդ գլխի դրույթներով սահմանված են պաշտոնական փաստաթղթերի սպառիչ ցանկը (ձև 1, 2, 3, 4, 5, 9, 10), սակայն հիշյալ իրավական ակտի նույն դրույթներով նախատեսված չէ դատապարտյալի ներկայանալու ժամանակացույց սահմանող ձևաթղթի կազմման և այն շրջանառության մեջ դնելու կարգը:*

*(...)*

*Վերլուծելով ՀՀ արդարադատության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետ Լ.Ավետիսյանի կողմից ներկայացված գրությունը, այն, որ ՀՀ արդարադատության նախարարության համաձայնությամբ այլընտրանքայի պատիժների կատարման բաժնի կողմից կազմվել և շրջանառության մեջ է դրվել դատապարտյալի հաճախումների միասնական նմուշի ձև, պարզ և հասկանալի է դառնում, որ դատապարտյալների հաճախումների ժամանակացույցը պաշտոնական փաստաթուղթ չէ, այլ ուղղակի միասնական համաձայնությամբ ստեղծված ձևանմուշ է, ուստի դրանում խախտումներ կատարելը չի կարող իր մեջ պարունակել պաշտոնական փաստաթղթերի կեղծման հանցակազմի հատկանիշներ»* (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 108-119):

7. Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Առաջին ատյանի դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, միևնույն ժա-

մանակ արձանագրել է. *«(…)[Գ]ործով ձեռք բերված ապացույցների հիման վրա հաստատված չէ այն հանգամանքը, որ պաշտոնատար անձ հանդիսացող Ս.Պապիկյանն անձամբ կազմել, առավել ևս հանձնել է կեղծ փաստաթուղթ: Համենայն դեպս, գործով կազմված մեղադրական եզրակացության մեջ նկարագրված փաստական հանգամանքներն այդ մասին չեն վկայում:*

*(…) Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտնում է նաև, որ պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու շարժառիթ չեն կարող համարվել անձին խղճալու և կարեկցելու դրդումները: Քրեական օրենքով որպես պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու շարժառիթներ են համարվում շահադիտական նպատակը կամ անձնական այլ դրդումները՝ ոչ գույքային բնույթի օգուտ ստանալը, կարիերիզմը, հովանավորչությունը, վրեժը, նախանձը, իրականությունը գունազարդելու ցանկությունը և այլն: Ինչպես տեսնում ենք, հանցանքի շարժառիթ հանդիսացող անձնական այլ դրդումները անձին բացասականորեն բնութագրող հանգամանքներ են, և այդ շարքում խղճալն ու կարեկցելը որպես մարդկային դրական հատկանիշներ դժվար է պատկերացնել:*

*(…) Ամբաստանյալ Արարատ Սարգսյանի նկատմամբ արդարացման դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով բեկանելու հիմքերը բացակայում են նաև այն պատճառով, որ եթե նույնիսկ վերջինիս գործողությունները պարունակեին պաշտոնական փաստաթուղթ կեղծելու հատկանիշներ, ապա դրանք իրենց նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չեն պատճառել և չէին կարող պատճառել»* (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթ 240):

8. Դատապարտյալ Ա.Սարգսյանի անձնական գործին կցված՝ դատապարտյալի այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույցը գտնվում է նյութական կրիչի վրա, ներառում է փաստաթղթի տրման օրը, Ա.Սարգսյանի այցելությունների ամսաթվերի դիմաց դրված ստորագրությունները՝ հաստատված ՀՀ ԱՆ ՔԿՎ ԱՊԿԲ Արմավիրի բաժանմունքի ժ/պ, արդարադատության մայոր Է.Տոնիկյանի ստորագրությամբ և բաժանմունքի կնիքով (տե՛ս Ա.Սարգսյանի անձնական գործը, թերթ 3):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել դատական սխալ, սխալ են մեկնաբանել նյութական իրավունքը, որն ազդել է գործի ելքի վրա: Բողոք բերած անձի կարծիքով՝ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է նաև օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկների՝ բողոքի հեղինակը նշել է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 325-րդ հոդվածների հանցակազմերի առարկա հանդիսացող «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը՝ դրան հաղորդելով իր քրեաիրավական նշանակությանը չհամապատասխանող սահմանափակ իմաստ: Ըստ բողոքաբերի՝ դատարանները, առանց պատճառաբանության և օրենսդրական որևէ հիմնավորման, լրացուցիչ չափանիշներ են սահմանել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրվող փաստաթուղթը պաշտոնական համարելու համար: Մասնավորապես՝ գտել է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույցը» չի կարող համարվել պաշտոնական փաստաթուղթ, քանի որ այն ամրագրված չէ նորմատիվ իրավական ակտով:

Բողոքաբերը, վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները, ինչպես նաև վկայակոչելով այն հանգամանքը, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույցը» մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի կողմից, և այդ մարմնի անունից տրվող տեղեկատվություն է պարունակում, որը գտնվում է նյութական կրիչի վրա ու հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, եզրակացրել է, որ այն անհարժեշտ է համարել պաշտոնական փաստաթուղթ:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ստորադաս դատարանների՝ պաշտոնական փաստաթղթի վերաբերյալ մեկնաբանությունները հակասում են Ս.Գաբրիելյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի հուլիսի 23-ի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան)՝ *Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

9.1. Միաժամանակ բողոքաբերը փաստարկել է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, ըստ որի՝ պաշտոնեական կեղծիք կատարելու շարժառիթ չեն կարող համարվել անձին խղճալու և կարեկցելու դրդումները: Բողոքի հեղինակի կարծիքով՝ պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու շարժառիթի նման մեկնաբանությունն անհիմն է, որովհետև անձնական այլ դրդումների համատեքստում որպես դրա դրսևորման ձև կարող է դիտվել նաև անձին խղճալու և կարեկցելու պատճառով այլ անձին օգնելու, սույն գործով նշված շարժառիթով Ս.Պապիկյանի կողմից Ա.Սարգսյանի համար անբարենպաստ հետևանքներ չառաջացնելու միտումը:

9.2. Վերոգրյալի հետ մեկտեղ բողոքաբերը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանի գործողություններն իրենց նվազ կարևորության պատճառով հասարակա-

կան վտանգավորություն չեն ներկայացնում, փաստել է, որ այդպիսի դատողությունն անհիմն է, քանի որ դատաքննությամբ հիմնավորվել է, որ Ա.Սարգսյանի դիտավորությունն ուղղված չի եղել հենց նվազ կարևորության արարք կատարելուն և այնպիսի հետևանքներ պատճառելուն, որոնք չեն ներկայացնում բարձր հասարակական վտանգավորության աստիճան, այլ Ա.Սարգսյանը հանրորեն վտանգավոր արարքը կատարել է իր վրա դրված պարտականությունները կատարելու կամ պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու հանգամանքը թաքցնելու նպատակով, ինչի արդյունքում էական վնաս է պատճառվել պետությանը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 13-ի դատավճիռը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 325-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների առարկա հանդիսացող «պաշտոնական փաստաթուղթ» հասկացության և քրեաիրավական նշանակության մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 325-րդ հոդվածների իմաստով պաշտոնական փաստաթուղթ չդիտելու առնչությամբ ստորադաս դատարանների ձևավորած դատողություններն արդյոք հիմնավորված և պատճառաբանված են:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում հետևյալ արարքի համար. «*Պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, ջնջվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «*Իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ*

*կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը»:*

13.1. Մեջբերված հանցակազմերի դիսպոզիցիաների նկարագրությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ, 325-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների պարտադիր հատկանիշ է համարվում հանցագործության առարկան, որոնք են ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի դեպքում՝ *պաշտոնական փաստաթուղթը*, իսկ 325-րդ հոդվածի պարագայում՝ *իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող* վկայականը կամ *պաշտոնական այլ փաստաթուղթը*, ինչպես նաև կնիքը, դրոշմը, ձևաթուղթը, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանցակազմերի առարկա հանդիսացող պաշտոնական փաստաթղթի բովանդակության ու հատկանիշների մեկնաբանմամբ պայմանավորված՝ արարքը համապատասխան հոդվածներով որակելիս գործնականում առաջացող խնդիրները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վեր հանել և պարզաբանել ՀՀ քրեական օրենսգրքի

314-րդ, 325-րդ հոդվածների իմաստով «պաշտոնական փաստաթուղթ» եզրույթի բնութագրական հատկանիշները:

Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում նշել, որ ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի առանձին հատկանիշների՝ հատկապես հանցագործության օբյեկտի և սուբյեկտի տարբերություններից՝ նշյալ հանցակազմերի իմաստով «պաշտոնական փաստաթուղթ» եզրույթի բնութագրական տարրերը ոչ բոլոր դեպքերում են համընկնում: Ուստիև Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալ երկու հանցակազմերի առարկայի հատկանիշները պետք է քննարկման առարկա դարձնել միմյանցից տարանջատված:

14. Այսպես՝ վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկան՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փաստաթուղթն այդ հոդվածի իմաստով պաշտոնական դիտարկվելու համար պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով՝

1) այն պետք է ունենա իրավաբանական նշանակություն, մասնավորապես՝ պետք է պարունակի կամ դրանով պետք է տրամադրվի իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկատվություն: Այլ կերպ՝ փաստաթղթում առկա տեղեկությունը պետք է հավաստի իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, իրադարձություններ, որոնք կարող են առաջացնել իրավական հետևանքներ՝ իրավունք տրամադրելու կամ դրանից զրկելու, պարտականություն սահմանելու կամ վերջինից ազատելու, իրավունքների և պարտականությունների ծավալը փոփոխության ենթարկելու տեսքով (որպես այդպիսին՝ կարող են լինել՝ աշխատավարձի մասին տեղեկանքը, ժա-

մանակավոր անաշխատունակության թերթիկը, անձնական սանիտարական (բժշկական) գրքույկը, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը և այլն): Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ փաստաթուղթը պաշտոնական դիտարկվելու տեսանկյունից *պարտադիր չէ, որ այն իրավական հետևանքներ առաջացրած լինի*, այլ խոսքով՝ բավարար է միայն, որ այն իր բնույթով օժտված լինի այդպիսի հետևանքներ առաջացնելու, իրավահարաբերությունների վրա ազդեցություն ունենալու (իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու) հնարավորությամբ,

2) հաշվի առնելով քննարկվող հանցագործության օբյեկտը (այն ուղղված է պետական ծառայության բնականոն գործունեության դեմ), ինչպես նաև հանցագործության սուբյեկտը (սուբյեկտը հատուկ է, որպես այդպիսին՝ կարող է լինել միայն պաշտոնատար անձը, ով համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափանիշներին)՝ այն, որպես կանոն, պետք է տրված լինի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կողմից,

3) այն պետք է պատշաճ կերպով ձևակերպված լինի: Մասնավորապես՝ փաստաթուղթը՝

- պետք է գտնվի նյութական կամ էլեկտրոնային կրիչի վրա,
- պետք է ունենա որոշակի վավերապայմաններ, օրինակ՝ կնիք, դրոշմ, ստորագրություն և այլն: Նշվածի համատեքստում հարկ է նկատել, որ փաստաթղթի ձևակերպմանը վերաբերող սույն հատկանիշների առկայությունը, ինչպես նաև փաստաթղթի՝ համապատասխան մարմիններում փաստաթղթաշրջանառության օբյեկտ լինելը, հաշվետվողական բնույթ ունենալը, դրա նկատմամբ հսկողությունը կարող են վկայել փաստաթղթի իրավական բնույթի և դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության մասին:

15. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով «իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթ» եզրույթի բնութագրական հատկանիշներին՝ Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ հիշյալ եզրույթը ենթադրում է, որ համապատասխան հանցակազմի առարկան է կազմում իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, իրադարձություն հավաստող այն փաստաթուղթը, որը տրամադրում է որևէ իրավունք կամ ազատում պատասխանատվությունից: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խնդրո առարկա հոդվածի իմաստով «պատասխանատվությունից ազատել» եզրույթը ներառում է ինչպես իրավական պատասխանատվության որևէ տեսակից (քրեական, վարչական, կարգապահական, քաղաքացիաիրավական և այլն), այնպես էլ *որևէ պարտականությունից ազատելու հատկանիշը:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման նախորդ կետում մատնանշված՝ պաշտոնական փաստաթղթի ձևակերպմանը վերաբերող հատկանիշները (3-րդ ենթակետ) նույնությամբ վերաբերելի, բնորոշ են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով պաշտոնական փաստաթղթերին:

15.1. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերլուծության ենթարկել նաև քննարկվող հոդվածի (ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդված) իմաստով պաշտոնական փաստաթղթի տրման սուբյեկտի հետ կապված հիմնահարցը:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն իր՝ 2006 թվականի հունիսի 1-ի թիվ ՎՔԲ-106/06 գործով որոշման շրջանակներում փաստել է. «*Պաշտոնական են համարվում այն փաստաթղթերը, որոնց պետական մարմինների կողմից տրվում է իրավաբանական նշանակություն: Պաշտոնական փաստաթղթերը կարող են տրվել ինչպես պետական մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ այլ իրավաբանական անձանց, առևտրային կամ այլ տեսակի կազմակերպությունների կողմից: Այդպիսիք կարող են հանդիսանալ նաև առևտրային բանկերում կազմվող վարկային կամ այլ ֆինանսական փաստաթղթերը, քանի որ դրանք ևս ունեն իրավաբանական նշանակություն»:*

*Ս.Գաբրիելյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*(…) Պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ*» (տե՛ս *Սամվել Գաբրիելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵՇԴ/0115/01/09 որոշման 16-րդ կետը):

Միաժամանակ հարկ է նշել, որ 2006 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումների կապակցությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է. «(…) *Վճռաբեկ դատարանը [նշել է, որ] ցանկացած փաստաթուղթ, որին իշխանություններն իրավական նշանակություն են տալիս, անկախ նրանից այն տրվել է պետական մարմինների, թե առևտրային իրավաբանական անձանց կողմից, (…) ՔՕ-ի 325-րդ հոդվածով համապատասխանում են «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությանը: Դատարանը չի գտնում, որ «պաշտոնական փաստաթուղթ» հասկացության նման մեկնաբանությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կեղծման հանցանքի էությանը, կամ, այն ընդունելով, ներպետական դատարանները ընդլայնել են հանցանքի հասկացությունը այնքան, որ այն բացահայտ կերպով դուրս է մնացել դրա գործողության շրջանակից (…)*» (տե՛ս *Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 5-ի (գանգատ թիվ 23341/06) վճռի 61-րդ կետը):

15.2. Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի

իմաստով իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթ կարող է տրվել ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց կազմակերպությունների, այնպես էլ այլ իրավաբանական անձանց կողմից:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ փաստաթուղթը ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 325-րդ հոդվածների իմաստով պաշտոնական դիտարկելու համար դատարանները յուրաքանչյուր դեպքում պարտավոր են բազմակողմանի գնահատման ենթարկել այն և պարզել, թե արդյոք վերջինս օժտված է պաշտոնական փաստաթղթին բնորոշ, ի թիվս այլնի, սույն որոշմամբ մատնանշված հատկանիշներով՝ հատկապես ուշադրություն դարձնելով դրա բնույթին, իրավաբանական նշանակություն ունենալուն:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

ա) Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում փաստել է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում տարվող և դատապարտյալների անձնական գործին կցվող «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույցը» իր բնույթով իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ չի կարող հաստատել և Ա.Սարգսյանի որևէ իրավունքի ծագում չի կարող առաջացնել:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ չի հաստատվել: Բացի այդ, տվյալ որոշման 5-րդ գլխում սահմանվում է պաշտոնական փաստաթղթերի սպառիչ ցանկը (ձև 1, 2, 3, 4, 5, 9, 10), որում, սակայն, նախատեսված չէ դատապարտյալի ներկայանալու ժամանակացույց սահմանող ձևաթղթի կազմման և այն շրջանառության մեջ դնելու կարգ:

Վերոնշյալի և գործում առկա ապացույցների համադրության արդյունքում Առաջին ատյանի դատարանը եկել է այն եզրահանգման, որ դատապարտյալների հաճախումների ժամանակացույցը պաշտոնական փաստաթուղթ չէ, այլ միասնական համաձայնությամբ ստեղծված ձևանմուշ, որում խախտումներ կատարելը չի կարող իր մեջ պարունակել պաշտոնական փաստաթղթերի կեղծման հանցակազմի հատկանիշներ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

բ) Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններին, միաժամանակ արձանագրել է, որ գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա հաստատված չէ այն հանգամանքը, որ պաշտոնատար անձ հանդիսացող Ս.Պապիկյանն անձամբ կազմել, առավել ևս հանձնել է կեղծ փաստաթուղթ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ գործով կազմված մեղադրական եզրակացության մեջ նկարագրված փաստական հանգամանքներն այդ մասին չեն վկայում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով պաշտոնեական կեղծիք կատարելու շարժառիթներին, փաստել է, որ անձին խղճալու և կարեկցելու դրդումները չեն կարող համարվել պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու շարժառիթ, քանի որ անձնական այլ դրդումների ներքո պետք է հասկանալ ոչ գույքային բնույթի օգուտ ստանալը, կարիերիզմը, հովանավորչությունը, վրեժը, նախանձը, իրականությունը գունազարդելու ցանկությունը և այլն: Այսինքն՝ ըստ Վերաքննիչ դատարանի՝ անձնական այլ դրդումներն անձին բացասականորեն բնութագրող հանգամանքներ են, և այդ շարքում խղճալն ու կարեկցելը որպես մարդկային դրական հատկանիշներ դժվար է պատկերացնել:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ արդարացման դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով բեկանելու հիմքերը բացակայում են նաև այն պատճառով, որ եթե նույնիսկ վերջինիս գործողությունները պարունակեին պաշտոնական փաստաթուղթ կեղծելու հատկանիշներ, ապա դրանք իրենց նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները եկել են սխալ եզրահանգման առ այն, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան բաժանմունքի կողմից տրված փաստաթուղթը՝ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը, ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 325-րդ հոդվածների իմաստով պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում:

Սույն որոշման 14-15.2.-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերը նշված փաստաթուղթն ներառում է համապատասխան հոդվածների իմաստով պաշտոնական դիտարկվելու համար անհրաժեշտ բոլոր հատկանիշները:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ն օժտված է հետևյալ հատկանիշներով՝

- այն իր բնույթով ունի իրավաբանական նշանակություն, հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, որոնք կարող են առաջացնել իրավական հետևանքներ: Մասնավորապես՝ վերջինս հավաստում է ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ դատապարտյալի կողմից բաժանմունք ամիսն առնվազն մեկ անգամ ներկայանալու իրավաբանական փաստը:

Միևնույն ժամանակ այն, ներառված լինելով դատապարտյալի անձնական գործում (դա բխում է ՀՀ կառավարության հիշյալ որոշման հավելվածի 49-րդ կետի 2-րդ պարբերությունից, ըստ որի՝ *անձնական գործում ներառվում են տեղեկություններ դատապարտյալի անձի, բնակության և աշխատանքի վայրերի, ինչպես նաև պատժի կատարման համար նշանակություն ունեցող այլ հարցերի մասին),* համապատասխան միջնորդության քննարկման ժամանակ կարող է ունենալ առանցքային նշանակություն պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը լուծելիս: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ փաստաթուղթը պաշտոնական դիտարկվելու տեսանկյունից պարտադիր չէ, որ այն իրավական հետևանքներ առաջացրած լինի, այլ բավարար է միայն, որ այն իր բնույթով օժտված լինի այդպիսի հետևանքներ առաջացնելու, իրավահարաբերությունների վրա ազդեցություն ունենալու հնարավորությամբ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետի 3-րդ ենթակետը), ինչպիսին սույն դեպքում հանդիսանում է «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը,

- այն կազմվել է պետական մարմնի կողմից, մասնավորապես՝ փաստաթուղթը տրվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատարի և բաժանմունքի անունից,

- այն պատշաճ կերպով ձևակերպված է, մասնավորապես՝ գտնվում է նյութական կրիչի վրա, կնքված է, նշված է փաստաթղթի տրման օրը, փաստաթղթում առկա տեղեկատվության (ի թիվս այլնի, դատապարտյալի բաժանմունք ներկայանալու օրերը՝ հաստատված վերջինիս ստորագրությամբ) իսկությունը վավերացված է Արմավիրի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատարի ստորագրությամբ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18.1. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, ըստ որի՝ *«այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույցը» իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ չի կարող հաստատել*: Ինչ վերաբերում է նույն դատարանի այն դիրքորոշմանը, որ *նշյալ փաստաթուղթը Ա.Սարգսյանի որևէ իրավունքի ծագում չի կարող առաջացնել*, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով պաշտոնական է համարվում ոչ միայն իրավունք վերապահող, այլև պատասխանատվությունից ազատող փաստաթուղթը: Իսկ սույն դեպքում այն դրսևորվել էր ոչ միայն նրանում, որ «ժամանակացույց»-ը իր բնույթով օժտված է համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությամբ (տե՛ս սույն որոշման նախորդ կետը), այլև նրանում, որ Ա.Սարգսյանը, իր վրա դրված պարտականությունը չկատարելով, մասնավորապես՝ համապատասխան օրերին (2014 թվականի նոյեմբերի 5-ին և 2015 թվականի հունվարի 12-ին) բաժան-

մունք չներկայանալով, միաժամանակ հետին ամսաթվով ստորագրել է չներկայացած օրերի դիմաց (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը), այսինքն՝ հավաստել է իր վրա դրված պարտականությունն իբր պատշաճ կերպով կատարված լինելու փաստը՝ դրանով իսկ իրեն ազատելով փաստացի չկատարված պարտականությունից (այդ առումով տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

18.2. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերը հիմնավորել են նաև նրանով, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը չի հաստատվել ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ, այդ իրավական ակտի դրույթներով նախատեսված չէ դատապարտյալի ներկայանալու ժամանակացույց սահմանող ձևաթղթի կազմման և այն շրջանառության մեջ դնելու կարգ, հետևաբար համապատասխան փաստաթուղթը չի կարող հանդիսանալ նշված հանցագործությունների առարկա համարվող պաշտոնական փաստաթուղթ (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Վերոգրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի և ՀՀ կառավարության հիշյալ որոշման հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը ստանձնել է պատիժը պայմանականորեն չկիրառելու կապակցությամբ փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն (մինչ կատարված համապատասխան օրենսդրական փոփոխությունները): Իսկ ՀՀ կառավարության համապատասխան որոշման հավելվածի 5-րդ գլխով սահմանված պահանջների, մասնավորապես՝ դատապարտյալի կողմից բաժանմունք ամիսն առնվազն մեկ անգամ ներկայանալու պարտականությունը սահմանող նորմի կատարումն ապահովելու նպատակով հիշյալ բաժնի կողմից կազմվել և շրջանառության մեջ էր դրվել միասնական ձևանմուշի փաստաթուղթ, որտեղ, ի թիվս այլնի, նշվել են դատապարտյալի ներկայանալու օրերը, իսկ դրանց դիմաց՝ վերջինիս ստորագրությունը: Այլ կերպ՝ վերահսկողության համար ընտրված սույն ձևը բխել է այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան բաժանմունքների կողմից դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և դատապարտյալի հիշյալ պարտականությունը սահմանող նորմի կատարումն ապահովելու պահանջներից, ուստիև ստորադաս դատարանների վերոգրյալ հետևությունները չեն կարող հիմնավոր համարվել: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում այն դատողությանը, որ փաստաթուղթը պաշտոնական դիտարկվելու համար պարտադիր է, որ այն անմիջականորեն հաստատված լինի նորմատիվ իրավական ակտով. որոշակի փաստաթղթի կազմման հնարավորությունը կարող է առանձին դեպքերում բխել նաև համապատասխան մարմնի ընդհանուր բնույթի լիազորություններից:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերքականությունը հավաստող ժամանակացույց»-ը ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 325-րդ հոդվածների իմաստով պաշտոնական փաստաթուղթ չդիտելու առնչությամբ ստորադաս դատարանների ձևավորած դատողությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

20. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի շրջանակներում արձանագրել է. «(…) [*Պ]աշտոնատար անձի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու շարժառիթ չեն կարող համարվել անձին խղճալու և կարեկցելու դրդումները: Քրեական օրենքով որպես պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու շարժառիթներ են համարվում շահադիտական նպատակը կամ անձնական այլ դրդումները՝ ոչ գույքային բնույթի օգուտ ստանալը, կարիերիզմը, հովանավորչությունը, վրեժը, նախանձը, իրականությունը գունազարդելու ցանկությունը և այլն: Ինչպես տեսնում ենք, հանցանքի շարժառիթ հանդիսացող անձնական այլ դրդումները անձին բացասականորեն բնութագրող հանգամանքներ են, և այդ շարքում խղճալն ու կարեկցելը, որպես մարդկային դրական հատկանիշներ, դժվար է պատկերացնել»* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վերաքննիչ դատարանի նշյալ դատողության առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ որոշակի հանգամանքի՝ որպես քննարկվող հանցակազմի շարժառիթ հանդիսացող անձնական այլ դրդումների դրսևորման ձև լինելու կամ չլինելու հարցը լուծելիս պետք է իբրև չափանիշ ընդունել ոչ թե դրա՝ իր բնույթով դրական կամ բացասական համարվելը, այլ այն, թե անձը դրա միջոցով արդյո՞ք ստացել է ոչ նյութական օգուտ: Այլ կերպ՝ ոչ նյութական օգուտ ստանալու հանգամանքն է այն ուղենիշը, որը թույլ կտա որոշելու քննարկվող հանցակազմի համապատասխան շարժառիթի առկայությունը կամ բացակայությունը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանի գործողություններն իրենց նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), և դրա կապակցությամբ բողոքաբերի՝ սույն որոշման 9.2.-րդ կետում բարձրացրած փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, իր վերոգրյալ հետևությունը պատճառաբանելու համար որևէ փաստարկ չներկայացնելով, Վճռաբեկ դատարանին զրկել է այդ հարցի առնչությամբ համարժեք իրավական գնահատական տալու հնարավորությունից (տե՛ս, mutatis mutandis, *Խրունզիկ Գալստյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 19-րդ կետը):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ գործում եղած ապացույցներով հաստատված չէ այն հանգամանքը, որ պաշտոնատար անձ հանդիսացող Ս.Պապիկյանն անձամբ կազմել և հանձնել է կեղծ փաստաթուղթ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճռաբեկ

դատարանը նախ արձանագրում է, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի և ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստական հանգամանքներից անմիջականորեն բխում է, որ Ս.Պապիկյանը «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը հանձնել, մասնավորապես՝ կցել է Ա.Սարգսյանի անձնական գործին: Այլ կերպ՝ կեղծ փաստաթուղթ հանձնելու փաստը հաստատված չլինելու առնչությամբ Վերաքննիչ դատարանի ձևավորած դիրքորոշումն անհիմն է: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև նկատի ունենալով, որ պաշտոնեական կեղծիքի հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայության հավաստման համար բավարար է հանցակազմի դիսպոզիցիայում նշված արարքներից որևէ մեկի կատարումը՝ Վճռաբեկ դատարանն այլևս հարկ չի համարում վերլուծության ենթարկել ստորադաս դատարանի նաև այն հետևությունը, որ Ս.Պապիկյանի կողմից կեղծ փաստաթուղթ անձամբ կազմելու հանգամանքը չի հաստատվում գործում եղած ապացույցներով:

21. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի առարկայի՝ պաշտոնական փաստաթղթի հասկացությունը, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի, հիմք է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում օրենքով սահմանված կարգով պետք է հանգի համապատասխան հետևության:

22. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Սամվել Սիրեկանի Պապիկյանի և Արարատ Թորգոմի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրվի չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Սամվել Սիրեկանի Պապիկյանի և Արարատ Թորգոմի Սարգսյանի վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 13-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Սամվել Սիրեկանի Պապիկյանի և Արարատ Թորգոմի Սարգսյանի նկատմամբ խափանման միջոց ընտրել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**19.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵՇԴ/0155/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատախազ | Տ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արամ Նորիկի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2015 թվականի ապրիլի 27-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 62209215 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ Արամ Նորիկի Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի նոյեմբերի 22-ին Ա.Վարդանյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 24-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Արամ Վարդանյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում, և նա արդարացվել է:

Վճռվել է նաև ամբաստանյալ Ա.Վարդանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, վերացնել:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հունիսի 2-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 24-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Ա.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(...) 2014 թվականի հուլիսի 9-ին ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ պատժի կրումից 1 տարի 6 ամիս 6 օր ժամկետով պայմանական վաղաժամկետ ազատված լինելով և 2014 թվականի օգոստոսի 5-ից հաշվառման մեջ գտնվելով ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Երևանի Էրեբունի և Նուբարաշեն բաժանմունքում, պարտավորություն ստանձնած լինելով չփոխելու մշտական բնակության վայրը, ամիսը երկու անգամ ներկայանալ և ստորագրել պաշտոնական փաստաթուղթ համարվող, անձնական գործին կցված՝ այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույցում՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ին այցելելով ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Երևանի Էրեբունի և Նուբարաշեն բաժանմունք՝ ստորագրել է նշված ամսաթվի դիմաց, որից հետո առանց թույլտվության ՌԴ մեկնելու և վերահսկողությունից չարամտորեն խուսափելու նպատակով կեղծել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող,*

*անձնական գործին կցված՝ այցելությունների հաշվառման փաստն ու հերքականությունը հավաստող ժամանակացույցը՝ ստորագրելով նաև «03.12.2014» ամսաթվի դիմաց, որից հետո մեկնել է ՌԴ և վերադարձել 2015 թվականի հունվարի 24-ին, խուսափել իր վրա դրված պարտականություններից»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 242-245):

6. Առաջին ատյանի դատարանը, ճանաչելով և հռչակելով Ա.Վարդանյանի անմեղությունը վերջինիս առաջադրված մեղադրանքում, ի թիվս այլոց, փաստել է.*«(...) [Ի]ր բնույթով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում տարվող և դատապարտյալների անձնական գործին կցվող այցելությունների հաշվառման փաստն ու հերքականությունը հավաստող «ժամանակացույցը» իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ չի կարող հաստատել և Արամ Վարդանյանի որևէ իրավունքի ծագում չի կարող առաջացնել:*

*Անդրադառնալով մեղադրող Տաթևիկ Խաչատրյանի այն պնդմանը, որ նշված «ժամանակացույցը» ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ սահմանված և պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող դատապարտյալների անձնական գործի անբաժան մասն է, ուստի՝ նույնպես համարվում է պաշտոնական փաստաթուղթ, դատարանն այն անհիմն է համարում՝ հետևյալ պատճառաբանությամբ:*

*Այսպես.*

*[Առաջին ատյանի դատարանում] հարցաքննված վկաները՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցներ Կարեն Գրիգորյանն ու Վաչիկ Գրիգորյանը, հայտնել են, որ քննարկվող «ժամանակացույցը» հատուկ մշակված և հաստատված չէ, այն կազմվում է յուրաքանչյուր բաժանմունքի կողմից առանձին, ազատ ոճով և նախատեսված է ներքին օգտագործման համար:*

*Միևնույն ժամանակ նշված վկաները հայտնեցին, որ դատապարտյալների վրա երկրից բացակայելու արգելք դրված չէ:*

*Բացի այդ, ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը:*

*Նշված փաստաթղթով հաստատվել են տասնյակից ավելի ձևաթղթեր, ցանկեր, տեղեկանքներ, ծանուցումներ և այլն:*

*[Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերքականությունը հավաստող ժամանակացույց»-ը ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ չի հաստատվել, հետևաբար՝ այն չի կարող համարվել պաշտոնական փաստաթուղթ:*

*Այսպիսով, [Առաջին ատյանի դատարանը] հանգել է հետևության, որ ամբաստանյալ Արամ Վարդանյանի գործողություններում բացակայում է ՀՀ*

*քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը, ուստի՝ բացակայում է նշված հոդվածով նախատեսված հանցակազմը (...)»* (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 73-75):

7. Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Առաջին ատյանի դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, միևնույն ժամանակ արձանագրել է. *«(…) [Առաջին ատյանի դատարանը], արդարացնելով ամբաստանյալ Ա.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, իրավացիորեն հանգել է ճիշտ հետևության՝ նկատի ունենալով հետևյալը.*

*ՀՀ կառավարության 26 հոկտեմբերի 2006 թվականի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը», ըստ որի՝ դատապարտյալի անձնական գործը հանդիսանում է պաշտոնական փաստաթուղթ:*

*Իսկ նույն որոշման 5-րդ գլխի դրույթներով սահմանված է պաշտոնական փաստաթղթերի սպառիչ ցանկը (ձև 1, 2, 3, 4, 5, 9, 10):*

*Վարույթն իրականացնող մարմնի՝ 20.11.2015 թվականի որոշմամբ՝ սույն գործով իրեղեն ապացույց ճանաչված պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող Արամ Նորիկի Վարդանյանի N 35/159-14 անձնական գործի ուսումնասիրությունից երևում է, որ, ի թիվս անձնական գործում առկա ՀՀ կառավարության 26 հոկտեմբերի 2006 թվականի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված պաշտոնական փաստաթղթերի (ձև 1, 2, 3, 4, 5, 9, 10), անձնական գործում առկա է նաև «դատապարտյալների այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող» անվամբ «ժամանակացույց», որը ՀՀ կառավարության վերոգրյալ որոշմամբ ներառված չէ անձնական գործում առկա պաշտոնական փաստաթղթերի սպառիչ ցանկում, հետևաբար՝ այն չի հանդիսանում պաշտոնական փաստաթուղթ:*

*(...)*

*Վերաքննիչ դատարանը (...) գտնում է, որ դատապարտյալ Ա.Վարդանյանի անձնական գործին կցված այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող «ժամանակացույցը» միասնական համաձայնությամբ ստեղծված ձևանմուշ է և ոչ պաշտոնական փաստաթուղթ:*

*Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը (...) հանգում է այն հետևության, որ սույն գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվում ամբաստանյալ Արամ Վարդանյանի արարքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշների, մասնավորապես՝ օբյեկտիվ կողմի, հետևաբար՝ ամբողջ հանցակազմի առկայությունը, որի պայմաններում [Առաջին ատյանի դատարանն] ամբաստանյալ Ա.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ վերջինիս արարքում հանցակազմի*

*բացակայության հիմքով արդարացնելու վերաբերյալ, իրավացիորեն հանգել է ճիշտ հետևության (...)»* (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 132-147):

8. Դատապարտյալ Ա.Վարդանյանի անձնական գործին կցված՝ դատապարտյալի այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույցը գտնվում է նյութական կրիչի վրա, ներառում է փաստաթղթի տրման օրը, Ա.Վարդանյանի այցելությունների ամսաթվերի դիմաց դրված ստորագրությունները՝ հաստատված ՀՀ ԱՆ ՔԿՎ ԱՊԿԲ Էրեբունիի և Նուբարաշենի բաժանմունքի պետ, արդարադատության գնդապետ Վ.Գրիգորյանի ստորագրությամբ և բաժանմունքի կնիքով (տե՛ս Ա.Վարդանյանի անձնական գործը, թերթ 5):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել դատական սխալ, սխալ են մեկնաբանել նյութական իրավունքը, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի հանցակազմի առարկա հանդիսացող «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը՝ դրան հաղորդելով իր քրեաիրավական նշանակությանը չհամապատասխանող սահմանափակ իմաստ: Ըստ բողոքաբերի՝ դատարանները, առանց պատճառաբանության և օրենսդրական որևէ հիմնավորման, լրացուցիչ չափանիշներ են սահմանել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրվող փաստաթուղթը պաշտոնական համարելու համար: Մասնավորապես՝ բողոքի հեղինակը նշել է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը պաշտոնական փաստաթուղթ չհամարելը ստորադաս դատարանները պայմանավորել են նրանով, որ այն ամրագրված չէ նորմատիվ իրավական ակտով:

Բողոքաբերը, վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները, ինչպես նաև վկայակոչելով այն հանգամանքը, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի կողմից և այդ մարմնի անունից տրվող տեղեկատվություն է պարունակում, որը գտնվում է նյութական կրիչի վրա ու հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, եզրակացրել է, որ այն անհրաժեշտ է համարել պաշտոնական փաստաթուղթ:

10. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ստորադաս դատարանների՝ պաշտոնական փաստաթղթի վերաբերյալ մեկնաբանությունները հակասում են *Սամվել Գաբրիելյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի հուլիսի 23-ի գործով դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 24-ի դատավճիռը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>**

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով պաշտոնական փաստաթուղթ չդիտելու առնչությամբ ստորադաս դատարանների ձևավորած դատողություններն արդյո՞ք հիմնավորված և պատճառաբանված են:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում հետևյալ արարքի համար. «*Իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը*»:

Սեջբերված հանցակազմի դիսպոզիցիայի նկարագրությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցագործության պարտադիր հատկանիշ է համարվում հանցագործության առարկան՝ *իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող* վկայականը կամ *պաշտոնական այլ փաստաթուղթը*, ինչպես նաև կնիքը, դրոշմը, ձևաթուղթը, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը:

13.1. Վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկա հանդիսացող պաշտոնական փաստաթղթի բովանդակությունը ու հատկանիշները՝ Վճռաբեկ դատարանը *Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի* գործով որոշման շրջանակներում փաստել է.«(…) *ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով «իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթ» (…) եզրույթը ենթադրում է, որ համապատասխան հանցակազմի առարկան է կազմում իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, իրադարձություն հավաստող այն փաստաթուղթը, որը տրամա-*

*դրում է որևէ իրավունք կամ ազատում պատասխանատվությունից: (…) «[Պ]ատասխանատվությունից ազատել» եզրույթը ներառում է ինչպես իրավական պատասխանատվության որևէ տեսակից (քրեական, վարչական, կարգապահական, քաղաքացիաիրավական և այլն), այնպես էլ որևէ պարտականությունից ազատելու հատկանիշը* (տե՛ս *Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԱՐԴ/0116/01/15 որոշման 15-րդ կետը):

Ավելին՝ մատնանշված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ փաստաթուղթը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով պաշտոնական դիտարկվելու համար պետք է պատշաճ կերպով ձևակերպված լինի: Մասնավորապես՝ փաստաթուղթը պետք է գտնվի նյութական կամ էլեկտրոնային կրիչի վրա, ունենա որոշակի վավերապայմաններ, օրինակ՝ կնիք, դրոշմ, ստորագրություն և այլն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաթղթի ձևակերպմանը վերաբերող սույն հատկանիշների առկայությունը, ինչպես նաև փաստաթղթի՝ համապատասխան մարմիններում փաստաթղթաշրջանառության օբյեկտ լինելը, հաշվետվողական բնույթ ունենալը, դրա նկատմամբ հսկողությունը կարող են վկայել փաստաթղթի իրավական բնույթի և դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության մասին (տե՛ս *Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԱՐԴ/0116/01/15 որոշման 14-րդ կետի 3-րդ ենթակետը և 15-րդ կետը): Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ փաստաթուղթը պաշտոնական դիտարկվելու տեսանկյունից պարտադիր չէ, որ այն իրավական հետևանքներ առաջացրած լինի, այլ բավարար է միայն, որ այն իր բնույթով օժտված լինի այդպիսի հետևանքներ առաջացնելու, իրավահարաբերությունների վրա ազդեցություն ունենալու հնարավորությամբ (տե՛ս *Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԱՐԴ/0116/01/15 որոշման 18-րդ կետը):

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով պաշտոնական փաստաթղթի տրման սուբյեկտին, ապա վերահաստատելով թիվ ՎՔԲ-106/06, թիվ ԵՇԴ/0115/01/09 գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև վերլուծելով *Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթ կարող է տրվել ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց կազմակերպությունների, այնպես էլ այլ իրավաբանական անձանց կողմից (տե՛ս *Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԱՐԴ/0116/01/15 որոշման 15.2.-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

ա) Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում փաստել է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում տարվող և դատապարտյալների անձնական գործին կցվող «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ն իր բնույթով իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ չի կարող հաստատել և Ա.Վարդանյանի որևէ իրավունքի ծագում չի կարող առաջացնել:

Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ քննարկվող ժամանակացույցը ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ չի հաստատվել, հետևաբար այն չի կարող համարվել պաշտոնական փաստաթուղթ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

բ) Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններին, միաժամանակ արձանագրել է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը միասնական համաձայնությամբ ստեղծված ձևանմուշ է և ոչ պաշտոնական փաստաթուղթ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-13.1.-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները եկել են սխալ եզրահանգման առ այն, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան բաժանմունքի կողմից տրված փաստաթուղթը՝ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում:

16. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերը նշված փաստաթուղթը ներառում է համապատասխան հոդվածի իմաստով պաշտոնական դիտարկվելու համար անհրաժեշտ բոլոր հատկանիշները:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ն օժտված է հետևյալ հատկանիշներով՝

- այն իր բնույթով ունի իրավաբանական նշանակություն, հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, որոնք կարող են առաջացնել իրավական հետևանքներ: Մասնավորապես՝ վերջինս հավաստում է ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ դատապարտյալի կողմից բաժանմունք ամիսն առնվազն մեկ անգամ ներկայանալու իրավաբանական փաստը: Միևնույն ժամանակ այն, ներառված լինելով դատապարտյալի անձնական գործում (դա բխում է ՀՀ կառավարության հիշյալ որոշման հավելվածի 49-րդ կետի 2-րդ պարբերությունից, ըստ որի՝ *անձնական գործում ներառվում են տեղեկություններ դատապարտյալի անձի, բնակության և աշխատանքի*

*վայրերի, ինչպես նաև պատժի կատարման համար նշանակություն ունեցող այլ հարցերի մասին),* համապատասխան միջնորդության քննարկման ժամանակ կարող է ունենալ առանցքային նշանակություն պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը լուծելիս: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ փաստաթուղթը պաշտոնական դիտարկվելու տեսանկյունից պարտադիր չէ, որ այն իրավական հետևանքներ առաջացրած լինի, այլ բավարար է միայն, որ այն իր բնույթով օժտված լինի այդպիսի հետևանքներ առաջացնելու, իրավահարաբերությունների վրա ազդեցություն ունենալու հնարավորությամբ (տե՛ս սույն որոշման 13.1.-րդ կետը), ինչպիսին սույն դեպքում հանդիսանում է «այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ը,

- այն կազմվել է պետական մարմնի կողմից, մասնավորապես՝ փաստաթուղթը տրվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Երևանի Էրեբունիի և Նուբարաշենի բաժանմունքի պետի և բաժանմունքի անունից,

- այն պատշաճ կերպով ձևակերպված է, մասնավորապես՝ գտնվում է նյութական կրիչի վրա, կնքված է, նշված է փաստաթղթի տրման օրը, փաստաթղթում առկա տեղեկատվության (ի թիվս այլոց, դատապարտյալի բաժանմունք ներկայանալու օրերը՝ հաստատված վերջինիս ստորագրությամբ) իսկությունը վավերացված է Երևանի Էրեբունի և Նուբարաշենի բաժանմունքի պետի ստորագրությամբ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

17. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, ըստ որի՝ *«այցելությունների հաշվառման փաստն ու հերթականությունը հավաստող ժամանակացույց»-ն իրավաբանական նշանակություն ունեցող որևէ փաստ չի կարող հաստատել*: Ինչ վերաբերում է նույն դատարանի այն դիրքորոշմանը, որ նշյալ փաստաթուղթն *Ա.Վարդանյանի որևէ իրավունքի ծագում չի կարող առաջացնել*, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով պաշտոնական է համարվում ոչ միայն իրավունք վերապահող, այլև պատասխանատվությունից ազատող փաստաթուղթը: Իսկ սույն դեպքում այն դրսևորվել էր ոչ միայն նրանում, որ «ժամանակացույց»-ն իր բնույթով օժտված է համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությամբ (տե՛ս սույն որոշման նախորդ կետը), այլև նրանում, որ Ա.Վարդանյանը, իր վրա դրված պարտականությունը չկատարելով, մասնավորապես՝ համապատասխան օրը (2014 թվականի դեկտեմբերի 3-ին) բաժանմունք չներկայանալով, նախապես ստորագրել է չներկայացած օրվա դիմաց (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), այսինքն՝ հավաստել է իր վրա դրված պարտականությունն իբր պատշաճ կերպով կատարված լինելու փաստը՝ դրանով իսկ իրեն ազատելով փաստացի չկատարված պարտականությունից:

17.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերը հիմնավորել են նաև նրանով, որ «այցե-

լությունների հաշվառման փաստն ու հերքականությունը հավաստող ժամանակացույց»-ը չի հաստատվել ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ, այդ իրավական ակտի դրույթներով նախատեսված չէ դատապարտյալի ներկայանալու ժամանակացույց սահմանող ձևաթղթի կազմման և այն շրջանառության մեջ դնելու կարգ, հետևաբար համապատասխան փաստաթուղթը չի կարող հանդիսանալ նշված հանցագործության առարկա համարվող պաշտոնական փաստաթուղթ (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Վերոգրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի և ՀՀ կառավարության հիշյալ որոշման հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը ստանձնել է պատիժը պայմանականորեն չկիրառելու կապակցությամբ փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն (մինչ կատարված համապատասխան օրենսդրական փոփոխությունները): Իսկ ՀՀ կառավարության համապատասխան որոշման հավելվածի 5-րդ գլխով սահմանված պահանջների, մասնավորապես՝ դատապարտյալի կողմից բաժանմունք ամիսն առնվազն մեկ անգամ ներկայանալու պարտականությունը սահմանող նորմի կատարումն ապահովելու նպատակով հիշյալ բաժնի կողմից կազմվել և շրջանառության մեջ էր դրվել միասնական ձևաձևաթուղթ, որտեղ, ի թիվս այլոց, նշվել են դատապարտյալի ներկայանալու օրերը, իսկ դրանց դիմաց՝ վերջինիս ստորագրությունը: Այլ կերպ՝ վերահսկողության համար ընտրված սույն ձևը բխել է այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան բաժանմունքների կողմից դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և դատապարտյալի հիշյալ պարտականությունը սահմանող նորմի կատարումն ապահովելու պահանջներից, ուստիև ստորադաս դատարանների վերոգրյալ հետևությունները չեն կարող հիմնավոր համարվել: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում այն դատողությանը, որ փաստաթուղթը պաշտոնական դիտարկվելու համար պարտադիր է, որ այն անմիջականորեն հաստատված լինի նորմատիվ իրավական ակտով. որոշակի փաստաթղթի կազմման հնարավորությունը կարող է առանձին դեպքերում բխել նաև համապատասխան մարմնի ընդհանուր բնույթի լիազորություններից (տե՛ս *Սամվել Պապիկյանի և Հրաչյա Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԱՐԴ/0116/01/15 որոշման 18.2-րդ կետը):

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ «այցելությունների հաշվառման փաստն ու հերքականությունը հավաստող ժամանակացույց»-ը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով պաշտոնական փաստաթուղթ չդիտելու առնչությամբ ստորադաս դատարանների ձևավորած դատողությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկայի՝ պաշտոնական փաստաթղթի հասկացությունը, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի, հիմք է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում օրենքով սահմանված կարգով պետք է հանգի համապատասխան հետևության:

20. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արամ Նորիկի Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրվի չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արամ Նորիկի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 24-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արամ Նորիկի Վարդանյանի նկատմամբ խափանման միջոց ընտրել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**20.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԴ-1/0006/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան Ա.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հակոբ Հարությունի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2014 թվականի օգոստոսի 3-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Կոտայքի մարզի քննչական բաժնի քննիչ Ս.Երիցյանի որոշմամբ հարուցվել է թիվ 49114814 քրեական գործը:

Նախաքննության մարմինը 2014 թվականի օգոստոսի 27-ին որոշում է կայացրել Հակոբ Հարությունի Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Նույն գործով մեղադրանք է առաջադրվել նաև Հովհաննես Գևորգի Հայրապետյանին, Սպարտակ Ստեփանի Մաթևոսյանին, Կարեն Ալբերտի Առաքելյանին:

Հ.Մարտիրոսյանին 2014 թվականի օգոստոսի 27-ին առաջադրված մեղադրանքը նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 27-ի որոշմամբ փոփոխվել է, լրացվել, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով (2 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (2 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2016 թվականի փետրվարի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ստացվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի ապրիլի 26-ի դատավճռով Հ.Մարտիրոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով (2 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (2 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում, և յուրաքանչյուր դրվագով հանցագործության համար նրա նկատմամբ նշանակել համապատասխան պատիժ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կանոններով՝ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով, Առաջին ատյանի դատարանը Հ.Մարտիրոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանել ազատազրկում՝ 7 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Առաջին ատյանի դատարանի նույն դատավճռով մեղավոր են ճանաչվել նաև Հ.Հայրապետյանը, Ս.Մաթևոսյանը, Կ.Առաքելյանը:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 26-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալներ Հ.Մարտիրոսյանի և Կ.Առաքելյանի պաշտպանները, ինչպես նաև մեղադրող Գ.Խանզադյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի օգոստոսի 25-ին որոշում է կայացրել պաշտպանների, մեղադրողի վերաքննիչ բողոքները մերժելու մասին: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը որոշել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Հ.Մարտիրոսյանին մեղսագրված արարքների քրեաիրավական որակման և նշանակված պատիժների մասով բեկանել և փոփոխել. Հ.Մարտիրոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով և պատիժ նշանակել ազատազրկում 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկե-

տով՝ առանց գույքի բռնագրավման: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ ամբաստանյալներ Հ.Մարտիրոսյանի և Հ.Հայրապետյանի մասով վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանը 2017 թվականի ապրիլի 11-ին որոշում է կայացրել Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին: Վճռաբեկ դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Հ.Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Նախաքննության մարմինը Հ.Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ. *«[Նա,] 2014թ. հուլիսի 9-ին՝ գործով չպարզված ժամի, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Սպարտակ Ստեփանի Մաքևոսյանի հետ, Ծաղկաձոր քաղաքի «Վիլաս» հանգստյան տան բակից գաղտնի հափշտակել են Ենոք Ղևոնդի Գասպարյանին պատկանող զգալի չափի՝ 12.000 ՀՀ դրամ արժողությամբ ալյումինե երկփեղկանի աստիճանը, որը տեղադրել են Սպարտակ Մաքևոսյանի «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի մեջ և հեռացել: Այնուհետև, Հակոբ Հարությունի Մարտիրոսյանը, նույն օրը՝ ժամը 05:30-ի սահմաններում, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Հովհաննես Գևորգի Հայրապետյանի, Սպարտակ Ստեփանի Մաքևոսյանի հետ, Հրազդան քաղաքի Շահումյան և Րաֆֆու փողոցների հատման խաչմերուկի հատվածում գտնվող «Արման-Անի» ՍՊ ընկերության բենզալցակայանի շինությունից քսայուղեր և գումար հափշտակելու նպատակով, կոտրող գործիքով փորձել են բացել շինության մուտքի դուռը, սակայն իրենց հանցավոր մտադրությունը չեն կարողացել հասցնել ավարտին իրենց կամքից անկախ հանգամանքներով, քանի որ այդ պահին դուրս է եկել բենզալցակայանի պահակը, որից հետո, իրենց հանցավոր մտադրությունը քողարկելու նպատակով Սպարտակ Մաքևոսյանի Ֆորդ ավտոմեքենայից իջեցրել և պահակին են տվել «Վիլաս» հանգստյան տան բակից գողացված աստիճանը և խնդրելով աստիճանը պահել իր մոտ՝ հեռացել են: Այնուհետև, 2014թ. հուլիսի 27-ին Հակոբ Հարությունի Մարտիրոսյանը (...) ժամը 02:00-ից մինչև 09:00-ն ընկած ժամանակահատվածում, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, լողավազանի բաց պատուհանով ապօրինի մուտք է գործել «Բադեն-Բադեն» հյուրանոցային համալիրի թիվ 1 առանձնատուն և այնտեղ բնակվող Սուսաննա Վոլոդյայի Գալստյանի ու Գայանե

*Ռուբենի Հակոբյանի պայուսակներից գաղտնի հափշտակել ընդհանուր զգալի չափի՝ 229.643 ՀՀ դրամ արժողությամբ 420 եվրո, 95.000 ՀՀ դրամ, 81.304 ՀՀ դրամ արժողության 200 ԱՄՆ դոլար, 11.588 ՀՀ դրամ արժողության 50 լարի, «Անելիք» բանկի վիզա քարտ, «Բուրմունք», «Դոմանի», «Ռոբերտոո» խանութների զեղչի քարտեր: Այնուհետև, Հակոբ Հարությունի Մարտիրոսյանը, 2014թ. հուլիսի լույս 29-ին (...) ուրիշի գույքի գաղտնի հափշտակում կատարելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Սպարտակ Մաթևոսյանի հետ, ժամը 07:00-ից մինչև 07:30-ն ընկած ժամանակահատվածում, ապօրինի մուտք են գործել Ծաղկաձոր քաղաքում գտնվող «Ծաղկահովիտ» հանգստյան տան 106 չբնակեցված սենյակ և այնտեղից գաղտնի հափշտակել զգալի չափի՝ 190.000 ՀՀ դրամ արժողությամբ 1 հատ «Գրունդիկ» տեսակի պլազմային հեռուստացույց, որից հետո շարժվել են դեպի Երևան, սակայն Ծաղկաձոր քաղաքի «Վալետտա» հանգստյան տան [մոտ] Հակոբ Մարտիրոսյանը Սպարտակ Մաթևոսյանին խնդրել է կանգնեցնել մեքենայի շարժը, որից հետո ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, բաց դռնից ապօրինի մուտք է գործել Գևորգ Գարեգինի Ջուռնաչյանի կողմից վարձակալած՝ Ծաղկաձոր քաղաքում գտնվող «Վալետտա» հանգստյան տան 4-րդ առանձնատուն և հյուրասենյակի սեղանի վրայից գաղտնի հափշտակել վերջինիս պատկանող, խոշոր չափի՝ 670.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 1 հատ «ԷՅՓԼ» տեսակի պլանշետ, 1 հատ «ԱՅՖՈՆ» և 1 հատ «ՆՈԿԻԱ 88 00» տեսակի բջջային հեռախոսներ: Բացի այդ, Հակոբ Մարտիրոսյանը, 2014թ. օգոստոսի լույս 03-ի գիշերը, գործով չպարզված ժամի, ուրիշի գույքի գաղտնի հափշտակում կատարելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Հովհաննես Հայրապետյանի հետ, մուտքի մետաղապլաստե դուռը չպարզված առարկայով բացելու միջոցով մուտք են գործել Ծաղկաձոր քաղաքում գտնվող՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի հանգստյան տան չբնակեցված 2-րդ մասնաշենք և այնտեղ գտնվող 5 սենյակներից գաղտնի հափշտակել են խոշոր չափի՝ 875.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 5 հատ «Տոշիբա» տեսակի պլազմային հեռուստացույցներ (...): Ճանապարհին (...) ժամը 06:30-ից 07:00-ն ընկած ժամանակահատվածում, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Հովհաննես Գևորգի Հայրապետյանի հետ, կոտրել են Երևան-Սևան մայրուղու 28կմ հատվածում գտնվող «Թեյի տնակ» կոչվող թեյարանի պատուհանի ապակին, ապօրինի մուտք գործել ներս և այնտեղից գաղտնի հափշտակել «Գրինվուդ» ՍՊԸ-ին պատկանող ընդհանուրը զգալի չափի՝ 2.000 ՀՀ դրամի ծխախոտներ և «Հայ մայրեր» ՀԿ-ին պատկանող բարեգործական արկղի մեջ եղած 40.000 ՀՀ դրամ գումարը: Այնուհետև, Հակոբ Հարությունի Մարտիրոսյանը, 2014թ. օգոստոս ամսվա սկզբներին՝ գործով չպարզված օրը և ժամին, առավոտյան, գտնվելով Հրազդան քաղաքում, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, չփակված մուտքի դուռը բացելով,*

*ապօրինի մուտք է գործել Գարուշ Վազգենի Գևորգյանին պատկանող՝ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 580 տան 1-ին հարկում գտնվող ավտոպահեստամասերի խանութ-սրահ և վաճառասեղանների վրայից գաղտնի հափշտակել զգալի չափի՝ ընդհանուրը՝ 30.000 ՀՀ դրամ արժողությամբ 2 հատ շարնիրներ, 2 հատ շարժիչի ներդիրներ»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 264-266):

6. Ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ. «*2014թ. հուլիսին Սպարտակ Մաթևոսյանի հետ գնացել է Ծաղկաձոր քաղաքի «Վիլաս» հանգստյան տուն, **որտեղ զրուցել է պահակի հետ, վերջինիս պահվածքը իրեն դուր չի եկել և նա որոշել է հենց պահակին վնաս պատճառելու համար ինչ-որ իր գողանալ**, և գողացել է բակում դրված ալյումինե աստիճանը: (…)*

*2014թ. հուլիսին, կոնկրետ օրը չի հիշում, Սպարտակ Մաթևոսյանի ու Հովհաննես Հայրապետյանի հետ գտնվել են Հրազդան քաղաքում: Սպարտակ Մաթևոսյանի ավտոմեքենան բենզինով վերալիցքավորելու համար մոտեցել են «Արման-Անի» ՍՊ ընկերությանը պատկանող բենզալցակայան: Մոտենալով բենզալցակայանին՝ տեսել է, որ այնտեղ մարդ չկա, բարկացել է, սկսել թակել մուտքի դուռը, որպեսզի աշխատակիցը արթնանա և սպասարկի իրենց: Տեսնելով, որ աշխատակիցը չի արթնանում, մուտքի դռան մոտից վերցնելով քլունգը, սկսել է հարվածել մուտքի դռանը: **Այդ պահին ներսում ինչ-որ իր է նկատել և որոշել է գողանալ այն**: (…)*

*2014թ. հուլիսին, կրկին օրը չի հիշում, դուրս գալով խաղատնից, մտել է «Ծաղկահովիտ» հանգստյան տուն՝ հեռախոսահամար խնդրելու նպատակով: **Հանգստյան սենյակներից մեկում տեսնելով հեռուստացույց, որոշել է այն գողանալ**: (…)*

*Այնուհետև, գողություն կատարելու նպատակով գնացել է Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի հանգստյան տուն և այնտեղից գողացել է հեռուստացույցներ: (…)*

*(…)»:*

6.1. Ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանի դատաքննական և նախաքննական ցուցմունքների միջև էական հակասություններ լինելու պատճառաբանությամբ Առաջին ատյանի դատարանի կողմից հրապարակված՝ ամբաստանյալի նախաքննական ցուցմունքների համաձայն՝ *«[Հ.Մարտիրոսյանը] 09.07.2014 թվականին Հովհաննես Գևորգի Հայրապետյանի և Սպարտակ Ստեփանի Մաթևոսյանի հետ վերջինիս պատկանող «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայով եկել են Ծաղկաձոր քաղաք՝ խաղատուն, **որտեղ կրվել է իր մոտ եղած գումարը**: Այնուհետև գնացել են «Վիլաս» հանգստյան տուն, որտեղ Սպարտակ Մաթևոսյանի հետ մտել են հանգստյան տան տարածք՝ գողություն կատարելու նպատակով: «Վիլաս» հանգստյան տան բակից գողացել են ալյումինե երկփեղկանի աստիճան (…): Այնուհետև՝ նույն օրը՝ ժամը 05:30-ի սահմաններում, (…) «Արման-Անի» ՍՊ ընկերության բենզալցակայանի շինությունից քսայուղեր և գումար հափշտակելու նպատակով կոտրող*

*գործիքով փորձել են բացել շինության մուտքի դուռը: Այդ ժամանակ շինությունից դուրս է եկել պահակը, որից հետո իրենց կողմից գողության փորձ կատարելու հանգամանքը քողարկելու նպատակով Սպարտակ Մաթևոսյանի «Ֆորդ» ավտոմեքենայից իջեցրել և պահակին են տվել «Վիլաս» հանգստյան տան բակից գողացված աստիճանը: Խնդրել են աստիճանը պահել իր մոտ՝ հետագայում այն հետ վերցնելու պատրվակով, հեռացել են: **Այնուհետև, 2014թ. հուլիսի 27-ին՝ ժամը 01:00-ին, անծանոթ տաքսի ավտոմեքենայով եկել է Ծաղկաձորում գտնվող «Վուլկան» խաղատուն, որտեղ կրկին կրվել է իր մոտ եղած գումարը: Այնուհետև դուրս է եկել խաղատնից և գողություն կատարելու նպատակով** խաղատան և «Քադեն-Քադեն» հյուրանոցի միջև առկա նեղ արանքով գնացել դեպի «Քադեն-Քադեն» հյուրանոցի առանձնատների հետնամաս՝ տեսնելու համար, թե հյուրանոցի որ առանձնատունը կարող է մտնել: Նկատել է, որ առանձնատներից մեկի պատուհանը բաց է: Պատուհանով մտել է ներս, գնացել հյուրասենյակ, որտեղ բազմոցի վրա և աթոռից կախված պայուսակների միջից գողացել է ընդհանուրը՝ 164.000 ՀՀ դրամ գումար, որի մեջ է մտնում 100 ԱՄՆ դոլար և 20 լարի: (…) **Այնուհետև, 2014թ հուլիսի լույս 29-ին՝ Հովհաննես Հայրապետյանի և Սպարտակ Մաթևոսյանի հետ վերջինիս պատկանող «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայով եկել են Ծաղկաձոր՝ խաղատուն, որտեղ ինքը կրվել է իր մոտ եղած գումարը:** Այնուհետև գնացել են «Ծաղկահովիտ» հյուրանոցի ուղղությամբ, հասել են այնտեղ՝ Սպարտակ Մաթևոսյանին ասել, է որ կանգնեցնի ավտոմեքենան և գա իր հետևից: (…)*

*«Ծաղկահովիտ» հյուրանոցից գողություն կատարելուց հետո **շարժվել են դեպի Երևան, սակայն Ծաղկաձոր քաղաքի «Վալետտա» հանգստյան տան մոտ Սպարտակ Մաթևոսյանին ասել է, որ կանգնեցնի մեքենայի շարժը,** որից հետո մտել է հանգստյան տան տարածք և մոտեցել ճակատային մասով դեպի ճանապարհը նայող առանձնատուն: Նկատել է, որ առանձնատան դուռը կիսաբաց է, որից հետո մտել է ներս և աջ կողմում գտնվող սեղանի վրայից գողացել է 1 հատ «ԷՅՓԼ» տեսակի պլանշետ, 1 հատ «ԱՅՖՈՆ» և 1 հատ «ՆՈԿԻԱ 88 00» տեսակի բջջային հեռախոսներ:*

*Այնուհետև, 2014թ օգոստոսի լույս 03-ի գիշերը՝ իրեն անծանոթ տաքսի ավտոմեքենայով Հովհաննես Հայրապետյանի հետ, կրկին գտնվելով Ծաղկաձորում, տաքսու վարորդին պատվիրել է վարել դեպի «Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի» Ծաղկաձորի հանգստյան տան կողմ: Ճանապարհին կանգնեցրել են ավտոմեքենան և իջել՝ վարորդին պատվիրելով սպասել տեղում, որից հետո Հովհաննես Հայրապետյանի հետ մտել են վերը նշված հանգստյան տան մի քանի սենյակ, որտեղից էլ գողացել են 5 հատ «Տոշիբա» տեսակի հեռուստացույց (…):*

*Նույն օրը՝ Երևան գնալիս, Երևան-Սևան ճանապարհին՝ «Չայնի» կոչվող թեյարանի մոտ, տաքսու վարորդին ասել են, որպեսզի կանգնեցնի ավտոմեքենայի շարժը, որից հետո Հովհաննես Հայրապետյանի հետ իջել են ավտոմեքենայից և գնացել թեյարանի կողմը: Թեյարանից գողություն կատարե-*

*լու նպատակով կոտրել է մուտքի դռան կողքի փոքրիկ պատուհանը, սակայն միացել է ծայնասգոնաշնանային համակարգը, որից հետո դիմել են փախուստի: Այնուհետև, 2014թ օգոստոս ամսվա սկզբներին՝ կոնկրետ օրն ու ժամը չի հիշում, անծանոթ տաքսի ավտոմեքենայով Ծաղկաձոր քաղաքից դեպի Երևան գնալիս, Հրազդան քաղաքի Վանաստուր թաղամասում **նկատել է ավտոպահեստամասերի խանութ-սրահ, որի դուռը բաց է եղել**: Կանգնեցրել է տաքսի ավտոմեքենան և մտել ավտոպահեստամասերի խանութ, որտեղից գողացել է 2 հատ շարնիր, 2 հատ շարժիչի ներդիներ:*

7. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2016 թվականի ապրիլի 26-ի դատավճռով Հ.Մարտիրոսյանին մեղավոր է ճանաչել վերջինիս մեղսագրված հանցավոր արարքների կատարման մեջ, և յուրաքանչյուր դրվագով հանցագործության համար նրա նկատմամբ նշանակել համապատասխան պատիժ: Այնուհետև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կանոններով՝ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով, Առաջին ատյանի դատարանը Հ.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակել է վերջնական պատիժ (տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 153-171):

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Հ.Մարտիրոսյանին մեղսագրված արարքների քրեաիրավական որակման և նշանակված պատիժների մասով բեկանելով և փոփոխելով, փաստել է. *«(...) Հաշվի առնելով [ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը] Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ երկու կամ ավելի հափշտակություններ կատարելու դեպքում հանցավորի արարքները շարունակվող հանցագործություն կդիտվեն բոլոր այն դեպքերում, երբ այդ հափշտակությունները կատարվել են միասնական դիտավորությամբ և հետապնդում են մեկ միասնական նպատակ: Իսկ երբ հափշտակությունները կատարվում են տարբեր արարքներով, փուլերով և հանցավորի դիտավորությունը միասնական չէ, այլ յուրաքանչյուր կատարած արարքի դեպքում ինքնուրույն է առաջանում, ապա այդ դեպքում խոսք կգնա ինքնուրույն և համակցությամբ որակվող հանցագործությունների մասին: Հետևաբար, շարունակվող հանցագործության դեպքում հանցավորի կողմից կատարված արարքներն ինքնուրույն չեն որակվի, այլ կդիտվեն որպես մեկ հափշտակության բաղկացուցիչ մասեր և իրենց ողջ ծավալով կդիտվեն որպես մեկ միասնական արարք:*

*(...)*

*Վերաքննիչ դատարանը գտնում է, որ [Առաջին ատյանի դատարանի] դատավճռում Հակոբ Մարտիրոսյանին մեղսագրված արարքների մասով հիմնավորված չէ և չի բխում քրեական գործի փաստական հանգամանքներից, քանի որ քրեական գործի նյութերի, մասնավորապես՝ ամբաստանյալի ցուցմունքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առկա չեն այնպիսի տվյալներ, որոնք կարող են վկայել, որ նրա կողմից կատարված հափշտակությունները միասնական դիտավորությամբ չեն իրականացվել,*

*այլ դիտավորությունները ծագել [են] յուրաքանչյուր արարքի կատարումից հետո:*

*Բացի այդ, Վերաքննիչ դատարանի համար միասնական դիտավորությունը ընդգծելու տեսանկյունից հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալի կողմից կատարված գողությունները հիմնականում իրականացվել են նույն ոճով, եղանակով, ինչպես նաև հափշտակությունները կատարվել են 2014 թվականի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում, ավելին՝ եղել են դեպքեր, որ նույն օրերի ընթացքում կատարվել են մեկից ավելի գողություններ:*

*Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հակոբ Մարտիրոսյանին առաջադրված մեղադրանքները պետք է դիտարկել որպես միասնական դիտավորությամբ կատարված շարունակվող հանցագործություն: Հակառակ մոտեցումը խիստ կասկածելի է և նման հետևությունը հիմնված կլինի բացառապես ենթադրության վրա:*

*(...)*

*(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Հակոբ Մարտիրոսյանին վերագրվող արարքները մտնում են մեկ դիտավորության տակ, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետին (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 15, թերթեր 53-81):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը Հ.Մարտիրոսյանի արարքներին տվել է սխալ քրեաիրավական գնահատական: Մասնավորապես՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «հանցանքների համակցություն» և «շարունակվող հանցագործություն» հասկացություններն ու դրանց սահմանազատման չափանիշները, հաշվի չի առել կատարված հանցագործությունների դիտավորության առանձնացվածության մասին գործով ձեռք բերված ապացույցներն ու հանգել է սխալ հետևության Հ.Մարտիրոսյանին մեղսագրվող հանցագործությունները մեկ միասնական դիտավորությամբ կատարված լինելու մասին:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ բոլոր այն դեպքերում, երբ անձը մի քանի, այդ թվում՝ նույնաբնույթ հանցագործություններ է կատարում, որոնք ուղղված չեն նույն հանցավոր նպատակին, և դրանց կատարումը պայմանավորված չէ նախորդ հանցագործությամբ, իսկ նոր արարքը կատարելու դիտավորությունն առաջացել է նախորդ արարքը կատարելուց հետո, ապա շարունակվող հանցագործության մասին խոսք լինել չի կարող: Բողոքի հեղինակը կարծում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է սույն գործով ձեռք բերված ապացույցներով հաստատված այն հանգամանքը, որ Հ.Մարտիրոսյանի կողմից յուրաքանչյուր նոր հանցագործություն կատարելու դիտավորությունն առաջացել է նախորդից հետո և դրանց հետ մեկ միաս-

նական դիտավորության մեջ չի ընդգրկվել: Ըստ բողոք բերած անձի՝ Հ.Մարտիրոսյանը, ըստ էության, հափշտակություն է կատարել յուրաքանչյուր հարմար պահի և յուրաքանչյուր անգամ դրա կարիքն ունենալու դեպքում, ինչը բացառում է կատարված հանցավոր գործողությունների՝ սուբյեկտիվ կողմից միասնականությունը:

9.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ գործով ձեռք բերված ապացույցները չեն վկայում, որ Հ.Մարտիրոսյանի կողմից կատարված հափշտակությունները միասնական դիտավորությամբ չեն իրականացվել, բողոքաբերը փաստել է, որ այդպիսի դիրքորոշումը հակասում է գործով ձեռք բերված ապացույցներին, բացի այդ, այն նաև անընդունելի է՝ դիտավորության միասնականության հանգամանքի հաստատմանն ուղղված ապացուցողական գործունեության տրամաբանության տեսանկյունից: Բողոքի հեղինակը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում ապացուցման ենթակա է ոչ թե միասնական դիտավորության բացակայությունը, այլ առկայությունը: Այլ կերպ ասած՝ արարքը յուրաքանչյուր դեպքում պետք է համարել ոչ միասնական դիտավորությամբ կատարված, եթե միասնական դիտավորությամբ կատարված լինելը չի հաստատվել:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դրա հետ համակցված՝ դատավարական իրավունքի խախտում, ինչը հիմք է կայացված դատական ակտը բեկանելու համար:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանի արարքները որպես շարունակվող հանցագործություն դիտելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«Հանցագործությունների համակցություն է համարվում՝*

*1) սույն օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել.*

*(...)»:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների իրական համակցությունը շարունակվող հանցագործությունից տարանջատելու չափանիշները, շարունակվող հանցագործությանը ներկայացվող բնութագրական հատկանիշները վերլուծության են ենթարկվել *Վ.Սկրտչյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման շրջանակներում:

Այսպես, վերահաստատելով և զարգացնելով *Գարսևան Ոսկանյանի,* ինչպես նաև *Ս.Ղամբարյանի և այլոց* գործերով արտահայտված իրավա-

կան դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Վ.Մկրտչյանի և մյուսների* գործով որոշման շրջանակներում փաստել է.«*(...)[Թ]ե՛ իրական համակցությունը, թե՛ շարունակվող հանցագործությունը դրսևորվում են մեկից ավելի արարքների կատարմամբ, հետևաբար կատարվող արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցում կարևոր է դրանց տարանջատման հստակ չափանիշների սահմանումը: Այսպես՝ հանցագործությունների իրական համակցությունը հանցագործությունների բազմակիության տեսակներից մեկն է (հանցագործությունների ռեցիդիվի հետ միասին) և բնութագրվում է վերջինիս բնորոշ այնպիսի ընդհանուր հատկանիշով, ինչպիսին է միևնույն անձի կողմից մեկից ավելի արարքներով երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող հանցանքներ կատարելով: Ընդ որում, իրական համակցություն են կազմում տարբեր, միասնական դիտավորությամբ չկապված այնպիսի արարքներ, որոնք պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր կամ միևնույն հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ:*

*Ինչ վերաբերում է շարունակվող հանցագործությանը, ապա այն բարդ (եզակի) հանցագործության տեսակ է, որը թեպետ դրսևորվում է որոշակի ժամանակային ընդմիջումներով կատարվող մեկից ավելի հակաիրավական արարքներով, այնուամենայնիվ դիտվում է որպես մեկ հանցագործություն և որակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի մեկ հոդվածով կամ հոդվածի մասով: Վերոնշյալը պայմանավորված է կատարվող արարքների միջև գոյություն ունեցող սերտ կապով, ինչը թույլ է տալիս դրանք գնահատել որպես մեկ ամբողջություն: Մասնավորապես, շարունակվող հանցագործությունը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ այնպիսի հատկանիշներով, որոնցով տարանջատվում է հանցագործությունների իրական համակցությունից:*

*Այսպես՝ շարունակվող հանցագործության օբյեկտիվ հատկանիշը ենթադրում է, որ՝*

*- կատարվող արարքներից յուրաքանչյուրը ոտնձգում է միևնույն օբյեկտի, ընդ որում, որպես կանոն, միևնույն անմիջական օբյեկտի դեմ, այսինքն՝ այն հասարակական հարաբերության, որը վնասվում է կոնկրետ հանցագործության կատարման արդյունքում (օրինակ՝ հափշտակությունների դեպքում անմիջական օբյեկտը կոնկրետ անձի սեփականության պաշտպանությանն ուղղված հարաբերություններն են): Միևնույն ժամանակ, կատարված մեկից ավելի արարքները շարունակվող հանցագործություն դիտելու հարցում, կոնկրետ հանցակազմի առանձնահատկություններով պայմանավորված, հաշվի են առնվում նաև օբյեկտիվ բնույթի այլ հատկանիշներ, ինչպիսիք են, օրինակ, հանցագործության եղանակը (միևնույն կամ նմանատիպ եղանակով), միևնույն աղբյուրից կատարված լինելու հանգամանքը (օրինակ՝ հափշտակությունների դեպքում), հանցավոր հետևանքի (արդյունքի) միասնականությունը և այլն,*

*- կատարվող արարքները նույնական են, այսինքն՝ նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով: Ընդ որում, խոսքն իրավաբանական առումով նույնականության մասին է, իսկ փաստական կողմով արարքները կարող են միմյանցից տարբերվել (օրինակ՝ հրազենի ապօրինի ձեռքբերումն ու իրացումը փաստական հատկանիշներով թեպետ տարբերվում են, սակայն իրավաբանորեն դրանք նույնական արարքներ են, քանի որ միևնույն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի եղանակ են):*

*(…) Ինչ վերաբերում է շարունակվող հանցագործության սուբյեկտիվ հատկանիշին, ապա այն ենթադրում է հանցավորի մոտ միասնական դիտավորության և նպատակի առկայություն: Այլ կերպ ասած՝ անձը պետք է նախնական մտադրություն ունենա կատարելու կոնկրետ հանցանքը մեկից ավելի, որոշակի ժամանակային ընդմիջումներով առանձնացված նույնական արարքներով: Ընդ որում, շարունակվող հանցագործությունների դեպքում միասնական դիտավորությունը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝*

*- շարունակվող հանցագործության մաս կազմող բոլոր արարքների և ընդհանուր հանցավոր արդյունքի նկատմամբ անձի դիտավորությունը կոնկրետացված է և առաջանում է նախքան առաջին արարքը կատարելը (դասական միասնական դիտավորություն),*

*- կատարվելիք հետագա արարքների նկատմամբ միասնական դիտավորությունն առաջանում է նախորդող արարքը կատարելու ընթացքում (վերաճող միասնական դիտավորություն),*

*- ընդհանուր հանցավոր արդյունքի նկատմամբ հանցավորի դիտավորությունը թեպետ կոնկրետացված չէ, սակայն վերջինս ունի միասնական դիտավորություն՝ հանցագործության միևնույն անմիջական օբյեկտի դեմ ոտնձգություններ իրականացնելու մեկից ավելի նույնական արարքներով:*

*Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սուբյեկտիվ հատկանիշի բացահայտումը կարևոր նշանակություն ունի հանցագործության ճիշտ քրեաիրավական որակման հարցում, քանի որ արարքների նույնականությունը, ոտնձգության օբյեկտի, աղբյուրի և եղանակի միասնականությունը դեռևս հիմք չեն կատարվածը շարունակվող հանցագործություն դիտելու համար: Այսպես՝ իրական համակցության պարագայում նույնպես կատարվող արարքները կարող են օժտված լինել շարունակվող հանցագործությանը բնորոշ (...) օբյեկտիվ հատկանիշներով: Հետևաբար նման դեպքերում շարունակվող հանցագործությունն իրական համակցությունից տարանջատելու հիմնական չափանիշը հանցավորի մոտ համապատասխան արարքները կատարելու միասնական դիտավորության առկայության հավաստումն է և միաժամանակ դիտավորության՝ ամեն արարքից հետո կրկին ծագած լինելու հավանականության բացառումը, ինչը յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի հանգամանքների բազմակողմանի հետազոտման արդյունքում:*

*(...) Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարված մեկից ավելի արարքները կարող են դիտվել որպես շարունակվող հանցագործություն և որակվել ՀՀ քրեական օրենսգրքի մեկ հոդվածով (հոդվածի մասով կամ կետով) միայն (...) օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների միաժամանակյա առկայության պայմաններում:*

*Այսպիսով, շարունակվող հանցագործությունը մեկ միասնական բարդ հանցագործության տեսակ է, որը ձևավորվում է նույնական այնպիսի արարքներից, որոնց միջև, որպես կանոն, առկա է հարաբերականորեն ոչ մեծ ժամանակային խզում, և որոնք ոտնձգում են միևնույն անմիջական օբյեկտի դեմ, ընդգրկված են մեկ միասնական դիտավորությամբ և հանդես են գալիս որպես մեկ ամբողջական հանցագործության առանձին օղակ:*

*Միևնույն ժամանակ, եթե կատարված արարքները եղել են ոչ նույնական, այլ տարաբնույթ կամ միաբնույթ, ուղղված են եղել տարբեր անմիջական օբյեկտների դեմ, կատարվել են տարբեր աղբյուրներից, կապված չեն եղել միասնական դիտավորությամբ, ինչպես նաև այն դեպքերում, երբ կատարված արարքները թեպետ եղել են նույնական և ուղղված են եղել միևնույն անմիջական օբյեկտի դեմ, սակայն ընդգրկված չեն եղել միասնական դիտավորությամբ, այլ յուրաքանչյուր դեպքում դիտավորությունն առանձին է ծագել, կատարվածը չի կարող դիտվել որպես շարունակվող հանցագործություն և ենթակա է որակման հանցագործությունների համակցության կանոններով:*

*Հետևաբար Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հանցագործությունների իրական համակցության կամ շարունակվող հանցագործության կանոնները կիրառելու և հանցավորի արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար քրեական վարույթն իրականացնող մարմինը հատուկ ուշադրություն պետք է դարձնի կոնկրետ հանցագործության օբյեկտին, կատարվող արարքների բնույթին, կատարման եղանակին, աղբյուրին, դիտավորության ու նպատակի առանձնահատկություններին»* (տե՛ս *Վարդան Մկրտչյանի, Արբակ Առաքելյանի և Գրիշա Մուրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴ/0034/01/15 որոշման 13-14-րդ կետերը):

13. Սույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Հ.Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով (2 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (2 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանին մեղավոր է ճանաչել վերոհիշյալ արարքների կատարման մեջ և պատիժ է նշանակել հանցագործությունների համակցության կանոնների կիրառմամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Հ.Մարտիրոսյանին մեղսագրված արարքների քրեաիրավական որակման և նշանակված պատիժների մասով բեկանելով և փոփոխելով, փաստել է, որ Հ.Մարտիրոսյանին մեղսագրված արարքների որակման մասով ստորադաս դատարանի դատական ակտը անհիմն է և չի բխում քրեական գործի փաստերից: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առկա չեն այնպիսի տվյալներ, որոնք կարող են վկայել, որ ամբաստանյալի կողմից կատարված հափշտակությունները միասնական դիտավորությամբ չեն իրականացվել, այլ դիտավորությունը ծագել է յուրաքանչյուր արարքի կատարումից հետո: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը միասնական դիտավորությունն ընդգծելու տեսանկյունից հատկանշական է համարել այն, որ ամբաստանյալի կողմից կատարված գողությունները հիմնականում իրականացվել են նույն ոճով, եղանակով, ինչպես նաև հափշտակությունները կատարվել են 2014 թվականի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում, ավելին՝ եղել են դեպքեր, որ նույն օրերի ընթացքում կատարվել են մեկից ավելի գողություններ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանին առաջադրված մեղադրանքները պետք է դիտարկել որպես միասնական դիտավորությամբ կատարված շարունակվող հանցագործություն. հակառակ մոտեցումը Վերաքննիչ դատարանը համարել է խիստ կասկածելի և հիմնված բացառապես ենթադրության վրա (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

14. Նախորդ, ինչպես նաև սույն որոշման 6-6.1.-րդ կետերում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 12-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանի գործողություններում բացակայում են շարունակվող հանցագործության հատկանիշները: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Մարտիրոսյանին մեղսագրված արարքների միջև առկա չէ օբյեկտիվ և սուբյեկտիվ այնպիսի կապ, որը թույլ կտար դրանք գնահատել որպես մեկ ամբողջություն:

Այսպես՝ գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեպետ Հ.Մարտիրոսյանը կատարել է մեկից ավելի նույնական արարքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն՝ 177-րդ հոդվածի տարբեր մասերով, այնուամենայնիվ, այդ ոտնձգություններն ուղղված են եղել տարբեր անմիջական օբյեկտների դեմ և կատարվել են տարբեր աղբյուրներից:

Ինչ վերաբերում է նշված գողություններն միասնական դիտավորությամբ կատարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը, ապա գործի փաստական հանգամանքների և ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանի ինչպես դատաքննական (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), այնպես էլ դատարանում հրապարակված նախաքննական ցուցմունքների (տե՛ս սույն որոշման 6.1.-րդ կետը) ամբողջական վերլուծությունից հետևում է, որ վերջինս գործել է ոչ թե միասնական և նախնական դիտավորությամբ, այլ յու-

րաքանչյուր դեպքում կրկին ծագած դիտավորությամբ: Հետևաբար, անհիմն է Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ սույն գործով առկա չեն այնպիսի տվյալներ, որոնք կարող են վկայել, որ ամբաստանյալի կողմից կատարված հափշտակությունները միասնական դիտավորությամբ չեն իրականացվել, այլ դիտավորությունը ծագել է յուրաքանչյուր արարքի կատարումից հետո: Ավելին, Վերաքննիչ դատարանի ինչպես սույն, այնպես էլ Հ.Մարտիրոսյանին առաջադրված մեղադրանքները որպես շարունակվող հանցագործություն չդիտարկելը խիստ կասկածելի և բացառապես ենթադրության վրա հիմնված համարելու վերաբերյալ պատճառաբանության (տե՛ս սույն որոշման 8-րդ և 13-րդ կետերը) կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ *յուրաքանչյուր դեպքում ապացուցման ենթակա է ոչ թե միասնական դիտավորության բացակայությունը, այլ առկայությունը. այլ կերպ ասած՝ արարքը յուրաքանչյուր դեպքում պետք է համարել ոչ միասնական դիտավորությամբ կատարված, եթե միասնական դիտավորությամբ կատարված լինելը չի հաստատվել* (տե՛ս սույն որոշման 9.1.-րդ կետը):

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ *ամբաստանյալի կողմից կատարված գողությունները հիմնականում իրականացվել են նույն ոճով, եղանակով, ինչպես նաև հափշտակությունները կատարվել են 2014 թվականի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում, ավելին՝ եղել են դեպքեր, որ նույն օրերի ընթացքում կատարվել են մեկից ավելի գողություններ* (տե՛ս սույն որոշման 8-րդ և 13-րդ կետերը)՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել հափշտակությունների՝ միասնական դիտավորությամբ կատարված լինելու մասին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ այնպիսի տվյալ, որն անմիջականորեն կվկայեր, որ ամբաստանյալը նախապես պլանավորել է կատարել որոշակի քանակությամբ հափշտակություններ և ունեցել է միասնական հանցավոր մտադրության իրականացման ընդհանուր նպատակ: Այլ կերպ՝ Հ.Մարտիրոսյանի կողմից կատարված արարքները շարունակվող հանցագործություն գնահատելու համար անհրաժեշտ և սույն որոշման 12-րդ կետում մեջբերված օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշները բացակայում են, ուստի քննարկվող արարքների նկատմամբ կիրառման են ենթակա հանցագործությունների իրական համակցության կանոնները:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, որպես միասնական դիտավորությամբ կատարված շարունակվող հանցագործություն դիտարկելով ամբաստանյալին մեղսագրված արարքները, սխալ եզրահանգման է եկել շարունակվող հանցագործության և հանցագործությունների իրական համակցության կանոնների կիրառման կապակցությամբ: Հետևաբար, ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանի արարքները որպես շարունակվող հանցագործություն դիտելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն իրավաչափ չէ:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում: Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի խախտումը ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 406-րդ հոդվածների՝ վերջինիս կողմից կայացված դատական ակտը բեկանելու հիմք է: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի պահպանմամբ ամբաստանյալ Հ.Մարտիրոսյանի նկատմամբ պատիժ նշանակելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Հակոբ Հարությունի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 25-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 26-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**21.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԴ/0046/13/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ | |
| ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի ներկայացուցիչ | Ա.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 19-ի որոշման դեմ դատապարտյալ Արթուր Ռոմայի Օսիպյանի պաշտպան Ն.Նորիկյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի հունվարի 26-ի դատավճռով Արթուր Ռոմայի Օսիպյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 12 (տասներկու) տարի ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 2009 թվականի հոկտեմբերի 26-ից:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ռ.Օսիպյանը և Ա.Պետրոսյանը:

Վճռվել է տուժողի իրավահաջորդ Ռ.Ասլանյանի քաղաքացիական հայցը բավարարել մասնակիորեն, և ամբաստանյալներ Ա.Օսիպյանից և Ռ.Օսիպյանից բռնագանձել 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես հուղարկավորության ծախսերի հատուցում:

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ Ա.Խաչատրյանի՝ «Համաներման ակտի կիրառման մասին» 2013 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Ա.Օսիպյանի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված պատժաչափի չկրած մասը ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունված «ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի 6-րդ ենթակետի ուժով կրճատվել է 6 ամսով:

2016 թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ միջնորդելով դատապարտյալ Ա.Օսիպյանին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի կարգով ազատել պատժի հետագա կրումից:

2. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ միջնորդագիրը բավարարել է՝ դատապարտյալ Ա.Օսիպյանին ազատելով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի հունվարի 26-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասի՝ 4 (չորս) տարի 5 (հինգ) ամիս 1 (մեկ) օր ժամկետով ազատազրկման կրումից՝ պատիժը կրելու ժամանակ այնպիսի ծանր հիվանդությամբ հիվանդանալու պատճառաբանությամբ, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն:

3. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Հ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հունվարի 19-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը բեկանել՝ մերժելով ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունվարի 19-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ա.Օսիպյանի պաշտպան Ն.Նորիկյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Դատապարտյալ Ա.Օսիպյանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ *«նա 2009 թվականի հոկտեմբերի 25-ին ժամը 23-24-ի սահմաններում Աշտարակ քաղաքի տարածքում նկատելով Հ.Քեգոյանին, որոշել է նրա կողմից նախկինում իր և իր հարազատների հասցեին արված հայհոյանքների համար սպանելու միջոցով վրեժխնդիր լինել և ընդունելով եղբոր՝ Ռ.Օսիպյանի առաջարկը Հ.Քեգոյանին սպանելու համար, նախապես իրենց հետ վերցնելով նմանատիպ շեղբով դանակներ և փայտե մահակ՝ գիշերը ժամը 01:30-ի սահմաններում գնացել են Ուշի գյուղ, որտեղ հանդիպել են իրենց ընկեր Ա.Պետրոսյանին և հանցավոր համաձայնության գալով նրա հետ, գնացել և դարանակալել են Աշտարակ քաղաքի Ն.Աշտարակեցու փող. թիվ 88 շենքի բակում և այնտեղ սպասել Հ.Քեգոյանին: Երբ Հ.Քեգոյանը մոտեցել է շքամուտքին, նկատելով նրանց, կանխազգալով հետագա ընթացքը, դիմել է փախուստի, սակայն վերջիններս հետապնդել են նրան և դուրս գալով Ն.Աշտարակեցու փողոց, մարմնական վնասվածքներ հասցնելով, վերջինիս ապօրինաբար զրկել են կյանքից, ապա դիմել փախուստի»* (տե՛ս նյութեր, թերթ 16):

6. «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագրին կից ներկայացված՝ միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի եզրակացության համաձայն՝ *«(...) Արթուր Ռոմայի Օսիպյանը տառապում է հետևյալ հիվանդություններով՝ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ, 4-րդ կլինիկական փուլ, ծանր արտահայտված իմունային անբավարարություն, կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգերի ախտահարումով, լիմֆիկ էնցեֆալիտով և վերջույթների պոլինեյրոպաթիայով»:*

*(...) Նշված հիվանդությունները հանդիսանում են ծանր հիվանդություններ և համապատասխանում են ՀՀ կառավարության 26.05.2006թ.-ի 825-Ն որոշման հավելված 2-ում ընդգրկված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 39-րդ կետի պահանջներին»* (տե՛ս նյութեր, թերթեր 4-9):

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Հաշվի առնելով դատապարտյալ Ա.Օսիպյանի անձը, կատարած հանցագործության բնույթը, նկատի ունենալով, որ նա պատիժը կրելու ընթացքում հիվանդացել և այժմ տառապում է «ՄԻԱՎ/ՁԻԱՀ, 4-րդ կլինիկական փուլ, ծանր արտահայտված իմունային անբավարարություն, կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգերի ախտահարումով, լիմֆիկ էնցեֆալիտով և վերջույթների պոլինեյրոպաթիայով» հիվանդությամբ, որը հանդիսանում է պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդություն և դասվում է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման հավելված 2-ում ընդգրկված պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդությունների*

*ցանկի 39-րդ կետին, ներկայումս գտնվում է բուժման մեջ՝ առողջական ծանր վիճակում, ինչպես նաև հաշվի առնելով, որ դատապարտյալ Ա.Օսիպյանն իր նկատմամբ նշանակված պատժից կրել է 7 (յոթ) տարի 29 (քսանինը) օր ժամկետով ազատազրկումը՝ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Օսիպյանը ենթակա է ազատման պատժի մնացած մասը՝ 4 (չորս) տարի 5 (հինգ) ամիս 1 (մեկ) օր ժամկետով ազատազրկումը կրելուց՝ պատիժը կրելու ժամանակ այնպիսի ծանր հիվանդությամբ հիվանդանալու պատճառով, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն (...)»* (տե՛ս նյութեր, թերթեր 59-60):

8. Վերաքննիչ դատարանը, քեկաանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, արձանագրել է. *«(...) Քննարկվող պարագայում, ըստ էության պատշաճ ուսումնասիրության և գնահատման չեն ենթարկվել հիշյալ հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները (այդ թվում նաև՝ կատարված հանցագործության ծանրությունը, դատապարտյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ):*

*Հարկ է արձանագրել, որ 03.11.2016թ. և 11.11.2016թ. որոշումներ են կայացվել դատապարտյալ [Ա].Օսիպյանին ներքին կանոնակարգի խախտման համար նկատողություն հայտարարելու մասին:*

*03.11.2016թ. թվագրմամբ որոշում է կայացվել դատապարտյալ [Ա].Օսիպյանին որպես ինքնավնասման հակում ունեցող դատապարտյալ հաշվառելու մասին:*

*02.11.2016թ. հոգեբանական եզրակացության համաձայն. «Ելնելով դատապարտյալ Ա.Օսիպյանի «ԴՀ» ՔԿՀ-ում գտնվելու ժամանակահատվածում ցուցաբերած վարքից (...) դատապարտյալը հակված է շանտաժային-դեմոնստրատիվ ինքնավնասման ակտերի իրականացման, ինչը փաստում է վերջինիս կողմից 01.11.2016թ.-ին «ԴՀ» ՔԿՀ-ում կատարած ինքնավնասումը՝ ոտքը տախտակին գամելը»:*

*03.11.2016թ. տեղեկանքի համաձայն «ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում պատիժը կրող դատապարտյալ Արթուր Ռոմայի Օսիպյանին անվտանգության ապահովման բաժինը չի առարկել հաշվառել որպես ինքնավնասման հակում ունեցող:*

*(...) [Վ]երը շարադրված հանգամանքների առկայության պայմաններում, վիճարկվող դատական ակտում տեղ գտած պատճառաբանությունները քննարկվող պարագայում բավարար չեն հետևության հանգելու այն մասին, որ դատապարտյալ Արթուր Ռոմայի Օսիպյանի վերաբերյալ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման»* (տե՛ս նյութեր, թերթեր 134-165):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի պահանջները, ճիշտ չի կիրառել նույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի պահանջները՝ արդյունքում գերազանցելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսվող խստության թույլատրելի սահմանը:

Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է անհիմն և չպատճառաբանված դատական ակտ՝ հետամուտ չլինելով օբյեկտիվորեն քննության առնելու Ա.Օսիպյանի առողջական վիճակի բարդությունն ու անկանխատեսելի հետևանքների առաջացման հնարավորությունը, բավարարվելով միայն այնպիսի դիրքորոշումների արձանագրմամբ, թե Առաջին ատյանի դատարանի կողմից պատշաճ ուսումնասիրության և գնահատման չի ենթարկվել դատապարտյալի կողմից կատարված հանցագործության ծանրությունը, դատապարտյալի անձնավորությունը, ինքնավնասման հակում ունենալը:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունվարի 19-ի դատական ակտը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ի որոշմանը:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավճիռ կայացնելուց հետո ծանր հիվանդությամբ հիվանդացած անձին պատժից ազատելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կառուցակարգի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանվա՞ծ են արդյոք դատապարտյալ Ա.Օսիպյանին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի միջնորդագրի քննության արդյունքում ստորադաս դատարանների կայացրած որոշումները:

13. ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:*

*(…)*

*3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա)

3-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»*:

ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, կյանքական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն:*

*2. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Եթե անձը հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո հիվանդացել է այլ ծանր հիվանդությամբ, որը խոչընդոտում է պատիժը կրելուն, ապա դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի համաձայն. *«1. Այն դեպքում, երբ ազատազրկման դատապարտված անձը պատիժը կրելու ժամանակ հիվանդացել է (…) ծանր հիվանդությամբ, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն, դատարանը, քրեական պատիժն իրականացնող հիմնարկի վարչակազմի միջնորդագրով, որը պետք է հիմնված լինի բժշկական հանձնաժողովի եզրակացության վրա, իրավունք ունի որոշում կայացնել պատիժը հետագայում կրելուց նրան ազատելու մասին:*

*(…)*

*3. Ծանր հիվանդությամբ հիվանդացած անձանց պատիժը հետագայում կրելուց ազատելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության ծանրությունը, դատապարտյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ:*

*(…)»:*

Ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու հիմքը ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված մարդասիրության սկզբունքի դրսևորումներից է: Մասնավորապես, քրեակատարողական հիմնարկում պատժի կատարման և կրման կարգի պահպանումը, նշանակված պատժի կրման հետ կապված պարտականությունների կատարումը ծանր հիվանդությամբ հիվանդացած անձի համար կարող է դառնալ անհնարին, իսկ որոշ դեպքերում նաև տվյալ դատապարտյալի կյանքի և առողջության համար վտանգավոր: Նման դեպքերում նշանակված պատժի կրումը դատապարտյալին պատճառում է ֆիզիկական և հոգեկան տառապանքներ, նվաստացնում նրա արժանապատվությունը, ինչն անթույլատրելի է ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների տեսանկյունից:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդ-

վածի մեկնաբանման կապակցությամբ ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ հիշյալ հոդվածով ամրագրվում է ժողովրդավարական հասարակության առավել հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակապես արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և տուժած անձի վարքագծից *(տե՛ս Labita v. Italy գործով Մեծ պալատի՝ 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/95, կետ 119)*:

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձին պատժի կրումից ազատելու հիմքերն են՝

- հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո անձի՝ ծանր հիվանդությամբ հիվանդանալը,

- այդ հիվանդության՝ պատիժը կրելուն խոչընդոտելը (պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության՝ 2006 թվականի մայիսի 26-ի որոշման թիվ 825-Ն որոշման հավելված 2-ում):

Ընդ որում, հիշյալ հիմքերի առկայության դեպքում անձին պատժի կրումից ազատելը դատարանի հայեցողական լիազորությունն է: Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ դատական հայեցողությունը որոշում կայացնելիս ընտրություն կատարելու դատարանի իրավազորությունն է: Նշված ընտրության հիմքերն ու սահմանները ամրագրված են օրենքով, պետք է համապատասխանեն օրենսդրի կամքին և դատավորի իրավագիտակցությանը, բխեն իրավունքի հիմնարար սկզբունքներից, գործի կոնկրետ հանգամանքներից և հանցավորի անձից: Դատարանին վերապահված ընտրության իրավասությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարանը հնարավոր օրինական որոշումներից պետք է ընտրի այն, որն առավելագույնս կհամապատասխանի հիմնավորվածության և արդարացիության չափանիշներին: Այն ենթադրում է նաև ոչ միայն մի քանի որոշումների միջև ընտրություն կատարելու իրավասություն, այլ այնպիսի ընտրություն կատարելու պարտականություն, որի արդյունքում կայացված որոշումն առավելագույնս կհամապատասխանի քննվող կոնկրետ գործի հանգամանքներին և հանցագործի անձին *(հայեցողական լիազորության մասին, mutatis mutandis, տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի Հմայակ Դավթյանի վերաբերյալ գործով թիվ ԾԴ/0126/01/12 որոշումը)*:

14.1. Ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելիս դատարանի հայեցողության սահմանները նախանշվում են օրենսդրի կողմից սահմանված այնպիսի հանգամանքների հաշվառմամբ, ինչպիսիք են՝ կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ դատարանի հայեցողությունը սահմանափակված է նաև իրավունքի

հիմնարար սկզբունքներով, ինչպիսին է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ վատ վերաբերմունքի արգելքը: Ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու դատարանի հայեցողության հիշյալ սահմանափակումը Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծության համատեքստում:

Այսպես՝ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ վատ վերաբերմունքը պետք է ունենա դաժանության որոշակի նվազագույն աստիճան, որպեսզի ընդգրկվի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրառության ոլորտում: Այս նվազագույն մակարդակի գնահատումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են նման վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունները և որոշ դեպքերում տուժած անձի սեռը, տարիքը և առողջական վիճակը *(տե՛ս, ի թիվս այլ-ների, Ireland v. the United Kingdom գործով 1978 թվականի հունվարի 18-ի վճիռը, գանգատ թիվ 5310/71, կետ 162):* Թեև այն հարցը, թե արդյո՞ք վերաբերմունքի նպատակը տուժած անձին նվաստացնելը կամ ստորացնելն էր, այնպիսի գործոն է, որը պետք է հաշվի առնվի, նման նպատակի բացակայությունը չի կարող վերջնականապես բացառել 3-րդ հոդվածի խախտման առկայությունը *(տե՛ս Peers v. Greece գործով 2001 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28524/95, կետ 74):*

Ազատությունից զրկելու համատեքստում Եվրոպական դատարանը շարունակաբար ընդգծել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակում ընդգրկվելու համար անձին պատճառված տառապանքի և զրկանքների աստիճանը բոլոր դեպքերում պետք է գերազանցի ազատությունից զրկելուն ներհատուկ տառապանքների և զրկանքների անխուսափելի աստիճանը (տե՛ս, *mutatis mutandis, Tyrer v. the United Kingdom գործով 1978 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 5856/72, կետ 30, Soering v. the United Kingdom գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 14038/88, կետ 100):* Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քննարկվող հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես առողջական վիճակի հիմքով կալանավորված անձին ազատ արձակելու կամ նրան քաղաքացիական հիվանդանոց տեղափոխելու ընդհանուր պարտավորություն սահմանող դրույթ, անգամ եթե նա տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հատկապես դժվար է բուժել *(տե՛ս Gelfmann v. France գործով 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 25875/03, կետ 50):* Այնուամենայնիվ, այն պետության համար առաջացնում է ազատությունից զրկված անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը, այդ թվում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով պաշտպանելու պարտականություն *(տե՛ս Sarban v. Moldova գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 3456/05, կետ 77):* Այդ հանգամանքը շեշտել է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում՝ նշելով, որ ազատությունից զրկված բոլոր անձանց համար պետք է ապահովվեն այնպիսի պայմաններ, որոնք համատեղելի են նրանց արժանապատվությունը

հարգելու հետ, նրանք չպետք է ենթարկվեն այնպիսի ծանրության տառապանքների կամ զրկանքների, որոնք գերազանցում են անազատության մեջ գտնվելուն ներհատուկ տառապանքի անխուսափելի աստիճանը, նրանց առողջությունն ու բարեկեցությունը պետք է պատշաճորեն պահպանվի, ի թիվս այլ միջոցների՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով՝ հաշվի առնելով ազատությունից զրկելու հետ կապված գործնական պահանջները *(տե՛ս Davtyan v. Armenia գործով 2015 թվականի մայիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 29736/06, կետ 81):*

Ծանր հիվանդ անձի ազատազրկումը Կոնվենցիայի 3-րդ հոդվածին համապատասխանելու հարցը քննարկելիս Եվրոպական դատարանը հաշվի է առնում տարբեր հանգամանքներ, որոնք են.

- դատապարտյալի առողջական վիճակը,

- ազատազրկման վայրում տրամադրվող բժշկական օգնության համարժեքությունը: Մասնավորապես, դատապարտյալներին ցուցաբերվող բժշկական օգնության պատշաճությունը գնահատելիս Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ երաշխավորվի յուրաքանչյուր դատապարտյալի բժշկական օգնությունը նույն մակարդակով, ինչ լավագույն քաղաքացիական հիվանդանոցներում *(տե՛ս Mirilashivili v. Russia գործով 2007 թվականի հուլիսի 10-ի որոշումը, գանգատ թիվ 6293/04):* Ավելին՝ Եվրոպական դատարանն ընդունել է, որ քրեակատարողական համակարգի բժշկական մասերի միջոցները սկզբունքորեն սահմանափակ են քաղաքացիական հիվանդանոցների միջոցների համեմատությամբ *(տե՛ս Grishin v. Russia գործով 2007 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 30983/02, կետ 76):* Միևնույն ժամանակ նշել է, որ բժշկական օգնության պահանջվող չափանիշը պետք է համապատասխան լինի դատապարտյալի արժանապատվությանը *(տե՛ս Aleksanyan v. Russia գործով 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ, կետ 140),*

- անձի առողջական վիճակի տեսանկյունից նրա կալանքի տակ գտնվելու նպատակահարմարությունը *(տե՛ս Mouisel v. France գործով 2002 թվականի նոյեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 67263/01, կետեր 40-42),*

- անձի առողջական վիճակի դինամիկան,

- ծանր հիվանդ անձի առողջական վիճակի վատթարացման դեպքում նրան պատժից պայմանական ազատելու կամ այն պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը *(տե՛ս mutatis mutandis Aleksanyan v. Russia գործով 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ, գանգատ թիվ, կետ 136),*

- անձի վարքագիծը (այն է՝ բժիշկների հետ համագործակցելուց նրա շարունակաբար հրաժարվելը) *(տե՛ս Gelfmann v. France գործով 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 25875/03, Aleksanyan v. Russia գործով 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ, կետ 137):*

15. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծանր հիվանդության հիմքով անձին պատժի կրումից ազատելը դատարանի հայեցողությունն է, որն իրացնելիս դատարանը պետք է գնահատի

օրենքով սահմանված հիմքերի առկայությունը, որպիսիք են ոչ միայն կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, այլև հիվանդության բնույթը, դատապարտյալի առողջական վիճակը, ազատազրկման վայրում տրամադրվող բժշկական օգնության համարժեքությունը, առողջական վիճակի դինամիկան, անձի վարքագիծը (այն է՝ բժիշկների հետ համագործակցելուց նրա շարունակաբար հրաժարվելը) և այլ հանգամանքներ:

16. Նման մոտեցումը բխում է նաև մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերի պահանջներից: Մասնավորապես. Միավորված ազգերի կազմակերպության՝ 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված՝ «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 22-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնագետի ծառայության կարիք ունեցող հիվանդ բանտարկյալներին պետք է տեղափոխել հատուկ բժշկական հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ: Բանտի հիվանդանոցները պետք է ունենան սարքեր, կայանքներ և դեղամիջոցներ, որոնք անհրաժեշտ են հիվանդների պատշաճ խնամքի և նրանց բուժման համար, ինչպես նաև բավականաչափ որակյալ անձնակազմ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 2006 թվականի հունվարի 11-ի՝ «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» թիվ Rec(2006)2 հանձնարարականի համաձայն՝ բանտային մարմինները պետք է երաշխավորեն բանտարկյալների առողջությունը, մասնագիտական բուժման կարիք ունեցող հիվանդ բանտարկյալները պետք է փոխադրվեն մասնագիտացված հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ, եթե այդ բուժումը բանտում հասանելի չէ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1993 թվականի հոկտեմբերի 18-ի՝ «Բանտի և բանտում տարափոխիկ հիվանդությունների, այդ թվում՝ ՁԻԱՀ-ի հսկողության քրեաբանական և առողջապահական խնդիրների մասին» թիվ R(93)6 հանձնարարականի 4-րդ կետի համաձայն՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի յուրաքանչյուր փուլում դատապարտյալներին պետք է առաջարկվի այն նույն բժշկական և հոգեբանական բուժումը, որը նախատեսված է հասարակության այլ անդամների համար: Ընդհանուր առմամբ նրանք պետք է ունենան այն բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորություն, որը համարժեք է ընդհանրապես հասարակությանը մատուցվող ծառայություններին:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1998 թվականի ապրիլի 8-ի՝ «Բանտերում առողջապահության էթիկական և կազմակերպչական հարցերի վերաբերյալ» թիվ R(98)7 հանձնարարականի հավելվածն անդրադառնալով տարափոխիկ հիվանդությունների, մասնավորապես՝ ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, հեպատիտի դեպքերում ձեռնարկվող միջոցառումներին, նշում է, որ բանտի առողջապահական ծառայությունը պետք է առնվազն կարողանա տրամադրել ամբուլատոր խորհրդատվություններ և շտապ օգնություն: Երբ դատապարտյալների առողջական վիճակը պահանջում է բուժում, որը չի կարող բանտում երաշխավորվել, հնարա-

վոր ամեն ինչ պետք է ձեռնարկվի, որպեսզի բուժումը տրամադրվի անվտանգության պայմաններում, բանտից դուրս գտնվող առողջապահական հիմնարկների կողմից: Այն անձինք, ովքեր հիվանդանում են ՁԻԱՀ-ի հետ կապված ծանր հիվանդություններով՝ պետք է բուժվեն բանտային բժշկական բաժանմունքում՝ առանց պարտադիր մեկուսացման:

16.1. Վերոշարադրյալ հանճնարարականներում նշված չափանիշներին համապատասխան՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ եթե անձի առողջական վիճակով պայմանավորված՝ պատիժը կրելուն զուգընթաց անհնարին է վերջինիս ապահովել համապատասխան պատշաճ բժշկական օգնությամբ, ապա հաշվի առնելով անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքը՝ անձին պատիժը կրելուց չազատելը չի կարող արդարացվել նրա կատարած արարքի բարձր հանրային վտանգավորությամբ և/ կամ նրա դրսևորած վարքագծով:

17. Սույն գործի փաստերի համաձայն՝ Ա.Օսիպյանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ Հ.Բեգոյանի կողմից նախկինում իր և իր հարազատների հասցեին արված հայհոյանքների համար վրեժխնդիր լինելու շարժառիթով եղբոր՝ Ռ.Օսիպյանի առաջարկով, նախապես իրենց հետ վերցնելով նմանատիպ շեղբով դանակներ և փայտե մահակ, հանցավոր համաձայնության գալով իրենց ընկեր Ա.Պետրոսյանի հետ, Հ.Բեգոյանին մարմնական վնասվածքներ հասցնելով, նրան ապօրինաբար զրկել են կյանքից (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացրել Առաջին ատյանի դատարան Ա.Օսիպյանին պատժի հետագա կրումից ազատելու մասին (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Հիշյալ միջնորդագրին կից ներկայացված միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի եզրակացության համաձայն՝ Արթուր Օսիպյանը տառապում է «ՄԻԱՎ/ՁԻԱՀ, 4-րդ կլինիկական փուլ, ծանր արտահայտված իմունային անբավարարություն, կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգերի ախտահարումով, լիմֆիկ էնցեֆալիտով և վերջույթների պոլինեյրոպաթիայով», որոնք ծանր հիվանդություններ են և համապատասխանում են ՀՀ կառավարության՝ 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման հավելված 2-ում ընդգրկված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 39-րդ կետի պահանջներին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով դատապարտյալ Ա.Օսիպյանի անձը, կատարած հանցագործության բնույթը, նկատի ունենալով, որ նա պատիժը կրելու ընթացքում հիվանդացել և այժմ տառապում է «ՄԻԱՎ/ՁԻԱՀ, 4-րդ կլինիկական փուլ, ծանր արտահայտված իմունային անբավարարություն, կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգերի ախտահարումով, լիմֆիկ էնցեֆալիտով և վերջույթների պոլինեյրոպա-

քիայով» հիվանդությամբ, որը հանդիսանում է պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդություն և դասվում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման հավելված 2-ում ընդգրկված պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 39-րդ կետին, ներկայումս գտնվում է բուժման մեջ՝ առողջական ծանր վիճակում, ինչպես նաև, որ դատապարտյալ Ա.Օսիպյանն իր նկատմամբ նշանակված պատժից կրել է 7 (յոթ) տարի 29 (քսանինը) օր ժամկետով ազատազրկումը, գտել է, որ դատապարտյալ Ա.Օսիպյանը ենթակա է ազատման պատժի մնացած մասը կրելուց՝ պատիժը կրելու ժամանակ այնպիսի ծանր հիվանդությամբ հիվանդանալու պատճառով, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ մերժելով ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունն այն պատճառաբանությամբ, որ Առաջին ատյանի դատարանն ըստ էության պատշաճ ուսումնասիրության և գնահատման չի ենթարկել հիշյալ հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները (այդ թվում նաև՝ կատարված հանցագործության ծանրությունը, դատապարտյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ), որպիսի պայմաններում վիճարկվող դատական ակտում տեղ գտած պատճառաբանությունները բավարար չեն հանգելու այն հետևության, որ դատապարտյալ Ա.Օսիպյանի վերաբերյալ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 16-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտում տեղ գտած պատճառաբանությունները բավարար չեն հանգելու այն հետևության, որ դատապարտյալ Ա.Օսիպյանը կարող է ծանր հիվանդության հիմքով ազատվել պատժի կրումից, առավելապես սահմանափակվել է այնպիսի հանգամանքների գնահատմամբ, ինչպիսիք են կատարված հանցագործության ծանրությունը, ներքին կանոնակարգի խախտման համար նկատողություն ստացած լինելը, որպես ինքնավնասման հակում ունեցող հաշվառված լինելը, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում գտնվելու ժամանակահատվածում դրսևորած վարքի վերաբերյալ տրված հոգեբանական եզրակացությունը, որոնք բնութագրում են դատապարտյալի վարքագիծը քրեակատարողական հիմնարկի ներսում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալի կողմից կատարված հանցագործության ծանրությունը թեև ունի նշանակություն ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու հարցը լուծելիս, սակայն չի կարող այդպիսի միջնորդությունը մերժելու կամ բավարարելու ինքնուրույն հիմք դիտարկվել. նշյալ հանգամանքը ենթակա է գնահատման հա-

մակցության մեջ՝ դատապարտյալի հիվանդության և համապատասխան բժշկական օգնություն ստանալու հնարավորության համակողմանի ուսումնասիրության հետ մեկտեղ: Այլ կեպ՝ քննարկվող ինստիտուտի գործադրման հարցը բացառապես հանցագործության որակական և քանակական հատկանիշների հիման վրա լուծելը կամ դրանց հիմնական, առաջնային նշանակություն վերագրելը չի կարող իրավաչափ համարվել:

Ինչ վերաբերում է դատապարտյալի դրսևորած վարքագծին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու հարցը լուծելիս այն ունի ավելի նվազ կարևորություն, քանի որ դուրս է տվյալ ինստիտուտի արժեբանական նշանակությունից:

Վերոնշյալի պայմաններում Վերաքննիչ դատարանը, ըստ էության հիմք ընդունելով Ա.Օսիպյանի կատարած արարքի հանրային վտանգավորությունը և նրա դրսևորած վարքագիծը, դրանք գնահատման չի ենթարկել պատիժը կրելուն զուգընթաց դատապարտյալի առողջական վիճակին համապատասխան բժշկական օգնություն տրամադրելու հնարավորության համատեքստում:

Միևնույն ժամանակ վերոնշյալը պատշաճ գնահատման չի արժանացել նաև Առաջին ատյանի դատարանի կողմից, որը որոշում կայացնելիս ըստ էության միայն հիմք է ընդունել Ա.Օսիպյանի առողջական վիճակը՝ առանց պարզելու պատիժը կրելու հիմնարկում նրան համապատասխան բժշկական օգնություն տրամադրելու հնարավորությունը, առանց որի սույն գործով հնարավոր չէ հանգել հիմնավոր հետևության:

Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված և պատճառաբանված չեն դատապարտյալ Ա.Օսիպյանին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի միջնորդագրի քննության արդյունքում ստորադաս դատարանների կայացրած որոշումները:

19. Այսպիսով, ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասը, որի հետևանքով թույլ է տրվել ՀՀ Սահմանադրության 26-րդ, Կոնվենցիայի 3-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հիմք են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ

հողվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Արթուր Ռոմայի Օսիպյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 19-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**22.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱՎԴ-1/0018/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Արթուր Նորիկի Մելքոնյանի և Վահան Ստեփանի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. ՀՀ ՊՆ ՔԾ 8-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Գ.Մաթևոսյանի՝ 2014 թվականի հունիսի 18-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 91153314 քրեական գործը:

2014 թվականի հուլիսի 9-ին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 91153914 քրեական գործը:

2014 թվականի հուլիսի 17-ին թիվ 91153314 և թիվ 91153914 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է թիվ 91153914 համարով:

2014 թվականի հուլիսի 22-ին Արթուր Նորիկի Մելքոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով, 361-րդ հոդվածի 1-ին մասով, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2014 թվականի հուլիսի 22-ին Վահան Ստեփանի Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով, 361-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ), և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

1.1. 2014 թվականի սեպտեմբերի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 59103314 քրեական գործը:

2014 թվականի սեպտեմբերի 29-ին Ա.Մելքոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով, 34-175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

1.2. 2014 թվականի հոկտեմբերի 30-ին Վ.Վարդանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով և 361-րդ հոդվածի 5-րդ մասով:

2014 թվականի հոկտեմբերի 30-ին Ա.Մելքոնյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով և 361-րդ հոդվածի 5-րդ մասով:

2. 2014 թվականի հոկտեմբերի 30-ին որոշում է կայացվել թիվ 91153914 քրեական գործից մաս անջատելու մասին, որին շնորհվել է 91157614 համարը:

2014 թվականի նոյեմբերի 7-ին թիվ 91153914 քրեական գործը միացվել է թիվ 91157614 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 91157614 համարով:

2014 թվականի նոյեմբերի 18-ին թիվ 59103314 և թիվ 91157614 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 91157614 համարով:

3. 2015 թվականի ապրիլի 13-ին Վ.Վարդանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի ապրիլի 13-ին Ա.Մելքոնյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ

հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով:

4. 2015 թվականի ապրիլի 17-ին որոշում է կայացվել թիվ 91157614 քրեական գործից մաս անջատելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի հատկանիշներով, և նախաքննությունը շարունակվել է 90297415 համարով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 91157614 քրեական գործից մաս է անջատվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով՝ նախաքննությունը շարունակելով 90297315 համարով:

5. 2015 թվականի ապրիլի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 10-ի դատավճռով Արթուր Մելքոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով նախատեսված հանցանքները կատարելու մեջ, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ, 67-րդ հոդվածների կիրառմամբ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Նույն դատավճռով Վահան Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքները կատարելու մեջ, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ, 67-րդ հոդվածների կիրառմամբ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով:

Վերոնշյալ դատական ակտով դատապարտվել են նաև Էմմանուել Սամվելի Ջաքարյանը, Սևակ Էդիկի Ալիխանյանը, Սուրեն Նորիկի Ավագյանը և Արսեն Հրաչիկի Մարտիրոսյանը:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 10-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել ամբաստանյալներ Ա.Մելքոնյանն ու Վ.Վարդանյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ ամբաստանյալների վերաքննիչ բողոքները մասնակիորեն բավարարել է և Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 10-ի դատավճիռը մասնակիորեն բեկանել: Ա.Մելքոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է և քրեական հետապնդումը դադարեցվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Վերջինս մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ

մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով նախատեսված հանցանքները կատարելու մեջ, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ, 67-րդ հոդվածների կիրառմամբ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 տարի 6 ամիս ժամկետով:

Նույն դատական ակտով Վ.Վարդանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է և քրեական հետապնդումը դադարեցվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Վերջինս մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով նախատեսված հանցանքները կատարելու մեջ, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ, 67-րդ հոդվածների կիրառմամբ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով:

Վերոհիշյալ դատական ակտի կապակցությամբ հատուկ կարծիք է ներկայացրել նախագահող դատավոր Ա.Պետրոսյանը՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության՝ ապացուցված համարելով, որ ամբաստանյալներ Ա.Մելքոնյանն ու Վ.Վարդանյանը կատարել են արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

7. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Վ.Վարդանյանի պաշտպան Ա.Մնացականյանը՝ խնդրելով մերժել վճռաբեկ բողոքը և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

8. Նախաքննության մարմնի կողմից Ա.Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 362-րդ հոդվածի 1-ին մասով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 182-րդ հոդվածի 2-րդ մասի 3.1-րդ կետով այն բանի համար, որ *«(...) [Ն]ա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 76852 զորամասի 2-րդ հրետանային մարտկոցի 2-րդ հրետանային դասակի 2-րդ հաշվարկի լիցքավորող, կոչումով շարքային, հափշտակություն կատարելու հարցի շուրջ նախնական համաձայնության գալով նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վահան Ստեփանի Վարդանյանի հետ, 2014թ. հուլիսի 7-ին՝ ժամը 03.15-ի սահմաններում, հավաքակայանի պատի վրայով անցնելով ապօրինի մուտք են գործել զորամասի հավաքակայանի տարածքում տեղակայված շինություն համարվող ավտոմեքենաների կայանման համար*

*նախատեսված պահեստարան, որտեղ, որպես հանցանքի կատարումը հեշտացնող միջոց, համածառայող Էմմանուել Զաքարյանից նախապես վերցրած ռետինե խողովակն օգտագործելով, կայանված «Ուրալ 432007» մակնիշի, ՊՆ 6127 Շ զինհամարանիշի ավտոմեքենայի բաքից քաշել-հանելու եղանակով հավաքակայանի օրապահ, շարքային Կառլեն Գրիգորյանի և հավաքակայանի ժամապահ Սևակ Ալիխանյանի ներկայությամբ բացահայտ հափշտակել են զգալի չափի՝ 71.736 դրամ ընդհանուր արժողությամբ 122 լիտր դիզելային վառելիք, որը լցնելով տարաների մեջ, Վահան Վարդանյանի հետ միասին գողոնը դուրս են բերել հավաքակայանի հետնամասի պատի վրայով ու հեռացել:*

*(...)*

*Բացի այդ, շարքային Արթուր Նորիկի Մելքոնյանը կողոպուտ կատարելուց հետո՝ կատարել է դասալքություն, այն է՝ 07.07.2014թ. զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել է զորամասը:*

*(...)*

*Բացի այդ, Արթուր Նորիկի Մելքոնյանը 2014թ. սեպտեմբերի 23-ին ուղղակի դիտավորությամբ, ուրիշի գույքի զգալի չափերի գաղտնի հափշտակություն կատարելու վերաբերյալ նախնական համաձայնության է եկել իր ընկերներ Սուրեն Ավագյանի և Արսեն Մարտիրոսյանի հետ, քննությամբ չպարզված անձից ձեռք են բերել Երևան քաղաքի Մանուկյան փողոցի 4-րդ շենքի 29 բնակարանի մուտքի դռան բանալու կրկնօրինակը, որից հետո 2014թ. սեպտեմբերի 24-ին, ժամը 03.00-ի սահմաններում, երեքով, օգտագործելով նշված բանալին, փորձել են բացել բնակարանի մուտքի դուռը և ապօրինի մուտք գործել նշված բնակարան՝ ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու նպատակով, սակայն, չկարողանալով բացել այն, հեռացել են՝ հանցագործությունն ավարտին չհասցնելով իրենց կամքից անկախ հանգամանքներով:*

*(...)*

*Բացի այդ, Արթուր Նորիկի Մելքոնյանը 2014թ. սեպտեմբերի 20-ից 24-ն ընկած ժամանակահատվածում, քննությամբ չպարզված հանգամանքներում ձեռք բերելով Սոնա Իշխանի Զաքևոսյանի անձնական կյանքին վերաբերվող գաղտնի տեղեկություններ, շորթում կատարելու դիտավորությամբ զանգահարել է վերջինիս և ներկայանալով Կարեն անունով, հայտնել է, որ ունի նրա վերաբերյալ արատավորող տվյալներ: Դրանք Ս.Զաքևոսյանի հարազատներին հրապարակելու սպառնալիքով, վերջինիցս պահանջել է խոշոր չափերի՝ 2.000 ԱՄՆ դոլար գումար: Այնուհետև, Ա.Մելքոնյանը, 2014թ. սեպտեմբերի 26-ին Երևանի Նորագավիթ թաղամասում Ս.Զաքևոսյանից ստացել է պահանջված գումարից 1.000 ԱՄՆ դոլար (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 73-75):

9. Նախաքննության մարմնի կողմից Վ.Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, 176-րդ

հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 362-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ *«(…) [Ն]ա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 76852 զորամասի ռեակտիվ հրետանային մարտկոցի 2-րդ հրետանային դասակի 2-րդ հաշվարկի ձշանառու, կոչումով՝ շարքային, երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև 3 օր տևողությամբ՝ 23.05.2014թ. ժամը 22.05-ից մինչև ժամը 23.45-ը, 28.05.2014թ. ժամը 15.05-ից մինչև 30.05.2014թ. ժամը 10.40-ը և 08.06.2014թ. ժամը 12.00-ից մինչև 11.06.2014թ. ժամը 10.10-ը, ինքնակամ թողել է ծառայության վայրը:*

*(…)*

*Բացի այդ, շարքային Վահան Ստեփանի Վարդանյանը հափշտակություն կատարելու հարցի շուրջ նախնական համաձայնության գալով նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Արթուր Մելքոնյանի հետ, 2014թ. հուլիսի 7-ին՝ ժամը 03.15-ի սահմաններում, հավաքակայանի պատի վրայով անցնելով ապօրինի մուտք են գործել զորամասի հավաքակայանի տարածքում տեղակայված շինություն համարվող ավտոմեքենաների կայանման համար նախատեսված պահեստարան, որտեղ որպես հանցանքի կատարումը հեշտացնող միջոց համածառայող Էմմանուել Զաքարյանից նախապես վերցրած ռետինե խողովակն օգտագործելով, կայանված «Ուրալ 432007» մակնիշի, ՊՆ 6127 Շ զինհամարանիշի ավտոմեքենայի բաքից քաշել-հանելու եղանակով հավաքակայանի օրապահ, շարքային Կառլեն Գրիգորյանի և հավաքակայանի ժամապահ Սևակ Ալիխանյանի ներկայությամբ բացահայտ հափշտակել են զգալի չափի՝ 71.736 դրամ ընդհանուր արժողությամբ 122 լիտր դիզելային վառելիք, որը լցնելով տարաների մեջ, Արթուր Մելքոնյանի հետ միասին գողոնը դուրս են բերել հավաքակայանի հետնամասի պատի վրայով ու հեռացել:*

*(…)*

*Բացի այդ, շարքային Վահան Ստեփանի Վարդանյանը, կողոպուտ կատարելուց հետո՝ կատարել է դասալքություն, այն է՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով 08.07.2014թ. ինքնակամ թողել է զորամասը* (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 83):

10. Ամբաստանյալներ Ա.Մելքոնյանը՝ 2014 թվականի **հուլիսի 7-ին**, իսկ Վ.Վարդանյանը՝ 2014 թվականի **հուլիսի 8-ին** ինքնակամ թողել են ծառայության վայրը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 24-25):

2014 թվականի հուլիսի 22-ին Ա.Մելքոնյանի և Վ.Վարդանյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 185, 188): Ա.Մելքոնյանը հայտնաբերվել է **2014 թվականի հոկտեմբերի 2-ին** (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 88), իսկ Վ.Վարդանյանը՝ **2014 թվականի դեկտեմբերի 2-ին** (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 72):

11. Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով գործում առկա ապացույցները և դրանք իրենց համակցության մեջ գնահատելով, արդյուն-

քում Ա.Մելքոնյանին և Վ.Վարդանյանին մեղավոր է ճանաչել վերջիններիս մեղսագրված հանցավոր արարքների կատարման մեջ:

Ամբաստանյալներին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքների մասով Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել նաև հետևյալ փաստական տվյալները. «*(…) Արթուր Մելքոնյանը 07.07.2014թ., իսկ Վահան Վարդանյանը 08.07.2014թ. զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել են զորամասը և հետախուզման մեջ գտնվելու ընթացքում իրենց կյանքի բավարար կենսապայմանները ապահովելու նպատակով **մշտական աշխատանք են ձեռք բերել և աշխատել**»* (տե՛ս քրեական գործ, հատոր 15-րդ, թերթ 102):

12. Համաձայն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի՝ դատարանում հրապարակվել է վկա՝ ՀՀ ՊՆ 76852 զորամասի համալրման բաժանմունքի պետ, կապիտան Հազարապետ Խաչատրյանի նախաքննական հետևյալ ցուցմունքը. «*Վահան Վարդանյանը 2014թ. մայիս ամսից մինչև հունիս ամսվա առաջին տասնօրյակն ընկած ժամանակահատվածում շուրջ երեք անգամ ինքնակամ թողել է զորամասը: Նշել է, որ վերջիններս ավտոհավաքակայանից կատարել են հափշտակություն, որից հետո Արթուր Մելքոնյանը 07.07.2014թ., իսկ Վահան Վարդանյանը 08.07.2014թ. լքել են զորամասը և այլևս չեն վերադարձել: Ավելացրել է նաև, որ նրանք 2014թ. մայիս ամսին՝ ճամբարային հավաքների ժամանակ իրեն ասել են, որ **այլևս չեն կարողանում ծառայել և չեն ցանկանում շարունակել ծառայությունը**»* (տե՛ս քրեական գործ, հատոր 15-րդ, թերթ 107):

13. Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, հանգել է հետևության, որ ստորադաս դատարանի դատավճիռը՝ Ա.Մելքոնյանին և Վ.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքների մասով, պետք է բեկանել, նրանց վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճել, իսկ քրեական հետապնդումը դադարեցնել՝ որպես հիմնավորում ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունները.*«(…) Առաջին ատյանի դատարանը վերլուծության չի ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի տարրերը և արդյունքում կայացրել է չպատճառաբանված և չհիմնավորված դատական ակտ.*

*Այսպես. (…) [ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի] [ս]ուբյեկտիվ կողմը (…) արտահայտվում է ուղղակի դիտավորությամբ՝ պատասխանատվությունը ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածով սահմանվում է, երբ անձը մտադրություն ունի խուսափել զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց:*

*Քրեական գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվել, որ ամբաստանյալներ Ա.Մելքոնյանը և Վ.Վարդանյանը կողոպուտը կատարելուց հետո, կատարել են դասալքություն, այն է՝ Արթուր Մելքոնյանը*

*07.07.2014թ., իսկ Վահան Վարդանյանը 08.07.2014թ. զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել են զորամասը, այսինքն գործել են՝ գիտակցելով, որ իրենց գործողություններով վերջնականապես հրաժարվում են զինվորական ծառայությունից և ցանկանում են դրա հետևանքների առաջացումը:*

*Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ամբաստանյալները նախկինում մի քանի անգամ ինքնակամ թողել են զորամասը, սակայն ամեն անգամ ինքնակամ վերադարձել են զորամաս, ըստ ամբաստանյալների և համածառայակիցների ցուցմունքների՝ ամբաստանյալներ Ա.Մելքոնյանը և Վ.Վարդանյանը դիտավորություն չեն ունեցել խուսափել ծառայությունից, դժգոհություններ ծառայության վերաբերյալ չեն ունեցել: Զորամասի տարածքը վերջիններս ինքնակամ թողել են ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված արարքը կատարելուց հետո՝ **քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու պատճառով** (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 16-րդ, թերթեր 71-114):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասը, ինչի արդյունքում կայացրել է չհիմնավորված և անօրինական դատական ակտ:

14.1. Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը կամայականորեն քննության առարկա չի դարձրել սույն գործի նյութերում առկա այնպիսի ապացույցների համակցություն, որոնք վկայում են ամբաստանյալներ Ա.Մելքոնյանի և Վ.Վարդանյանի սուբյեկտիվ կողմի՝ դիտավորության ուղղվածության մասին՝ մասնավորապես.

- նրանց անձը, նախկինում դատված լինելը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար, ինչպես նաև այն, որ ամբաստանյալները ՀՀ Սահմանադրությամբ և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված 24 ամսվա ծառայությունն իրականացնում են 2010 թվականից, ինչը, ըստ բողոքաբերի, վկայում է այն մասին, որ վերջիններս հրաժարվում են իրականացնել նշված պարտականությունները,

- Ա.Մելքոնյանի և Վ.Վարդանյանի կողմից զորամասն ինքնակամ թողնելուն նախորդող և հաջորդող ժամանակահատվածում նրանց վարքագիծը, այն, որ գտնվելով հետախուզման մեջ՝ կատարել են հանցավոր արարքներ, անընդհատ փոփոխել են իրենց բնակության վայրերը, իրենց և հարազատների կյանքի բավարար կենսապայմաններ ապահովելու նպատակով աշխատանք են ձեռք բերել, աշխատանքի անցնելով՝ իրենց զինծառայող լինելու հանգամանքը շրջապատից թաքցրել են և, ի վերջո, ՀՀ Սահմանադրութ-

յամբ իրենց վրա դրված պարտականություններն ամիսներ շարունակ չեն կատարել,

- վկա Հ.Խաչատրյանի ցուցմունքն այն մասին, որ Ա.Մելքոնյանը և Վ.Վարդանյանը 2014 թվականի մայիս ամսին ճամբարային հավաքների ժամանակ իրեն ասել են, որ այլևս չեն կարողանում ծառայել և չեն ցանկանում շարունակել ծառայությունը:

14.2. Բողոքաբերը փաստել է նաև, որ ստորադաս դատարանի այն մոտեցումը, որ «*(...) ամբաստանյալներ Ա.Մելքոնյանը և Վ.Վարդանյանը դիտավորություն չեն ունեցել խուսափել ծառայությունից, այլ վերջիններս զորամասը ինքնակամ թողել են ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված արարքը կատարելուց հետո՝ քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու պատճառով (...)*», անընդունելի է, քանի որ հանցագործության շարժառիթը սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չի հանդիսանում և արարքի որակման վրա չի ազդում, վերջինս կարող է հաշվի առնվել պատիժ նշանակելիս:

15. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալներ Ա.Մելքոնյանի և Վ.Վարդանյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Դասալքությունը՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալը՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»:*

Դասալքությունն առավել վտանգավոր զինվորական հանցագործություններից է, որի կատարմամբ անձը նպատակ է հետապնդում խուսափելու սահմանադրական պարտականությունը կատարելուց՝ զինվորական ծառայությունը կրելուց: Դասալքության դեպքում անձը չի ցանկանում շարունակել զինվորական ծառայությունը, ընդհանրապես հրաժարվում է զինված ուժե-

րում ծառայելուց: Այլ կերպ՝ զինծառայողը ոչ թե ժամանակավորապես, այլ վերջնականապես ընդհատում է իր և պետության միջև առկա զինծառայության հետ կապված իրավահարաբերությունները:

Քննարկվող հանցանքի կատարումը վկայում է այն մասին, որ զինծառայողը չի ցանկանում սեփական վարքը հարմարեցնել զինվորական ծառայությամբ պայմանավորված սահմանափակումների ու զինվորական կարգուկանոնը պահպանելու պահանջների հետ: Զորամասը կամ ծառայության վայրն առանց թույլտվության ինքնակամ թողնելով կամ ծառայության չներկայանալով՝ զինծառայողը գիտակցում է, որ դրանով խուսափում է զինվորական ծառայության պարտականությունների կատարումից, չի պահպանում զինվորական երդման ու կանոնադրության պահանջները, խախտում է կարգապահությունն ու զինված ուժերում ձևավորված կարգուկանոնը, ուստի գիտակցում է իր գործողությունների հակաիրավական բնույթն ու հանրային վտանգավորությունը և ցանկանում է դա:

19. Վերոշարադրյալից բխում է, որ քննարկվող արարքը *սուբյեկտիվ կողմից* դրսևորվում է բացառապես ուղղակի դիտավորությամբ, ինչպես նաև հատուկ *նպատակով*, ինչն արտահայտվում է զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու մեջ:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր համարվող վերոնշյալ նպատակը խնդրո առարկա հանցագործությանը վերագրված հենց այն հատկանիշն է, որը հնարավորություն է ընձեռում դասալքությունը սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքից (զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը):

Հաշվի առնելով վերոգրյալ հատկանիշի՝ արարքը որպես դասալքություն որակելու հարցում կարևորությունը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դասալքության նպատակը սահմանազատել դասալքության կատարման շարժառիթներից, վեր հանել այն հանգամանքները, որոնք կարող են վկայել դասալքության նպատակի առկայության մասին:

19.1. Այսպես՝ Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում նշել, որ հանցագործության *նպատակն* այն ապագա ցանկալի վիճակի մասին պատկերացումն է, որին ձգտում է հասնել անձը. այն գիտակցված մղում է: Իսկ հանցագործության *շարժառիթը* հանցանք կատարելու ներքին մղումն է, այլ կերպ՝ այն կարելի է բնութագրել որպես նպատակին հասնելու ցանկություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դասալքության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակը՝ հանցավորի՝ օրենքով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի ընթացքում զինվորական պարտականությունները կատարելուց վերջնականապես խուսափելու մտադրությունն է (ընդ որում, այդպիսի մտադրությունը զինծառայողի

մոտ կարող է առաջանալ ոչ միայն զորամասը կամ ծառայության վայրը թողնելուց առաջ, այլև զորամասն ինքնակամ լքելուց հետո):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ենթադրյալ հանցանք կատարած անձի դիտավորության ուղղվածության, վերջինիս՝ զինվորական ծառայությունից **վերջնականապես** խուսափելու նպատակի մասին կարող են վկայել որոշ հանգամանքներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

ա) զինվորական ծառայության պարտականությունների կատարման նկատմամբ հանցավորի վերաբերմունքը բնորոշող տվյալներ, այսինքն՝ հանգամանքներ, որոնք բնութագրում են վերջինիս անձն ու նրա վարքագիծը զինվորական ծառայությունից խուսափելուց առաջ (օրինակ՝ համածառայակիցներին՝ զինվորական ծառայության դժվարությունների և դրանից վերջնականապես խուսափելու մտադրության մասին հայտնելը, զինվորական ծառայության հետ կապված պարտականությունների ոչ բարեխիղճ կատարումը, զինվորական ծառայության նկատմամբ հանցավորի բացասական վերաբերմունքի մասին վկայող այլ հանգամանքներ),

բ) զորամասը կամ ծառայության վայրը թողնելուց հետո հանցավորի վարքագիծը բնութագրող հանգամանքներ, այլ կերպ՝ անձի հետհանցավոր վարքագիծը (օրինակ՝ զինվորական ծառայության վայրից երկարաժամկետ բացակայությունը, անձը հաստատող փաստաթղթերը ոչնչացնելը կամ կեղծ փաստաթղթեր ձեռք բերելը, զորամասը կամ ծառայության վայրը լքելուց կամ ծառայության չներկայանալուց հետո աշխատանքի անցնելը, դասալքության և զինվորական ծառայության մեջ գտնվելու հանգամանքն այլ անձանցից թաքցնելը, բնակության հիմնական վայրը փոխելը և այլն):

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ թվարկված հանգամանքները սպառիչ չեն, և այլ տվյալներ ևս օբյեկտիվորեն կարող են վկայել անձի մոտ զինվորական ծառայությունից **վերջնականապես** խուսափելու մտադրության առկայության մասին:

19.2. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն հետապնդվող նպատակի՝ դասալքության կատարման շարժառիթները արարքի որակման համար որևէ նշանակություն չունեն, սակայն այդպիսիք կարող են էական նշանակություն ունենալ, օրինակ, արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու հանցավորի անձը գնահատման ենթարկելիս: Ընդորում, դասալքության կատարման շարժառիթները կարող են տարբեր լինել՝ զինվորական ծառայության հետ կապված սահմանափակումները (մասնավորապես՝ զինվորական խիստ կարգապահությունը, զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունների առկայությունը և այլն) հաղթահարելու ցանկության բացակայություն, հանցանք կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկվելու վախ, ընտանեկան ու կենցաղային բնույթի տարբեր դրդապատճառներ և այլն:

20. Ընդհանրացնելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով որակելու

համար անհրաժեշտ է, որ անձը զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնի, ինչպես նաև ծառայության չներկայանա՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով, ընդ որում, անձը պետք է գիտակցի վերոնշյալ հանգամանքը և ցանկանա դա, այսինքն՝ դրսևորի ուղղակի դիտավորություն: Դիտավորության ուղղվածության, զինվորական ծառայությունից **վերջնականապես** խուսափելու նպատակի առկայության մասին կարող են վկայել, ի թիվս այլոց, սույն որոշմամբ մատնանշված հանգամանքները: Միևնույն ժամանակ դասալքության հանցակազմի նշյալ պարտադիր հատկանիշի՝ նպատակի առկայության հետ մեկտեղ քննարկվող հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը կարող է պայմանավորվել նաև որոշակի շարժառիթներով, որոնք, լինելով դասալքության հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշ, արարքի որակման համար որևէ նշանակություն չունեն: Չնայած դրան՝ դասալքության կատարման շարժառիթների բացահայտումը, ի թիվս այլոց, կարող է նպաստել պարզելու հանցավորի արարքի կատարման իրական պատճառները, իսկ պատիժ նշանակելիս՝ ճիշտ պատկերացում կազմելու կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի և հանցավորի անձի մասին. դրանց բացահայտումը կարող է նաև էական նշանակություն ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Ա.Մելքոնյանին և Վ.Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել 362-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ վերջիններս կողոպուտ կատարելուց հետո կատարել են դասալքություն, այն է՝ Ա.Մելքոնյանը 07.07.2014թ.-ին, իսկ Վ.Վարդանյանը 08.07.2014թ.-ին զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել են զորամասը (տե՛ս սույն որոշման 8-9-րդ կետերը):

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ Ա.Մելքոնյանի և Վ.Վարդանյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Ա.Մելքոնյանը հայտնաբերվել է 2014 թվականի հոկտեմբերի 2-ին, իսկ Վ.Վարդանյանը՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքում հաստատված համարելով, որ Ա.Մելքոնյանը 07.07.2014թ.-ին, իսկ Վ.Վարդանյանը 08.07.2014թ.-ին զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել են զորամասը և հետախուզման մեջ գտնվելու ընթացքում իրենց կյանքի բավարար կենսապայմաններ ապահովելու նպատակով **մշտական աշխատանք են ճեռք բերել ու աշխատել,** արդյունքում վերջիններիս մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին եկել է այն եզրահանգման, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Ա.Մելքոնյանին և Վ.Վարդան-

յանին ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքների մասով, պետք է բեկանել, նրանց վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճել, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցնել: Որպես հիմնավորում՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվել, որ ամբաստանյալները կողոպուտը կատարելուց հետո կատարել են դասալքություն, այն է՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել են զորամասը, այսինքն՝ գործել են՝ գիտակցելով, որ իրենց գործողություններով վերջնականապես հրաժարվում են զինվորական ծառայությունից և ցանկանում են դրա հետևանքների առաջացումը: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ամբաստանյալները նախկինում մի քանի անգամ ինքնակամ թողել են զորամասը, սակայն ամեն անգամ ինքնակամ վերադարձել են զորամաս, ըստ ամբաստանյալների և համածառայակիցների ցուցմունքների՝ ամբաստանյալներ Ա.Մելքոնյանը և Վ.Վարդանյանը դիտավորություն չեն ունեցել խուսափել ծառայությունից, դժգոհություններ ծառայության վերաբերյալ չեն ունեցել: Զորամասի տարածքը վերջիններս ինքնակամ թողել են ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված արարքը կատարելուց հետո՝ **քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու պատճառով** (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

22. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները դիտարկելով սույն որոշման 18-20-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Ա.Մելքոնյանի և Վ.Վարդանյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, այն է՝ սույն գործում առկա ապացույցների լրիվ և բազմակողմանի քննություն չիրականացնելով, դրանք իրենց համակցության մեջ չգնահատելով, քննության առարկա չի դարձրել և որևէ գնահատականի չի արժանացրել գործի նյութերում առկա այնպիսի փաստական հանգամանքների համակցությունը, որոնք վկայում են ամբաստանյալներ Ա.Մելքոնյանին և Վ.Վարդանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքները նրանց կողմից ուղղակի դիտավորությամբ և զինվորական ծառայությունից **վերջնականապես խուսափելու նպատակով** կատարելու մասին: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է ամբաստանյալների արարքներում համապատասխան հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերոգրյալ հատկանիշների առկայության մասին վկայող հետևյալ փաստական տվյալները՝

ա) զորամասն ինքնակամ լքելուց առաջ զինվորական ծառայության պարտականությունների կատարման նկատմամբ ամբաստանյալների բացասական վերաբերմունքի մասին վկայող հանգամանքները, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը որևէ գնահատման չի ենթարկել Առաջին ատյանի դատարանում հրապարակված վկա՝ ՀՀ ՊՆ 76852 զորամասի համալրման բաժանմունքի պետ, կապիտան Հ.Խաչատրյանի նախաքննական ցուցմունքն այն մասին, որ ամբաստանյալները 2014թ.ի մայիս ամսին՝ ճամբարային հավաքների ժամանակ, իրեն ասել են, որ **այլևս չեն կարողանում ծառայել և չեն ցանկանում շարունակել ծառայությունը** (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը),

բ) զորամասն ինքնակամ լքելուց հետո ամբաստանյալների վարքագիծը (ամբաստանյալների հետհանցավոր վարքագիծը) բնութագրող ներքոհիշյալ հանգամանքները՝

- զինվորական ծառայության վայրից **երկարաժամկետ բացակայությունը**, մասնավորապես՝ 2014 թվականի հուլիսի 22-ից գտնվելով հետախուզման մեջ՝ ամբաստանյալ Ա.Մելքոնյանը հայտնաբերվել է զորամասն ինքնակամ լքելուց հետո **գրեթե երեք ամիս անց**՝ 2014 թվականի հոկտեմբերի 2-ին, իսկ Վ.Վարդանյանը՝ **գրեթե հինգ ամիս անց**՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը),

- ամբաստանյալների **աշխատանքի անցնելը**, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը որևէ գնահատականի չի արժանացրել Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված այն փաստը, որ հետախուզման մեջ գտնվելու ընթացքում ամբաստանյալներն իրենց կյանքի բավարար կենսապայմաններն ապահովելու նպատակով **մշտական աշխատանք են ձեռք բերել և աշխատել** (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

22.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է՝ վերոգրյալ հանգամանքները բավարար են փաստելու համար, որ ամբաստանյալներ Ա.Մելքոնյանին և Վ.Վարդանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքները վերջիններիս կողմից կատարվել են ուղղակի դիտավորությամբ և զինվորական ծառայությունից **վերջնականապես խուսափելու նպատակով**: Հետևաբար հիմնավոր չի կարող համարվել Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվել, որ ամբաստանյալները գործել են՝ գիտակցելով, որ իրենց գործողություններով վերջնականապես հրաժարվում են զինվորական ծառայությունից և ցանկանում են դրա հետևանքների առաջացումը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ *ամբաստանյալները զորամասի տարածքն ինքնակամ թողել են ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված արարքը կատարելուց հետո՝* ***քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու պատճառով,*** ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշյալը վկայում է ոչ թե ամբաստանյալների արարքներում դասալքության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների բացակայության, այլ դասալքության կատարման շարժառիթի մասին, ինչը, ինչպես արդեն վերը

նշվել է (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը), արարքը որպես դասալքություն որակելու տեսանկյունից չունի որևէ իրավական նշանակություն:

23. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, արդյունքում ոչ ճիշտ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածը: Նշված խախտումները, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածների, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով և գնահատելով գործում առկա ապացույցները, եկել է հիմնավոր եզրահանգման՝ ամբաստանյալների արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության հարցում: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 10-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով (2005 թվականի փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Արթուր Նորիկի Մելքոնյանի և Վահան Ստեփանի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 10-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**23.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԴ-2/0001/15/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշման դեմ դատապարտյալ Արամ Թանգիի Դավթյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մայիսի 30-ի դատավճռով Արամ Թանգիի Դավթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 349-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները լրիվ գումարելու սկզբունքով, Ա.Դավթյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և տուգանք՝ 400.000 ՀՀ դրամի չափով:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված կար-

գով Ա.Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է, և քրեական հետապնդումը դադարեցվել՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

3. ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿ հիմնարկի պետի՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Դավթյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի որոշումը չի կիրառվել՝ նույն որոշման 9-րդ կետի 6-րդ ենթակետի հիմքով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը չի կիրառվել՝ նույն որոշման 9-րդ կետի 6-րդ ենթակետի հիմքով (տե՛ս դատական գործ, հատոր 1, թերթ 64):

4. 2016 թվականի հունվարի 18-ին դատապարտյալ Ա.Դավթյանը բողոք է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿ հիմնարկի պետի՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը և պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿ հիմնարկին իր նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումներով հայտարարված համաներումները:

4.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ Ա.Դավթյանի բողոքը մերժվել է:

5. 2016 թվականի հունիսի 15-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) որոշում է կայացրել դատապարտյալ Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու և վերաքննիչ վարույթը կարճելու մասին:

6. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ա.Դավթյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

7. 2016 թվականի ապրիլի 22-ին դատապարտյալ Ա.Դավթյանը բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ խնդրելով. *«(...) Կայացնել նոր դատական ակտ՝ ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցութ-*

*յամբ ՀՀ ԱԺ 26.05.2011թ. որոշմամբ հայտարարված համաներումը [իր] նկատմամբ կիրառելու և ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի պետի 28.12.2015թ. թիվ 198 որոշումը վերացնելու վերաբերյալ, պարտավորեցնելով ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի պետին քննարկելու ՀՀ անկախության 22-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ ԱԺ 03.10.2013թ. որոշմամբ հայտարարված համաներման կիրառման հարցը, առանց համաներման որոշման 9-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված արգելքի (...)»* (տե՛ս դատական գործ, հատոր 2, թերթ 7):

7.1. 2016 թվականի հունիսի 13-ին դատապարտյալ Ա.Դավթյանը միջնորդություն է ներկայացրել Վերաքննիչ դատարան, որով փաստել է. *«(...) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը իր 16.05.2016թ. թիվ ԵԿԴ/0014/15/16 օրինական ուժի մեջ մտած որոշմամբ լուծել է իմ նկատմամբ կայացված թիվ ԵԿԴ/0241/01/11 դատավճռի անհստակությունը՝ կապված իմ նկատմամբ ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ ԱԺ 26.05.2011թ. որոշմամբ հայտարարված համաներումը չկիրառելու հետ, և արդյունքում դատավճռով 2012թ. մայիսի 30-ին կիրառվել է նշված համաներումը իմ նկատմամբ: Վերոգրյալի հիման վրա խնդրում եմ [ինձ] բողոքի պահանջը ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ **ՀՀ ԱԺ 26.05.2011թ. որոշմամբ հայտարարված համաներման մասով** չեղյալ համարել (...)»* (տե՛ս դատական գործ, հատոր 2, թերթ 17):

8. Վերաքննիչ դատարանը, որոշելով **առանց քննության թողնել** դատապարտյալ Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքը և կարճել վերաքննիչ վարույթը, իր դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում արձանագրել է. *«(...) Դատապարտյալ Արամ Դավթյանը վերաքննիչ բողոք է բերել [Առաջին ատյանի] դատարանի 2016 թվականի ապրիլի 02-ի որոշման դեմ՝ միջնորդելով բեկանել այն և **իր նկատմամբ կիրառել Հայաստանի Հանրապետության 22-րդ տարեդարձի կապակցությամբ հայտարարված համաներումը**:*

*(...)*

*13.06.2016թ.-ին վերաքննիչ քրեական դատարան մուտք է եղել դատապարտյալ Արամ Դավթյանի դիմումը, որով նա հայտնել է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը իր 16.05.2016թ-ի թիվ ԵԿԴ/0014/15/16 օրինական ուժի մեջ մտած որոշմամբ լուծել է կայացրած թիվ ԵԿԴ/0241/01/11 դատավճռի անհստակությունը՝ կապված իր նկատմամբ ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ ԱԺ 26.05.2011թ-ի որոշմամբ հայտարարված համաներումը չկիրառելու հետ և արդյունքում 2012 թվականի մայիսի 30-ի դատավճռով կիրառվել է նշված համաներումը իր նկատմամբ (...):*

*(...)*

*Քննարկելով դատապարտյալ Արամ Դավթյանի վերաքննիչ բողոքը և այն հետ վերցնելու մասին նրա դիմումը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ դիմումը պետք է բավարարել, իսկ վերաքննիչ վարույթը՝ ՀՀ քրեական*

*դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 4-րդ մասով կարճել (...)»* (տե՛ս դատական գործ, հատոր 2, թերթեր 43-44):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ հրաժարվել է արդարադատություն իրականացնելուց՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասը:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է արձանագրել այն հանգամանքը, որ իբրև ինքը միջնորդել է, որպեսզի իր նկատմամբ կիրառվի միայն ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ հայտարարված համաներումը: Իրականում ինքը միջնորդել է, որ իր նկատմամբ կիրառվեին ՀՀ անկախության հռչակման ինչպես 20-րդ, այնպես էլ 22-րդ տարեդարձի կապակցությամբ հայտարարված համաներումները: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, կարճելով վերաքննիչ վարույթը, նշել է, որ իբրև ինքը դիմել է Վերաքննիչ դատարան՝ վերաքննիչ բողոքը հետ վերցնելու խնդրանքով, մինչդեռ իրականում ինքը դիմել է միայն ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ հայտարարված համաներման մասով իր պահանջը չեղարկելու համար՝ նկատի ունենալով, որ մինչև Վերաքննիչ դատարանի նիստը սկսվելը նշված համաներումը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից արդեն կիրառվել էր, իսկ ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ հայտարարված համաներման մասով բողոքի իր պահանջը չէր փոփոխվել:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը հետ վերցնելու և վերաքննիչ բողոքի մի մասից հրաժարվելու («վերաքննիչ բողոքը մասնակիորեն հետ վերցնելու») դատավարական գործողությունների սահմանազատման հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք վերաքննիչ բողոքը հետ

վերացնելու պատճառաբանությամբ այն առանց քննության թողնելու և վերաքննիչ վարույթը կարճելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

13. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:*

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի վերաբերյալ հիմնահարցերին, ձևավորել է, ի թիվս այլոց, հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որն իրավական պետությունում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ,

- անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս, ինչը ենթադրում է մի դեպքում՝ օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից՝ իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից. նշված պահանջն առաջին հերթին վերաբերում է դատական իշխանությանը, որն օժտված է իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով և անկախ է բոլոր այլ մարմիններից,

- դատական բողոքարկումը՝ որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի պահպանման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-719 և 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936 որոշումների 6-րդ կետերը, 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշման 7-րդ կետը):

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. *«Քողոք բերած անձը և այն անձը, որի շահերի պաշտպանության նպատակով բերվել է բողոքը, իրավունք ունեն հետ վերցնելու այն մինչև վերաքննիչ դատարանում դատական նիստն սկսվելը (…)»*:

Նույն հոդվածի 4-րդ մասը ամրագրում է. «*Եթե վերաքննիչ բողոքարկման ժամկետն ավարտվել է, իսկ տվյալ դատական ակտի դեմ այլ վերաքննիչ բողոքներ չեն բերվել, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում (…)*»:

Վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում արձանագրել է. *«(…) Բողոքը հետ վերցնելն անձի իրավունքն է, և դրանով կարգավորվում են սուբյեկտների կողմից բողոքները հետ վերցնելու իրավունքի իրացման հետ կապված հարաբերություններ: Իրավունքն անձի հնարավոր քույլատրելի վարքագիծն է՝ կատարելու այս կամ այն արարքը կամ ձեռնպահ մնալու դրա կատարումից: Հետևաբար վերաքննիչ բողոք բերելը կամ այն հետ վերցնելը անձի իրավունքն է, որն արտահայտվում է անձի ազատ կամքի դրսևորմամբ:*

*(…) Վերաքննիչ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ փաստի հաստատման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման համար դատարանը պետք է ունենա բավարար հիմքեր, մասնավորապես այդպիսին կարող է հանդիսանալ բողոք բերած անձի՝ վերաքննիչ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ վերաքննիչ դատարան բերված դիմումը: Բողոքաբերի կողմից բողոքը հետ վերցնելը պետք է կատարվի ակտիվ վարքագիծ դրսևորելով, այսինքն՝ անձը պետք է իր կամքն արտահայտի բողոքը հետ վերցնելու կապակցությամբ»* (տե՛ս *«Էկոնոմինկասացիա» ԴՓԲԸ-ի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ԵԿԴ/0107/11/08 որոշման 15-16-րդ կետերը):

14.1. Վերահաստատելով և զարգացնելով *«Էկոնոմինկասացիա» ԴՓԲԸ-ի* գործով արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը հետ վերցնելու և վերաքննիչ բողոքի մի մասից հրաժարվելու («վերաքննիչ բողոքը մասնակիորեն հետ վերցնելու») դատավարական գործողություններն անհրաժեշտ է տարբերակել միմյանցից: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերջիններս նույն բովանդակությունը չկրող և իրավական տարբեր հետևանք-

ներ առաջացնող դատավարական գործողություններ են: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն վերաքննիչ բողոքն ամբողջությամբ հետ վերցնելուն, ինչը օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում հանգեցնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշման կայացմանը, բողոքի մի մասից հրաժարվելու («բողոքը մասնակիորեն հետ վերցնելու») դեպքում դատարանը պարտավոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով շարունակել գործի քննությունը և քննության առնել բողոքի այն մասը, որից բողոքաբերը չի հրաժարվել: Հակառակ պարագայում, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, անհամաչափորեն կսահմանափակվի անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության հիմնարար իրավունքը՝ հանգեցնելով անօրինական դատական ակտի կայացմանը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ բողոքի մի մասից հրաժարվելը չի կարող դիտարկվել որպես անձի՝ բողոքը հետ վերցնելու տնօրինչական իրավունքի իրացում, հետևաբար նաև առաջացնել օրենքով սահմանված նույն հետևանքները, որոնք ծագում են բողոքը հետ վերցնելու դեպքում:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2016 թվականի ապրիլի 22-ին դատապարտյալ Ա.Դավթյանը բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ խնդրելով կայացնել նոր դատական ակտ՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի որոշմամբ հայտարարված համաներումն իր նկատմամբ կիրառելու և ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿ հիմնարկի պետի՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը վերացնելու վերաբերյալ՝ պարտավորեցնելով վերջինիս քննարկել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման կիրառման հարցը՝ առանց այդ որոշման 9-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված արգելքի (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

2016 թվականի հունիսի 13-ին դատապարտյալ Ա.Դավթյանը միջնորդություն է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ իր վերաքննիչ բողոքի մի մասից հրաժարվելու, մասնավորապես՝ *իր վերաքննիչ բողոքի պահանջը՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի **որոշման մասով** չեղյալ համարելու* խնդրանքով՝ հաշվի առնելով, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2016 թվականի մայիսի 16-ի որոշմամբ լուծել է իր նկատմամբ կայացված դատավճռի անհստակությունը՝ կապված ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի որոշմամբ հայտարարված համաներումը չկիրառելու հետ, և

արդյունքում իր նկատմամբ նշված համաներման ակտն արդեն իսկ կիրառվել է (տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով դատապարտյալ Ա.Դավթյանի՝ 2016 թվականի հունիսի 13-ի միջնորդությունը, 2016 թվականի հունիսի 15-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքն **առանց քննության թողնելու** և վերաքննիչ վարույթը կարճելու մասին (տե՛ս սույն որոշման 5-րդ և 8-րդ կետերը):

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14.1.-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մի մասից հրաժարվելու վերաբերյալ դատապարտյալի միջնորդությունը ոչ իրավաչափորեն դիտարկել է որպես վերջինիս՝ բողոքը հետ վերցնելու տնօրինչական իրավունքի իրացում և որոշում կայացրել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու ու վերաքննիչ վարույթը կարճելու մասին, որի արդյունքում անհամաչափորեն սահմանափակել է Ա.Դավթյանի՝ արդյունավետ դատական պաշտպանության հիմնարար իրավունքը՝ թույլ տալով դատական սխալ:

16.1. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Ա.Դավթյանի կողմից վերաքննիչ բողոքը հետ վերցնելու պատճառաբանությամբ այն առանց քննության թողնելու և վերաքննիչ վարույթը կարճելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

17. Վերը արտահայտված իրավական դիրքորոշումներից զատ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ նույնիսկ եթե դատապարտյալ Ա.Դավթյանը վերաքննիչ բողոքն օրենքով սահմանված կարգով ամբողջությամբ հետ վերցրած լիներ, Վերաքննիչ դատարանը վերաքննիչ վարույթը կարճելու հետ միաժամանակ իրավասու չէր կայացնելու *նաև* բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում (տե՛ս սույն որոշման 5-րդ և 8-րդ կետերը), քանի որ վերջիններս տարբեր դատավարական ինստիտուտներ են:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ ըստ էության քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Արամ Թանգիի Դավթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ ըստ էության քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**24.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵՇԴ/0049/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝դատավորներ | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատախազ | Տ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 28-ի դատավճռով Էդիկ Միշայի Ծոնվերանցը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքների կատարման մեջ և հանցանքների համակցության կանոններով դատապարտվել ազատազրկման՝ 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

2. 2016 թվականի հուլիսի 8-ին ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Է.Ծոնվերանցը Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) դիմում է ներկայացրել, որով խնդրել է վերանայել իր նկատմամբ կայացված դատավճիռը՝ հաշվի առնելով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի ընդունումը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ դատապարտյալ Է.Ծոնվերանցի դիմումը մերժվել է:

3. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Տ.Խաչատրյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը(այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Է.Ծոնվերանցը դատապարտվել է այն բանի համար, որ *«նա 2011 թվականի ընթացքում՝ Իրանի Իսլամական Հանրապետության Ջուլֆա քաղաքում ոմն Հասանից մոտ 6 դեպքով, իրացնելու նպատակով, ապօրինի ձեռք է բերել յուրաքանչյուր դեպքում առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուրը շուրջ 1 կիլոգրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց, որը թաքցնելով իր կողմից վարվող «Կամազ» մակնիշի 715 SU 67 հ/հ-ի ավտոմեքենայում՝ մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն և մինչև 2012 թվականի փետրվարի 24-ն ընկած ժամանակահատվածում՝ իրացրել Ռոբերտ Առաքելյանին»* (տե՛ս քրեական գործ հատոր 1, թերթեր 450–451):

6. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ փաստել է. *«(...) «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքի 9-րդ հոդվածով գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-ին հոդվածի 4-րդ մասը՝ նախատեսելով արարք, որը հանդիսանում է առանձնապես ծանր հանցագործություն՝ դատապարտյալ Էդիկ Ծոնվերանցի պատիժը խստացնող և նրա վիճակն այլ կերպ վատթարացնող օրենք է, քանի որ դրանով նախատեսված է ավելի խիստ պատիժ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներին համապատասխան՝ այդպիսի արարք կատարած և պատիժ կրող անձանց համար ի համեմատ ծանր հան-*

*ցագործություններ կատարած անձանց՝ նախատեսվում է պատժից ազատվելու կարգի ու պայմանների հետ կապված՝ ոչ նպաստավոր պայմաններ:*

*(...) «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքով գործողության մեջ դրված առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների մաքսանենգության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-ին հոդվածի 4-րդ մասը Էդիկ Ծոնվերանցի նկատմամբ ենթակա չէ կիրառման, և վերջինիս նկատմամբ շարունակում են կիրառվել մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքն ուժի մեջ մտնելը՝ նրա կատարած արարքի համար պատասխանատվություն նախատեսող, նրան պատժից ազատող և դատվածության մարման հարցերը կարգավորող ՀՀ քրեական օրենսգրքի իրավադրույթները»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 450-457):

7. Վերաքննիչ դատարանը, **միաձայն** կարգով քննության առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը, 2016 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման շրջանակներում արձանագրել է. *«[Առաջին ատյանի դատարանը] (...) օրինական և հիմնավորված որոշում է կայացրել դատապարտյալ Էդիկ Ծոնվերանցի դիմումը մերժելու մասին»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, 488-498):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որոնց պարագայում կայացված դատական ակտն անհիմն է և ենթակա է բեկանման:

8.1. Մասնավորապես՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը Է.Ծոնվերանցի վերաբերյալ դատավճիռը վերանայելու և օրենքին համապատասխանեցնելու դիմումը մերժելու մասին որոշման դեմ մեղադրողի բողոքը քննել է միանձնյա: Սինչդեռ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1.-րդ կետը, 387-րդ հոդվածը, «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ինչպես նաև *Ա.Արծրունու* գործով Վճռաբեկ դատարանի որոշումը՝ բողոք բերած անձը փաստել է, որ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը վերանայելու կամ դիմումը մերժելու մասին դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ է, ուստի դրա դեմ բերված բողոքի քննությունը Վերաքննիչ դատարանը պետք է կատարեր կոլեգիալ կազմով: Հետևաբար բողոքի հեղինակը կարծում է, որ Վերաքննիչ դատարանը բողոքի քննությունն իրականացրել է ոչ օրինական կազմով, ինչի արդյունքում

կայացված դատական ակտը ենթակա է բեկանման՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

8.2. Բացի այդ, բողոք բերած անձը փաստել է, որ ստորադաս դատարանները, վկայակոչելով անձի վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքի կանոնը և արձանագրելով, որ Է.Ծոնվերանցի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին, որով նկարագրված հանցագործությունը դասվում է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, իսկ նոր օրենքը վատթարացնում է անձի վիճակը, մերժել են Է.Ծոնվերանցի՝ արարքը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու դիմումը՝ դիրքորոշում չհայտնելով ուժը կորցրած հոդվածով նախատեսված և նոր օրենքին համապատասխանեցման ոչ ենթակա արարքի համար անձին քրեական պատասխանատվության հնարավորության վերաբերյալ՝ արդյունքում չլուծելով անձի քրեական պատասխանատվության հիմքը կազմող օրենքի որոշակիության խնդիրը:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է Առաջին ատյանի դատարանի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ էր արդյոք դատապարտյալ Է.Ծոնվերանցի դիմումը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետը սահմանում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են համարվում *առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը, այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:*

Սեջբերված իրավանորմի առնչությամբ Վճռաբեկ դատարանն *Ա.Հրծրունու* գործով կայացված որոշման շրջանակներում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Հ]անցանք կատարած անձի վիճակը նոր քրեական օրենքի ուժով բարելավելու հիմքով դատավճիռը վերանայելու, մասնավորապես՝ անձի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցը լուծելով՝ դատարանը կայացնում է որոշում, որտեղ իրենց լուծումն են ստանում դատավճռին վերաբերող հարցեր (օրինակ՝ արարքի քրեաիրավական որակում,*

*պատժատեսակի և պատժաչափի որոշում): Հետևաբար այդ որոշումը ևս հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ և այն ենթակա է բողոքարկման նույն ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է դատավճիռները բողոքարկելիս»* (տե՛ս *Արսեն Արծրունու* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը):

11.1. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Արծրունու* գործով արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ դիտարկելը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական օրենքով արգելված արարքը նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցը լուծելիս դատարանն անդրադառնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում նախատեսված այնպիսի իրավական հարցերի (արարքը համապատասխանո՞ւմ է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին, ենթակա՞ է արդյոք պատժի հանցավորն իր կատարած հանցանքի համար, ի՞նչ պատիժ պետք է նշանակվի հանցավորի նկատմամբ), որոնք օրենքի ուժով (ex lege) վերապահված են գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճռի լուծմանը: Հետևաբար քրեական օրենքով արգելված արարքը նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցը լուծելիս կայացվող դատական ակտի բողոքարկումը և բողոքի քննությունը ենթակա են իրականացման նույն դատավարական ընթացակարգով, ինչը նախատեսված է գործն ըստ էության լուծող դատական ակտի համար: Այլ կերպ՝ քննարկման առարկա դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս կիրառման են ենթակա, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 379-րդ և 387-րդ հոդվածներով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից (…) դատաքննության իրավունք (…)»:*

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» եզրույթի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ նշյալ եզրույթը ոչ միայն կազմում է «դատարանի»՝ առհասարակ գոյության իրավական հենքը, այլև այն ներառում է յուրաքանչյուր գործով **դատարանի կազմը** (տե՛ս *Buscarini v. San Marino* գործով 2000 թվականի մայիսի 4-ի որոշումը, գանգատ թիվ 31657/96,

*Posokhov v. Russia* գործով 2003 թվականի մարտի 4-ի վճիռը, գանգատ թիվ 63486/00, կետ 39, *Yegorychev v. Russia* գործով 2016 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 8026/04, կետ 64): Ուստի այն դեպքերում, երբ օրենքով դատարանի կազմին ներկայացվող պահանջներն ապահովված չեն, ապա խաթարվում է օրինականության սկզբունքը՝ անձին զրկելով արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առջև կանգնելու իրավունքից (տե՛ս, mutatis mutandis, *Jorgic v. Germany* գործով 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 74613/01, կետ 64, *Richert v. Poland* գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 54809/07, կետ 41):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Է.Ծոնվերանցը 2016 թվականի հուլիսի 8-ին Առաջին ատյանի դատարան դիմում է ներկայացրել, որով խնդրել է վերանայել իր նկատմամբ կայացված դատավճիռը՝ հաշվի առնելով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի ընդունումը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ մերժել է Է.Ծոնվերանցի դիմումը՝ փաստելով, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքը դատապարտյալ Էդիկ Ծոնվերանցի պատիժը խստացնող և նրա վիճակն այլ կերպ վատթարացնող օրենք է, քանի որ դրանով նախատեսված է ավելի խիստ պատիժ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներին համապատասխան՝ այդպիսի արարք կատարած և պատիժ կրող անձանց համար, ի համեմատ ծանր հանցագործություններ կատարած անձանց՝ նախատեսվում են պատժից ազատվելու կարգի ու պայմանների հետ կապված, ոչ նպաստավոր պայմաններ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, **միաձայն** կարգով քննության առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը, 2016 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ արձանագրել է, որ ստորադաս դատարանը օրինական և հիմնավորված որոշում է կայացրել դատապարտյալի դիմումը մերժելու մասին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշման՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի նկատմամբ պետք է կիրառվեին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 387-րդ հոդվածով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված բողոքը սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից պետք է քննության առնվեր

կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, մինչդեռ այն քննության է առնվել միանձնյա կարգով՝ այդ կերպ չապահովելով արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առկայությունը:

14.1. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Է.Ծոնվերանցի դիմումը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելն իրավաչափ չէր:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի, 387-րդ հոդվածի խախտումներ, այն է՝ դատական ակտը կայացրել է դատարանի ոչ օրինական կազմով, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Սինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտման պայմաններում հնարավոր չէ անդրադառնալ սույն որոշման 8.2-րդ կետում բողոքաբերի բարձրացրած՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Էդիկ Միշայի Ծոնվերանցի վերաբերյալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 19-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**25.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱՔԴ/0132/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատախազ | Ա.ԾԱՀԲԱԶՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Գեղամ Ժորայի Գեղամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2014 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62231814 քրեական գործը:

2014 թվականի դեկտեմբերի 12-ին Գեղամ Գեղամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2015 թվականի հուլիսի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 27-ի դատավճռով Գ.Գեղամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ե.Թորոսյանը, Դ.Ապետնակյանը, Տ.Պողոսյանը և Լ.Նազարյանը:

3. Ամբաստանյալ Ե.Թորոսյանի պաշտպան Մ.Ալավերդյանի, ամբաստանյալ Տ.Պողոսյանի պաշտպան Վ.Մնացականյանի և ամբաստանյալ Գ.Գեղամյանի պաշտպան Գ.Լյուդվիկյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հոկտեմբերի 7-ին որոշում է կայացրել պաշտպանների Մ.Ալավերդյանի և Վ.Մնացականյանի բողոքները մերժելու, պաշտպան Գ.Լյուդվիկյանի բողոքը բավարարելու, իսկ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ նշանակված պատժի մասով, բեկանելու մասին: ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ Գ.Գեղամյանը դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Տ.Պողոսյանի պաշտպան Ա.Ալիխանյանը և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ ամբաստանյալ Տ.Պողոսյանի պաշտպան Ա.Ալիխանյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է: Նույն թվականի փետրվարի 8-ի որոշմամբ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

5. Գ.Գեղամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(...) 2014 թվականի օգոստոս ամսին Տավուշի մարզի Բերդավան գյուղի մոտ իր օգտագործման և իրացնելու նպատակով 1.400.000 ՀՀ դրամով Երվանդ Թորոսյանից ապօրինի ձեռք է բերել և իր ավտոտնակում ապօրինի պահել է 300 փաթեթով՝ յուրաքանչյուրը 0.62 գրամ քաշով, խոշոր չափերով, ընդհանուր 186 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց, որի մի մասը ծխելու մի-*

*ջոցով օգտագործել է, իսկ 130.2 գրամը՝ 210 փաթեթներով, 2014 թվականի օգոստոս ամսից մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում, տարբեր օրերի, յուրաքանչյուր փաթեթը 10.000 ՀՀ դրամով վաճառելու եղանակով իրացրել է Հակոբ Կիրակոսյանին (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 274-295):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(...) [Որպես] ամբաստանյալ Գեղամ Գեղամյանի անձը բնութագրող տվյալներ [Առաջին ատյանի դատարանը] հաշվի է առնում, որ նա ամուսնացած է, բնութագրվում է դրական, նախկինում դատված չէ: [Առաջին ատյանի դատարանն] ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում, որ նա ընդունել է մեղքը և զղջացել կատարած արարքի համար, տվել է խոստովանական ցուցմունքներ, նախաքննության փուլում ակտիվորեն աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, երրորդ խմբի հաշմանդամ է, նրա խնամքի տակ են գտնվում կենսաթոշակառու մայրը, 2006 թվականին ծնված մանկահասակ որդին, ընտանիքի միակ կերակրողն է: Պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն:*

*(...) [Գ]նահատելով ամբաստանյալ[ի] կատարած հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցագործության առարկա թմրամիջոցի տեսակը (մեղադրանքի փաստական կողմի նկարագրության համաձայն՝ սույն գործով թմրամիջոցը հանդիսանում է կանեփի բուսական մանրացված զանգված՝ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց), խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, ինչպես նաև հանցանքը կատարելուց հետո ամբաստանյալ[ի] դրսևորած վարքագիծը, դրանք համադրելով [նրա] անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքի, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող որևէ հանգամանքի բացակայության փաստի հետ՝ [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ [ամբաստանյալ] (...) Գեղամ Գեղամյանի (...) նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացվելիությունը:*

*(...) [Ք]ննության առնելով ամբաստանյալ Գեղամ Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ և 64-րդ հոդվածների կիրառման հնարավորության և [նույն] օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված՝ պատժի նպատակների իրացվելիության հարցը և հաշվի առնելով Գեղամ Գեղամյանին մեղսագրված արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը, [Առաջին ատյանի դատարանը] հանգում է հետևության, որ տվյալ դեպքում Գ.Գեղամյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կամ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը չի համապատաս-*

*խանի արդարության և պատասխանատվության անհատականացման քրեաիրավական սկզբունքներին:*

*Վերոգրյալի հիման վրա [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ նշանակված պատիժն ամբաստանյալ Գ.Գեղամյանը պետք է կրի, քանի որ դրան խոչընդոտող հանգամանքներ առկա չեն (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 59-77):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում փաստել է. *«(...) Վերաքննիչ դատարանը (...) քննության առնելով ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու հարցը, հաշվի առնելով վերջինիս կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը (կատարածը ծանր հանցագործություն է՝ 130.2 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի իրացում), հանցավորի անձը, հանգում է այն հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված՝ պատժի նպատակների իրացվելիության տեսանկյունից պայմանական դատապարտության կիրառումը չի համապատասխանի արդարության և պատասխանատվության անհատականացման քրեաիրավական սկզբունքներին:*

*(...) Ինչ վերաբերում է ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմնավորումներին, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք[ը] հիմնավորված են, և դատավճիռն ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի մասով ենթակա է փոփոխման հետևյալ պատճառաբանություններով:*

*(...) Վերաքննիչ դատարանը որպես ամբաստանյալ Գ.Գեղամյանի անձը բնութագրող տվյալներ հաշվի է առնում այն, որ վերջինս 51 տարեկան է, ամուսնացած է, բնութագրվում է դրականորեն, նախկինում դատապարտված չի եղել:*

*(...) Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Գ.Գեղամյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:*

*(...) Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժատեսակ նշանակելու հարցը, հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթը ու վտանգավորության աստիճանը (կատարածը ծանր հանցագործություն է՝ 130.2 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի իրացում), հանցավորի անձը՝ վերջինս 51 տարեկան է, ամուսնացած է, բնութագրվում է դրականորեն, նախկինում դատապարտված չի եղել, վատառողջ է՝ ունի տեսողության հետ կապված լուրջ խնդիրներ, որի պատճառով ճանաչվել է երրորդ խմբի անժամկետ հաշմանդամ, որպես վերջինիս պատասխանատվությունը և պատի-*

*ժը մեղմացնող հանգամանքներ դիտելով ի սկզբանե խոստովանական ցուցմունքներ տալը, հանցագործությունը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը այդ թվում՝ թմրամիջոց ձեռք բերելու աղբյուրը բացահայտելու ուղղությամբ և խոստովանական ցուցմունքներից չհրաժարվելը՝ չնայած այդ ուղղությամբ գործադրված ջանքերին, կատարածի համար անկեղծորեն զղջալը, խնամքին կենսաթոշակառու մոր, 2006 թվականին ծնված մանկահասակ որդու առկայությունը և ընտանիքի միակ կերակրող հանդիսանալը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում հանգում է այն հետևության, որ վերոնշյալ հանգամանքներն իրենց համակցության մեջ պետք է գնահատել որպես սույն գործով բացառիկ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ՝ հիմք են հանդիսանում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:*

*(...) [Ք]ննության առնելով ամբաստանյալ Գ.Գեղամյանի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը բնութագրող վերոնշյալ տվյալները, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա կողմից դրսևորած վարքագիծը՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ քրեական գործում առկա են այնպիսի բացառիկ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են արարքի հանրորեն վտանգավորության աստիճանը և իրենց համակցության մեջ դիտարկելիս բավարար են ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ՝ օրենքով նախատեսված պատժից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:*

*(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժատեսակ կիրառելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակներին՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:*

*(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պաշտպան Գ.Լյուլվիկյանի վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման մասով, իսկ դատավճիռը ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ նշանակված պատժի մասով պետք է փոփոխել՝ նկատի ունենալով, որ դատավճռով նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ խիստ լինելու պատճառով, չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 146-171):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

8. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ նշանակել է ակնհայտ մեղմ պատիժ՝ խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ և 64-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը համադրել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու և հանցագործության հանրային վտանգավորության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու գտել, որ Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ վերլուծության չեն ենթարկվել Գ.Գեղամյանին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, ինչի արդյունքում նշված դատարանն ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ հանգել է սխալ հետևության:

Մասնավորապես՝ բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված մեղմացնող հանգամանքները, այն է՝ մեղքն ընդունելն ու անկեղծորեն զղջալը, նախկինում դատված չլինելը, դրական բնութագրվելը, ընտանիքի միակ կերակրողը լինելը, խնամքին ծնողների և մանկահասակ երեխայի առկայությունը, վատառողջ լինելը, հանցագործության բացահայտմանն աջակցելը, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համակցությամբ որևէ կերպ չեն կարող համարվել բացառիկ, ուստի չեն կարող օբյեկտիվ հիմք հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթները կիրառելու համար:

9. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է մասնակիորեն՝ Գ.Գեղամյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դրա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար*»:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

*2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:*

*2. Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում (ՎԲ-55/07, ՎԲ-145/07, ՎԲ-185/07, ՎԲ-11/08, ՎԲ-13/08, ՎԲ-25/08, ՎԲ-ԵՔԴ/0057/01/08, ՏԴ/0094/01/09, ԱՎԴ/0057/01/09, ԵԱՔԴ/0164/01/09, ԵԱՔԴ/0195/01/09 և այլն), և կայուն նախադեպային իրավունք է ձևավորվել այն մասին, որ քննարկվող նորմը կարող է կիրառվել հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկի առկայության պարագայում՝ գործի բացառիկ հանգամանքների և խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքի բացահայտմանն ակտիվորեն աջակցելու դեպքում: Օրենքում օգտագործվող **«բացառիկ»** բառը ենթադրում է, որ նշված հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացող մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը դուրս են սովորականի շրջանակներից և այն աստիճան առանձնահատուկ են, որ վերածվում են բացառության: Մասնավորապես, դրանք կարող են կապված լինել հանցագործության շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի, ինչպես նաև այլ հանգա-

մանքների հետ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա:

11.1. Վճռաբեկ դատարանը հատկանշական է համարում նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը ***կարող է*** կիրառվել բոլոր այն դեպքերում, երբ առանձին մեղմացնող հանգամանքները կամ դրանց համակցությունը ճանաչվում են որպես բացառիկ, կամ երբ խմբակային հանցագործության մասնակիցն ակտիվորեն աջակցում է խմբի կատարած հանցանքի բացահայտմանը: Ուստի ակնհայտ է, որ նշված նորմն ունի դիսպոզիտիվ բնույթ, և դատարանն այս հարցում օժտված է ***հայեցողական*** լիազորությամբ:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Գեղամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր օգտագործման և իրացնելու նպատակով 1.400.000 ՀՀ դրամով ապօրինի ձեռք է բերել և իր ավտոտնակում ապօրինի պահել 300 փաթեթով՝ յուրաքանչյուրը 0.62 գրամ քաշով, խոշոր չափերով, ընդհանուր 186 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց, որի մի մասը ծխելու միջոցով օգտագործել է, իսկ 130.2 գրամը՝ 210 փաթեթներով, յուրաքանչյուր փաթեթը 10.000 ՀՀ դրամով վաճառելու նպատակով իրացրել է (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը որպես ամբաստանյալ Գ.Գեղամյանի անձը բնութագրող տվյալներ է դիտել նրա՝ ամուսնացած լինելը, դրական բնութագրվելը և նախկինում դատված չլինելը, իսկ որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ մեղքն ընդունելը և կատարած արարքի համար զղջալը, խոստովանական ցուցմունքներ տալը, նախաքննության փուլում հանցագործությունը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը, երրորդ խմբի հաշմանդամ լինելը, խնամքի տակ կենսաթոշակառու մոր և 2006 թվականին ծնված մանկահասակ որդու գտնվելը, ընտանիքի միակ կերակրողը լինելը:

Հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, հանցագործության առարկա թմրամիջոցի տեսակը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, հանցանքը կատարելուց հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը, դրանք համադրելով նրա անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների, ինչպես նաև ծանրացնող հանգամանքների բացակայության փաստի հետ՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Գ.Գեղամյանի նկատմամբ պատիժ պետք է

նշանակել ազատազրկման ձևով, որպիսի պատիժն ամբաստանյալը պետք է կրի:

Անդրադառնալով ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ և 64-րդ հոդվածների կիրառման հնարավորության հարցին՝ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով Գեղամ Գեղամյանին մեղսագրված արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը, հանգել է հետևության, որ տվյալ դեպքում Գ.Գեղամյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կամ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը չի համապատասխանի արդարության և պատասխանատվության անհատականացման քրեաիրավական սկզբունքներին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը որպես ամբաստանյալ Գ.Գեղամյանի անձը բնութագրող տվյալներ հաշվի է առել այն, որ վերջինս 51 տարեկան է, ամուսնացած է, բնութագրվում է դրականորեն և նախկինում դատապարտված չի եղել: Նույն դատարանի կողմից որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են դիտվել.

- այն, որ Գ.Գեղամյանն ընդունել է մեղքը և զղջացել կատարած արարքի համար, տվել է խոստովանական ցուցմունքներ և ակտիվորեն աջակցել հանցագործությունը բացահայտելուն, այդ թվում՝ թմրամիջոց ձեռք բերելու աղբյուրը բացահայտելու ուղղությամբ,

- այն, որ Գ.Գեղամյանն ունի տեսողության հետ կապված լուրջ խնդիրներ և հանդիսանում է երրորդ խմբի անժամկետ հաշմանդամ,

- այն, որ Գ.Գեղամյանի խնամքին են գտնվում կենսաթոշակառու մայրը, 2006 թվականին ծնված մանկահասակ որդին, և նա հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը:

Հիմք ընդունելով ամբաստանյալի անձը բնութագրող և նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերոնշյալ հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթը ու վտանգավորության աստիճանը (կատարածը ծանր հանցագործություն է՝ 130.2 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի իրացում)՝ Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ քրեական գործում առկա են այնպիսի բացառիկ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են արարքի հանրային վտանգավորության աստիճանը և իրենց համակցության մեջ դիտարկելիս բավարար են ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ՝ օրենքով նախատեսված պատժից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար: Ուստի Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը ենթակա է փոփոխման, քանի որ դրանով նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ խիստ լինելու պատճառով և չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանն ու ամբաստանյալի անձին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

13. Սույն որոշման 11-11.2-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները համադրելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքներին, ինչպես նաև նկատի ունենալով սույն գործով ամբաստանյալ Գ.Գեղամյանի կատարած արարքի բարձր հանրային վտանգավորության մասին վկայող տվյալները (այն, որ ամբաստանյալը 1.400.000 ՀՀ դրամով 300 փաթեթ խոշոր չափերով՝ ընդհանուր 186 գրամ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց է ձեռք բերել, ապա նշված փաթեթներից 210-ը՝ ընդհանուր 130.2 գրամ քաշով, 2014 թվականի օգոստոսից մինչև նոյեմբերն ընկած ժամանակահատվածում տարբեր օրերի իրացրել է, ընդ որում՝ թմրամիջոցի մեկ փաթեթը վաճառել է 10.000 ՀՀ դրամով)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Գեղամյանի՝ երրորդ խմբի հաշմանդամություն ունենալը, ընտանիքի միակ կերակրողը լինելը և խնամքին կենսաթոշակառու մոր ու 2006 թվականին ծնված մանկահասակ որդու գտնվելը, հանցագործությունը բացահայտելուն աջակցելը, որոնք որպես մեղմացնող հանգամանքներ Վերաքննիչ դատարանի կողմից դրվել են ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման հիմքում, այն աստիճան առանձնահատուկ չեն, որ վերածվեն բացառության և էականորեն նվազեցնեն կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը՝ հիմք հանդիսանալով ամբաստանյալի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ մեղմացնող հանգամանքներն Առաջին ատյանի դատարանի կողմից պատշաճ ձևով գնահատման են ենթարկվել և արտացոլվել ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելով (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը), որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն պնդումը, որ Գ.Գեղամյանն անարդարացի՝ ակնհայտ խիստ պատժի է ենթարկվել:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Գ.Գեղամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 64-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Նշված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածների համաձայն, հիմք են ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս պահպանել է պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հաշվի է առել հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ընդ որում, պատշաճ գնահատման է ենթարկել կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 27-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գեղամ Ժորայի Գեղամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 27-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**26.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԴ4/0031/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Նորայր Բորիսի Զաքարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Ն.Զաքարյանի պաշտպան Սասուն Մխիթարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2016 թվականի մայիսի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Վերմիշյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 71104616 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Նորայր Զաքարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի հունիսի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Արագացված կարգով դատական քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի օգոստոսի 10-ի դատավճռով Նորայր Բորիսի Զաքարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել կալանք՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել մեղադրող Ա.Ավագյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հոկտեմբերի 17-ին որոշել է՝ *«ՀՀ Լոռու մարզի դատախազության դատախազ Ա.Ավագյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի:*

*ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի օգոստոսի 10-ի դատավճիռն ամբաստանյալ Նորայր Բորիսի Զաքարյանի նկատմամբ նշանակված պատժի մասով փոփոխել:*

*Ամբաստանյալ Նորայր Բորիսի Զաքարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով:*

*Դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:*

*(...)»:*

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Ն.Զաքարյանի պաշտպան Սասուն Մխիթարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Նորայր Զաքարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, *«առանց իրացնելու նպատակի, ներարկման միջոցով անձնական օգտագործման համար՝ տնայնագործական եղանակով, 2016 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 21:00-ին, Վանաձոր քաղաքի Իսահակյան 1-ին նրբանցքի 9/32 հասցեի բնակարանում, «Կոդեին» բաղադրատարր պարունակող դեղերից, քիմիական եղանակով այդ բաղադրատարրերի լուծամզմամբ՝ ապօրինի պատրաստել և պահել է զգալի չափերով՝ 0,028 գրամ «Կոդեին» տեսակի թմրամիջոց պարունակող պատրաստուկ, որը նույն ժամանակ հայտնաբերվել և դեպքի վայրի զննությամբ վերցվել է ոստիկանության աշխատակիցների կողմից»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 103-104):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է.

*«(...) Քննարկելով Ն.Զաքարյանի նախկին դատվածության հարցը, Դատարանն արձանագրում է, որ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 3-ի դատավճռով Ն.Զաքարյանը դատապարտվել է կալանքի՝ 2 ամիս ժամկետով: Պատժի կրումից ազատվել է 16.12.2015 թվականին, իսկ սույն գործով իրեն մեղսագրված արարքը կատարել է 2016 թվականի ապրիլի 25-ին, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով նշված դատվածությունը մարված չէ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ առկա է հանցագործությունների ռեցիդիվ:*

*(...)*

*[Հ]իմք ընդունելով Ա.Պողոսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած դիրքորոշումը՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով Ն.Զաքարյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոններով: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 193-195):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(...) Առաջին ատյանի դատարանը (...) հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամբաստանյալ Նորայր Զաքարյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է հանցանքը կատարելու ռեցիդիվը, քանի որ նա 2015 թվականի սեպտեմբերի 3-ին դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) նախատեսված դիտավորյալ հանցագործություններ կատարելու համար, որի դատվածությունը մարված չէ, հարկ է համարում նշված հանգամանքի առկայության պայմաններում քննարկել ամբաստանյալ Նորայր Զաքարյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատժաչափի հարցը:*

*(...) ՀՀ վճռաբեկ դատարանի [2014 թվականի մայիսի 31-ի՝ Ա.Պողոսյանի վերաբերյալ թիվ ՏԴ/0071/01/13 որոշմամբ ձևավորած] նախադեպային իրավունքից հետևում է, որ գործի քննության արագացված կարգի կիրառման պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա կիրառությունն անթույլատրելի է, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի հարաբերակցության միջև առկա է անորոշություն կամ հակասություն:*

*Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ տվյալ դեպքում հանցագործությունների ռեցիդիվի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի ուժով ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով կատարված արարքի համար նախատեսված պատժի առավել մեղմ պատժի՝ 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման և դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուժով ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով կա-*

*տարված արարքի համար նախատեսված պատժի առավելագույն ժամկետի՝ 8 (ութ) ամիս ժամկետով ազատազրկման միջև առկա չէ որևէ անորոշություն կամ հակասություն: Այսինքն՝ Դատարանի կողմից քրեահիրավական և քրեադատավարական նորմերի միաժամանակյա կիրառության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով կատարված արարքի համար պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամսից մինչև 8 (ութ) ամիս ժամկետով: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 41-47):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 358-րդ, 360-րդ, 385-386-րդ և 399-րդ հոդվածների պահանջները:

9. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, քանի որ իրավունք չուներ դատական ակտը հիմնավորել այնպիսի փաստարկներով, որոնք ներկայացված չեն եղել վերաքննիչ բողոքում:

Բողոքաբերը կարծում է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ: Ի հիմնավորումն իր փաստարկի նշել է, որ Ն.Զաքարյանի նկատմամբ 6 ամիս ժամկետով ազատազրկում նշանակելիս Վերաքննիչ դատարանը պարտավոր էր գործի նյութերում առկա փաստական տվյալների հիման վրա պատճառաբանել ինչպես պատժի տեսակի և չափի փոփոխության, այնպես էլ այդպիսի պատժի ընտրության անհրաժեշտության վերաբերյալ իր որոշումը: Բացի այդ, բողոքաբերը կարծում է, որ Վերքննիչ դատարանը չի հիմնավորել, թե ինչու Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական, հիմնավորված և արդարացի չէ:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 10-ի դատավճռին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործություններ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով և արագացված դատաքննության արդյունքում պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնների կիրառման կապակցությամբ անհրա-

ժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի համաձայն.

*«1. Հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները:*

*2. Հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից:*

*Հանցագործությունների վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երկու երրորդից:*

*Հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ. *«Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը»:*

Սեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծել է *Ալեք Պողոսյանի* գործով որոշմամբ և իրավական դիրքորոշում արտահայտել առ այն, որ *«(…) ՀՀ քրեական օրենսգիրքը հանցագործությունների ռեցիդիվի, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը դատական քննության արագացված կարգ կիրառելու պարագայում նախատեսում են պատիժ նշանակելու տարբեր կանոններ, որոնցից յուրաքանչյուրի կիրառումն անձի համար տարբեր իրավական հետևանքներ է առաջացնում:*

*Այսպես՝ ռեցիդիվի պարագայում, կախված դրա տեսակից, նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն չափի պարտադիր խստացում (ռեցիդիվի դեպքում նշանակված պատիժը չի կարող պակաս լինել առավելագույն պատժի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ 2/3-ից, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ 3/4-ից), իսկ արագացված դատաքննության դեպքում՝ կատարված հանցագործության համար նախատեսված առա-*

*վել խիստ պատժի պարտադիր մեղմացում (նշանակված պատիժը չի կարող գերազանցել առավել խիստ պատժի 2/3-ը): Այլ խոսքով, ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում առկա են միևնույն հարաբերությունը կարգավորող երկու հատուկ նորմեր, որոնք նախատեսում են պատիժ նշանակելու տարբեր ընթացակարգ:*

*(…) ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի միջև առկա է մրցակցություն, իսկ գործող օրենսդրական կարգավորումներից պարզ չէ, թե դրանցից որն է ենթական կիրառման և ինչ կարգով: Այսինքն՝ նույն հարցի վերաբերյալ առկա են երկու իրարամերժ, հակասող կանոններ:*

*ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի միջև հակասության առկայության վերաբերյալ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասում առկա՝ «սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժ» և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում առկա՝ «կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժ» ձևակերպումները ենթադրում են, որ կատարված հանցագործության համար նախատեսված պատիժ հասկացությունը պետք է մեկնաբանել որպես քրեական օրենսգրքի **հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում որոշվող օրենքով սահմանված պատիժ**, իսկ խնդրո առարկա ձևակերպումների այնպիսի մեկնաբանումը, որի պայմաններում «կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժը» որոշվում է արդեն իսկ ռեցիդիվի կանոնների կիրառմամբ որոշված պատժաչափի սահմաններում, անթույլատրելի է:*

*(…) ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում կիրառման կարգն ամրագրող համապատասխան կանոնի բացակայության պայմաններում վերոնշյալ նորմերի միջև առկա հակասությունը գործող օրենսդրության շրջանակներում  ենթական է լուծման ընդհանուր կոլիզիոն նորմերի կիրառմամբ:*

*(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի հարաբերակցության իրավական կարգավորման անորոշությունը և դրանց միջև առկա հակասությունը պետք է լուծվի հօգուտ անձի՝ նկատմամբ պատիժ նշանակելու բարենպաստ պայմաններ նախատեսող նորմի, ինչը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով սահմանված մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար դրույթներից:*

*(...)*

*(...) Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառումը՝ պայմանավորված ՀՀ քրեական դատա-*

*վարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում առկա կարգավորմամբ, ըստ որի՝ «(...) եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա [դատարանը նշանակում է] առավել մեղմ պատիժը», գրեթե բոլոր դեպքերում հանգեցնում է բացարձակ որոշակի սանկցիայի, ինչը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի, 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահանջներին և դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին (...): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառման դեպքում վերջնական պատիժը միշտ առավել մեղմից փոքր է ստացվում, և դատարանը կարող է նշանակել միայն առավել մեղմ պատիժը:*

*Այլ խոսքով՝ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառումը բացառում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառման հնարավորությունը, և դատարանը զրկվում է կոնկրետ դեպքում կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորությունը, հանցավորի անձը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները գնահատելու և անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու հնարավորությունից: Բացի այդ, բացառվում է վերադաս դատական ատյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքի կիրառման հնարավորությունը (...):*

*Հետևաբար, գործի քննության արագացված կարգի կիրառման պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա կիրառությունն անթույլատրելի է»* (տե՛ս Ալեք Գագիկի Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԴ/0071/01/13 որոշման 14-21րդ կետերը):

13. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Պողոսյանի գործով* որոշմամբ արտահայտած և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասում առկա՝ *«սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժ»* և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում առկա՝ *«կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժ»* ձևակերպումները ենթադրում են, որ կատարված հանցագործության համար նախատեսված պատիժ հասկացությունը մեկնաբանվում է որպես քրեական օրենսգրքի **հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում որոշվող օրենքով սահմանված պատիժ**: Հիշյալ մեկ-

նաբանման պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միջև մրցակցություն կամ հակասություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նկատմամբ ռեցիդիվի կանոնների կիրառման արդյունքում ստացված պատժի նվազագույն սահմանը մեծ է արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառման արդյունքում ստացված պատժի առավելագույն սահմանից կամ հավասար է դրան: Բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան կանոնների կիրառման արդյունքում ճնավորված պատժի նվազագույն սահմանը փոքր է առավելագույն սահմանից՝ նման հակասության մասին խոսք չի կարող լինել, քանի որ առաջանում է հարաբերական որոշակի սանկցիա՝ ապահովելով պատժի անհատականացման սկզբունքի իրացման հնարավորությունը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, արագացված կարգով դատական քննություն անցկացնելով, հաստատված է համարել, որ Ն.Զաքարյանի արարքում առկա է հանցագործությունների ռեցիդիվ, սակայն վկայակոչելով *Ա.Պողոսյանի գործով* Վճռաբեկ դատարանի որոշումը՝ գտել է, որ Ն.Զաքարյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոններով: Արդյունքում՝ Նորայր Զաքարյանի նկատմամբ պատիժ է նշանակել կալանք՝ 1 ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը պատժի մասով փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և ամբաստանյալ Ն.Զաքարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ է նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: Վերաքննիչ դատարանը, նույնպես վկայակոչելով *Ա.Պողոսյանի գործով* Վճռաբեկ դատարանի որոշումը, հանգել է հետևության, որ գործի քննության արագացված կարգի կիրառման պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա կիրառությունն անթույլատրելի է, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի հարաբերակցության միջև առկա է անորոշություն կամ հակասություն: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ տվյալ դեպքում հանցագործությունների ռեցիդիվի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի ուժով, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով կատարված արարքի համար նախատեսված առավել մեղմ պատժի՝ 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման, և դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուժով, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով կատարված արարքի համար նախատեսված պատժի առավելագույն ժամկետի՝ 8 (ութ) ամիս ժամկետով ազատազրկման միջև **առկա չէ որևէ անորոշություն կամ հակասություն:** Վերա-

քննիչ դատարանը գտել է, որ քրեաիրավական և քրեադատավարական նորմերի միաժամանակյա կիրառության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով կատարված արարքի համար պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամսից մինչև 8 (ութ) ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 13-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի արտահայտած այն եզրահանգման հետ, որ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքից հետևում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններ սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և արագացված դատաքննության արդյունքում պատիժ նշանակելու կանոններ սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի միաժամանակյա կիրառությունն անթույլատրելի է, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի հարաբերակցության մեջ առկա է մրցակցություն կամ հակասություն: Վերաքննիչ դատարանն իրավացիորեն նկատել է, որ տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի հարաբերակցության տեսանկյունից առկա չէ որևէ անորոշություն կամ հակասություն: Իրավաչափ է նաև Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ քրեաիրավական և քրեադատավարական նորմերի միաժամանակյա կիրառության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով կատարված արարքի համար Ն.Զաքարյանի նկատմամբ պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամսից մինչև 8 (ութ) ամիս ժամկետով:

Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր են Վերաքննիչ դատարանի հետևությունները այն մասին, որ Ն.Զաքարյանի նկատմամբ պատիժ նշանակելիս քույլատրելի է հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա կիրառությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գտել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 10-ի դատավճռով ամբաստանյալ Ն.Զաքարյանի նկատմամբ նշանակված պատժի մասով պետք է փոփոխել և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկում՝ հնարավոր պատժաչափի նվազագույն՝ 6 (վեց) ամիս ժամկետով:

Վճռաբեկ դատարանը հիմնազուրկ է համարում բողոքի հեղինակի այն կարծիքը, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, քանի որ իրավունք չուներ իր

դատական ակտը հիմնավորել այնպիսի փաստարկներով, որոնք ներկայացված չեն եղել վերաքննիչ բողոքում: Մեղադրողը վերաքննիչ բողոք է ներկայացրել Ն.Զաքարյանի նկատմամբ նշանակված պատժի կապակցությամբ՝ նշելով, որ այն ակնհայտ մեղմ է, և խնդրել է պատիժ նշանակել ազատազրկում՝ 7 ամիս ժամկետով: Վերաքննիչ դատարանը բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայել է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը և իրավացիորեն եզրահանգել, որ Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս սխալ է կիրառել օրենքը:

Հիմնազուրկ է նաև բողոքաբերի այն պնդումը, թե Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ բողոքարկվող դատական ակտը բեկանելու համար: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Նորայր Քորիսի Զաքարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**27.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԴ/0060/11/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2014 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնի հետաքննիչ Ե.Հակոբյանը որոշում է կայացրել «Լեկմա Շուզ» ՍՊ ընկերության տնօրեն Ջուլետտա Եղիազարյանի (ըստ գործում առկա AN0596982 անձնագրի պատճենի՝ Ջուլետտա Եղազարյան) նկատմամբ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանը, ստուգելով վերոգրյալ որոշման օրինականությունը, 2015 թվականի մարտի 23-ին որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչ Ե.Հակոբյանի՝

2014 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը վերացնելու և «Լեկմա Շուզ» ՍՊ ընկերության անվամբ մաքսանենգությամբ՝ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու եղանակով, խոշոր չափերի ապրանքներ ՀՀ տեղափոխելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու մասին:

2. 2015 թվականի ապրիլի 13-ին դիմող Ջ.Եղիազարյանի ներկայացուցիչ Հ.Տեր-Վարդանյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանի՝ 2015 թվականի մարտի 23-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի մայիսի 4-ի որոշմամբ դիմող Ջ.Եղիազարյանի ներկայացուցիչ Հ.Տեր-Վարդանյանի բողոքը բավարարել է՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանի՝ 2015 թվականի մարտի 23-ի որոշմամբ թույլ տրված՝ Ջ.Եղիազարյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

3. Դատախազ Կ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 4-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Քաբայանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 4-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 8-ի որոշումները:

Վճռաբեկ դատարանը 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ ներկայացված բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), 2015 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ՍԴՈ-1236 որոշման եզրափակիչ մասում բացահայտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը, արձանագրել է, որ վկայակոչված նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ իր կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

6. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումը, ներկայացրել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանը 2016 թվակա-

ևի հունվարի 29-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժել է:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազիկողմից Սահմանադրական դատարան կրկին ներկայացված դիմումի քննման արդյունքում Սահմանադրական դատարանը 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1319 որոշմամբ գործի վարույթը կարճել է՝ միևնույն ժամանակ ճնավորելով որոշակի իրավական դիրքորոշումներ:

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1319 որոշումը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2017 թվականի փետրվարի 23-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

9. Առաջին ատյանի դատարանը, իր՝ 2015 թվականի մայիսի 4-ի որոշմամբ բավարարելով դիմող Ջ.Եղիազարյանի ներկայացուցիչ Հ.Տեր-Վարդանյանի բողոքը, արձանագրել է. *«(...) [Ք]րեական գործ հարուցելը մերժելու մասին հետաքննիչի 2014թ. նոյեմբերի 14-ի որոշումն օրենքով նախատեսված յոթօրյա ժամկետում դատախազի կողմից չի վերացվել և մտել է օրինական ուժի մեջ: Այդ որոշումը վերացնելու և «Լեկմա Շուզ» ՍՊԸ անվամբ մաքսանենգությամբ՝ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու եղանակով, խոշոր չափերի ապրանքներ ՀՀ տեղափոխելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի որոշումը կայացվել է 2015թ. մարտի 23-ին, այսինքն՝ հետաքննիչի որոշման վերացման համար օրենքով սահմանված յոթօրյա ժամկետը լրանալուց ավելի քան երեք ամիս անց:*

*Վերոհիշյալ իրավական ակտերի և գործի հանգամանքների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ հետաքննիչի 2014թ. նոյեմբերի 14-ի որոշման բողոքարկման յոթօրյա ժամկետը լրանալուց հետո այն վերացնելու որևէ կարգ կամ հիմք նախատեսված չէ:*

*Բացի այդ, օրենսդիրը հստակ տարանջատել է քրեական գործ հարուցելը, քրեական գործի հարուցումը մերժելը, քրեական հետապնդում հարուցելը, գործի վարույթը կարճելը, քրեական հետապնդումը դադարեցնելը և*

*քրեական հետապնդում չիրականացնելը: Օրենսդիրը ՀՀ գլխավոր դատախազին լիազորել է վեց ամսվա ընթացքում միայն մեկ անգամ վերացնել քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, սակայն ոչ թե նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը:*

*Հետևաբար ՀՀ գլխավոր դատախազի կողմից կայացվել է որոշում, որի կայացման լիազորություն հետաքննիչի տվյալ որոշման բողոքարկման համար օրենքով սահմանված յոթնօրյա ժամկետը լրանալուց հետո նա չի ունեցել (...)* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 50):

10. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, նշել է. *«(...) [Վ]երաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի եզրահանգումներն առ այն, որ օրենսդիրը ՀՀ գլխավոր դատախազին լիազորել է վեց ամսվա ընթացքում միայն մեկ անգամ վերացնել քրեական հետապնդման մարմնի գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, սակայն ոչ թե նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը: Հետևաբար ՀՀ գլխավոր դատախազի կողմից կայացվել է որոշում, որի կայացման լիազորությունը՝ հետաքննիչի տվյալ որոշման բողոքարկման համար օրենքով սահմանված յոթնօրյա ժամկետը լրանալուց հետո նա չի ունեցել:*

*Վերաքննիչ դատարանը, կիրառելով մեկնաբանման expressio unius կանոնը, համաձայն որի՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով, արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված գլխավոր դատախազի կողմից վեց ամսվա ժամկետում վերացվող որոշումների ցանկում (...)»* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 156):

11. Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ փաստել է. *«(...) Բողոքաբերի փաստարկների, գործի նյութերի և բողոքարկվող դատական ակտի պատճառաբանությունների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից չի հիմնավորվել, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև որ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա (...)»* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 370-371):

12. Վճռաբեկ դատարանի՝ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին 2016 թվականի հունվարի 29-ի որոշմամբ արձանագրվել է.*«(...) [Թ]իվ ՍԴՈ-1236 որոշման եզրափակիչ մասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության շրջանակները բացահայտելիս*

*Սահմանադրական դատարանը վիճարկվող նորմին չի տվել այնպիսի մեկնաբանում, որ ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է յոթնօրյա ժամկետը լրանալուց հետո վեցամսյա ժամկետում, ի թիվս այդ նորմում հստակ նշված մյուս որոշումների, վերացնել նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև չի արձանագրել, որ քննարկվող նորմը կիրառվել է այլ մեկնաբանությամբ (...)»* (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 89):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքաբերի պնդմամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1319 որոշումը նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի, 2016 թվականի հունվարի 29-ի որոշումները վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ի հիմնավորումն հիշյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ հաստատվել է սույն գործով դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների՝ դրանց սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված լինելը: Ըստ բողոքաբերի՝ մինչդատական վարույթում գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական հետապնդման մարմնի (հետաքննության մարմնի կամ քննիչի) որոշումը ՀՀ գլխավոր դատախազի կողմից կարող է վերացվել մեկ անգամ և միայն այդպիսի որոշման կայացումից հետո՝ վեց ամսվա ժամկետում՝ անկախ քրեական հետապնդման մարմնի վերոհիշյալ որևէ որոշման առնչությամբ ստորադաս հսկող դատախազի դատավարական լիազորության իրականացումից:

14. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վերանայել Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին 2015 թվականի սեպտեմբերի 11-ի, նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին 2016 թվականի հունվարի 29-ի որոշումները և բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 4-ի, Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 8-ի որոշումները՝ կայացնելով նոր դատական ակտ:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1319 որոշումն արդյո՞ք Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին 2015 թվականի սեպ-

տեմբերի 11-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու հիմք է:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

*2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

*1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.*

*(...):*

*2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 1-ին կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ (...) [դրա] ուժի մեջ մտնելու պահից»:*

ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա քննության առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1319 որոշման եզրափակիչ մասում արձանագրել է. «*ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել՝ հաշվի առնելով, որ ՀՀ սահմա-*

*նաղրական դատարանի 2015թ. նոյեմբերի 17-ի ՄԴՈ-1236 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում մինչդատական վարույթում **գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու** մասին քրեական հետապնդման մարմնի (հետաքննության մարմնի կամ քննիչի) որոշումը ՀՀ գլխավոր դատախազի կողմից կարող է վերացվել մեկ անգամ և միայն այդպիսի որոշման կայացումից հետո՝ վեց ամսվա ժամկետում՝ անկախ քրեական հետապնդման մարմնի վերոհիշյալ որևէ որոշման առնչությամբ ստորադաս հսկող դատախազի դատավարական լիազորության իրականացումից: ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու սահմանադրաիրավական պարտականությունն է **հսկող դատախազի՝ օրենքով սահմանված լիազորության կատարումից կամ այդ լիազորության կատարման համար սահմանված ժամկետի (7-օրյա) ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում** և օրենքով նախանշված ժամկետում (6 ամիս) ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ կայացնելով վերջնական որոշում:*

*Վեճի առարկա նորմը դատական պրակտիկայում շարունակում է կիրառվել այլ մեկնաբանությամբ, ինչը ենթակա է վերանայման»*:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը դիմող Ջ.Եղիազարյանի ներկայացուցիչ Հ.Տեր-Վարդանյանի բողոքը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին հետաքննիչի՝ 2014 թվականի նոյեմբերի 14-ի որոշումն օրենքով նախատեսված յոթնօրյա ժամկետում դատախազի կողմից չի վերացվել, և դրանից հետո այն վերացնելու որևէ կարգ կամ հիմք նախատեսված չէ: Բացի այդ, դատարանը նշել է, որ օրենսդիրը ՀՀ գլխավոր դատախազին լիազորել է վեց ամսվա ընթացքում միայն մեկ անգամ վերացնել քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհրականացնելու մասին որոշումը, սակայն ոչ թե **նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը** (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, նշել է, որ **քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը** ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ գլխավոր դատախազի կողմիցվեց ամսվա ժամկետում վերացվող որոշումների ցանկում (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ ներկայացված բողոքը վարույթ ընդունելը մերժել է (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 16-րդ կետում շարադրված վերլուծությունը՝

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1319 որոշումը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու հիմք է:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման վերանայման արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 4-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 8-ի որոշումները պետք է բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ, 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը վերանայել:

2.Դիմող Ջ.Եղիազարյանի ներկայացուցիչ Հ.Տեր-Վարդանյանի բողոքը բավարարելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 4-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 8-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**28.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՏԴ/0004/06/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ մեղադրյալ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի պաշտպան Գ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2016 թվականի փետրվարի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 36100816 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ Դ.Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Դ.Հակոբյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ Դ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

1.1. 2016 թվականի մարտի 9-ին Դ.Հակոբյանը կամովին ներկայացել է ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժին, և նույն օրը վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով:

Նախաքննության մարմինը 2016 թվականի մարտի 10-ին միջնորդություն է ներկայացրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Դ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատելու մասին: Նույն դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, իսկ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը՝ մերժվել:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 5-ի որոշմամբ Դ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

2016 թվականի մայիսի 26-ին նախաքննությունը շարունակելու համար թիվ 36100816 քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի հուլիսի 1-ի և սեպտեմբերի

2-ի որոշումներով Դ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է յուրաքանչյուր դեպքում 2 (երկու) ամիս ժամկետով, իսկ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը՝ մերժվել:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ Դ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է ևս 2 (երկու) ամիս ժամկետով, իսկ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը՝ մերժվել:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել մեղադրյալ Դ.Հակոբյանի պաշտպան Գ.Հարությունյանը, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Դ.Հակոբյանի պաշտպան Գ.Հա-

րությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

4. Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Դ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժելու մասին որոշումը հրապարակել է 2016 թվականի նոյեմբերի 2-ին: Նույն օրը պաշտպան Գ.Հարությունյանը ստացել է Առաջին ատյանի դատարանի որոշման պատճենը (տե՛ս նյութեր, թերթ 51-65, 66-67):

Առաջին ատյանի դատարանն իր որոշման եզրափակիչ մասում արձանագրել է. *«(…) Որոշումը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հնգօրյա ժամկետում»* (տե՛ս նյութեր, թերթ 65):

5. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(…) Առաջին ատյանի դատարանի որոշումը պաշտպան Գ.Հարությունյանն ստացել է 2016 թվականի նոյեմբերի 02-ին:*

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների իմաստով՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը կարող էր բողոքարկվել մինչև 2016 թվականի նոյեմբերի 07-ի գիշերվա ժամը քսանչորսը:*

*Վերաքննիչ բողոքին կցված ծրարի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել 2016 թվականի նոյեմբերի 14-ին, այսինքն՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, հետևաբար վերաքննիչ բողոքը ժամկետանց է (…)»* (տե՛ս նյութեր, թերթ 88-90):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ, դրանով խախտվել են ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված արդար դատաքննության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի և օրինականության սկզբունքները:

Բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը կայացվել է 2016 թվականի նոյեմբերի 2-ին, իսկ այդ որոշմամբ կալանքի հետ քննարկվել է նաև գրավի կիրառման հարցը, ուստի գրավի կիրառման մասով վերաքննիչ բողոք ներկայացնելու առավելագույն ժամկետը 2016 թվա-

կանի նոյեմբերի 12-ն է, որը ոչ աշխատանքային օր է եղել, հետևաբար բողոքը փոստին հանձնելու միջոցով ներկայացվել է հաջորդող աշխատանքային օրը՝ 2016 թվականի նոյեմբերի 14-ին: Վերոնշյալ պայմաններում, ըստ բողոքաբերի, բողոքը ժամկետանց չի եղել:

Բողոքաբերը, ընդգծելով, որ կալանքի ժամկետի երկարացման դեմ վերաքննիչ բողոքները կարող են բերվել 5-օրյա, իսկ գրավի դեմ՝ 10-օրյա ժամկետներում, գտել է, որ նույն որոշման բողոքարկման երկու ժամկետների առկայության դեպքում պետք է կիրառվի այն ժամկետը, որն առավել բարենպաստ է կողմի համար, այսինքն՝ բողոքարկման 10-օրյա ժամկետը:

7. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք կալանավորման ժամկետը երկարացնելու և գրավի կիրառումը մերժելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա լինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

9. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի (...) քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:*

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից (...) դատաքննության իրավունք (...)»:*

Մեջբերված նորմերով նախատեսված է, ի թիվս այլոց, անձի ազատության իրավունքի ապահովման կարևոր դատավարական երաշխիք՝ ի դեմս իրեն ազատությունից զրկելը դատական կարգով վիճարկելու իրավունքի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դատական վարույթին, արձանագրել է, որ պարտա-

դիր չէ, որ դրա վրա տարածվեն քրեական և քաղաքացիական վարույթների համար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երաշխիքները: Այդուհանդերձ, էական է, որ տվյալ անձն օգտվի դատարանի մատչելիության իրավունքից և անձամբ կամ, անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչի միջոցով լսված լինելու հնարավորություն ունենա, հակառակ դեպքում կհամարվի, որ նրան չեն տրամադրվել «ազատությունից զրկելու վարույթի հիմնարար երաշխիքները» (տե՛ս Winterwerp v. The Netherlands գործով Եվրոպական դատարանի՝ 1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 6301/79, կետ 60):

Դատարանի մատչելիության իրավունքի ապահովումն արդար դատաքննության հիմնարար իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից մեկն է: Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն սահմանված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Եվրոպական դատարանն այդ իրավունքը ճանաչել է որպես 6-րդ հոդվածի անբաժանելի տարր՝ գտնելով, որ եթե անձը զրկված է դատարանի մատչելիության իրավունքից, իմաստազուրկ է նաև արդար դատաքննության իրավունքը: Այսպես՝ *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճռում Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է: Ընդ որում, այս եզրակացությունը հիմնված է նշված հոդվածի առաջին նախադասության տերմինաբանության վրա, որը մեկնաբանվել է այդ հոդվածի համատեքստում՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նպատակն ու առարկան, ինչպես նաև իրավունքի համընդհանուր սկզբունքները (տե՛ս Golder v. The United Kingdom գործով 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 4451/70, կետեր 28, 36):

Դատարանի մատչելիության իրավունքը մշտապես կարևորվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: Այսպես, բացահայտելով այդ իրավունքի էությունը՝ Վճռաբեկ դատարանը Լ.Հարությունյանի գործով կայացված որոշմամբ արձանագրել է, որ *«(...) դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձը ողջամիտ սահմանափակումների պայմաններում պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ճնշական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի ազատության և դատարանի մատչելիության իրավունքները (...)* (տե՛ս Լևոն Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշման 13-րդ կետը):

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոք բերվում [է]՝ առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հինգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:*

Անդրադառնալով վերոնշյալ իրավանորմում նշված դատական ակտերի իրավաչափությունը վիճարկելու ժամկետային սահմանափակումների առանձնահատկություններին՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրել է հետևյալը. *«(...) [Մ]ինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ կալանավորումը գրավով փոխարինելու, ինչպես նաև գրավը մերժելու և կալանավորումը որպես խափանման միջոց թողնելու մասին որոշումները, նախատեսված չլինելով հրապարակման պահից հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված որոշումների շրջանակում, ենթակա են բողոքարկման հրապարակման պահից տասնօրյա ժամկետում»* (տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի N 150 որոշման 4-րդ կետը):

Վճռաբեկ դատարանն իր հերթին, անդրադառնալով առաջին ատյանի դատարանի կողմից կալանավորման և գրավի միջնորդությունների քննարկման արդյունքում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու (կալանքի ժամկետը երկարացնելու) և միաժամանակ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելու կամ մերժելու մասին *մեկ դատական ակտի* բողոքարկման ժամկետների հիմնախնդրին, արձանագրել է, որ *«(...) [Ք]րեական դատավարության օրենսգրքում կալանավորման (կալանքի ժամկետը երկարաձգելու) և միաժամանակ գրավը թույլատրելու կամ մերժելու մասին մեկ միասնական որոշման բողոքարկման առանձին ժամկետ նախատեսված չէ, այլ կերպ ասած՝ այն ընդգրկված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա որոշումների շարքում: Հետևաբար կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման միջնորդությունը բավարարելու հետ մեկտեղ գրավի միջնորդությունը քննարկելու և արդյունքում գրավի կիրառումը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը Վերաքննիչ դատարան կարող է բողոքարկվել տասնօրյա ժամկետում՝ որպես գործն ըստ էության չլուծող այլ դատական ակտ:*

*Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալը վերաբերում է այն դեպքերին, երբ կալանավորման (կալանքի ժամկետի երկարաձգման) և գրավի վերաբերյալ հարցերը լուծվում են մեկ դատական ակտի շրջանակներում: Հակառակ պարագայում, եթե առաջին ատյանի դատարանի կողմից կայացվում են կալանավորման կամ կալանքի*

*ժամկետը երկարաձգելու և գրավի կիրառումը թույլատրելու կամ մերժելու մասին առանձին դատական ակտեր, ապա դրանցից յուրաքանչյուրը ենթակա է բողոքարկման ինքնուրույն կարգով՝ կալանավորումը (կալանքի ժամկետի երկարաձգումը)՝ հնգօրյա, իսկ գրավի վերաբերյալ որոշումը՝ տասնօրյա ժամկետում»* (տե՛ս Դավիթ Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ՏԴ/0004/06/16 որոշման 12-րդ կետը):

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, քննարկելով կալանավորման ժամկետը երկարացնելու և կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունները, կայացրել է կալանավորման ժամկետը երկարացնելու և գրավի կիրառումը մերժելու մասին մեկ միասնական դատական ակտ՝ եզրափակիչ մասում կողմերին պարզաբանելով, որ այն կարող է բողոքարկվել հնգօրյա ժամկետում (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Նշված դատական ակտի դեմ պաշտպանի ներկայացրած բողոքը Վերաքննիչ դատարանը թողել է առանց քննության՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը պաշտպանի կողմից ստացվել է 2016 թվականի նոյեմբերի 2-ին, ուստի Առաջին ատյանի դատարանի որոշումը կարող էր բողոքարկվել հնգօրյա ժամկետում՝ մինչև 2016 թվականի նոյեմբերի 7-ի ժամը քսանչորսը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

12. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում շարադրված իրավական նորմերի, արտահայտված իրավական դիրքորոշումների և կատարված վերլուծությունների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ մեղադրյալ Դ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել, և այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժվել է մեկ միասնական դատական ակտով, որն ընդգրկված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ հրապարակման պահից հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա որոշումների շարքում, ուստի այն պետք է բողոքարկվեր տասնօրյա ժամկետում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորման ժամկետը երկարացնելու և գրավի կիրառումը մերժելու մասին որոշումը հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա լինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

13. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Դավիթ Հովհաննեսի Հակոբյանի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ ըստ էության քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**29.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵՇԴ/0093/01/09

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով Հայրապետ Արամի Մելքոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, նույն հոդվածի 4-րդ մասով, 215-րդ հոդվածի 2-րդ մասով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 9 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանքի՝ 100.000 դրամի չափով:

2. 2016 թվականի հուլիսի 6-ին ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Հ.Մելքոնյանը Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին

ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) դիմում է ներկայացրել, որով խնդրել է վերանայել իր նկատմամբ կայացված դատավճիռը՝ հաշվի առնելով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի ընդունումը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ դատապարտյալ Հ.Մելքոնյանի դիմումը մերժվել է:

3. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Տ.Խաչատրյանի և դատապարտյալ Հ.Մելքոնյանի կողմից բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ բողոքները մերժել է:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Հ.Մելքոնյանը դատապարտվել է այն բանի համար, որ *«նա 2009 թվականի ապրիլ ամսվա ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության Ջուլֆա քաղաքում ոմն Ալիից, իրացնելու նպատակով, ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 400 գրամ ափիոն տեսակի թմրամիջոց և 0.7 մլ պրեկուրսոր հանդիսացող քացախաթթվի անհիդրիդ: Թմրամիջոցը թաքցրել է հագին եղած վարտիքի մեջ, իսկ քացախաթթվի անհիդրիդի լուծույթը ձեռքի ճամպրուկի մեջ և 24.04.2009թ. ՀՀ մաքսային սահմանով՝ Մեղրիի մաքսակետով, տեղափոխել է ՀՀ: Ափիոն տեսակի թմրամիջոցը մինչև 2009թ. հուլիսի 11-ը, պարբերաբար, 1 գրամը 7000 ՀՀ դրամով, կրկին անգամ, մաս-մաս վաճառել է Երևանի Շարուրի օժանդակ տնտեսության 28 տան բնակիչ Սարգիս Ռազմիկի Պետրոսյանին, որից 0.4 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցը և 0.7 մլ քացախաթթվի անհիդրիդը 11.07.2009թ. կրկին անգամ վաճառել է վերջինիս: 2009թ. հուլիսի 12-ին ապօրինի թմրամիջոց իրացնելու կասկածանքով Հ.Մելքոնյանը բերման է ենթարկվել ոստիկանության Շենգավիթի բաժնի Չարբախի բաժանմունք, որտեղ անձնական խուզարկության ընթացքում նրա մոտ հայտնաբերվել է առանձնապես խոշոր չափերի՝ 39.88 գրամ հաստատուն չոր քաշով ափիոն տեսակի թմրամիջոց»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 257-260):

6. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ փաստել է. *«(...) «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրա-*

*ցումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքի 9-րդ հոդվածով գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-ին հոդվածի 4-րդ մասը՝ նախատեսելով արարք, որը հանդիսանում է առանձնապես ծանր հանցագործություն, դատապարտյալ Հայրապետ Մելքոնյանի պատիժը խստացնող և նրա վիճակն այլ կերպ վատթարացնող օրենք է, քանի որ դրանով նախատեսված է ավելի խիստ պատիժ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներին համապատասխան՝ այդպիսի արարք կատարած և պատիժ կրող անձանց համար, ի համեմատ ծանր հանցագործություններ կատարած անձանց, նախատեսվում է պատժից ազատվելու կարգի ու պայմանների հետ կապված ոչ նպաստավոր պայմաններ:*

*(...) «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքով գործողության մեջ դրված առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների մաքսանենգության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-ին հոդվածի 4-րդ մասը Հայրապետ Մելքոնյանի նկատմամբ ենթակա չէ կիրառման, և վերջինիս նկատմամբ շարունակում են կիրառվել մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքն ուժի մեջ մտնելը՝ նրա կատարած արարքի համար պատասխանատվություն նախատեսող, նրան պատժից ազատող և դատվածության մարման հարցերը կարգավորող ՀՀ քրեական օրենսգրքի իրավադրույթները»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 304-311):

7. Վերաքննիչ դատարանը, **միաձայն** կարգով քննության առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը, 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշման շրջանակներում արձանագրել է. *«[Առաջին ատյանի դատարանի] (...) եզրահանգումները հիմնավոր են, քանի որ դրանք բխում են ինչպես գործող օրենսդրության պահանջներից, այնպես էլ գործի փաստական հանգամանքներից ու տվյալներից»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 44-56):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որոնց պարագայում կայացված դատական ակտն անհիմն է և ենթակա է բեկանման:

8.1. Մասնավորապես՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը Հ.Մելքոնյանի վերաբերյալ դատավճիռը վերանայելու և օրենքին համապա-

տասխանեցնելու դիմումը մերժելու մասին որոշման դեմ մեղադրողի և դատապարտյալի բողոքները քննել է միանձնյա: Միևչդեռ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1.-րդ կետը, 387-րդ հոդվածը, «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ինչպես նաև *Ա.Արծրունու* գործով Վճռաբեկ դատարանի որոշումը՝ բողոք բերած անձը փաստել է, որ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը վերանայելու կամ դիմումը մերժելու մասին դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ է, ուստի դրա դեմ բերված բողոքի քննությունը Վերաքննիչ դատարանը պետք է կատարեր կոլեգիալ կազմով: Հետևաբար բողոքի հեղինակը կարծում է, որ Վերաքննիչ դատարանը բողոքների քննությունն իրականացրել է ոչ օրինական կազմով, ինչի արդյունքում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

8.2. Բացի այդ, բողոք բերած անձը փաստել է, որ ստորադաս դատարանները, վկայակոչելով անձի վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքի կանոնը և արձանագրելով, որ Հ.Մելքոնյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին, որով նկարագրված հանցագործությունը դասվում է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, իսկ նոր օրենքը վատթարացնում է անձի վիճակը, մերժել են Հ.Մելքոնյանի՝ արարքը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու դիմումը՝ դիրքորոշում չհայտնելով ուժը կորցրած հոդվածով նախատեսված և նոր օրենքին համապատասխանեցման ոչ ենթակա արարքի համար անձին քրեական պատասխանատվության հնարավորության վերաբերյալ՝ արդյունքում չլուծելով անձի քրեական պատասխանատվության հիմքը կազմող օրենքի որոշակիության խնդիրը:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք դատապարտյալ Հ.Մելքոնյանի դիմումը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետը սահմանում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են համարվում *առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որո-*

*չումը, այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:*

Վերոնշյալ իրավանորմի առնչությամբ Վճռաբեկ դատարանն *Ա.Արծրունու* գործով կայացված որոշման շրջանակներում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Հ]անցանք կատարած անձի վիճակը նոր քրեական օրենքի ուժով բարելավելու հիմքով դատավճիռը վերանայելու, մասնավորապես՝ անձի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցը լուծելով՝ դատարանը կայացնում է որոշում, որտեղ իրենց լուծումն են ստանում դատավճռին վերաբերող հարցեր (օրինակ՝ արարքի քրեաիրավական որակում, պատժատեսակի և պատժաչափի որոշում): Հետևաբար այդ որոշումը նս հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, և այն ենթակա է բողոքարկման նույն ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է դատավճիռները բողոքարկելիս»* (տե՛ս *Արսեն Արծրունու* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը):

12. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Արծրունու* գործով արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն *Է.Ծոնկներանցի* գործով որոշմամբ իրավական դիրքորոշումներ է հայտնել առ այն, որ *«(...) անձի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ դիտարկելը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական օրենքով արգելված արարքը նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցը լուծելիս դատարանն անդրադառնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում նախատեսված այնպիսի իրավական հարցերի (արարքը համապատասխանո՞ւմ է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին, ենթակա՞ է արդյոք պատժի հանցավորն իր կատարած հանցանքի համար, ի՞նչ պատիժ պետք է նշանակվի հանցավորի նկատմամբ), որոնք օրենքի ուժով (ex lege) վերապահված են գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճռի լուծմանը: Հետևաբար քրեական օրենքով արգելված արարքը նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցը լուծելիս կայացվող դատական ակտի բողոքարկումը և բողոքի քննությունը ենթակա է իրականացման նույն դատավարական ընթացակարգով, ինչը նախատեսված է գործն ըստ էության լուծող դատական ակտի համար: Այլ կերպ՝ քննարկման առարկա դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս կիրառման են ենթակա, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 379-րդ և 387-րդ հոդվածներով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները:*

*(...)*

*Վճռաբեկ դատարանը փաստում է, որ [«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված] արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» եզրույթի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նախադեպային իրավունք է ճևավորել առ այն, որ նշյալ եզրույթը ոչ միայն կազմում է «դատարանի»՝ առհասարակ գոյության իրավական հենքը, այլև այն ներառում է յուրաքանչյուր գործով **դատարանի կազմը** (տե՛ս Buscarini v. San Marino գործով 2000 թվականի մայիսի 4-ի որոշումը, գանգատ թիվ 31657/96, Posokhov v. Russia գործով 2003 թվականի մարտի 4-ի վճիռը, գանգատ թիվ 63486/00, կետ 39, Yegorychev v. Russia գործով 2016 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 8026/04, կետ 64): Ուստի այն դեպքերում, երբ օրենքով դատարանի կազմին ներկայացվող պահանջներն ապահովված չեն, ապա խաթարվում է օրինականության սկզբունքը՝ անձին զրկելով արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առջև կանգնելու իրավունքից (տե՛ս, mutatis mutandis, Jorgic v. Germany գործով 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 74613/01, կետ 64, Richert v. Poland գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 54809/07, կետ 41)»* (տե՛ս *Էդիկ Ծոնվեռանցի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԾԴ/0049/01/12 որոշման 11.1-րդ և 12-րդ կետերը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Հ.Մելքոնյանը 2016 թվականի հուլիսի 6-ին Առաջին ատյանի դատարան դիմում է ներկայացրել, որով խնդրել է վերանայել իր նկատմամբ կայացված դատավճիռը՝ հաշվի առնելով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի ընդունումը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ մերժել է Հ.Մելքոնյանի դիմումը՝ փաստելով, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքը դատապարտյալ Հ.Մելքոնյանի պատիժը խստացնող և նրա վիճակն այլ կերպ վատթարացնող օրենք է, քանի որ դրանով նախատեսված է ավելի խիստ պատիժ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներին համապատասխան՝ այդպիսի արարք կատարած և պատիժ կրող անձանց համար, ի համեմատ ծանր հանցագործություններ կատարած անձանց, նախատեսվում են պատժից ազատվելու կարգի ու պայմանների հետ կապված ոչ նպաստավոր պայմաններ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, **միաձայն** կարգով քննության առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքները, 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ արձանագրել է, որ ստորադաս դատարանի եզրահանգումները հիմնավոր են, քանի որ դրանք

բխում են ինչպես գործող օրենսդրության պահանջներից, այնպես էլ գործի փաստական հանգամանքներից ու տվյալներից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 18-ի որոշման՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի նկատմամբ պետք է կիրառվեին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 387-րդ հոդվածով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված բողոքը սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից պետք է քննության առնվեր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, մինչդեռ այն քննության է առնվել միանձնյա կարգով՝ այդ կերպ չապահովելով արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առկայությունը:

14.1. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Հ.Մելքոնյանի դիմումը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելն իրավաչափ չէ:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի, 387-րդ հոդվածի խախտումներ, այն է՝ դատական ակտը կայացրել է դատարանի ոչ օրինական կազմով, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտման պայմաններում հնարավոր չէ անդրադառնալ սույն որոշման 8.2-րդ կետում բողոքաբերի բարձրացրած՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Հայրապետ Արամի Մելքոնյանի վերաբերյալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 18-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**30.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՏԴ-1/0043/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Անդրեյ Դմիտրիի Պինչուկի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ պաշտպան Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2016 թվականի փետրվարի 6-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2016 թվականի փետրվարի 8-ին Անդրեյ Դմիտրիի Պինչուկը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննական մարմնի՝ 2016 թվականի հունիսի 30-ի որոշմամբ Ա.Պինչուկին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան կրկին մեղադ-

րանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի հուլիսի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Արագացված կարգով դատական քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանն իր՝ 2016 թվականի հուլիսի 27-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Պինչուկին մեղավոր է ճանաչել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 329-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում, և մեղսագրված յուրաքանչյուր հանցավոր արարքի համար դատապարտել ազատազրկման ձևով պատժի՝ 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով ամբաստանյալի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարել և Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 27-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է. Ա.Պինչուկը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 329-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 ամիս ժամկետով, 329-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 տարի ժամկետով, 34-329-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով ամբաստանյալի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ նշանակված պատժին հաշվակցվել է 6 ամիս կալանքի տակ գտնվելու ժամկետը և վերջնական թողնվել կրելու ազատազրկում՝ 1 տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Պինչուկի պաշտպան Լ.Սիմոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Նախաքննության մարմնի կողմից Ա.Պինչուկին ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ

հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. *«[Նա] (…), գտնվելով Վրաստանի տարածքում, չունենալով պատշաճ փաստաթղթեր, նպատակադրվել է ապօրինի մուտք գործել ՀՀ տարածք՝ ձեռք բերել կեղծ անձնագիր, որն օգտագործելով՝ Հայաստանի Հանրապետությունից Վրաստանի տարածքով տարանցիկ մեկնել ՌԴ: Այսպես.*

*Անդրեյ Պինչուկը, հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, 2015 թվականի դեկտեմբեր ամսին, Վրաստանից՝ անցնելով սահմանամերձ «Դեբեդ» գետը, ապօրինի հատել է ՀՀ պահպանվող պետական սահմանը և մուտք է գործել ՀՀ տարածք: Հայաստանում գտնվելու ընթացքում՝ նախապես լուսանկարվելով, քննությամբ չպարզված հանգամանքներում ձեռք է բերել իր լուսանկարով, սակայն Վահե Մարտինի Ավագյանի տվյալներով իրավունք վերապահող պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ ՀՀ քաղաքացու AH 0533328 սերիա-համարի կեղծված անձնագիր:*

*Այնուհետև, շարունակելով հանցավոր գործունեությունը, Անդրեյ Պինչուկը նշված կեղծ անձնագրի և Վահե Մարտինի Ավագյանի տվյալներով ձեռք է բերել Երևան-Մոսկվա ավտոբուսային ուղերթով «Անուշ-տրանստուր» ընկերության ուղևորատոմս, որից հետո՝ 2016 թվականի փետրվարի 4-ին, հասնելով «Քագրատաշեն» հսկիչ անցագրային կետ, ապօրինի օգտագործելով ՀՀ քաղաքացու AH 0533328 սերիա-համարի կեղծված անձնագիրը, փորձել է հատել ՀՀ պահպանվող պետական սահմանը, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ կեղծիքը հայտնաբերվել է ՀՀ ԱԱԾ ՍՉ ծառայողների կողմից (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 288-289):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում փաստել է.« (…) [*Ա]մբաստանյալ Անդրեյ Դմիտրիի Պինչուկին մեղսագրված արարքը հաստատված է ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով, 329 հոդվածի 1-ին մասով, 34-329 հոդվածի 1-ին մասով ճիշտ է որակված, որի համար նա ենթակա է պատժի:*

*Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ոչ միայն կատարված հանցագործությունների բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը, այլև ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները՝ այն, որ երիտասարդ է, իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կատարածի համար:*

*Գործով ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներ ձեռք չեն բերվել:*

*Նշված հանգամանքների պայմաններում դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Անդրեյ Դմիտրիի Պինչուկի նկատմամբ պետք է նշանակել ազատազրկման ձևով պատիժ, որպիսին անհրաժեշտ ու բավարար է նրա ուղղման, այլ հանցագործության կանխման և սոցիալական արդարության վերականգնման համար (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 67-68):

7. Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է. *«[Առաջին ատյանի դատարանը] պատիժ նշանակելիս գնահատման չի ենթարկել կատարված հանրորեն վտանգավոր արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը:*

*Վերաքննիչ դատարանը ամբաստանյալ Անդրեյ Պինչուկի նկատմամբ պատիժ նշանակելու հարցը քննելիս, սույն գործում առկա, օբյեկտիվ, գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա գալիս է համոզման, որ նրա նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է ու չի կարող ապահովել պատժի նպատակները:*

*Վերաքննիչ դատարանը նման հետևության հանգում է՝ հիմնվելով Անդրեյ Պինչուկի կողմից կատարած հանցագործությունների, դրանց առանձնահատկությունների, գործի փաստական հանգամանքների, հանցավորի անձի բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատական սկզբունքներին համապատասխան:*

*Բացի այդ, Վերաքննիչ դատարանն Անդրեյ Պինչուկի նկատմամբ նշանակված պատժի համաչափության հարցը քննարկելիս հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում վերջինիս կատարած դիտավորյալ հանցագործությունները եղել են նախապես պլանավորված և փոխկապակցված, որը թեև լրացուցիչ քրեաիրավական որակման ենթակա չէ, սակայն էականորեն բարձրացնում է կատարված արարքների հանրային վտանգավորության աստիճանը:*

*(…)*

*Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Դատարանի դատավճռով ամբաստանյալ Անդրեյ Պինչուկի նկատմամբ նշանակված պատիժն արդարացի չէ՝ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, այն չի համապատասխանում հանցագործությունների հանրության համար վտանգավորության աստիճանին և բնույթին, ինչպես նաև ամբաստանյալի անձին (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 59-67):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել դատական սխալ, այն է՝ խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները: Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշումը առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված դատական ակտերին:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկների՝ բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության նշելով Առաջին ատյանի դատարանի կողմից մատնանշված նույն հանգամանքները, առանց որևէ պատճա-

ռաբանության եկել է այն հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը մեղմ է: Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ինչու 6 ամիս ժամկետով ազատազրկումը չի կարող բավարար լինել անձին ուղղելու համար կամ պատժի նպատակներն ապահովելուն, իսկ 1 տարի 6 ամիս ժամկետը բավարար է: Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող պատիժները երկընտրելի են և պատիժ են նախատեսում նաև տուգանքի ձևով: Ավելին՝ բողոք բերած անձը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ա.Պինչուկն արարքը կատարել է աշխատատեղ փնտրելու նպատակներով՝ զուտ սոցիալական պայմաններից ելնելով:

Մեջբերելով Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0163/01/13, ՍԴ/0109/01/12 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը արդյունքում եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ամբաստանյալը կատարել է արարք, որը միջին ծանրության է, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել է խոստովանական ցուցմունք, որի արդյունքում նպաստել է հանցագործության ամբողջական բացահայտմանը (ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի առումով), նախկինում դատապարտված չի եղել, երիտասարդ է, արարքը կատարել է հանգամանքների պատահական զուգադրման արդյունքում, փաստացի կրել է 6 ամիս 2 օր ժամկետով պատժաչափ, հետևապես նրա նկատմամբ պատժաչափը խստացնելն իրավաչափ չէր:

8.1. Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի օրինակը չեն տրամադրվել ամբաստանյալին վերջինիս հասկանալի լեզվով, ինչպես նաև ամբաստանյալը չի ծանուցվել Վերաքննիչ դատարանում տեղի ունեցած դատական նիստերի տեղի և ժամի մասին: Հետևաբար, ըստ բողոքաբերի՝ խախտվել են ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «ե» կետերի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 65-րդ, 382-րդ, 390-րդ հոդվածների պահանջները:

Բացի այդ, բողոքաբերը, մեջբերելով Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստել է, որ Ա.Պինչուկի պատժի կրման սկիզբը պետք է համարվի ոչ թե 06.02.2016թ., այլ 04.02.2016 թվականը, քանի որ ամբաստանյալը փաստացի արգելանքի է վերցվել այդ օրը:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 27-ի դատավճռին կամ գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատշաճ կերպով պատճառաբանվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Ա.Պինչուկի նկատմամբ նշանակված պատժաչափը փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար*»:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները*»:

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

*2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով (...)»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. *«Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում կամ խստացնում է պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով»:*

12. ՀՀ քրեական օրենսգրքի մեջբերված նորմերի (պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների վերլուծությանը Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձել է *Նարեկ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 14-23-րդ կետերում) լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է. *«[Վ]երաքննիչ դատարանն իրավասու է պատժի մասով փոփոխել առաջին ատյանի դատարանի դատական ակտը հետևյալ դեպքերում.*

*1) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս չեն պահպանվել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները,*

*2) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշվի չեն առնվել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,*

*3) առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ հանգամանք(ներ)ը հաշվի չառնելը հանգեցրել է անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման:*

*(...) [Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս վերոնշյալ պահանջների չպահպանման վերաբերյալ վերաքննիչ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված: Այլ կերպ ասած՝ պատիժն ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու հիմքով առաջին ատյանի դատարանի դատական ակտը փոփոխելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե պատժի նշանակման հատկապես որ սկզբունքը կամ սկզբունքները չեն պահպանվել, հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող որ հանգամանքները հաշվի չեն առնվել և արդյոք այդ հանգամանքները հաշվի չառնելն է հանգեցրել անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման: Այսինքն՝ եթե վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, պետք է պատճառաբանի, թե ինչում է արտահայտվել պատժի խստության կամ մեղմության ակնհայտությունը* (տե՛ս *Նարեկ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 24-րդ կետը):

12.1. Միևնույն ժամանակ, վերահաստատելով դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին (տե՛ս, mutatis mutandis, *Արսեն Մակարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը, *Արամայիս Հակոբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հու-

նիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշման 17.1-րդ կետը, *Անժելա Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԿԴ/0104/11/16 որոշման 13-րդ կետը):

13. Սույն գործի նյութերից երևում է, որ Ա.Պինչուկին ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինի հատել է ՀՀ պահպանվող պետական սահմանը, մուտք գործել ՀՀ տարածք, ձեռք է բերել ՀՀ քաղաքացու կեղծված անձնագիր, այնուհետև կեղծված անձնագիրն ապօրինի օգտագործելով «Բագրատաշեն» հսկիչ անցագրային կետում՝ փորձել է հատել ՀՀ պահպանվող պետական սահմանը, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ կեղծիքը հայտնաբերվել է ՀՀ ԱԱԾ ՍԶ ծառայողների կողմից (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելով և մեղսագրված յուրաքանչյուր հանցավոր արարքի համար դատապարտելով 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատժի, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ վերջնական պատիժ նշանակելով ազատազրկում՝ 6 վեց ամիս ժամկետով՝ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ հաշվի է առնում ոչ միայն կատարված հանցագործությունների բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը, այլև ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները՝ այն, որ երիտասարդ է, իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կատարածի համար: Գործով ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներ ձեռք չեն բերվել (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, իր հերթին փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս գնահատման չի ենթարկել կատարված հանրորեն վտանգավոր արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ գործում առկա, օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա վերջինս գալիս է համոզման, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է ու չի կարող ապահովել պատժի նպատակները: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ նման հետևության է հանգում՝ հիմնվելով Ա.Պինչուկի կատարած հանցագործությունների, դրանց առանձնահատկությունների, գործի փաստական հանգամանքների, հանցավորի անձի բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր հետևությունը հիմնավորել է նաև նրանով, որ տվյալ դեպքում ամբաստանյալի կատարած դիտավորյալ հանցագործությունները եղել են նախապես պլանավորված և փոխկապակցված, որը, ըստ Վերաքննիչ դատարանի, թեև լրացուցիչ քրեահիրավական որակման ենթակա չէ, սակայն էականորեն բարձրացնում է կատարված

արարքների հանրային վտանգավորության աստիճանը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները դիտարկելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված նորմերի և մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով ստորադաս դատարանի դատական ակտը, թույլ է տվել դատական սխալ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ հաշվի է առնում ինչպես ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները, այնպես էլ կատարված հանցագործությունների բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Այս պայմաններում հիմնավոր չի կարող համարվել Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանը կատարված հանրորեն վտանգավոր արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը գնահատման չի ենթարկել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում արձանագրել է նաև, որ եզրահանգումն առ այն, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է, հիմնված է *սույն գործում առկա, օբյեկտիվ, գոյություն ունեցող տվյալների վերլուծության, Ա.Պինչուկի կատարած հանցագործությունների, դրանց առանձնահատկությունների, գործի փաստական հանգամանքների, հանցավորի անձի բազմակողմանի գնահատման վրա* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի սույն պատճառաբանությունը կրում է ընդհանրական բնույթ, այն հիմնված չէ փաստական կոնկրետ տվյալների վրա, հետևաբար չի կարող համարվել հստակ, որոշակի և համոզիչ դատողություն:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ *տվյալ դեպքում ամբաստանյալի կատարած դիտավորյալ հանցագործությունները եղել են նախապես պլանավորված և փոխկապակցված, որը թեև լրացուցիչ քրեաիրավական որակման ենթակա չէ, սակայն էականորեն բարձրացնում է կատարված արարքների հանրային վտանգավորության աստիճանը* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշյալ հանգամանքները, ըստ էության, բխում են ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), որի պայմաններում Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանությունը չի կարող համարվել որպես Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատժի ակնհայտ մեղմ լինելը վկայող պատշաճ հիմնավորում:

14.1. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, եզրահանգելով, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, բավարար չափով և պատշաճ կերպով չի պատճառաբանել, թե ինչում է արտահայտվել դրա մեղմության ակնհայտությունը:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Պինչուկի նկատմամբ նշանակված պատժաչափը փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատշաճ կերպով պատճառաբանված չեն:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչի արդյունքում ոչ ճիշտ են կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածները: Նշված խախտումները, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-399-րդ հոդվածների, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հաշվի առնելով հանցավորի անձը բնութագրող հանգամանքները, կատարված հանցագործությունների՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ամբաստանյալի նկատմամբ նշանակել է համաչափ պատիժ: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 27-ի դատավճռին:

17. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 8.1.-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը, այդպիսիք դիտարկելով բողոքաբերի պահանջի (այն է՝ բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)) և այն բավարարելու համատեքստում, քննարկման առարկա չի դարձնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Անդրեյ Դմիտրիի Պինչուկի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 27-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**31.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԷԴ/0002/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատախազ | Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ Վեհանուշ Բերբերյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 12135615 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նույն մարմնի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հետապնդում չի իրականացվել, և թիվ 12135615 քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատարի՝ 2015 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի որոշման դեմ դիմող Վ.Քերբերյանի ներկայացուցիչ Վ.Բաբայանի ներկայացրած բողոքը բավարարվել է, իսկ քրեական գործի վարույթը կարճելու ու քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշումը՝ վերացվել:

Նախաքննության մարմինը (այսուհետ՝ նաև Քննիչ) 2015 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել թիվ 12135615 քրեական գործի վարույթը կարճելու և Կարապետ Սիմբլյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Երևան քաղաքի դատախազի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ դիմող Վ.Քերբերյանի ներկայացուցիչ Վ.Բաբայանի ներկայացրած բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Վերոնշյալ որոշումների դեմ դիմող Վ.Քերբերյանի ներկայացուցիչ Վ.Բաբայանի կողմից ներկայացված բողոքը Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ մերժվել է:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 26-ի որոշումը բեկանվել է՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել որոշմամբ արձանագրված՝ բողոքաբեր կողմի իրավունքի խախտումը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատարի՝ 2015 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի որոշումը վերացվել է՝ հաշվի առնելով, որ՝ *«(…) Վ.Քերբերյանի և Կ.Սիմբլյանի ցուցմունքներում առկա էական հակասությունների պայմաններում քննիչը առերեսում չի կատարել վերջիններիս միջև, ինչպես նաև դատաբժշկական փորձաքննության թիվ 2019 եզրակացությամբ նշված Վ.Քերբերյանի աջ դաստակի ափային և թիկնային մակերեսների և աջ նախաբազկի վերին երրորդականի հետին մակերեսի արյունազեղումների ծևով*

*մարմնական վնասվածքների առկայության պարագայում, չի հարցաքննել փորձագետին նշված մարմնական վնասվածքների առաջացման մեխանիզմի շուրջ (...)»* (տե՛ս գործի նյութեր, հատոր 1, թերթ 12):

6. Քննիչի կողմից հարցաքննվել է Վ.Բերբերյանի դատաբժշկական փորձաքննությունն իրականացրած փորձագետ Ս.Սևոյանը, ով ցուցմունք է տվել այն մասին, որ «*կոնկրետ տվյալ շրջանում, կախված անատոմիական առանձնահատկությունից հնարավոր է մեկ հարվածի հետևանքով հակադիր մակերեսներին երկու նույնաբնույթ վնասվածքների առաջացումը*» (տե՛ս գործի նյութեր, հատոր 1, թերթ 14):

7. Քննիչի՝ 2015 թվականի նոյեմբերի 16-ի Կարապետ Սիմբլյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման համաձայն՝ *«[Ք]ննարկելով նախաքննության ժեռք բերված փաստական տվյալները հիմնավորված պետք է համարել այն հանգամանքը, որ 17.07.2015թ. Կ.Սիմբլյանը Վ.Բերբերյանի վարքագծից առաջացած զայրույթի ժամանակ՝ չկոնկրետացված՝ անուղղակի դիտավորությամբ պլաստիկե աթոռը նետել է վերջինիս ուղղությամբ, որը դիպչել է Վ.Բերբերյանի ձեռքին և անզգուշությամբ պատճառել է թեթև մարմնական վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք:*

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված չէ անզգուշությամբ մեկ ուրիշի առողջությանը թեթև մարմնական վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք պատճառելու համար նախատեսված հանցակազմ, հետևաբար՝ Կ.Սիմբլյանի նկատմամբ չի կարող քրեական հետապնդում իրականացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով (...)»* (տե՛ս գործի նյութեր, հատոր 1, թերթեր 45-47):

8. Դատախազի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման համաձայն՝ *«[Ք]րեական գործով ձեռք չի բերվել օբյեկտիվ ապացույցների բավարար համակցություն, որը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով կհիմնավորեր Կ.Սիմբլյանի կողմից Վ.Բերբերյանին մեկից ավելի հարվածներ հասցնելու փաստը, որպիսի պայմաններում Կ.Սիմբլյանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները (...)»* (տե՛ս գործի նյութեր, հատոր 1, թերթեր 12-15)*:*

9. Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ գտել է, որ. *«(...) [Բ]ողոքաբերի ներկայացուցիչ Վ.Բաբայանի կողմից որևէ հիմնավոր փաստարկ կամ ապացույցներ չներկայացվեցին դատարանին՝ Կարապետ Սիմբլյանի կողմից Վ.Բերբերանին դիտավորությամբ թեթև մարմնական վնասվածք պատճառելու վերաբերյալ, այն է՝ նրա մեղքը հիմնավորող ապացույցների առկայության մասին: Ինչ վերաբերում է նախաքննական մարմնի կողմից քննչական փորձարարություն և առերեսում չկատարելու մասին բողոքաբերի ներկայացուցիչ Վ.Բաբայանի պնդմանը, ապա դատարանը գտնում է, որ նախաքննության տվյալ փուլում դրանք վարույթն իրականացնող մարմնի*

*հայեցողությամբ են պայմանավորված եղել, քանի որ կողմերի դատավարական կարգավիճակը բացառել է դրանց պարտադիր կատարումը, ինչպես նաև նշված գործողությունները կատարելու անհրաժեշտությունը հերքվել է նախաքննության ընթացքում ձեռք բերված ամբողջական ապացույցներով: Դատարանը գտնում է, որ [Քննիչի] 16.11.2015թ. որոշումը հիմնավոր և օրինական է, այն բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջներից, և վերացնելու որևէ հիմքեր չկան: (…)*

*(…) Քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից իրականացված մոտ 4 ամիս տևած նախաքննության տվյալներով հերքվել է Կարապետ Սիմբլյանի կողմից դիտավորությամբ մարմնական վնասվածք պատճառելու հանգամանքը, ուստի նախաքննական մարմնի 16.11.2015թ. որոշմամբ իրավացիորեն որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել, և գործի վարույթը իրավացիորեն կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, այն է՝ հանցակազմի բացակայության հիմքով, քանի որ նախաքննության ողջ ընթացքում Կ.Սիմբլյանի կողմից բողոքաբեր Վ.Քերբերյանին դիտավորությամբ մարմնական վնասվածք հասցնելու վերաբերյալ որևէ ապացույց ձեռք չի բերվել: Դատարանը գտնում է, որ հիմնավոր է նաև [Դատախազի] 15.12.2015թ. որոշումը՝ բողոքաբերի ներկայացուցիչ Վ.Բաբայանի բողոքը մերժելու մասին, քանի որ լրացուցիչ քննությամբ նախաքննական մարմինն ամբողջությամբ կատարել է դատախազի ցուցումի պահանջները և իրականացրել լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն: Նման հիմքերի առկայության պայմաններում դատարանը գտնում է, որ բողոքաբեր Վ.Քերբերյանի ներկայացուցիչ Վ.Բաբայանի բողոքը հիմնավոր չէ և ենթակա չէ բավարարման (…)»:*

10. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Վերաքննիչ դատարանը կարճված գործի նյութերի ուսումնասիրությամբ եկավ այն համոզման, որ վարույթն իրականացնող մարմինն ըստ էության անհրաժեշտ և բավարար ջանասիրություն չի ցուցաբերել՝ պարզելու գործի համար կարևոր նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, այդ թվում նաև պատշաճ վերլուծության և գնահատության չի ենթարկել համապատասխան փորձագետի եզրակացությամբ Վեհանուշ Բերբերյանի մոտ վնասվածքներ (մեկից ավելի) արձանագրված լինելու, վերջինիս Կ.Սիմբլյանի կողմից մեկից ավելի անգամ, հարված(ներ) հասցնելու, միջադեպն այլ անձի միջամտությամբ դադարեցնելու վերաբերյալ ձեռք բերված փաստական տվյալներում պարունակող տեղեկություններին առնչվող հանգամանքները:*

*Այսպիսով, հիշյալ և նմանատիպ մի շարք հարցեր պարզաբանելու նպատակով վարույթն իրականացնող մարմինը համապատասխան դատավարական և քննչական գործողություններ չի կատարել, ինչը վկայում է քրեական գործով ոչ լրիվ և բազմակողմանի քննություն կատարելու մասին:*

*Ինչ վերաբերում է առերեսմանը, ապա քննարկվող դեպքում (Վ.Քերբերյանի կողմից ներկայացված հաղորդման և այդ առնչությամբ ձեռք բեր-*

*ված փաստական տվյալների և դրանցում տեղ գտած տեղեկությունների էական հակասությունների համատեքստում) Կ.Սիմբլյանի իրավունքներն ու օրինական շահերն առերևույթ շոշափվելու պարագայում, վարույթն իրականացնող մարմնի կողմից այն որպես այդպիսին հայեցողական դիտարկելու առումով բավարար չափով փաստարկված չէ:*

*Այլ խոսքով, վարույթը կարճված գործի նյութերի հետազոտմամբ վերաքննիչ դատարանը եկավ այն եզրահանգման, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացված քննչական և դատավարական գործողությունները լիարժեքորեն չեն ներառում գործով պարզաբանման ենթակա բոլոր հարցերի շրջանակը, դրանք թերի են, իսկ արդյունքում կայացված որոշումը՝ չհիմնավորված:*

*Վերը նշվածի համատեքստում վարույթն իրականացնող մարմինը խախտել է բողոքաբեր կողմի իրավունքները, վերջինիս համար չի ստեղծել մրցակցային քրեական դատավարության մասնակից դառնալու իրական հնարավորություն:*

*Այլ կերպ ասած, անհամաչափորեն սահմանափակվել են նաև բողոքաբեր կողմի իրավունքներն ու օրինական շահերը, և նա զրկվել է դատավարական օրենքով իրեն վերապահված իրավունքներից օգտվելու փաստացի հնարավորությունից:*

*(...)*

*[Վ]իճարկվող դատական ակտը բավարար չափով պատճառաբանված չէ, ինչը հանգեցրել է դատավարական իրավունքի այնպիսի խախտման, որը հիմք է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և սույն որոշմամբ արձանագրված բողոքաբեր կողմի իրավունքի խախտումը վարույթն իրականացնող մարմնին վերացնել պարտավորեցնելու առնչությամբ դատական ակտ կայացնելու համար (...)»* (տե՛ս գործի նյութեր, հատոր 2, թերթեր 127-145)*:*

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, այն է՝ դատավարական իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Ըստ բողոքաբերի՝ դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը պատշաճ գնահատված չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը չի բխում գործում առկա փաստական տվյալներից, մասնավորապես՝ փորձագետի ցուցմունքից, հետևաբար այն անհիմն է:

Բողոքի հեղինակը նշել է, որ այլ անձի միջամտությամբ միջադեպն ավարտված լինելու հանգամանքը պատշաճ գնահատման չարժանացնելը գործով օրինական որոշում կայացնելու վրա ազդած լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը պատշաճ պատճառաբանված, հետևա-

բար նաև հիմնավոր չէ: Որոշման մեջ իսպառ բացակայում է պատճառաբանությունն այն մասին, թե միջադեպն այլ անձի միջամտությամբ դադարեցնելու հանգամանքն արդյո՞ք կարող էր վկայել Կարապետ Սիմբլյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ կամ որևէ այլ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության մասին, եթե այո, ապա ինչպե՞ս է արտահայտվում հիշյալ հանգամանքի բացահայտման և Կ.Սիմբլյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ կամ հատուկ մասի որևէ այլ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության միջև կապը:

Բողոքաբերը գտել է, որ դեպքին ականատես վկաների ցուցմունքները ևս հիմք են սույն գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքները հաստատված համարելու համար. այդ ցուցմունքները ընդհակառակը վկայում են Կ.Սիմբլյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության մասին:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Վ.Բերբերյանի և Կ.Սիմբլյանի միջև առերեսում կատարելու օբյեկտիվ անհնարինությունը՝ Կ.Սիմբլյանի՝ արտերկրում գտնվելու բերումով: Բացի այդ, անտեսել է նաև, որ գործով ձեռք բերված փաստական տվյալները (Վ.Բերբերյանի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, փորձագետի ցուցմունքը, դեպքին ականատես վկաների ցուցմունքները) եղել են բավարար՝ եզրահանգելու, որ Կ.Սիմբլյանի արարքում բացակայել է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը: Նման պարագայում Վ.Բերբերյանի և Կ.Սիմբլյանի միջև առերես հարցաքննության արձանագրությունը չէր կարող գնահատվել որպես միակ և վճռորոշ ապացույց, հետևաբար չէր կարող ազդել Կ.Սիմբլյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության մասին հետևության հիմնավորվածության և արժանահավատության վրա:

Բողոք բերած անձը գտել է, որ քրեական գործով ձեռք է բերվել թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը հաստատել է գործով ապացուցման առարկան կազմող բոլոր էական հանգամանքները և վարույթն իրականացնող մարմնին թույլ տվել կայացնելու հիմնավորված և պատճառաբանված, այլ խոսքով՝ օրինական որոշում:

12. Վերոնշյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 26-ի որոշմանը:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք բողոքաբերի իրավունքների

և ազատությունների խախտումը վերացնելու պարտականություն սահմանելու մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սահմանում է.

*«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:*

*2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:*

*(…)*

*5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (…)»:*

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին (տե՛ս mutatis mutandis, *Վ.Բաղդասարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11 և

*Արսեն Մակարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/01/15 որոշումները):

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

*«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

*(…)*

*4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

Վճռաբեկ դատարանը *Արսեն Մակարյանի* վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանները պարտավոր են կայացնել ոչ միայն օրինական և հիմնավոր, այլև բավարար չափով և պատշաճ կերպով պատճառաբանված դատական ակտեր: Այլ կերպ՝ դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող բացառապես հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների հիման վրա: Հակառակ պարագայում քրեական դատավարության խնդիրները չեն իրագործվի, իսկ տրամաբանությունը՝ կխարխլվի: Դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին (տե՛ս *Արսեն Մակարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/01/15 որոշման 14-րդ կետը):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Քննիչի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով թիվ 12135615 քրեական գործի վարույթը կարճվել է:

Քննիչի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի որոշումը Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատարի կողմից վերացվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վ.Քերբերյանի և Կ.Սիմբլյանի ցուցմունքներում առկա էական հակասությունների պայմաններում քննիչն առերեսում չի կատարել վերջիններիս միջև, ինչպես նաև դատաբժշկական փորձաքննության թիվ 2019 եզրակացությամբ նշված՝ Վ.Քերբերյանի աջ դաստակի ափային և թիկնային մակերեսների և աջ նախաբազկի վերին երրորդականի հետին մակերեսի արյունազեղումների ծևով մարմնական վնասվածքների առկայության պարագայում, նշված մարմնական վնասվածքների առաջացման մեխանիզմի շուրջ չի հարցաքննել փորձագետին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Քննիչը 2015 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել թիվ 12135615 քրեական գործի վարույթը կարճելու և Կարապետ Սիմբլյանի

նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Նշված որոշման դեմ ներկայացված դիմող Վ.Բերբերյանի ներկայացուցիչ Վ.Բաբայանի բողոքը Դատախազի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ գործով ձեռք չի բերվել օբյեկտիվ ապացույցների բավարար համակցություն, որը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով կհիմնավորեր Կ.Սիմբլյանի կողմից Վ.Բերբերյանին մեկից ավելի հարվածներ հասցնելու փաստը (տե՛ս նաև սույն որոշման 8-րդ կետը):

Վերոնշյալ որոշումների դեմ դիմող Վ.Բերբերյանի ներկայացուցիչ Վ.Բաբայանի կողմից ներկայացված բողոքն Առաջին ատյանի դատարանը մերժել է՝ արձանագրելով, որ բողոքաբերի կողմից որևէ հիմնավոր փաստարկ կամ ապացույց չի ներկայացվել Կ.Սիմբլյանի կողմից Վ.Բերբերյանին դիտավորությամբ թեթև մարմնական վնասվածք պատճառելու վերաբերյալ, այն է՝ նրա մեղքը հիմնավորող ապացույցների առկայության մասին: Իսկ ինչ վերաբերում է նախաքննական մարմնի կողմից քննչական փորձարարություն և առերեսում չկատարելու մասին բողոքաբերի ներկայացուցիչ Վ.Բաբայանի պնդմանը, ապա Առաջին ատյանի դատարանը գտել է, որ նախաքննության տվյալ փուլում դրանք վարույթն իրականացնող մարմնի հայեցողությամբ են պայմանավորված եղել, քանի որ կողմերի դատավարական կարգավիճակը բացառել է դրանց պարտադիր կատարումը, ինչպես նաև նշված գործողությունները կատարելու անհրաժեշտությունը հերքվել է նախաքննության ընթացքում ձեռք բերված ամբողջական ապացույցներով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել է և որոշել վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնել որոշմամբ արձանագրված բողոքաբեր կողմի իրավունքի խախտումը՝ արձանագրելով, որ վիճարկվող դատական ակտը բավարար չափով պատճառաբանված չէ, ինչը հանգեցրել է դատավարական իրավունքի այնպիսի խախտման, որը հիմք է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և որոշմամբ արձանագրված բողոքաբերի իրավունքի խախտումը վարույթն իրականացնող մարմնին վերացնել պարտավորեցնելու առնչությամբ դատական ակտ կայացնելու համար (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

17. Սույն որոշման 14-րդ և 15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտ ու բավարար ջանասիրություն չի ցուցաբերել՝ պարզելու գործի համար կարևոր նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, այդ թվում նաև՝ *«պատշաճ վերլուծության և գնահատության չի ենթարկել համապատասխան փորձագետի եզրակացությամբ Վեհանուշ Բերբերյանի մոտ վնասվածքներ (մեկից ավելի) արձանագրված լինելու, վերջինիս Կ.Սիմբլյա-*

*ևի կողմից մեկից ավելի անգամ հարված(ներ) հասցնելու»* հանգամանքը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն չի բխում գործի փաստական տվյալներից: Հիշյալ հանգամանքների կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից հարցաքննվել է Վ.Քերբերյանի դատաբժշկական փորձաքննություն իրականացրած փորձագետ Ս.Սևոյանը, ով ցուցմունք է տվել այն մասին, որ «*կոնկրետ տվյալ շրջանում, կախված անատոմիական առանձնահատկությունից, հնարավոր է մեկ հարվածի հետևանքով հակաղիր մակերեսներին երկու հույնաբնույթ վնասվածքների առաջացումը*» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանություններին այն մասին, որ վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտ ու բավարար ջանասիրություն չի ցուցաբերել՝ պարզելու նաև «*միջադեպն այլ անձի միջամտությամբ դադարեցնելու վերաբերյալ ձեռք բերված փաստական տվյալներում պարունակվող տեղեկություններին առնչվող հանգամանքները*», ինչպես նաև «*քննարկվող դեպքում, (Վ.Քերբերյանի կողմից ներկայացված հաղորդման և այդ առնչությամբ ձեռք բերված փաստական տվյալների և դրանցում տեղ գտած տեղեկությունների էական հակասությունների համատեքստում) Կ.Սիմբլյանի իրավունքներն ու օրինական շահերն առերևույթ շոշափվելու պարագայում, առերեսումը որպես այդպիսին հայեցողական դիտարկելու առումով բավարար չափով փաստարկված չէ*», Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը որպես վարույթն իրականացնող մարմնի կողմից չպարզված փաստեր է մատնանշել այնպիսի հանգամանքներ, որոնք գործում առկա փաստական տվյալների պայմաններում որևէ նշանակություն չէին կարող ունենալ Կ.Սիմբլյանի գործողություններում հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանությունների հիմքում ընկած այն դատողությունները, որ «*վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացված քննչական և դատավարական գործողությունները լիարժեքորեն չեն ներառում գործով պարզաբանման ենթակա բոլոր հարցերի շրջանակը, դրանք թերի են, իսկ արդյունքում կայացված որոշումը՝ չհիմնավորված*», «*(…) վարույթն իրականացնող մարմինը խախտել է բողոքաբեր կողմի իրավունքները, վերջինիս համար չի ստեղծել մրցակցային քրեական դատավարության մասնակից դառնալու իրական հնարավորություն*», «*(…) անհամաչափորեն սահմանափակվել են նաև բողոքաբեր կողմի իրավունքներն ու օրինական շահերը, և նա զրկվել է դատավարական օրենքով իրեն վերապահված իրավունքներից օգտվելու փաստացի հնարավորությունից*» իրենց բնույթով վերացական են. այդպիսիք չեն կարող համարվել հստակ, որոշակի և համոզիչ դատողություններ:

Վերոհիշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու պար-

տականություն սահմանելու մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները հիմնավոր չեն:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Սինհնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Վեհանուշ Քերբերյանի ներկայացուցիչ Վ.Քաբայանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 26-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**32.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԴ/0182/06/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գևորգ Աշոտի Գալստյանի վերաբեյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ մեղադրյալ Գ.Գալստյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2016 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 68108216 քրեական գործը: 2016 թվականի հոկտեմբերի 7-ին Գևորգ Գալստյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ Գ.Գալստյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ մեղադրյալ Գ.Գալստյանի նկատմամբ կալանա-

վորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը մերժվել է:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը բեկանել և մեղադրյալ Գ.Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

4. 2016 թվականի նոյեմբերի 15-ին մեղադրյալ Գ.Գալստյանի պաշտպան Ա.Հայրապետյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով մեղադրյալ Գ.Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխարինել այլընտրանքային խափանման միջոց գրավով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ պաշտպանի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Գ.Գալստյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով: Գրավի չափ է սահմանվել 500.000 ՀՀ դրամը:

5. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2016 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Գ.Գալստյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

7. Գ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«Գյումրի քաղաքի բնակչուհի Նունե Համազասպի Բաբաջանյանին բռնություն գործադրելու եղանակով, ամուսնության նպատակով առևանգելու վերաբերյալ իր ընկերներ Ռոման Մայիսի Գասպարյանի, Սերյոժա Խաչիկի Նազարյանի, Սերգեյ Ալբերտի Ղազարյանի հետ նախնական համաձայնության, 2016 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ժամը 08:50-ի սահմաններում, Ռոման Մայիսի Գասպարյանի «Օպել օմեգա» մակնիշի 35 AM 533 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով, որը վարել է Ռոման Գասպարյանը, Նունե Համազասպի Բաբաջանյանի բնակության Գյումրի քաղաքի Ա.Խաչատրյան փողոցի 2-րդ շենքի մոտ սպասել են Նունե Բաբաջանյանի շենքից դուրս գալուն, իսկ վերջինիս շենքից դուրս գալուց հետո ավտոմեքենայով*

*հետևել են նրան և, երբ Նունե Բաբաջանյանը դուրս է եկել շենքի բակից և միայնակ քայլել Անի թաղամասի թիվ 3 փողոցով, Ռոման Գասպարյանը կանգնեցրել է ավտոմեքենայի ընթացքը, Գևորգ Գալստյանը դուրս է եկել ավտոմեքենայից, մոտեցել է Նունե Բաբաջանյանին, բռնել նրա ձեռքից և վերջինիս կամքին հակառակ, բռնության գործադրմամբ բացահայտ առևանգել են Նունե Բաբաջանյանին, նստեցրել «Օպել օմեգա» մակնիշի 35 AM 533 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետին նստատեղին և Նունե Բաբաջանյանի փախուստը կանխելու նպատակով ավտոմեքենայի հետևի նստատեղին նստած Սերգեյ Ալբերտի Ղազարյանի, առջևի աջ նստատեղին նստած Սերյոժա Խաչիկի Ղազարյանի օժանդակությամբ բացահայտ առևանգելով տեղափոխել են Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 22):

8. Առաջին ատյանի դատարանը, բավարարելով մեղադրյալ Գ.Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու մասին միջնորդությունը, նշել է. *«(…) [Գ]նահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Գ.Գալստյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման:*

*(…) [Հ]աշվի առնելով խափանման միջոց ընտրելու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից սույն գործով արձանագրված հիմքը՝ տուժողի հաղորդման և ցուցմունքի մեջ նշված հակասությունների փաստը, քննիչի հայտնած՝ տուժողի և մեղադրյալների միևչև առերեսումը միմյանց հետ չշփվելու, առերեսման ժամանակ առաջինը տուժողի կողմից ցուցմունքներ տալու, սույն գործով ենթադրյալ մյուս հանցակիցների ազատության մեջ գտնվելու փաստը, մեղադրյալի հետ ամուսնանալու ցանկության մասին տուժողի կողմից դատարանին և քննիչին դիմում ներկայացնելու հանգամանքներն իրենց համակցության մեջ գնահատելով, միաժամանակ դրանք համադրելով Գ.Գալստյանին վերագրվող արարքի բնույթի և վտանգավորության աստիճանի, նրա անձին առնչվող տվյալների՝ դատապարտված և արատավորված չլինելու, մշտական բնակության վայրի առկայության փաստերի հետ, որպիսի հանգամանքները, դատարանի գնահատմամբ, իրենց համակցության մեջ գնահատելով էականորեն նվազեցնում են մեղադրյալի կողմից գործի քննության ու քրեական դատավարության խնդիրների իրագործմանը խոչընդոտելու հավանականությունը, իսկ տվյալ պարագայում գրավը նման հավանական գործողությունների վտանգը չեզոքացնելու գործուն երաշխիք է»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 26):

9. Վերաքննիչ դատարանը, բեկանելով գրավ կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է. *« [Մինչև դատախազի] վերաքննիչ բողոքին ըստ էության անդրադառնալը, հարկ է (…) անդրադառնալ այն հարցին, թե Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը բավարա՞ր են եղել արդյոք մեղադրյալ Գևորգ Գալստյանի նկատմամբ որ-*

*պես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի թույլատրելիության հարցը քննության առնելու համար, թե՞ ոչ:*

[Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0143/11/14 գործով որոշման 14-15-րդ կետերը, նշել է, որ] *թեև ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ նախադեպային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը վերաբերում է մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների կամ գործողությունների դատական ստուգմանը, այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերը նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո պետք է դիտարկվեն նաև Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդությունները, այդ թվում՝ գրավ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը:*

*Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Առաջին ատյանի դատարանը (...) որոշման կայացման համար իր տրամադրության տակ ունեցել է հետևյալ նյութերը.*

*- մեղադրյալ Գևորգ Գալստյանի պաշտպան Արգիշե Հարությունյանի միջնորդությունը՝ մեղադրյալ Գևորգ Գալստյանի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու մասին,*

*- Արգիշե Հարությունյանի փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը,*

*- ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 9-ի որոշման պատճենը, համաձայն որի՝ ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը բեկանվել և ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով թիվ 68108216 քրեական գործով մեղադրյալ Գևորգ Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով,*

*- թիվ 68108216 քրեական գործով տուժող Նունե Բաբաջանյանի դիմումը, համաձայն որի՝ վերջինը խնդրել է Գևորգ Գալստյանի նկատմամբ կիրառել այլընտրանքային խափանման միջոց գրավ, քանի որ հուսով է, որ Գևորգ Գալստյանը չի դատապարտվի, և իրենք կհամաձայնանան:*

*Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, բավարարվելով իր տրամադրության տակ եղած վերոգրյալ նյութերով և դատավարության կողմերից չպահանջելով լրացուցիչ նյութեր, որոնք անհրաժեշտ են օրինական և հիմնավորված որոշում կայացնելու համար, սահմանափակել է իր կողմից կայացված որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը: Ավելին՝ Վերաքննիչ դատարանի համար անհասկանալի է, թե ինչպես է Առաջին ատյանի դատարանը միայն վերոգրյալ նյութերի առկայության պայմաններում քննարկել մեղադրյալ Գևորգ Գալստյանի նկատմամբ կալանավորման*

*այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու հարցը, առավել ևս վերջինի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի:*

*Ինչ վերաբերում է [դատախազի] վերաքննիչ բողոքի ըստ էության քննությանը, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ վերոգրյալ եզրահանգումների պայմաններում Վերաքննիչ դատարանը զրկված է վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկները ըստ էության քննարկելու և Առաջին ատյանի դատարանի որոշմանը իրավական գնահատական տալու հնարավորությունից:*

*Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը պետք է բեկանել և թիվ ԾԴ/0182/06/16 գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ դատավարության կողմերից, մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմնից անհրաժեշտ նյութերը (քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրի պատճենը, ինչպես նաև Գևորգ Գալստյանի նկատմամբ ընտրված բոլոր տեսակի խափանման միջոցների որոշումների պատճենները և այլն) պահանջելու և նոր միայն մեղադրյալ Գևորգ Գալստյանի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու հարցը քննության առնելու համար»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 31-33):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, ինչպես նաև խախտել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Կեմմաշն ընդդեմ Ֆրանսիայի, Մանսուրն ընդդեմ Թուրքիայի, Յագսիճն ու Սաժինն ընդդեմ Թուրքիայի, Լետելեն ընդդեմ Ֆրանսիայի* գործերով վճիռներով և Վճռաբեկ դատարանի՝ *Ա.Ճուղուրյանի* վերաբերյալ թիվ ՎԲ-132/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանն ընդունել է այն փաստը, որ դատախազը վերաքննիչ բողոքին կից ապացույցներ չի ներկայացրել, և Վերաքննիչ դատարանը զրկված է եղել բողոքում ներկայացված փաստարկներն ըստ էության քննարկելու և Առաջին ատյանի դատարանի որոշմանն իրավական գնահատական տալու հնարավորությունից: Ուստի նման պայմաններում Վերաքննիչ դատարանը պետք է մերժեր վերաքննիչ բողոքը, այլ ոչ թե մասնակիորեն բավարարեր և գործն ուղարկեր նոր քննության:

10.1. Բողոքաբերը նշել է նաև, որ դատարանում քննիչն իր միջնորդությունը պնդելու ժամանակ հայտնել է, որ մեղադրյալի թաքնվելու հավանականության վերաբերյալ գործի նյութերից բխող որևէ փաստական հանգամանք չի կարող ներկայացնել, այլ նման մտավախություն առաջացել է բացառապես մեղադրյալին մեղսագրվող արարքի համար սահմանված պատժից: Իսկ գործի քննությանը խոչընդոտելու հավանականության մասով քննիչը որևէ փաստ չի ներկայացրել դատարանին և միայն ենթադրություն է հայտնել, որ մեղադրյալ Գ.Գալստյանի կողմից նախաքննությանը խոչընդոտելու հավանականությունը բարձր է, քանի որ մեղադրյալները նրա ընկերներն են, իսկ գործով տուժողը՝ ընկերուհին, ուստի նրանք կարող են պայմանավորվել ցուցմունքների շուրջ: Հետևաբար դատախազն իր բողոքում չի ներկայացրել որևէ հիմք այն մասին, թե մեղադրյալ Գ.Գալստյանը, ազատության մեջ գտնվելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված ինչպիսի ոչ օրինաչափ գործողություններ կկատարի կամ ինչպես կխոչընդոտի գործի քննությանը:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանքը գրավով փոխարինելու մասին միջնորդության քննության արդյունքում կայացված որոշման վերաքննիչ վերանայման սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, կալանավորումը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու հարցը քննարկելիս դատավարության կողմերից լրացուցիչ նյութեր չպահանջելով, սահմանափակել է իր կայացրած որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ: (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու*

*հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«Դատարանը քննում է (…) անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը» վերնագրված 285-րդ հոդվածի համաձայն՝

*«(…)*

*4. Միջնորդությունը քննարկելիս դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ:*

*5. Քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին:*

*(…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածով կարգավորվում է դատավարական հարկադրանքի միջոցներից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարաձգելու նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը: Մասնավորապես, հիշյալ կառուցակարգի շրջանակներում դատարանը միջնորդության և դրա կապակցությամբ ներկայացված նյութերի քննության արդյունքում կայացնում է այն բավարարելու կամ մերժելու մասին որոշում: Ընդ որում, միջնորդությունը հիմնավորող նյութերի բավարարության հարցը գնահատում է միջնորդությունը քննող դատարանը, որն անրաժեշտության դեպքում իրավասու է պահանջելու լրացուցիչ նյութեր կամ բացատրություններ: Ընդ որում, լրացուցիչ նյութեր կամ բացատրություններ պահանջելը դատարանի հայեցողական լիազորությունն է *(դատարանի հայեցողական լիազորությունների բնույթի մանրամասն վերլուծությունը, mutatis mutandis, տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի Համայնք Դավթյանի վերաբերյալ գործով թիվ ՇԴ/0126/01/12 որոշումը):* Հաշվի առնելով, որ գրավը կալանքի այլընտրանք հանդիսացող խափանման միջոց է, և դրա թույլատրելիության հարցը կարող է քննարկման առարկա դարձվել նաև կալանավորման մասին որոշման հետ միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի շրջանակներում պաշտպանության կողմի միջնորդության հիման վրա գրավի թույլատրելիության հարցը ենթակա է քննարկման կալանքի միջնորդության քննարկման ընթացակարգով: Այլ խոսքով՝

մինչդատական վարույթի շրջանակներում գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդության քննարկման ընթացակարգի նկատմամբ վերաբերելի մասով կիրառելի են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի կարգավորումները՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ միջնորդությունը ներկայացվել է կալանքի միջնորդության քննության վարույթի շրջանակներում, թե՝ դրանից դուրս:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով:*

*(...)*

*3. Վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և դատարանի որոշումը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:*

*2. Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերն ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:*

*(…)*

*5. Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝*

*1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին.*

*2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին.*

*3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին:*

*(…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) [Դ]ատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատական որոշումների բողոքարկումը և ստուգումը կատարվում են սույն օրենսգրքի 287 և 288 հոդվածներով նախատեսված կանոններով»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով սահմանված կարգով իրականացվում են, ի թիվս այլոց, դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու, այդ թվում՝ կալանքը գրավով փոխարինելու մասին դատական որոշումների բողոքարկումը և ստուգումը:

16. Հիշյալ հոդվածները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Գ.Դ.ուրյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում՝ արձանագրելով՝ *«(...) [Վ]երաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշման դատական վերանայման սահմանները կանխորոշվում են առաջին ատյանի դատարանում քննության առարկա դարձած կալանավորման հիմքերի, դրանք հաստատող փաստական տվյալների շրջանակներով, որոնց հիման վրա էլ վերաքննիչ դատարանը ստուգում է վերանայվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնում օրենքով նախատեսված որոշումներից մեկը՝ կալանքը վերացնելու և անձին ազատելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մաս)»* (տե՛ս Գ.Դուրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14 որոշման 20-րդ կետը):

17. Վերահաստատելով *Գ.Դուրյանի* գործով որոշման մեջ արտահայտված և վերը մեջբերված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը որպես կանոն պարտավոր է հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի կարգով քննության արդյունքում կայացված որոշումը դատական ստուգման ենթարկել այն նյութերում պարունակվող փաստական տվյալների շրջանակներում, որոնք հետազոտվել են ստորադաս դատարանում, և միայն դրանց հիման վրա գնահատական տալ համապատասխան միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին առաջին ատյանի դատարանի հետևությունների իրավաչափությանը: Այլ խոսքով՝ առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս վերաքննիչ դատարանը պետք է հիմք ընդունի ստորադաս ատյանի դատարանի տրամադրության տակ եղած նյութերը և դրանց համատեքստում համապատասխան գնահատական տա բողոքաբերի փաստարկներին: Գտնելով, որ դատարանի հետևությունները չեն համապատասխանում նրա տրամադրության տակ եղած նյութերին, կամ վերջիններս բավարար չեն համապատասխան խափանման միջոցի պայմանները և հիմքերը հաստատված գնահատելու համար՝ վերաքննիչ դատարանը պետք է արձանագրի դատարանի հետևության հիմնավորված չլինելու փաստը՝ կայացնելով օրենքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասով) նախատեսված համապատասխան որոշումը:

18. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ բավարարել է որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու մասին մեղադրյալ Գ.Գալստյանի պաշտպան Ա.Հայրապետյանի միջնորդությունը և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել է գրավով (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատախազի վերաքննիչ բողոքում բարձրացված հարցերը քննարկման առարկա չդարձնելով, վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության: Իր որոշումը Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նրանով, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ, այն է՝ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշում կայացնելիս բավարարվել է իր տրամադրության տակ եղած նյութերով և դատավարության կողմերից լրացուցիչ նյութեր չի պահանջել՝ զրկելով Վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկներն ըստ էության քննարկելու և Առաջին ատյանի դատարանի որոշմանը իրավական գնահատական տալու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը վարույթն իրականացնող մարմնից պետք է պահանջի անհրաժեշտ նյութերը (քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրի պատճենը, ինչպես նաև Գևորգ Գալստյանի նկատմամբ ընտրված բոլոր տեսակի խափանման միջոցների որոշումների պատճենները և այլն) և նոր միայն քննության առնի մեղադրյալ Գ.Գալստյանի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու հարցը (տե՛ս սույն որոշման 5-րդ և 9-րդ կետերը):

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը քննարկել է կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը և դատարան ներկայացված նյութերի հետազոտմամբ գտել, որ դրանք բավարար են ներկայացված միջնորդությունը բավարարելու համար: Սինչդեռ Վերաքննիչ դատարանը, նյութերի անբավարարության և լրացուցիչ նյութեր պահանջելու անհրաժեշտության պատճառաբանությամբ բեկանելով և նոր քննության ուղարկելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, դուրս է եկել վերաքննիչ վերանայման սահմաններից: Այսպես՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր վերանայվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման

ենթարկել Առաջին ատյանի դատարանում ներկայացված նյութերի շրջանակներում և արդյունքում կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումներից մեկը, հետևաբար դատական ակտի բեկանման և նոր քննության ուղարկման հիմքում դրված Վերաքննիչ դատարանի փաստարկները չեն բխում քրեադատավարական օրենսդրության պահանջներից:

19.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից *Պ.Մուրադյանի* գործով որոշման վկայակոչմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Պ.Մուրադյանի գործի և սույն գործի փաստերի միջև տարբերությունը էական է, հետևաբար այն կիրառելի չէ սույն գործի փաստերի նկատմամբ: Այսպես, Պ.Մուրադյանի գործի փաստերի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը, հետազոտելով վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան ներկայացված նյութերը, կայացրել էր համապատասխան որոշում, այնուհետև վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը հետ վերադարձրել, իսկ վերաքննիչ բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարան չէին ուղարկվել կամ ներկայացվել առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը: Արձանագրելով, որ բողոքի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած և առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված նյութերը վերաքննիչ դատարանի կողմից չէին հետազոտվել, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանի որոշումը չի կարող գնահատվել որպես օրինական և հիմնավորված: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առաջին ատյանի դատարանը, բողոքի կապակցությամբ կազմված նյութերին չկցելով և վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելով վերջինիս կողմից ներկայացված նյութերը, սահմանափակել է իր կողմից կայացված որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը զրկված է վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկներն ըստ էության քննարկելու և ստորադաս դատարանների որոշումներին իրավական գնահատական տալու հնարավորությունից:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Պ.Մուրադյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից քննարկման չեն ենթարկվել, և իրավական դիրքորոշումներ չեն արտահայտվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության վարույթի շրջանակներում առաջին ատյանի դատարանի՝ լրացուցիչ նյութեր պահանջելու լիազորության իրավական կարգավորումները: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից լրացուցիչ նյութեր պահանջելու իր հայեցողական լիրազորության չիրականացումը չի կարող մեկնաբանվել որպես միջնորդության (բողոքի) կապակցությամբ կազմվող նյութերին իր տրամադրության տակ եղած նյութերը չկցելու դրսևորում, հետևաբար նաև՝ *Պ.Մուրադյանի* գործով որոշմամբ արձանագրված պարտականության չկատարում:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից չի արձանագրվել Առաջին ատյանի դատարանի հետազոտած նյութերը միջնորդության կապակցությամբ կազմված նյութերին կցված չլինելու, ինչպես նաև իր տրամադրության տակից բացակայելու վերաբերյալ փաստեր: Նման պայմաններում Պ.Մուրադյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումները և Վճռաբեկ դատարանի եզրահանգումն այն մասին, որ ստորադաս դատարանը սահմանափակել է իր կողմից կայացված որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը, վերաբերելի և կիրառելի չեն սույն գործի փաստերի նկատմամբ:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 13-19.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու հարցը քննարկելիս դատավարության կողմերից լրացուցիչ նյութեր չպահանջելով, սահմանափակել է իր կայացված որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ և 288-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

21. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ դատախազն իր բողոքում չի ներկայացրել որևէ հիմք այն մասին, թե մեղադրյալ Գ.Գալստյանը, ազատության մեջ գտնվելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված ինչպիսի ոչ օրինաչափ գործողություններ կկատարի կամ ինչպես կխոչընդոտի գործի քննությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավասու չէ դրան իրավական գնահատական տալու, քանի որ Վերաքննիչ դատարանն ըստ էության քննարկման առարկա չի դարձրել վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ փաստարկը կարող է քննարկվել վերաքննիչ բողոքի ըստ էության քննության շրջանակներում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, որի ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է պատշաճ քննարկման առարկա դարձնի գրավի թույլատրելիության հարցը և, ղեկավարվելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով, կայացնի համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածնե-

րով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Գևորգ Աշոտի Գալստյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**33.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱՆԴ/0017/06/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Էդգար Գեղամի Եղիազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Պողոսյանի՝ 2016 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17144916 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Էդգար Գեղամի Եղիազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ կետերով:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ քննիչ Ս.Պողոսյանի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Է.Եղիազարյանի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Է.Եղիազարյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչվել է թույլատրելի, և գրավի չափ սահմանվել 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ դատախազի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և մեղադրյալ Է.Եղիազարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննելու վերաբերյալ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 31-ի որոշումը մասնակիորեն բեկանվել, այն է՝ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը ճանաչվել է անթույլատրելի, և Է.Եղիազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է թողնվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2. Նախաքննության մարմինը 2016 թվականի նոյեմբերի 25-ին որոշում է կայացրել մեղադրյալ Է.Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ մեղադրյալ Է.Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ի որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Նախաքննության մարմինը Է.Եղիազարյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա իր *«(...) քրոջ՝ Քրիստինե Կովալյովայի ըն-*

կեր Դավիթ Աշոտի Փարամազյանի հետ 2016թ. օգոստոսի 28-ին, ժամը 01:00-ի սահմաններում Երևան քաղաքի Վիլնյուսի 7 շենքի 1-ին շքամուտքի 2-րդ և 3-րդ հարկերի միջհարկային աստիճանահարթակում՝ խուլիգանական դրդումներով, մահակի և դանակի գործադրմամբ Տիգրան Հակոբի Շախբեկյանի առողջությանը դիտավորությամբ պատճառել են կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս.

Այսպես.

2016թ. օգոստոսի 28-ին, ժամը 01:00-ի սահմաններում Էդգար Եղիազարյանը և Դավիթ Փարամազյանը միմյանց հանդիպել են Երևան քաղաքի Վիլնյուսի 7-րդ շենքի բակում, որի ժամանակ վերհիշել են, որ Էդգար Եղիազարյանի՝ նույն շենքի 2-րդ բնակարանի վերևի հարկի բնակիչ Տիգրան Շախբեկյանի բնակարանի վերանորոգման ժամանակ՝ 2015թ. սեպտեմբեր ամսին, խանգարվել է Էդգար Եղիազարյանի ընտանիքի անդամների հանգիստը՝ Տիգրան Շախբեկյանից պարզաբանում ստանալու նպատակով բարձրացել են վերջինիս բնակարան, հայհոյանքներ հնչեցնելով՝ թակել բնակարանի մուտքի դուռը և պահանջել են Տիգրան Շախբեկյանին դուրս գալ բնակարանից: Տիգրան Շախբեկյանը հրաժարվել է բացել բնակարանի դուռը, սակայն Դավիթ Փարամազյանը և Էդգար Եղիազարյանը ստիպել են՝ ասելով, որ շարունակելու են հայհոյանքներ հնչեցնել կնոջ ներկայությամբ, մինչև դուրս չգա բնակարանից: Տիգրան Շախբեկյանը ճարահատյալ դուրս է եկել բնակարանից, և նրանց պահանջով իջել են շենքի բակ, որտեղ անհիմն պարզաբանում են պահանջել՝ թե իբր Տիգրան Շախբեկյանը կնոջ՝ Արմինե Օլեյանի հետ պարբերաբար խանգարում են Էդգար Եղիազարյանի ընտանիքի անդամների հանգիստը:

Արմինե Օլեյանը, կռահելով, որ ամուսնու դուրս կանչելը հնարավոր է կապված է նախկինում վերանորոգման աշխատանքներ կատարելու ընթացքում Էդգար Եղիազարյանի ընտանիքի անդամների հանգիստը խանգարելու հետ, ամուսնու անվտանգության նկատառումներից ելնելով և վիճաբանության հետագա զարգացումը կանխելու նպատակով իջել է Էդգար Եղիազարյանի բնակարան և փորձել վերջինիս քրոջից՝ Քրիստինե Կովալյովայից և տատից՝ Լյուդմիլա Կովալյովայից պարզել, թե իրենք ինչով են խանգարում նրանց: Դավիթ Փարամազյանը և Էդգար Եղիազարյանը տեղեկանալով Արմինե Օլեյանի այցի մասին, անմիջապես վերադարձել են բնակարան, որտեղ Արմինե Օլեյանի ներկայությամբ կրկին հայհոյել են ամուսնուն, ապա բնակարանից դուրս են հրավիրել վերջիններիս՝ միաժամանակ Տիգրան Շախբեկյանից պահանջել են իջնել շենքի բակ: Ամուսիններով իրենց բնակարան բարձրանալու ընթացքում նկատելով, որ Էդգար Եղիազարյանը և Դավիթ Փարամազյանն աստիճաններով իջնում են շենքի բակ, որոշել են կրկին գնալ Էդգար Եղիազարյանի բնակարան և վերջնական լուծում տալ ծագած խնդրին: Մտնելով հիշյալ բնակարան՝ զրուցել են Քրիստինե Կովալյովայի և Լյուդմիլա Կովալյովայի հետ, ովքեր հայտնել են, որ որևէ դժգոհություն չունեն նրանցից, որպիսի խոսակցության ընթացքում բնակարան

*են վերադարձել Էդգար Եղիազարյանը և Դավիթ Փարամազյանը, հայհոյել Տիգրան Շախբեկյանին և հրելով վերջինիս՝ բնակարանից դուրս են հանել շենքի շքամուտք ու իջել 2-րդ և 3-րդ հարկերի միջհարկային աստիճանահարթակ, որտեղ խուլիգանական դրդումներով, չնչին առիթով՝ տեղի ունեցածի հետ կապված սեփական անձի առավելություններն ընդգծելու մղումից մղված, արհամարհելով հասարակության բարոյական նորմերի պահանջները, Տիգրան Շախբեկյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու միասնական դիտավորությամբ, գիտակցելով մեկը մյուսի գործողությունները, մեկը մյուսի գործողությունները լրացնելով, իրենց մոտ եղած՝ Դավիթ Փարամազյանը դանակի, իսկ Էդգար Եղիազարյանը՝ մահակի գործադրմամբ բազմաթիվ հարվածներ են հասցրել Տիգրան Շախբեկյանի գլխին և մարմնի տարբեր մասերին՝ (…) դիտավորությամբ Տիգրան Շախբեկյանի առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս»* (տե՛ս նյութեր, թերթեր 35-36):

6. Սեղադրյալ Է.Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության շրջանակներում նախաքննության մարմինը նշել է. *«(…) Էդգար Եղիազարյանին կալանքի տակ պահելու հիմքերը չեն փոխվել, այն է՝ մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քննությունից, խոչընդոտել քրեական գործի քննությանը՝ միևչդատական վարույթում՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, բացի այդ դեռևս չի հայտնաբերվել հանցագործության գործիք հանդիսացող, մետաղական ճկվող ձողանման առարկան, որից մեղադրյալը ձերբազատվել է հանցանքը կատարելուց հետո, որի հայտնաբերմանն ուղղված դեռևս կատարվում են քննչական և օպերատիվ գործողություններ, իսկ մեղադրյալի ազատության մեջ հայտնվելու պայմաններում կարող է վերջնականապես [ազատվել] դրանից, ինչպես նաև (…) նրա կատարած հանցանքը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, որի համար պատիժ է նախատեսված միայն ազատազրկման ձևով (…)»* (տե՛ս նյութեր, թերթեր 2-5):

6.1. Տուժող Տ.Շախբեկյանը 2016 թվականի հոկտեմբերի 22-ի հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«[Հ]արվածները ստանալուց առաջ, ես կանխելով Դավիթի ագրեսիվ վարքագիծը, ձեռքերով բռնել էի նրա ձեռքերից և վերնաշապիկից, այդ կերպ զրկելով վերջինիս ինձ հարվածելու հնարավորությունից, սակայն երբ Էդգարը իմ հետևից երկաթյա ձողով հարվածեց իմ գլխին, ես այդ առաջին հարվածից հետո թուլացա, ինչի հետևանքով Դավիթը արձակվեց իմ ձեռքերից, որից հետո Էդգարի հարվածները՝ ուղղված գլխիս, շարունակվեցին և դրա զուգահեռ իմ դիմացը գտնվող Դավիթը սկսեց ծակող գործիքով հարվածներ հասցնել ինձ, այսինքն՝ որոշակի ժամանակահատված նրանք երկուսով միաժամանակ հարվածներ էին հասցնում ինձ:*

*(…)*

*Եթե լիներ միայն Դավիթը, ապա ես հանգիստ կկարողանայի դիմադրել նրան, նա որևէ կերպ ինձ վնաս հասցնել չէր կարողանա, քանի որ ինչպես արդեն նշել եմ, որ մինչ Էդգարի կողմից հարված ստանալը ես ամուր բռնել էի Դավիթի ձեռքերից և վերնաշապիկից և դադարեցի նրան նույն վիճակում պահելուց, քանի ինձ գլխիս շրջանին սկսեց հարվածել Էդգարը, ինչի հետևանքով ես թուլացա, և Դավիթը ազատվեց իմ ձեռքերից ու այդ կերպ հնարավորություն ստացավ հարվածել ինձ ծակող գործիքով»* (տե՛ս նյութեր, թերթեր 68-71):

6.2. Համաձայն 15.09.2016 թվականի դատաբժշկական փորձաքննության թիվ 2028/հ եզրակացության՝ *«(...) Տ.Շախբեկյանի մարմնական վնասվածքները՝ աջ հետականջային շրջանի սալջարդ, աջ գոտկանստային, ձախ բազկի շրջանների կտրած-ծակած, պատռած, հեմոպնեմոթորաքսով զուգորդված, թոքի վնասումներով՝ կրծքավանդակի ձախ կեսի թվով երեք կտրած-ծակած, թափանցող, հեմոպերիտոնեումով զուգորդված՝ որովայնի առաջային պատի կտրած-պատռած, լյարդի 4-րդ սեգմենտի վնասումով թափանցող վերքերի ձևով, հասցվել են. աջ հետականջային շրջանի սալջարդ վերքը՝ բութ առարկայով, մնացածը՝ սուր ծակող-կտրող գործիքով /ներով/, հնարավոր է՝ նշված ժամկետում, և պատճառվել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: (...) Ինչ վերաբերում է մարմնական վնասվածքների ծանրության աստիճանին առանձին-առանձին, ապա. աջ հետականջային շրջանի սալջարդ վերքն առանձին վերցրած՝ առողջության թեթև հատկանիշներ չի պարունակում, ձախ բազկի շրջանի կտրած-ծակած վերքն առանձին վերցրած պատճառել է առողջությանը թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, նկատի ունենալով վնասվածքի հետ անմիջական պատճառական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը՝ ոչ պակաս 6 օրից և ոչ ավելի 21 օրից, աջ գոտկանստային շրջանի կտրած-ծակած, պատռած վերքն առանձին վերցրած պատճառել է առողջությանը միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով, նկատի ունենալով վնասվածքի հետ անմիջական պատճառական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը՝ 21 օրից ավելի, իսկ հեմոպնեմոթորաքսով զուգորդված, թոքի վնասումներով՝ կրծքավանդակի ձախ կեսի թվով երեք կտրած-ծակած, թափանցող, ինչպես նաև հոմոպերիտոնեումով զուգորդված՝ որովայնի առաջային պատի կտրած-պատռած, լյարդի 4-րդ սեգմենտի վնասումով թափանցող վերքերն ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին վերցրած պատճառել են առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող»* (տե՛ս նյութեր, թերթեր 8-11):

7. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ արձանագրել է. *«(...) Դատարանը հարկ է համարում նշել, որ հիշյալ մեղադրանքը առաջադրելուց առկա չի եղել դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, և անհատականացված չի եղել տուժողին պատճառված վնասներից յուրաքանչյուրի ծանրության աստիճանը՝ առանձին-առանձին, ինչպես նաև այն, թե որ վնասը ինչ գործիքով է պատճառվել և*

*այլև, ուստի սկզբնական կալանքի կիրառման համար անհրաժեշտ հիմնավոր կասկածի առկայությունը գնահատելիս ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ վերաքննիչ դատարանը՝ ստուգելով առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, հիմնավոր կերպով նշել են, որ առերևույթ առկա է հիմնավոր կասկած, քանի որ մեղադրյալն առնչություն ունի իրեն մեղսագրվող դեպքին՝ ինչը չի հերքվում նաև ներկա փուլում: Դատարանը ևս գտնում է, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն մեղսագրվող հանցագործության դեպքին: Սակայն, ի տարբերություն սկզբնական կալանքի կիրառման դեպքում հիմք հանդիսացած նյութերի, սույն միջնորդության քննարկման ընթացքում քննիչը դատարան է ներկայացրել նաև 09.09.2016 թվականի դատաբժշկական փորձաքննության թիվ 2028/հ եզրակացությունը, որում հստակ նկարագրված են ինչպես տուժողի մարմնի վրա առկա վնասվածքների տեղակայումը, դրանց բնույթը, այնպես էլ այն, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ գործիքով է պատճառվել և ինչ աստիճանի է այդ վնասվածքն առանձին վերցված, որի տեսանկյունից հնարավոր չէ հիմնավոր հետևություն անել այն մասին, որ մեղադրյալի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հիմնավոր կասկածը:*

*(…)*

*Ինչպես երևում է դատաբժշկական փորձագետի եզրակացությունից՝ տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանգամանքը կապվում է սուր ծակող-կտրող գործիքով տուժողին պատճառված վնասվածքների հետ, իսկ մեղադրյալ ներգրավելու որոշումից և միջնորդության կից դատարան ներկայացված նյութերից և դատարանում քննիչի պարզաբանումներից ակնհայտ երևում է, որ սուր ծակող-կտրող գործիքը կիրառվել է գործով մյուս մեղադրյալ Դ.Փարամազյանի կողմից, իսկ մեղադրյալ Էդգար Եղիազարյանին վերագրվել են մահակի գործադրմամբ Տիգրան Շախբեկյանի գլխին և մարմնի տարբեր մասերին բազմաթիվ հարվածներ հասցնելու գործողությունները, որոնց արդյունքում, ըստ եզրակացության՝ տուժողին պատճառվել է աջ հետանկջային շրջանի սալջարդ վերքը, որը, առանձին վերցրած, առողջության թեթև հատկանիշներ չի պարունակում: Հետևաբար դատարանը փաստում է, որ մեղադրյալ Է.Եղիազարյանի նկատմամբ կալանք կիրառելու տեսանկյունից առերևույթ բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի վերաբերյալ հիմնավոր կասկածը:*

*Դատարանի հետևության համար հիմք են հանդիսանում նաև քննիչի պարզաբանումները, մասնավորապես այն դատողությունները, որ «Դատարանին ներկայացված փաստաթղթերով, ինչպես նաև տուժողի և վկայի հարցաքննությամբ երևում է, որ Էդգար Եղիազարյանը հնարավոր է տեսել է կամ տեսած է եղել Դավիթ Փարամազյանի դանակով հարվածելու պահը, և որը վկայում է այն հանգամանքը, որ մեկը մյուսի գործողությունները լրացնելով մի կողմից Դավիթ Փարամազյանը դանակով է հարվածել, մյուս կողմից Էդ-*

*գար Եղիազարյանը ծողով է հարվածել, և մեկը մյուսին լրացնելով կատարել են 112-րդ հոդվածի համապատասխան արարքները»: Քննիչի նման մեկնաբանություններն անհիմն են, քանի որ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բնույթն այնպիսին է, որ այն որևէ անձի մեղսագրելու համար առնվազն պետք է հիմնավորել նրա կողմից այդ հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքը առաջացնելը, իսկ այն, որ երկու հանցակիցներից մեկը դանակով հարվածում է, իսկ մյուսը տեսնում է այդ պահը և այլն՝ **բավարար չէ անձին մեղսագրել այդ հանցանքի կատարումը**, հատկապես, որ դատարան ներկայացրած նյութերից և քննիչի պարզաբանումներից պարզ դարձավ, որ ծանր վնասը վրա է հասել միայն կտրող-ծակող առարկայի կիրառման արդյունքում առաջացած վնասվածքներից: Այս պայմաններում Դատարանը չի անդրադառնում մեղադրյալի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ մասերի հետևանիշների առկայության մասին հիմնավոր կասկածի հարցին, քանի որ քննարկվող հանցագործության բնույթից և առանձնահատկությունից ելնելով, որպեսզի առկա լինի որակյալ հանցակազմը, ուրեմն պետք է առնվազն առկա լինի հիմնական հանցակազմը, **որպիսին, ինչպես նշեց դատարանը, բացակայում է,** ուստի բացակայում է նաև դրա որակյալ տեսակը՝ հիմք ընդունելով հիմնական և ծանրացնող հանգամանքներով հանցակազմերի կառուցման օրենսդրական տեխնիկայի կանոնները: Այսինքն, եթե առերևույթ բացակայում է հիմնական հանցակազմը, ուրեմն բացակայում է նաև որակյալ հանցակազմը:*

*Այսպիսով, դատարանը հաստատած համարելով և համաձայնելով քննիչի, սկզբնական կալանքի կիրառման մասին առաջին ատյանի դատարանի և ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումներում արձանագրված այն հանգամանքի հետ, որ առկա են փաստեր և տեղեկություններ առ այն, որ մեղադրյալն առերևույթ առնչություն ունի իրեն մեղսագրվող դեպքին, որ նա մասնակցություն ունեցել է տուժողի նկատմամբ կատարված ոտնձգությանը, միաժամանակ **չանդրադառնալով Էդգար Եղիազարյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությանն ու օրինականությանը և չգնահատելով դրանք, քանի որ դա դուրս է այս փուլում դատարանի իրավասությունների շրջանակից**, և միաժամանակ հիմք ընդունելով քննիչի կողմից դատարան ներկայացրած դատաբժշկական փորձագետի եզրակացությունը, որը բացակայել է սկզբնական կալանքի կիրառման ժամանակ, դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի կողմից հիմնավոր կասկածի վերաբերյալ ձևավորած չափանիշների տեսանկյունից՝ **չի կարող հաստատված համարվել, որ մեղադրյալին վերագրվող արարքն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներին** կամ առկա է այդ հոդվածով նախատեսված հանցակազմի վերաբերյալ հիմնավոր կասկածը:*

*(...)*

*Բացի վերոգրյալից, դատարանը գտնում է, որ բացակայում են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված խափանման միջոցի կիրառման հիմքերը:*

*(...)*

*Անդրադառնալով հանցագործության ծանրությանը, դատարանն արձանագրում է, որ այն սկզբունական կալանքի կիրառման համար կարող է լինել վերաբերելի փաստարկ, եթե ի լրումն դրա առկա են նաև Օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված որևէ հիմք, ինքնին հանցանքի ծանրությունը բավարար չէ կալանք կիրառելու համար: Այն սկզբունքային նշանակություն ունեցող գործոն է, սակայն ոչ կալանքի կիրառման հիմք: Թեև պետք է փաստել, որ **այն ևս բացակայում է**, քանի որ ինչպես նշվեց վերևում, սույն դեպքում դատարանի համար **հիմնավոր կասկածի տեսանկյունից** համոզիչ չէր մեղադրյալի կողմից ենթադրյալ ծանր հանցանքի կատարման փաստի մասին քննիչի հետևությունը, հետևաբար **դրա բացակայությունը բացառում է** նաև ծանր հանցագործության մասին հետևությունները, համապատասխանաբար նաև անհիմն դարձնում քննիչի միջնորդության մեջ նշված ծանր հանցագործություն կատարելու հիմնավորումներով կալանք ընտրելու մասին քննիչի դատողությունները:*

*Բացի այդ, հարկ է նկատել, որ քննիչը հանցագործության ծանրությունից զատ որևէ այլ հիմնավոր պատճառ չի ներկայացրել, որպեսզի դատարանը սույն դեպքով համակցության մեջ գնահատի կալանքը որպես խափանման միջոց ընտրելը: Թեև քննիչը միջնորդության մեջ նշել է, որ մեղադրյալը «մնալով ազատության մեջ կարող է թաքնվել քննությունից, խոչընդոտել քրեական գործի քննությանը՝ միևչդատական վարույթում՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով», սակայն այդ հետևությունները գործի նյութերից բխող ողջամիտ կասկածներով հիմնավորված չեն:*

*(...)*

*Ինչ վերաբերում է հանցագործության գործիք մետաղական ճկվող ձողանման առարկայի հայտնաբերմանը մեղադրյալի խոչընդոտելուն, ապա դատարանը դա հիմք չի ընդունում, քանի որ անձը գրավով ազատ արձակվելուց գտնվել է ազատության մեջ և եթե դրա հետ կապված որևէ գործողություն կատարելու ցանկություն ունենար, ապա արդեն իսկ կատարած կլիներ: Բացի այդ, դատարանի համոզմամբ այն էական նշանակություն չունի գործի հետագա ընթացքի համար (...)»* (տե՛ս նյութեր, թերթեր 151-157):

8. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ արձանագրվել է. *«(...) Վերաքննիչ դատարանը, հետազոտելով դատական վարույթի նյութերը, առանց կանխորոշելու մեղադրյալի մեղավորությունը, առանց վերջնական իրավական գնահատական տալու քրեական գործով ձեռք բերված ապացույցներին, հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի հետևությունն առ այն, որ (...) անձի օրինական կալանա-*

*վորումը թույլատրող իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածն առկա չէ:*

*Վարույթն իրականացնող մարմինն Առաջին ատյանի դատարան չի ներկայացրել հիմնավոր փաստարկներ, որոնք ուղղակիորեն մատնանշեին մեղադրյալ Էդգար Եղիազարյանի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ կետերով հանցագործությանը:*

*Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 285-րդ հոդվածների դրույթները, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի վերաբերյալ հիմնավորումները բացակայում են, հանգել է ճիշտ հետևության և մեղադրյալ Էդգար Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժել է:*

*(...)»* (տե՛ս նյութեր, թերթեր 193-199):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Վճռաբեկ բողոք բերած անձը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը հիմնավորված չեն և առերևույթ հակասում են Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին:

9.1. Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ մեղադրյալներ Է.Եղիազարյանը և Դ.Փարամազյանը տուժող Տ.Ճախբեկյանի նկատմամբ հանցավոր ոտնձգությունն իրականացրել են միասին՝ առանց ժամանակային ընդհատման: Ավելին, տուժող Տ.Ճախբեկյանը 2016 թվականի հոկտեմբերի 22-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ վիճաբանության ընթացքում ինքը բռնել է Դ.Փարամազյանի ձեռքերից և վերնաշապիկից՝ զրկելով նրան իրեն հարվածելու հնարավորությունից, սակայն երբ Է.Եղիազարյանը մետաղյա ձողով հարվածել է իր գլխին, ինքը թուլացել է, ինչի հետևանքով Դ.Փարամազյանն ազատվել է իր ձեռքերից: Դրանից հետո Է.Եղիազարյանը շարունակել է հարվածներ հասցնել իր գլխին, իսկ Դ.Փարամազյանը՝ ծակող գործիքով հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին:

Ըստ բողոքաբերի՝ նման փաստական տվյալները վկայում են Է.Եղիազարյանի օրինական կալանավորումը թույլատրող իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածն առկա լինելու մասին, մինչդեռ ստորադաս դատարանները հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված չեն համարել:

9.2. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ ստորադաս դատարանները կալանքի ժամկետի երկարացման հարցը չեն քննարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, ամբողջական գնահատական չեն տվել մեղադրյալի կողմից վերոնշյալ հոդվածով նախատեսված գործողությունների կատարման հնարավորությանը կամ անհնարինությանը:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ ստորադաս դատարանների կողմից բազմակողմանի վերլուծության չեն ենթարկվել մեղադրյալի անձը, կատարած գործողությունները, նրա արարքի հանրային վտանգավորությունը, ինչն անկասկած հիմք կտար եզրահանգելու, որ առկա է Է.Եղիազարյանի կողմից մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու, ինչպես նաև քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու ողջամիտ ենթադրություն:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումները՝ երկու ամսով երկարացնելով մեղադրյալ Է.Եղիազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորման պայմաններից մեկի՝ հիմնավոր կասկածի մեկնաբանման և դրա առկայությունը ստուգելիս մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ Է.Եղիազարյանի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը բացակայում է:

*I. Հիմնավոր կասկածը և դրա ստուգման սահմանները.*

13. ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

*(…)*

*4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, **երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած**, կամ երբ դա*

*հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.*

*(…)»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

*(…)*

*գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ **իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում** նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.*

*(…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:*

*2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:*

*(…)»:*

13.1. Կալանավորման պայմաններից մեկի՝ «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ դիրքորոշումները՝

- հանցանք կատարած լինելու կասկածի՝ ողջամտորեն հիմնավորված լինելու պահանջը կամայական ձերբակալման և կալանավորման դեմ երաշխիքի կարևոր մասն է կազմում (տե՛ս *Գուսինսկիին ընդդեմ Ռուսաստանի* (Gusinskiy v. Russia) գործով 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 70276/01, կետ 53),

- «հիմնավոր կասկածը» եզրույթը ենթադրում է փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լիներ հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում (տե՛ս *Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի* (K. F. v. Germany) գործով 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 144/1996/765/962, կետ 57),

- հիմնավոր կասկածի առկայությունը անհրաժեշտ պայման է անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականության համար (տե՛ս *Մակքեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* (McKay v. The United Kingdom) գործով 2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 543/03, կետ 44): Ըստ այդմ, թեև ձերբակալման պահին և սկզբնական կալանքի ժամանակ պետք է առկա լինի հիմնավոր կասկածը, այնուամենայնիվ, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս նույնպես պետք է ցույց տալ, որ այդ կասկածները պահպանվել են և շարունակում են մնալ «հիմնավոր» (տե՛ս *Ուրտանսն ընդդեմ Լատվիայի* (Urtāns v. Latvia) գործով 2014 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 16858/11, կետ 32): Ազատությունից զրկելու տևողությունը կարող է լինել կարևոր գործոն կասկածի՝ պահանջվող աստիճանի համար (տե՛ս *Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* (Murray v. The United Kingdom) գործով 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 14310/88, կետ 56),

- կալանքի հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածի արժանահավատությունն ու բարեխղճությունը (տե՛ս *Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* (Murray v. The United Kingdom) գործով 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 14310/88, կետ 61): Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանը փաստել է, որ բարեխղճության վրա հիմնված կասկածը չի կարող բավարար համարվել (տե՛ս *Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի* (Gusinskiy v. Russia) գործով 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 70276/01, կետ 53),

- այն, թե ինչպիսի կասկածը կարող է համարվել հիմնավոր, կախված է գործի բոլոր հանգամանքներից: Կասկածը չի կարող հիմնված լինել սոսկ այն հավաստիացման վրա, որ առկա է ստույգ, բայց և գաղտնի տեղեկություն (տե՛ս *Ֆոկսը, Քեմբելն ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության* (Fox, Campbell and Hartley v. The United Kingdom) գործով 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32),

- հիմնավոր կասկածը չի կարող առկա լինել, եթե արարքը, որի կատարման մեջ կասկածվում է անձը, դրա կատարման պահին չի համարվել հանցագործություն (տե՛ս *Վլոչն ընդդեմ Լեհաստանի* (Wloch v. Poland) գործով 2000 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 27785/95, կետ 109, *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06, կետ 136):

13.2. Հիմք ընդունելով նաև Եվրոպական դատարանի ձևավորած վերոգրյալ առանձին դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» կապակցությամբ իր նախադեպային իրավունքում փաստել է. «(…) *Կալանավորման պայմանների բվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը (…):*

*(…)*

*(…) [Յ]ուրաքանչյուր դեպքում [հանցանք կատարած լինելու կասկածը] պետք է լինի ողջամիտ:*

*(…)*

*(…) «[Հ]անցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: (…) [Կ]ասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:*

*(…) [Վ]արույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող վերոնշյալ տեղեկությունները, փաստերը կամ ապացույցները պետք է հետազոտվեն մրցակցային դատավարության կանոնների պահպանմամբ, ինչը ենթադրում է, որ այդ տեղեկություններին, տվյալներին կամ ապացույցներին պետք է ծանոթանա նաև պաշտպանության կողմը:*

*(…)*

*(…) [Այսպիսով,] Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված* (տե՛ս *Վահրամ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ կետերը):

Ջարգացնելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Հարությունյանի* գործով որոշման շրջանակներում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) [Հ]իմնավոր կաս-*

*կածը պետք է ապահովի անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հիմնավորված և օրինաչափ սահմանափակումը, իսկ դատական վերահսկողությունը լինի երաշխիք այդ իրավունքի անհիմն սահմանափակումները կանխելու համար:*

*Այսինքն՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր: Եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի:*

*Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան:*

*(…)*

*Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտավորությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապված հարցեր: Առաջին՝ առկա՞ են արդյոք կասկածը հիմնավորող տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն անձի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, երկրորդ՝ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, առերևույթ համընկնո՞ւմ է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հատկանիշներին»* (տե՛ս *Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴ-2/0009/06/11 որոշման 13-րդ և 15-րդ կետերը):

Քննարկվող հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև *Տիգրան Վահրադյանի* գործով որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ դիրքորոշումը. *«(…) Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ խափանման միջոցը*

*ձեռք է բերում պատժիչ նպատակ: Մինչդեռ խափանման միջոցը կիրառման նպատակով տարբերվում է պատժից:*

*Խափանման միջոցի կիրառման նպատակը քրեական գործի մինչդատական և դատական քննության ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, ինչպես նաև դատավճռի կատարումն ապահովելն է: Մասնավորապես, կալանքի, որպես խափանման միջոցի, կիրառման վարույթը միտված չէ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ փաստական տվյալների հավաքմանը, ստուգմանն ու գնահատմանը: Այդ վարույթի նշանակությունն այն է, որ քննարկվի և լուծվի կալանավորված անձին հասարակությունից ժամանակավորապես մեկուսացնելու և հսկողության ներքո պահելու անհրաժեշտության հարցը՝ ելնելով գործի քննության շահերից:*

*Այլ կերպ՝ կալանավորման նպատակն է՝ նախաքննության և դատական քննության բնականոն գործընթացի ապահովումը, քրեական գործի բնականոն քննությանը մեղադրյալի (կասկածյալի) դիմակայության կանխումը, դատավարական գործընթացին մեղադրյալի մասնակցության ապահովումը (...)* (տե՛ս *Տիգրան Վահրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշման 42-րդ կետը):

Իսկ *Ա.Սարգսյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է. «*(...) [Ա]նձի ազատության սահմանափակման դեպքում դատարանները, ի թիվս կալանավորման հիմքերի և այլ պայմանների, քննարկման առարկա պետք է դարձնեն նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը: Եթե կոնկրետ դեպքում առերևույթ առկա և կիրառելի են քրեական վարույթը բացառող հանգամանքներից որևէ մեկը, ապա կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը ենթակա է մերժման:*

*Այսինքն՝ անձի ազատությունը սահմանափակելը կհամարվի օրինական և հիմնավորված միայն կալանավորման հիմքերի և այլ պայմանների միաժամանակյա առկայության և քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում:*

*(...)*

*(...) [Քրեական վարույթը բացառող հանգամանքի առկայության] անտեսմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելը դատական վերահսկողությունը դարձնում է ձևական և ոչ արդյունավետ միջոց, որի հետևանքով էլ չի իրականացվում դատական վերահսկողության առաքելությունը՝ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը և այդ իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումների բացառումը* (տե՛ս *Արամ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 23-րդ և 28-րդ կետերը):

14. Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի ձևավորած դատողությունները, ինչպես նաև վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի անձի ազատության իրավունքի սահմանափակման աներկբա անհրաժեշտությունը՝ ավելի բարձր նշանակության բարիքի, այն է՝ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից՝ ապահովելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը, անձի ազատության սահմանափակման հիմնավորվածությունը: Մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար հիմնավոր կասկածի առկայությունն ունի հիմնարար նշանակություն, քանզի դրա բացակայության պայմաններում անձի ազատության ցանկացած սահմանափակում կհամարվի ի սկզբանե ապօրինի: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում /մեղադրվում/ ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ***ընդգծել*** հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում) է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները *պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,*

- կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս պետք է ցույց տրվի, որ հանցանք կատարած լինելու կասկածը պահպանվել է և շարունակում է մնալ «հիմնավոր»: Ազատությունից զրկելու տևողությունը կարող է լինել կարևոր գործոն կասկածի՝ պահանջվող աստիճանի համար,

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու

այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից (տե՛ս, mutatis mutandis, *Ներսես Միսակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08 որոշումը), ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն *իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը:* Միևնույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի *առերևույթ* առկայությունը և դրա *հնարավոր* կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործը ըստ էության քննելու և լուծելու ժամանակ *պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք*, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի *ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա* (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել (այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06), կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն),

- հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումը ***ակնհայտորեն*** չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմը *առերևույթ* վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին (օրինակ՝ անձին մեղսագրվել է խոշոր չափերով գողություն կատարելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), ինչը, սակայն, ակնհայտորեն չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը, իսկ վերջինը առերևույթ վկայում է անձի արարքում գողության հասարակ հանցակազմի հատկանիշների առկայության մասին, կամ, օրինակ, անձին մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու հանցակազմը, սակայն արարքի փաստական նկարագրությունը ***ակնհայտորեն*** վկայում է զենքի գործադր-

ման բացակայության, բայց միևնույն ժամանակ առերևույթ փաստում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված որակյալ հանցակազմի առկայության մասին):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

ա) Տուժող Տ.Ճախբեկյանը 2016 թվականի հոկտեմբերի 22-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ հարվածները ստանալուց առաջ ինքը, կանխելով Դ.Փարամազյանի ագրեսիվ վարքագիծը, ձեռքերով բռնել էր նրա ձեռքերից և վերնաշապիկից՝ այդ կերպ **զրկելով վերջինիս իրեն հարվածելու հնարավորությունից**: Սակայն երբ Է.Եղիազարյանն իր ետևից երկաթյա ձողով հարվածել է գլխին, **ինքը այդ հարվածից հետո թուլացել է**, ինչի հետևանքով Դ.Փարամազյանն **արձակվել է իր ձեռքերից**, որից հետո Է.Եղիազարյանի հարվածները՝ ուղղված գլխին, շարունակվել են, և դրան զուգահեռ, իր դիմաց գտնվող Դ.Փարամազյանը **սկսել է ծակող գործիքով հարվածներ հասցնել իրեն**, այսինքն՝ որոշակի ժամանակահատված վերջիններս երկուսով միաժամանակ հարվածներ են հասցրել իրեն:

Տուժողը նաև նշել է, որ եթե լիներ միայն Դ.Փարամազյանը, ապա ինքը կկարողանար դիմադրել նրան, նա որևէ կերպ չէր կարողանա իրեն վնաս հասցնել (տե՛ս սույն որոշման 6.1.-րդ կետը):

բ) Առաջին ատյանի դատարանը Է.Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը մերժելիս Է.Եղիազարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքի ենթադրաբար կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության մասին դատողությունը առավելապես պատճառաբանել է նրանով, որ դատաբժշկական փորձաքննության թիվ 2028/հ եզրակացությունից հետևում է, որ տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանգամանքը կապվում է սուր ծակող-կտրող գործիքով տուժողին պատճառված վնասվածքների հետ, իսկ մեղադրյալ ներգրավելու որոշումից և միջնորդությանը կից դատարան ներկայացված նյութերից և դատարանում քննիչի պարզաբանումներից ակնհայտ երևում է, որ սուր ծակող-կտրող գործիքը կիրառվել է գործով մյուս մեղադրյալ՝ Դ.Փարամազյանի կողմից, իսկ մեղադրյալ Է.Եղիազարյանին վերագրվել են մահակի գործադրմամբ Տ.Ճախբեկյանի գլխին և մարմնի տարբեր մասերին բազմաթիվ հարվածներ հասցնելու գործողությունները, որոնց արդյունքում ըստ եզրակացության՝ տուժողին պատճառվել է աջ հետականջային շրջանի սալջարդ վերքը, որը, առանձին վերցրած, առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշներ չի պարունակում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

գ) Առաջին ատյանի դատարանն իր կողմից կայացված դատական ակտի շրջանակներում թեև նշել է, որ *չի անդրադառնում Է.Եղիազարյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությանն ու օրինականությանը և գնահատական չի տալիս, քանի որ դա դուրս է տվյալ փուլում դատարանի իրավասությունների շրջանակից,* սակայն միևնույն ժամանակ իր որոշման մեջ ձևակերպել է հետևյալ դատողությունները. «(…) *[Ք]րեական օրենսգրքի*

*112-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բնույթն այնպիսին է, որ այն որևէ անձի մեղսագրելու համար առնվազն պետք է հիմնավորել նրա կողմից այդ հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքը առաջացնելը, իսկ այն, որ երկու հանցակիցներից մեկը դանակով հարվածում է, իսկ մյուսը տեսնում է այդ պահը և այլն՝ **բավարար չէ անձին վերագրել այդ հանցանքի կատարումը,** հատկապես, որ դատարան ներկայացրած նյութերից և քննիչի պարզաբանումներից պարզ դարձավ, որ ծանր վնասը վրա է հասել միայն կտրող-ծակող առարկայի կիրառման արդյունքում առաջացած վնասվածքներից: Այս պայմաններում Դատարանը չի անդրադառնում մեղադրյալի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ մասերի հատկանիշների առկայության մասին հիմնավոր կասկածի հարցին, քանի որ քննարկվող հանցագործության բնույթից և առանձնահատկություններից ելնելով, որպեսզի առկա լինի որակյալ հանցակազմը, ուրեմն պետք է առնվազն առկա լինի հիմնական հանցակազմը, **որպիսին, ինչպես նշեց դատարանը, բացակայում է, ուստի բացակայում է նաև դրա որակյալ տեսակը** (...)»* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

դ) Վերաքննիչ դատարանը, իր հերթին փաստելով, որ վարույթն իրականացնող մարմինը չի ներկայացրել հիմնավոր փաստարկներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեին մեղադրյալ Է.Եղիազարյանի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, եզրահանգել է, որ հիմնավոր կասկածի բացակայության մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնավոր է (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Է.Եղիազարյանի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով տուժող Տ.Ճախբեկյանի հայտնած համապատասխան բովանդակությամբ ցուցմունքը (տե՛ս սույն որոշման 6.1.-րդ կետը), այն համադրելով գործում առկա այլ նյութերի հետ, արձանագրում է, որ անկախ դատաբժշկական փորձաքննության թիվ 2028/հ եզրակացությունից բխող տվյալներից (տե՛ս սույն որոշման 6.2.-րդ կետը)՝ տուժողի հիշյալ ցուցմունքի առկայությունն արդեն իսկ բավարար է՝ դատավարության տվյալ փուլում ողջամիտ ենթադրություն անելու, որ մեղադրյալ Է.Եղիազարյանին վերագրված արարքն առերևույթ բովանդակում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Այլ կերպ՝ ըստ Վճռաբեկ դատարանի՝ սույն գործով առկա են բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ Է.Եղիազարյանը մեղադրվում է:

17.1. Միևնույն ժամանակ, սույն որոշման 16-րդ կետի «գ» ենթակետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր կասկածի հարցը ստուգելիս Առաջին ատյանի դատարանն անմիջականորեն փաստել է Է.Եղիազարյանի պարբքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայությունը՝ դրանով իսկ իրավական գնահատական տալով նրա մեղքի հարցին, ինչի իրավասությունը չուներ:

*II. Հիմնավոր կասկածի բացակայությունը փաստելու դեպքում կալանավորման հիմքերին անդրադառնալը.*

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. Է.Եղիազարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն առերևույթ կատարած լինելու հիմնավոր կասկածը հաստատված չհամարելով և, միևնույն ժամանակ, կալանավորման հիմքերի առկայության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ ստորադաս դատարանները կարո՞ղ էին արդյոք այդ հարցում հանգել հիմնավորված հետևության:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Դատարանը (…) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

*1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.*

*2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.*

*3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.*

*4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.*

*5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:*

*(…)*

*3. Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝*

*1) վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը.*

*(…)»*:

19.1. Վերոգրյալ իրավանորմերի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, հիմնվելով Եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների վրա, իր նախադեպային իրավունքում փաստել է. «(…) *[Մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը*

*բեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս (...): Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին* (տե՛ս *Վահագն Պողոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 գործով որոշման 13-րդ կետը):

Իսկ *Վահրամ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*Կալանավորման պայմանների բվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անհիմաստ է*» (տե՛ս *Վահրամ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-րդ կետը):

20. Հիմք ընդունելով *Վահագն Պողոսյանի* գործով արտահայտված վերոգրյալ դիրքորոշումը, ինչպես նաև վերահաստատելով և զարգացնելով *Վահրամ Գևորգյանի* գործով ձևավորած և վերը մեջբերված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ դատարանը հաստատված չի համարում անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումը ոչ միայն անիմաստ է, այլև այն քննարկման առարկա դարձնելով՝ դատարանն առանձին դեպքերում իրեն կզրկի այդ հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից, քանի որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բացակայությունը փաստելն ինքնին բացառում է կալանավորման հիմքերի, մասնավորապես՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականության գնահատման կարևոր տարրերից մեկը՝ արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը իրավական գնահատման ենթարկելու հնարավորությունը:

21. Սույն գործի փաստերի համաձայն՝

ա) Մեղադրյալ Է.Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության մեջ նախաքննության մարմինը, որ-

պես կալանավորման հիմքեր, մատնանշել է քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, ինչպես նաև գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

բ) Առաջին ատյանի դատարանը, հաստատված համարելով Է.Եղիազարյանի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայությունը, քննարկման առարկա է դարձրել կալանավորման հիմքերի առկայության հարցը՝ արդյունքում գալով այն եզրահանգման, որ դրանք նույնպես բացակայում են (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

գ) Վերաքննիչ դատարանն իր հերթին փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 285-րդ հոդվածների դրույթները, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի վերաբերյալ հիմնավորումները բացակայում են, հանգել է ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալների նկատմամբ կիրառելով սույն որոշման 20-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Է.Եղիազարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքի առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը հաստատված չհամարելով և, միևնույն ժամանակ, քննարկման առարկա դարձնելով միջնորդության մեջ նշված կալանավորման համապատասխան հիմքերի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը) առկայության հարցը, փաստացի իրեն զրկել է այդ հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից, քանի որ, ինչպես արդեն նշել է Վճռաբեկ դատարանը (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը), հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բացակայությունը փաստելն ինքնին բացառում է կալանավորման հիմքերի, մասնավորապես՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականության գնահատման կարևոր տարրերից մեկը՝ արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը իրավական գնահատման ենթարկելու հնարավորությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի սույն դատողությունը հիմնավորվում է նաև հենց Առաջին ատյանի դատարանի կողմից արտահայտված հետևյալ դիրքորոշմամբ. «*(…) [Մ]ույն դեպքում դատարանի համար հիմնավոր կասկածի տեսանկյունից համոզիչ չէր մեղադրյալի կողմից ենթադրյալ ծանր հանցանքի կատարման փաստի մասին քննիչի հետևությունը, հետևաբար դրա բացակայությունը բացառում է նաև ծանր հանցագործության մասին հետևությունները*» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Է.Եղիազարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն առերևույթ կատարած լինելու հիմնավոր կասկածը հաս-

տատված չհամարելով և, միևնույն ժամանակ, կալանավորման հիմքերի առկայության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ ստորադաս դատարանները չէին կարող այդ հարցում հանգել հիմնավորված հետևության:

23. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը դատական ակտ կայացնելիս, իսկ Վերաքննիչ դատարանը, ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ, 419-րդ հոդվածների՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործը Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով սույն որոշմամբ արձանագրված խախտումները, պետք է քննարկման առարկա դարձնի մեղադրյալ Է.Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին նախաքննական մարմնի միջնորդության մեջ մատնանշված կալանավորման հիմքերի առկայության հարցը, իսկ արդյունքում հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Էդգար Գեղամի Եղիազարյանի վերաբերյալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**34.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՏԴ/0101/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան Ե.ՎԱՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Անդրանիկ Լաղիկի Խոջումյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2014 թվականի ապրիլի 3-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 38101914 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Անդրանիկ Խոջումյանը տուժող է ճանաչվել:

2014 թվականի ապրիլի 5-ին Աշոտ Այդինյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ Ա.Այդինյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առա-

ջաղրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Այդինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2014 թվականի հուլիսի 24-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 62217314 քրեական գործը:

Նույն օրը ձերբակալվել է Անդրանիկ Խոջումյանը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ թիվ 38101914 և թիվ 62217314 քրեական գործերը միացվել են, և նախաքննությունը շարունակվել է մեկ վարույթում՝ թիվ 38101914 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ Ա.Խոջումյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Խոջումյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ Ա.Այդինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերացվել է այն չհաստատվելու պատճառաբանությամբ:

2014 թվականի սեպտեմբերի 12-ին Արտակ Ավետիսյանը, իսկ նույն թվականի սեպտեմբերի 14-ին Անդրանիկ Ազիբեկյանը ձերբակալվել են:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի սեպտեմբերի 14-ի և նույն թվականի սեպտեմբերի 16-ի որոշումներով Ա.Ավետիսյանը և Ա.Ազիբեկյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

2014 թվականի սեպտեմբերի 30-ին Ա.Այդինյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացվել է, և նրա նկատմամբ նոր խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Ա.Խոջումյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Ա.Այդինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերացվել է: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Այդինյանը ճանաչվել է տուժող:

2014 թվականի դեկտեմբերի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 5-ի դատավճռով Ա.Խոջումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 6 տարի 6 ամիս ժամկետով:

Նույն դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել են նաև Ա.Ավետիսյանը և Ա.Ազիբեկյանը:

3. Ամբաստանյալ Ա.Ավետիսյանի պաշտպան Ա.Աղամյանի, ամբաստանյալ Ա.Ազիբեկյանի պաշտպան Մ.Պողոսյանի, ամբաստանյալ Ա.Խոջումյանի պաշտպաններ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մարտի 29-ին որոշում է կայացրել պաշտպաններ Լ.Սահակյանի, Ե.Վարոսյանի, Մ.Պողոսյանի բողոքները մասնակիորեն բավարարելու, պաշտպան Ա.Աղամյանի բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 5-ի դատավճիռը բեկանելու և Ա.Խոջումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով Ա.Խոջումյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Նույն որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ամբաստանյալ Ա.Ազիբեկյանի նկատմամբ նշանակված պատժի մասով փոփոխվել է:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, ամբաստանյալ Ա.Ազիբեկյանի պաշտպաններ Ե.Սարգսյանն ու Մ.Պողոսյանը, ամբաստանյալ Ա.Ավետիսյանն ու նրա պաշտպան Ա.Աղամյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի՝ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնվել է, նշված բողոքը վերադարձվել է, և սահմանվել 10-օրյա ժամկետ՝ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումներով ամբաստանյալ Ա.Ազիբեկյանի պաշտպաններ Ե.Սարգսյանի ու Մ.Պողոսյանի, ամբաստանյալ Ա.Ավետիսյանի ու նրա պաշտպան Ա.Աղամյանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ա.Խոջումյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(...) [Ն]ա 2014 թվականի ապրիլի 1-ին՝ ժամը 24-ի սահմաններում, Իջևան քաղաքում գործող «Իջևանատուն» ռեստորանահյուրանոցային համալիրի տարածքում անձանց նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքի զուգորդմամբ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հասարակության նկատմամբ, ինչն արտահայտվել է համալիրի բակ եկած Աշոտ Այդինյանի և Արսեն Չապուխյանի ուղղությամբ զենքով՝ օրինական կերպով իրեն ամրակցված և հրազեն հանդիսացող «Սայգա» տեսակի 7.62 մմ տրամաչափի ինքնաձիգով կրակոցներ արձակելով, որն էլ ռեալ վտանգ է ստեղծել նրանց կյանքի և առողջության համար:*

*Այսպես, 2014 թվականի ապրիլի 1-ի երեկոյան Ա.Խոջումյանը Տավուշի մարզի Գետահովիտ համայնքի բնակիչ Հովիկ Խեչյանին պատկանող աննասնաֆերմայի հարակից տարածքի կառուցապատման հարցով Ա.Այդինյանի հետ անախորժ հեռախոսազրույց ունենալուց հետո հարցերը պարզաբանելու նպատակով վերջինիս կանչել է իրեն պատկանող՝ (...) «Իջևանատուն» ռեստորանահյուրանոցային համալիր: Ա.Խոջումյանը, տեղյակ լինելով Ա.Այդինյանի այցելության մասին, նախապես իր հետ վերցրել է օրինական հիմունքներով իրեն պատկանող «Սայգա» տեսակի 7.62 մմ տրամաչափի կարաբինը, ապա ռեստորանի բակում սպասել նրան: Ժամը 23:50-ի սահմաններում, երբ Ա.Այդինյանը համագյուղացի Ա.Չապուխյանի վարած «Վազ 21703» մակնիշի ավտոմեքենայով ժամանել և փորձել է մտնել ռեստորանի տարածք, Ա.Խոջումյանը, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության՝ համալիրի աշխատակիցների և հարակից մայրուղով երթևեկող քաղաքացիների նկատմամբ, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կրակոցներ է արձակել ավտոմեքենայի դիմաց, որի ժամանակ Ա.Չապուխյանը վախի ազդեցության տակ բացել է մեքենայի դուռը, նետվել ավտոմեքենայից և թաքնվել համալիրի պահակատան հետնամասում: Ա.Այդինյանը, իջնելով ավտոմեքենայից, ձեռքերը վեր պարզած, փորձել է մոտենալ Ա.Խոջումյանին, հորդորել է դադարեցնել կրակոցները, սակայն վերջինս, շարունակելով իր խուլիգանական գործողությունները, սեփական անձի առավելությունն ընդգծելու մղումով տարված, ինքնահաստատման ակնկալիքով, ճգտելով իր հակահասարակական վարքագծով ապացուցել իր անկախությունը հասարակության մեջ ընդունված վարքագծի կանոններից, իր անձը հակադրելով հասարակությանը՝ ցույց տալ իր գերակայությունը, անտեսել է խուլիգանական գործողությունները դադարեցնելուն ուղղված՝ Ա.Այդինյանի հորդորները և, լցված լինելով անթաքույց արհամարհանքով համակեցության ու բարոյականության նորմերի պահանջների նկատմամբ, շարունակել է հրազենի գոր-*

*ծաղրմամբ կրակոցներ արձակելը տարբեր ուղղություններով, ոեալ վտանգ ստեղծել ներկա գտնվող անձանց կյանքի ու առողջության համար՝ դրանով իսկ խախտելով ռեստորանահյուրանոցային համալիրի աշխատակիցների բնականոն աշխատանքը, պատահական անցորդների և հասարակության անդորրը՝ ստեղծելով վախի մթնոլորտ: Ընթացքում, երբ Ա.Խոջոմյանը շարունակել է զենքի գործադրմամբ իր խուլիգանական գործողությունները, Ա.Այդինյանը երկու անգամ կրակել է օդ և հեռացել, որից հետո միայն Ա.Խոջոմյանը դադարեցրել է իր խուլիգանական գործողությունները (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 308-327):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(...) Ամբաստանյալ Ա.Խոջոմյանին մեղսագրված արարքը հաստատված է, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ճիշտ է որակված, որի համար նա ենթակա է պատժի»* (տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 1-9):

6.1. Առաջին ատյանի դատարանը դատավճռի հիմքում, ի թիվ այլոց, դրել է նաև ամբաստանյալներ Ա.Խոջոմյանի և Ա.Ավետիսյանի, տուժող Ա.Այդինյանի, վկաներ Ա.Ճաղարյանի, Ա.Քոչարյանի, Ա.Չապուխյանի և Հ.Խեչյանի տված հետևյալ ցուցմունքները.

- ամբաստանյալ Ա.Խոջոմյան՝ *«(...) Աշոտ Այդինյանի հետ անախորժ խոսակցություն ունենալուց հետո, երբ վերջինս մի խումբ անձանց հետ այցելել է իրեն պատկանող «Իջևանատուն» ռեստորանահյուրանոցային համալիր, հետագա բարդություններից և հնարավոր վիճաբանությունից խուսափելու նպատակով օրինական կարգով իրեն ամրակցված «Սայգա» տեսակի ինքնաձիգով կրակոցներ է արձակել ռեստորանի տարածք մտնող «Պրիորա» մակնիշի ավտոմեքենայի դիմաց և օդ՝ համալիր եկած անձանց մուտքը խոչընդոտելու համար (...)»:*

- ամբաստանյալ Ա.Ավետիսյան՝ *«(...) Անդրանիկ Խոջոմյանը պատմել է դեպքի իրական հանգամանքները, այն, որ առաջինն ինքն է կրակել և արձակել է շուրջ 30 կրակահերթ, որպես մտերիմ զայրացել են նրա վրա և նեղսրտել, որ դեպքի մասին լսել են այլ անձանցից (...)»:*

- տուժող Ա.Այդինյան՝ *«(...) [իր] համագյուղացի Արսեն Չապուխյանի հետ Երևան գնալու ճանապարհին հասնելով «Իջևանատուն» ռեստորանահյուրանոցային համալիրի մոտ և հիշելով ժամեր առաջ Անդրանիկ Խոջոմյանի հետ ունեցած անախորժ հեռախոսազրույցը՝ Ա.Չապուխյանին խնդրել է հանդիպել Ա.Խոջոմյանին և նոր շարունակել ճանապարհը: Նույն պահին՝ Ա.Չապուխյանի վարած «Պրիորա» մակնիշի ավտոմեքենայով ռեստորանի դարպասներից ներս մտնելու ժամանակ լսել է կրակոցի ձայներ և նկատել, որ Ա.Խոջոմյանը ձեռքին եղած ինքնաձիգով կրակում է տարբեր ուղղություններով: Ա.Չապուխյանը վախի ազդեցության տակ իջել է մեքենայից, թաքնվել պահակատան հետնամասում, որից հետո ինքը, ձեռքերը վեր պարզած, փորձել է մոտենալ Ա.Խոջոմյանին՝ խնդրելով դադարեցնել կրակոցները: Երբ վերջինս շարունակել է կրակահերթը, ինքը մոտեցել է ավ-*

*տոմեքենայի հետևի դռանը, բացել այն և հանելով իր գազային ատրճանակը, երկու անգամ կրակել է օդ և դեպքի վայրից դիմել փախուստի (...)»:*

- վկա Ա.Ճաղարյան՝ *«(...) [Ինքը] աշխատում է «Իջևանատուն» հյուրանոցառեստորանային համալիրում՝ որպես ադմինիստրատոր: (...) [Կ]րակոցներ է լսել: Այդ պահին Անդրանիկ Խոջումյանը մոտեցել է իրեն և հրահանգել է արգելել ռեստորանի աշխատակիցների ելքը: Այնուհետև մտել է ներս և Արուսյակին ու Լիդային զգուշացրել, որ հանկարծ դուրս չգան, ու մինչև իջել է, արդեն վերջացել էր այդ իրարանցումը (...)»:*

- վկա Ա.Քոչարյան՝ *«(...) [Ինքը] աշխատում է «Իջևանատուն» հյուրանոցառեստորանային համալիրում որպես հավաքարար: 2014 թվականի ապրիլի 1-ին՝ երեկոյան, «Իջևանատուն» ռեստորանահյուրանոցային համալիրի սենյակներից մեկում Լիդիա Գալստյանի հետ զրուցելու ընթացքում լսել է կրակոցի ձայներ, որից քիչ անց սենյակ է մտել Անուշ Ճաղարյանը և հայտնել, որ ինչ որ անծինք եկել են ռեստորանի բակ և կրակում են: Անուշ Ճաղարյանը պահանջել է մնալ սենյակում (...)»:*

- վկա Ա.Չապուխյան՝ *«(...) [«Իջևանատուն» ռեստորան] մտնելուց կրակոցներ է լսել ու մեքենան կանգնեցրել: Իրեն թվացել է մեքենայի առաջին է կրակոցը, դուրս է եկել մեքենայից ու կանգնել ռեստորանի մուտքի պահակատան հետնամասում: Դրանից հետո Աշոտն իջել է մեքենայից, շրջվել մեքենայի հետևի դուռը բացել, զենքը հանել և երկու անգամ օդ կրակել: (...) Ճիշտ է, Անդրանիկ Խոջումյանի կրակոցը չի տեսել, սակայն որ իջել է, նրա ձեռքին զենք է տեսել, բայց իրենց ուղղությամբ զենք չի պահել: (...) Կրակոցների պահին մայրուղով անցնող մեքենաները մի պահ դանդաղեցրել են երթևեկությունը ու գնացել, սակայն չեն կանգնել (...)»:*

- վկա Հ.Խեչյան՝ *«(...) ինքն ու Անդրանիկ Խոջումյանը գտնվել են սարամասում, իր հեռախոսահամարին է զանգահարել Գետահովիտ գյուղի գյուղապետ՝ Արթուրը, ֆերմայի տարածքի հողի հետ կապված: Խոսակցության ընթացքում վիճաբանություն է եղել իրենց միջև: Գյուղապետը ֆերմայի փաստաթղթերն էր ուզում, ինքն էլ ասել է, որ դրանք տանն են, իսկ ինքը գտնվում է սարում: Անդրանիկը, տեսնելով, որ վիճաբանում են, հեռախոսը վերցրել է և բացատրել, որ վիճաբանություն պետք չէ: Մեկ էլ ճանապարհին իր հեռախոսահամարին կրկին զանգ է եկել, արդեն [Ա]յոն էր, Անդրանիկը վերցրեց հեռախոսը, իրեն էլ բացատրեց, խոսակցությունը փոխվեց, արդեն իրենց մեջ մեծ վիճաբանություն եղավ: Այոն իրեն կանչել է Գետահովիտ գյուղի գյուղապետարան: Անդրանիկը ասաց այս ժամին գյուղապետարան մի գնա, քող իրենք գան օբյեկտ: Անդրանիկը Այոյին ու Արթուրին ասաց եկեք օբյեկտ: Արսեն Չապուխյանն էր ու Այոն սպիտակ պրիորայով: Մինչև օբյեկտ գալն Անդրանիկը վազեց վերև, ավտոմատը վերցրեց ու իջավ ներքև, մի քիչ վարտուներից հեռու կանգնեց ու սպասում էր: (...) Երբ մեքենան փորձում էր մտնել ներս, Անդրանիկը սկսեց կրակել իրենց ուղղությամբ դեպի տարբեր կողմեր ու ասում էր՝ առաջ չգաք: Այոն իջավ անցավ մեքենայի հետևի ձախ դռան կողմը, մեքենայից շոր հանեց ու կրակոց է լսել, կրակոցի*

*ուղղությունը չի տեսել: Անդրանիկի ավտոմատը փամփուշտներով լիքն էր: (...) Առաջին կրակոցից հետո Այոն գոռում էր՝ ասելով՝ ի՞նչ ես անում: Արսեն[ը] կրակոցի ժամանակ իջել է մեքենայից ու, դեպի Անդրանիկը գոռալով, ասել է՝ ի՞նչ ես անում: (...) Անդրանիկը գոռում էր, ասում էր, որ առաջ չգաք, թե չէ կենդանի մարդ չի դուրս գա, նա վազում էր առաջ, մի կողմ (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 1-9):

7. Ամբաստանյալ Ա.Խոջումյանի պաշտպաններ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վերաքննիչ բողոքի համաձայն՝ *«(...) Այս տրամաբանության մեջ է տեղավորվում նաև մեղադրող դատախազի կողմից Անդրանիկ Խոջումյանի համար միջնորդված, ապա կայացված դատավճռով սահմանված պատժաչափը, երբ արձանագրելով, որ Ա.Խոջումյանի պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ չկան, դատախազն այնուամենայնիվ միջնորդել է [ամբաստանյալին] դատապարտել առավելագույն հնարավոր ժամկետով ազատազրկման, իսկ [Առաջին ատյանի] դատարանը, ցուցաբերելով «աննկարագրելի մարդասիրություն», սահմանել է պահանջվածից 6 ամսով պակաս պատժաչափ»* (տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 41-56):

7.1. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. *«(…) Անդրանիկ Խոջումյանի և Աշոտ Այդինյանի միջև հեռախոսային խոսակցության ընթացքում առաջացել է վեճ, ինչի արդյունքում Ա.Այդինյանն անպարկեշտ խոսքեր է ասել Ա.Խոջումյանին և ցանկացել հանդիպել վերջինիս՝ պարզաբանումներ ստանալու նպատակով: Այնուհետև Ա.Այդինյանը հարցեր պարզաբանելու նպատակով մեկ կամ մի քանի մեքենաներով (նշվածի հետ կապված առկա են հակասական ցուցմունքներ) ուղևորվել է ռեստորանային համալիր, իսկ Անդրանիկ [Խոջումյանը], ցանկանալով կանխել վերջինների մուտքը և հետագա անախորժություններից խուսափելու նպատակով սկսել է մեքենայի դիմաց, կողք և օդ կրակոցներ արձակել, որպեսզի վախեցնի, ինչի արդյունքում էլ կրակոցներ է արձակել նաև Ա.Այդինյանը:*

*Վերը նշվածը ոչ միայն բավարար չէ խուլիգանության մասին հիմնավոր հետևության գալու համար, այլև դրանց մի մասը վկայում են այն մասին, որ վիճաբանությունը հիմնականում պայմանավորված է եղել Ա.Այդինյանի կողմից Ա.Խոջումյանին հայհոյելու, ագրեսիվ վարքագիծ դրսևորելու և արդյունքում՝ պարզաբանումներ ստանալու նպատակով ռեստորանային համալիր ուղևորվելու հանգամանքով: Իսկ վիճաբանության առաջացման նման պայմաններում դժվար է համաձայնել այն մոտեցման հետ, որ ամբաստանյալի գործողություններում խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմն առկա է: Ավելին՝ պետք է նկատել, որ նախքան Ա.Այդինյանի հետ հեռախոսազրույց ունենալն Անդրանիկ [Խոջումյանը] որևէ վիճաբանության, կռվի տրամադրվածություն չի ունեցել, այլ, ընդհակառակը, զանգահարել է ռեստորանային համալիր և հաց ուտելու նպատակով չորս հոգու համար նախատեսված սեղան է պատվիրել:*

*Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ մեղադրանք առաջադրելու որոշման մեջ նշվել է, որ Ա.Խոջոմյանն իր գործողություններով խախտել է ռեստորանային համալիրի աշխատակիցների բնականոն աշխատանքը, պատահական անցորդների և հասարակության անդորրը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքի մասին վկայող բավարար տվյալներ քրեական գործում առկա չեն: Ընդ որում, հատկանշական է նաև այն փաստը, որ դեպքը տեղի է ունեցել գրեթե կեսգիշերին՝ ժամը մոտ 23:00-ից 23:30-ի սահմաններում, ռեստորանային համալիրի ներսի հատվածում, իսկ ռեստորանային համալիրը գտնվել է Իջևան-Դիլիջան ավտոճանապարհի 4-րդ կմ-ի ձախակողմյան հատվածում: Ավելին՝ վկա Արսեն Չապուխյանը նշել է, որ կրակոցների պահին ոչ մի մարդ չի տեսել, մայրուղով անցնող մեքենաները մի պահ դանդաղեցրել են երթևեկությունը և գնացել, իսկ Անուշ Ճաղարյանը հայտնել է, որ մինչև մեքենաների գալն իրենք հաճախորդներ չեն ունեցել, «Իջևանատունը» ժամը 22:00-ից փակ է եղել:*

*Իսկ, եթե նույնիսկ ընդունելի համարվի, որ ամբաստանյալի գործողություններով ռեստորանային համալիրի աշխատակիցների բնականոն աշխատանքը, պատահական անցորդների և հասարակության անդորրը խախտվել է, ապա այդ դեպքում խոսք կարող է գնալ քննարկվող հանցակազմի օբեկտիվ կողմի առկայության մասին, ինչը, սուբյեկտիվ կողմի բացակայության պայմաններում, ՀՀ վճռաբեկ դատարանի (...) որոշման իմաստով, բավարար չէ խուլիգանության փաստը հաստատելու համար:*

*Այսպիսով, վերը նշված տվյալներով ոչ միայն չի հաստատվում, այլև հերքվում է, որ Ա. Խոջոմյանը գործել է խուլիգանական մղումներով: Հակառակ մոտեցումը կասկածելի է, և նման հետևությունը հիմնականում հիմնված է ենթադրությունների վրա:*

*(...)*

*Տվյալ դեպքում քրեական գործի նյութերով հաստատված է, որ Անդրանիկ Խոջոմյանը ռեստորանային համալիր Աշոտ Այդինյանի և այլոց մուտքը կանխելու նպատակով իննջաձիգից կրակոցներ է արձակել վերջինների ավտոմեքենայի դիմաց, կողք և օդ, որից հետո Արսեն Չապուխյանը վախի ազդեցության տակ բացել է մեքենայի դուռը, նետվել է ավտոմեքենայից և քաքնվել համալիրի պահակատան հետնամասում, իսկ Աշոտ Այդինյանը, իջնելով ավտոմեքենայից, ձեռքերը վեր պահած փորձել է մոտենալ Անդրանիկ Խոջոմյանին և հորդորել, որ դադարեցնի կրակոցները, սակայն վերջինը շարունակել է:*

*Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա.Խոջոմյանն իննջաձիգից բազմաթիվ կրակոցներ է արձակել Ա.Այդինյանի և Ա.Չապուխյանի մեքենայի դիմացի և կողքի հատվածներում, որպեսզի դրանով կանխի նրանց հնարավոր գործողությունները, ինչպես նաև կրակոցները շարունակվել են վերջինների կողմից մեքենայից դուրս գալուց հետո, գտնում է, որ Ա.Խոջոմյանի գործողություններն իրենց մեջ պարունակում են սպանության, ինչպես նաև առողջությանը ծանր վնաս պատճառելու*

*սպառնալիք: Ավելին՝ այդ սպառնալիքն Ա.Այդինյանի և Ա.Չապուխյանի կողմից ընկալվել է որպես իրական, քանի որ Ա.Չապուխյանը փախուստի է դիմել, իսկ Ա.Այդինյանը, ձեռքերը վեր պահած, փորձել է հանդարտեցնել իրավիճակը, իսկ հետագայում այն կանխելու նպատակով կրակ է արձակել:*

*Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Ա.Խոջումյանի գործողությունները կարող են դիտվել որպես անհրաժեշտ պաշտպանություն, ապա Վերաքննիչ դատարանի համար դա ընդունելի չէ, քանի որ արդեն իսկ հաստատված է, որ ամբաստանյալի սկզբնական կրակոցից հետո Ա.Այդինյանը և Ա.Չապուխյանը մեքենայից դուրս են եկել և որևէ գործողություն չեն կատարել, այլ, ընդհակառակը, Ա.Չապուխյանը փախուստի է դիմել, իսկ Ա.Այդինյանը ձեռքերը վեր է պարզել: Այսինքն՝ Ա.Խոջումյանի կրակոցները շարունակվել են նաև այն իրավիճակում, երբ վերջինիս ակնհայտ է եղել, որ Ա.Այդինյանը և Ա.Չապուխյանը մեքենայից իջնելուց հետո որևէ հանրորեն վտանգավոր գործողություն չեն կատարել:*

*Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ա.Խոջումյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներին:*

*(...) Տվյալ դեպքում քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տուժող Ա.Այդինյանն իրեն սպառնալիքներ տալու առումով երբևէ ամբաստանյալի դեմ բողոք չի ներկայացրել: Ավելին՝ նման բողոք չի ներկայացրել նաև Ա.Չապուխյանը:*

*Վերոնշյալի արդյունքում դատարանը գալիս է այն եզրահանգման, որ տուժողի բողոքի բացակայության հիմքով Անդրանիկ Խոջումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 131-184):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանը, գործով ձեռք բերված ապացույցներին տալով կամայական գնահատական, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոքաբերը վերլուծել է Վճռաբեկ դատարանի՝ ապացույցների գնահատման վերաբերյալ թիվ ԵՔԴ/0632/01/08, թիվ ՇԴ/0126/01/12, թիվ ԵԿԴ/0168/01/12, ինչպես նաև խուլիգանության հանցակազմի վերաբերյալ թիվ ԱՎԴ/0014/01/11, թիվ ՎԲ-223/06, սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի հանցակազմի վերաբերյալ թիվ ԿԴ1/0025/01/12 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները և գտել, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով ապացույցները յուրովի է գնահատել՝ արդյունքում ամբաստանյալ Ա.Խոջումյանի

կողմից կատարված արարքին տրված քրեաիրավական որակման վերաբերյալ գալով սխալ եզրահանգման:

Ըստ բողոքի հեղինակի՝ ձեռք բերված ապացույցներով հաստատվել է, որ Ա.Խոջումյանը չնչին առիթով զենքի գործադրմամբ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որպիսի պայմաններում ամբաստանյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնազուրկ են և չեն բխում գործի նյութերից: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Ա.Խոջումյանը բացահայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորել «Իջևանատուն» համալիրի աշխատակիցների և այնտեղ գտնվող անձանց նկատմամբ, իրեն ամրակցված «Սայգա» տեսակի ինքնաձիգով շուրջ 30 մարտական փամփուշտներով կրակոցներ է արձակել նշված համալիրի տարածք մտնող ավտոմեքենայի դիմաց, գետնին և օդ, ապա կրակոցները շարունակել որսորդական հրացանով՝ իր գործողություններով խախտելով հասարակական նշանակության օբյեկտի բնականոն աշխատանքը և վախի զգացում առաջացնելով ինչպես դրա աշխատակիցների, այնպես էլ Ա.Այդինյանի և Ա.Չապուխյանի մոտ:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբաստանյալ Ա.Խոջումյանի արարքը վերաորակելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը) և նույն օրենսգրքի 258-րդ հոդվածով (խուլիգանությունը) նախատեսված հանցակազմերի հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Ա.Խոջումյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների առկայության և նույն օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշների բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի համար, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել:

Նշված հանցակազմին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Վ.Խաչատրյանի* գործով կայացված որոշմամբ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) [Մ]պանության սպառնալիքի հետ մեկտեղ [ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածը] պատասխանատվություն է նախատեսում առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու իրական սպառնալիքի համար: Այսինքն՝ նշված հանցակազմի օբյեկտը հավաքական բնույթ է կրում, այն բաղկացած է մարդու կյանքի և առողջության, ինչպես նաև սեփականության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից:*

*Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքով: Սպառնալիքը մարդու նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որը նպատակ է հետապնդում վախեցնել նրան, առաջացնել տագնապի, սեփական անվտանգության կամ գույքի համար անհանգստության զգացում: Այս հանցակազմի իմաստով սպառնալիքի արտահայտման եղանակները կարող են տարբեր լինել, ինչն արարքի որակման համար նշանակություն չունի: Այն կարող է արտահայտվել բանավոր, գրավոր, որոշակի գործողություններով (օրինակ՝ զենքը ցուցադրաբար թափահարելով):*

*(...) Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով արգելված արարքը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք տալով՝ տուժողի վրա հոգեբանական ազդեցություն է գործադրում՝ վերջինիս մոտ առաջացնելով վախի, անվստահության զգացողություն, նախատեսում և ցանկանում է նշված հետևանքների առաջացումը: Հանցագործության շարժառիթները կարող են տարբեր լինել՝ վրեժ, խանդ, անձնական անբարյացակամ հարաբերություններ և այլն (...)»* (տե՛ս *Վլադիկ Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ/0025/01/11 որոշման 17-19-րդ կետերը):

13. Վերահաստատելով և զարգացնելով *Վ.Խաչատրյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված արարքով տուժողին պատճառվում է որոշակի հոգեբանական վնաս, որի նպատակը վերջինիս մոտ վախի զգացում առաջացնելն է: Հանցագործության շարժառիթները յուրաքանչյուր դեպքում կարող են տարբեր լինել (խանդի, վրեժի, խուլիգանական և այլն) և, թեև արարքի որակման համար նշանակություն չունեն, սակայն դրանց բացահայտումը կարևոր է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված արարքն այլ հանցակազմերից (այդ թվում՝ խուլիգանությունից) տարանջատելու համար:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի

գույք ոչնչացնելու սպառնալիք ներկայացնելով: Վերոնշյալ գործողությունները կատարելու սպառնալիքը, սակայն, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք այլ հանցակազմերում նախատեսված է որպես օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ մաս կամ հանցակազմն առավել որակյալ դարձնող հանգամանք (ընդ որում, սպառնալիքը՝ որպես հոգեբանական հարկադրանքի ձև, տարբեր հանցակազմերում տարբեր կերպ է նկարագրված՝ *«սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք»* (ՀՀ քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածի 2-րդ մաս, 340-րդ հոդվածի 2-րդ մաս, 347-րդ հոդվածի 1-ին մաս և այլն), *«կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիք»* (ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 3-րդ մաս, 175-րդ հոդվածի 1-ին մաս, 183-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ և այլն) կամ *«բռնություն գործադրելու սպառնալիք»* (ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ կետ, 165-րդ հոդվածի 3րդ մաս, 182-րդ հոդվածի 1-ին մաս, 258-րդ հոդվածի 2-րդ մաս և այլն)): Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել՝ որ դեպքում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նկարագրված արարքը ինքնուրույն քրեաիրավական գնահատական ստանում, որ դեպքում՝ կլանվում այն հանցակազմով, որի մասն է կազմում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը:

Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վերոնշյալ գործողությունները կատարելու սպառնալիքը մեկ այլ հանցագործության բաղկացուցիչ մասն է, ապա որակվում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով կամ հանցագործությունների համակցության կանոններով, այլ միայն այն նորմով, որը պարունակում է հանցագործության հատկանիշների առավել ամբողջական նկարագրություն: Սինչդեռ, եթե սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքն այլ հանցակազմի բաղկացուցիչ մաս չէ, ապա կատարված արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը[ն է], որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով*

*(...):*

*2. Նույն արարքը, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով (...),*

*(...):*

*4. Սույն հոդվածի երկրորդ (...) մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ (...)»:*

Խուլիգանության հանցակազմի պարտադիր հատկանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավուն-

քի համաձայն՝ խուլիգանության հիմնական հանցակազմն ունի մեկ օբյեկտ՝ **այն հասարակական հարաբերությունները, որոնք կազմում են հասարակական կարգի բովանդակությունը,** մինչդեռ խուլիգանության որակյալ հանցակազմերը երկօբյեկտ են, որոնց դեպքում որպես պարտադիր լրացուցիչ օբյեկտ հանդես են գալիս անձի անձեռնմխելիության, պատվի և արժանապատվության, առողջության, քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Օբյեկտիվ կողմից խուլիգանությունը դրսևորվում է **հասարակական նշանակության վայրերում,** ինչպես նաև հասարակական նշանակություն չունեցող վայրերում, որտեղ, սակայն, **առկա է հանրություն,** սահմանված կարգի կոպիտ խախտման մեջ, որն արտահայտվում է այդ վայրերում գտնվող հասարակության անդամների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Հասարակական կարգի **ոչ կոպիտ** խախտումը, որը թեև արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով: Նույն կերպ՝ վկայակոչված հոդվածով ենթակա չէ որակման հասարակական կարգի այն կոպիտ խախտումը, որը **չի դրսևորվել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:**

Կոպիտ խախտումն արտահայտվում է նրանում, որ անձի կատարած գործողությունների հետևանքով հասարակության անդամների մեջ առաջանում է զայրույթ, վրդովմունք, կամ նրանց անհարմարություն կամ լուրջ անհանգստություն է պատճառվում, կամ առաջանում է վախի զգացում իրենց կյանքի, առողջության, գույքի պահպանության կապակցությամբ: Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումն արտահայտվում է մարդկային համակեցության կանոնների նկատմամբ ակնհայտ արհամարհանք դրսևորելու, հասարակական վայրերում վարքագծի կանոնները ցուցադրական կերպով անտեսելու, շրջապատի մարդկանց և կոլեկտիվին հակադրվելու ձևով:

Սուբյեկտիվ կողմից խուլիգանություն կատարող անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հասարակության նկատմամբ, այլև ցանկանում է դա: Խուլիգանությունը կատարվում է **խուլիգանական դրդումներով,** որը դրսևորվում է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ձգտմամբ:

Խուլիգանության վերաբերյալ գործերով կարևոր է տուժողի վարքագիծը հաշվի առնելը: Մասնավորապես, եթե խուլիգանական գործողությունները կատարվել են կենցաղային հողի վրա առաջացած վեճի արդյունքում, ապա նախ անհրաժեշտ է պարզել, թե ով է հանդիսացել վեճը նախաձեռնողը: Արարքը չի կարող որակվել որպես խուլիգանություն, եթե վիճաբանությունն առաջանում է տուժողի ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով և,

հետևաբար, հանցանք կատարած անձի մոտ բացակայում են խուլիգանական դրդումները: Նման պարագայում արարքը կարող է խուլիգանություն որակվել միայն այն դեպքում, **երբ խուլիգանական դրդումներն առաջանան հետագայում, և արարքը վերածի խուլիգանության** (խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների վերաբերյալ մանրամասն տե՛ս *Շահեն Հախվերդյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԴ/0014/01/11 որոշումը):

14.1. Ինչ վերաբերում է խուլիգանության որակյալ հանցակազմերին, մասնավորապես՝ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ իրականացված խուլիգանության առկայությանը, ապա Վճռաբեկ դատարանը *Ա.Խլղաթյանի և Ա.Աթաբեկյանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրել է հետևյալը՝ *«(...) [Խ]ուլիգանությունը ծանրացնող հանգամանքներով որակելու համար անհրաժեշտ է հավաստել, որ կատարված արարքի արդյունքում, բացի հանցագործության հիմնական անմիջական օբյեկտից՝ հասարակական կարգի պաշտպանության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից, խախտվել են նաև օրենքով պաշտպանվող այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են անձի կյանքը, առողջությունը, քաղաքացիների ու կազմակերպությունների գույքային շահերը և այլն: (...):*

*(...) ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե վերջինիս արարքում առկա են նույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նկարագրված հանցակազմի հատկանիշները, հետևաբար զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության ծանրացնող հանգամանքը հանցավորին կարող է մեղսագրվել, եթե նշված առարկաների օգտագործումը զուգորդվել է՝*

*ա) բռնություն գործադրելով կամ*

*բ) բռնություն գործադրելու սպառնալիքով կամ*

*գ) անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելով:*

*(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ (...) զենքի կամ այլ առարկաների գործադրմամբ բռնության սպառնալիքն անձի նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որն արտահայտվում է հանցավորի կողմից ֆիզիկական բռնություն գործադրելու վերաբերյալ իր մտադրությունը բանավոր խոսքի կամ տարաբնույթ գործողությունների միջոցով տուժողին հայտնելով՝ զուգորդված զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկաները ցուցադրելով, տարբեր մարմնաշարժումներով, ժեստերով և այլն: Ընդ որում, սպառնալիքը պետք է լինի իրական, այսինքն՝ տուժողը բավարար հիմքեր ունենա վախենալու դրա իրականացումից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սպառնալիքի իրական լինելը պետք է որոշվի հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների համակողմանի գնահատման*

*արդյունքում՝ հաշվի առնելով ինչպես տուժողի սուբյեկտիվ ընկալումը, այնպես էլ օբյեկտիվ իրադրությունը (...):*

*Ինչ վերաբերում է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ անճանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելուն, ապա հարկ է նկատել, որ այն թեև ուղղված չէ որևէ կոնկրետ անձի նկատմամբ բռնություն կամ բռնության սպառնալիք գործադրելուն, այնուամենայնիվ իրականացվում է այնպիսի եղանակով, որը վտանգում է շրջապատում գտնվող անճանց կյանքն ու առողջությունը: Մասնավորապես, որպես այդպիսին կարող են գնահատվել հանրային վայրերում անկանոն կրակոցներ արձակելը, գույքը հանրավտանգ, այսինքն՝ այնպիսի եղանակով ոչնչացնելը կամ վնասելը, որն իրական վտանգ է ներկայացնում մարդու կյանքի կամ առողջության համար, ինչպես նաև անճանց կյանքն ու առողջությունը վտանգի տակ դնող զենքի կամ այլ առարկաների գործադրման այլ դեպքերը»* (տե՛ս *Ազատ Խլղաթյանի և Աշոտ Աթաբեկյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՏԴ/0085/01/14 որոշման 15-17-րդ կետերը):

15. Հիմք ընդունելով սույն որոշման 12-14.1-րդ կետերում արտահայտված իրավական դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է նրա արարքում նախևառաջ **հավաստել խուլիգանության հիմնական հանցակազմի առկայությունը,** այնուհետև՝ զենքի կամ այլ առարկաների գործադրմամբ այլոց նկատմամբ **բռնություն գործադրելու** կամ **բռնություն գործադրելու սպառնալիքի** կամ **անճանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծող գործողություններ կատարելու հանգամանքը:** Հետևաբար, եթե խուլիգանության հիմնական հանցակազմն առկա է, իսկ խուլիգանական բուն գործողությունների կատարման ընթացքում ներկայացված բռնություն գործադրելու սպառնալիքը հաստատվում է, ապա այդ սպառնալիքը խուլիգանության որակյալ հանցակազմի բաղկացուցիչ մասն է հանդիսանում (նկարագրված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ եթե զուգորդվել է նաև զենքի կամ այլ առարկաների գործադրմամբ՝ նաև նույն հոդվածի 4-րդ մասով), կլանվում է դրանով և ինքնուրույն քրեաիրավական որակում չի ստանում:

Սինչդեռ սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքը, եթե նույնիսկ տրվել է խուլիգանական դրդումներով, սակայն հասարակական կարգի կոպիտ խախտումով և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով չի զուգորդվել, վկայում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության մասին:

16. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Խոջումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առա-

ջաղրվել այն բանի համար, որ նա Իջևան քաղաքում գործող «Իջևանատուն» ռեստորանահյուրանոցային համալիրի տարածքում անճանց նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքի զուգորդմամբ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հասարակության նկատմամբ, ինչն արտահայտվել է համալիրի բակ եկած Ա.Այդինյանի և Ա.Չապուխյանի ուղղությամբ զենքով՝ օրինական կերպով իրեն ամրակցված և հրազեն հանդիսացող «Սայգա» տեսակի 7.62 մմ տրամաչափի ինքնաձիգով կրակոցներ արձակելով, որն էլ իրական վտանգ է ստեղծել նրանց կյանքի և առողջության համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռով արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Խոջումյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ճիշտ է որակված, որի համար նա ենթակա է պատժի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է, որ վիճաբանությունը հիմնականում պայմանավորված է եղել Ա.Այդինյանի կողմից Ա.Խոջումյանին հայհոյելու, ագրեսիվ վարքագիծ դրսևորելու և արդյունքում՝ պարզաբանումներ ստանալու նպատակով ռեստորանային համալիր ուղևորվելու հանգամանքով՝ ընդգծելով, որ քրեական գործում առկա չեն խուլիգանության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առկայության մասին վկայող բավարար տվյալներ: Արդյունքում, հաշվի առնելով, որ Ա.Խոջումյանն ինքնաձիգից բազմաթիվ կրակոցներ է արձակել Ա.Այդինյանի և Ա.Չապուխյանի մեքենայի դիմացի և կողքի հատվածներում, և կրակոցները շարունակվել են նաև նրանց մեքենայից դուրս գալուց հետո, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ ամբաստանյալի գործողությունները պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված՝ սպանության, ինչպես նաև առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքի հատկանիշները (տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների, ինչպես նաև ամբաստանյալներ Ա.Խոջումյանի ու Ա.Ավետիսյանի, տուժող Ա.Այդինյանի, վկաներ Ա.Ճաղարյանի, Ա.Քոչարյանի, Ա.Չապուխյանի ու Հ.Խեչյանի ցուցմունքների (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը) վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

- Ա.Խոջումյանի և Ա.Այդինյանի վիճաբանությունը սկսվել է անշարժ գույքի փաստաթղթերի տրամադրման հետ կապված Հ.Խեչյանի և Գետահովիտ գյուղի գյուղապետի միջև առաջացած խնդրի պարզաբանումից,

- Ա.Այդինյանն իր համագյուղացի Ա.Չապուխյանի հետ գնացել է «Իջևանատուն» համալիր՝ Ա.Խոջումյանի առաջարկով վերջինիս հանդիպելու,

- Ա.Խոջումյանը նախապես վերցրել է ինքնաձիգը և համալիրի դարպասների մոտ սպասել Ա.Այդինյանին,

- Ա.Չապուխյանի մեքենայի՝ համալիրի դարպասներից ներս մտնելուն պես Ա.Խոջումյանն ինքնաճիզից անկանոն կրակահերթ է արձակել, այդ թվում՝ տվյալ մեքենայի ուղղությամբ,

- Ա.Չապուխյանն ու Ա.Այդինյանը բացականչություններով իջել են մեքենայից: Ընդ որում, Ա.Չապուխյանը թաքնվել է, իսկ Ա.Այդինյանը, ձեռքերը վերև բարձրացնելով, պահանջել է դադարեցնել կրակը,

- Ա.Խոջումյանը շարունակել է կրակոցներ արձակել, որի ընթացքում Ա.Այդինյանը մեքենայից վերցրել է իր ատրճանակը և օդ կրակել,

- Ա.Խոջումյանն Ա.Այդինյանից և Ա.Չապուխյանից պահանջել է առաջ չգալ, այլապես՝ *«կենդանի մարդ չի դուրս գա»*,

- Ա.Խոջումյանի կողմից իրականացված կրակոցների ժամանակ համալիրի մոտակայքով անցնող մեքենաները դանդաղեցրել են երթևեկությունը, ապա՝ շարժվել,

- Ա.Խոջումյանն իր համալիրի աղմինիստրատոր Ա.Ճաղարյանի միջոցով արգելել է շենքից դուրս գալ աշխատակիցներին, ովքեր ներսում սպասել են կրակոցների ավարտին,

- Ա.Խոջումյանն իր գործողությունները դադարեցրել է այն ժամանակ, երբ Ա.Այդինյանը փախուստի է դիմել:

18. Սույն որոշման 16-17-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Խոջումյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասից վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով, անտեսել է վերջինիս արարքում խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առկայության մասին վկայող, գործով հաստատված փաստական տվյալների համակցությունը:

Այսպես՝ Ա.Խոջումյանը հասարակական նշանակության վայրում՝ «Իջևանատուն» ռեստորանահյուրանոցային համալիրի տարածքում, կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է Ա.Չապուխյանի մեքենայի՝ համալիրի դարպասներից ներս մտնելուն պես ինքնաճիզից անկանոն կրակահերթ արձակելով, այդ թվում՝ տվյալ մեքենայի ուղղությամբ: Նշված գործողությունների արդյունքում լուրջ անհանգստություն և վախի զգացում է առաջացել այնտեղ գտնվող անձանց մոտ, ինչը հաստատվել է թե՛ վկաներ Ա.Չապուխյանի ու Ա.Ճաղարյանի և թե՛ տուժող Ա.Այդինյանի ու վկա Ա.Քոչարյանի դատաքննական ցուցմունքներով: Մասնավորապես, վկա Ա.Չապուխյանը **նշել է մայրուղով անցնող մեքենաների՝ իրենց ընթացքը դանդաղեցնելու,** վկա Ա.Ճաղարյանը՝ համալիրի **աշխատակիցների ելքն արգելելու** վերաբերյալ Ա.Խոջումյանի կողմից հրահանգ ստանալու, տուժող Ա.Այդինյանը՝ **վախի ազդեցության տակ Ա.Չապուխյանի՝ մեքենայից իջնելու և թաքնվելու,** վկա Ա.Քոչարյանը՝ իրեն ու Լիդիա Գալստյանին Ա.Ճաղարյանի միջոցով տրված՝ **շենքի ներսում մնալու պահանջի մասին:** Վճռա-

բեկ դատարանն ընդգծում է, որ այս պայմաններում Վերաքննիչ դատարանի փաստարկներն առ այն, որ քրեական գործում առկա չեն բավարար տվյալներ ռեստորանային համալիրի աշխատակիցների բնականոն աշխատանքը, պատահական անցորդների և հասարակության անդորրը Ա.Խոջումյանի գործողությունների արդյունքում խախտվելու կապակցությամբ, անհիմն են և հերքվում են գործով հաստատված փաստական տվյալներով: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված այն հանգամանքներին, որ դեպքը տեղի է ունեցել գրեթե կեսգիշերին՝ ժամը 23:00-ից մինչև 23:30-ի սահմաններում, ռեստորանային համալիրի ներսի հատվածում, իսկ ռեստորանային համալիրը գտնվել է Իջևան-Դիլիջան ավտոճանապարհի 4-րդ կիլոմետրի ձախակողմյան հատվածում, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դրանք որևէ նշանակություն չեն կարող ունենալ խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունը հերքելու համար:

18.1. Անդրադառնալով ամբաստանյալ Ա.Խոջումյանի արարքում խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք նույնպես չեն բխում սույն քրեական գործի նյութերից: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վիճաբանությունը տեղի է ունեցել Ա.Խոջումյանի մտերիմ Հ.Խեչյանի անշարժ գույքի փաստաթղթերի հետ կապված չնչին առիթով, իսկ դատարանի այն հետևությունը, որ Ա.Խոջումյանը վիճաբանության տրամադրվածություն չի ունեցել, հերքվում է ինչպես Հ.Խեչյանի դատաքննական ցուցմունքներով, այն է՝ մինչև Ա.Չապուխյանի ու Ա.Այղինյանի համալիր գալը Ա.Խոջումյանը վազել է վերև, վերցրել ավտոմատը, կանգնել դարպասներից քիչ հեռու ու սպասել նրանց, այնպես էլ՝ Ա.Այղինյանի և Ա.Չապուխյանի տված ցուցմունքներով (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նույնիսկ եթե նշված վիճաբանության նախաձեռնողը եղել է տուժողը, և ամբաստանյալի մոտ ի սկզբանե խուլիգանական դրդումները բացակայել են, այնուամենայնիվ վերջինիս հետագա գործողությունները վերաճել են խուլիգանության, քանի որ **լիցքավորված ինքնաձիգը վերցնելով,** Ա.Չապուխյանի մեքենայի՝ համալիր **մուտք գործելուն պես այն գործադրելով, Ա.Չապուխյանի թաքնվելով,** իսկ Ա.Այղինյանի՝ **ձեռքերը վերև բարձրացնելով ու կրակը դադարեցնելու՝ իրեն ուղղված կոչերն անտեսելով**՝ Ա.Խոջումյանը փորձել է ընդգծել սեփական անձի առավելությունը և ցույց տալ իր գերակայությունը՝ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ: Ընդ որում, վերոնշյալ հանգամանքն իր որոշմամբ հաստատել է նաև Վերաքննիչ դատարանը՝ արձանագրելով, որ *«(…) Արսեն Չապուխյանը վախի ազդեցության տակ բացել է մեքենայի դուռը, **նետվել է ավտոմեքենայից և թաքնվել** համալիրի պահակատան հետնամասում, իսկ Աշոտ Այղինյանը, իջնելով ավտոմեքենայից, **ձեռքերը վեր պահած փորձել է մոտե-***

***նալ Ամղրանիկ Խոջումյանին և հորդորել,*** *որ դադարեցնի կրակոցները,* ***սակայն վերջինը շարունակել է (…)»*** (տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը):

19. Այսպիսով, սույն որոշման 18-18.1-րդ կետերում վերլուծված փաստական տվյալները վկայում են ամբաստանյալ Ա.Խոջումյանի արարքում խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առկայության մասին: Միևնույն ժամանակ Ա.Խոջումյանի կողմից հնչեցված բռնություն գործադրելու սպառնալիքը (Ա.Այդինյանից և Ա.Չապուխյանից պահանջել է առաջ չգալ, այլապես սպառնալով, որ «կենդանի մարդ չի դուրս գա») և զենքի գործադրումը հիմք են վերջինիս արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խուլիգանության որակյալ հանցակազմի առկայությունը հավաստելու համար:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Խոջումյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասից վերաորակելով նույն օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, պատշաճ վերլուծության և գնահատականի չի արժանացրել սույն գործի փաստական տվյալները՝ նյութաիրավական նորմերի մեկնաբանման և կիրառման հարցում հանգելով սխալ եզրահանգման: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը՝ սպանության կամ առողջությանը ծանր վնաս հասցնելու սպառնալիքը, ամբողջությամբ ընդգրկվել է ամբաստանյալի՝ նույն օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքում և հանդիսացել դրա բաղկացուցիչ մասը: Հետևաբար խուլիգանության հանցակազմի առկայության պայմաններում ներկայացված սպառնալիքին չէր կարող ինքնուրույն քրեաիրավական գնահատական տրվել, և կատարված արարքը պետք է որակվեր այն նորմով, որը հանցագործության հատկանիշների ամբողջական նկարագրությունն էր պարունակում, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

20. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Խոջումյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների առկայության և նույն օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշների բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

21. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Խոջումյանի կատարած արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասից վերաորակելով նույն օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ և 137-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումը բեկանելու և քրեական գործն այդ մասով նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և քննարկման առարկա դարձնի նաև պատժի մասով վերաքննիչ բողոքում բարձրացված հարցերը՝ դրա կապակցությամբ օրենքով սահմանված կարգով հանգելով համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Անդրանիկ Լաղիկի Խոջումյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Անդրանիկ Լաղիկի Խոջումյանի նկատմամբ խափանման միջոց ընտրել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**35.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԴ/0008/13/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ | |
| պաշտպան | Ի.ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| դատապարտյալ | Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Աստղիկ Մարատի Համբարձումյանի և Նաիրա Թոմիկի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ի որոշման դեմ դատապարտյալ Ա.Համբարձումյանի և դատապարտյալ Ն.Առաքելյանի պաշտպան Ի.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճռով Աստղիկ Մարատի Համբարձումյանը մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով Ա.Համբարձումյանը դատապարտվել է ազատազրկման՝ 7

(յոթ) տարի ժամկետով՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ, 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Համբարձումյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ:

Նույն դատավճռով Նաիրա Թոմիկի Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով, 266-րդ հոդվածի 3-րդ - մասի 2-րդ կետով և 268-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով Ն.Առաքելյանը դատապարտվել է ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ, 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ, 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ն.Առաքելյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 11 (տասնմեկ) տարի ժամկետով՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի հիման վրա դատավճռով նշանակված պատժին լրիվ գումարվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հունվարի 26-ի դատավճռով նշանակված 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, և Ն.Առաքելյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 12 (տասներկու) տարի ժամկետով՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Գոհար Կարապետի Հակոբյանը, Վարդան Ռաֆիկի Խաչատրյանը, Արթուր Կոլյայի Ղուկասյանը և Ալեքսանդր Միխայելի Ղարագյոզյանը:

Հիշյալ դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ:

2. 2016 թվականի հուլիսի 6-ին ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալներ Ա.Համբարձումյանը և Ն.Առաքելյանը դիմումներ են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերանայել նույն դատարանի՝ 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը՝ նկատի ունենալով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի մայիսի 16-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ նշված դիմումներով գործերը միացվել են մեկ վարույթում և գործին շնորհվել է ՇԴ/0008/13/16 համարը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ դատապարտյալներ Ա.Համբարձումյանի և Ն.Առաքելյանի դիմումնե-

րը բավարարվել են, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1-122-07 դատավճիռը նրանց մասով վերաանայվել է:

Մասնավորապես, դատապարտյալ Ա.Համբարձումյանը ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված 7 (յոթ) տարի ժամկետով ազատազրկում՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ պատժից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը՝ 9 (ինը) տարի ժամկետով ազատազրկումը՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ թողնվել է անփոփոխ: Դատապարտյալ Ա.Համբարձումյանը անհապաղ ազատ է արձակվել դատական նիստերի դահլիճում՝ պատիժը կրած լինելու պատճառաբանությամբ:

Դատապարտյալ Ն.Առաքելյանը ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված 7 (յոթ) տարի ժամկետով ազատազրկում՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ պատժից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը՝ 10 (տաս) տարի ժամկետով ազատազրկումը՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ և 268-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժը՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը թողնվել է անփոփոխ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակի գումարելու միջոցով, Ն.Առաքելյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատժին լրիվ գումարվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հունվարի 26-ի դատավճռով նշանակված՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, և Ն.Առաքելյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 11 (տասնմեկ) տարի 3 (երեք) ամիս ժամկետով՝ անձնական ամբողջ գույքի բռնագրավմամբ:

3. Դատախազ Կ.Գաբրիելյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, բեկանել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշումը՝ մերժելով դատապարտյալներ Աստղիկ Համբարձումյանի և Նաիրա Առաքելյանի դատավճիռը համապատասխանեցնելու մասին ներկայացրած դիմումները:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ա.Համբարձումյանի և դատապարտյալ Ն.Առաքելյանի պաշտպան Ի.Պետրոսյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Աստղիկ Համբարձումյանը դատապարտվել է այն բանի համար, որ *«հաստատապես իմանալով, որ ընկերուհին՝ Նաիրա Առաքելյանը, զբաղվում է թմրամիջոցների իրացմամբ, դրանք Ռուսաստանի Դաշնությունից փոխադրելու նախնական համաձայնության գալով նրա հետ, յուրաքանչյուր անգամ 500 ԱՄՆ դոլար ստանալով՝ 2006թ. հոկտեմբերից Սարատով քաղաքում բնակվող՝ Նաիրա Առաքելյանի ազգական Արտակ Արզումանյանից ձեռք է բերել թմրամիջոցներ, որպիսիք մաքսային հսկողությունից թաքցնելով՝փոխադրել՝ Երևան և հանձնել Նաիրա Առաքելյանին: Հիշյալ եղանակով և կարգով՝ 2007 թվականի մայիսի 24-ին Աստղիկ Համբարձումյանը հերթական անգամ Արտակ Արզումանյանից ձեռք է բերել պահպանակի մեջ լցված առանձնապես խոշոր չափերի՝ 165գ «հերոին» տեսակի թմրամիջոց, թաքցրել հեշտոցի մեջ, ապա հաջորդ օրը Մոսկվա-Երևան չվերթով մաքսանենգ ճանապարհով այն փոխադրել է Երևան և հանձնել Նաիրա Առաքելյանին»* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 34):

5.1. Նաիրա Առաքելյանը դատապարտվել է այն բանի համար, որ *«նախնական համաձայնության գալով ընկերուհու՝ գործով ամբաստանյալ Աստղիկ Համբարձումյանի և ՌԴ Սարատով քաղաքում բնակվող նախկին ամուսնու եղբայր Արտակ Արզումանյանի հետ, վերջինից ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերի «հերոին» տեսակի թմրամիջոցներ: Յուրաքանչյուր անգամ Աստղիկ Համբարձումյանին 500 ԱՄՆ դոլար վճարելով՝ նրա միջոցով, հեշտոցում թաքցրած, մաքսանենգ ճանապարհով 2006թ. հոկտեմբերից մինչև 2007թ. մայիսի 25-ն ընկած ժամանակահատվածում տարբեր չվերթներով, ավելի քան 10 անգամ Երևան է փոխադրել առանձնապես խոշոր չափերի «հերոին» տեսակի թմրամիջոց: Ստանալով թմրամիջոցի հերթական խմբաքանակը՝ յուրաքանչյուր անգամ Նաիրա Առաքելյանն այն փոխադրել է Գյումրի, պահել, այնուհետև ինչպես անձամբ, այնպես էլ նախնական համաձայնության գալով գործով ամբաստանյալ Գոհար Հակոբյանի հետ, նույն թվականի դեկտեմբերից նրա միջոցով իրացրել է Վարդան Խաչատրյանին, Ալեքսանդր Ղարագյոզյանին, Արթուր Ղուկասյանին և այլոց: Նաիրա Առաքելյանը նշված թմրամիջոցների վաճառքից ստացած եկամուտներն օգտագործել է անձնական կարիքների համար, իսկ մնացածը «Առեքսիմբանկ» ՓԲ ընկերության միջոցով տարբեր ժամանակներում մասմաս ընդամենը 17.000 ԱՄՆ դոլար, փոխանցել է Արտակ Արզումանյանին: Նույն եղանակով և կարգով՝ 2007 թվականի մայիսի 25-ին Նաիրա Առաքելյանն Աստղիկ Համբարձումյանից ստացել է հերթական անգամ Արտակ Արզումանյանից ձեռք բերած և մաքսային հսկողությունից թաքցրած Մոսկվա-Երևան չվերթով փոխադրած առանձնապես խոշոր չափերի՝ 165գ «հերոին» տեսակի թմրամիջոց, որը պահել և փոխադրել է Գյումրի: Նույն օրը նա մերկացվել է կատարած հանցագործության մեջ, այն է՝ իրավապահները նշված թմրամիջոցը հայտնաբերել են նրա պայուսակում: Բացի այդ, առանց իրաց-*

*նելու նպատակի, Նաիրա Առաքելյանը գործով չպարզված հանգամանքներում ձեռք է բերել և պահել մանր չափերի՝ 0,6 գ «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը 2007թ. մայիսի 31-ին բնակարանում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է նրա սպորտային անդրավարտիքի գրպանում»* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 34):

6. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ արձանագրել է. *«(...) 25.06.2016թ. ուժի մեջ մտած ՀՕ-83-Ն՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը վերացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով սահմանված արարքի հանցավորությունը, այսինքն՝ նախքան Աստղիկ Համբարձումյանի և Նաիրա Առաքելյանի վերաբերյալ նշանակված պատժի կրման ավարտը, ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ապաքրեականացվել է: Հետևաբար տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններից բխում է, որ Ա.Համբարձումյանի և Ն.Առաքելյանի արարքի այդ մասում (165 գրամ քաշով հերոինի տեսակի թմրամիջոցը 2007թ. մայիսի 24-ին մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, Մոսկվա-Երևան չվերթով տեղափոխել է Երևան)՝ հանցակազմ չկա:*

*(...)*

*Այսպիսով, դատարանը նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի հանցավորությունը վերացվել է, գտնում է, որ դատապարտյալներ՝ Աստղիկ Մարատի Համբարձումյանի և Նաիրա Թոմիկի Առաքելյանի դիմումները պետք է բավարարել և իրենց վերաբերելի մասով վերանայել Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի՝ թիվ 1-122-07 քրեական գործով 25.09.2007թ. կայացված դատավճիռը:*

*(...)»* (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 36-38):

6.1. Վերաքննիչ դատարանը, **միաձայն կազմով** քննության առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը, իր որոշմամբ նշել է. *«[Տ]վյալ դեպքում առկա չէ այնպիսի իրավիճակ, երբ դատապարտյալների արարքների արդյունքում վնաս պատճառված հասարակական հարաբերությունն այլևս քրեաիրավական պաշտպանության ենթակա չլինի և նման օբյեկտի դեմ ուղղված ոտնձգությունը հակաիրավական չլինի, այլ ընդհակառակը՝ նշված հասարակական հարաբերությունը՝ բնակչության առողջության պահպանությունը, դարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 267.1 հոդվածով նախատեսված հանցակազմի առանցքային օբյեկտ:*

*Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը (...) գտնում է, որ [դատախազի] վերաքննիչ բողոքը՝ դատապարտյալներ Նաիրա Առաքելյանի և Աստղիկ Համբարձումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված ազատազրկման ձևով պատժից ազատելն անթույլատրելի ճանաչելու մասով ենթակա է բավարարման»* (տե՛ս նույթեր, հատոր 2-րդ, թերթեր 79-80):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

7. Բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 72-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ, 72-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածների պահանջները, բողոքարկվող դատական ակտի պատճառաբանությունները հակասում են ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԴՈ-1000 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

7.1. Մանսավորապես, բողոքի հեղինակները նշել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը ՀՀ Ազգային ժողովի՝ 2016 թվականի հունիսի 7-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժը կորցրել է, որն իրենից ենթադրում է, որ նշված նորմի գործողությունը դադարեցվել է: Սինչդեռ Վերաքննիչ դատարանը, խախտելով վկայակոչված նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պահանջները, չի կիրառել հետադարձ ուժի կանոնը, անհիմն հետևություն անելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը փոխարինվել է մեկ այլ՝ 267.1.-րդ հոդվածով:

7.2. Բողոքի հեղինակները նշել են նաև, դատախազը որպես պետության անունից հանդես եկող պաշտոնատար անձ չի կարող մեկ հարցի վերաբերյալ ունենալ երկակի մոտեցում: Տվյալ դեպքում դատապարտյալների դիմումների քննության ժամանակ դատախազ Բ.Պողոսյանը դիմումների դեմ չի առարկել, իսկ Առաջին ատյանի դատարանի կողմից դիմումները բավարարվելուց հետո դատախազ Կ.Գաբրիելյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որն էլ Վերաքննիչ դատարանը մասնակի բավարարել է: Ուստի, բողոքաբերների կարծիքով, գործի քննության ժամանակ ներկայացված դիմումին դատախազի չառարկելու դեպքում այդ մասով վերաքննիչ բողոք բերելու հարցի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

8. Հիմք ընդունելով նշվածը՝ բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշմանը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

9. Սույն գործի փաստերի առանձնահատկություններով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ Վերաքննիչ դատարանում դատախազի ներկայացրած վերաքննիչ բողոքը միանձնյա դատական կազմով քննելու իրավաչափության հարցին, քանի որ վերջինով է պայմանավորված բողոքի փաստարկներն ըստ էության քննարկման առարկա դարձնելու Վճռաբեկ դատարանի իրավասությունը:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք դատապարտյալներ Ա.Համ-

բարձումյանի և Ն.Առաքելյանի դիմումները բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կազմով քննության առնելը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետը սահմանում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են համարվում *առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը, այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:*

Վերոնշյալ իրավանորմի առնչությամբ Վճռաբեկ դատարանն *Ա.Արծրունու* գործով կայացված որոշման շրջանակներում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Հ]անցանք կատարած անճի վիճակը նոր քրեական օրենքի ուժով բարելավելու հիմքով դատավճիռը վերանայելու, մասնավորապես՝ անճի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցը լուծելով՝ դատարանը կայացնում է որոշում, որտեղ իրենց լուծումն են ստանում դատավճռին վերաբերող հարցեր (օրինակ՝ արարքի քրեաիրավական որակում, պատժատեսակի և պատժաչափի որոշում): Հետևաբար այդ որոշումը ևս հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, և այն ենթակա է բողոքարկման նույն ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է դատավճիռները բողոքարկելիս»* (տե՛ս Արսեն Արծրունու գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը):

12. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Արծրունու* գործով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն *Է.Ծռնվերանցի* գործով որոշմամբ իրավական դիրքորոշումներ է հայտնել առ այն, որ *«(...) [Ա]նճի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ դիտարկելը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական օրենքով արգելված արարքը նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցը լուծելիս դատարանն անդրադառնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում նախատեսված այնպիսի իրավական հարցերի (արարքը համապատասխանո՞ւմ է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին, ենթակա՞ է արդյոք պատժի հանցավորն իր կատարած հանցանքի համար, ի՞նչ պատիժ պետք է նշանակվի հանցավորի նկատմամբ), որոնք օրենքի ուժով (ex lege) վերապահված են գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճռի լուծմանը: Հետևաբար քրեական օրենքով արգելված արարքը նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցը լուծելիս կայացվող դատական ակտի բողոքարկումը և բողոքի քննությունը ենթակա են իրակա-*

*նացման նույն դատավարական ընթացակարգով, ինչը նախատեսված է գործն ըստ էության լուծող դատական ակտի համար: Այլ կերպ՝ քննարկման առարկա դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս կիրառման են ենթակա, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 379-րդ և 387-րդ հոդվածներով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները:*

*(…)*

*[«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված] արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» եզրույթի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ նշյալ եզրույթը ոչ միայն կազմում է «դատարանի»՝ առհասարակ գոյության իրավական հենքը, այլև այն ներառում է յուրաքանչյուր գործով **դատարանի կազմը** (տե՛ս Buscarini v. San Marino գործով 2000 թվականի մայիսի 4-ի որոշումը, գանգատ թիվ 31657/96, Posokhov v. Russia գործով 2003 թվականի մարտի 4-ի վճիռը, գանգատ թիվ 63486/00, կետ 39, Yegorychev v. Russia գործով 2016 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 8026/04, կետ 64): Ուստի այն դեպքերում, երբ օրենքով դատարանի կազմին ներկայացվող պահանջներն ապահովված չեն, ապա խաթարվում է օրինականության սկզբունքը՝ անձին զրկելով արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առջև կանգնելու իրավունքից (տե՛ս, mutatis mutandis, Jorgic v. Germany գործով 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 74613/01, կետ 64, Richert v. Poland գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 54809/07, կետ 41)»* (տե՛ս *Էդիկ Ծոնվերանցի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԴԴ/0049/01/12 որոշման 11.1-րդ և 12-րդ կետերը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալներ Ա.Համբարձումյանը և Ն.Առաքելյանը 2016 թվականի հուլիսի 6-ին Առաջին ատյանի դատարան դիմումներ են ներկայացրել, որով խնդրել են վերանայել իրենց նկատմամբ կայացված դատավճիռը՝ հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի մայիսի 16-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը ներկայացված դիմումները բավարարել է և նույն դատարանի՝ 2007 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1-122-07 դատավճիռը դիմումատուների մասով վերանայել այն պատճառաբանությամբ, որ 2016 թվականի հունիսի 25-ին ուժի մեջ մտած ՀՕ-83-Ն՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը վերացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով սահմանված արարքի հանցավորությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, **միանձնյա** կազմով քննության առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված դատախազի վերաքննիչ բողոքը, իր որոշմամբ արձանագրել է, որ առկա չէ այնպիսի իրավիճակ, երբ դատապարտյալների արարքների արդյունքում վնաս պատճառված հասարակական հարաբերությունն այլևս քրեաիրավական պաշտպանության ենթակա չլինի և նման օբյեկտի դեմ ուղղված ոտնձգությունը հակաիրավական չլինի, այլ ընդհակառակը՝ նշված հասարակական հարաբերությունը՝ բնակչության առողջության պահպանությունը, դարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 267.1 հոդվածով նախատեսված հանցակազմի առանցքային օբյեկտ: Արդյունքում՝ գտել է, որ դատախազի վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման (տե՛ս սույն որոշման 6.1.-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի նկատմամբ պետք է կիրառվեին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով և 387-րդ հոդվածով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված բողոքը սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից պետք է քննության առնվեր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, մինչդեռ այն քննության է առնվել միանձնյա կազմով՝ այդ կերպ չապահովելով արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առկայությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալներ Ա.Համբարձումյանի և Ն.Առաքելյանի դիմումները բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելն իրավաչափ չէ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի, 387-րդ հոդվածի խախտումներ, այն է՝ դատական ակտը կայացրել է դատարանի ոչ օրինական կազմով: Նշված խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն դատական ակտն անվերապահ բեկանելու հիմք է: Հիշյալ հոդվածով ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանորմերից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ, եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը,

ապա իրավասու է ուղղել այդ դատական սխալը՝ կաշկանդված չլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով (տե՛ս *Մխիթար Հղոյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 12-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, հիշյալ խախտումը հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ որոշմամբ արձանագրված խախտման պայմաններում հնարավոր չէ անդրադառնալ սույն որոշման 7.1.-7.2.-րդ կետերում բողոքաբերի բարձրացրած՝ իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստարկներին: Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով հիշյալ խախտումը, պետք է օրենքով սահմանված կարգով քննության առնի ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ գալով համապատասխան եզրահանգման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալներ Աստղիկ Մարատի Համբարձումյանի և Նաիրա Թոմիկի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**36.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԱՆԴ/0030/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արա Սարգսի Շուշանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի՝ 2015 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին՝ նախաքննություն կատարելու:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ Ռուզաննա Շուշանյանը ճանաչվել է տուժող:

2015 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ Արա Շուշանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ Ա.Շուշանյանի նկատմամբ նշանակվել է ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննություն:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ բավարարվել է դատահոգեբուժական փորձաքննություն կատարելու համար Ա.Շուշանյանին բժշկական հաստատությունում տեղավորելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը, և թույլատրվել Ա.Շուշանյանին 2015 թվականի մայիսի 4-ից տեղավորել ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական բժշկական կենտրոնի «Նուբարաշեն» հոգեբուժական կլինիկայում՝ ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննություն կատարելու համար:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Շուշանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի մայիսի 27-ին ՀՀ առողջապահության նախարարությանը կից միջգերատեսչական ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովը եզրակացություն է տվել Ա.Շուշանյանի անմեղսունակության վերաբերյալ:

Նախաքննության մարմինը 2015 թվականի մայիսի 27-ին որոշումներ է կայացրել՝ Ա.Շուշանյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու վարույթ հարուցելու, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնելու և եղբորը՝ Մ.Շուշանյանին, օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 27-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Ա.Շուշանյանի նկատմամբ անվտանգության միջոց կիրառելու՝ ՀՀ առողջապահության նախարարության «Նուբարաշեն» հոգեբուժական բժշկական կենտրոնի հատուկ հսկողության բաժանմունքում տեղավորելու թույլտվության մասին:

2015 թվականի հունիսի 11-ին Ա.Շուշանյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու միջնորդությամբ գործն ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի ապրիլի 19-ին որոշում է կայացրել Ա.Շուշանյանին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու, և նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոց, այն է՝ հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում նշանակելու մասին:

3. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ Ա.Աղայանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ

վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 19-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունվարի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ստացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Նախաքննության մարմնի՝ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին որոշման համաձայն՝ *«(…) Արա Սարգսի Շուշանյանը կնոջ՝ Ռ.Շուշանյանին, կասկածելով ամուսնական անհավատարմության մեջ, 2015 թվականի ապրիլի 14-ին ժամը 21:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Նոր Նորքի 9-րդ զանգվածի 46-րդ շենքի 5-րդ հարկում գտնվող իրենց՝ թիվ 82 բնակարանում վերոհիշյալ թեմայի շուրջ վիճաբանության ժամանակ, վերջինիս կյանքից ապօրինաբար զրկելու դիտավորությամբ՝ 5-րդ հարկից ցած նետելու նպատակով, անակնկալ հարձակվել է նրա վրա, բռնել վերջինիս ոտքերից, բարձրացրել վեր և սպանության դիտավորությամբ հրել է բնակարանի խոհանոցի բաց պատուհանից դուրս, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում, այն է՝ վերջինիս ակտիվ դիմադրության արդյունքում, հանցագործությունն ավարտին չի հասցրել, և Ռ.Շուշանյանին հաջողվել է բնակարանի ննջասենյակի բաց պատշգամբի արգելապատնեշի վրայով անցնել հարևանուհու բնակարան»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 47):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ *«Արա Սարգսի Շուշանյանի կողմից քրեական օրենքով արգելված արարքի կատարումը հիմնավորվել է հետևյալ ապացույցներով.*

*Գործի դատաքննության ընթացքում տուժող Ռուզաննա Ռաֆիկի Շուշանյանը դատարանում ցուցմունք տվեց այն մասին, որ (…) [դ]եպքի ընթացքում Արան իրեն չի հարվածել, ուղղակի անակնկալ գրկել ու վեր է հանել, ինչից էլ վախենալով, բռնվել է պատուհանի դիմաց ամրացված լվացքի պարաններից՝ միաժամանակ ոտքերով Արային հրելով դեպի հետ: (…) Եթե Արան ցանկանար, ապա կկարողանար իրեն դուրս նետել պատուհանից, քանի որ վերջինիս ֆիզիկականը ներել է դրա համար, գուցե այդպես ցանկացել է վախեցնել իրեն, ինքն էլ վախենալով, բնազդաբար, պայքարել է: (…) Արայից ազատվելով, շուրջ մեկ ու կես ժամ դեռ միասին գտնվել են բնակարանում ու վիճաբանել, որից հետո նոր ննջարանի պատշգամբի միջոցով դիմել է փախուստի: (…)*

*Գործի նախաքննության ընթացքում (...) տուժող Ռուզաննա Ռաֆիկի Շուշանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ (...) ամուսինը ցանկացել է իրեն սպանել, սակայն դա նրան չի հաջողվել, քանի որ ինքը կարողացել է դուրս պրծնել նրա ձեռքերից ու փախչել: (...)*

*Հրապարակված ցուցմունքի կապակցությամբ տուժողը հայտնել է, որ «սպանություն» բառը գրել է քննիչի թելադրանքով, նման բան չի ցանկացել գրել: (...) Եթե Արան իրեն բաց թողներ, ապա հնարավոր է, որ ինքը պատուհանից ցած ընկներ, սակայն Արան իրեն բաց չի թողել:*

*[Վ]երոգրյալի հիման վրա Դատարանը գալիս է այն եզրահանգման և արձանագրում, որ [Ա]րարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, սխալ է եղել. Արա Շուշանյանի արարքը համապատասխանել է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներին:*

*(...) Դատարանը գտնում է, որ սպանության հանցափորձի հանցակազմի հատկանիշներն ապացուցված չեն, առնվազն հիմնավորված չէ, թե սպանությունն ավարտին չի հասցվել Արա Շուշանյանի կամքից անկախ հանգամանքներով:*

*Միևնույն ժամանակ, (...) դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Արա Շուշանյանի գործողություններում պարունակվում են սպանության սպառնալիքի հատկանիշներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով: Հարկ է արձանագրել, որ սպանության սպառնալիքը եղել է կոնկրետ և իրական: Այն դրսևորել է կյանքից զրկելու ռեալ սպառնալիքով, որպիսին ընկալվել է նաև տուժողի կողմից Արա Շուշանյանի սկզբնական գործողություններով պայմանավորված: (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 53):

7. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ *«[«Ա]ննեղսունակության վիճակում հանրության համար վտանգավոր արարքի կատարում» և «հանցափորձ» եզրույթները միմյանց հետ ակնհայտորեն անհամատեղելի են, քանի որ առաջինի հիմքում դրված է անձի՝ գիտակցական ու կամային հատկանիշների բացակայության հանգամանքները, իսկ երկրորդի պարագայում՝ նշված հատկանիշների միաժամանակյա առկայությունը պարտադիր նախապայման է:*

*Դրա հետ մեկտեղ, ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ դրանում օրենսդրի կողմից օգտագործված «արարք» հասկացությունն արտահայտում է հանրության համար վտանգավոր գործողության կամ անգործության և համապատասխան հետևանքների միասնություն: Հետևապես արարքի հանրության համար վտանգավոր լինելու կամ չլինելու հարցի որոշման համար անհրաժեշտ նախապայման է հանդիսանում կոնկրետ գործողության կամ անգործության դրսևորման և հետևանքի միասնության ճիշտ գնահատումը: Այս համատեքստում, նախ պետք է արձանագրել, որ սույն գործով անձի՝ կյանքից զրկման փաստը, որպես Ա.Շուշանյանի գործողության հետևանք, բացակայում է: Իսկ նման պայմաններում այլևս առարկայազուրկ է դառնում բողոքի*

*հեղինակի մատնանշած «իրավաբանական որակման» իրավաչափության հարցին այլ ասպեկտներից, այդ թվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ ու սուբյեկտիվ կողմերի և հանցափորձի՝ պարտադիր գիտակցական (ինտելեկտուալ) և կամային դրսևորումներին անդրադառնալը: (…)*

*Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցները հիմք են տալիս հիմնավորված համարելու այն, որ տվյալ օբյեկտիվ իրադրության մեջ (դեպքի վայրը, կոնկրետ իրադրությունը, Ա.Շուշանյանի հիվանդագին վիճակի մասին տուժողին հայտնի լինելը և այլն) տուժողի համար, Ա.Շուշանյանի գործողության հետևանքով իր կյանքին սպառնացող վտանգը եղել է իրական, և Ա.Շուշանյանի գործողությունը տուժողի մոտ առաջացրել է սեփական կյանքի անվտանգության համար անհանգստության, վախի ու տագնապի զգացում, ինչն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի արդյունքում վրա հասնող հետևանքներին:*

*Ինչ վերաբերում է բողոքի հեղինակի այն փաստարկին, որ Ա.Շուշանյանի գործողությունները հատել են սպանության սպառնալիքի սահմանը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված փաստարկը տեղին կլիներ այն դեպքում, երբ խոսքը վերաբերեր այդ գործողությունների արդյունքում հանրորեն վտանգավոր այլ հետևանքներ վրա հասնելուն, կամ մեղսունակ սուբյեկտի դիտավորության՝ ինտելեկտուալ և կամային հատկանիշների առկայության պայմաններում նրա մտադրության բացահայտմանը, այլ ոչ թե՝ անմեղսունակության վիճակում հանրության համար վտանգավոր արարք կատարելու դեպքի:*

*Անդրադառնալով (…) «Արա Շուշանյանի կողմից քրեական օրենքով չթույլատրված հանրորեն վտանգավոր արարքի իրավաբանական որակման առումով» [Առաջին ատյանի դատարանի որոշումը] բեկանելու և փոփոխելու մասին բողոքի հեղինակի պահանջին՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված պահանջն ինքնին առարկայազուրկ է, քանի որ ինչպես հետևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդվածի իրավադրույթների բովանդակային վերլուծությունից՝ անմեղսունակության վիճակում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ գործերով որոշում կայացնելիս դատարանը ոչ թե հանրության համար վտանգավոր արարքը որակում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի այս կամ այն իրավանորմով, որպիսի տրամաբանությամբ ձևակերպված է բողոքի հեղինակի պահանջը, այլ լուծում է օրենսդրի կողմից [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդվածում] սպառիչ կերպով սահմանված (…) հարցերը (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 56-58):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանը, արձանագրելով, որ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթում անձի կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքի համապատասխանությունը ՀՀ քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածին քննարկման ենթակա չէ, սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդվածի դրույթները՝ թույլ տալով դատական սխալ՝ դատավարական օրենքի էական խախտում: Ըստ բողոքաբերի՝ նման խախտումը հանգեցնում է մեղսագրվող հանրորեն վտանգավոր կոնկրետ արարքի բնույթն իմանալու՝ անձի իրավունքի չեզոքացման ու անձի պաշտպանության իրավունքի սահմանափակման, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք է դատական ակտը բեկանելու համար:

Բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 23-25-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-451-րդ, 456-րդ, 460-461-րդ, 463-րդ հոդվածները, նշել է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հստակեցնել, թե քրեական օրենսգրքի որ հոդվածով է նախատեսված անձի կողմից անմեղսունակության վիճակում կատարված արարքը, քանի որ արարքի՝ «քրեական օրենսգրքով նախատեսված լինելը» արտահայտությունը այդ արարքի և քրեաիրավական ներգործության միջոցներ սահմանող օրենքի համապատասխանության մասին խիստ վերացական հետևություն է:

8.1 Անդրադառնալով Ա.Շուշանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներին համապատասխանելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցները, հիմք են ընդունել միայն տուժողի ցուցմունքները՝ առավելություն տալով տուժողի դատաքննական ցուցմունքներին և նախաքննական ցուցմունքների կապակցությամբ դատաքննության ընթացքում վերջինիս կողմից արված հստակեցումներին:

8.2. Բողոքաբերը նաև նշել է, որ ստորադաս դատարանները, անդրադառնալով Ա.Շուշանյանի արարքի համապատասխանությանը ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածին, այդուհանդերձ որոշման եզրափակիչ մասում չեն հստակեցրել, թե քրեական օրենսգրքի որ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից է վերջինս ազատվում: Նման պայմաններում, բողոքաբերի համոզմամբ, ստորադաս դատարանների դատական ակտերը չեն ապահովել անձին մեղսագրվող «հանրորեն վտանգավոր արարքի» որոշակիությունը:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի շրջանակներում անմեղսունակության վիճակում գտնվող անձին մեղսագրվող քրեական օրենքով արգելված արարքի որակմանը դատարանի կողմից անդրադառնալու, ինչպես նաև անմեղսունակության վիճակում գտնվող անձի կողմից հանցափորձի հատկանիշներ պարունակող արարք կատարելու հնարավորության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

*I. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթում դատարանի կողմից անձին մեղսագրվող արարքի որակմանն անդրադառնալու իրավաչափությունը.*

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ վարույթի շրջանակներում դատարանը չպետք է անդրադառնա անմեղսունակ անձին վերագրվող արարքի իրավական որակմանը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, այսինքն՝ քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դա:*

*2. Հանրության համար վտանգավոր արարքն անմեղսունակության վիճակում կատարած անձի նկատմամբ դատարանը կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:*

*(...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Բժշկական բնույթի հարկադրական միջոցները դատարանը կիրառում է այն անձանց նկատմամբ, ովքեր քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում, եթե այդ անձինք շարունակում են վտանգավոր լինել հասարակության համար»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածի համաձայն՝ *«Այն անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից: Նա իրավունք ունի, կախված հիվանդության աստիճանից և բնույթից, իմանալ՝ հանրորեն վտանգավոր որ արարքի կատարումն է նրան մեղսագրվում (...)»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդվածի համաձայն՝ *«[Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու] գործով որոշում կայացնելիս դատարանը պետք է լուծի հետևյալ հարցերը՝*

*- կատարվե՞լ է արդյոք հանրորեն վտանգավոր արարք.*

*- արարքը կատարե՞լ է արդյոք այն անձը, որի նկատմամբ իրականացվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ.*

*- արարքը կատարվե՞լ է արդյոք անմեղսունակության վիճակում, անձը գտնվո՞ւմ է արդյոք տվյալ վիճակում դատական քննության պահին.*

*- անձը կարիք ունի՞ արդյոք իր նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու և հատկապես ինչպիսի՞ միջոցներ»:*

Հիշյալ իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները, լինելով պետական հարկադրանքի միջոցների հատուկ տեսակներ, դատարանի կողմից կարող են կիրառվել օրենսդրի կողմից սահմանված ներքոշարադրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) կատարվել է քրեական օրենքով չթույլատրված արարք,

բ) արարքը կատարելիս անձը գտնվել է անմեղսունակության վիճակում,

գ) անձը շարունակում է վտանգավոր լինել հասարակության համար:

Հիշյալ պայմաններից որևէ մեկի բացակայությունը բացառում է ենթադրաբար անմեղսունակության վիճակում արարք կատարած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունը: Ուստի, օրենսդիրն այդ պայմանների առկայությունը պարզելու անհրաժեշտությամբ է պայմանավորել նշված անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի ընթացքում դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակը:

Անմեղսունակ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս.Ստեփանյանի* գործով որոշմամբ՝ արձանագրելով, որ.

*«ա) անմեղսունակ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության. նախաքննության մարմնի որոշմամբ՝ նրա նկատմամբ հարուցվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ և ոչ թե քրեական հետապնդում: Նշված վարույթի ընթացքում, սակայն, քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձինք, չհանդիսանալով մեղադրյալ, օգտվում են մեղադրյալի իրավունքներից:*

*բ) քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ գործով որոշում կայացնելիս դատարանը պարզում է, թե վերոնշյալ անձի կողմից կատարվե՞լ է արդյոք հանրորեն վտանգավոր արարք, և արդյո՞ք այն կատարվել է անմեղսունակության վիճակում: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանը քննության է առնում անմեղսունակ անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք և ոչ թե հանցագործություն կատարված լինելու հարցը:*

*գ) Նախորդ ենթակետում նշված գործի քննության արդյունքում ապացուցված համարելով, որ անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարվել է անմեղսունակության վիճակում՝ դատարանն անձին չի ենթարկում քրեական պատասխանատվության և պատժի, այլ որոշում է կայացնում նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու մասին, եթե այդ անձը շարունակում է վտանգավոր լինել հասարակության համար և կարիք ունի իր նկատմամբ այդպիսի միջոցի կիրառման»* (տե՛ս Սերգեյ Ստեփանյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԳԴ-5/0014/01/13 որոշման 23-րդ կետը):

13. Վերահաստատելով և զարգացնելով *Ս.Ստեփանյանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ամրագրել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հատուկ վարույթի ընթացքում դատարանի կողմից որոշում կայացնելիս լուծման ենթակա հարցերի առանձին շրջանակ, որը տարբերվում է ընդհանուր վարույթի ընթացքում դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս լուծման ենթակա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածով նախատեսված հարցերի շրջանակից: Մասնավորապես, որոշում կայացնելիս դատարանը պետք է պարզի՝ կատարվե՞լ է արդյոք հանրորեն վտանգավոր արարք, վերջինս կատարե՞լ է արդյոք այն անձը, որի նկատմամբ իրականացվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, արարքը կատարվե՞լ է արդյոք անմեղսունակության վիճակում, անձը գտնվո՞ւմ է արդյոք տվյալ վիճակում դատական քննության պահին, անձը կարիք ունի՞ արդյոք իր նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու և հատկապես ինչպիսի միջոցներ:

14. Այսպես, բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու վարույթի շրջանակներում որոշում կայացնելիս դատարանի կողմից լուծման ենթակա առաջին հարցը վերաբերում է հանրորեն վտանգավոր արարք կատարված լինելուն: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման վարույթը սկզբնավորվում է, և այդ վարույթի հետագա շարժը պայմանավորվում է քրեական օրենքով արգելված արարքի կատարմամբ: Վճռաբեկ դատարանը կրկնում է նախադեպային իրավունքում ձևավորած իր դիրքորոշումն այն մասին, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները քրեական օրենսգր-

քով նախատեսված պետական հարկադրանքի միջոցներ են, որոնք կարող են նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված անձանց նկատմամբ՝ նրանց բուժելու և նոր հանրորեն վտանգավոր արարքների կատարումը կանխելու նպատակով: Այդ միջոցների կիրառման հիմքը նշված անձանց կողմից հանրորեն վտանգավոր արարք կատարելն է *(տե՛ս Ալեքսանդր Ծատուրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0045/14/13 որոշման 12–րդ կետը):*

«Կատարվե՞լ է արդյոք հանրորեն վտանգավոր արարք» իրավական հարցին պատասխանելիս դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք դատարան ներկայացված նյութերով հաստատվում է անձին վերագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքի ինչպես փաստական, այնպես էլ իրավական հատկանիշների առկայությունը, որից հետո անցում կատարի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդվածով նախատեսված մյուս իրավական հարցերի լուծմանը:

Քննարկվող հարցադրմանը պատասխանելիս անձին վերագրվող արարքի փաստական հատկանիշների հետ մեկտեղ իրավական հատկանիշները, այդ թվում՝ իրավական որակումը գնահատելու պարտաղիրությունը պայմանավորված է.

ա) անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի իրավավիճակով, որն ընդգրկում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված իրավունքները (ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդված, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված), այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածը նույնպես ամրագրում է, որ անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձն օգտվում է մեղադրյալի բոլոր, այդ թվում՝ իրեն մեղսագրվող հանրորեն վտանգավոր արարքի մասին իմանալու իրավունքից:

Մասնավորապես, արդարադատության պատշաճ կազմակերպման շահերից ելնելով, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ միջոցներ ձեռնարկելով (հոգեբանի հետ հանդիպման, գործի քննության ներկայության, օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցության ապահովում), պետք է ապահովվի հոգեկան հիվանդություն ունեցող անձի կողմից դատավարությունը հասկանալու հնարավորությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի իմաստով մեղսագրվող արարքի (մեղադրանքի) բնույթի և պատճառների մասին մանրամասն տեղեկացումը, որը կապահովի դատարանի կողմից կայացվող որոշման արդարացիությունը *(տե՛ս, mutatis mutandis, Vaudelle v. France գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝*

*նաև Եվրոպական դատարան)՝ 2001 թվականի հունվարի 30-ի վճիռը, գանգատ թիվ 35683/97, կետ 65-րդ):* Մեղադրանք (սույն դեպքում՝ քրեական օրենքով արգելված արարք) առաջադրելու պատճառների մասին տեղեկացված լինելու իրավունքը ներառում է ոչ միայն տեղեկատվություն ենթադրաբար կատարված արարքի մասին, որի վրա հիմնվում է մեղադրանքը, այլ նաև՝ տեղեկատվություն այդ արարքին տրված իրավական գնահատականի մասին (*տե՛ս, mutatis mutandis, Pelissier and Sassi v. France [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 1999 թվականի մարտի 25-ին կայացված վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 51-րդ*):

Նման մոտեցումը ոչ միայն բխում է օրենքի առջև բոլորի հավասարության, այլ նաև՝ հոգեկան խանգարումներ ունեցող անձանց կարգավիճակի մասին ընդունված մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերի պահանջներից:

Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի սեպտեմբերի 22-ի «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» թիվ REC(2004)10 հանձնարարականի 7-րդ հողվածի 1-ին մասն ամրագրում է, որ անդամ պետությունները պետք է երաշխավորեն այնպիսի կառուցակարգերի գոյությունը, որոնք կպաշտպանեն հոգեկան խանգարումներ ունեցող խոցելի անձանց, մասնավորապես այն անձանց, ովքեր համաձայնություն տալու կարողություն չունեն կամ չեն կարող դիմակայել մարդու իրավունքների խախտմանը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 1999 թվականի փետրվարի 23-ի՝ «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանության մասին» թիվ R(99)4 հանձնարարականը երաշխավորելով հոգեկան խանգարման կամ այլ պատճառով սեփական կամքն արտահայտելու կարողություն չունեցող անձանց իրավունքները, 1-ին սկզբունքում ամրագրում է, որ անգործունակ չափահասների պաշտպանության սկզբունքն ընկած է բոլոր այլ սկզբունքների հիմքում՝ յուրաքանչյուր անհատի՝ որպես մարդկային էակի, արժանապատվության հարգման համար: Անգործունակ չափահասների պաշտպանության հետ կապված օրենքները, ընթացակարգերը և պրակտիկան պետք է հիմնված լինեն նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վրա, հաշվի առնելով համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերում այդ իրավունքների վերաբերյալ սահմանված երաշխիքները:

Միավորված ազգերի կազմակերպության՝ 1991 թվականի դեկտեմբերի 17-ի «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» թիվ 46/119 բանաձևի 1-ին սկզբունքի 5-րդ մասն ամրագրում է, որ հոգեկան հիվանդություն ունեցող յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա իրականացնելու բոլոր քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ճանաչված են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», «Տնտեսա-

կան, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում:

Վերոհիշյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման վարույթի շրջանակներում անմեղսունակ անձին մեղսագրվող քրեական օրենքով արգելված արարքի բնույթի և դրա էության պարզաբանումն այդ վարույթի առանցքային տարրերից է, որպիսի պայմաններում է հնարավոր երաշխավորել անմեղսունակ անձանց արդար դատաքննության իրավունքը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «գ» կետերով ամրագրված՝ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու, անձամբ կամ ներկայացուցչի միջոցով պաշտպանվելու իրավունքները: Վերջինս իր մեջ ներառում է նաև մեղսագրված արարքի կապակցությամբ համապատասխան փաստական տվյալներ և տեղեկություններ ներկայացնելը, նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված փաստական տվյալների և տեղեկությունների վերաբերելիությունը, թույլատրելիությունը և արժանահավատությունը վիճարկելը:

բ) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի նշանակման, հետագայում՝ դրա տեսակի փոփոխման հարցերի որոշմամբ: Այսպես՝ դատարանը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելիս (ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդված) և հետագայում դրա տեսակը փոփոխելիս անձի հոգեկան հիվանդության հետ միասին պետք է հաշվի առնի կատարված արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը և դրանց համակցված գնահատման արդյունքում որոշում կայացնի ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածով սահմանված՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների տեսակներից որևէ մեկը նշանակելու մասին *(տե՛ս Ալեքսանդր Ծատուրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբեր 18-ի թիվ ԵԿԴ/0045/14/13 որոշման 13-րդ կետը):*

15. Նախորդ կետում արտահայտված դիրքորոշումների հիման վրա՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը կաշկանդված լինելով բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին որոշման սահմաններով, իրականացնում է նախաքննության մարմնի կողմից ներկայացված նյութերի հետազոտում, լսում է դատակոչի ենթակա անձանց ցուցակում ընդգրկված անձանց՝ պարզելու համար, թե՝

ա) արդյո՞ք դատարան ներկայացված նյութերով հաստատվում է դեպքը, որի կապակցությամբ սկզբնավորվել է քրեական վարույթը և

բ) արդյո՞ք դեպքը պարունակում է քրեական օրենքով արգելված և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով որակված արարքի հատկանիշները:

Վերոնշյալ «ա» ենթակետով նշված հարցադրմանը պատասխանելիս դատարանը պարզում է, թե ներկայացված նյութերով արդյո՞ք հաստատվում են անմեղսունակ անձին մեղսագրվող արարքի փաստական հանգամանքները: Այնուհետև «բ» ենթակետով նշված հարցադրմանը պատասխանելիս դատարանը պարզում է՝ արդյո՞ք անմեղսունակ անձին մեղսագրվող արարքը համապատասխանում է մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից դրան տրված իրավական որակմանը:

Ընդ որում, եթե դատարանի համոզմամբ չի հաստատվում դեպքը, կամ նկարագրված արարքը չի պարունակում քրեական օրենքի հատուկ մասով նախատեսված որևէ դիսպոզիցիայի հատկանիշ, ապա բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման վարույթը ենթակա է կարճման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված համապատասխան հիմքով:

Իսկ այն դեպքում, երբ դատարանը գտնում է, որ մեղսագրվող արարքի փաստական հանգամանքները վկայում են այլ իրավական որակման մասին, քան տրվել է նախաքննական մարմնի կողմից, ապա դատարանի կողմից կայացվող որոշմամբ՝ իրավական որոշակիության (res judicata) սկզբունքն ապահովելու նպատակով պետք է նշվի, թե կոնկրետ քրեական օրենսգրքի հատուկ մասի որ հոդվածի դիսպոզիցիայի հատկանիշներին է համապատասխանում այդ արարքը, պահպանելով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված երաշխիքը, որի պարագայում արարքին տրված իրավական որակման փոփոխություն կարող է թույլատրվել, եթե դրանով չի վատթարանում անմեղսունակ անձի վիճակը, և չի խախտվում նրա պաշտպանության իրավունքը: Ուստի քրեական օրենքով արգելված արարքին տրված իրավական որակմանն անդրադառնալու միջոցով միայն դատարանը կարող է պատասխանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդվածով նախատեսված այն հարցին, թե կատարվե՞լ է արդյոք հանրորեն վտանգավոր արարք:

Այսպիսով, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշմամբ դատարանը պետք է գործի նյութերից բխող փաստարկված հետևություններով պատասխանի վկայակոչված, այդ թվում՝ անձին վերագրվող արարքի և դրա քրեաիրավական որակման համապատասխանության հարցերին՝ պարզելով բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հիմքերի առկայությունը: Ընդ որում, այդ հարցերին տրվող պատասխաններով է կանխորոշվում նաև կայացվող դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը, քանի որ հիշյալ հարցադրումներին տրվող պատասխանների բովանդակությունից է պարզ դառնում, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավաորմերով է ղեկավարվել որոշում կայացնելիս (դատական ակտի պատճառաբանվածության մասին *տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):*

16. Սույն գործի շրջանակներում Արա Շուշանյանին նախաքննական մարմնի կողմից մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի, այն է՝ սպանության փորձի կատարումը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, գնահատելով Արա Շուշանյանի կատարած արարքին նախաքննական մարմնի կողմից տրված իրավական որակումը, գտել է, որ Արա Շուշանյանի գործողություններում պարունակվում են ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպանության փորձի, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված՝ սպանության սպառնալիքի հատկանիշներ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Սինչդեռ Վերաքննիչ դատարանը, ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը, գտել է, որ անմեղսունակության վիճակում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ գործերով որոշում կայացնելիս դատարանը, ոչ թե հանրության համար վտանգավոր արարքը որակում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի այս կամ այն իրավանորմով, այլ՝ լուծում է օրենսդրի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդվածում սահմանված հարցերը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 15-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունները այն մասին, որ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի շրջանակներում դատարանը չպետք է անդրադառնա անձին մեղսագրվող քրեական օրենքով արգելված արարքի իրավական որակմանը, հիմնավոր չեն:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ և 463-րդ հոդվածները:

*II. Անմեղսունակության վիճակում գտնվող անձի կողմից հանցափորձ կատարելու հնարավորությունը.*

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունները այն մասին, որ «անմեղսունակության վիճակում հանրության համար վտանգավոր արարքի կատարում» և «հանցափորձ» եզրույթները միմյանց հետ անհամատեղելի են, քանի որ անմեղսունակ անձն օժտված չէ գիտակցական և կամային հատկանիշներով:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատա-*

*րելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»*:

Վերոնշյալ իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ հանցափորձն առկա է այն ժամանակ, երբ անմիջականորեն հանցանքի կատարմանն ուղղված գործողությունը (անգործությունը) ավարտին չի հասցվում անձի կամքից անկախ հանգամանքներում: Անմեղսունակ անձի դեպքում գիտակցական և կամային հատկանիշները բացակայում են, քանի որ նա զրկված է իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը, դրա վտանգավորությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու ունակությունից *(տե՛ս Հարություն Շուքուրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ԵՔԴ/0350/01/08 որոշման 17-րդ կետը)*: Սակայն Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գիտակցական կամ կամային հատկանիշներ չունենալը դեռևս չի բացառում անմեղսունակ անձի՝ քրեական օրենքով արգելված արարքին ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նշված՝ օբյեկտի և օբյեկտիվ կողմի հատկանիշներին համապատասխան իրավական որակում տալու հնարավորությունը: Հակառակ պարագայում առհասարակ պետք է բացառվի քրեաիրավական հարթությունում անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառումը քննարկելու հնարավորությունը, քանի որ գիտակցական և կամային հատկանիշները բնորոշ են ոչ միայն հանցափորձին, այլև ցանկացած ավարտված արարքին:

Հետևաբար այն դեպքում, երբ անմեղսունակության վիճակում գտնվող անձի կողմից արարքն ամբողջությամբ չի իրականացվում նրա կամքից անկախ օբյեկտիվ պատճառներով, ապա այն ենթակա է որակման որպես քրեական օրենքով արգելված արարքի կատարման փորձ:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անմեղսունակ անձի արարքը կարող է ստանալ թե՛ ձևական, թե՛ նյութական հանցակազմի հատկանիշներ կրող իրավական որակում (օրինակ, երբ անմեղսունակության վիճակում գտնվող անձի կողմից մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ ծանր վնաս է պատճառվում, ապա արարքն օբյեկտիվ իրադրության վերլուծությամբ ենթակա է որակման «Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը» վերտառությունը կրող ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով չնայած, որ այդ դեպքում ևս բացակայում են քրեական օրենքով արգելված արարք կատարած անձի գիտակցական և կամային հատկանիշները: Ընդ որում, նույն իրադրության պայմաններում եթե անմեղսունակության վիճակում գտնվող անձը չկարողանա օբյեկտիվ հանգամանքներից ելնելով ավարտին հասցնել արարքի կատարումը (օրինակ՝ դանակով հարվածելու պահին բռնվի նրա ձեռքը, կամ հրազենից արձակված գնդակը չդիպչի հասցեատիրոջը), ապա արարքն օբյեկտիվ իրադրության վերլուծությամբ ենթակա է որակման որպես դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու փորձ):

Դրա մասին է վկայում նաև այն, որ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման վարույթի շրջանակներում, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի, դատարանը չի քննարկում անձի մեղավորության հարցը: Մասնավորապես, բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման վարույթի շրջանակներում դատարանը պարզում է, թե «կատարվե՞լ է արդյոք հանրորեն վտանգավոր արարք»՝ առանց անդրադառնալու գործողության (անգործության) վտանգավորությունը գիտակցելու կամ ղեկավարելու հատկանիշներին:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ նշել է, որ «անմեղսունակության վիճակում հանրության համար վտանգավոր արարքի կատարում» և «հանցափորձ» եզրույթները միմյանց հետ անհամատեղելի են, քանի որ առաջինի հիմքում դրված են անձի՝ գիտակցական ու կամային հատկանիշների բացակայության հանգամանքները, իսկ երկրորդի պարագայում՝ նշված հատկանիշների միաժամանակյա առկայությունը պարտադիր նախապայման է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Սույն որոշման 20-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով սույն որոշման նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, թե «անմեղսունակության վիճակում հանրության համար վտանգավոր արարքի կատարում» և «հանցափորձ» եզրույթները միմյանց հետ անհամատեղելի են, քանի որ անմեղսունակ անձն օժտված չէ գիտակցական և կամային հատկանիշներով, հիմնավոր չէ:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ և 34-րդ հոդվածները:

23. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 8.1-րդ կետում շարադրված փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, դեպքի օբյեկտիվ իրադրությունն արտացոլող փաստական տվյալներում (այդ թվում՝ տուժողի նախաքննական և դատաքննական ցուցմունքներում) առկա բոլոր հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում ստորադաս դատարանները հանգել են հիմնավոր հետևության այն մասին, որ Արա Շուշանյանին մեղսագրվող արարքի իրավական որակումը համապատասխանում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սպանության փորձի, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված՝ սպանության սպառնալիքի հատկանիշներին: Հետևաբար Վճռաբեկ դատարանը բողոքաբերի քննարկվող փաստարկները հիմնավոր չի համարում:

24. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, թե ստորադաս դատարանները մանրամասն քննարկելով Արա Շուշանյանի արարքի հա-

մապատասխանությունը ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածին, այդուհանդերձ որոշման եզրափակիչ մասում չեն հստակեցրել, թե քրեական օրենսգրքի որ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից է վերջինս ազատվում (տե՛ս սույն որոշման 8.1-ին կետը), Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, մասնավորապես 464-րդ հոդվածում, բացակայում է պահանջն առ այն, որ անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս դատարանը որոշման եզրափակիչ մասում պետք է նշի, թե քրեական օրենսգրքի որ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից է նրան ազատում: Հետևաբար այդ կապակցությամբ բողոքաբերի փաստարկները նույնպես անհիմն են:

25. Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, իսկ սույն որոշման 17-րդ և 22-րդ կետերում արձանագրված՝ դատավարական և նյութական նորմերի խախտումները չեն ազդել գործի ելքի վրա, հետևաբար բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Արա Սարգսի Շուշանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**37.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԴ/3/0059/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ պաշտպան | Ա.ՍԻՄՈՆՅԱՆԻ |
| ամբաստանյալ | Լ.ՎԱՆՅԱՆԻ |
| ամբաստանյալի օրինական ներկայացուցիչ | Գ.ՎԱՆՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 22-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Լևոն Գուրգենի Վանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2015 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 20137315 քրեական գործը:

2015 թվականի սեպտեմբերի 4-ին Լևոն Վանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգր-

քի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը Լ.Վանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ծնողի հսկողությանը հանձնելը:

2015 թվականի նոյեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 26-ի դատավճռով Լ.Վանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կարգով դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

Լ.Վանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված ծնողի հսկողությանը հանձնելը թողնվել է անփոփոխ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 26-ի դատավճիռը թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Լ.Վանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«[Ն]ախ 2015թ.-ի սեպտեմբերի 1-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, Բյուրեղավան քաղաքի Վ.Սարգսյանի անվան թիվ 1 ավագ դպրոցի բակում բարձրաձայն, անպարկեշտ արտահայտություններ անելու համար նկատողություն է արել նույն քաղաքի բնակիչ Սամվել Պավլիկի Չոբանյանին: Վերջինս այդ հարցի կապակցությամբ դիմել է Գուրգեն Կառլենի Ստեփանյանին, ով զանգահարել է Լևոն Վանյանին և պայմանավորվել հանդիպել և զրուցել Սամվել Չոբանյանին նկատողություն անելու վերաբերյալ: Նույն օրը՝ ժամը 19:00-ի սահմաններում, Գուրգեն Ստեփանյանը Բյուրեղավան քաղաքի ուսումնարանի մոտակայքում հանդիպել է Լևոն Վանյանին, և վերոնշյալ հարցի շուրջ նրանց միջև ծագած վիճաբանության ընթացքում Լևոն Վանյանը ծեծի է ենթարկել*

*Գուրգեն Ստեփանյանին: Վերջինս այդ ամենի մասին հայտնել է իր եղբայրներ՝ Ռոման Ստեփանյանին և գործով տուժող՝ Արմեն Ստեփանյանին: Այնուհետև, Ռոման Ստեփանյանը զանգահարել է Լևոն Վանյանին և տեղեկանալով, որ նա գտնվում է Բյուրեղավան քաղաքի 21-րդ շենքի բակում, նույն օրը՝ ժամը 21:00-ի սահմաններում, իրենց եղբորը ծեծի ենթարկելու շուրջ առաջացած փոխհարաբերությունները պարզաբանելու նպատակով Արմեն Ստեփանյանի հետ գնացել են Բյուրեղավան քաղաքի 21-րդ շենքի բակ: Այնտեղ հանդիպել են Լևոն Վանյանին, և նրանց միջև սկսվել է ծեծկռտուք, որի ընթացքում Լևոն Վանյանն իր մոտ եղած **դանակով դիտավորությամբ հարվածներ է** հասցրել Ռոման Ստեփանյանի և Արմեն Ստեփանյանի մարմնի տարբեր մասերին, որի հետևանքով Արմեն Ստեփանյանի առողջությանը՝ **որովայնի առաջային պատի ծակած-կտրած, թափանցող, լյարդի վնասումով, հետույքի ձախ կեսի և ձախ ազդրի վերին երրորդականի հետին մակերեսի մեկական ծակած-կտրած, մկանների վնասումով վերքերի ձևով,** պատճառվել է ծանր վնաս՝ **կյանքին վտանգ սպառնացող»** (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 311-318):*

5.1. Քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 24-ի որոշման համաձայն՝ *«(...) Լևոն Վանյանն իր մոտ եղած դանակով դիտավորությամբ հարվածներ է հասցրել Ռոման Ստեփանյանի (...) մարմնի տարբեր մասերին, որի հետևանքով Ռոման Ստեփանյանի առողջությանը՝ կրծքավանդակի ձախ կեսի աջակողմյան մակերեսի ծակած-կտրած չթափանցող, ձախ ազդրի վերին երկրորդականի դրսային մակերեսի, ձախ հետույքի վերին դրսային և ստորային դրսային քառակուսիների մեկական ծակած-կտրած խորանիստ մկանների վնասումներով վերքերի ձևով, պատճառվել է միջին ծանրության վնաս (...):*

*(...) Լևոն Գուրգենի Վանյանի նկատմամբ Ռոման Կառլենի Ստեփանյանի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չիրականացնել տուժողի բողոքի բացակայության հիմքով (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 289-292):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(...) [2015 թվականի սեպտեմբերի 1-ին]՝ ժամը 19:00-ի սահմաններում, Գուրգեն Ստեփանյանը (…) հանդիպել է Լևոն Վանյանին, վերջինս Գ.Ստեփանյանին հարցրել է, թե ինչու է իր հետ վատ տոնով խոսել և «արա» ասել, ինչին Գ.Ստեփանյանը պատասխանել է, որ «Լավ եմ արել», և այդ հարցի շուրջ նրանց միջև վեճ է ծագել, որի ընթացքում Լ.Վանյանը բռունցքով հարվածել է Գուրգեն Ստեփանյանի դեմքին, հոնքի հատվածում, Գուրգեն Ստեփանյանը, իր հերթին, հարվածել է Լևոն Վանյանին և նրանք միմյանց հարվածներ են հասցրել. Գուրգեն Ստեփանյանի հարվածներից Լևոն Վանյանը վնասվածքներ չի ստացել, իսկ Գուրգեն Ստեփանյանը, Լևոն Վանյանի հարվածներից ստացել է վնասվածք՝ աջ հոնքի հատվածում, որտեղից արյուն է եկել, նշված վիճաբանությունը և ծեծկռտուքը տևել է 2-3 րոպե, որից*

*հետո նրանք միմյանցից հեռացել են: Գուրգեն Ստեփանյանն իր հագին եղած վերնաշապիկը հանել և դրել է վնասված աչքի վրա և գնացել է իրենց շենքի բակ, աղբյուրի մոտ լվացվելու, իսկ Լ.Վանյանը գնացել է իրենց շենքի բակ:*

*Այդ ժամանակ Գուրգեն Ստեփանյանի եղբայրը՝ Ռոման Ստեփանյանը, իրենց բնակարանի պատուհանից դուրս է նայել և տեսնելով եղբորը՝ Գուրգեն Ստեփանյանին, աչքը վնասված, արյունոտված վիճակում, վերնաշապիկն աջ աչքին դրած, մինչդեռ Գ.Ստեփանյանի այդ աչքը նախկինում վիրահատված է եղել, արագ կարգով իջել է եղբոր մոտ և ցանկացել է պարզել եղելությունը: Վերջինս հայտնել է, որ ծեծկռտուք է եղել իր և այլ անձանց միջև, որոնցից ճանաչել է միայն Լ.Վանյանին, որն էլ իրեն հարվածել է: Ռոման Ստեփանյանը կանչել է իր մյուս եղբորը՝ Արմեն Ստեփանյանին, և երկուսով գնացել են Լևոն Վանյաններց շենքի բակ, իսկ Գ.Ստեփանյանը մնացել է և շարունակել իր վնասված աչքը մշակել:*

*(...)*

*Ռոման և Արմեն Ստեփանյանները, վազելով մոտենալով Լևոն Վանյանին, հայհոյանքներ հնչեցնելով նրա հասցեին, հարցրել են նրա և իրենց եղբոր՝ Գուրգենի միջև վեճի պատճառը, և անմիջապես, առանց պատասխան ստանալու, Ա.Ստեփանյանը բռունցքով հարվածել է Լևոն Վանյանի դեմքին, Լևոն Վանյանը հարվածից թիկունքի մասով ընկել է գետնին, այնուհետև Ռոման և Արմեն Ստեփանյանները ոտքերով և ձեռքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել ընկած վիճակում գտնվող Լևոն Վանյանի մարմնի տարբեր մասերին, և այդ ամենը տևել է 3-4 րոպե: Այդ ժամանակ Լևոն Վանյանը, կիսանստած վիճակում, Ռոման և Արմեն Ստեփանյանների հարվածների տակ, ձախ ձեռքով ձախ գրպանից հանել է ծալովի դանակ, այն տեղափոխելով աջ ձեռք, բացել է այն և աջ ձեռքով եղած դանակով, որի երկարությունը 10-13 սմ է եղել, այդ թվում՝ կտրող մասը՝ շեղբը՝ 1-1,5 սմ, հարվածներ է հասցրել Ռոման և Արմեն Ստեփանյանների ոտքերին՝ ծնկներից վերևի հատվածներին:*

*Այդ հարվածներից Ռոման և Արմեն Ստեփանյանները հետ են քաշվել, որից օգտվելով՝ Լևոն Վանյանը ոտքի է կանգնել, Ռոման և Արմեն Ստեփանյանները շարունակել են նրան ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցնել, իսկ Լ.Վանյանը, նույնպես ոտքերով հարվածներ է հասցրել նրանց, իսկ դանակով նրանց **հարվածներ** է հասցրել. Ռոման Ստեփանյանին **ընկած վիճակում**, հարվածել է ոտքի ծնկից վերևի մասում՝ ազդրի հատվածում, իսկ կանգնած վիճակում, երբ Ռոման Ստեփանյանը փորձել է վազելով հեռանալ դեպքի վայրից, **վազքով մոտեցել է նրան և հարվածել է հետույքին, իսկ Ռոման Ստեփանյանի շրջվելուց հետո՝ կրծքավանդակի հատվածին, Արմեն Ստեփանյանին՝ ընկած վիճակում՝ ձախ ազդրի հատվածում, իսկ կանգնած վիճակում՝ շրջվելով դեպի նրա կողմը և դանակով հարվածել որովայնի մասում և հետույքի ձախ կեսին** (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 47-86):*

6.1. Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է. *«(...) Լևոն Վանյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես՝ հանցանքը կատարել է անչափահաս տարիքում, նախաքննությամբ և դատաքննությամբ, ըստ էության, ընդունել է մեղքը, տվել խոստովանական ցուցմունքներ, զղջացել է կատարվածի համար, ներողություն է խնդրել եղբայրներից կատարվածի համար, աջակցել է նախաքննության մարմնին, իր իսկ կողմից կատարված հանցագործության բացահայտմանը, նրա կողմից կատարված հանցանքը պայմանավորված է եղել եղբայրներ՝ տուժող Արմեն Ստեփանյանի և վկաներ Ռոման և Գուրգեն Ստեփանյանների կողմից հակաբարոյական և հակաօրինական գործողությունների պատճառով, որոնք Լևոն Վանյանից տարիքային առումով մեծ լինելով, համապատասխանաբար՝ 6, 8, 10 տարի, նախահարձակ են եղել և հրահրել վեճը և ծեծկռտուքը, տուժողի կողմից քաղհայցի պահանջ և բողոք չի ներկայացվել, տուժողը դատաքննությամբ տրված ցուցմունքով և դիմումով խնդրել է նրա նկատմամբ մեղմ պատիժ նշանակել և ազատազրկման չենթարկել, Լևոն Վանյանի հոր՝ սույն գործով օրինական ներկայացուցիչ Գուրգեն Վանյանի կողմից ամբողջությամբ փոխհատուցվել են ինչպես տուժող Արմեն Ստեփանյանի, այնպես էլ վկա Ռոման Ստեփանյանի բուժման ծախսերը, զինակոչիկ է՝ 01.11.2016թ.-ին զորակոչվել է ժամկետային զինվորական ծառայության, ծնողներն ամուսնալուծված են, ապրում է մոր, եղբոր, քրոջ ու տատիկի հետ միասին, սոցիալական միջին պայմաններում, իրենց համակցությամբ դիտելով որպես բացառիկ հանգամանք, գտնում է, որ նրա նկատմամբ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթները (...):*

*(...) [Հ]աշվի առնելով ամբաստանյալ Լևոն Վանյանի կատարած հանցանքի բնույթը, հանրորեն վտանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող և պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներն իրենց համակցությամբ, նրա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Լևոն Վանյանի ուղղվելը և նոր հանցագործության կատարումը կանխելը հնարավոր է առանց պատիժը ռեալ կրելու՝ հնարավոր համարելով նրանց վերադաստիարակումն առանց հասարակությունից մեկուսացնելու, նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, նշանակելով փորձաշրջան (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 47-86):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում փաստել է. *«(...) Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության՝ գտնելով, որ Լևոն Վանյանի դրականորեն բնութագրվելը, նախկինում դատված չլինելը, հանցանքը անչափահաս տարիքում կատարած լինելը, նախաքննությամբ և դատաքննությամբ, ըստ էության, մեղքն ընդունելը, խոստովանական ցուցմունքներ տալը, կատարվածի համար զղջալը, նախաքննության մարմնին աջակցելը, իր իսկ կողմից կատարված հանցագործության բացահայտմա-*

*ևը, նրա կողմից կատարված հանցանքը եղբայրներ՝ տուժող Արմեն Ստեփանյանի և վկաներ Ռոման և Գուրգեն Ստեփանյանների կողմից հակաբարոյական և հակաօրինական գործողությունների պատճառով պայմանավորված լինելը, նրանց կողմից նախահարձակ լինելու, վեճը և ծեծկռտուքը հրահրած լինելու հանգամանքը, տուժողի կողմից քաղաքացիական հայցի պահանջ և բողոք ներկայացված չլինելը, նրա հոր՝ սույն գործով օրինական ներկայացուցիչ՝ Գուրգեն Վանյանի կողմից ամբողջությամբ [ինչպես] տուժող Արմեն Ստեփանյանի, այնպես էլ վկա Ռոման Ստեփանյանի բուժման ծախսերը փոխհատուցված լինելու հանգամանքը, ամբաստանյալի զինակոչիկ լինելու հանգամանքը, իրենց համակցությամբ հանդիսանում են բացառիկ հանգամանք:*

*(...)*

*Վերաքննիչ դատարանը (...) հանգում է այն հետևության, որ (...) Առաջին ատյանի դատարանը (...) ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ նշանակելով փորձաշրջան (...), որը համապատասխանում է հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, և որով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը (...)* (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 36-50):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

8. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերի պնդմամբ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Մասնավորապես՝ ամբաստանյալի նկատմամբ կիրառվել են ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածները, որոնք ենթակա չէին կիրառման:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չեն հետազոտել և գնահատել ամբաստանյալի դիտավորության տեսակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը: Թվարկված մեղմացնող հանգամանքները զուտ դատարանների սուբյեկտիվ գնահատման արդյունք են և իրականում չեն նվազեցնում կատարված արարքի վտանգավորության աստիճանն այն չափով, որ նրա նկատմամբ կիրառելի լինեն ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածները:

Ստորադաս դատարանները պատշաճ գնահատականի չեն արժանացրել հանցավորի անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես այն, որ հանցանքը կատարելու պահին վերջինս դանակ է կրել՝ պատրաստ լինելով ցանկացած ժամանակ այն գործադրելու, ինչպես նաև խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այն է՝ ամ-

բաստանյալը ոտնձգել է այնպիսի հարաբերության դեմ, որի խախտումը ոչ միայն խիստ բացասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա, այլև կարող էր առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև մահ:

Բողոքաբերն ընդգծել է, որ արարքի վտանգավորության աստիճանի գնահատման համար էական նշանակություն ունի կատարված արարքի և դրա հետևանքների նկատմամբ ամբաստանյալի հոգեբանական վերաբերմունքի վերլուծությունը, մասնավորապես այն, որ ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողի առողջությանը պատճառում է կյանքի համար վտանգավոր ծանր վնաս, նախատեսել է իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը: Բացի այդ, ամբաստանյալը դանակով երեք հարված է հասցրել տուժողին, որոնցից մեկը՝ նրա մարմնի կենսականորեն կարևոր օրգանի շրջանում՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս, իսկ նույն դեպքի ընթացքում ամբաստանյալը նույն դանակի գործադրմամբ երեք հարված է հասցրել և միջին ծանրության մարմնական վնասվածք պատճառել նաև Ռ.Ստեփանյանին, որոնք օբյեկտիվորեն էլ ավելի են բարձրացնում կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

8.1. Բողոքի հեղինակը նաև նշել է, որ ստորադաս դատարանների կողմից հաշվի առնված հանգամանքները, այն է՝ զորակոչիկ լինելը, տուժողի կողմից քաղաքացիական հայցի պահանջ և բողոք չներկայացնելը, ամբաստանյալի հոր կողմից տուժողի բուժման ծախսերը հատուցելը, ամբաստանյալի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու մասին տուժողների խնդրանքը, չեն կարող դիտվել որպես մեղմացնող, ուստի և օբյեկտիվ հիմք հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթները կիրառելու համար:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բողոքն ընդունել վարույթ, պատժի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 26-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 28-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Լ.Վանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար*»:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

*2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:*

Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմի բովանդակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Պ.Բայրամյանի* գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են՝*

*ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,*

*բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը,*

*գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները (...)»* (տե՛ս *Պարույր Բայրամյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը):

11.1. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվա-*

*զեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:*

*2. Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում (ՎԲ-55/07, ՎԲ-145/07, ՎԲ-185/07, ՎԲ-11/08, ՎԲ-13/08, ՎԲ-25/08, ՎԲ-ԵՔԴ/0057/01/08, ՏԴ/0094/01/09, ԱՎԴ2/0057/01/09, ԵԱՔԴ/0164/01/09, ԵԱՔԴ/0195/01/09 և այլն), և կայուն նախադեպային իրավունք է ձևավորվել այն մասին, որ քննարկվող նորմը կարող է կիրառվել հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկի առկայության պարագայում՝ գործի բացառիկ հանգամանքների և խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքի բացահայտմանն ակտիվորեն աջակցելու դեպքում: Օրենքում օգտագործվող **«բացառիկ»** բառը ենթադրում է, որ նշված հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացող մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը դուրս են սովորականի շրջանակներից և այն աստիճան առանձնահատուկ են, որ վերածվում են բացառության: Մասնավորապես, դրանք կարող են կապված լինել հանցագործության շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի, ինչպես նաև այլ հանգամանքների հետ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա:

12. Վերլուծելով քննարկվող նորմի՝ անչափահասների նկատմամբ կիրառման առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն *Ա.Նումուշյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. *«(...) Բոլոր այն դեպքերում, երբ անչափահասին մեղսագրվող արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսվում է միայն ազատազրկում պատժատեսակը, դատարանը պետք է քննարկի ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ ավելի մեղմ պատժամիջոց ընտրելու կամ ավելի ցածր պատժաչափ նշանակելու հնարավորությունը՝ հաշվի առնելով առկա մեղմացնող հանգամանքների համակցությունը, անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, նրա վրա այլոց ազդեցությունը, անձը բնութագրող այլ տվյալները, ինչպես նաև հանցագործության՝*

*հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը (...)»* (տե՛ս *Արամայիս Նունուշյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԴ/0094/01/13 որոշման 16-րդ կետը):

Վերահաստատելով *Ա.Նունուշյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Ն.Մադոյանի և Դ.Հովհաննիսյանի* գործով փաստել է, որ *«(...) [Մ]իայն այն հանգամանքը, որ հանցավորը հանցանք կատարելու պահին եղել է անչափահաս, չի կարող մեխանիկորեն հանգեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմանը, այլ այդ դեպքում նշյալ հոդվածի կիրառման հնարավորությունը պետք է քննարկվի գործում առկա մեղմացնող հանգամանքների համակցության, հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի և այլ հանգամանքների համատեքստում (...)»* (տե՛ս *Նարեկ Մադոյանի և Դավիթ Հովհաննիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՏԴ2/0040/01/14 որոշման 14.1-րդ կետը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Լ.Վանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա դանակով դիտավորությամբ հարվածներ է հասցրել Արմեն Ստեփանյանի մարմնի տարբեր մասերին, ինչի հետևանքով վերջինիս առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս սույն որոշման 5-5.1-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ Լ.Վանյանը **դանակով, որի երկարությունը 10-13սմ է եղել, իսկ շեղբը՝ 1-1,5 սմ, հարվածներ է հասցրել Ա.Ստեփանյանին ընկած վիճակում՝ ձախ ազդրի հատվածում, այնուհետև կանգնած վիճակում՝ որովայնի հատվածում և հետույքի ձախ կեսին,** իսկ Ռ.Ստեփանյանին հարվածել է **ընկած վիճակում՝** ազդրի հատվածում, իսկ երբ վերջինս փորձել է վազելով հեռանալ դեպքի վայրից, **վազքով մոտեցել է նրան և հարվածել հետույքին, շրջվելուց հետո՝ կրծքավանդակի հատվածին** (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Ամբաստանյալ Լ.Վանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտել այն, որ Լ.Վանյանն արարքը կատարել է անչափահաս տարիքում, ընդունել է մեղքը, տվել խոստովանական ցուցմունքներ, զղջացել է կատարվածի համար, ներողություն է խնդրել, աջակցել է նախաքննության մարմնին իր իսկ կողմից կատարված հանցագործության բացահայտմանը, նրա կողմից կատարված հանցանքը պայմանավորված է եղել եղբայրներ՝ տուժող Ա.Ստեփանյանի և վկաներ Ռոման ու Գուրգեն Ստեփանյանների կողմից հակաբարոյական և հակաօրինական գործողություններով, ովքեր, Լ.Վանյանից տարիքային առումով մեծ լինելով, նախահարձակ են եղել, հրահրել վեճը և ծեծկռտուքը, տուժողի կողմից քաղաքացիական հայցի պահանջ և բողոք չի ներկայացվել, տուժողը խնդրել է ամբաստանյալի նկատմամբ մեղմ պատիժ նշանակել և ազատազրկման չենթարկել, Լ.Վանյանի հոր՝ Գ.Վանյանի կողմից ամբողջությամբ փոխհատուց-

վել են ինչպես տուժող Ա.Ստեփանյանի, այնպես էլ վկա Ռ.Ստեփանյանի բուժման ծախսերը, զինակոչիկ է՝ 01.11.2016թ.-ին զորակոչվել է ժամկետային զինվորական ծառայության, ծնողներն ամուսնալուծված են, ապրում է մոր, եղբոր, քրոջ ու տատիկի հետ միասին, սոցիալական միջին պայմաններում: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը, նշված մեղմացնող հանգամանքներն իրենց համակցությամբ դիտելով որպես **բացառիկ,** գտել է, որ Լ.Վանյանի նկատմամբ կիրառելի են ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթները:

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանգել է հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու, և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը հիմնավորված հետևության է հանգել ամբաստանյալ Լ.Վանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածների կիրառելիության վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից որպես **բացառիկ** ճանաչված մեղմացնող հանգամանքները ոչ միայն բացառիկ չեն, այլև դրանցից որոշները չեն բավարարում Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված՝ մեղմացնող հանգամանքներին ներկայացվող չափանիշներին:

Մասնավորապես, ստորադաս դատարանների կողմից որպես մեղմացնող հանգամանքներ, ի թիվս այլոց, հաշվի են առնվել Լ.Վանյանի զինակոչիկ լինելը (01.11.2016թ.-ին զորակոչվել է ժամկետային զինվորական ծառայության), ծնողների ամուսնալուծված, մոր, եղբոր, քրոջ ու տատիկի հետ միասին, սոցիալական միջին պայմաններում բնակվելը, տուժողի կողմից քաղաքացիական հայցի պահանջ չներկայացնելը, ինչպես նաև ամբաստանյալի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու ու ազատազրկում չկիրառելու տուժողի խնդրանքը:

Հաշվի առնելով *Պ.Քայրամյանի* գործով որոշմամբ սահմանված չափանիշները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես մեղմացնող ճանաչված վերոնշյալ հանգամանքները սույն գործով չեն կարող ողջամտորեն նվազեցնել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, հետևաբար նաև՝ դիտվել որպես բացառիկ հանգամանքներ: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն Առաջին ատյանի դատարանի կողմից արձանագրած՝ *«Լ.Վանյանը զորակոչիկ է՝ 01.11.2016թ.-ին զորակոչվել է ժամկետային զինվորական ծառայության»* հանգամանքի կապակ-

ցությամբ հարկ է համարում ընդգծել, որ Լ.Վանյանը ոչ թե զորակոչվել է, այլ **ենթակա** է զորակոչման ժամկետային զինվորական ծառայության:

14.1. Բացի այդ, ստորադաս դատարանները որպես ամբաստանյալ Լ.Վանյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք դիտել են ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ հանցագործությունը բացահայտելուն աջակցելը:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ մեղմացնող հանգամանքի կապակցությամբ *Ս.Հունիկյանի* որոշմամբ ընդգծել է, որ հանցագործությունը բացահայտելուն աջակցելը որպես մեղմացնող հանգամանք կարող է արտահայտվել նախաքննության մարմնին և դատարանին այնպիսի տեղեկություններ հաղորդելով, որոնք նրանց համար հետաքրքրություն են ներկայացնում և վերջիններիս մինչ այդ անհայտ են եղել *(տե՛ս Սամվել Հունիկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշման 22-րդ կետը):* Սինչդեռ սույն գործով չեն մատնանշվել կոնկրետ փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին քննարկվող մեղմացնող հանգամանքի առկայությունը: Մասնավորապես, չի պատճառաբանվել, թե հանցագործության բացահայտմանն աջակցելն ամբաստանյալի ինչպիսի գործողություններով է դրսևորվել, վերջինիս կողմից ինչ տեղեկություններ են հաղորդվել, որոնք նախաքննության մարմնի և դատարանի համար կարող էին հետաքրքրություն ներկայացնել և մինչ այդ նրանց անհայտ են եղել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի կողմից հանցագործության բացահայտմանն աջակցելը որպես մեղմացնող հանգամանք հաշվի առնելու և այլ մեղմացնող հանգամանքների համակցությամբ որպես բացառիկ գնահատելու ստորադաս դատարանների դատողությունները հիմնազուրկ են:

Ինչ վերաբերում է որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք գնահատված՝ հանցագործությունը տուժողի վարքագծի հակաօրինականությամբ և հակաբարոյականությամբ պայմանավորված լինելու ստորադաս դատարանների հետևությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանները որևէ իրավական գնահատականի չեն արժանացրել ամբաստանյալի՝ նախքան հանցագործությունը և հանցագործության ընթացքում դրսևորած վարքագծի բնույթը, մասնավորապես, այն, որ վերջինս նախքան սույն գործով դեպքը տեղի ունենալը, վիճաբանել և վնասել է տուժողի եղբոր՝ Գ.Ստեփանյանի աչքը, իսկ տուժողը և վկան, տեսնելով իրենց եղբոր՝ նախկինում վիրահատված աչքը վնասված, արյունոտված վիճակում, պարզաբանում ստանալու նպատակով են գնացել ամբաստանյալ Լ.Վանյանի մոտ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն հանգամանքներն իրենց համակցության մեջ ամբողջական գնահատման դեպքում միայն հնարավոր է հետևություն անել վերոնշյալ մեղմացնող հանգամանքի առկայության վերաբերյալ:

15. Ստորադաս դատարանների կողմից որպես մեղմացնող գնահատված մյուս հանգամանքների կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, նկա-

տի ունենալով սույն գործով ամբաստանյալի կատարած արարքի բարձր հանրային վտանգավորության մասին վկայող հանգամանքները (մասնավորապես, այնպիսիք, որոնք վերաբերում են հանցագործության եղանակին, կիրառված գործիքին, հարվածների քանակին ու տեղակայմանը, այն է՝ Լ.Վանյանի կողմից տուժողի մարմնի տարբեր մասերին **դանակով երեք հարված** հասցնելը՝ **ձախ ազդրի հատվածում, այնուհետև որովայնի հատվածում և հետույքի ձախ կեսին**՝ առողջությանը պատճառելով **ծանր վնաս, որը վտանգավոր է եղել տուժողի կյանքի համար**), արձանագրում է, որ դրանք այն աստիճան առանձնահատուկ չեն, որ վերածվեն բացառության և էականորեն նվազեցնեն կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը՝ հիմք հանդիսանալով ամբաստանյալի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Լ.Վանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

16. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Լ.Վանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման անթույլատրելիության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 8-8.1-րդ կետերը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

17. Հիմք ընդունելով սույն որոշման 11-15-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ և 64-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Նշված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածների համաձայն, հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով սույն որոշմամբ արձանագրված խախտումները, պետք է պատշաճ քննության ենթարկի ամբաստանյալ Լ.Վանյանի նկատմամբ պատիժ նշանակելու հարցը և օրենքով սահմանված կարգով հանգի համապատասխան հետևության:

18. Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Վանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ծնողի հսկողությանը հանձնելը, պետք է փոփոխել և վերջինիս նկատմամբ խափանման միջոց ընտրել չհեռանալու

մասին ստորագրությունը՝ ամբաստանյալի չափահաս դառնալու կապակցությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Լևոն Գուրգենի Վանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 26-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Լևոն Գուրգենի Վանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ծնողի հսկողությանը հանձնելը, փոփոխել և ընտրել խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**38.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

1-81/2005
Ջ-139/06
ՎՔԲ-195/06
Ջ-510/06

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ԱՎԱԳՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ տուժողի իրավահաջորդ | Հ.ՄՈՒՐԱԴՅԱՆԻ |
| դատախազ | Լ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |

2017 թվականի հունիսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Հրաչյա Մուրադյանի ու նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. Զինծառայող Սուրեն Հրաչյայի Մուրադյանի մահվան փաստի առթիվ 2002 թվականի օգոստոսի 6-ին Հաղրութի կայազորի զինվորական դատախազությունում 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի

105-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 91204602 քրեական գործը:

2002 թվականի սեպտեմբերի 2-ին Հրաչյա Մուրադյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի՝ 2002 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումներով Դավիթ Հարությունյանը և Վահե Գրիգորյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 251-րդ հոդվածով:

Նախաքննության մարմնի՝ 2002 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ Վ.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան մեղադրանք է առաջադրվել 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 251-րդ հոդվածով և 232-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ Դ.Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան մեղադրանք է առաջադրվել 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 251-րդ հոդվածով և 268-րդ հոդվածի «ա» կետով:

2. 2003 թվականի փետրվարի 4-ին թիվ 91204602 քրեական գործից անջատվել է Դ.Հարությունյանի և Վ.Գրիգորյանի վերաբերյալ մասը, անջատված մասին շնորհվել թիվ 91200703 համարը:

2003 թվականի փետրվարի 28-ին թիվ 91200703 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2003 թվականի մայիսի 5-ի դատավճռով Վ.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասով, 251-րդ հոդվածով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով:

Նույն դատավճռով Դ.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 251-րդ հոդվածով, 268-րդ հոդվածի «ա» կետով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով:

3. ՀՀ զինվորական դատախազ Գ.Ջհանգիրյանի՝ 2004 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցվել է վարույթ:

4. Նախաքննության մարմնի՝ 2004 թվականի նոյեմբերի 17-ի, նույն թվականի նոյեմբերի 19-ի և 29-ի որոշումներով Իսկանդար Միսկարյանը, Սահակ Գասպարյանը և Արամ Համբարձումյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով:

5. Քննության առնելով ՀՀ զինվորական դատախազ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2004 թվականի դեկտեմբերի 10-ին որոշում է կայացրել բո-

ողքը բավարարելու, Վ.Գրիգորյանի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2003 թվականի մայիսի 5-ի դատավճիռը բեկանելու և գործը նոր նախաքննության ուղարկելու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2004 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ թիվ 91200703 քրեական գործը միացվել է թիվ 91204602 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է թիվ 91204602 քրեական գործի համարի ներքո:

6. 2004 թվականի դեկտեմբերի 28-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Վ.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք առաջադրելու մասին:

7. 2005 թվականի մարտի 25-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ի.Միսկարյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նույն թվականի մարտի 29-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Կոմիտաս Զարգարյանի և Արտակ Մախսուդյանի նկատմամբ քրեական գործ չհարուցելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ կապված իրադրության փոփոխման հետ:

Նախաքննության մարմնի՝ 2005 թվականի ապրիլի 14-ի որոշումներով Սահակ Գասպարյանին և Արամ Համբարձումյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրանց նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Վ.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

8. 2005 թվականի ապրիլի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռով Վ.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 5 տարի ժամկետով: Նույն դատավճռով Ա.Համբարձումյանը և Ս.Գասպարյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել տուգանքի՝ 200.000-ական ՀՀ դրամ գումարի չափով: Վճռվել է նաև որպես վնասի հատուցում Վ.Գրիգորյանից հօգուտ պետբյուջեի բռնագանձել 1.800 ԱՄՆ դոլար գումար, որպես տուժող Սուրեն Մուրադյանի հուղարկավորության և դատական ծախսեր Վ.Գրիգորյանից հօգուտ տուժողի իրավահաջորդ Հրաչյա Մուրադյանի բռնագանձել 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար,

իսկ Ա.Համբարձումյանից և Ս.Գասպարյանից՝ 200.000-ական ՀՀ դրամ գումար:

10. Տուժողի իրավահաջորդ Հ.Մուրադյանի, ամբաստանյալ Վ.Գրիգորյանի պաշտպան Վ.Աղասյանի և մեղադրող Գ.Ավետիսյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2006 թվականի հունիսի 20-ին դատավճիռ է կայացրել տուժողի իրավահաջորդի բողոքը մասնակիորեն՝ ամբաստանյալներ Ա.Համբարձումյանի և Ս.Գասպարյանի նկատմամբ նշանակված պատժի մասով, ամբաստանյալ Վ.Գրիգորյանի պաշտպանի բողոքը մասնակիորեն՝ քաղաքացիական հայցի մասով, մեղադրողի բողոքը մասնակիորեն՝ քաղաքացիական հայցի և ամբաստանյալներ Ա.Համբարձումյանի ու Ս.Գասպարյանի մասով բավարարելու, իսկ մնացած մասերով ներկայացված բողոքներն առանց բավարարման թողնելու մասին: Ամբաստանյալներ Ա.Համբարձումյանը և Ս.Գասպարյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ համապատասխանաբար 3 տարի 6 ամիս և 3 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով նրանց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և նշանակվել է փորձաշրջան: Վճռվել է նաև Վ.Գրիգորյանից, Ս.Գասպարյանից և Ա.Համբարձումյանից համապարտության կարգով հօգուտ պետբյուջեի բռնագանձել 1.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ հօգուտ տուժողի իրավահաջորդ Հ.Մուրադյանի՝ 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես տուժող Ս.Մուրադյանի հուղարկավորության և դատական ծախսեր:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի հունիսի 20-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Վ.Գրիգորյանը, մեղադրող Հ.Թադևոսյանը և տուժողի իրավահաջորդ Հ.Մուրադյանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ մեղադրողի վճռաբեկ բողոքը բավարարվել է, ամբաստանյալներ Ա.Համբարձումյանի և Ս.Գասպարյանի նկատմամբ նշանակված պատիժների մասով Վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի հունիսի 20-ի դատավճիռը՝ բեկանվել, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության: Հիշյալ դատավճիռը մյուս մասով թողնվել է անփոփոխ, տուժողի իրավահաջորդ Հ.Մուրադյանի վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման, իսկ ամբաստանյալ Վ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը՝ առանց քննության:

12. Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2006 թվականի սեպտեմբերի 26-ին դատավճիռ է կայացրել մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին: Ամբաստանյալներ Ա.Համբարձումյանը և Ս.Գասպարյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ համապատասխանաբար 4 տարի և 3 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ Ազգային Ժողովի՝

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2006 թվականի հուլիսի 7-ի որոշման կիրառմամբ ամբաստանյալներն ազատվել են պատժից:

13. Հրաչյա Մուրադյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2016 թվականի նոյեմբերի 24-ին *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 11275/07) վճիռ է կայացրել, որով ճանաչել է դիմումատուի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) երաշխավորված իրավունքների խախտման փաստը:

Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի վերոնշյալ վճիռը՝ տուժողի իրավահաջորդ Հ.Մուրադյանը և նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք են ներկայացրել:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշման վերանայման վարույթ, և տուժողի իրավահաջորդ Հ.Մուրադյանի ու նրա ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

14. Վ.Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ *«(...) [Ն]ա, հանդիսանալով ՊՔ թիվ 59703 զորամասի ֆիզիկական պատրաստության ծառայության պետ, կոչումով լեյտենանտ, պաշտոնատար անձ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, ցանկանալով ցույց տալ իր անպատժելիությունն ու առավելությունը շարքային զինծառայողների հանդեպ, չարաշահել է պաշտոնեական դիրքը, անցել պաշտոնեական լիազորությունների սահմանը, որոնք անզգուշությամբ ծանր հետևանքներ են առաջացրել.*

*Այսպես, 2002 թվականի հուլիսի 21-ին՝ ժամը 17-ի սահմաններում, ԼՂՀ Մարտունի քաղաքի փոստի մոտ շարքային Սուրեն Հրաչյայի Մուրադյանի ձեռքին տեսնելով իր եղբոր՝ Աշոտ Գրիգորյանի գողացված ժամացույցը, բռնել է նրա ձեռքից և հարցրել, թե նրան որտեղից այդ ժամացույցը, և երբ Ս.Մուրադյանը պատասխանել է, թե չի հիշում, թե ով է իրեն տվել այդ ժամացույցը, բարկացել է, հայհոյել, ուժեղ թափահարել նրա ձեռքը, որի ընթացքում հարվածել է Սուրեն Մուրադյանի ձախ թուլակողին՝ փայծաղի*

*շրջանում, որի հետևանքով Ս.Մուրադյանի մոտ առաջացրել է փայծաղի ենթապատյանային պատռվածք, 2002 թվականի օգոստոսի 3-ին տեղափոխվել է Մեխակավանի հոսպիտալ և 2002 թվականի օգոստոսի 4-ին՝ ժամը 21:15-ի սահմաններում, մահացել:*

*Բացի այդ, 2002 թվականի նոյեմբերի 1-ին Վ.Գրիգորյանի բնակարանում կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերվել և առգրավվել են ապօրինի կերպով ձեռք բերված, ապօրինի կերպով պահվող, ռազմամթերք հանդիսացող 33 հատ 7,62 մմ և 9 հատ 5,45 մմ տրամաչափերի փամփուշտներ (...)»:*

Ա.Համբարձումյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ *«(...) [Ն]ա, հանդիսանալով ՊԲ թիվ 59703 զորամասի բուժծառայության պետ, կոչումով լեյտենանտ, պաշտոնատար անձ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել է պաշտոնեական դիրքը, ցուցաբերել է հանցավոր անգործություն, որոնք անզգուշությամբ ծանր հետևանքներ են առաջացրել.*

*Այսպես, 2002 թվականի հուլիսի 25-ին այցելել է ՊԲ թիվ 59703 զորամասի ժամկետային զինծառայող, հիվանդ Սուրեն Հրաչյայի Մուրադյանին, ճիշտ չի ախտորոշել նրա իրական հիվանդությունը, մի քանի «պառացետամոլի» հաբ է տվել, ամբուլատոր և ստացիոնար մատյանների մեջ ոչինչ չի գրանցել, որից հետո, երբ 2002 թվականի հուլիսի 27-ին Ա.Համբարձումյանին կրկին հրավիրել են հիվանդ Ս.Մուրադյանին օգնություն ցույց տալու, հրաժարվել է գնալ և օգնություն ցույց տալ:*

*Բացի այդ, 2002 թվականի հուլիսի 31-ին, առանց Ս.Մուրադյանին հոսպիտալ տեղափոխելու վերաբերյալ որևէ հրահանգ տալու, մեկնել է Երևան, որով և խախտվել է պաշտպանության նախարարի՝ 2000 թվականի մայիսի 29-ի թիվ 586 հրամանը, և Ս.Մուրադյանը հոսպիտալ է տեղափոխվել նախատեսված 7 օրից ուշ՝ 2002 թվականի օգոստոսի 3-ին, որի հետևանքով հոսպիտալում ժամանակին և ճիշտ չեն ախտորոշվել նրա հիվանդությունները, և արդյունքում Ս.Մուրադյանը 2002 օգոստոսի 4-ին՝ ժամը 21:15-ին, մահացել է (...)»:*

Ս.Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ *«(...) [Ն]ա, հանդիսանալով ՊԲ թիվ 59703 զորամասի բուժկետի պետ, կոչումով լեյտենանտ, պաշտոնատար անձ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել է իր պաշտոնեական դիրքը, ցուցաբերել է հանցավոր անգործություն, որոնք անզգուշությամբ ծանր հետևանքներ են առաջացրել.*

*Այսպես, 2002 թվականի հուլիսի 27-ից մինչև օգոստոսի 3-ը մի քանի անգամ այցելել է ՊԲ թիվ 59703 զորամասի ժամկետային զինծառայող, հիվանդ Սուրեն Հրաչյայի Մուրադյանին, ճիշտ չի ախտորոշել նրա իրական հիվանդությունները, չի ախտորոշել Ս.Մուրադյանի փայծաղի մեծացումը, նրա մոտ ախտորոշել է «սուր ռեսպիրատոր հիվանդություն», մի քանի «պարացետամոլի» հաբ է տվել և ջերմիջեցնող դեղ է ներարկել նրան, միջոցներ*

*չի ձեռնարկել Ս.Մուրադյանին բազմակողմանի հետազոտելու ուղղությամբ, որի հետևանքով նրա առողջական վիճակը 2002 թվականի օգոստոսի 3-ին կտրուկ վատացել է, նրան տեղափոխել է Մեխակավանի զինվորական հոսպիտալ, որտեղ, սակայն, Ս.Մուրադյանը 2002 օգոստոսի 4-ին մահացել է (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 211-233):

15. Առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռի համաձայն՝ *«(...) [Ա]մբաստանյալ Վահե Անդրանիկի Գրիգորյանին մեղսագրվող հանցանքները հիմնավորված են և համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ և 235-րդ հոդվածի 1-ին մասերին, իսկ ամբաստանյալներ Արամ Ջավենի Համբարձումյանին և Սահակ Ռաֆիկի Գասպարյանին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասից պետք է վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասի, քանի որ նրանց կատարած արարքը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածության կամ խմբակային շահերից ելնելով այլ նպատակներ չի հետապնդել (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 172-176):

16. Վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի հունիսի 20-ի դատավճռի համաձայն՝ *«(...) Սույն քրեական գործով հետաքննության կամ նախաքննության մարմնի կողմից թույլ չեն տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում:*

*(...) Սույն քրեական գործի՝ առաջին ատյանի դատարանի դատական քննության ժամանակ թույլ չեն տրվել քրեադատավարական օրենքի (...) էական խախտումներ:*

*(...) Հաշվի առնելով (...) շարադրված պատճառաբանությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ վկաներ Հ.Ղուկասյանը և Կ.Քաբայանը որպես իրենց՝ վերաքննիչ դատարանում հաղորդած տվյալների ստացման աղբյուր նշում են հանգուցյալ Սուրեն Մուրադյանին, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ դրանք չեն կարող բավարար հիմք հանդիսանալ քրեական գործը (...) լրացուցիչ նախաքննության վերադարձնելու կամ Դավիթ Հարությունյանի և Կոմիտաս Զարգարյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու՝ համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 325-336):

17. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշման համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ Վահե Գրիգորյանի, Արամ Համբարձումյանի և Սահակ Գասպարյանի գործողություններին տվել է ճիշտ իրավական գնահատական: Հետևաբար արարքների վերաորակման առումով դատավճիռը բեկանելու և քրեական գործը նոր նախաքննության ուղարկելու հիմքեր չկան, ամբաստանյալներին մեղսագրված արարքներն իրավաբանորեն ճիշտ են որակված, այդ առումով վերաքննիչ դատարանի դատավճիռն օրինական է, հիմ-*

*նավորված և պատճառաբանված: Ինչ վերաբերում է տուժողի իրավահաջորդի այն փաստարկին, որ ոչ մի քննիս չի խաղացվել, և ժամացույցներ չեն եղել, ապա այդ պնդումներն անհիմն են, իսկ քննիս խաղալու և ժամացույցների առկայության հանգամանքները հաստատված են գործով ձեռք բերված ապացույցներով: (...) Վերաքննիչ դատարանն անդրադարձել է նաև տուժողի իրավահաջորդի այն պնդումներին, որ համաձայն վկաներ Հ.Ղուկասյանի և Կ.Բաբայանի՝ վերաքննիչ դատարանում տված ցուցմունքների՝ Ս.Մուրադյանին ծեծի են ենթարկել «գնդի հրամանատարի ժ.պ. Կ.Զարգարյանը, ֆիզ. ղեկ Վ.Գրիգորյանը, հրետանու պետ Դ.Հարությունյանը»: Հաշվի առնելով, որ վկաներ Հ.Ղուկասյանը և Կ.Բաբայանը նախաքննության ընթացքում բազմիցս հարցաքննվել են և երբևիցե ցուցմունք չեն տվել սպաների կողմից տուժողին ծեծի ենթարկելու մասին, ինչպես նաև այն, որ նշված վկաները որպես հաղորդած տվյալների ստացման աղբյուր նշել են հանգուցյալ Ս.Մուրադյանին, վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ դրանք չեն կարող բավարար հիմք հանդիսանալ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու կամ Դավիթ Հարությունյանի և Կոմիտաս Զարգարյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու միջնորդություն ներկայացնելու համար (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 379-382):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

18. Բողոք բերած անձանց պնդմամբ՝ Եվրոպական դատարանի դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները հիմք են ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Մասնավորապես, բողոքի հեղինակները, մեջբերելով Եվրոպական դատարանի՝ *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* վճռի հիմնավորումները, նշել են, որ տուժողի իրավահաջորդ Հ.Մուրադյանի դիմումի կապակցությամբ հիշյալ դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում՝ կապված տուժող Ս.Մուրադյանի մահվան հանգամանքների ոչ արդյունավետ քննության հետ: Բացի այդ, Եվրոպական դատարանը մատնանշել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական խախտում՝ արձանագրելով, որ պետությունը տուժողի կյանքի համար վտանգավոր վնասվածքի վերաբերյալ համոզիչ և բավարար բացատրություն չի ներկայացրել: Այլ խոսքով՝ ըստ բողոքի հեղինակների՝ Եվրոպական դատարանը փաստել է, որ իշխանությունները չեն կատարել Ս.Մուրադյանի՝ իրենց խնամքի տակ գտնվելու ժամանակահատվածում տեղի ունեցած մահվան դեպքի վերաբերյալ արժանահավատ բացատրություն տրամադրելու պարտավորությունը:

19. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշումը, բեկանել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 21-ի, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի հունիսի 20-ի, նույն դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 26-ի դատավճիռները և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական խախտումների արձանագրման փաստն արդյոք ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշումը վերանայելու հիմք է:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

*2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:*

Նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

*(...)*

*2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.*

*(...):*

*2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:*

*(...)»:*

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է

անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս, *mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զալյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16 որոշումները):

22. Այսպես՝ *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատու Հ.Մուրադյանի որդուն՝ Ս.Մուրադյանին պատճառված՝ կյանքի համար վտանգավոր վնասվածքի և այդ փաստով իրականացված քննության մասով տեղի են ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական և ընթացակարգային խախտումներ:

22.1. Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում վերահաստատել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման դեպքում արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտավորության մասին իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստելով. *«(…) 2-րդ հոդվածը, որով պաշտպանվում է կյանքի իրավունքը, Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթներից մեկն է (…), մի այնպիսի դրույթ, որից խաղաղ պայմաններում, 15-րդ հոդվածի համաձայն, շեղում կատարել չի թույլատրվում: 3-րդ հոդվածի հետ միասին այն նաև սահմանում է Եվրոպայի խորհրդի ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքներից մեկը: Կոնվենցիայի՝ որպես անհատի պաշտպանության փաստաթղթի խնդիրներից և նպատակից ելնելով՝ անհրաժեշտ է 2-րդ հոդվածը մեկնաբանել և կիրառել այնպես, որ դրանով սահմանված երաշխիքները լինեն գործուն ու արդյունավետ: 2-րդ հոդվածի 1-ին կետով պետության համար սահմանվում է ոչ միայն անձին դիտավորությամբ և ապօրինաբար կյանքից զրկելու արգելք, այլև՝ անձանց կյանքը պաշտպանելու նպատակով իր իրավազորության շրջանակներում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու պարտավորություն (…):*

*(…) [Եվրոպական դատարանն] արգելանքի տակ գտնվող անձանց առնչությամբ նախկինում նշել է, որ այդ անձինք գտնվում են խոցելի իրավիճակում, և որ իշխանություններն ունեն նրանց պաշտպանելու պարտավորություն: Պետությունը պարտավոր է արժանահավատ բացատրություն ներկայացնել արգելանքի տակ պահելու ընթացքում առաջացած վնասվածքների կամ վրա հասած մահվան վերաբերյալ, հակառակ դեպքում անխուսափելիորեն ի հայտ է գալիս Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների ներքո պատասխանատվության հարց: (…) Ինչպես արգելանքի տակ գտնվող անձանց դեպքում, զորակոչիկները նույնպես գտնվում են պետության ձեռքերում, և բացառապես իշխանություններն են ամբողջությամբ կամ մեծ մա-*

*սամբ տեղյակ բանակում տեղի ունեցող դեպքերից: Այդ պատճառով պետությունը նաև պարտավոր է ներկայացնել բավարար և համոզիչ բացատրություն բանակում առաջացած վնասվածքների կամ վրա հասած մահվան վերաբերյալ:*

*(…) [Եվրոպական դատարանը] նշում է, որ կյանքի իրավունքը պաշտպանելու, ինչպես նաև դրանից զրկվելու դեպքի վերաբերյալ պատշաճ տեղեկություններ ներկայացնելու պարտավորության համար անուղղակիորեն պահանջվում է որոշակի արդյունավետ պաշտոնական քննության իրականացում, եթե հիմք կա կարծելու, որ անձին կասկածելի հանգամանքներում հասցվել են կյանքին սպառնացող վնասվածքներ, նույնիսկ այն դեպքում, երբ մահ առաջացրած ոտնձգությունը կատարելու մեջ կասկածվող անձը պետական պաշտոնյա չէ: (…) Որպեսզի քննությունն արդյունավետ համարվի, այն նախ պետք է լինի պատշաճ, այսինքն՝ հնարավորություն տա պարզելու փաստական հանգամանքները և անհրաժեշտության դեպքում ի հայտ բերելու ու պատժելու մեղավորներին:*

*(…) Արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորությունը ոչ թե արդյունքի, այլ միջոցի պարտավորություն է. իշխանությունները պետք է ձեռնարկեն հնարավոր բոլոր ողջամիտ միջոցները՝ ապահովելու համար տվյալ դեպքի վերաբերյալ ապացույցները՝ ներառյալ, inter alia, վկաների հարցաքննությունը, փորձաքննությունները և, անհրաժեշտության դեպքում, որի միջոցով հնարավոր է ամբողջական և ճշգրտորեն կերպով արձանագրել վնասվածքը և իրականացնել կլինիկական տվյալների, այդ թվում՝ մահվան պատճառի օբյեկտիվ վերլուծություն: (…) Քննության արդյունավետությունը, սակայն, չի կարող միայն գնահատվել կազմված արձանագրությունների, հարցաքննված վկաների կամ կատարված այլ քննչական գործողությունների թվով: (…) Քննության արդյունքները պետք է հիմնված լինեն համապատասխան բոլոր տարրերի բազմակողմանի, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա: Քննության համար ակնհայտորեն անհրաժեշտ միջոցները պատշաճորեն չձեռնարկելը վճռորոշ կերպով խոչընդոտում է գործի փաստական հանգամանքները պարզելու և, անհրաժեշտության դեպքում, մեղավորներին ի հայտ բերելու՝ քննության հնարավորությունը և անխուսափելիորեն հանգեցնում է արդյունավետության պահանջվող չափանիշին չհամապատասխանելուն:*

*(…) Քննության՝ բավականաչափ արդյունավետ լինելու հարցը պետք է քննվի համապատասխան բոլոր փաստերի հիման վրա, ինչպես նաև՝ հաշվի առնելով քննչական աշխատանքի գործնական հանգամանքները: Քննության արդյունավետության ևմազագույն շեմը բավարարելու համար հետազոտության բնույթը և աստիճանը կախված են տվյալ գործի հանգամանքներից: (…) Եվ ի վերջո, պետք է նշել, որ այս պահանջները տարածվում են ոչ միայն նախնական քննության փուլի, այլև դատական քննության փուլի վրա, որը պետք է նաև բավարարի 2-րդ հոդվածով սահմանված պա-*

*հանջները (…)»* (տե՛ս *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 132-136-րդ կետերը):

22.2. Վերոգրյալ դրույթները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն ընդգծել է. *«(…) Պետության կողմից Սուրեն Մուրադյանի մահվան վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պարտավորությունը բավարար չափով կատարված լինելու հարցը լուծելու համար [Եվրոպական դատարանն] առաջին հերթին պետք է ուսումնասիրի իշխանությունների կողմից կատարված քննությունը և դրա արդյունքները: Այս առումով [Եվրոպական դատարանը] նշում է, որ կողմերը չեն վիճարկում այն հանգամանքը, որ Ս.Մուրադյանը մահացել է նրա փայծաղին հասցված հարվածի հետևանքով, որը սկզբում առաջացրել է փայծաղի ենթապատյանային պատռվածք, իսկ ավելի ուշ՝ լրիվ պատռվածք և սուր արյունահոսություն: Պարզվել է, որ բժշկական անփութությունը ևս կարող էր նպաստել վերջինիս մահվանը: Ինչ վերաբերում է մահացու վնասվածքին, ապա իշխանություններն իրականացրել են այս հանգամանքի պաշտոնական քննություն և հանգել են այն հետևության, որ այն պատճառվել է 2002 թվականի հուլիսի 21-ին, երբ սպա Վ.Գ.-ն այլ անձանց ներկայությամբ Ս.Մուրադյանի հետ վիճաբանության ժամանակ ուժեղ թափահարել է նրա ձեռքը, որի ընթացքում նրանք ձեռքերով, ըստ երևույթին, պատահաբար հարվածել կամ կպել են Ս.Մուրադյանի որովայնի ձախ հատվածին, որն առաջացրել է փայծաղի ենթապատյանային պատռվածք: Այնուամենայնիվ, [Եվրոպական դատարանը] կասկածներ ունի Ս.Մուրադյանի մահացու վնասվածքի մասին այս բացատրության վերաբերյալ՝ հաշվի առնելով այդ հետևություններին հանգեցրած քննության ընթացքում թույլ տրված բազմաթիվ լուրջ թերությունները:*

*(…) Այս առնչությամբ [Եվրոպական դատարանը] նշում է, որ իշխանություններն սկզբում արագ արձագանքել են Ս.Մուրադյանի մահվանը: Նրա մահվան հաջորդ օրը՝ 2002 թվականի օգոստոսի 5-ին, քննիչը որոշում է կայացրել դիակի դատաբժշկական փորձաքննություն, այդ թվում՝ դիահերձում նշանակելու մասին: Փորձագետը դատաբժշկական փորձաքննությունը սկսել է հաջորդ օրը և նույն օրը հայտնել է քննիչին, որ Ս.Մուրադյանը մահացել է հին ու նոր արյունազեղումների առկայությամբ փայծաղի վնասվածքի հետևանքով: Այնուհետև քննիչը որոշում է կայացրել [ՀՀ քրեական] օրենսգրքի համապատասխան հոդվածի հատկանիշներով, այն է՝ դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք հասցնելը, որի հետևանքով տուժողը մահացել է, քրեական գործ հարուցելու մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սուրեն Մուրադյանը ենթարկվել է վատ վերաբերմունքի» (…): Այնուամենայնիվ, դրանից չի հետևում, որ նախաքննական մարմինն իրական փորձեր է արել քննության համար անհրաժեշտ միջոցներն ակտիվորեն ձեռնարկելու և համապատասխան հանգամանքները պատշաճորեն հետազոտելու ուղղությամբ՝ չնայած նրան, որ առկա են եղել մի շարք կոնկ-*

*րետ կողմնորոշիչներ: [Եվրոպական դատարանը], մասնավորապես, նշում է հետևյալը.*

*(…) Առաջին հերթին՝ դեռևս 2002 թվականի օգոստոսի 7-ին նախաքննական մարմինը, հարցաքննելով մի շարք վկաների, ձեռք է բերել ապացույցներ, որոնց համաձայն՝ Ս.Մուրադյանը ընդհարում է ունեցել նույն զորամասի երկու սպաների՝ Վ.Գ.-ի և Դ.Հ.-ի հետ: Ընդհարումը սկսվել է ժամացույցի ենթադրյալ գողության պատճառով 2002 թվականի հուլիսի 21-ին տեղի ունեցած վիճաբանությամբ, և Ս.Մուրադյանին ժամանակ են տվել կոնկրետ պահանջներ կատարելու համար՝ ենթադրաբար նրան սպառնալով, որ դրանք չկատարելու դեպքում նա «խնդիրներ կունենա» և «կպատժվի»: Ավելին՝ մի քանի օր անց (մոտավորապես 2002 թվականի հուլիսի 23-ից 25-ն ընկած ժամանակահատվածում), ըստ երևույթին այդ ժամկետը լրանալուն պես, այդ սպաները նրան մի քանի անգամ տարել են շտաբ, այդ թվում՝ սպա Կ.Զ.-ի աշխատասենյակ, որտեղ սպառնալիքները ենթադրաբար շարունակվել են: Պարզվել է, որ այդ նույն ժամանակահատվածում Ս.Մուրադյանն սկսել է իրեն վատ զգալ (…): Չնայած այդ բոլոր ապացույցներին, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ սպաներ Դ.Հ.-ն, Վ.Գ.-ն և Կ.Զ.-ն հանցավոր արարք են կատարել, նրանք անմիջապես չեն մեկուսացվել և հարցաքննվել են համապատասխանաբար միայն երկու, երեք և տասն օր անց (…): [Եվրոպական դատարանը] նշում է, որ թեև չկան ապացույցներ, որոնցով հիմնավորվում է այս սպաների կողմից նախնական համաձայնությամբ գործելու հանգամանքը, սակայն միայն այն փաստը, որ այդպիսի նախնական համաձայնության վտանգի հավանականությունը նվազեցնելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվել, համարվում է քննության պատշաճ իրականացման հարցում լուրջ թերություն:*

*(…) Ինչ վերաբերում է այդ սպաների փաստացի հարցաքննություններին, ապա նախաքննական մարմինը, ունենալով ականատեսի ցուցմունք այն մասին, որ 2002 թվականի հուլիսի 21-ին տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Ս.Մուրադյանի նկատմամբ ակնհայտ ֆիզիկական բռնություն չի գործադրվել, այնուամենայնիվ, որոշել է իր ուշադրությունը հիմնականում սևեռել այդ վիճաբանության վրա՝ առանց Ս.Մուրադյանի՝ հետագայում զորամասի շտաբ կատարած այցերին առնչվող հանգամանքները պարզելուն ուղղված լուրջ քայլեր ձեռնարկելու: Սպաներին չեն առաջադրվել մանրամասն հարցեր, որոնց միջոցով հնարավոր կլիներ պարզել այդ այցերի ժամանակ Ս.Մուրադյանին վատ վերաբերմունքի ենթարկելու հնարավոր հանգամանքը: Նրանց կողմից վատ վերաբերմունքի ենթարկելու հանգամանքը հերքելը հեշտությամբ ընդունվել է առանց այդ մասով լրացուցիչ քննության, իսկ որոշ դեպքերում հարցաքննությունները հիմնականում սահմանափակվել են այնպիսի գրավոր ցուցմունքներ վերցնելով, որոնցում սպաները պարզապես պատմում են 2002 թվականի հուլիսի 21-ին տեղի ունեցած դեպքերը (…):*

*(…) Դեպքերին առնչություն են ունեցել և Ս.Մուրադյանի հետ շտաբ են կանչվել երկու այլ զինծառայողներ՝ Կ.Ե.-ն և Գ.Մ.-ն, որոնք կարող էին քննության համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ հայտնել: Ճիշտ է, որ նրանք երկուսն էլ որպես վկա հարցաքննվելու ժամանակ հերքել են, որ որևէ տեղեկություն ունեն շտաբ կատարած այցերի ժամանակ Ս.Մուրադյանի՝ վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին (…): Սակայն չի բացառվում, որ նրանք ցուցմունքներում չեն տրամադրել իրենց հայտնի բոլոր տեղեկությունները և, ճնշումներից վախենալով, ճշմարտությունը չեն հայտնել՝ հաշվի առնելով, որ գործին առնչություն ունեցող անձինք նրանց վերադասներն էին այն զորամասում, որտեղ նրանք շարունակել են իրենց ծառայությունը, այդ թվում՝ այնպիսի բարձրաստիճան սպաներ, ինչպիսին էր զորամասի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատարը, որը նաև այդ զորամասի հրամանատարի տեղակալն էր: Նախաքննական մարմինը, սակայն, չի դիտարկել այս հնարավոր խնդիրը լուծելու ուղղությամբ համապատասխան այնպիսի քայլեր ձեռնարկելու հնարավորությունը, ինչպիսին [ՀՀ քրեական] դատավարության օրենսգրքի 98-րդ և 98.1-րդ հոդվածներով նախատեսված պաշտպանության միջոցներն իրականացնելն է, օրինակ՝ նշված վկաների ծառայության վայրը փոփոխելու և դրանով հնարավոր ճնշումներից նրանց պաշտպանությունն ապահովելու միջոցով (…):*

*(…) [Եվրոպական դատարանը] նշում է, որ անորոշ են դատաբժշկական փորձագետ Մ.Բ.-ի կողմից արված հետևությունները՝ կապված քննության համար էական նշանակություն ունեցող՝ Ս.Մուրադյանի մոտ առաջին և հիմնական արյունազեղումն առաջանալու օրվա հետ: Մասնավորապես, փորձագետը եզրակացրել է, որ այդ արյունազեղումն առաջացել է մահվանից «ավելի քան 8-ից 10 օր» առաջ (…): Այսպիսով, մի կողմից փորձագետը նշում է կոնկրետ ժամանակահատվածի մասին, մասնավորապես՝ 8-ից 10 օր, սակայն մյուս կողմից կարծիք է հայտնում, որ արյունազեղումը կարող էր առաջացած լինել այդ ժամանակահատվածից առաջ ցանկացած ժամանակ՝ դրանով իսկ տալով էական նշանակություն [ունեցող] հարցին շատ անորոշ պատասխան և միևնույն ժամանակ զգալիորեն նվազեցնելով այս ապացույցի ապացուցողական ուժը: Նախաքննական մարմինը չի պարզել այս հարցը, այդ թվում՝ ինչ է նկատի ունեցել դատաբժշկական փորձագետը «ավելի քան 8-ից 10 օր առաջ» արտահայտությամբ, ինչպես նաև այն, թե ինչու հնարավոր չի եղել նշել արյունազեղումն առաջանալու ավելի կոնկրետ ժամանակ, մինչդեռ դա հնարավոր է եղել անել նույն հատվածում առաջացած երկրորդ արյունազեղման դեպքում (մահվանից 1-ից 2 օր առաջ):*

*(…) Երբևէ չի իրականացվել տեղանքի զննություն, այդ թվում՝ չի զննվել սպա Կ.Զ.-ի աշխատասենյակը, որտեղ 2002 թվականի հուլիսի 21-ի վիճաբանությունից հետո կանչել են Սուրեն Մուրադյանին:*

*(…) [Եվրոպական դատարանը] նաև նշում է, որ վատ վերաբերմունքի վերաբերյալ վարկածը պատշաճորեն չի ստուգվել նույնիսկ այն բանից հետո, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինները ձեռք են բերել*

*ապացույց, որի համաձայն գործով ներգրավված երեք սպաներից առնվազն երկուսը, մասնավորապես՝ Դ.Հ.-ն և Կ.Զ.-ն, առնչություն ունեն բռնության դեպքին (...): Առավել ուշագրավ է այն, որ սպա Կ.Զ.-ն փաստացի առնչություն է ունեցել Ս.Մուրադյանի հետ նույն նպատակով իր աշխատասենյակ կանչված մյուս երկու զինծառայողներից մեկի՝ Գ.Մ.-ի նկատմամբ նույն պատմության համատեքստում բռնություն գործադրելուն: Այս հանգամանքին նշանակություն չի տրվել, և քրեական վարույթն իրականացնող մարմինները հեշտությամբ ընդունել են այն սցենարը, որի համաձայն միայն զինծառայող Գ.Մ.-ն է դարձել բռնության գործողությունների զոհ, այլ ոչ թե Ս.Մուրադյանը (...): Քննության ընթացքը որևէ կերպ չի փոխվել նույնիսկ այն բանից հետո, երբ Ս.Մուրադյանի հետ նրա մահվանից ոչ շատ առաջ կապի մեջ եղած երկու վկաները՝ Կ.Բ.-ն և Հ.Ղ.-ն, իստակ հայտնել են, որ վերջինս պատմել է, որ սպաներ Վ.Գ.-ն, Դ.Հ.-ն և Կ.Զ.-ն վատ վերաբերմունք են դրսևորել իր նկատմամբ: [Եվրոպական դատարանը] բավարար չափով համոզիչ չի համարում այդ պնդումները մերժելու պատճառները (...):*

*(...) Այսպիսով, վերոնշյալ խնդիրները լուծելու, 2002 թվականի հուլիսի 21-ի վիճաբանությանը հաջորդող օրերին կատարվածի բազմակողմանի քննություն իրականացնելու, ինչպես նաև դիմումատուի որդու՝ վատ վերաբերմունքի ենթարկված լինելու հանգամանքը պարզելու փոխարեն՝ քննության համար առանցքային է դարձվել հենց վիճաբանության հանգամանքը՝ նույնիսկ այն դեպքում, երբ, ինչպես արդեն նշվել է, չի եղել որևէ ապացույց առ այն, որ այդ վիճաբանության ժամանակ Ս.Մուրադյանը ենթարկվել է այնպիսի բնույթի և ծանրության ֆիզիկական բռնության, որի հետևանքով կարող էր պատճառվել նրա փայծաղի՝ կյանքի համար վտանգավոր վնասվածք: [Եվրոպական դատարանը] նշում է, որ ոչ շուտ, քան երկու տարի հետո է դեպքին առնչություն ունեցող սպաներից մեկը հայտնել, որ նախկինում չի ասել ամբողջ ճշմարտությունը, և որ 2002 թվականի հուլիսի 21-ի վիճաբանության ժամանակ իրականում պատահաբար հարված է հասցվել Ս.Մուրադյանի որովայնի հատվածին (...): Նախաքննական մարմինը հեշտությամբ ընդունել է այդ պնդումը, մինչդեռ առկա չի եղել այն հիմնավորող որևէ օբյեկտիվ ապացույց, և հետագա ամբողջ քննությունը, այդ թվում՝ բոլոր դատաբժշկական փորձաքննություններն ուղղված են եղել հիմնավորելու այն վարկածը, որ առաջին արյունազեղումը և փայծաղի ենթապատյանային պատռվածքն առաջացել են պատահական հարվածի հետևանքով: [Եվրոպական դատարանը], սակայն, նշում է, որ նույնիսկ այս հետևությունն արվել է մի շարք թերություններով:*

*(...) Նախ, ինչպես արդեն նշվել է, դեպքերի այս վարկածն ամբողջությամբ հիմնված է եղել դեպքերին առնչություն ունեցող այն սպայի ցուցմունքի վրա, որը չէր կարող համարվել օբյեկտիվ վկա, և որը, ավելին, քրեական գործով վարույթի ամբողջ ընթացքում այդ մասին տվել է հակասող ցուցմունքներ (...):*

*(...) Թեև համապատասխան բժշկական փորձագետների պնդմամբ առաջին արյունազեղումը և փայծաղի ենթապատյանային պատռվածքն առաջացել են 2002 թվականի հուլիսի 21-ի վիճաբանության ընթացքում սպա Վ.Գ.-ի կողմից պատահաբար հասցված հարվածի հետևանքով, սակայն [Եվրոպական դատարանի] ուշադրությունից չի վրիպել այն հանգամանքը, որ դատաբժշկական փորձագետներին ներկայացվել է միայն մեկ վարկած, որի համաձայն՝ Ս.Մուրադյանին սպա Վ.Գ.-ի նկարագրած հանգամանքներում հասցվել է մեկ հարված: Հետևաբար զարմանալի չէ, որ փորձագետներն այդ հարվածը համարել են նշված վնասվածքների առաջացման պատճառ: Դա, սակայն, չի կարող մեկնաբանվել որպես սպա Վ.Գ.-ի պնդումների հավաստիությունը հաստատող կամ այդ վնասվածքներն իրականում պատճառվելու միանգամայն այլ՝ նախաքննական մարմնի կողմից պատշաճորեն և դատաբժշկական փորձագետներին չներկայացված սցենարի հավանականությունը բացառող հանգամանք:*

*(...) Որևէ համոզիչ բացատրություն չի տրվել այն հանգամանքի վերաբերյալ, որ Ս.Մուրադյանից մահվանից առաջ հոսպիտալում վերցված արյան միևնույն նմուշի մեջ սկզբում չեն հայտնաբերվել մալարիայի հարուցիչներ, իսկ հետո դրանք հայտնաբերվել են: Դատաբժշկական փորձագետները կա՛մ տրամադրել են հակասող և ոչ բավարար բացատրություններ, կա՛մ որևէ բացատրություն չեն տրամադրել (...): Հատկանշական է, որ մալարիայի ախտորոշման հիման վրա բացատրվել է Ս.Մուրադյանի փայծաղի մեծացման և դեֆորմացման հանգամանքը, ինչպես նաև նշվել է, որ այն կարող էր պատռվել նույնիսկ թույլ հպումից:*

*(...) Նախաքննական մարմինը չի փորձել պարզել, թե արդյո՞ք բժշկական տեսանկյունից հնարավոր է, որ Ս.Մուրադյանը սկսեր իրեն վատ զգալ միայն մոտավորապես 2002 թվականի հուլիսի 24-ից հետո, եթե վնասվածքը նրա փայծաղին հասցվել է 2002 թվականի հուլիսի 21-ին, և արդյո՞ք հնարավոր է, որ 2002 թվականի հուլիսի 21-ի վիճաբանության ժամանակ ցավի ակնհայտ դրսևորումներ եղած չլինեն այն դեպքում, երբ նրան հասցվել է վնասվածք, որի հետևանքով առաջացել է 10x9սմ չափերի արյունազեղում, ինչպես նաև՝ փայծաղի ենթապատյանային պատռվածք: Դատաբժշկական փորձագետները դիմումատուի համապատասխան հարցերին ի պատասխան համոզիչ բացատրություն չեն տրամադրել (...):*

*(...) Ինչ վերաբերում է Ս.Մուրադյանի փայծաղի շրջանում երկրորդ արյունազեղմանը, որն առաջացել է նրա մահվանից 1-ից 2 օր առաջ, ապա, ըստ երևույթին, որևէ էական փորձ չի արվել նաև արյունազեղումն առաջանալու պատճառները պարզելու, ինչպես նաև փայծաղի պատռվածքի հետ դրա հնարավոր կապը պարզելու ուղղությամբ: Համարվել է, որ այդ արյունազեղումն առաջացել է հոսպիտալում Ս.Մուրադյանի վայր ընկնելու հետևանքով (...): Նման հիմնավորման դեպքում, սակայն, լիովին անտեսվում է այն հանգամանքը, որ տվյալ արյունազեղումը, ինչպես պարզվել է, առաջացել է Ս.Մուրադյանի մահվանից 1-ից 2 օր առաջ, մինչդեռ հոսպիտա-*

*լում նրա վայր ընկնելը, ըստ երևույթին, տեղի է ունեցել նրա մահից առաջ՝ երկու ժամից էլ կարճ ժամանակահատվածում (...): Ավելին՝ պարզ չէ, թե նախաքննական մարմինն ինչ հիմքով է պարզված համարել, որ վայր ընկնելիս Ս.Մուրադյանի ձեռքը եղել է իր փորի տակ (...):*

*(...) [Եվրոպական դատարանը] նաև անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի ազգային անվտանգության ծառայության տնօրենի՝ 2004 թվականի նոյեմբերի 5-ի գրությանը, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի ավագ օգնականի՝ 2004 թվականի նոյեմբերի 24-ի որոշմանը: Դրանցից առաջինը՝ «գաղտնի» նշումով գրությունը, վերաբերում էր «[Սուրեն Մուրադյանի] հայտնի ծեծին», իսկ մյուսում նշվել է, որ քննությամբ պարզվել է, որ Ս.Մուրադյանին սպա Կ.Զ.-ի աշխատանքային սենյակում ծեծել են փայտե ձողով (...): Այսպիսով, այս փաստաթղթերի բովանդակությունից պարզ է դառնում, որ իշխանություններն առնվազն բավարար ապացույց են ունեցել այն մասին, որ Ս.Մուրադյանը ենթարկվել է ծեծի, սակայն գործողություններ չեն ձեռնարկել կամ չեն ցանկացել ձեռնարկել այդ ապացույցի առնչությամբ: Լեռնային Ղարաբաղի ազգային անվտանգության ծառայության տնօրենի հայտնած տեղեկությունը չի ազդում այս եզրակացության վրա, քանի որ չի տրամադրվել որևէ այլ համոզիչ բացատրություն վերջինիս կողմից արված «[Սուրեն Մուրադյանի] հայտնի ծեծ» արտահայտության վերաբերյալ (...)* (տե՛ս *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 137-152-րդ կետերը):

22.3. Վերոգրյալի արդյունքում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ իշխանություններն արդյունավետ քննություն չեն իրականացրել Ս.Մուրադյանին մահացու վնասվածք պատճառվելու հանգամանքների կապակցությամբ: Հետևաբար, ըստ դատարանի, տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում (տե՛ս *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 153-154-րդ կետերը):

Եվրոպական դատարանը եզրահանգել է նաև, որ իշխանությունների կողմից իրականացված քննությունն արդյունավետ չի եղել, դրա արդյունքները չի կարելի համարել բավականաչափ հուսալի, իսկ Ս.Մուրադյանի կյանքի համար վտանգավոր վնասվածքի վերաբերյալ բացատրությունը՝ համոզիչ և բավարար: Բացի այդ, չի կարող համարվել, որ իշխանությունները կատարել են դիմումատուի որդու՝ իրենց խնամքի տակ գտնվելու ժամանակահատվածում տեղի ունեցած մահվան դեպքի վերաբերյալ արժանահավատ բացատրություն տրամադրելու պարտավորությունը: Հետևաբար, ըստ դատարանի, տեղի է ունեցել նաև Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական խախտում (տե՛ս *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 155-156-րդ կետերը):

23. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական խախ-

տումների արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշումը վերանայելու հիմք է:

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյո՞ք վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

25. Այսպես, Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:*

*Սկոցցարին և Ջուննտան* ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«(…) [Վ]ճիռը, որով [Եվրոպական դատարանը] խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ տալու համար [Եվրոպական դատարանի] արձանագրած խախտումներին և հնարավորինս շտկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում՝ պայմանով, որ դրանք համատեղելի են [Եվրոպական դատարանի] վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ:*

*Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխհատուցման կարգով գումարների տրամադրման նպատակը բացառապես կրած վնասի համար հատուցում տալն է այնքանով, որքանով որ այդ վնասը հետևանք է խախտման, որն այլ կերպ վերականգնվել չի կարող»* (տե՛ս *Scozzari and Giunta v. Italy* գործով Եվրոպական դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250):

*Մելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի* գործով Եվրոպական դատարանը նշել է. *«Կոնվենցիայի խախտում արձանագրած [Եվրոպական դատարանի] վճռով պատասխանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (restitutio in integrum): Եթե restitutio in integrum-ը գործնականում հնարավոր չէ, ապա պատասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (…)»* (տե՛ս *Selcuk and*

*Asker v. Turkey* գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125):

25.1. Հաշվի առնելով Եվրոպական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Ժ.Մեֆիլյանի* գործով որոշմամբ արձանագրել է. *«(...) Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարտավորությունները.*

*1. վճարել նշանակված փոխհատուցումը,*

*2. անհրաժեշտության դեպքում հօգուտ դիմումատուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝*

*- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,*

*- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (restitutio in integrum), իսկ դրա անհնարինության դեպքում Դատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ համատեղելի այլ միջոցներով ապահովել իր ստանձնած պարտավորությունների կատարումը,*

*3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում (...)»* (տե՛ս *Ժիրայր Մեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը):

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում պետությունն արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, դրա՝ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև *«restitutio in integrum»*-ն ապահովելու հնարավորությունը: Եթե վերոնշյալ հանգամանքների գնահատումը վկայում է, որ գործի վերաբացման արդյունքում հնարավոր է վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա վարույթի նորոգում պետք է տեղի ունենա (տե՛ս *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշման 19-րդ կետը): Ընդ որում, այդ առումով հատկանշական է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» հանձնարարականը, որտեղ նշվում է, որ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ, և դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա ներպետական որոշման բա-

ցասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

27. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման առնչությամբ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ *«(...) [Ք]րեական պատժամիջոցների կիրառման գլխավոր նպատակներից են հատուցումը՝ որպես զոհերի համար արդարադատության միջոց, և ընդհանուր զսպումը, որն ուղղված է նոր խախտումների կանխարգելմանը և օրենքի գերակայության պահպանմանը: Հետևաբար այս նպատակներից և ոչ մեկը չի կարող ապահովվել առանց ենթադրյալ հանցագործներին դատարանի առջև կանգնեցնելու: Հնարավոր անմիջական կատարողների նկատմամբ քննություն իրականացնելու իշխանությունների ձախողումը խաթարում է քրեաիրավական մեխանիզմի արդյունավետությունը, որն ուղղված է ապօրինի սպանությունները կանխարգելելուն, զսպելուն ու պատժելուն: Պետության՝ [Կոնվենցիայի] 2-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային պարտավորությունների պահպանումը պահանջում է, որ ներպետական իրավական համակարգը ցուցադրի իր կարողությունը և պատրաստակամությունը՝ կիրառելու քրեական արդարադատությունն այն անձանց նկատմամբ, ովքեր ապօրինի խլել են մեկ ուրիշի կյանքը* (տե՛ս, *mutatis mutandis*, *Nachova and Others v. Bulgaria* գործով Եվրոպական դատարանի՝ 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը (գանգատներ թիվ 43577/98 և 43579/98, կետ 160), *Ghimp and Others v. the Republic of Moldova* գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռը (գանգատ թիվ 32520/09, կետ 43), *Jelić v. Croatia* գործով Եվրոպական դատարանի՝ 2014 թվականի հունիսի 12-ի վճիռը (գանգատ թիվ 57856/11, կետ 90), *M. and Others v. Croatia* գործով Եվրոպական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 2-ի վճիռը (գանգատ թիվ 50175/12, կետ 88)):

28. Հաշվի առնելով *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի շրջանակներում Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 22.1-22.3-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման 25-27-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

29. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշման վերանայման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 21-ի, Վե-

րաքննիչ դատարանի՝ 2006 թվականի հունիսի 20-ի և նույն թվականի սեպտեմբերի 26-ի դատավճիռները պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վահե Անդրանիկի Գրիգորյանի, Արամ Ջավենի Համբարձումյանի և Սահակ Ռաֆիկի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի՝ 2006 թվականի օգոստոսի 4-ի որոշումը վերաձայել:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 21-ի, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի հունիսի 20-ի և նույն թվականի սեպտեմբերի 26-ի դատավճիռները բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**39.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

21/32-313-17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ պաշտպան | Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ |

2017 թվականի օգոստոսի 21-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 19-ի որոշման դեմ մեղադրյալ Սուրեն Արսենի Խաչատուրովի պաշտպան Ն.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2015 թվականի մայիսի 27-ին Ռուսաստանի Դաշնության քննչական կոմիտեի Մոսկվա քաղաքի քննչական գլխավոր վարչության Հյուսիսային վարչական շրջանի քննչական վարչությունում հարուցվել է թիվ 399834 քրեական գործը՝ ՌԴ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի «ա» և «գ» կետերի հատկանիշներով:

2015 թվականի հունիսի 10-ին որոշում է կայացվել Սուրեն Արսենի Խաչատուրովին որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ ՌԴ քրեական

օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի և 290-րդ հոդվածի 5-րդ մասի «ա», «գ» կետերով:

2015 թվականի հունիսի 16-ի որոշմամբ Ս.Խաչատուրովի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ 2015 թվականի հուլիսի 8-ին՝ միջազգային հետախուզում:

ՌԴ Մոսկվա քաղաքի Սավելևսկի շրջանային դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ Ս.Խաչատուրովի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2. 2017 թվականի ապրիլի 11-ին Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից Ս.Խաչատուրովը հայտնաբերվել և ձերբակալվել է:

2017 թվականի ապրիլի 12-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության կողմից ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն է ուղարկվել Ս.Խաչատուրովին կալանավորելու վերաբերյալ ՌԴ Մոսկվա քաղաքի Սավելևսկի շրջանի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 14-ի որոշումը և նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին գրությունը:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Լ.Մանուկյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ս.Խաչատուրովի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Ս.Խաչատուրովի նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 40 (քառասուն) օր ժամկետով:

2017 թվականի մայիսի 12-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է Ս.Խաչատուրովի հանձնման մասին ՌԴ գլխավոր դատախազության միջնորդությունը:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 19-ի որոշմամբ Ս.Խաչատուրովի նկատմամբ կիրառվել է կալանավորում՝ հանձնելու համար՝ 2 ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազը 2017 թվականի հունիսի 23-ին որոշում է կայացրել Ս.Խաչատուրովի հանձնման թույլտվության մասին:

5. ՀՀ գլխավոր դատախազի հիշյալ որոշման դեմ մեղադրյալ Ս.Խաչատուրովի պաշտպան Ն.Քաղդասարյանի Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ բողոքը մերժել է:

6. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ս.Խաչատուրովի պաշտպան Ն.Քաղդասարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

7. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 2017 թվականի ապրիլի 20-ի թիվ 22-28880 գրության համաձայն՝ «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրի Ս.Խաչատուրով (ծնված 1974 թվականի ապրիլի 1-ին) անհատական տվյալներով անձի վերաբերյալ ՀՀ քաղաքացիության, ինչպես նաև ՀՀ քաղաքացու անձնագիր ստացած լինելու մասին տեղեկություններ առկա չեն» (տե՛ս նյութեր, թերթ 66):

Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության հյուպատոսական բաժնի՝ ՌԴ քաղաքացիության առկայության վերաբերյալ 2017 թվականի հունիսի 1-ի եզրակացության համաձայն՝ «Ս.Խաչատուրովը 1994 թվականի հուլիսի 26-ին ձեռք է բերել ՌԴ քաղաքացիություն և ներկայումս հանդիսանում է ՌԴ քաղաքացի» (տե՛ս նյութեր, թերթեր 156-157):

8. Առաջին ատյանի դատարանում Ս.Խաչատուրովի ժամանակավոր կալանավորման, ինչպես նաև հանձնելու համար կալանավորման միջնորդությունների քննարկման վարույթներում ներգրավված է եղել և մասնակցել է թարգմանիչ (տե՛ս նյութեր, թերթեր 57 և 92):

9. Վերաքննիչ դատարանի 2017 թվականի հուլիսի 10-ի դատական նիստին մասնակցել են դատախազ Ե.Ավագյանը, մեղադրյալ Ս.Խաչատուրովը, չի ներկայացել պաշտպանը (տե՛ս դատական նիստի արձանագրություն, թերթ 125):

Նույն դատական նիստի ձայնային արձանագրության վերարտադրության համաձայն՝ «դատական նիստը հայտարարվել է բացված, հրապարակվել է քննության ենթակա գործը, պարզվել է նիստին ներկայացած անձանց ցանկը. Դատարանը հրապարակել է պաշտպանի դիմումը՝ դատական նիստը հետաձգելու մասին, որին հաջորդել է դատարանի հետևյալ հարցադրումը.

Դատարան. *-[Կ]ա՞ առարկություն դատական նիստի հետաձգման հետ կապված (…)*

*- դուք ի՞նչ կարծիք ունեք, Խաչատուրով.*

Մեղադրյալ. *-ես չհասկացա ճիշտն ասած.*

Դատարան. *-ի՞նչը չհասկացաք.*

մեղադրյալի պատասխանը տրվել է ռուսերենով.

Դատարան. *-հայերենով չե՞ք կարողանում խոսել.*

Մեղադրյալ. *-կարողանում եմ, ուղղակի մի քիչ վատ ա ստացվում.*

Դատարան. *-ոչինչ, վատ խոսեք. (…)»*:

Դատարանը որոշել է դատական նիստը հետաձգել՝ պաշտպանի մասնակցությունն ապահովելու նպատակով (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, նյութեր, թերթ 165):

10. Վերաքննիչ դատարանը 2017 թվականի հուլիսի 10-ին որոշում է կայացրել թարգմանիչ ներգրավելու մասին (տե՛ս նյութեր, թերթ 128):

11. Հաջորդ դատական նիստին՝ 2017 թվականի հուլիսի 13-ին մասնակցել են դատախազ Ե.Ավագյանը, պաշտպան Ն.Բաղդասարյանը, չի ներկայացվել մեղադրյալ Ս.Խաչատուրովը (տե՛ս նյութեր, թերթ 137):

Երրորդ դատական նիստին՝ 2017 թվականի հուլիսի 18-ին, մասնակցել են դատախազ Ե.Ավագյանը, պաշտպան Ն.Բաղդասարյանը և մեղադրյալ Ս.Խաչատուրովը (տե՛ս նյութեր, թերթ 161):

Վերջին դատական նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հուլիսի 19-ին, որի ժամանակ հրապարակվել է մեղադրյալ Ս.Խաչատուրովի հանճնման վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի որոշման դեմ պաշտպանի ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշումը:

11.1. Վերաքննիչ դատարանի դատական նիստերին թարգմանիչ հրավիրելու վերաբերյալ ծանուցումներ առկա չեն, և համաձայն դատական նիստերի համառոտագրությունների ու ձայնային արձանագրությունների՝ դատական նիստերին թարգմանիչ չի մասնակցել, ինչպես նաև Ս.Խաչատուրովին չեն բացատրվել իր իրավունքներն ու պարտականությունները (տե՛ս նյութեր, թերթեր 125-126, 161-162, 165):

12. Հանճնման վերաբերյալ գործի նյութերում առկա չեն ՀՀ գլխավոր դատախազի՝ 2017 թվականի հունիսի 23-ի հանճնման թույլտվության մասին և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 19-ի որոշումների թարգմանված օրինակները (տե՛ս նյութեր):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

13. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

13.1. Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Ս.Խաչատուրովին չի պարզաբանել նրա հիմնարար իրավունքները՝ չբացահայտելով նույնիսկ վերջինիս ինքնությունը:

13.2. Միևնույն ժամանակ բողոքի հեղինակը պնդում է, որ ստորադաս դատարանը խախտել է մեղադրյալի՝ իրեն հասկանալի լեզվով հանդես գալու և թարգմանչի ծառայություններից օգտվելու իրավունքը, քանի որ թարգմանիչ ներգրավելու մասին որոշում կայացնելուց հետո չի ապահովել վերջինիս մասնակցությունը դատական նիստերին, ինչպես նաև չի տրամադրել իր կայացրած դատական ակտի թարգմանված տարբերակը:

14. Բողոք բերող անձը փաստել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չի ձեռնարկել որևէ միջոցառում անձի առողջական վիճակը ստուգելու և նրա առողջական խնդիրներով պայմանավորված տեղափոխության ռիսկերի գնահատման ուղղությամբ: Արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի որոշումն անփոփոխ թողնելով՝ Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման՝ խախտելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի պահանջները:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 19-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության, կամ վերացնել ՀՀ գլխավոր դատախազի՝ հանձնման թույլտվության վերաբերյալ 2017 թվականի հունիսի 23-ի որոշումը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանձնման թույլտվության մասին որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման վարույթում Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալի իրավունքների և պարտականությունների պարզաբանման պարտականության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

*I. Հանձնման թույլտվության մասին որոշման ստուգման վարույթում մեղադրյալի իրավունքների իրացման ապահովումը.*

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. օրինակա՞ն է արդյոք սույն գործով բողոքը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն այն պայմաններում, երբ մեղադրյալ Ս.Խաչատուրովին չեն պարզաբանվել նրա իրավունքներն ու պարտականությունները:

18. ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնական իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք»:*

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.*

*ա) ցանկացած այն անձի համար, որի՝ սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական*

*պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.*

*(…)*

*գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը, դրանք տրամադրելու դեպքում»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:*

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ. *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված է, որ. *«Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:*

Մեջբերված նորմերով նախատեսված է անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի և որպես այդպիսին դատական պաշտպանության իրավունքը: Միևնույն ժամանակ որպես հիշյալ իրավունքի երաշխիք նախատեսված է հանրային իշխանության պարտականությունը սահմանել և գործնականում իրացնել համապատասխան իրավական կառուցակարգեր և ընթացակարգեր: Վերջիններիս մասնավոր դրսևորում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածը, որի համաձայն.

*«1. Դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի իմանալ իր իրավունքները և պարտականությունները, իր ընտրած դիրքորոշման իրավական հետևանքները, իր մասնակցությամբ կատարվող դատավարական գործողությունների նշանակությունը:*

*2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը:*

*3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարության մասնակիցներին հայտնել այն անձանց անունները, ազգանունները և նրանց մասին այլ անհրաժեշտ տվյալներ, որոնց կարող է բացարկ հայտնվել:*

*4. Դատավարության մասնակցի կարգավիճակ ձեռք բերած անձին նրա իրավունքները և պարտականությունները պարտադիր պարզաբանվում են նախքան նրա մասնակցությամբ կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողություններն սկսվելը և նրա կողմից՝ որպես դատավարության մասնակից որևէ դիրքորոշում արտահայտելը: Դատարանը պարտավոր է դատական նիստին ներկայացած դատավարության մասնակցին պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները՝ անկախ դրանց քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում պարզաբանումից»:*

Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ անձի՝ իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, որին ուղիղ համեմատական է այդ իրավունքները և ազատությունները ճանաչելուն և պաշտպանելուն, ինչպես նաև դրանց իրացումն ապահովելու համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելուն ուղղված՝ պետության պոզիտիվ պարտականությունը: Քրեադատավարական հարաբերություններում, ելնելով քրեական դատավարության հանրային բնույթից, դատավարության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իմանալու իր կարգավիճակից բխող իրավունքները և պարտականությունները: Նշված իրավունքին համապատասխանում է քրեական վարույթն իրականացնող մարմինների պարտականությունը դատավարության յուրաքանչյուր մասնակցին պարզաբանելու նրա իրավունքներն ու պարտականությունները *(տե՛ս, mutatis mutandis, Արման Դավթյանի և Սոնա Մկրտչյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0004/11/12 որոշման 14-15-րդ կետերը)*:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի համաձայն՝

*«Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի՝ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան որոշումները ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, իսկ վերաքննիչ դատարանի որոշումները՝ վճռաբեկ դատարան դրանք ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Վերաքննիչ դատարանը և վճռաբեկ դատարանը գործը քննում և դրա վերաբերյալ որոշում են կայացնում համապատասխանաբար բողոքը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում»:*

Մեջբերված նորմի վերլուծությունից հետևում է, որ հանձնման թույլտվության մասին որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումն իրականացվում է վերաքննիչ դատարանի կողմից: Հետևաբար որպես դատական վերահսկողություն իրականացնող մարմին՝ անձի իրավունքների երաշխավորման պարտականությունը տվյալ փուլում կրում է վերաքննիչ դատարանը: Մասնավորապես, մեղադրյալի՝ իր իրավունքներն ու պարտականություններն իմանալու իրավունքին թղթակցում է դրանք նրան պարզաբանելու վերաքննիչ դատարանի պարտականությունը,

որը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջներից:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանճնման թույլտվության մասին որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման ժամանակ Վերաքննիչ դատարանը պարտավոր է անձին պարզաբանել նրա՝ օրենքով երաշխավորված իրավունքները, մասնավորապես՝ իրավաբանական օգնություն ստանալու, բացարկ հայտնելու, միջնորդությամբ հանդես գալու և այլն, ինչպես նաև դատավարական պարտականությունները, որոնց իմացությունը կարևորվում է անձի արդար դատաքննության կազմակերպման տեսանկյունից: Դրանից հետո միայն Վերաքննիչ դատարանը կարող է անցում կատարել հանճնման իրավաչափության հարցի ըստ էության քննարկմանը:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, քննարկելով Ս.Խաչատուրովին հանճնելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, չի ստուգել վերջինիս ինքնությունը, չի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ բացարկ հայտնելու, միջնորդություններ ներկայացնելու նրա հնարավորությունը (տե՛ս սույն որոշման 11.1-րդ կետերը):

21. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 18-19-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը Ս.Խաչատուրովին չի պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները: Արդյունքում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի խախտում, որը հանգեցրել է Ս.Խաչատուրովի՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված՝ իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման:

Հետևաբար օրինական չէ սույն գործով բողոքը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը, քանի որ մեղադրյալ Ս.Խաչատուրովին չեն պարզաբանվել նրա իրավունքներն ու պարտականությունները:

*II. Անձի՝ իրեն հասկանալի լեզվով հանդես գալու և թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունքը.*

22. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի կողմից խախտվե՞լ է արդյոք Ս.Խաչատուրովի՝ մայրենի լեզվով հանդես գալու և թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունքը:

23. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի հա-

մաձայն՝ *«Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.*

*(…)*

*ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն: Քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է:*

*2. Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները:*

*3. Քրեական դատավարության լեզվին չտիրապետող համապատասխան անձանց տրվում են սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու իրենց իրավունքները: Քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց տրվում են սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանձնման ենթակա փաստաթղթերի պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարության լեզվի սկզբունքը քրեական վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ ոչ միայն պարզաբանել իրենց համար հասկանալի լեզվով հանդես գալու նրանց իրավունքը, այլև դրա իրականացումն ապահովել այնպես, որ չսահմանափակվեն և իրականում իրագործվեն ինչպես գործի քննության ցանկացած փուլում իրենց լեզվով հանդես գալու, այնպես էլ մյուս բոլոր այն իրավունքները, որոնք փոխկապակցված են այդ իրավունքի հետ և երաշխավորված են օրենքով *(տե՛ս Նաիրա Վախթանգի Գելաշվիլու գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշման 4.1-րդ կետը):*

Քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ իրենց համար հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքը պետք է ապահովվի դատավարության բոլոր փուլերում: Դատավարության լեզվին չտիրապետող մասնակիցները նշված իրավունքից պետք է բարեխղճորեն օգտվեն: Մաս-

նավորապես՝ քրեական դատավարության մասնակիցները պետք է համապատասխան հայտարարությամբ հանդես գան, ավելի կոնկրետ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին պետք է հայտնեն (բանավոր կամ գրավոր կերպով) իրենց մայրենի լեզվով կամ այն լեզվով հանդես գալու մասին, որին տիրապետում են, ինչը հնարավորություն կընձեռի ողջ ծավալով օգտվելու քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված իրենց իրավունքներից: Միևնույն ժամանակ դատարանը, քննիչը, հետաքննության մարմինը, դատավարությանը մասնակցող անձանց պարզաբանելով նրանց իրավունքներն ու պարտականությունները և ապահովելով դրանց իրականացման հնարավորությունը, պարտավոր են համոզվել, որ դատավարությանը մասնակցող անձի կողմից հայերենին տիրապետելու աստիճանն ակնհայտորեն բավարար է նրա կողմից իր իրավունքները և պարտականություններն իրականացնելու համար: Դատավարության մասնակցի կողմից իր իրավունքների և պարտականությունների իրականացման համար բավարար աստիճանի հայերենին տիրապետելու հանգամանքի գնահատումը յուրաքանչյուր դեպքում պետք է կատարվի գործի փաստերի հիման վրա: Ընդ որում, վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է հաշվի առնվեն նաև դատավարությանը մասնակցող անձի մայրենի լեզուն, նրա ծննդավայրը և բնակության վայրը, տվյալ վայրում բնակության ժամանակահատվածը, քաղաքացիությունը, կրթությունը, աշխատանքի վայրը և բնույթը, շրջապատի հետ հաղորդակցվելու լեզուն և այլ հանգամանքներ: ՀՀ քրեական դատավարության լեզվին չտիրապետող կարող են համարվել այն անձինք, ովքեր չեն հասկանում բանավոր և (կամ) գրավոր հայերեն խոսքը կամ չեն կարողանում բանավոր և (կամ) գրավոր կերպով բավարար չափով արտահայտվել հայերենով *(տե՛ս Գ.Խաչատրյանի և Ս.Քրմոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0059/01/14 որոշման 17-րդ կետը):*

24. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում մեջբերված դատական որոշումներում տեղ գտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների լրացուցիչ երաշխիքների շարքում քրեադատավարական օրենսդրությունն առանձնացնում է տվյալ անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն իրենց համար հասկանալի լեզվով տրամադրելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը: Հանձնման ենթակա փաստաթղթերի ներքո պետք է հասկանալ ոչ թե քրեական գործում առկա բոլոր փաստաթղթերը, այլ միայն նրանք, որոնք քրեադատավարական օրենսդրությամբ ենթակա են հանձնման և անհրաժեշտ ու բավարար են անձի՝ արդար դատաքննության, այդ թվում՝ պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից:

25. Իրեն հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքի վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան): Մաս-

նավորապես՝ Կուսկանին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուի թարգմանչական ծառայություններից օգտվելու անհրաժեշտության ստուգման համար դատավորը պետք է խորհրդակցի դիմումատուի հետ. դատավորը պետք է համոզված լինի, որ գործի լսումների ժամանակ թարգմանչի բացակայությունը չի վնասի դիմումատուի լիարժեք ներգրավվածությանը նրա համար վճռորոշ գործում *(տե՛ս Cuscani v. the United Kingdom գործով 2002 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 32771/96, կետ 38):*

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ մեղադրյալը, ով չի կարողանում հասկանալ կամ խոսել դատավարության լեզվով, իրավունք ունի ստանալու թարգմանչի անվճար ծառայություն կամ իր դեմ ներկայացրած վարույթի փաստաթղթերի կամ արձանագրությունների թարգմանություններ, ինչը նրան անհրաժեշտ է, որպեսզի կարողանա օգտվել արդար դատաքննության իրավունքից *(Luedicke, Bekacem and Koc v. Germany գործով 1978 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 6210/73, 6877/75, 7132/75, կետ 48):*

Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը չի ենթադրում քրեական դատավարությունում առկա բոլոր նյութերի, ապացույցների կամ պաշտոնական փաստաթղթերի գրավոր թարգմանություն: Թարգմանչի օգնությունը պետք է ապահովվի այնքանով, որ մեղադրյալը տեղեկացվի իր դեմ առկա գործի մասին և կարողանա կազմակերպել իր պաշտպանությունը *(Kamasinski v. Austria գործով 1989 դեկտեմբերի 19 վճիռ, 9783/82, կետ 74):*

26. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրեն հասկանալի լեզվով հանդես գալու անձի իրավունքը դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման նախադրյալ է, որն ապահովում է վերջինիս՝ գործնականում իրատեսական և իրագործելի լինելը: Քննարկվող իրավունքի օրենսդրական երաշխիքների չապահովումը քրեադատավարական օրենքի էական խախտում է, որը նախատեսված է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի շարքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը):

27. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Խաչատուրովը 1994 թվականի հուլիսի 26-ին ձեռք է բերել ՌԴ քաղաքացիություն և ներկայումս ՌԴ քաղաքացի է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): ՀՀ ԿԱ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացված գրությունով փաստվում է, որ Ս.Խաչատուրովի ՀՀ քաղաքացիության և ՀՀ քաղաքացու անձնագիր ստացած լինելու մասին տեղեկություններ առկա չեն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանում Ս.Խաչատուրովի ժամանակավոր կալանավորման, ինչպես նաև հանձնելու համար կալանավորման միջնոր-

դությունների քննարկման վարույթներում ներգրավված է եղել և մասնակցել է թարգմանիչ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 10-ի դատական նիստի ձայնային արձանագրության վերծանումից պարզ է դառնում, որ դատավորը հարցաղրման միջոցով պարզել է անձի կողմից դատավարության լեզվին վատ տիրապետելու հանգամանքը և որոշում է կայացրել թարգմանիչ ներգրավելու մասին, սակայն որևէ նիստի ժամանակ չի ապահովել թարգմանչի ներկայությունը (տե՛ս սույն որոշման 9-11.1.-րդ կետերը):

Գործի նյութերից երևում է նաև, որ Ս.Խաչատուրովին չի հանձնվել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 19-ի որոշման թարգմանված օրինակը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

28. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 23-25-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական նիստերի ժամանակ թարգմանչի մասնակցությունը, ինչպես նաև իր՝ 2017 թվականի հուլիսի 19-ի որոշման թարգմանված օրինակը Ս.Խաչատուրովին հանձնելը չապահովելով, խախտել է անձի՝ իրեն հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքը:

Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում Վերաքննիչ դատարանի նման մոտեցումը, հատկապես այն պայմաններում, երբ Վերաքննիչ դատարանի համար ակնհայտ է եղել Ս.Խաչատուրովի կողմից դատավարության լեզվին չտիրապետելու հանգամանքը, որի մասին է վկայում այն, որ Վերաքննիչ դատարանը թարգմանիչ ներգրավելու մասին որոշում է կայացրել:

Հետևաբար Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է մեղադրյալ Ս.Խաչատուրովի՝ մայրենի լեզվով հանդես գալու և թարգմանչի ծառայություններից օգտվելու իրավունքը:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 478.4-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում է:

29. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներ, որոնք հիմք են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է պատշաճ ընթացակարգով մեղադրյալին պարզաբանի նրա իրավունքները, այդ թվում նաև՝ իրեն հասկանալի լեզվով հանդես գալու հնարավորությունը՝ ապահովելով օրենսդրությամբ նախա-

տեսված այլ երաշխիքները և դրա արդյունքում համապատասխան որոշում կայացնի:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված մեղադրյալի տեղափոխման ընթացքում առողջական վիճակով պայմանավորված հանձնման իրավաչափության հարցին (սույն որոշման 14-րդ կետ), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրան հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Սուրեն Արսենի Խաչատուրովի հանձնման թույլտվության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ 2017 թվականի հունիսի 23-ի որոշման դեմ մեղադրյալ Ս.Խաչատուրովի պաշտպան Ն.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 19-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**40.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՔԴ-1/0057/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ պաշտպան | Ղ.ՊԱՊՈՅԱՆԻ |

2017 թվականի օգոստոսի 21-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեմ Վաղինակ Աբրահամի Տեր-Սարգսյանի պաշտպան Ղ.Պապոյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2000 թվականի հոկտեմբերի 8-ին Ղազախստանի Հանրապետության (այսուհետ՝ նաև ՂՀ) Կոստանայ քաղաքի քննչական բաժնի կողմից հարուցվել է քրեական գործ ՂՀ քրեական օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, և կատարվել նախաքննություն:

2004 թվականի հունիսի 21-ի որոշմամբ Վաղինակ Տեր-Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՂՀ քրեական օրենգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով և 179-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» կետերով: Նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

2006 թվականի հունիսի 21-ին որոշում է կայացվել Վ.Տեր-Սարգսյանին նոր մեղադրանք առաջադրելու մասին, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ ՂՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով և 96-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով:

Նկատի ունենալով, որ Վ.Տեր-Սարգսյանը ՀՀ քաղաքացի է, նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար քրեական գործն ուղարկվել է Հայաստանի Հանրապետություն: Միևնույն ժամանակ Կոստանայի մարզային դատարանի՝ 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով նույն քրեական գործով ՂՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով, 96-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով մեղավոր է ճանաչվել Բաբկեն Ռազմիկի Սարգսյանը, ում նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 17 տարի ժամկետով:

1.1. Հայաստանի Հանրապետությանը փոխանցված՝ Վ.Տեր-Սարգսյանի վերաբերյալ քրեական գործը 2008 թվականի հուլիսի 8-ին վարույթ է ընդունվել Վաղարշապատի քննչական բաժնում: 2008 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ Վ.Տեր-Սարգսյանի արարքը համապատասխանեցվել է ՀՀ օրենսդրությանը, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Նույն օրվա որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2008 թվականի օգոստոսի 15-ին մեղադրյալ Վ.Տեր-Սարգսյանի գտնվելու վայրը պարզ չլինելու պատճառով քրեական գործի վարույթը կասեցվել է:

2008 թվականի օգոստոսի 21-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնի աշխատակիցների կողմից Վ.Տեր-Սարգսյանը հայտնաբերվել է, նույն օրը վերսկսվել է գործով նախաքննությունը: Նախաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով Վ.Տեր-Սարգսյանին առաջադրված մեղադրանքի մասը վերացվել է ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառված լինելու պատճառաբանությամբ, և 2008 թվականի սեպտեմբերի 10-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:

2008 թվականի հոկտեմբերի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2009 թվականի հունիսի 19-ի դատավճռով Վաղինակ Տեր-Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 14 (տասնչորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով նշանակված պատժին հաշվակցվել է Վ.Տեր-Սարգսյանի կալանքի տակ գտնվելու ժամկետը՝ 5 ամիս 28 օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 13 (տասներեք) տարի 6 (վեց)

ամիս 2 (երկու) օր ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 2008 թվականի օգոստոսի 21-ից:

3. Վ.Տեր-Սարգսյանի պաշտպան Ղ.Պապոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2009 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 19-ի դատավճիռը:

4. Վ.Տեր-Սարգսյանի պաշտպան Ղ.Պապոյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ վերադարձվել է:

5. Վ.Տեր-Սարգսյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2016 թվականի հոկտեմբերի 27-ին *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 27866/10) գործով վճիռ է կայացրել, որով ճանաչվել է Վ.Տեր-Սարգսյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը:

6. Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 27-ի՝ *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Վ.Տեր-Սարգսյանի պաշտպան Ղ.Պապոյանը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վ.Տեր-Սարգսյանի պաշտպան Ղ.Պապոյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2017 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցել է Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշման վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>**

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռով Վ.Տեր-Սարգսյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված այն արարքի համար, որ *«նա 2000թ. հոկտեմբերի 7-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Ղազախստանի Հանրապետության Կոստանայ քաղաքի Կարիբեկով փողոցի 345 շենքում տեղակայված «Իվա» սրճարանում, գտնվելով ալկոհոլային հարբածության վիճակում, իր ընկեր Բաբկեն Միսակյանի հետ միասին վիճաբանության մեջ է մտել Սամվել Մկրտչյանի հետ, որի ընթացքում Բաբկեն Միսակյանը և Վ.Տեր-Սարգսյանն ապօրինաբար Սամվել Մկրտչյանին կյանքից զրկելու դիտավորությամբ, իրենց մոտ եղած դանակներով հարվածներ են հասցրել վերջինիս կենսականորեն*

*կարևոր օրգանի՝ կրծքավանդակի շրջանին և սպանել նրան»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 84-92):

7.1. Առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում, հարցաքննվել է տուժողի իրավահաջորդ Ջ.Գարեգինյանը: Վկաներ Գ.Թորոսյանը, Օ.Դենիսովան, Վ.Հովհաննիսյանը, Գ.Անդրեասյանը, Վ.Կիմինը, Լ.Տուրբաբինը, Ե.Քաղդասարյանը, Կ.Հովհաննիսյանը դատարան չեն ներկայացել, սակայն ուղարկել են նոտարական կարգով վավերացված դիմումներ՝ հայտնելով, որ ֆինանսական, աշխատանքային, ընտանեկան հանգամանքների պատճառով չեն կարող ներկայանալ դատարան և խնդրում են հրապարակել իրենց նախաքննական ցուցմունքները, որոնք պնդում են (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 146-150, 190-192): Առաջին ատյանի դատարանի կողմից վերջիններիս, ինչպես նաև վկաներ Խ.Հովհաննիսյանի, Ա.Օստոպենկոյի, Ա.Գարյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները հրապարակվել են դատաքննության ընթացքում (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 224-226):

7.2. Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է հետևյալ ապացույցները. տուժողի իրավահաջորդ Ջ.Գարեգինյանի, վկաներ Խ.Հովհաննիսյանի, Կ.Հովհաննիսյանի, Գ.Թորոսյանի, Օ.Դենիսովայի, Վ.Հովհաննիսյանի, Գ.Անդրեասյանի, Ա.Օստոպենկոյի, Ա.Գարյանի, Վ.Կիմինի, Լ.Տուրբաբինի, Ե.Քաղդասարյանի, դատաբժիշկ Վ.Գալկինի ցուցմունքները, դիակի դատաբժշկական փորձաքննության, ֆիզիկոտեխնիկական փորձաքննության եզրակացությունները, դեպքի վայրի զննության արձանագրությունները, տուժող Ս.Մկրտչյանի հագուստների առգրավման և զննության արձանագրությունները, շնորհանդեսի նկարահանման երկու տեսաերիզները, դեպքի վայրի զննության և դատաբժշկական փորձաքննության իրականացման ընթացքում դիակի զննման նկարահանումներ կատարելու տեսաերիզները, ինչպես նաև «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի 76.1-րդ հոդվածի ուժով հաշվի առնված՝ Ղազախստանի Հանրապետության Կոստանայի մարզային դատարանի՝ 2006 թվականի մայիսի 25-ի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, այդ գործի դատաքննության ընթացքում դատաբժշկական փորձագետ Վ.Գալկինի պարզաբանումները (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 276-281):

8. Վերաքննիչ դատարանում ևս գործի դատաքննությունն անցել է վկաներ Գ.Թորոսյանի, Օ.Դենիսովայի, Վ.Հովհաննիսյանի, Գ.Անդրեասյանի, Ա.Օստոպենկոյի, Ա.Գարյանի, Վ.Կիմինի, Լ.Տուրբաբինի, Ե.Քաղդասարյանի, Կ.Հովհաննիսյանի, Խ.Հովհաննիսյանի բացակայությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 357-364):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստել է, որ *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը հանդիսանում է նոր հանգամանք Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը վերանայելու համար:

Շարադրելով և վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը նշել է, որ Եվրոպական դատարանն արձանագրել է Վ.Տեր.Սարգսյանի արդար դատաքննության իրավունքի խախտում՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորություն չունենալու, ինչպես նաև ապացույց հանդիսացող տեսաերիզները չհետազոտելու արդյունքում մրցակցության սկզբունքի հիման վրա այդ ապացույցը մեկնաբանելու հնարավորությունից զրկված լինելու առումով:

Մեջբերելով նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման մասին Եվրոպական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոք բերած անձը եզրահանգել է, որ Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշման վերանայման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 19-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 31-ի որոշումը ենթակա են բեկանման, ինչը հնարավորություն կտա վերացնել Վ.Տեր-Սարգսյանի վերաբերյալ գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքների խախտումները:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 19-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 31-ի որոշումը, և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման արձանագրման փաստը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը վերանայելու հիմք է:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

*2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:*

Նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

*(...)*

*2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.*

*(...):*

*2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:*

*(...)»:*

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս *mutatis mutandis,* ի թիվս այլոց, *Գրիշա Վիրաբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշումները):

13. Այսպես՝ *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Վ.Տեր-Սարգսյանի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի հետ համատեղ՝ կապված իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորությունից զրկված լինելու հետ, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ կապված գործով ապացույց հանդիսացող տեսաերիզներն Առաջին ատյանի դատարանի կողմից չհետազոտելու հետ:

13.1. Մասնավորապես՝ անդրադառնալով արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով երաշխավորված՝ իր դեմ ցուցմունք տվող վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքին և վերահաստատելով դրա առնչությամբ իր նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում փաստել է. *«(…) [Կոնվենցիայի] 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով սահմանված երաշխիքներն այդ դրույթի 1-ին կետով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքի հատուկ ասպեկտներ են (…):*

*(…) [Բ]ոլոր ապացույցները սովորաբար պետք է ներկայացվեն դռնբաց դատական քննության ժամանակ մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցային դատավարության սկզբունքի պահպանմամբ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունն ապահովելու համար: Այս սկզբունքից բացառություններ կան, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները. որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «գ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (…):*

*(…) Ալ-Խավաջայի և Թահերիի գործի 119-147-րդ պարբերություններում Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ՝*

*i) Դատարանը նախապատրաստական փուլում նախ պետք է քննի այն հարցը, թե արդյո՞ք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք է, որպես կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամանակ, և որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայանալն ապահովելու համար.*

*ii) չներկայանալու ամենահաճախ հանդիպող պատճառներն են, օրինակ, ինչպես Ալ-Խավաջայի և Թահերիի գործում, վկայի մահը կամ վախը վրեժխնդրությունից: Այնուամենայնիվ, վկան դատական քննությանը կարող է չներկայանալ նաև օրինական պատճառներով.*

*iii) եթե վկան չի հարցաքննվել դատավարության նախորդ փուլերում, ապա դատական քննության ժամանակ դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը պետք է հանդիսանա ծայրահեղ միջոց.*

*iv) չներկայացած վկաների՝ նախկինում տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, որը, ըստ էության, քրեական դատավարության ընթացքում պետք է արդյունավետ հնարավորություն ունենա իր դեմ ներկայացված ապացույցների թույլատրելիությունը վիճարկելու: Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկայի ներկայացրած ապացույցների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ դրանք վկայի ներկայությամբ բանավոր քննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում.*

*v) «միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալը դատապարտվում է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են.*

*vi) այս համատեքստում «վճռորոշ» բառը պետք է նշանակի միայն այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունք, որը կարող է որոշել գործի ելքը: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված կլինի հիմնավորող ապացույցների նշանակությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը կհամարվի վճռորոշ.*

*vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի դատաքննության արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.*

*viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է ամբաստանյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միևնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են չներկայացած վկաների ցուցմունքները, ապա Դատարանը պետք է դատական քննության առարկան առավել հանգամանորեն ուսումնասիրի: Պայմանավորված այն վտանգներով, որոնք կարող են առաջանալ՝ այդպիսի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու հետևանքով, դա շատ կարևոր գործոն կհանդիսանա հավասարակշռություն ապահովելու հարցում, և դրա համար անհրաժեշտ կլինեն հակակշռող բավարար գործոններ, այդ թվում՝ հուսալի ընթացակարգային երաշխիքներ: Յուրաքանչյուր դեպքում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի և պատշաճ ձևով գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ անձը դատապարտվի այդպիսի ցուցմունքների հիման վրա միայն այն դեպքում, երբ դրանք բավականաչափ հավաստի լինեն՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարևորությունը*

*(…) [Եվրոպական դատարանը նշում է, որ] վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության արդարացի չլինելու մասին, թեև ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարևոր գործոն է հավասարակշռությունը որոշելու համար և կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյո՞ք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է ուսումնասիրի ոչ միայն բավարար հակակշռող գործոնների առկայությունն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել դիմումատուին դատապարտելու համար, ինչպես նաև այն գործերում, որոնցում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյո՞ք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել և այն որպես ապացույց ճանա-*

*չելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարևոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարևոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (…)»* (տե՛ս *Տեր-Մարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 44-47-րդ կետերը):

14. Վերոգրյալ սկզբունքները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը վերլուծության առարկա է դարձրել այդ չափանիշների՝ ներպետական դատարանների կողմից պահպանված լինելու հարցը:

14.1. Մասնավորապես՝ անդրադառնալով այն խնդրին, թե արդյո՞ք *վկաների՝ դատական քննությանը չներկայանալու համար եղել են հիմնավոր պատճառներ*, Եվրոպական դատարանը նշել է. *«(…) [Դ]իմումատուն Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից դատապարտվել է Ղազախստանի Հանրապետության տարածքում սպանություն կատարելու համար, որտեղ քրեական գործի նախաքննությունը կատարվել է առանց դիմումատուի մասնակցության: (…) [Տ]ասնմեկ վկաներից ոչ մեկը չի ներկայացել դիմումատուի դատական քննությանը:*

*(…) Դատարանը համոզիչ չի համարում այն, որ [ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան և աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառներով չներկայանալը] կարող էր հիմնավոր պատճառաբանություն լինել այդ վկաներին չհարցաքննելու և նրանց ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու համար: Մասնավորապես, այն փաստը, որ ներպետական դատարանները չեն կարողացել պարզել տվյալ վկայի գտնվելու վայրը կամ այն փաստը, որ վկան բացակայել է այն երկրից, որտեղ իրականացվել է գործով վարույթը, ինքնին բավարար չեն համարվել՝ բավարարելու համար 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի պահանջները, որոնց համաձայն՝ Պայմանավորվող պետությունները պետք է դրական քայլեր ձեռնարկեն՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (…): Այդ քայլերը Պայմանավորվող պետությունների կողմից կատարման ենթակա այն պարտավորությունների մաս են կազմում, որոնք ուղղված են 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից արդյունավետորեն օգտվելու հնարավորությունն ապահովելուն (…): Հակառակ դեպքում՝ վկայի չներկայանալը պետք է վերագրել ներպետական իշխանություններին (…):*

*(…) Դատարանը համոզված չէ, որ բոլոր հնարավոր միջոցները կարելի է համարել ձեռնարկված՝ վկաներ Խ.Հ.-ի, Կ.Հ.-ի, Գ.Թ.-ի, Օ.Դ.-ի, Վ.Հ.-ի, Գ.Ա.-ի, Ա.Օ.-ի, Ա.Գ.-ի, Վ.Կ.-ի, Լ.Տ.-ի և Ե.Բ.-ի ներկայանալն ապահովելու համար: Առաջին ատյանի դատարանը կարող էր հիմնվել միջազգային իրավական օգ-*

*նության վրա՝ 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիային համապատասխան (…), որի մասնակից են և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Ղազախստանի Հանրապետությունը: Ավելին, Հայաստանի Հանրապետության դատարանները հեշտությամբ ընդունել են ութ վկաների կողմից ներկայացված հայտարարություններում նշված պատճառները, այսինքն՝ այն, որ նրանք չեն կարողացել ներկայանալ դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննության ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան կամ աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառներով՝ առանց նույնիսկ քննելու նրանց ճանապարհի և կեցության ծախսերը հատուցելու հնարավորությունը, որը նախատեսվում է վերոնշյալ Մինսկի կոնվենցիայով (…): Այսպիսով, չի կարելի ասել, որ վկաներ Խ.Հ.-ին, Կ.Հ.-ին, Գ.Թ.-ին, Օ.Դ.-ին, Վ.Հ.-ին, Գ.Ա.-ին, Ա.Օ.-ին, Ա.Գ.-ին, Վ.Կ.-ին, Լ.Տ.ին և Ե.Բ.-ին չհարցաքննելու համար հիմնավոր պատճառներ են եղել (…)»* (տե՛ս *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 48-49-րդ, 51-րդ կետերը):

14.2. Անդրադառնալով *չներկայացած վկայի ցուցմունքը «միակը և վճռորոշը» լինելու* հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. *«(…) [Դ]իմումատուի մեղավորությունը հիմնավորելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտորեն հղում է կատարել չներկայացած տասնմեկ վկաների ցուցմունքներին (…): Կասկած չի հարուցում այն, որ (…) այդ ցուցմունքները միակ ապացույցը չեն եղել, որի վրա հիմնվելով՝ առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճիռը (…): Դատարանն այդ պատճառով պետք է պարզի՝ արդյո՞ք չներկայացած վկաների ցուցմունքները «վճռորոշ» են եղել դիմումատուի դատապարտման համար (…):*

*(…) Դատարանն այս առնչությամբ նշում է, որ մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցները, որոնք առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել դիմումատուին դատապարտելիս, ներառում են տուժողի իրավահաջորդի՝ առաջին ատյանի դատարանում տված ցուցմունքները, դիմումատուի հանցակցի վերաբերյալ Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճիռը, Ղազախստանի Հանրապետությունում վերջինիս վերաբերյալ գործով դատական քննության ժամանակ փորձագետների տված ցուցմունքները, փորձաքննությունների եզրակացությունները, Ղազախստանի Հանրապետությունում կատարված մի շարք քննչական գործողությունների արձանագրությունները և միջոցառման նկարահանման տեսաերիզները: Հաշվի առնելով այս ապացույցները՝ Դատարանը չի կարող չնշել, որ միայն վկաներ[ից] (…) են եղել հանցագործության ականատեսները, մինչդեռ տուժողի իրավահաջորդը, թեև հարցաքննվել է դիմումատուի վերաբերյալ գործով դատաքննության ժամանակ, անձամբ ականատես չի եղել հանցագործությանը: Առկա մյուս ապացույցներով չի հաստատվել այն փաստը, որ Ս.Մ.-ին դանակահարել է դիմումատուն: Դատարանն այդ պատճառով կարծում է, որ դիմումատուի դատապարտման համար «վճռորոշ» են եղել չներկայացած վկաների ցուցմունքները»* (տե՛ս *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 52-53-րդ կետերը):

14.3. *Բավարար «հակակշռող գործոններ» լինելու* չափանիշի առնչությամբ Եվրոպական դատարանը փաստել է.*«(…) [Դ]իմումատուն գործով վարույթի որևէ փուլում տվյալ վկաներին հարցաքննելու հնարավորություն չի ունեցել: Ճիշտ է, որ դիմումատուն չի մասնակցել Ղազախստանի Հանրապետությունում իր դեմ հարուցված քրեական գործի քննությանն այնպիսի պատճառներով, որոնք չի կարելի վերագրել իշխանություններին: Այդ պատճառով նա հնարավորություն չի ունեցել խաչաձև հարցաքննելու վկաներին ո՛չ մինչդատական փուլում, երբ նրանք ցուցմունք են տվել, ո՛չ էլ Ղազախստանի Հանրապետությունում գործի քննության հետագա փուլերում: Դատարանն, այնուամենայնիվ, նշում է, որ դիմումատուն ի վերջո զրկվել է այդ վկաներին Հայաստանում իր դեմ հարուցված քրեական գործի քննության, այդ թվում՝ դատական քննության ընթացքում հարցաքննելու հնարավորությունից: Դատարանը նաև նշում է, որ դատավարական որևէ միջոցառում չի ձեռնարկվել՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը որևէ կերպ լրացնելու համար: Ավելին, առաջին ատյանի դատարանը պատշաճ կարգով չի գնահատել այն, թե որքանով կարելի է վստահել չներկայացած վկաներին և հավաստի համարել նրանց ցուցմունքները, և դրանք պարզապես դասել է այն ապացույցների թվին, որոնք հաստատում են դիմումատուի մեղավորությունը (…)»* (տե՛ս *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 55-րդ կետը):

14.4. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ համատեղ, քանի որ անհիմն սահմանափակվել է Վ.Տեր-Սարգսյանի՝ այն վկաներին հարցաքննելու իրավունքը, որոնց վկայությունները վճռորոշ դեր են ունեցել իր դատապարտման հարցում (տե՛ս *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 56-57-րդ կետերը):

15. Ինչ վերաբերում է գործով ապացույց հանդիսացող տեսաերիզներն Առաջին ատյանի դատարանի կողմից չհետազոտելու խնդրին, ապա Եվրոպական դատարանը, վերահաստատելով արդար դատաքննության բաղադրիչը կազմող՝ մրցակցության սկզբունքի հիման վրա իրականացվող դատավարության իրավունքի վերաբերյալ իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները, արդյունքում նշել է.*«(…) [Դ]եպքի օրը սրճարանում կատարված ձևարահանումների տեսաերիզներ[ը] (…) ճանաչվել են որպես իրեղեն ապացույց դիմումատուի դեմ՝ առանց առաջին ատյանի դատարանի կողմից դատական քննության ընթացքում հետազոտվելու, և այս հանգամանքը զրկել է պաշտպանության կողմին դրանց վերաբերյալ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունից (…):*

*(…)*

*(…) Դատարանի կարծիքով՝ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանը չի հետազոտել տեսաե-*

*րիզները՝ այդ ապացույցն անձամբ գնահատելու համար, չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ մրցակցության սկզբունքի հիման վրա իրականացվող դատավարության պահանջներին՝ հաշվի առնելով, որ պաշտպանության կողմն ի վերջո զրկվել է այդ ապացույցը մեկնաբանելու բոլոր հնարավորություններից:*

*Ուստի այս առումով նույնպես տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում»* (տե՛ս *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 60-64-րդ կետերը):

16. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման արձանագրման փաստը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը վերանայելու հիմք է:

17. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրվելու դեպքում վարույթը վերաբացելու առնչությամբ իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումները, փաստել է. *«(...) [Վ]ճիռը, որով այն Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում է արձանագրում, պատասխանող Պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, եթե այդպիսիք կան, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և (կամ), անհրաժեշտության դեպքում, անհատական բնույթի միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ Դատարանի կողմից արձանագրված խախտմանը վերջ դնելու և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրելու համար, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (...): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու դեպքում դիմումատուի համար պետք է հնարավորինս վերականգնվի այն իրավիճակը, որում նա կգտնվեր, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (...):*

*(...) Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 426.1 և 426.4 հոդվածներով նախատեսվում է ներպետական դատական ակտը վերանայելու հնարավորություն, եթե Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում (...): Ամեն դեպքում, Դատարանի կարծիքով, եթե այն համարում է, որ դատաքննությունն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության երաշխիքների խախտմամբ, հատուցման ամենապատշաճ ձևը, որպես կանոն, կլինի պատշաճ կարգով գործի վերանայումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատաս-*

*խան (...)»* (տե՛ս *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 69-70-րդ կետերը):

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նոր դատաքննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը վերանայել:

2. Վաղինակ Աբրահամի Տեր-Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 19-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Վաղինակ Աբրահամի Տեր-Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

41.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԴ/0108/01/10

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 21-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշման դեմ դատապարտյալ Սպարտակ Հենրիկի Մանուչարյանի պաշտպան Տ.Մատինյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2009 թվականի հուլիսի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Թումանյանի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 55105509 գործը:

Նույն օրը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժին է ներկայացել Սպարտակ Մանուչարյանը, ով ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ Ս.Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի ապրիլի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 4-ի դատավճռով Սպարտակ Մանուչարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 13 տարի ժամկետով:

3. Ս.Մանուչարյանի պաշտպան Է.Մարուքյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հունվարի 26-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 4-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ պաշտպան Է.Մարուքյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ վերադարձվել է:

5. Սպարտակ Մանուչարյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2016 թվականի նոյեմբերի 24-ին *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 35688/11) վճիռ է կայացրել, որով ճանաչել է դիմումատուի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) երաշխավորված իրավունքների խախտման փաստը:

6. Դատապարտյալ Ս.Մանուչարյանի պաշտպան Տ.Մատինյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի վերոնշյալ վճիռը, Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցվել է նույն դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշման վերանայման վարույթ, և դատապարտյալ Ս.Մանուչարյանի պաշտպան Տ.Մատինյանի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

7. Ս.Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով

այն բանի համար, որ նա *«(...) ապօրինի կրել է զենք և շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ապօրինաբար, դիտավորությամբ կյանքից զրկել Կարեն Սոխակյանին:*

*Այսպես.*

*2009 թվականի հուլիսի լույս 1-ի գիշերը՝ ժամը 01:20-ի սահմաններում, Ալավերդի քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոցի թիվ 18-րդ շենքի մոտ Սպարտակ Մանուչարյանը, ապօրինի կերպով կրելով ինքնաձիգ տեսակի հրազեն, անբարյացակամ հարաբերությունների հետևանքով, վրեժխնդիր լինելու շարժառիթով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ նույն զենքից կրակել է «Կրայսլեր» մակնիշի 16 OL 214 պետհամարանիշի ավտոմեքենայի ղեկին նստած համաքաղաքացի Կարեն Սոսի Սոխակյանին և սպանել նրան (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 218-224):

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(...) [Ն]ախաքննական մարմնի կողմից Սպարտակ Մանուչարյանին ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235 հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը որակված է ճիշտ, իսկ ամբաստանյալի ցուցմունքն այն մասին, որ ինքը նման հանցագործություն չի կատարել, անհիմն է, արժանահավատ չէ, որն ապացուցված է ինչպես գործով տուժողի իրավահաջորդի, վկաների ցուցմունքներով, այնպես էլ քրեական գործով ձեռք բերված մի շարք այլ ապացույցներով՝ (...) [տ]ուժողի իրավահաջորդ, Կարեն Սոխակյանի քույր Սոնա Սոխակյանի ցուցմունքով, (...) [գ]ործով վկա Քրիստինե Մատինյանի **նախաքննական** ցուցմունքով, (...) [գ]ործով վկաներ Մեղա Մատինյանի նախաքննական և Արծրուն Մատինյանի նույնաբովանդակ ցուցմունքներով, (...) [գ]ործով վկա Վոլոդյա Ջամալյանի նախաքննական ցուցմունքով [Վ.Ջամալյանն իր ցուցմունքը պնդել է նաև նախաքննության ընթացքում Ս.Մանուչարյանի հետ առերես հարցաքննության ժամանակ], (...) դեպքի վայրի զննության արձանագրությամբ, (...) դիակի զննության արձանագրությամբ, (...) ավտոմեքենայի զննության արձանագրությամբ, (...) առգրավում կատարելու արձանագրությամբ (...) [ա]ճձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու (...) արձանագրությամբ [Քրիստինե Մատինյանի մասնակցությամբ], (...) մեղայականով ներկայանալու և ինքնաձիգը ներկայացնելու արձանագրություններով, (...) [դ]ատաբժշկական փորձաքննության թիվ 98/Դ եզրակացությամբ, (...) [դ]ատաճգաբանական, դատաքիմիական և դատահետաքրքրաբանական համալիր փորձաքննության (...) թիվ 2030-09 եզրակացությամբ (...), [դ]ատակենսաբանական փորձաքննության թիվ 360 եզրակացությամբ, (...) [դ]ատաճգաբանական, դատաքիմիական և դատաբժշկական համալիր փորձաքննության թիվ 3519 եզրակացությամբ, (...) [դ]ատաքիմիական փորձաքննության թիվ 098410003 եզրակացությամբ, (...) [հ]րեղեն ապացույց[ներով] (...)»:*

Վկա Ք.Մատինյանը դատարան չի ներկայացել, և հրապարակվել են նրա՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 209-214):

9. Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ *«(...) [Հ]եռք բերված բավարար ապացույցների հիման վրա [ամբաստանյալ Ս.Մանուչարյանի] արարքին տրվել է քրեաիրավական ճիշտ գնահատական, ուստի արդարացման դատավճիռ կայացնելու կամ արարքը վերաորակելու կամ պատիժը մեղմացնելու հիմքեր չկան:*

*(...) [Վ]երաքննիչ դատարանը (...) հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Սպարտակ Հենրիկի Մանուչարյանի մեղքը (...) հիմնավորված և հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, քրեական գործի ինչպես նախաքննությամբ, այնպես էլ դատաքննության ընթացքում քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք գործին մասնակցող անձանց օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող են ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, թույլ չեն տրվել, և գործի փաստական հանգամանքների մասին դատարանի դատավճռում շարադրված հետևությունները բխում են քրեական գործով ձեռք բերված ապացույցներից (...)»:*

Վերաքննիչ դատարանում ևս գործի դատաքննությունն անցել է վկա Ք.Մատինյանի բացակայությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 54-62):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբերի պնդմամբ Եվրոպական դատարանի դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները հիմք են Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Բողոքի հեղինակը նշել է, որ դատապարտյալ Ս.Մանուչարյանի գանգատի կապակցությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և նույն հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում: Մասնավորապես, Եվրոպական դատարանը փաստել է, որ անհիմն կերպով սահմանափակվել է Ս.Մանուչարյանի՝ իր դատապարտման հարցում որոշիչ դեր ունեցող ցուցմունքներ տված անձին հարցաքննելու իրավունքը: Բողոքաբերը մեջբերել է նաև Եվրոպական դատարանի հիմնավորումներն առ այն, որ Ս.Մանուչարյանի համար փոխհատուցման ամենապատշաճ ձևը վարույթի վերաբացումն է և գործի վերաքննությունը՝ արդար դատաքննության պահանջներին համապատասխան:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է վերացնել Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշումը, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 4-ի դատավճիռն ու Վերաքննիչ դատարանի՝ 2011 թվականի հունվարի 26-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռն արդյո՞ք նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշումը վերանայելու համար:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

*2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:*

Նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

*(...)*

*2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.*

*(...):*

*2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ՝ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից (...)»:*

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս, *mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Մեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալ-*

*բանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զալյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Հրաչյա Մուրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի թիվ 1-81/2005 - Զ-139/06 - ՎԱԲ-195/06 - Զ-510/06 որոշումները):

14. Այսպես՝ *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Սպարտակ Մանուչարյանի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ համատեղ՝ կապված իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու հնարավորությունից զրկված լինելու հետ:

14.1. Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում վերահաստատել է արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված՝ իր դեմ ցուցմունք տվող վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի վերաբերյալ նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստելով. *«(...) Որպես ընդհանուր կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին տրվի վիճարկելու և իր դեմ ցուցմունք տվող վկային հարցաքննելու համարժեք և պատշաճ հնարավորություն կա՛մ նրա կողմից ցուցմունք տալու ժամանակ, կա՛մ հետագա փուլերում (...):*

*(...) [Հրապարակային դատաքննությանը վկայի չներկայանալու դեպքում կիրառման ենթակա] սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ՝*

*i) [Եվրոպական դատարանը] նախևառաջ պետք է ուսումնասիրի այն նախնական հարցը, թե արդյո՞ք առկա է հիմնավոր պատճառ՝ քննությունից բացակայող վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վկաները, որպես ընդհանուր կանոն, պետք է ցուցմունք տան դատաքննության ժամանակ, և որ ողջամիտ ջանքեր պետք է ներդրվեն՝ նրանց ներկայությունը երաշխավորելու համար.*

*ii) չներկայանալու պատճառներից հատկանշական են, օրինակ, (...) վկայի բացակայությունը քննությունից մահվան կամ վրեժխնդրության երկյուղի հիմքով: Այնուամենայնիվ, առկա են նաև վկայի կողմից դատաքննությանը չներկայանալու այլ իրավաչափ հիմքեր.*

*iii) եթե վկան չի հարցաքննվել վարույթի որևէ նախնական փուլում, ապա վկայի ցուցմունքը դատաքննության ժամանակ կենդանի վկայության փոխարեն թույլատրելը պետք է ծառայի որպես ծայրահեղ միջոց.*

*iv) քննությունից բացակայող վկաների՝ արդեն իսկ տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը հնարավոր անբարենպաստ հետևանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, որը, ըստ էության, քրեական դատա-*

*վարության ընթացքում պետք է արդյունավետ հնարավորություն ունենա վիճարկելու իր դեմ ուղղված ապացույցները: Մասնավորապես, նա պետք է հնարավորություն ունենա ստուգելու վկայի ցուցմունքների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ վկաներին իր ներկայությամբ բանավոր հարցաքննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում.*

*v) «միակ կամ որոշիչ կանոնի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալի դատապարտումը բացառապես կամ հիմնականում հիմնված է այն վկաների տված ցուցմունքների վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել վարույթի որևէ փուլում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են.*

*vi) այս համատեքստում «որոշիչ» բառը պետք է ընկալվի նեղ իմաստով՝ որպես միայն այնպիսի նշանակության կամ կարևորության ապացույց, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա որոշիչ լինելու հանգամանքը գնահատելը կախված է հիմնավորող ապացույցների ապացուցողական ուժից. որքան ծանրակշիռ են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան ավելի քիչ հավանական է, որ քննությունից բացակայող վկայի ցուցմունքը համարվի որոշիչ.*

*vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի վարույթի արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ որոշիչ կանոնը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.*

*viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքն ամբաստանյալի դեմ ուղղված միակ կամ որոշիչ ապացույցն է, ապա այն որպես ապացույց ճանաչելը մեխանիկորեն չի հանգեցնում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միևնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ որոշիչ հիմք են հանդիսանում քննությունից բացակայող վկաների ցուցմունքները, ապա [Եվրոպական դատարանը] գործը պետք է առավել մանրազնին քննության ենթարկի: Այդպիսի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելուց բխող վտանգներից ելնելով՝ դա շատ կարևոր գործոն է հավասարակշռությունն ապահովելու հարցում, և դրա համար անհրաժեշտ են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ ծանրակշիռ ընթացակարգային երաշխիքների առկայություն: Յուրաքանչյուր գործում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ այդ ապացույցների հավաստիության արդարացի և պատշաճ գնահատումը թույլատրող միջոցներ: Դա կարող է թույլ տալ դատապարտման հիմքում դնել այդպիսի ապացույցներ միայն այն դեպքում, երբ դրանք բավականաչափ հավաստի են՝ գործի համար դրանց կարևորությունից ելնելով (…)»* (տե՛ս *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 46-47-րդ կետերը):

15. Վերոգրյալ սկզբունքները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը վերլուծության

առարկա է դարձրել այդ չափանիշների՝ ներպետական դատարանների կողմից պահպանված լինելու հարցը:

15.1. Մասնավորապես, անդրադառնալով այն խնդրին, թե արդյո՞ք *վկայի՝ դատական քննությանը չներկայանալու համար եղել են հիմնավոր պատճառներ՝* Եվրոպական դատարանը նշել է. *«(...) [Առաջին ատյանի դատարանը] և Վերաքննիչ դատարանը դիմումատուի գործը քննել են վկա Ք. Մ.-ի բացակայությամբ, որը հանդիսացել է սպանության միակ ականատես վկան, և որը նույն օրը ոստիկանության կողմից հարցաքննվելու ժամանակ տվել է դիմումատուի մեղավորությունն ուղղակիորեն հաստատող ցուցմունք (...): [Առաջին ատյանի դատարանը] մի քանի անգամ հետաձգել է լսումները՝ փորձելով ապահովել Ք.Մ.-ի ներկայությունը դիմումատուի գործով դատաքննությանը, ինչպես նաև այդ հարցում դիմել է ոստիկանության աջակցությանը (...): Վերաքննիչ դատարանն իր հերթին փորձել է ապահովել Ք.Մ.-ի ներկայությունը դատաքննությանը գործն իր վարույթում գտնվելու ժամանակ (...): [Եվրոպական դատարանն] այնուհետև նշում է, որ ոստիկանության անբնդմեջ չի հաջողվել կատարել [Առաջին ատյանի դատարանի] կարգադրությունները՝ Ք.Մ.-ի կողմից դատաքննությանը հարկադրաբար ներկայանալու վերաբերյալ, սակայն, ըստ ոստիկանության, հնարավոր չի եղել պարզել նրա գտնվելու վայրը, և ենթադրվում է, որ նա մեկնել է երկրից (...):*

*(...) Այդ կապակցությամբ [Եվրոպական դատարանը] վերահաստատում է, որ ընդհանուր առմամբ ցուցաբերել է ողջամիտ մոտեցում՝ որոշելու համար՝ արդյոք ներպետական դատարանն ունեցել է հիմնավոր փաստական կամ իրավական հիմքեր՝ դատաքննությանը վկայի ներկայությունը չապահովելու համար: Այն գտել է, որ վկայի բացակայությունն այն երկրից, որտեղ անցկացվել է վարույթը, ինքնին բավարար հիմք չէ դատաքննությունից նրա բացակայության փաստը հիմնավորելու համար (...): Մասնավորապես, վկայի գտնվելու վայրը հայտնի չլինելու դեպքում [Եվրոպական դատարանը] գտել է, որ իշխանությունները պետք է «ակտիվորեն փնտրեն վկային» և ձեռնարկեն «բոլոր ողջամիտ միջոցները վկայի ներկայությունն ապահովելու համար» (...):*

*(...) Սույն գործում [Եվրոպական դատարանի] համար համոզիչ չէ այն հանգամանքը, որ գործադրվել են բոլոր ողջամիտ ջանքերը՝ դիմումատուի գործով դատաքննությանը վկա Ք. Մ.-ի ներկայությունն ապահովելու համար: Ճշմարիտ է այն հանգամանքը, որ, ինչպես արդեն նշվել է, [Առաջին ատյանի] դատարանը փորձել է ապահովել Ք.Մ.-ի ներկայությունը դատավարությանը գործն իր վարույթում գտնվելու ժամանակ՝ մի քանի անգամ հետաձգելով լսումները և դիմելով ոստիկանության օգնությանը՝ դատաքննությանը նրա հարկադրաբար ներկայանալն ապահովելու համար: Այնուամենայնիվ, այդ միջոցները եղել են ապարդյուն՝ հաշվի առնելով դատարանի կարգադրությունը ոստիկանության կողմից կատարելու անբնդմեջ ձախողումը: Այն իրավիճակում, երբ ոստիկանությունը զուտ մի քանի անգամ այ-*

*ցելել է Ք.Մ.-ի տուն և տեղեկանալով, որ նա արտասահմանում է գտնվում, ո՛չ ստուգել է այդ տեղեկատվության հավաստիությունը և ո՛չ էլ փորձել է պարզել վերջինիս գտնվելու վայրը, ինչը հնարավորություն կտար դատարանին դիմելու միջազգային իրավական օգնության, [Եվրոպական դատարանը] չի կարող համարել, որ իշխանություններն «ակտիվորեն փնտրել են վկային» և ձեռնարկել «բոլոր ողջամիտ միջոցները՝ վկայի ներկայությունն ապահովելու համար»* (տե՛ս *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 49-52-րդ կետերը):

15.2. Անդրադառնալով *չներկայացած վկայի ցուցմունքը «միակը և վճռորոշը» լինելու* հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. *«(...) [Եվրոպական դատարանի] դիտարկմամբ [Առաջին ատյանի] դատարանի և Վերաքննիչ դատարանի վճիռներում Ք.Մ.-ի մինչդատական ցուցմունքն ընդունվել է որպես դիմումատուի մեղավորությունը հաստատող ապացույց՝ առանց գնահատելու այդ ապացույցի ապացուցողական արժեքը: Հետևաբար, [Եվրոպական դատարանը] պետք է սեփական գնահատականը տա քննությունից բացակայող վկայի ցուցմունքի ծանրակշիռ լինելու հանգամանքին՝ հաշվի առնելով մեղավորությունը հաստատող մյուս առկա ապացույցները (...):*

*(...) Ինչպես արդեն նշվել է, Ք.Մ.-ն եղել է հանցագործության միակ ականատես վկան: Նա ճանաչել է դիմումատուին, ով եղել է իր հարևանը, և մատնացույց է արել նրան ոստիկանության կողմից հարցաքննության ժամանակ (...): Կասկածի տակ չի կարող դրվել այն հանգամանքը, որ Ք.Մ.-ի ցուցմունքը միակ ապացույցը չէ, որի վրա հիմնվել է դիմումատուի դատապարտումը: Այնուամենայնիվ, վկայի մինչդատական ցուցմունքը միակ ուղղակի ապացույցն է, որը հիմնավորում է այն հայտարարությունը, որ դիմումատուն է կրակ արձակել Կ.Ս.-ի ավտոմեքենայի վրա: Այդ իմաստով դիմումատուի գործում Ք.Մ.-ն կարող է դիտարկվել որպես մեղադրող կողմի հիմնական վկա: Ինչ վերաբերում է ապացույցների մնացած մասին, Ս.Ս.-ի ցուցմունքը զուտ ապացուցում է, որ Կ.Ս.-ի և դիմումատուի միջև առկա են եղել լարված հարաբերություններ, մինչդեռ Ք.Մ.-ի ծնողների՝ Ա.Մ.-ի և Ս.Մ.-ի ցուցմունքները հիմնված են եղել դեպքերի մասին Ք.Մ.-ի տված ցուցմունքների վրա (...): Ճշմարիտ է այն հանգամանքը, որ Վ.Ջ.-ի ցուցմունքը, որը նա վերահաստատել է առերես հարցաքննության ժամանակ, հակասում է դիմումատուի պաշտպանական ցուցմունքին այն մասին, որ հանցագործության կատարման ժամանակ նա եղել է Վ.Ջ.-ի տանը (...): Այնուամենայնիվ, միայն Վ.Ջ.-ի ցուցմունքն առանձին չի ապացուցում, որ ավտոմեքենայի վրա կրակ արձակողը եղել է դիմումատուն և ոչ թե նրա եղբայրը, ինչպես նշել էր դիմումատուն իր խոստովանական ցուցմունքից հրաժարվելուց հետո: Կառավարությունը չի կարողացել հիմնավորել, որ մնացած բոլոր ապացույցները, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննությունը բավարար են որոշիչ կերպով պնդելու համար, որ հանցագործությունը կատարվել է դիմումատուի և ոչ թե մեկ այլ անձի, օրինակ՝ նրա եղբոր կողմից: Օրինակ, ներ-*

*պետական դատարանների վճիռներից չի բխում, որ դեպքի օրը դիմումատուի հագին եղած հագուստի վրա կրակոցի՝ դատաբժշկական փորձաքննությամբ հաստատված հետքերն ապացուցում են, որ կրակոցների հեղինակը եղել է նա: Վերոնշյալից ելնելով՝ [Եվրոպական դատարանը] գտնում է, որ դիմումատուի դատապարտման համար որոշիչ են եղել քննությունից բացակայող վկա Ք.Մ.-ի ցուցմունքները (...)»* (տե՛ս *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 55-56-րդ կետերը):

15.3. *Բավարար «հակակշռող գործոններ» լինելու* չափանիշի առնչությամբ Եվրոպական դատարանը փաստել է. *«(...) [Առաջին ատյանի] դատարանի վճիռը չի պարունակում իրեն ներկայացված ապացույցների վերլուծություն, ինչպես նաև ավելի փոքր ուշում այն մասին, որ դատարանը տեղյակ է եղել վկայի չստուգված ցուցմունքների, այդ թվում՝ Ք.Մ.-ի ցուցմունքի ենթադրյալ ապացուցողական արժեքի մասին: Բոլոր ապացույցները պարզապես ներկայացվել են որպես դիմումատուի կողմից հանցագործության կատարման ապացույց՝ առանց վկայի չստուգված ցուցմունքի հավաստիության գնահատման (...): Հետևաբար [Եվրոպական դատարանը] գտնում է, որ դատաքննություն անցկացնող դատարանը պատշաճ կարգով չի քննել Ք.Մ.-ի ցուցմունքի հավաստիության հարցը:*

*(...) [Եվրոպական դատարանն] այնուհետև նշում է, որ, ինչպես արդեն վերևում նշվել է, [Առաջին ատյանի] դատարանն ունեցել է դիմումատուի մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույց (...): Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, լրացուցիչ ապացույցը, ի տարբերություն Ք.Մ.-ի ցուցմունքի, ինքնին չի խաթարել դիմումատուի պաշտպանության իրականացումն այն մասով, որ իր մահացած եղբայրն է կատարել սպանությունը:*

*(...) Ի վերջո, [Եվրոպական դատարանը] նշում է, որ դատավարական որևէ միջոց չի ձեռնարկվել՝ իր գործով դատաքննության ժամանակ Ք.Մ.-ին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար: Դիմումատուն հնարավորություն չի ունեցել հարցաքննելու Ք.Մ.-ին վարույթի որևէ փուլում: Ավելին՝ դիմումատուն Վերաքննիչ դատարանից պահանջել է Ք.Մ.-ի ցուցմունքը հայտարարել անընդունելի, սակայն իր պահանջը որևէ կերպ չի բավարարվել (...)»* (տե՛ս *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 58-60-րդ կետերը):

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը գտել է, որ անհիմն կերպով սահմանափակվել է Ս.Մանուչարյանի՝ վկա Ք.Մ.-ին հարցաքննելու իրավունքը, ում վկայությունները որոշիչ դեր են ունեցել իր դատապարտման հարցում: Հետևաբար, ըստ Եվրոպական դատարանի՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

16. Այսպիսով, նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը հաստատված է համարել սույն գործով դատապարտված անձի՝ Ս.Մանուչարյանի՝ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով *Մանու-*

*Չարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշումը վերանայելու համար:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյո՞ք վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

18. *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրվելու դեպքում վարույթը վերաբացելու առնչությամբ իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումները, փաստել է. *«(...) այն վճիռը, որում [Եվրոպական դատարանը] Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում է արձանագրում, պատասխանող Պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց անհրաժեշտության դեպքում վճարելու այն գումարները, որոնք վճռել է տրամադրել որպես արդարացի փոխհատուցում, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրելու, թե հարկ եղած դեպքում ինչպիսի ընդհանուր և (կամ) մասնավոր միջոցներ պետք է ընդունվեն ներպետական իրավական համակարգում՝ [Եվրոպական դատարանի] կողմից արձանագրված խախտումն արմատապես վերացնելու և դրա հետևանքները հարթելուն ուղղված հնարավոր այնպիսի հատուցում տրամադրելու համար, որը հնարավորինս կվերականգնի նախքան խախտումն առկա իրավիճակը (...): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու դեպքում դիմումատուի համար հնարավորինս պետք է ստեղծվի այնպիսի իրավիճակ, որում նա կգտնվեր, եթե այդ դրույթի պահանջներն անտեսված չլինեին (...): Ինչպես [Եվրոպական դատարանը] նախկինում նշել է իր նախադեպերում, այնպիսի գործերում, ինչպես օրինակ՝ սույն գործն է, փոխհատուցման ամենապատշաճ ձևը, որպես կանոն, վարույթի պատշաճ կարգով վերաբացումն է և գործի վերաքննությունը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (...)»* (տե՛ս *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 67-68-րդ կետերը):

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նոր դատաքննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահա-

տելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

20. Անդրադառնալով Սպարտակ Մանուչարյանի խափանման միջոցի հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա են նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պայմաններն ու հիմքերը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Ս.Մանուչարյանին վերագրված հանցագործությունների հանրային վտանգավորության բնույթը, ծանրության աստիճանը, կատարման եղանակը և շարժառիթը, արձանագրում է, որ Ս.Մանուչարյանը, մինչև գործի նոր քննության ընթացքում խափանման միջոցի հարցի լուծումը մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել դատարանում գործի քննությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 12-ի որոշումը վերաձայել:

2. Սպարտակ Հենրիկի Մանուչարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 4-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի հունվարի 26-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Սպարտակ Հենրիկի Մանուչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**42.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԴ-1/0025/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 21-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ալեքսան Վոլգովի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 29-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Հակոբյանի և նրա պաշտպան Մ.Ալավերդյանի վճռաբեկ բողոքները,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2015 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 68113115 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ Ալեքսան Վոլգովի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2016 թվականի հոկտեմբերի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2017 թվականի մարտի 29-ի որոշմամբ մերժել է բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ա.Հակոբյանը և նրա պաշտպան Մ.Ալավերդյանը:

4.1. Ամբաստանյալ Ա.Հակոբյանի վճռաբեկ բողոքին կից ներկայացվել է ամբուլատոր հիվանդի բժշկական քարտից քաղվածք, ըստ որի՝ Ա.Հակոբյանի մոտ ախտորոշված են՝ խրոնիկ օբստրուկտիվ լորձաթաղանթային բրոնխիտ՝ հաճախակի սրացումներով, պիելոնեֆրիտ: Երիկամաքարային հիվանդություն, ՄԻԱՎ վարակ 3-րդ կլինիկական փուլ, խիստ արտահայտված իմունային անբավարարություն, քրոնիկ վիրուսայի հեպատիտ C, լիպոդիստրոֆիա (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 127):

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Հակոբյանի և նրա պաշտպան Մ.Ալավերդյանի վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

5. Ամբաստանյալ Ա.Հակոբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ *«(…) խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջները, առանց իրացնելու, անճամբ գործածելու նպատակով 2015 թվականի նոյեմբերի 15-ին, Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղի բնակիչ Գառնիկ Ռուբենի Մարտիրոսյանից նշված գյուղում 50.000 ՀՀ դրամով գնելու եղանակով ապօրինի ձեռք է բերել և բաճկոնի ձախ ծոցագրպանում 1 փաթեթով ապօրինի պահել է խոշոր չափերով՝ 33.8 գրամ վերջնական քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը նույն օրը իր՝ «Օպել աստրա 3 մակնիշի» 35 OD 868 հ/հ մեքենայով Մրգաշատ գյուղից փոխադրել է Գյումրի քաղաք, որը հայտնաբերվել և վերցվել է ապօրինի թմրամիջոց պահելու, պատրաստելու և օգտագործելու կասկածանքով ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի աշխատակիցների կողմից Ա.Հակոբյանին ոստիկանության նույն բաժին բերման ենթարկելուց հետո այնտեղ կատարված վերջինիս*

*անձնական խուզարկությամբ՝ բաճկոնի ծոցագրպանից»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 23):

6. Առաջին ատյանի դատարանը, դատավճռի ներածական մասում, արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանը ֆիզիկապես վատառողջ է (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 23):

6.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռի համաձայն՝ *«Դատարանը ամբաստանյալ Ալեքսան Վոլգովի Հակոբյանին պատիժ նշանակելիս հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, պատասխանատվությունը և պատիժը ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքներ չի նշում, իսկ անձը բնութագրող հանգամանքներ է համարում բնակության վայրում դրական բնութագրվելը, կատարածի համար անկեղծորեն խոստովանելն ու զղջալը:*

*[Ա]ղդրադառնալով (...) պատժի տեսակի հարցին, ղեկավարվելով ՀՀ քր. օր-ի 10 հոդվածի 1-ին մասի, 48 հոդվածի 2-րդ մասի և 61 հոդվածի նախատեսված սկզբունքներով, հանգում է հետևության, որ նրան պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 24):

7. Ամբաստանյալ Ա.Հակոբյանը վերաքննիչ բողոքում նշել է. « *(...) Ինչ [վերաբերում] է իմ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներին ապա այդպիսիք չկան, ընդհակառակը ես վատառողջ եմ (...)*»(տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 29):

7.1. Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում պաշտպան Մ.Ալավերդյանը հանդես է եկել հայտարարությամբ այն մասին, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանը վատառողջ է, 2009 թվականին վիրահատվել են նրա թոքերը, և վերջինս ունի սրտանոթային խնդիրներ: Ամբաստանյալ Ա.Հակոբյանը գտնվում է ռիսկային գոտում, և խորհուրդ է տրվում, գտնվի բժշկի հսկողության ներքո (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, Վերաքննիչ դատարանի դատական նիստերի արձանագրությունը):

Պաշտպան Մ.Ալավերդյանը որպես իր հայտարարության հիմնավորում դատարան է ներկայացրել Ա.Հակոբյանի հիվանդության նկարագրից քաղվածներ, որոնք կցվել են գործի նյութերին (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 72-73):

8. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, նշել է՝ «*Հաշվի առնելով (...) արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ուղղվելու համար առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը ամբաստանյալը պետք է կրի, քանի որ բացակայում է դատարանի համոզվածությունը, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց դրա, և վերաքննիչ բողոքում մատնանշված հանգամանքները, որոնք արդեն իսկ հաշվի են առնվել պատիժ նշանակելիս, հիմք չեն կարող հանդիսանալ ՀՀ քրեական*

*օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նրան պայմանականորեն դատապարտելու համար:*

*Քննության առնելով Ալեքսան Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման հնարավորությանը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի կոնկրետ հանգամանքներն ու ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները էականորեն չեն նվազեցնում հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի հիման վրա նրա նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժատեսակ՝ տուգանք, նշանակելու բավարար հիմքեր առկա չեն, ուստի [Առաջին ատյանի] դատարանի դատավճիռը պետք է թողնել անփոփոխ, իսկ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը՝ մերժել»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 93):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերներ ամբաստանյալ Ա.Հակոբյանը և նրա պաշտպան Մ.Ալավերդյանը փաստարկել են, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 62-րդ, 64-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև վերջիններիս հետևությունները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՔԴԴ/0057/01/08, թիվ ՍԴ/0109/01/12, թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին:

10. Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ Առաջին ատյանի դատարանը, ազատազրկման ձևով պատիժ նշանակելով, իսկ Վերաքննիչ դատարանը, այն օրինական ուժի մեջ թողնելով, բավարար գնահատականի չեն արժանացրել այն փաստը, որ Ա.Հակոբյանը տառապում է քրոնիկական, ծանր մի շարք հիվանդություններով, այդ թվում՝ ՄԻԱՎ-ով, քրոնիկ բրոնխիտով, քրոնիկ վիրուսային հեպատիտով, քրոնիկ պիելոնեֆրիտով և երիկամաքարային հիվանդությամբ:

10.1. Բողոքաբերները նշել են նաև, որ ստորադաս դատարանները սխալ եզրահանգման են եկել պատիժ նշանակելիս, քանի որ հաշվի չեն առել պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող մի շարք էական հանգամանքներ, մասնավորապես այն, որ Ա.Հակոբյանի անձը բնութագրվում է դրականորեն, նա աջակցել է նախաքննության բացահայտմանը, խնամքին ունի բազմանդամ ընտանիք, ընտանիքի միակ աշխատողն է, հասել է պատկառելի տարիքի, զղջացել կատարվածի համար և չունի դատվածություն, բացի այդ, ըստ բողոքաբերների՝ գործում առկա չէ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող որևէ հանգամանք: Բողոքաբերների կարծիքով՝ վերոհիշյալ մեղմացնող հանգամանքների համակցությունը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի իմաստով «բացառիկության» չափանիշին:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 29-ի որոշումը և ՀՀ քրեա-

կան օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան կամ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի հիման վրա նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ՝ տուգանք:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժ նշանակելիս անձի հիվանդությունը որպես անձը բնութագրող տվյալ դատարանի կողմից պատշաճ գնահատելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ստորադաս դատարանների դատական ակտերն այն պայմաններում, երբ ամբաստանյալ Ա.Հակոբյանի վատառողջ լինելու վերաբերյալ տվյալները պատշաճ չեն ստուգվել և գնահատման չեն ենթարկվել:

14. ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածով 2-րդ մասի համաձայն՝ *«Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համապատասխանեն կատարված արարքին»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

*«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

*2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:*

15. Վճռաբեկ դատարանը, թիվ ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԵՇԴ/0029/01/08, ԵԿԴ/0042/01/11, ԵՇԴ/0143/01/13, ԵԿԴ/0252/01/13, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում անդրադառնալով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, կայուն նախադեպային

իրավունք է ձևավորել առ այն, որ հանցավորի անձին և հանցագործության վտանգավորության բնույթին ու աստիճանին համաչափ քրեաիրավական ներգործության միջոց ընտրելու, ինչպես նաև դրա շրջանակներում համաչափ պատժաչափ սահմանելու պահանջն ուղղակիորեն բխում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների, մասնավորապես՝ արդարության և պատասխանատվության անհատականացման հիմնարար սկզբունքների բովանդակությունից: Արդարացի է այն պատիժը, որի ընտրությունը գործի բոլոր հանգամանքների՝ հանցագործության վտանգավորության բնույթի և աստիճանի (հանցագործության մեղքի ձև, շարժառիթ, նպատակ, պատճառված վնասի չափ, եղանակ, գործիքներ ու միջոցներ և այլն), հանցավորի անձը բնութագրող տվյալների, մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ամբողջական ու բազմակողմանի վերլուծության արդյունք է և բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից: Վերոնշյալ պահանջները չպահպանելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման:

Պատժի անհատականացման սկզբունքի իմաստով դատարանի խնդիրն է հանցանք կատարած անձի նկատմամբ մեղսագրված հանցակազմի սանկցիայի սահմաններում նշանակել կոնկրետ պատիժ: Կոնկրետ պատժի նշանակումը դատարանի համար խիստ կարևոր և պատասխանատու խնդիր է, որի լուծման համար մեծ նշանակություն ունի պատժի անհատականացման կարգի և չափանիշների հարցը:

Այսպես՝ պատժի անհատականացման սկզբունքի բովանդակության հիմնական մասն է կազմում հանցավորի անձը բնութագրող տվյալների գնահատումը, որոնք իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս անձին դիտել ոչ միայն որպես հանցանք կատարող, որը պետք է պատասխանատվություն կրի, այլ նաև որպես անձ՝ իր անհատական հատկանիշներով: Հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը մեծ դեր է խաղում պատիժ նշանակելու համար:ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի («Պատժի նպատակները») իմաստով պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը, ուստի դատարանը պարտավոր է հանգամանորեն հետազոտել անձի ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական առանձնահատկությունները: Ընդ որում՝ անձի այն հատկանիշները, որոնք գտնվում են հանցակազմից դուրս, նշանակություն են ունենում դատարանի կողմից պատժի տեսակը և չափը որոշելիս: Որպես հանցավորի անձը բնութագրող հատկանիշ գնահատման ենթակա է, ի թիվս այլոց, անձի առողջական վիճակը *(տե՛ս Հազարապետ Հարությունյանի գործով 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը, Նարեկ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 16-րդ կետը):*

Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պատիժ նշանակելիս

դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի ու բնույթի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների հայեցողական և ոչ երբեք կամային գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից *(տե՛ս Նարեկ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 23-րդ կետը)*:

16. Այսպիսով՝ անձի առողջական վիճակը որպես նրա անձը բնութագրող տվյալ պետք է գնահատման ենթարկվի նրա նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու դիտակետից: Վերջինիս պատշաճ գնահատումն էական նշանակություն ունի պատժի նպատակների իրականացման տեսանկյունից համապատասխան պատժատեսակ ընտրելու և պատժաչափ նշանակելու համար, ինչպես նաև բխում է դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի արգելքի սահմանադրական և կոնվենցիոն պահանջից: Թերևս վերջիններիս հաշվառմամբ էլ օրենսդիրն անձի մոտ ծանր հիվանդության առկայությունը նախատեսել է որպես նրան պատժից ազատելու (ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդված), ինչպես նաև նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի ի կատար ածումը հետաձգելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

17. Վերոհիշյալով պայմանավորված՝ ամբաստանյալի վատառողջ լինելու վերաբերյալ տվյալների առկայության դեպքում դատարանը պարտավոր է պատշաճ ստուգման և գնահատման ենթարկել դրանք: Այն դեպքում, երբ կհաստատվի անձի մոտ հիվանդության առկայությունը, դատարանը պարտավոր է այն որպես անձը բնութագրվող տվյալ հաշվի առնել անձի նկատմամբ համապատասխան պատժատեսակ ընտրելիս, պատժաչափ սահմանելիս, ինչպես նաև դրա կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

18. Սույն գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով, այն բանի համար, որ նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջները, առանց իրացնելու, անձամբ գործածելու նպատակով 2015 թվականի նոյեմբերի 15-ին, Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղի բնակիչ Գառնիկ Ռուբենի Մարտիրոսյանից նշված գյուղում 50.000 ՀՀ դրամով գնելու եղանակով ապօրինի ձեռք է բերել և բաճկոնի ձախ ծոցագրպանում 1 փաթեթով ապօրինի պահել է խոշոր չափերով՝ 33.8 գրամ վերջնական քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը նույն օրը իր՝ «Օպել աստրա 3 մակնիշի» 35 OD 868 հ/հ մեքենայով Մրգաշատ գյուղից փոխադրել է Գյումրի քաղաք, որը հայտնաբերվել և վերցվել է ապօրինի թմրամիջոց պահելու, պատրաստելու և օգտագործելու կասկածանքով ոստիկա-

նության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի աշխատակիցների կողմից Ա.Հակոբյանին ոստիկանության նույն բաժին բերման ենթարկելուց հետո այնտեղ կատարված վերջինիս անձնական խուզարկությամբ՝ բաճկոնի ծոցագրպանից (տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը դատական ակտի ներածական մասում արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանը ֆիզիկապես վատառողջ է, իսկ նկարագրական-պատճառաբանական մասում անդրադարձ չի կատարել նրա հիվանդության տեսակին և բնույթին՝ նշելով, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակվի ազատազրկման ձևով պատիժ (տե՛ս սույն որոշման 6-րդ և 6.1.-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանում ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպանը հանդես է եկել հայտարարությամբ, որ իր պաշտպանյալը վատառողջ է, տառապում է մի շարք հիվանդություններով՝ ներկայացնելով ամբաստանյալի հիվանդության նկարագրից քաղվածքներ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու հիմքերը բացակայում են, քանի որ վերաքննիչ բողոքում մատնանշված հանգամանքները, որոնք արդեն իսկ հաշվի են առնվել պատիժ նշանակելիս, հիմք չեն կարող հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Ա.Հակոբյանին պայմանականորեն դատապարտելու համար, և որ գործի կոնկրետ հանգամանքներն ու ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները էականորեն չեն նվազեցնում հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի հիման վրա նրա նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժատեսակ՝ տուգանք, նշանակելու բավարար հիմքեր առկա չեն (տե՛ս սույն որոշման 7.1.-րդ և 8-րդ կետերը)

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-17-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով ամբաստանյալ Ա.Հակոբյանի վատառողջ լինելու փաստը, պատշաճ ստուգման չի ենթարկել դրա վերաբերյալ տվյալները, իսկ պատժի տեսակը և չափը որոշելու հիմնավորումներում դրա գնահատման վերաբերյալ որևէ հիշատակում առկա չէ:

Վերաքննիչ դատարանն էլ, ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, բավարար ուշադրության չի արժանացրել նշված հանգամանքները, անգամ այն պայմաններում, երբ վերաքննիչ բողոքում ամբաստանյալն հիշատակել է իր վատառողջ լինելու մասին, իսկ բողոքի քննության ընթացքում պաշտպանը ներկայացրել է հիվանդության նկարագրի քաղվածքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանի վատառողջ լինելու վերաբերյալ տվյալները ստորադաս դատարանների կողմից պատշաճ չստուգվելու և գնահատման չենթարկվելու պայմաններում ստորադաս դատարանների դատական ակտերը հիմնավորված չեն:

20. Այսպիսով, ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 71-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջները, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հիմք են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

21. Ինչ վերաբերում է բողոքաբերների մնացած փաստարկներին (տե՛ս սույն որոշման 10.1.-րդ կետը), ինչպես նաև վճռաբեկ բողոքին կից ներկայացված ամբուլատոր հիվանդի բժշկական քարտից քաղվածքին (տե՛ս սույն որոշման 4.1.-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտումների վերացման պայմաններում դրանք պետք է պատշաճ իրավական ընթացակարգով համապատասխան գնահատման ենթարկվեն Առաջին ատյանի դատարանում գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Ալեքսան Վոլգովի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**43.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵՄԴ/0004/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ՝ | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ դատավորներ | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ |
| | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| քարտուղարությամբ՝ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ՝ | |
| դատախազ | Վ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| տուժողի ներկայացուցիչ | Մ.ԲԱՂԻՐՅԱՆԻ |

2017 թվականի օգոստոսի 21-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2014 թվականի հոկտեմբերի 3-ին Արման Սարգսյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին, որի հիման վրա նախապատրաստված նյութերով 2014 թվականի հոկտեմբերի 21-ին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2014 թվականի հոկտեմբերի 29-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Վ.Պետրոսյանի կողմից որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին

որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու մասին:

Նախաքննական մարմնի՝ 2015 թվականի մայիսի 19-ի որոշումներով «Արտաղրատպագրական» ՓԲ ընկերությունը ճանաչվել է տուժող, իսկ Մասիս Բաղիրյանը՝ տուժողի ներկայացուցիչ:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Նավոյանի (այսուհետ՝ նաև Քննիչ)՝ 2015 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության աշխատակիցների նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել, և քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված բողոքը Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2016 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ մերժվել է:

2. Քննիչի՝ քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման և Դատախազի՝ բողոքը մերժելու մասին որոշման դեմ Մ.Բաղիրյանը բողոք է ներկայացրել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), որը 2016 թվականի հունիսի 7-ի որոշմամբ մերժվել է:

3. Մ.Բաղիրյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ բողոքը բավարարել է և վերացրել վիճարկվող որոշումները՝ Դատախազին պարտավորեցնելով վերացնել «Արտաղրատպագրական» ՓԲ ընկերության իրավունքների և ազատությունների խախտումը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>**

5. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի պետի պաշտոնակատարի՝ Առաջին ատյանի դատարանին ուղղված 2016 թվականի մարտի 30-ի գրության համաձայն՝ *«(...) [Ո]ղարկում եմ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական*

*շրջանի քննչական բաժնում քննված, վարույթը կարճված թիվ 16201514 քրեական գործը (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 21):

Առաջին ատյանի դատարանի՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի պետի պաշտոնակատարին ուղղված 2016 թվականի հունիսի 13-ի գրության համաձայն՝ *«(...) Անհրաժեշտությունը վերանալու կապակցությամբ վերադարձվում է թիվ 16201514 քրեական գործը (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 21):

5.1. Վերաքննիչ դատարանի՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի պետի պաշտոնակատարին ուղղված 2016 թվականի հուլիսի 15-ի գրության համաձայն՝ *«(...) Անհրաժեշտությունից ելնելով՝ խնդրում եմ դատարան ուղարկել թիվ 16201514 քրեական գործը (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 27):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) [Թ]իվ 16201514 քրեական գործով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Նավոյանի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կայացված՝ քրեական գործով քրեական հետապնդում չհրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ չեն խախտվել դիմող Մասիս Բաղիրյանի իրավունքները, ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 48-56):

7. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման համաձայն՝ *«(...) [Ա]ռաջին ատյանի դատարանը եկել է սխալ եզրահանգման՝ նշելով, որ բողոքարկվող որոշումներով (...) չեն խախտվել Մասիս Բաղիրյանի իրավունքները, իսկ ներկայացված բողոքը հիմնավոր չէ:*

*(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ 2009 թվականի օգոստոսի դրությամբ Ծովակալ Իսակովի պողոտայի թիվ 48 հասցեում գտնվող 3.704.7 քմ մակերեսով արտադրատպագրական շենքը գրավի առարկա չի հանդիսացել, սակայն (...) [վերջինիս] նկատմամբ գրանցվել է «Պրոմեթեյ բանկ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը, իսկ նախաքննական մարմնի կողմից այդ կապակցությամբ քննություն չի իրականացվել, և քրեական հետապնդում չհրականացնելու և գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ որևէ իրավական գնահատական չի տրվել այդ հարցին:*

*(...) [Ն]ախաքննության ընթացքում Մասիս Բաղիրյանի կողմից վարույթն իրականացնող մարմնին ներկայացվել է միջնորդություն՝ վկաների հետ առերես հարցաքննություններ կատարելու համար, սակայն վարույթն իրականացնող մարմինը նշված միջնորդությունը քննարկելու վերաբերյալ որևէ որոշում չի կայացրել: (...)*

*Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի առաջին ատյանի դատարանի 2016թ. հունիսի*

*7-ի որոշումը պետք է բեկանել՝ վերացնելով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Նավոյանի 2015թ. դեկտեմբերի 30-ի և բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի դատախազի 2016թ. փետրվարի 3-ի որոշումները, և Երևան քաղաքի դատախազին պարտավորեցնել վերացնել սույն որոշմամբ արձանագրված՝ «Արտաղրատպագրական» ՓԲ ընկերության իրավունքների և ազատությունների խախտումը»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 42-59):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, հետևաբար կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

8.1. Մասնավորապես բողոքաբերը նշել է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցների առկայության պայմաններում՝ առանց Մ.Բաղիրյանի և նրա կողմից մատնանշված վկաների առերես հարցաքննությունների կատարման, վարույթն իրականացնող մարմինը կարող էր հանգել վերջնական որոշման: Ուստի առերես հարցաքննությունների կատարման միջնորդության մերժումը, վերջինիս համոզմամբ, չէր կարող հիմք հանդիսանալ «Արտաղրատպագրական» ՓԲ ընկերության իրավունքների և ազատությունների խախտում արձանագրելու համար:

8.2. Բողոք բերած անձը, վկայակոչելով Լ.Զարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը, նշել է, որ Վերաքննիչ դատարանը, վերացնելով Քննիչի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի դեկտեմբերի 30-ի և Դատախազի՝ բողոքը մերժելու մասին 2016 թվականի փետրվարի 3-ի որոշումները, կայացրել է ՀՀ քրեադատավարական օրենքով չնախատեսված դատական ակտ, դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներից:

8.3. Բացի այդ, բողոքաբերը, վկայակոչելով Ռ.Բալասանյանի և Լ.Ավետիսյանի գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, նշել է, որ ստորադաս դատարանը չի հետևել դրանցում արտահայտված այն իրավական դիրքորոշումներին, որ դատարանն իրավասու չէ քրեական դատավարության կարգով քննություն իրականացնել քաղաքացիական բնույթի իրա-

վահարաբերությունները (վեճը) պարզելու ուղղությամբ և հաստատել այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստեր:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 7-ի դատական ակտին:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*I. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանները.*

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավասո՞ւ էր արդյոք Վերաքննիչ դատարանը վերացնելու նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ և դրա դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ *«Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի անօրինական կամ անհիմն որոշումները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: (...)»*:

Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Լ.Զարյանի* գործով որոշման շրջանակներում և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ *«(...) Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարանի վերահսկողության շրջանակներում քննվող բողոքների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման ձևերն ու եղանակները տարբեր են: Համապատասխան բո-*

*դրքի քննության արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե միևչդատական վարույթն իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես առկա է դատախազական հսկողության պարագայում (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը), այլ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելով:*

*(...) Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ նախաքննության մարմնի և տուժողի բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները վերացնելու մասին, դուրս է եկել միևչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներից, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքը»* (տե՛ս Լաուրա Զարյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ և 15-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանը *Փ.Թերոյանի* գործով որոշմամբ ընդգծել է. «*[Ք]րեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական հետապնդում չհրականացնելու) մասին որոշման դատական ստուգման շրջանակներում անձի խախտված իրավունքների վերականգնման ձևի առումով կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կարգավորումը*» (տե՛ս *Փնջիկ Թերոյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՔԴ/0024/11/15 որոշման 15-րդ կետը):

11.1. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու իրավասությունը դուրս է գտնվում դատարանի կողմից միևչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններից և հանդիսանում է դատախազի բացառիկ լիազորությունը: Ուստի, այն դեպքում, երբ միևչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը վիճարկվող որոշումը վերացնելու միջոցով գործադրում է դատախազի՝ քրեական վարույթի հետագա շարժը վերսկսելու բացառիկ լիազորությունը, դուրս է գալիս քրեադատավարական օրենքով նախատեսված իր լիազորությունների սահմաններից:

12. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ միևչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանի կողմից լուծման ենթակա խնդիրների շրջանակն է պայմանավորում դատա-

րանի կողմից կայացվող որոշման բնույթը: Մասնավորապես, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որը նպատակ է հետապնդում թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները *(մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրների վերաբերյալ տե՛ս Ներսես Մինասկյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08 գործով որոշման 12-րդ կետը):*

Հետևաբար, գտնելով, որ վիճարկվող որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) թույլ չեն տրվել մարդու իրավունքների և ազատությունների խախտումներ՝ դատարանը մերժում է բողոքը դրանք իրավաչափ համարելու հիմքով: Մինչդեռ դատարանը, եզրահանգելով, որ վիճարկվող որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) թույլ են տրվել մարդու իրավունքների և ազատությունների խախտումներ, որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով այդ որոշման հասցեատեր «վարույթն իրականացնող մարմին» է համարվում ինչպես քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը (վիճարկվող որոշումը վերացնելիս, ինչպես նաև դատարանի կողմից արձանագրված՝ խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման նկատմամբ հսկողություն իրականացնելիս), այնպես էլ նախաքննությունն իրականացրած մարմինը (դատարանի կողմից արձանագրված՝ խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելիս):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը Քննիչի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու և Դատախազի՝ ներկայացված բողոքը մերժելու մասին որոշումների դեմ բերված բողոքի քննության արդյունքում գտել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի իրավունքների խախտումներ թույլ չեն տրվել, ուստի ներկայացված բողոքը մերժվել է (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը բավարարել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ ներկայացված բողոքը, վիճարկվող որոշումները՝ վերացրել՝ պարտավորեցնելով Երևան քաղաքի դատախազին վերացնել «Արտաղրատպագրական» ՓԲ ընկերության իրավունքների և ազատությունների խախտումը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը և դրա վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու շրջանակներում որոշում է կայացրել վիճարկվող որոշումները վերացնելու, այլ ոչ թե անձի իրավունքների ու ազատությունների խախտումները վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու մասին՝ դրանով իսկ դուրս գալով միևչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից:

Բացի այդ, արձանագրված իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու պարտականություն սահմանելով բացառապես դատախազի համար՝ Վերաքննիչ դատարանը կայացված դատական ակտը չի հասցեագրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով «վարույթն իրականացնող մարմին» համարվող նախաքննության մարմնին:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր վերացնելու նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ և դրա դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները:

*II. Վարույթն իրականացնող մարմնից բողոքի վերաբերյալ ստացված նյութերի կազմումը.*

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորվա՞ծ են արդյոք ստորադաս դատարանների դատական ակտերն այն պայմաններում, երբ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը:

17. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (…) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (…)*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:*

*(…)*

*4. (…) [Ք]րեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«(...) Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (...)»:*

Վերոնշյալ նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Պյեր Ժան Մուրաղյանի* գործով որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Վ]արույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքի քննության դատական վարույթի օբյեկտը բողոքի կապակցությամբ ներկայացված նյութերն են, որոնց հիման վրա դատարանը գնահատում է անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայությունը: Հաշվի առնելով, որ վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության հիմքում դրված նյութերը գտնվում են նրա տիրապետության ներքո՝ օրենսդիրն անձի՝ դատական պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է այդ նյութերը դատարան ներկայացնելու պարտականություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս): Ընդ որում, վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան պետք է ներկայացվեն բողոքին վերաբերող նյութերը՝ ինչպես բողոքարկվող որոշման կամ գործողության օրինականությունը ենթադրաբար հիմնավորող, այնպես էլ՝ հերքող:*

*Այսպիսով, վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ նյութերը դատարան ներկայացնելու պահանջը կոչված է ապահովելու միևչդատական վարույթի ընթացքում դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանին անհրաժեշտ փաստական հիմքը: Նշված նյութերով է պայմանավորված դատարանի կողմից միևչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության ու հիմնավորվածության պատշաճ ստուգում իրականացնելու և դրա արդյունքում հիմնավորված եզրահանգումներ կատարելու օբյեկտիվ հնարավորությունը:*

*Նույն կերպ վերադաս դատական ատյանը միևչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դատական ստուգման արդյունքում կայացված դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս պետք է հիմք ընդունի բողոքը քննելիս ստորադաս ատյանի տրամադրության տակ եղած նյութերը և դրանց համատեքստում համապատասխան գնահատական տա բողոքաբերի փաստարկներին: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի պարզել դատարանի հետևությունների համապատասխանությունը գործում առկա նյութերին (...):*

*(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դատարան ներկայացված և վերջինիս կողմից հետազոտված նյութերը վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելու վերաբերյալ պահանջ: Իսկ միևչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դեմ ներկայացված բողոքի քննության հետ կապված նյութերը կազմվում են առանձին*

*դատական գործի տեսքով, որի բաղկացուցիչ մասն են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը: Այլ խոսքով՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը դատարանը պարտավոր է կցել բողոքի կապակցությամբ դատարանում կազմված նյութերին, որպիսի պահանջն ուղղակիորեն հետևում է անձի արդար դատաքննության իրավունքը՝ դատական ակտը բողոքարկելու և վերադաս դատական ատյանների կողմից բողոքարկված դատական ակտը վերանայելու տեսանկյունից, ինչպես նաև պետական մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու պահանջներից»* (տե՛ս Ժան Պյեր Մուրադյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0143/11/14 գործով որոշման 14-15-րդ, 17-րդ կետերը):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով վարույթն իրականացնող մարմնի կողմից 2016 թվականի մարտի 30-ին դատարան ուղարկված նյութերը, 2016 թվականի հունիսի 13-ի գրությամբ դրանք հետ է վերադարձրել վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերաքննիչ բողոքի քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պահանջել է վարույթն իրականացնող մարմնից բողոքի վերաբերյալ նյութերը (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը), սակայն Վճռաբեկ դատարան ներկայացված նյութերում դրանք բացակայում են:

19. Նախորդ կետում շարադրված փաստերը վերլուծելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Արտադրատպագրական» ՓՔ ընկերության ներկայացուցիչ Մ.Քաղիրյանի բողոքի կապակցությամբ ստորադաս դատարանների կազմած նյութերում առկա չեն վարույթն իրականացնող մարմնի՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը, այդ թվում՝ վճռաբեկ բողոքով վիճարկվող նախաքննական մարմնի՝ քրեական հետապնդում չհրականացնելու և գործի վարույթը կարճելու մասին 2015 թվականի դեկտեմբերի 30-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ բողոքի քննությունն ավարտելուց հետո Առաջին ատյանի դատարանն իր կազմած վարույթում պետք է պահեր կայացրած որոշման հիմքում դրված դատավարական փաստաթղթերի պատճենները, որոնց բացակայության պայմաններում սահմանափակված է Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի կայացրած դատական ակտն ըստ էության դատական ստուգման ենթարկելու և իրավական գնահատականներ տալու, այդ թվում՝ բողոքաբերի կողմից բարձրացված այլ փաստարկներին (տե՛ս սույն որոշման 8.1-րդ և 8.3-րդ կետերը) անդրադառնալու հնարավորությունը:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերի բացակայության պայմաննե-

րում ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական և հիմնավորված չեն:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 290-րդ հոդվածների խախտումներ, որոնք հանգեցրել են անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելուն: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 419-րդ հոդվածների, հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: «Արտաղրատպագրական» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Մասիս Բաղիրյանի բողոքի հիման վրա Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 7-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**44.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՍԴ3/0088/01/09

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 21-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Դավիթ Ֆրունզիկի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշման դեմ Դ.Ավետիսյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2009 թվականի ապրիլի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 32101709 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի մայիսի 11-ի որոշմամբ Դ.Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2009 թվականի նոյեմբերի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի ապրիլի 15-ի դատավճռով Դ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի

266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Ամբաստանյալ Դ.Ավետիսյանի պաշտպան Կ.Մկրտումյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հունիսի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի ապրիլի 15-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2010 թվականի հունիսի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Դ.Ավետիսյանի պաշտպան Կ.Մկրտումյանը: Վճռաբեկ դատարանը 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ ներկայացված բողոքը վերադարձրել է:

5. Դ.Ավետիսյանի (դիմումատու) գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2016 թվականի նոյեմբերի 10-ին *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 13479/11) կայացրել է վճիռ՝ արձանագրելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի հետ համատեղ՝ դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորությունից զրկվելու առումով:

6. Դ.Ավետիսյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի հիշյալ վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Դ.Ավետիսյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2017 թվականի հուլիսի 6-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

7. Դ.Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նա *«(...) իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերելով խոշոր չափերով՝ 0,65 գրամ «Ափիոն» տեսակի թմրամիջոց, 2009թ ապրիլի 27-ին՝ ժամը 17:25-ի սահմաններում, այն տեղադրել է տորթի մեջ և ցանկացել առաքել ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Մ.Խաչատրյանին, սակայն հանձնումի ստուգման ժամանակ այն հայտնաբերվել և առգրավվել է «Գորիս» ՔԿՀ-ի աշխատակիցների կողմից»:*

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի ապրիլի 15-ի դատավճռի համաձայն՝ *«(...) Գնահատելով հետազոտված ապացույցները [ամ-*

*բաստանյալ Դ.Ավետիսյանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքը, վկաներ Գ.Բաբայանի և Ա.Առաքելյանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքները, վկաներ Մ.Ստեփանյանի, Դ.Թադևոսյանի, Դ.Օհանյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքները և այլ ապացույցները] և գործի նյութերն իրենց համակցությամբ, դրանց գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, լուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածով նշված հարցերը՝ դատարանը հաստատված է համարում, որ ամբաստանյալ Դ.Ավետիսյանը, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերելով խոշոր չափերով՝ 0,65 գրամ «Ափիոն» տեսակի թմրամիջոց, 2009թ ապրիլի 27-ին՝ ժամը 17:25-ի սահմաններում, այն տեղադրել է տորթի մեջ և ցանկացել առաքել ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Մ.Խաչատրյանին, սակայն հանձնումի ստուգման ժամանակ այն հայտնաբերվել և առգրավվել է «Գորիս» ՔԿՀ-ի աշխատակիցների կողմից (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 357-359):

9. Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հունիսի 29-ի որոշման շրջանակներում արձանագրել է. *«(...) Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17, 18, 23, 25, 124-127, 358 և 360 հոդվածներով, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով և գնահատության ենթարկելով ամբաստանյալ Դ.Ավետիսյանի մեղադրանքի հիմքում դրված (...) ապացույցները, հանգել է ճիշտ հետևության, որ նրան ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը և նրա մեղավորությունը այդ արարքը կատարելու մեջ լիովին հաստատվել է (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 435):

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբերի պնդմամբ՝ Եվրոպական դատարանի կողմից 2016 թվականի նոյեմբերի 10-ին *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճիռը նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ի հիմնավորումն վերոնշյալ փաստարկի՝ բողոք բերած անձը, մեջբերելով Եվրոպական դատարանի հիշյալ վճռի հիմնավորումները, նշել է, որ ներպետական դատարանների կողմից կայացված դատական ակտերով խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ ինքը հնարավորություն չի ունեցել առերես հարցաքննելու վկաներ Մ.Ստեփանյա-

նին, Դ.Թադևոսյանին և Դ.Օհանյանին, որոնց նախաքննական ցուցմունքները որոշիչ են եղել իր դատապարտման համար:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վերացնել Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշումը, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի ապրիլի 15-ի, Վերաքննիչ դատարանի՝ 2010 թվականի հունիսի 29-ի դատական ակտերը և իրեն արդարացնել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

**<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>**

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշումը վերանայելու հիմք է:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

*2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:*

Նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

*(...)*

*2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.*

*(...):*

*2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:*

*(...)»:*

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է

անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս, *mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Մեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զալյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Հրաչյա Մուրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի որոշումները):

14. Այսպես՝ *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի հետ համատեղ, քանի որ դիմումատու Դ.Ավետիսյանը զրկված է եղել իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորությունից:

14.1. Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում վերահաստատել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստելով. *«(…) [Կոնվենցիայի] 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով սահմանված երաշխիքներն այդ դրույթի 1-ին կետով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքի հատուկ ասպեկտներ են (…):*

*(…) [Բ]ոլոր ապացույցները սովորաբար պետք է ներկայացվեն դռնբաց դատական քննության ժամանակ մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցային դատավարության սկզբունքի պահպանմամբ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունն ապահովելու համար: Այս սկզբունքից բացառություններ կան, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները. որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «գ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (…):*

*(…) Ալ-Խավաջայի և Թահերիի գործի 119-147-րդ պարբերություններում Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ՝*

*i) Դատարանը նախապատրաստական փուլում նախ պետք է քննի այն հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք է, որպես կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամա-*

*նակ, և որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայանալն ապահովելու համար.*

*ii) չներկայանալու ամենահաճախ հանդիպող պատճառներն են, օրինակ, ինչպես Ալ-Խավաջայի և Թահերիի գործում, վկայի մահը կամ վախը վրեժխնդրությունից: Այնուամենայնիվ, վկան դատական քննությանը կարող է չներկայանալ նաև այլ օրինական պատճառներով.*

*iii) այն դեպքում, երբ վկան չի հարցաքննվել վարույթի նախորդ որևէ փուլում, դատական քննության ժամանակ դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված գրավոր ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը պետք է ծայրահեղ միջոց լինի.*

*iv) չներկայացած վկաների՝ նախկինում տված գրավոր ցուցմունքները որպես ապացույց ճանաչելն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, որը, ըստ էության, քրեական դատավարության ընթացքում պետք է իր դեմ ներկայացված ապացույցները վիճարկելու արդյունավետ հնարավորություն ունենա: Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկայի ներկայացրած ապացույցների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ դրանք վկայի ներկայությամբ բանավոր քննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում.*

*v) «միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալը դատապարտվում է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել վարույթի փուլերից որևէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են.*

*vi) այս համատեքստում «վճռորոշ» բառը պետք է հասկանալ միայն այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունք, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված կլինի հիմնավորող ապացույցների նշանակությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը վճռորոշ կհամարվի.*

*vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի դատաքննության արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.*

*viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է ամբաստանյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միևնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են հանդիսանում չներկայացած վկաների ցուցմունքները, ապա Դատարանը պետք է դատական քննությունը հանգամանորեն ուսումնասիրի: Պայմանավորված այն վտանգներով, որոնք կարող են առաջանալ այդպիսի*

*ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու հետևանքով, այն շատ կարևոր գործոն կհանդիսանա հավասարակշռություն ապահովելու հարցում, և դրա համար անհրաժեշտ կլինեն բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ հուսալի ընթացակարգային երաշխիքներ: Յուրաքանչյուր դեպքում հարցն այն է, թե արդյո՞ք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի և պատշաճ ձևով գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ անձը դատապարտվի այդպիսի ցուցմունքների հիման վրա միայն այն դեպքում, եթե դրանք բավականաչափ հավաստի լինեն՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարևորությունը:*

*(…) [Եվրոպական դատարանը նշում է, որ] վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության արդարացի չլինելու մասին, թեև ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարևոր գործոն է հավասարակշռությունը որոշելու համար և կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյո՞ք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է ուսումնասիրի ոչ միայն բավարար հակակշռող գործոնների առկայությունն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել դիմումատուին դատապարտելու համար, ինչպես նաև այն գործերում, որոնցում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյո՞ք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարևոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարևոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (…)»* (տե՛ս *Ա-վետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 46-49-րդ կետերը):

15. Վերոգրյալ սկզբունքները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը վերլուծության առարկա է դարձրել այդ չափանիշների՝ ներպետական դատարանների կողմից պահպանված լինելու հարցը:

15.1. Մասնավորապես՝ անդրադառնալով այն խնդրին, թե արդյոք *վկաների՝ դատական քննությանը չներկայանալու համար եղել են հիմնավոր պատճառներ*, Եվրոպական դատարանը նշել է. *«(…) Դատարանը սովորաբար կոշտ մոտեցում է ցուցաբերում, երբ պետք է որոշի՝ արդյո՞ք ներպետական դատարանը բավարար փաստական կամ իրավական հիմքեր է ունեցել՝ վկայի՝ դատական քննությանը ներկայանալը չապահովելու համար: Օրինակ, այն գտել է, որ վկայի բացակայությունն այն երկրից, որտեղ իրականացվում է վարույթը,*

*ինքնին հիմնավոր պատճառ չէ՝ դատական քննությունից նրա բացակայությունն արդարացնելու համար (…): Մասնավորապես, ըստ Դատարանի՝ եթե վկայի գտնվելու վայրը պարզել հնարավոր չէ, ապա մարմինները պետք է «ակտիվորեն փնտրեն վկային» և ձեռնարկեն «բոլոր հնարավոր միջոցները՝ վկայի ներկայությունն ապահովելու համար»:*

*(…) [Սույն գործով] վկաների ներկայանալը չապահովելու համար ներկայացված պատճառաբանությունը, որի վրա հիմնվել է առաջին ատյանի դատարանի դատավորը, և որն այնուհետև ընդունվել է նաև Վերաքննիչ քրեական դատարանի կողմից, այն է, որ Մ.Ս.-ն և Դ.Օ.-ն գտնվել են արտերկրում, իսկ Դ.Թ.-ն բուժում է ստացել մայրաքաղաքում:*

*Հաշվի առնելով Դատարանի որդեգրած խիստ մոտեցումը նախորդ գործերով՝ Դատարանը չի կարծում, որ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկվել են՝ տվյալ վկաների ներկայանալն ապահովելու համար: Ճիշտ է, որ առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վկաներ Մ.Ս.-ին և Դ.Թ.-ին ոստիկանության աջակցությամբ բերման ենթարկելու մասին: Այս միջոցը, այնուամենայնիվ, որևէ արդյունք չի տվել: Այդպիսի պայմաններում առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնությանը՝ ապահովելու համար վկաներ Մ.Ս.-ի և Դ.Օ.-ի ներկայանալը, որոնք ենթադրաբար բացակայում էին երկրից: Ավելին՝ առաջին ատյանի դատարանը նույնիսկ չի փորձել պարզել, թե Դ.Թ.-ն երբ է դուրս գրվելու հիվանդանոցից, որպեսզի կարողանա ներկայանալ դատական քննությանը: Առաջին ատյանի դատարանը հեշտությամբ ընդունել է վկաների բացակայության համար ոստիկանության կողմից տրված պատճառաբանությունները, որոնք, ընդ որում, հիմնված են եղել ոչ թե ոստիկանության՝ վկաների գտնվելու վայրը պարզելուն ուղղված գործողությունների, այլ այդ վկաների բարեկամների տված ցուցմունքների վրա (…)»* (տե՛ս *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 51-53-րդ կետերը):

15.2. Անդրադառնալով *չներկայացած վկայի ցուցմունքը «միակը և վճռորոշը» լինելու* հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. *«(…) [Ն]երպետական դատարանների վճիռներում վկաներ Մ.Ս.-ի, Դ.Թ.-ի և Դ.Օ.-ի ցուցմունքները նշվել են որպես դիմումատուի մեղավորությունը հիմնավորող ապացույցներ՝ առանց այդ ապացույցների հավաստիությունը գնահատելու, որը կօգներ Դատարանին որոշել՝ արդյո՞ք դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել միայն վկաների՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքների վրա, կամ արդյո՞ք դրա համար այդ ցուցմունքները վճռորոշ են եղել (…): Այդ պատճառով Դատարանը պետք է ինքը գնահատի չներկայացած վկաների կողմից տրված ցուցմունքների նշանակությունը՝ մեղավորությունը հաստատող առկա լրացուցիչ ապացույցները հաշվի առնելով (…):*

*(…) Դատարանն այս առնչությամբ նշում է, որ դիմումատուի մեղավորությունը հաստատվել է հետևյալ ապացույցների հիման վրա. քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներ Գ.Բ.-ի և Ա.Ա.-ի դատական քննության ժամանակ տված ցուցմունքները, վկաներ Մ.Ս.-ի, Դ.Թ.-ի և Դ.Օ.-ի նա-*

*խաբննական ցուցմունքները, այն փաստը, որ համապատասխան փաստաթղթերը, որպես ծանրոցն ուղարկող, ստորագրել է դիմումատուն, և նրան զգուշացվել է բանտարկյալին անօրինական իրեր ուղարկելու արգելքի մասին, տորթի մեջ գտնված իրերի հայտնաբերման և առգրավման մասին արձանագրությունը և դատական փորձագետի եզրակացությունը, որի համաձայն՝ հայտնաբերված նյութերը եղել են թմրամիջոցներ (…):*

*(…) Հաշվի առնելով այս ապացույցները՝ Դատարանը չի կարող չնշել, որ վկաներ Մ.Ս.-ի, Դ.Թ.-ի և Դ.Օ.-ի ցուցմունքները միակ ապացույցներն են եղել, որոնցով հաստատվել է, որ տորթի մեջ թմրամիջոցները դրել է դիմումատուն: Մ.Ս.-ն ուղղակիորեն մեղադրել է դիմումատուին՝ նշելով, որ տեսել է, թե ինչպես է նա ներարկիչը դնում տորթի մեջ, մինչդեռ Դ.Թ.-ն և Դ.Օ.-ն նշել են, որ իրենք տորթը տվել են դիմումատուին՝ մինչև այն վարչակազմին փոխանցելը: Ամեն դեպքում չներկայացած բոլոր երեք վկաների ցուցմունքներով հերքվում է դիմումատուի առարկությունն այն մասին, որ նա ձեռք չի տվել տորթին՝ մինչև այն քրեակատարողական հիմնարկի վարչակազմին փոխանցելը: Առկա մյուս ապացույցները, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկի երկու աշխատակիցներ Գ.Բ.-ի և Ա.Ա.-ի ցուցմունքները, երկրորդական և ոչ կարևոր բնույթ են կրում, իսկ մյուս ապացույցները բավարար չեն՝ դիմումատուի կողմից հանցագործությունը կատարելու փաստը հաստատելու համար: Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը կարծում է, որ չներկայացած վկաների ցուցմունքները դիմումատուի դատապարտման համար վճռորոշ են եղել»* (տե՛ս *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 56-58-րդ կետերը):

15.3. *Բավարար «ծանրակշռող գործոններ» լինելու* չափանիշի առնչությամբ Եվրոպական դատարանը փաստել է.*«(…) 2010 թվականի մարտի 9-ի դատական նիստի ժամանակ դիմումատուի փաստաբանը համաձայնել է շարունակել դատական քննությունը՝ հաշվի առնելով ոստիկանության նամակն այն մասին, որ վկաների ներկայանալն ապահովել հնարավոր չէ: Ավելին՝ դիմումատուն ինքը նշել է, որ համաձայն է, որ դատական քննությունը շարունակվի, սակայն նշել է, որ իր կինը դատական նիստից երեք օր առաջ տեսել է Մ.Ս.-ին՝ դրանով իսկ վիճարկելով Մ.Ս.-ի՝ քաղաքից բացակայելու մասին տեղեկությունը (…): Այս առնչությամբ տվյալ գործը տարբերվում է Դատարանի կողմից քննված մյուս գործերից, որոնց դեպքում քրեական գործով ամբաստանյալը հրաժարվել էր խաչաձև հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկաներին (…): Այս հանգամանքներում չի կարելի ասել, որ համաձայնելով շարունակել դատական քննությունը՝ դիմումատուն անվերապահորեն՝ անուղղակի կամ ուղղակի կերպով հրաժարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքներից: Ընդհակառակը, առաջին ատյանի դատարանի և ոստիկանության կողմից տվյալ վկաների ներկայանալը բազմիցս չապահովելու արդյունքում այլընտրանք չունենալով՝ դիմումատուն համաձայնել է շարունակել դատական քննությունը նրանց բացակայության պայմաններում և այդ հարցը բարձրացրել է իր հետագա բողոքներում:*

*(…) Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ այն, որ դիմումատուն համաձայնել է դատական քննությունը շարունակել տվյալ վկաների բացակայության պայմաններում, չի նշանակում, որ նա հրաժարվել է իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքից՝*

*(…) Ինչ վերաբերում է ներպետական դատարաններ չներկայացած վկաներ Մ.Ս.-ի, Դ.Թ.-ի և Դ.Օ.-ի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելուն, ապա Դատարանը նշում է, որ Մարզային դատարանը այդ ցուցմունքները հաշվի առնելիս շրջահայացություն չի ցուցաբերել: Մարզային դատարանի դատավճիռը չի պարունակում որևէ նշում այն մասին, որ այն տեղյակ է եղել վկաների չստուգված ցուցմունքի սահմանափակ ապացուցողական նշանակության մասին: Ընդհակառակը, վկաների չստուգված ցուցմունքները դասվել են դիմումատուի մեղավորությունը հիմնավորող ապացույցներին՝ առանց դրանց հավաստիությունը գնահատելու (…): Այդ պատճառով Դատարանը կարծում է, որ Մարզային դատարանը պատշաճ կերպով չի քննել չներկայացած վկաների ցուցմունքների հավաստիությունը:*

*(…) Դատարանը նաև նշում է, որ Մարզային դատարանը (…) չի ունեցել մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցներ, որոնք կհաստատեին Մ.Ս.-ի, Դ.Թ.-ի և Դ.Օ.-ի տված ցուցմունքները՝*

*(…) Ինչ վերաբերում է դատավարական այն գործողություններին, որոնք ձեռնարկվել են՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար, ապա Դատարանը նշում է, որ նախաքննության ընթացքում դիմումատուի և վկա Մ.Ս.-ի միջև կատարվել է առերեսում (…): Թեև Մ.Ս.-ն կարող է համարվել մեղադրանքի կողմի հիմնական վկան՝ հաշվի առնելով, որ նա ուղղակիորեն մեղադրել է դիմումատուին, Դ.Թ.-ի և Դ.Օ.-ի ցուցմունքները Մարզային դատարանի համար հավասար հիմք են ծառայել հանցագործությունը կատարելու մեջ դիմումատուի մեղավորությունը հաստատված համարելու համար, և Մ.Ս.-ի ցուցմունքին հատուկ նշանակություն չի տրվել (…): Դատարանը նաև նշում է, որ դիմումատուին նախաքննության փուլում վկաներ Դ.Թ.-ին և Դ.Օ.-ին հարցաքննելու որևէ հնարավորություն չի տրվել:*

*(…) Դատարանը նաև նշում է, որ առաջին ատյանի դատարանն իր վճռի մեջ միայն նշել է, որ Մ.Ս.-ն առերեսման ժամանակ հաստատել է նախկինում տված իր ցուցմունքները, սակայն իր գնահատականը չի տվել դիմումատուի և Մ.Ս.-ի միջև առերեսման արդյունքների վերաբերյալ՝ Մ.Ս.-ի ցուցմունքների հավաստիությունը գնահատելու համար:*

*(…) Այդպիսի հանգամանքներում Դատարանը կարծում է, որ չներկայացած երեք վկաներից միայն մեկի հետ կատարված առերեսումը, որը նաև չի ազդել նրանց վկայությունների գնահատման վրա, բավարար չի եղել՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար»* (տե՛ս *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 61-67-րդ կետերը):

15.4. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է. «*(…) Հաշվի առնելով չներկայացած վկաների չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների բացակայությունը և դիմումատուի վերաբերյալ գործի դատական քննության ժամանակ վկաներ Մ.Ս.-ի, Դ.Թ.-ի և Դ.Օ.-ի բացակայությանը հակակշռող ընթացակարգային երաշխիքների անբավարարությունը՝ Դատարանը կարծում է, որ քրեական գործով վարույթն ընդհանուր առմամբ անարդարացի է եղել այն պատճառով, որ այդ չներկայացած վկաների նախաքննական ցուցմունքները ճանաչվել են որպես ապացույց:*

*(…) Հետևաբար տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում»* (տե՛ս *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 68-69-րդ կետերը):

16. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշումը վերանայելու հիմք է:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյոք վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

18. *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրվելու դեպքում վարույթը վերաբացելու առնչությամբ իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումները, արձանագրել է. «*Դատարանը (...) անհրաժեշտ է համարում նշել, որ վճիռը, որով այն Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում է արձանագրում, պատասխանող Պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, եթե այդպիսիք կան, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և (կամ), անհրաժեշտության դեպքում, անհատական բնույթի միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ Դատարանի կողմից արձանագրված խախտմանը վերջ դնելու և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրելու համար, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (...): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու դեպքում դիմումատուի համար պետք է հնարավորինս վերականգնվի այն իրավիճակը, որում նա կգտնվեր, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (...):*

*(...) Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 426.1 և 426.4 հոդվածներով նախատեսվում է ներպետական դատական ակտը վերանայելու հնարավորություն, եթե Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում (...): Ինչպես Դատարանը վճռել է նախորդ նման գործերում, հատուցման ամենապատշաճ ձևը, որպես կանոն, կլինի պատշաճ կարգով գործի վերանայումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (...)»* (տե՛ս *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 74-75-րդ կետերը):

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի ապրիլի 15-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2010 թվականի հունիսի 29-ի դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դավիթ Ֆրունզիկի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշումը վերանայել:

2. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի ապրիլի 15-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի հունիսի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*

*Դատավորներ՝* *ստորագրություններ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**2017 թվական**

**Հատոր IX**

**ՄԱՍ I**

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Տպագրական 36.5 մամուլ:
Տպաքանակը՝ 500:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրատանը:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ